


ՎԱԶԳԷՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ



ՊԵՂՈՒՔ  
1982

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
Կ.ՏՕՆԻԿԵԱՆ ԵՒ ՈՂԻՔ**


871 - 887 Ա.բ.մինիա փողոց,

ՍԷՆ ՄԻԶԷԼ - ՊԵՂՐԱԼՔ

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅԻ  
ՅԻՇԱՏԱԿԻՆ



ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅ



# ԻՆՔՆԱՐԴԱՐԱՑՈՒՄԻ ԽՕՍՔԵՐ

Մարդոց ամենագովելի նախաձեռնությունները երբեմն պիրենք կը դնեն յանցաւորի աթոռին վրայ, որքա՛ն ալ երկար ատեն մտածուած ու չափուած-ձեւուած ըլլան անոնք: Վերջնական որոշումը տրուած ատեն, գիտակից անոր հետեւանքներուն, կանխակալ պղշումի պահեր կ'ունենան նոյնիսկ:

Եւ սակայն նման փորձություններու մղող շարժառիթները շատ են, հարկ է գոհանալ ու ինքզինք մխիթարել երբ հոն առաջնորդող մտածումները մաքուր են:

**Անդրանիկի** մասին հատոր մը հրատարակել, անշուշտ խոշոր կեկ յաւակնութիւն մըն է, յանդուգն, անխոհեմ, պի, անոր պարունակութիւնը կրնայ աղարտել **հերոսի** կենդանութեան իսկ հիւսուած առասպելին փայլը:

Այդ է պատճառը թերեւս որ, «Տակաւին ոչ մէկ հատոր երեւցած է **Անդրանիկի** բուն դիմագիծն ու էութիւնը ներկայացնող» կը կրկնէր պինքը սիրողներէն մէկը՝ ոեւէ անձէ աւելի մօտէն ու մտերմօրէն ճանչնալու բախտն ու պատեհությունները ունեցող՝ **Հրաչ Զարդարեան**:

Անցան տասնամեակներ: Սփիւռքի մէջ ապրող ժամանակակիցներէն, պարբերաբար յուշերու հրատարակություններ եղան: Վերջապէս, ժողովրդական անտեղիտալի ելոյթներ տեղի ունեցան հայրենիքին մէջ ազգանուէր մեծ Հայուն ի յարգանս, որմէ յետոյ տարածուեցաւ Հայաստանի հանգամանաւոր մարդոց նախաձեռնութեան մը բարի յուրը՝ ազգային հերոսը ներկայացնող հատորի մը պատրաստությունն ու հրատարակությունը:

Այդ հրատարակությունը կ'ուշանայ սակայն: Ինչե՛ր մտածել:

Մի՞թէ կարելի է արտայայտուիլ, այն ալ պաշտօնապէս եւ հեղինակաւոր բերնով մօտաւոր օրերու ազգային գործիչի մը մասին, որ «կ'ապրի» պինքը ճանչցողներու մնացորդացին մէջ, որ «կենդանի պատկեր մըն է» տակաւին անոնց աչքին, անոնց խոհերուն մէջ: Երբ տակաւին, իրենց ծոցէն հեռացած **հերոսին** դէմ դառնացողներու մոլեռանդ տարր մը կայ: Հապա՛ արտաքին թշնամին:

Եւ ա՛յլ անխոստովանելի պատրուակներով հասկնալի ուշացում, հայրենիքի մէջ հայ հերոսին գերեզման մը շնորհելու մէջ տատանողներու կողմէ:

Այս ուշացումը միանգամայն առիթ կ'ընծայէ մեր այս ձեռնարկը իրագործելու, ամփոփել վկայություններ, **Անդրանիկի** անձին ու կեանքին սահմանուած աւելի լայնածաւալ եւ ամբողջական հատորին լոյս տեսնելէն առաջ:

Արդարեւ մեր այս որոշումին անհրաժեշտութիւնը նկատի առնելու պատճառներ չէ որ կը պակսին:

Հրատարակութեան խթան հանդիսացաւ մանաւանդ, Անդրանիկի մահուան 60ամեակի առթիւ մեզմէ խնդրուած աշխատակցութիւնը: Շարք մը յօդուածներ՝ որոնցմով կը սկսի արդարեւ հատորը:

Ասոնց լոյս տեսնելուն յաջորդող օրերուն եղած քաջակերական խօսքերը, ստացուած համակրանք յայտնող ու գնահատական տողերը:

Ամենէն նշանակալիցներն եղան, տարեց, շարքային դաշնակցականներուն կողմէ շնայլուածները, իրօք «յայտնութիւններ»:

«Անդրանիկը մեզի այդպէս ճանչցուցած չէին»:

Այս պարագան հետզհետէ խոհերս ամբողջութեամբ յափըտակեցին:

Տակաւին ունեցայ նաեւ վիշտ մը, որ նոյնպէս խորացաւ մէջըս, երբ շատ չանցած, այդ խոնարհ կուսակցականներու անկեղծ, սրտբաց արտայայտութիւններուն յաջորդեց աւելի «գիտակից, մտաւորական ու առաջնորդող» դաշնակցականներ լսելու առիթներ:

Նախապէս կարդացած էի ՀԱՅՐԵՆԻՔ օրաթերթի խմբագրին «ակնարկներու» շարքէն Անդրանիկը ներկայացնող գրութիւն մը:

Վերլիջեցի «Փէռ Լաշէպ» գերեզմանատան հանդիսութիւնը, ազգային հերոսի յուշարձանին բացման առթիւ արտասանած խօսքերու գութած անարդար արձագանգը ոմանց մօտ, որոնց պարտէպին մէջ նետուած քարեր սեպուեցան բառերս՝ գոյական թէ ածական, եւ եղան փորի ցաւէ բղիսած յիմարական նկատողութիւններ:

Հերոսի մահուանէն 60 տարի յետոյ տակաւին պղտոր մտքերուն լուսաբանութեանց կարօտ մնացած ըլլալին կը շեշտուի, ուստի նաեւ ապագայ պատմաբաններուն քայլերը առաջնորդող արահետներու պահանջը:

Անդրանիկի իսկական դիմագիծը: Անոր մեծութիւնը:

Անդրանիկ, թշուառ, անտէր հայրենիքի մը շրջանի ծնունդ, ցիրուցան համայնքի մը վաւակն է: Համայնք մը, որ առանձին դասակարգ մըն է ինքնին, բանտուած վինապաշտ, յետամնաց պետութեան մը այլական դասաւորումներուն մէջ, ամբողջութեամբ ստորադաս դիրքի վրայ՝ շահագործելի տարր: Համայնք մը, որուն բնորոշիչն է քրիստոնէական կրօնքը, մահմետական ովկիանին մէջ թաղուած, որ կը պահէ յամառօրէն իր հինաւուրց ազգային էութեան եւ հաւատալիքներուն հանդէպ անբեկանելի դիրքաւորում, նոյնօրինակ դաստիարակութեամբ:

Այդ համայնքային կղզիացած կեանքէն Անդրանիկ, ազգայինն անցած է ֆէտայիի հանգամանքով, ու հռչակուած իբրեւ քաջարի կռուող:

Կոխը սակայն, ո՛չ Անդրանիկի, եւ ոչ ալ վէնքի հին ու նոր ընկերներուն նպատակը եղած չէ: Ազգովին եւ իրենց համար ալ սրբապան նպատակ մըն է, որ կռուի կը պարտադրէր: Ու ինքը, Անդրանիկ, շեշտակի կերպով մարմնացումը եղած է այդ նպատակին, օժտուած յարմարագոյն ձիրքերով՝ խոհականութիւն, պաստուծութիւն, պոհաբերող ոգի եւ նկարագիր: Իրեն վերագրուած հանձարեղ ռազմավարութիւնը, որ անժխտելի է, նպաստաւորողը եղած է հայ գիւղերու գոյութիւնը, հայ գիւղացու բնագոյնական առողջ պոհաբերութիւնը, պոր Անդրանիկ չղաղրեցաւ խանդաղատանքով վերլիջելէ:

Իր անունին կցուած հերոս տիտղոսը յետ մահու վարձատրութիւն մը չեղաւ իրեն համար: Այս հանգամանքը պէտք է շարունակ ներկայ ըլլայ պայն ներկայացնողներու, դատողներու ուշադրութեան, անոնց խոհերուն մէջ, ըլլա՛ն անոնք դաստիարակներ, կուսակցականներ՝ այլեւայլ հոսանքի պատկանող, եւ մա՛նաւանդ պատմաբաններ:

Պիտի գտնուին նկատողներ, եւ իրաւամբ, որ մեր մտահոգութիւնները բոլորովին աւելորդ են: Անդրանիկի առասպելը տարիներու հողովումով երբեք չէ տօգունած: Շատ հասկնալի է որ գտնուին իր պատկանած նախկին կուսակցութեան շարքերուն մէջ դառնութիւն ունեցողներ, որ Անդրանիկ ի վերջոյ թեւածել ուզած է նեղմիտ եւ ժամանակավրէպ հասկացողութիւններէն վեր, այնպիսի ատեն մը մանաւանդ, երբ ազգը միահամուռ ճիգի պէտք ունէր, քանպի էականը անժխտելիօրէն մէկ էր՝ նախ ապրիլ, ապա վերելք:

Այսուհանդերձ ՀԱՅՐԵՆԻՔի պէս կարդացուած օրաթերթի մը խմբագրին ելոյթը կարելի չէր անպատասխանի թողուլ: Այն իմաստով որ մեր ազգային ընդհանուր պարզացման, թերեւս նաեւ դաստիարակչութեան մարպին մէջ, ինչ կը վերաբերի մասնաւորաբար Սփիւռքին, մեր հանրային կարծիքին կազմաւորութեան մէջ, տակաւին օրաթերթերը ընթերցողներ ունին: Անոնց խմբագիրները «կոչում»ով հանրային գործիչներ են, ազգին ծառայող, մեր պատմութեան գիտակ՝ պարզացումի տէր, ունին ուստի պատասխանատուութիւններ:

Մեր դժբախտ եւ դժուար պայմաններուն բերմամբ, կուսակցութեան մը «օրգան»ը իր կուսակիցներուն դպրոցն է, ու միայն անոր բերնէն կախուած շարքայինը կը տարուի ընդունիլ, հաւատալ եւ ըսել «վարդապետն ասաց», անոր մէջ փնտռել իր մոլեռանդութիւնը չքմեղացնող դիրքաւորումը:

Կուսակցական այդ աղբիւրները ունին անշուշտ վիրենք մատակարարող ակունքներ՝ մտաւորական տարրեր, որոնց վրայ կը յենու ո՛չ միայն գաղափարախօսութեան արդիականացումն ու իրագործութիւնը, այլ նախապէս շարքայիններու հոգեկան եւ մտաւոր դաստիարակութիւնը՝ նկարագիրը:

Շատ կարելու է կուսակցության մէջ այդ տարրերուն դերը, անոնց առջեւ կը բացուին ասպարէզ, կը ստանձնեն պատասխանատու դեր, կը մասնակցին կուսակցության կեանքին, գրչով, խօսքով, գործով:

Ազգ եւ կուսակցութիւն ակնկալութիւններ ունին անոնցմէ, անհրաժեշտ է որ ըլլան վարձացած եւ լուրջ անձինք:

Այդպիսիներուն համար, առաւելապէս, մեր մօտաւոր պատմական դէպքերու եւ անձերու մասին բազմաթիւ վկայութիւններ իրենց բարերար կողմերն ունին:

Արդարեւ հիասթափութեան պարագաներ չեն պակսիր, երբ միակողմանի եղած է անոնց հետաքրքրութիւնը:

Այսպէս: Դեռ երէկ էր, հապիւ երեք տարի առաջ, Հրաչ Չարդարեանի գրիչով՝ հետեւեալ տողերը. «... Անգամ մը եւս, բացառիկ սաստկութեամբ, որոտաց մէջս սրբապան ընդվզումը՝ դէպի այն բուխ շարքայինները, միջակ ու շիլ շէֆերը, որ շղթայազերծեցին իրենց պղտոր կիրքերը, լարեցին դաւադրանքի ոստայններ, խեղդելու համար ազգային պատմական փառք մը սուտի եւ ւրպարտութեանց թընձուկին մէջ: ... Անդրանիկ՝ լոյսի պէս արդար եւ իմաստուն մեծութիւն մը...»:

Սրընթաց, գահավէժ ուժացումի ճամբաներուն վրայ, Սփիւռքը կը խարխափի ազգային մտաւոր բթացումի ճանկերուն մէջ:

Ո՛հ, ինչքա՛ն բազմաթիւ են նմոյշները անգիտութեան, ուժացումի, արդար ընդվզում առթող գրութիւններն ու հանդիպումները:

Տարեկից մը, ազգային երկրորդական վարժարան աւարտած, գրեթէ խոր ծերութեան օրերու հանդիպում մը իրեն հետ: Վաճառականի հոգիով արդէն այլասերած, ընկերային յեղաշրջումներն ու պայքարը իր ասպարէզի գրպանէն դիտող, վեց տասնեակ տարիներու ազգային հոգերուն հանդէպ անտարբեր, ուստի անտեղեակ, մոռցած նաեւ Եղեռնի տարիներուն իր սեփական ապրումներն ու համատարած սուգն ու աւերը, կարծիքներու փոխանակութեանց, կամ վիճաբանութիւններու ընթացքին՝ բացակայ, երբ յանկարծ կ'արթննայ նիւթին վերաբերեալ այնքան միամիտ ելոյթներ ունի, ինչպէս պիտի ունենար **Էսքիմոցի** մը, թէեւ ինք աշակերտութեան եղած է **դաշնակցական՝ գրպանը տետր:**

Ուրիշ մը, իր հիւրերն ենք, իր ապրած գաղութին մէջ բաւական ծանօթ գրոց-բրոց, տասնեակ տարիներու շեշտուած պայքարէն ծնունդ առած ազգային **հերձուածի** մը գործօն տարր, թունդ կուսակցական, նոյնպէս երկրորդական հայ վարժարանի գրասեղաններէն սկսեալ տեղական եւ շրջանային կ. կոմիտէներու անդամակցած, **Մայիս 28** եւ «Դաշնակցութեան Օր»երու առթիւ բեմ հանուած, մամուլին մէջ հիւր-ընկալուած եւ խմբագրելու արդար յաւակնութիւններ ունեցող:

Մտերիմներ չենք եղած: Գիտէի որ հաւատաւոր կուսակցա-



կան մըն է, բայց ոչ մոլեռանդ: Միայն թէ: Կ'ենթադրէի որ ազգային կեանքին հետեւած է հակառակորդներու կարծիքներուն եւ անոնց պարզած տեսակէտներուն եւս ծանօթ: Իր գրադարանը թեթեւցնելու համար տարիներ առաջ առաջարկած էր ՀԱՅՐԵՆԻՔ անսագրերու հաւաքածոն, կոր ընդունած էի շնորհակալութեամբ, ուստի համուկուած էի որ անոնց պարունակութեան գէթ տեղեակ էր, որով ազգային կենաց-մահու պայքարին ամենաեռուն շրջանի պատմական իրադարձութիւններու տեղեակ, հոգ չէ թէ անոնք միշտ անկողմնակալ չեն ներկայացուած, եւ սակայն յետագայ արդիւնքները կրցած էին իր ստաւորականի հանգամանքին վայել երակացութիւններու տարած ըլլալ վինքը:

Կը գնահատէի իր մէջ ազգային հարցերու վերաբերմամբ ցուցաբերած կիրքը, թերեւս ինչ որ մեզի կը մնար երբեմնի յուշերէն, կարօտներէն, կորսուած ծննդավայրի մատունքներէն:

Եւ ինչ կրնար ըլլալ մեր հանդիպումներուն զրգռիչ ու ցանկալի նպատակը: Մեզ տանջող, մաշեցնող խոցերուն մեղմացումը փնտռել, բախտակիցներու տառապանքին հետ խառնել կոտտացող վիշտը մեր, բացատրութիւններ փնտռուել սնցեալը պրպտելով:

Մեր սերունդը երբե՛ք պիտի չկրնայ այդ կապանքներէն ձերբազատուիլ: Ի՛ զո՛ր:

Իրեն հիւր ենք: Տանտիկնոջ առաջին խօսքերն են ծայրայեղ նախազգուշացում: -- Դուք սուրճ կը խմէ՛ք: Ամուսինիս արգիլուած է: Սրտի տագնապ ունեցած է, խնդրեմ ազգային խնդիրներու մասին մի՛ վիճիք:

Կը վերյիջեմ յուզումով, խանդաղատանքով ու կարօտով Վահան Թոթովենցի ցասման բազմաթիւ դրուագներէն մեկը: Սէր ու խանդ սփռող, կեանքին լաւ կողմերը տեսնող երիտասարդ մըն էր, իր ընկերութիւնն ու խօսքը փնտռուած:

Փախստական ինքն սլ շատերու հետ, հեռաւոր անկիւն մը ժամանակաւորապէս ապաստանած, մայթին վրայ հասակի ցածութեամբ իր սենեակի պատուհանին եւ մուտքի դրան վրայ շաբաթներ յետոյ փակցուց ազդ մը:

«Այս պատուհանին առջեւ, մուտքին, միջանցքին եւ սենեակին մէջ, արգիլուած է այսուհետեւ խօսիլ ու վիճիլ ազգային հարցերու շուրջ, գործիչներու, մասնաւորաբար Անդրանիկի եւ ա՛յլ մեծ անձնաւորութիւններու մասին»:

Ուստի տանտիկնոջ ազդարարութիւնը հասկնալի էր, թէեւ իրենց բացառիկ այցելուներէն էի:

Խրատուած ըլլալու պատեհութիւններ ունեցեր էի, եղած էի աւանատես եւ ականջալուր նման բուռն վէճերու: Նուազ հրահրողներէն չեմ եղած: Արդարեւ յաճախ կարօտն ունեցեր եմ այդ տուայտանքներուն, անոր մէջ մխրճուած տեսած էի ինծի շատ սիրելի մարդիկ:

Այցելութիւնը կարճ կապե՛լ: Ինչպե՛ս:

Մինչեւ սուրճի գաւաթներուն պարպուիլը, թացիկ, անգոյն, անհամ ըսի-ըսաներէն առաջին յոգնողն եղաւ մեր հիւրընկալը:

-- Անդրանիկի մասին գրածներդ կարդացի: Դուն վինքը պաշտողներէն ես:

-- Իսկ դո՞ւն:

Լռեց, սուրճի բաժակները սկսաւ հաւաքել, բայց կռահեց որ ակնարկս իրեն կը հետեւի:

-- Ինչ մեղքս պահեմ: Մեր կուսակցական հանդիպումներու ատեն Հայաստանի հանրապետութեան վերջին վարչապետին կողմէ: **Անդրանիկի** մասին ըրած վեկուցումը լսած ու վինքը ընդմիջած եմ...

Կրկին կանգ կ'առնէ ու ապա անհամբեր ու կրքոտ

-- Ինչո՞ւ վինքը չմաքրագործեցիք:

Շշմած իրեն կը նայիմ: Մտքես անցաւ որ այդ վեկուցողը ապտակ կերած էր Անդրանիկէն:

-- Իսկ այժմ ի՞նչ է կարծիքդ:

Ներկաները իրենց աթոռներուն վրայ կը խլրտին, հայեացքս կ'իյնայ տանտիկնոջ դէմքին վրայ, աչքերէն աղերսանք կը հոսի: Կը լռեմ:

-- Նախընտրելի է որ ետ կենաս իր մասին գրելէ:

Այդ օրէն ի վեր աւելի ու աւելի համոզուեցայ, որ այս հատորին հրատարակութիւնը անհրաժեշտութիւն մըն է: Հոն ամփոփուած են պատանեկան տպաւորութիւններ, ժողովուրդի վաւակի մը ձեռքով գրուած, որ եղերական դէպքերու բերմամբ շփման մէջ գտնուած է հայ ժողովուրդի ամէն խաւերուն հետ, պատանիի տպաւորութիւններ, որոնք միշտ սւելի առարկայական են, եւ հոս բերուած են անփոփոխ:

Հոն կը գտնուին վկայութիւններ, ոչ մէկ յաւակնութիւն Անդրանիկը պանծացնելու: Ուստի ոչ ալ վախ, որ իր յիշատակը աղարտուած կ'ըլլայ:

Մեր սերունդը երգեց վինքը, Հայոց շրթունքները պիտի չդադրին վինքն երգելէ:

**Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,  
Թնդացնում ես երկինք գետին տենչավառ,  
Քաջ անունդ պիտի յիշուի դարէ դար,  
Հսկայ լերինք քեզ ապաստան, Ա՛նդրանիկ:**

**Թշնամիներ երբ լսեն քո անունը,  
Օձերի պէս պիտ' սողան իրենց բոյնը.  
Երակներիդ ասնի քաջի արիւնը  
Չըզգամաքէ մինչ յաւիտեան, Անդրանիկ:**

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն,  
Քնքոյ ձեռամբ քո ճակատը պսակեն,  
Գոհարներով անվախ կուրծքդ վարդարեն,  
Կեցցես յաւէտ դու անսասան, Ա՛նդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար  
Թող դայլայլեն գիշեր ցերեկ անդադար,  
Անյաղթ մնաս, դու քաջ կռուի սիրահար,  
Հայրենիքի տէր ու պաշտպան, Ա՛նդրանիկ:



ԱՆԴՐԱՆԻԿ

# ԱՆԴՐԱՆԻԿԸ ՔԱՋ՝ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՎ

Ամէն անդամ, ու այդ կը պատահի յաճախ, երբ այս նուիրական դարձած անունը մէջն յուշեր կ'արթնցնէ՝ ազգային եւ անձնական, հին կարօտներ կը վառէ: Երբ լուսած երգերու թրթիւր կը զգամ շրթներուս, երբ խոհերս անոր նուիրուած են, որեւէ խօսակցութիւն եւ ընթերցում երբ կը կատարուի այդ ամենասիրելի անունին մասին, ինձ համար անյեղլի իրականութիւն մըն է, որ այդ ամէնը արձագանգներն են մեր հերոսներուն կողմէ համախումբ ներդաշնակուած անլուելի զօղանջի մը՝ Անդրանիկ, Անդրանիկ, Անդրանիկ:

Արդարեւ, մեր սերունդի մանկական, պատանեկան հէքեաթներուն շարքին մէջ, նոյնքան սքանչացում գրգռող՝ գովաբանուած այդ էակները՝ հայրենի բնութեան էն անհրապոյր խորշերուն մէջ կծկուած, անոր ցրտաշունչ կատարներուն վրայ թառած մերթ, կը մարտնչէին նոյնպէս սուրբ նպատակի մը ի խնդիր:

Այն օրերուն, պատմողը, եթէ իրաւամբ կրնար անհասելի հռչակել անոնց էութիւնը իբրեւ մարդ արարած, սակայն անոնց դոյութիւնը, ինչպէս նաեւ անոնց հէքեաթին վերջաւորութիւնը պիտի չմնար անստոյգ, մղուած պայքարին արդիւնքը պիտի ըլլար շօշափելի՝ պիտի լսէինք շեփորումը արիւնարբու բռնապետի մը տապալումին, որ եթէ ոչ միմիայն, այլ առաւելապէս իրենց դործն եղաւ:

Ու ախո՛ս, հայ միտքն է որ այդ պահուն մնաց զանդադ, անճրկեցաւ ու չարժեցուց հայ բազուկին, հայ հերոսներուն զոհարբութիւնը, անոնց չարքաչ կեանքովն ու մարմնական ճարտարութիւններովը ձեռք բերուած արդիւնքը:

Այսօր, անոնց հէքեաթը վերջ գտած է, զայն կերտողներուն կեանքն ալ: Մեզի կը մնայ հերոսներէն անջնջելի յիշատակներ, անոնց դոյութենէն եւ դործերէն փաստեր, ուստի մեզ ներչնչող ոգիներ միայն:

Արդարեւ, ո՞վ, եւ ի՞նչպէս կրնայ մէկը, հերոսներու միջեւ բազդատութիւններ կատարել:

Ի՞նչ մեծ յոգնութիւն պիտի ըլլար զանոնք շարել աստիճաններու վրայ, երկինք հասնող բարձրութենէն նոյնիսկ սկսելով անոնցմէ ամենէն համեստ կարծուածին անուանադրումը, երբ անոնցմէ ամէն մէկը, իր յօժար կամքով, վասն հայրենեաց, կը նուիրէ ինչ որ իր միակ թանկագին սեփականութիւնն է, համարժէք ամէն էակի պարագային՝ կեանքը:

Եւ ի՞նչ էր այդ «վասն հայրենեաց»ը:

Բուռ-բուռ հողեր, անոնց վրայ դարերով, հաւատարմօրէն, պարկեշտօրէն քրտինք թափող մարդիկ, որոնք ահա վերջապէս, կ'ուզէին իրենց վզին թառած, անկէ արլւն քաշող բզէզներէն ձերբազատիլ, այդ սրբազան կոչումը ընդգրկած անձնագոհ՝ սեփական գաւակներուն ձեռքով:

Եւ մեր ժողովուրդին այդ համեստ ու առաքինի տղաքն էին որ ուզեցին իրենց յիշատակը յաւերժացնել, ի գին իրենց գերագոյն զոհարերութեան, ուզեցին իրենց անունները ամփոփել միակ անունի մը մէջ: Իրենք նոյնքան հերոս, համեստութեան վերջին ապացոյց մըն ալ տուին, համայն պատիւը կցել փափաքեցան անուռի մը, որ իրենց Անդրամիկն էր եւ ըրին զայն մեր ամենուս Անդրամիկը:

Եւ անոր հանդէպ իր հաւասարներուն յարգանքը եղած է խոր, նաեւ անկեղծ, ոչ մէկ տրտունջ այդ յաջող ընտրութենէն յետոյ, դրած են զայն անփշրելի պատուանդանի մը վրայ, ա'յլ հերոսներու վկայութիւններով զմոսուած:

— Ինչո՞վն է Անդրանիկ «Շէֆ», երբ ինքն ու իր միւս ընկերները նրանցից ոչինչով պակաս չեն:

Կը հարցնէ հայ մեծ գրագէտ մը, մեծ հայ հերոսի մը:

— Ճանր՞մ, ի՞նչ կը հարցնես: Ան գլխաւոր է, չէ՞ մէկը պէտք է գլխաւոր լինի: Իշտէ ան յարմար եղաւ...

— Նա ձեզնից ո՛չ աւելի քաջ է, եւ ոչ...

— Ճանր՞մ, հէ՛մ քաջ է, հէ՛մ խելացի, աչք ունի: Սար ու ձորով կ'անցնինք, ամէն մէկն իր ճամբան կը քալէ, Անդրանիկ ամէնքիս ճամբան: Աննման դիրք բռնել գիտէ թշնամիին դէմ, ու մենք վստահ ենք որ դա լաւագոյնն է:

Ի՞նչ աւելի հեղինակաւոր վկայութիւն կարելի է աւելցնել, երբ զայն արտայայտողն է Սերաստացի Մուրատը, բոլոր գինք ճանչցող քաջերուն կողմէ «Հայոց Աքիլէսը» տիտղոսին արժանացած:

Ուրեմն նա քաջ էր եւ զգաստ, ու լիուրի արժանացուցած է իրեններուն ընտրութիւնն ու վստահութիւնը:

Իսկ հայրենի երկրին ճանաչողութիւնը, անոր ժողովուրդին բոլոր խաւերուն հետ իր ունեցած շփումը, անոր բնակիչներուն կեանքի պայմանները, տակաւին իր ինքնութիւնը պահելով ապրելու յամառ որոշումին ծանօթութիւնը, Անդրանիկի հողոյն մէջ պիտի խտացնէին Հայուն գոյութեան առողջ բնագոյնը, զոր այնուհետեւ ցոլացած կը գտնենք իր բոլոր ձեռնարկներուն մէջ, որ գինքը առաջնորդող ուզին պիտի լուսաւորէ՝ անշեղ, անկաշառ:

Ու նաեւ, այդ ճանապարհէն ընթանալու յատուկ՝ տոկուն կառք:

Եւ իր մարդեղէն էութիւնը, նետուած ոճրագործ իշխանաւորներէն արծարծուած հնոցին մէջ, կոփուեցաւ ինչպէս պողպատը, հայ

Ժողովուրդի մասնիկներուն վրայ թափուած հարուածներուն ուժովը :

Քաջ, զգաստ, Հայու բնագլով զեղուն, տոկուն կամք՝ եղան Անդրանիկի անձին յատկանիչները :

Մեր օրերու բացառիկ երեւոյթն եղաւ : Անոր տարուբեր կեանքը՝ մէկ քանի տասնամեակներ :

— Շապին-Գարահիսարէն Ամերիկա (1866–1927) :

— Մանկութիւն, պատանեկութիւն, անձկութիւն :

— Վիշտ, կարօտ, ցասում :

— Հայրենանուէր Ասպետ, Փէտայիներու առաջնորդ :

— Թերազաւատ եւ զգոյշ, խոհականութեան տարիներ հայրենիքէն հեռու :

— Ազգային վերելքի պայքարին մէջ :

— Կիսատ թողուած դործի մասին աւազում :

Իր ազգանուէր գործօն կեանքը խտացած է երկու կարճատեւ շրջաններու մէջ, մէկը միւռնէն բեղուն, արզասաւոր, երախտաշատ :

Առաջինը :

Գետին փռուած ազգային արժանապատուութիւնը վերականգնելու տարիներն են :

Անդրանիկ կը փութայ միանալու Հայոց լեռներն իրենց միակ ապաւէն ընտրած ա՛յն ասպետներուն, որոնց փառապանծ ներկայացուցիչն է Աղբիւր Սերոբ՝ համայն ընտանեօք : Որոնց սրբազան նըպատակն է սաստել, ահարեկել ու պատժել Հայր անզուսպ պատուհասող պետական հովանիին ներքեւ գործող ոճրադործները :

Աղբիւր Սերոբի եւ իր համահաւասարներու ծոցին մէջ Անդրանիկի ինքնածին յատկանութիւնները կը զարգանան : Իր բերած համեստ բաժինը կ'ուռճանայ հայ Փէտայիին պարտադրուած զժնդակ պայմաններուն բերմամբ, կ'աշակերտի կեանքը կողոպտեանարար-ճրագոյն դպրոցին՝ որուն խարխուլ, բացօթեայ դասախօսական ամպիրոններէն կը լսուէին մահուան ճիշէր, որբացածներու ցասում, դրաստի վիճակին բերուած չքաւոր հայ մշակներուն հեւքը, եւ անշուշտ հայ ազգին օրհասը վճող ճիւղներուն դէմ մարտի հրաւիրող ահագանգի կոչերը :

Անոնց մարտնչումներէն կան հերոսական դրուագներ, ինչքան ալ ցանցառ են իրենց կողմէ թողուած կամ թելադրուած օրագրութիւնները, որոնք եթէ միշտ ալ մեր սրտերը հպարտ ըրած են, եւ որոնք նամանաւանդ ատենին, մահացողներուն եւ տանջուողներուն համար եղած են սպեղանի՝ աղօթքի եւ մխիթարութեան մրմունջներ :

Փէտայիին ինքնամոռացութեան ժամանակներն էին : Հաւատաւոր իր կոչումին, Ժուժկալ, չարքաչ, թշուառին հանդէպ պաշտպանի դերին մէջ սպեղանական, իր անձին խնամքը անտեսող, իր զէնքը փայլուն, փամփշտակալը լեցուն պահելու հոգը զերիվեր, տիւ եւ

գիշեր անհաւասար կռուի պատրաստ : Սոսափում՝ այո՛ : Անձնատուութիւն՝ երբե՛ք :

Անոնց կողմէ փնտռուած կռիւները քմահաճ չեն : Ասոնց յաջող ելքին համար թափուած հողածուծեան մէջ բարոյական արժէքն է տիրապետողը՝ անոր տալիք ազգային օգուտը :

Առաջին շրջանէն, 1890էն յետոյ, երկու դրուագ միայն :

Ձեռնասուններն են վեհապանծ հոգիի մը՝ Աղբիւր Սերորին : Արի են ընկերները, ձեռնարկնին՝ բարի, նախանձնին՝ բարի :

Ու յանկարծ չկայ, իր անձին օրինակովը գիրենք թրծած մեծ Առաքեալը՝ անակնկալ գոհ անարգ դաւադրութեան մը, ազգակիցի մը անօրինակելի դաւաճանութեան :

Ո՞վ պիտի չկարենայ երեւակայել նման հերոսի մը կորուստին առթած դառնութիւնը, վհատութիւնը տակաւին : Թէեւ կան իր հոգիին կորիւնները :

Ու կը ցցուի արդէն Անդրանիկ :

Աղբիւր Սերորին սպանիչին գլուխը ա՛ն կը պտըտցնէ Հայոց լեռներուն վրայ, խրճիթէ՛ խրճիթ, որոնց բուխերիկներէն ծուխը նոյնքան թանձր՝ կրկին կը բարձրանայ, հայ ընկճուած ոգին թռիչք կ'առնէ : 1899 :

Այս յանդուգն ահաբեկչութեան բարոյակա՞նը :

Ո՛ր պետական ոճրագործն անգամ, ինչքա՛ն հզօր ըլլայ իր անձին յատկացուած պաշտպանութիւնն ու պատիւը, գերծ չէ Ֆէտայիի վրէժխնդրական պատիժէն, ինչպէս նաեւ դաւաճանը :

Յոյց տալ որ պայքարին յաջող վերջաւորութիւնը կը պահանջէ անընկճելի կամք եւ հաւատք :

Կայ ուրեմն Անդրանիկ՝ գլխաւորը, Կէլիէկիւզանի, Շէնիկ Սեմալի, Տալուրիկի եւ ա՛յլ անհաւասար ընդհարումներուն :

Յուլիս 1905 : Ինչո՞ւ Առաքելոց վանքին կռիւր : Քմահաճ կամ սխալ որոշո՞ւմ, բնաւի՛ն :

Դարուն սկիզբն է : Մշոյ Դաշտը լեցուն է թուրք դաղթականներով, զինուորներով, լրտեսներով : Ասպատակութիւն հայ գիւղերու վրայ, թալան, առեւանդում, սպանութիւններ : Կրօնափոխութեան քարոզչութիւն, որուն ընդառաջ կ'երթան խումբ-խումբ, հայ ժողովուրդին յուսալքուած ու ինքզինքնին անպաշտպան գտած տարրերը :

Անհրաժեշտ է հակազդել :

Անդրանիկի գլխաւորութեամբ, ընդամէնը վաթսուն ասպետներ, գաղտնապահ պատրաստութենէ յետոյ կամովին կը պաշարուին վանքին մէջ :

Հոն կ'ամրանան երկարատեւ կռիւի պաշարով, որ ժողովուրդին սիրտ տան, ընկճուած, յուսահատ հոգիները գօտեպնդեն, հայ դիմադրական ուժին եւ ահաբեկիչներուն գոյութիւնը փաստեն, ա-

մէն կարգի հարստահարիչներուն առջեւ, օտար մարդորաներուն, հայակեր պետութեան, «Քրիստոնեայ Եւրոպայի» խղճին :

Բոլոր յարձակումներուն յաջող դիմադարձութիւն : Քսանը-մէկ օր : Ֆէտայիներէն 4 զոհ, թշնամիէն հարիւրաւորներ : Դաժան ձմեռ է : Օտար հիւպատոսներ մօտէն հետեւած են կռիւններուն, միակ ելքը բանակցութիւնն է, որուն Անդրանիկ հաւատք չ'ընծայեր :

Անձատուութեան կոչներուն ահա՛ իր պատասխանը : Մարդ կը տարուի տարակուսելու թէ ո՞վ է խօսողը : Հայկը՝ Բելլիօն : Սասնոյ Դաւիթը՝ Մարայ Մելիքիօն : Վարդանանք՝ Յաղկերտիօն :

«... Երբ մեր երկիրն մէջ մտնեն 1895ի Մայիսեան բարեկորդութիւնները : Երկար կռիւի ուժ ունինք : Մեզ ձեռք ձգել չ'է կրնար եւ մինչ այդ ձեռքի հազարաւորներ կը զգետնուին : Լսած էք որ մենք կարաւան գարնենք, Թուրք մը, Քիւրտ մը սպաննենք, որ անմեղ ըլլան : Եւ մեզի վնաս հասցնողներէն Երբ ալ ըլլայ մեր վրէժը կը լուծենք, մենք կամ մեր յաջորդներու ձեռքով...» :

Արժանաւորապէս վերադնահատուած Առաքելոց վանքի ձեռնարկը, հայ պատանիի ընթերցանութեան գրքին դաստիարակիչ էջերը հարստացնող տուեալներ ունի :

Հոն կան զմայլելի օրինակներ անձնագոհութեան, ազգային շահերու գիտակցութեան, զազտնապահութեան, դեկալարութեան ցոյց տուած ռազմական կարողութեան եւ անկէ գերիվեր՝ պատասխանատուութեան զգացումի :

Յառաջադրուած նպատակին հասնելէ յետոյ, որուն մէջ տիրապետող գիծն է քաղաքականը, անոր յաջող կողմին պսակաւորումը Անդրանիկի հանձարեղ ռազմավարութիւնն է :

Առանց դոյզն կորուստի հայ ուժերը յանկարծ կ'անհետին, ինչպէս հէքեաթներու մէջ, ափ ի բերան թողելով օտար ակնաւատեսները, հեղեղով թշնամին մանաւանդ՝ երբ ան կ'ակնկալէր ժառանգ եւ վերջնական յաղթանակ մը :

Տակաւին խել մը դրուագներ, որոնց թուումը երկար է, կը փաստեն որ Ֆէտայիները եւ Անդրանիկ իրենց վստահուած դժուարին առաքելութիւնը ի գործ դրած են գիտակցութեամբ, պատուով եւ յաջող :

Անհրաժեշտ է, մանրակրկիտ ուսումնասիրութիւններէ վերջ, համառօտել եւ տարածել այդ շրջանի արարքներուն բարոյական եւ պատմական իմաստը :

Որքան ալ քիչ ըլլան այժմ, Սփիւռքի մէջ անչուշտ, հայերէն կարդացողներու թիւը, գիտենք որ տակաւին անոնցմէ շատեր, եթէ ո՛չ միշտ, հետզհետէ ցոյց տուած են եւ կու տան թերահաւատ վերաբերմունք եւ մտածելակերպ, որ ո՛չ միայն ճիշդ չէ, այլեւ ազգաւնաս՝ որպէս մեր հակառակորդի ջաղանցքին ջուր տանող :



# ԱԻԱՂԱՆՔ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՈՒՐԾՔԻՆ ՎՐԱՅ

Դանդաղորէն, հետզհետէ աւելի շեշտուած թափով, ազգային վերազարթնումի փորձերը մինչեւ դարասկիզբը, անդառնալի կերպով, մեր ժողովուրդը պիտի մղէին դէպի նոր կարգախօս՝ ազատութիւն:

Նորածին մանուկներուն օրօրներուն խառնուած բոլորովին նոր՝ մարտաշունչ երգերը կը դառնային տիրապետող: Մինչ այդ կրկնուած երբեմնի հէքեաթներուն երեւակայական հերոսները, միս ու ոսկորով՝ այլեւս իրական էակներ էին եւ ազգային ու մտերմիկ:

Երբ մայրս, իմ յարատեւ պնդումներուս, մանաւանդ աննման հէքեաթ պատմողի իր շնորհքը գիտցողներու խնդրանքներուն տեղի կու տար, կը վազէի բերել յաթակազմ հատոր մը՝ լայնածաւալ, գեղատիպ, ճայնազրուած երգարան մը: Ծունկերուս վրայ կը ծաւալէի նախապէս ցուցամատս խրած հոն, ուր ճերմակ ձիւտոր մը, հպարտ ու սակաւազէն, կը բռնէր ամբողջ էջ մը: Աչքերս անոր վրայ անխրտիտ, ունկա մայրիկիս շրթունքներուն՝ մինչեւ իր վերջին խօսքերը անշարժ եւ լուռ, մինչեւ երկինքէն թափուող խնձորներուն թուումը ու՝

— Անոնք հասան իրենց մուրատիւն, դուք ալ հասնիք ձեր մուրատիւն:

Ամէն ունկնդիր ունէր իրենը, ու կը պոռար խանդավառ, իմինս կը մնար միշտ նոյնը՝ Անդրամիկը տեսնել: Որ ազգային հերոսի տիտղոսով պսակաւորուած, աւելի քան բաղձալի, դարձած էր աւելի քան երբեք անհասելի՝ հայրենի հողերէն հեռու:

Հայ յեղափոխութեան դադարի օրերն են:

Անարգ սուլթանի մը գահընկէցութիւնը վերջակէտը կը թուէր ըլլալ Հայոց տառապանքին, եւ «պետական արդարութիւն» էր որ պիտի փոխարինէր Փէտայիներու կողմէ գործադրուած մասնակի պատիժներէն ակնկալուածը:

Իսկ Անդրանիկի համոզումն էր որ կատարուածը քաղաքական անպարարութիւն մըն է լոկ, իր առողջ բնազդը զինք կը կրծէ, իր շուրջինները կը ջանայ համոզել: Ի զուր: Ու կը հեռանայ՝ չխանդարելու համար գալիք ոճիրները վարագուրող տօնավաճառի մը խրախուսանութիւնները: Նոր կարգեր ջատագովող բառակոյտերուն հանդէպ ամբողջովին թերահաւատ, նոյնքան ալ նոր իշխանաւորներուն:

Եւ կը հեռանար, այլո՛ւր մասնակցելու համար թուրք բնածին վայրագութիւնները սանձահարող կռիւներուն:

Արդարեւ, ինչքա՞ն, ինչքա՞ն բարի են ժողովուրդները: Միշտ կը հաւատան ոսկեղօծ խոստումներուն: Իրենց գոյութեան իրաւունքէն կը բխի ան, որուն դէմ բնագլը անկարող կ'ըլլայ պատնէշներ ցցել:

Հապա Հա՞յր:

Դարերու կորուստը դարմանելու աշխատանքներուն լծուած, յորդած է արդէն Հայուն կենսունակութիւնը: Շինարարութեան եւ տոհմային մշակոյթի բոլոր մարդերուն մէջ բացառիկ արագութեամբ իր կատարած վերելքը, խանդավառ ընթացքը, զոր կարելի չէ անշուշտ պարտիկ առանց անոր խոյանքը կասեցնելու, շուքի տակ թողած է զինք չըջապատող համայնքները, շուք մը ա՛յնքան թանձր՝ որուն մէջ միմիայն նախանձը կ'աճի: Եւ շուտ, շատ շուտ կ'աճի նախանձը՝ նամանաւանդ երբ չար է:

Այդ ծառէն թափուած լեղի պտուղները նոյնպէս աննշմար չեն մնար: Լաւատեսութիւնը անխառն չէ հեռեւարար: Արցունք ու կարօտ ցանկելով՝ հայ աշխարհը կը շարունակէ ցամքիլ: Իր կենսատու աւիչները հայրենախոյզ դէպի օտարութիւն կը հոսին եւ մեր դըպրոցներուն պատուհանները միշտ լայն բացուած կը մնան պանդըխտութիւն առաջնորդող ճամբաներուն վրայ:

Բայց տակաւին, հինգ դար հինգ տարիներու մէջ սեղմած, Ա. Ընդհանուր պատերազմի նախօրեակին հայ ժողովուրդը կը պահէ յառաջգիւղեւոր իր հեւքը՝ յուսատու լուրերով քաջալեր:

Ինչպէ՞ս անտեսել, նման առիթով, փրփրացող կեանքին պատկերը մեր գիւղին, անոր անդուսպ սլացքը, արդար յաւակնութիւններուն թուումը անոր խոնարհ բնակիչներուն՝ բարեպաշտ, մարդասէր, շինարար, ու ուսումնասէն:

Չուտ հայաբնակ, զինքը չըջապատող ձիւնածածկ լեռներուն մէջ ազատ՝ անկաշկանդ: Եզակի էր ան, իր ծաղկաւէտ հովիտներով, կանաչազարդ բլուրներով, բերքերովը արգասաբեր պարտէզներուն եւ արտերուն:

Մեծկակ, հաստակուռ եկեղեցին հրաւիրող, պատուհանէ մը թելակախ «Ձէնկ»ը փոխարինուած էր սղինձեայ իսկահան զանգակով մը՝ «Գամբանան», որուն զօղանջները կը քերէին լեռ, դաշտ ու ձորեր: Ինչպէս այլուր, եկեղեցւոյ կից երկսեռ դպրոցին մէկ սրահը եղած էր երկու, միակ ուսուցչին կողքին կար այլեւս վարժուհի մը: Դարասկիզբի Այբուբենին վզէ կախուած պնակիտներուն տեղը բռնած կարգին Այբբենարաններ կային, անոր քայլ առ քայլ յաջորդող իսկահան գիրքեր, յոգնած Նարեկներուն տեղը՝ ընթերցարան, գանձարան, թանգարան եւ մեղրագէտներ:

Ինչպէ՞ս կարելի է մոռացութեան տալ անգլերէն ընթերցարանի Ա. գիրքը, որուն Ա. էջին առաջին պարբերութիւնը կը սկսէր՝ «Ռան մաուս, ռան, տիւր գէթ ֆէն ֆէջ եու»։ Բայց ո՞վ էր կատուն, ո՞վ էր մուկը։ Եկուր մէջէն ելիր։ Ինչո՞ւ նման սկզբնաւորութիւն։

Վերջապէս, համ ու հոտ առած էին տօնական օրերը, դպրոցական տարեվերջի հանդէսները, հապա՞ հարսանիքները։

Կարելի է դանց առնել, արեւուն փոռած օրն ի բուն ուրախ ճոռուողիւններով լեփ-լեցուն կալերը՝ դիւզացիի քրտինքովը բեղմնաւորուած, եւ որոնք խաչակնքումներու եւ ուրախ տարաւանքու ընկերակցութեամբ կը պարպուէին մառաններու ու մարազներու մէջ։

Տակաւին, ո՞վ զարմանալի։ Մեր գիւղին մէջ կար «բաց ու գոց» ի պայքար։ Եկեղեցոյ դուռի թին մէջ նոյն դպիրները, փոխ-քարոզասացները կերտնի եւ ծնծղաներու տեղ նիգակներ կը շարժէին՝ գլուխնուն սաղաւարտ։

Աշուն է՝ 1914։ Վերջին աշունը այդ գիւղին եւ մեր բոլոր գիւղերուն։

Թաղէ-թաղ, տուներու դռներուն առաջ՝ շարժուն, բարձր եւ լայնանիստ օճախներու վրայ հսկայ կաթսաներ։ Անոնց մէջը ցորենով լեցուն՝ ջրածածկ, տակը կաղնիի կոճղեր, շուրջերին պատանեակներ իրենց թեւերը միացնելով անոնցմէ իւրաքանչիւրին պրոկունքները կը չափչփեն՝ անհամբեր իրարու յաջորդող արարողութիւններուն։

Կարգը եկած է վերջապէս կրակին վրայ փայտեր նետելուն, ու փոխն ի փոխ կը պարեն կաթսաներուն շուրջ կրակի բոցերովը լուսաւորուած, անոր ճարձատումներուն նուագովը խելայեղ։

Մինչ կաթսաներէն շոգին կը սկսի բարձրանալ, ջուրը խոկապէս սկսած է եռալ, անոր բջիջները իրենց վրայ դիզուած բեռը հըրելով վեր կը թուչին, ցնծութեամբ կը պայթին ու իրենց հետ դուրս կը նետեն հատիկներ։

Վերջին աշունն է ուրեմն։ Համայն Հայաստան այդպէս կ'եռար ի խնդիր վերելքի, երբ իր մէջ ու բոլորտիքը դաւ մտած ոճրագործ ձեռքեր արեան հեղեղներ լեցուցին այդ կենսապառ կաթսային մէջ։ Մարեցին Հայուն կրակը, խեղդեցին ու ցրուեցին է՛ն թանկագինները մարդկային հատիկներուն։

Մանուկը, պատանին, իրենց մուրատին հասնելու համար երբեք չեն վարանիր ամենասուղ գինը վճարել։

Այդ աներեւակայելի գինը պիտի վճարէի, բոլորովին իմ կամքէս անկախ, օտար հորիզոններու տակ, տարի մը եւ ամիսներ տարուբեր, երբ կ'անցնէինք փողոցները, թաթա միշտ իր ափին մէջ պինդ սեղմուած, կը բարձրանայինք շէնքի մը առաջին յարկը, աճապարանքով կ'անցնէինք միջանցքէ մը, ապա, սենեակի մը դրասենդաններուն վրայ գլուխին ծոած մարդոց բարեւ տալու, կը մտնէինք

ուրիշ մը, եւ երբ, այն ատեն միայն Վահան Թոթովենց զիս կը հրէր ազգային հերոսի գրկին մէջ, ու կը դռչէր իր բամբ ձայնով՝

— Մուրատիդ հասար :

Ճանապարհին թէեւ տեղեակ մօտաւոր գալիքին, բայց զիս առաջնորդողին խանդն ու արտորանքը յաջողած էին ստեղծել անակալը, որ նման ուրախ պահերը համեմող հրապոյրն է :

Ան ուրեմն, որ Անդրանիկն էր, նստած էր բարձր թիկնաթոռի մը վրայ՝ շուրջը երիտասարդներ, ոտքի : Զեռքս բռնեց, բայց աչքերս իր կզակէն վեր չէին համարձակեր բարձրանալ՝ թաւ պելխեբուն մէջ մխրճուած : Երբ երկու ձեռքերը ուսերուս տարաւ, դէմքս կպած էր արդէն իր կուրծքին, գլուխս իր թեկերուն մէջ :

Բնա՛ւ, բնա՛ւ չէի մեծցուցած զինքը երեւակայութեանս մէջ : Իրաւ է : Տակը ճերմակ ձի չկար, Փէտայիի հագուստով չէր, ո՛չ զէնք ունէր, ո՛չ փամփշտակալներ :

Թանձր պելխերը կը շրջապատէին գեղեցիկ դիմադիւծ մը՝ լայն ճակատով, վրան առատ մագեր՝ հագիւ ձիւնախառն, բարի ժպիտ մը, քաղցրաձայն հարցումներ :

ՀԱՅԱՍՏԱՆ օրաթերթի խմբագրատան մէջն ենք, երէկի «Կամաւորական Շտապի» շէնքին առաջին յարկին վրայ բնակարան մը, ուր Անդրանիկի սովորական ժամու հանապազօրեայ ներկայութիւնը հաւաքած է պաշտօնէութենէն բազմապատիկ անձեր :

Հոն այդ միջավայրին մէջ, միակ բարեկեցութիւնը որ շնորհուած էր ինձ, ազգային հերոսի մերձաւորութեան մէջ գտած ապահովութիւնս էր, եւ շատ չանցած պիտի տեսնէի որ զայն ստիպուած էի բաժնել հազարաւորներու հետ :

Հոն պիտի ապրէի ամիսներ : Բոլորովին համբ : Այնքա՛ն բան կար տեսնելիք, լսելիք, սորվելիք, որոնց մէջէն ընտրութիւն ընել աւելորդ էր, մէկը միւսէն անմխիթարական, թէեւ մէկ առ մէկ կը մեղմանային բախտիս եւ լաւատեսութեանս հարուածներով :

Մուրատիս հասած էի ա՛յն օրերուն, երբ մեր կամաւորներն ու իրենց պետերը դառնութեան մրուր կը քամէին, բաժակը իրենց շրթունքներուն, տակաւին կը մերժէին զայն ըմպել : Բանտուած ուս աշխարհակալութեան ուռկանին մէջ՝ անոր թեկերը սկսած էին կրծել ուս ժողովուրդին Փետրուարեան Յեղափոխութեան առժամեայ խոստումներուն ընծայած աքցաններով :

Շատ բնական է որ կը կրճոտէին նաեւ զիրար, ինչ որ անպատում վիշտ պիտի պատճառէր անմեղունակ որեւէ պատանիի :

«Երիտասարդ Թուրքերու կեղծ եւ ազգայնամոլ՝ ուստի հայակուլ ուղղութեան խորապէս համոզուած, գիտենք որ Անդրանիկ չէր դադրած Թուրքը տկարացնող պայքարներուն մասնակցելէ : Թուրք կառավարութեան՝ ըստ երեւոյթին «աւմիլար», քմահաճ

եւ դադարի կարգադրութեամբ Ա. Ընդհանուր Պատերազմին մասնակցութիւնը, նաեւ ահազանդի յայտարարութիւն մըն է գալիք ազգային աղէտին, որուն այդ օրէն սկսեալ համայն հայութիւնը համոզուած էր՝ բնազդօրէն կը զգար :

Համաձայնական պետութիւններուն շուտափոյթ յաջողութիւնը բնականօրէն բաղձալի էր եւ Անդրանիկ, հետու հայրենիքէն, անտեղեակ Կովկասի հայութեան ծոցին մէջ կատարուող խմորումներուն, չի մերժեր հոն կազմուած «Կամաւորական Շարժումին» վարիչ մարմնոյ հրաւերը :

Հագարական կամաւորներէ կազմուած չորս գունդերէն առաջինին հրամանատարն է : Հօր պետութեան մը բանակին մէկ մասնիկն են անոնք, ունին առատ ռազմամթերք ու պաշար : Մեր կամաւորները ինքզինքնին կը դերազանցեն, Անդրանիկ կը յայտնաբերէ հրամանատարի անժխտելի շնորհք :

Եւ սակայն, մեծ է, ահաւոր անոնց ազգասէրի եւ հայրենասէրի տառապանքը, երբ դէպի արեւմտահայ նահանգները կատարած իրենց ներխուժումներուն ատեն ականատես են կատարուած աւերին, գործուած ոճիրներուն՝ ազգային աղէտին : Ատոր զուգընթաց, իրենց դառնութեան բաժակը յորդեցնելու աստիճան անխիղճ, ռուս հրամանատարութեան վերաբերմունքին :

Այս անմարդկային, չափուած-ձեւուած քաղաքական արարքը, մղուած ճակատամարտներու ընթացքին, մահուան դռները բաղխող մարդոց նկատմամբ, կը քայքայեն մեր ամենէն լաւատես կամաւորներուն ջիզերը, մանաւանդ Անդրանիկին, որուն ուղղուած են բոլորին յոյսերն ու ակնկալութիւնները : Այդ օրերէն մանաւանդ ազգային հերոսի նկարագրին մէջ արմատ կը նետէ դժգոհանք մը, որ մերոնց կողմէ անգամ, դժբախտաբար, մնացած է անհասկնալի :

Յայտնի են, շատ անգամներ յիշուած, կամաւորական գունդերուն քաջագործութիւնները : Մասնաւորաբար Անդրանիկի հրամանատարութեամբ կատարուած՝ ինչպիսիք են Տիւմանի անյոյս ճակատամարտին յաջող ելքը, եւ իր նախաձեռնութեամբ՝ Պիթլիսի դրաւումը :

Արդ, ռուս աշխարհակալութեան համար աղաղակող յայտնութիւն մըն է հայկական նահանգներուն ամայացումը եւ աւերը, տակաւին անհրաժեշտ է, հակառակ այն փաստին՝ ժամ առաջ ձերբազատուիլ հայ կամաւորէն, որ իր ռազմական արժէքով անակնկալի բերած է զինքը, ինչպէս տարիներ առաջ իր կողմէ հրաւիրուած հայ-թաթարական կռիւններուն ատեն, մեր ժողովուրդին ցոյց տրուած իբր ազգ սպրեւու հօր կամքը :

Հոն ալ, չար նախանձի մը տուն տուող դրուազներ էին արձանագրուած, աշխարհակալներու աչքին փուշեր ցցուած :

## ԱՆԴՐԱՆԻԿԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԸ

Ապրիլ ուղող ժողովուրդ մը սակայն, պէտք է պատրաստ ըլլայ ամէն անակնկալի դէմ, չարիքէն խուսափիլ նուազագոյն կորուստով, առաւելապէս օգտուիլ շրջապատի փոփոխութիւններէն:

Ռուս յեղափոխութիւնը, մեր բոլորովին կորսուած ազգային գոյութիւնը վերականգնելու առիթ մըն էր թերեւս: Աններելի էր մեղկանալ:

Գիտակից ազգեր, համատարած աղէտներու պարագային կը ցուցաբերեն սրբազան միասնականութիւն: Մեզ շրջապատողներէն՝ Վրացիք եւ Թաթարները, երեւութապէս կու տային այդ օրինակը, մանաւանդ առանձնապատուի դժբախտութիւններէ զերծ՝ զիրար մեղադրելու պատճառներ չունէին:

19րդ դարու սկիզբին, կամովին ցարական կայսրութեան միացած Վրաց ժողովուրդի առաջնորդող խաւերը, առանձնաշնորհեալ դիրք կը գրաւէին ռուս վարչական, քաղաքական եւ զինուորական մարզերուն մէջ: Երկրին մէջ զօրաւոր, իրենց Սոցիալ Դեմոկրատ կուսակցութիւնը ունէր անուանի դէմքեր՝ Բ. Միջազգայինի մէջ ազդեցիկ:

Միութեան օրինակ կու տային նաեւ Թաթարները, որոնց երիտասարդները զերծ էին զինուորական ծառայութենէ, մահմետական տարրին յատուկ ականդական կարգապահութեամբ առլցուն: Հայերու հանդէպ բացարձակ թշնամութիւն սնուցանող իրենց Մուսավթական կուսակցութիւնը եթէ համաթուրանականութեան ծրնունդ տուող հոսանքը չէր, սակայն այդ դադափարին անխոնջ քարոզիչն էր, իր մոլեռանդ գործակալներով: 1917ի դարնան, այլեւս ոչ մէկ Հայ կը համարձակէր անոնց ազդեցութեան շրջաններէն անցնիլ: Ապահով կարծուած ճամբաներու մօտակայ հորերը կը լեցուէին Հայու դիակներով: Թիֆլիս տանող, Սանահինի յաջորդող Մատախլու կայարանին մէջ, վաղոնէն վար առնուած այս տղերը գրողը՝ այն օրերու պատանիին ազատիլը հրաշքի համագօր զուգադիպութիւն մըն է:

Ի՞նչպէս բացատրել Անդրանիկը առանց այս մէջբերումներուն, ուստի բարի եղէք շարունակել:

Մեր ազգային հորիզոնը մթաղնող, այլապէս մտահոգիչ երեւոյթ մըն էր տակաւին, հայ-վրացական դարաւոր եղբայրութեան խաթարումը:

Մինչեւ ռուսական յեղափոխութիւն, հայ տարրերը՝ տեղացի թէ բնազատեալ եկուորներ, ազատ շրջապայութեան եւ բնակու-

Թեան իրաւունքը կը վայելէին հին Վրաստանի սահմաններուն մէջ: Կամովի շոյրուած, հարկադրաբար թոյլատրուած այս ասպնջակահունութեան համար, մեր ժողովուրդը անշուշտ մեծապէս շնորհապարտ է վրացի ժողովուրդին:

Վերին կոչուած խաւերուն մէջ, վաղեմի սերտ յարաբերութիւնները փոխուած էին ա՛յն օրէն, երբ հայ գործատէր եւ մեծ առեւտրականներ՝ օրինաւոր սեփականատէրերը դարձած էին Վրաց ազնուականութեան ընդարձակ կալուածներուն: Սակայն, ասոնց վրայ աշխատող շինականը դո՛հ էր իր նոր «իշխան»ներէն, որոնք այդ հողերէն չէին քամեր իրենց շոյր կեանքին միջոցները:

Քաղաքական դէպքերը եկան ստեղծելու նոր բարդութիւններ: Կայսրութեան մէջ տեղի ունեցող յեղաշրջումները Վրաց ղեկավարներու հոգեկան վիճակը լոյս աշխարհ կը հանէին: Անոնք նախ ներքին ինքնավար վարչաձեւ կը յուսային ու շատ չանցած անկախ պետութիւն, որուն մէջ հայ տարրին քանակն ու անոր անտեսական ուժեղ դիրքը խոչընդոտ կը սեպէին: Սկսան վարել երկդիմի քաղաքականութիւն մը ի վնաս Հայոց, մեր դժուար կացութենէն օգտուելի փորձելով, մանաւանդ իրենք ալ մեղի չափ միամիտ, կը հաւատային Դաշնակիցներու կողմէ ընդարձակ Հայաստան մը ստեղծելու խոստումներուն, որ թերեւս մենք իրենց կը ներշնչէինք. ուստի անիրաւ չէին գտներ իրենց բաժինը խոչորցնել ի վնաս ապագայ Մեծ Հայաստանին: Ասոնք նախանձոտ եւ անհեռատես ղեկավարներու ծուռ հաշիւներն էին միայն, որ ծոեց Վրաց ժողովուրդին վերաբերմունքը:

Տակաւին կարելոր է անշուշտ յիշատակել ուսս նոր վարչաձեւի կեդրոնական իշխանութեան բարեացակամ դիրքը, որ իրեն պէս անպայման առժամեայ, կը բխէր իր ընդարձակաճաւալ հողերէն, կայսրութեան ծայրամասերու աղբերը սիրաշահելու անհրաժեշտութենէն: Ան կը քաջալերէր հայ դիմադրական տրամադրութիւնները, եւ հայկական զօրամասեր կազմելու համար անմիջապէս ընդառաջ դնաց թուրք բանակէն ինկած հայ ղերիները ազատ արձակելու խնդրանքին եւ անոնց փոխադրութեան, որ նոյնպէս շուտով կը հանդիպէր թաթարներու նախօրօք կազմակերպուած խափանարարութեանց: Այս իշխանութիւնը Անդրկովկաս կը ձգէր, յատկապէս Վրաստանի մէջ, մեծ քանակութեամբ զինամթերք:

Վերջապէս ահա եւ մենք, մեր լեռնակուտակ ցաւերով:

Նիւթէն հազիւ թէ շեղած ենք:

Այլասէր, նոյնիսկ օտարամուլ, ծանր պատուհասուած, ամբողջովին իր վէրքերը դարմանելուն կլանուած, ինչպէս ցոյց տուած էր իր դարաւոր պատմութեան շրջաններուն մէջ, այդ օրերուն նմանապէս, միայն հայ ժողովուրդն էր, որ ո՛չ ախորժակ ունէր, եւ ո՛չ ալ կարելիութիւն իր դրացիներուն վնասելու:

Ինչպէ՞ս կարելի էր նման համեստ խոնարհութեամբ ունեցող ժողովուրդ մը առաջնորդել, եւ դէպի ո՞ւր: Ինչո՞ւ ուրեմն զարմանալ որ հակառակ իր անօրինակ կենսունակութեան, իր շեշտուած առանձնատկութիւններուն, մեր ազգին ազատ եւ ինքնիշխան ապրած շրջանները վարդի մը կեանքին տեւողութիւնը միայն ունեցեր են, եւ ան չէ յաջողած մեծ ղեկավարներու ծնունդ տալ:

Այո՛, չենք շեղած մեր նիւթէն, նոր բնութեամբ հանդէս գալիք Անդրանիկ մըն էր անհրաժեշտ, զոր կ'ուզենք բացատրել, որ պիտի ձգտէր ներդաշնակել իրեն ծնունդ տուող ազգին ներքին թռիչքը իրականացնելու պահանջը՝ զոհաբերող ոգի, յազազա ազատութեան՝ թափառական եւ արիւնաքամ ժողովուրդէն նոր կաթիլներ:

Ազգերու առաքինութիւններուն եւ թերութիւններուն ծնունդ տուող ազգակիներ կան, որոնք կը կազապարեն ազգային նկարագիրը: Մերինը պիտի ծնէր շարունակական փորձութիւններու ընդմէջէն, եւ սակայն ինծի կը թուէր թէ երկու ազգ ենք:

Ամէն ինչ միեւնոյնն էր: Չկար մեզ բաժնող անանցելի փոս կամ պատ:

Ձգտումներու խոր տարբերութիւններ կային:

Անթեղելի վէրքեր, Անդրանիկի հոգեկան տառապանքը հրահրող, որոնցմէ կը տուայտէր տակաւին իր յեղափոխականի տարիներէն իսկ:

Իր խմբադրատուն ժամանելու պահերը կը լրտեսէի: Սանդուխին գլուխը ձեռքս կ'առնէր իր փիլին մէջ, ուսերս թափահարելէ ետք, դէմքս կը գննէր ու ներս կ'անցնէր:

Գեղեցիկ դիմագծերով, յաղթ կազմ՝ թէեւ ոչ բարձրահասակ, շիփ-շիտակ կեցուածք, իր անձէն վեհութիւն կը կաթկթէր, սակայն կ'ուզէի զինքը զուարթ, ժպտուն տեսնել: Անպայտման անկէ վարակուելու յոյսով:

— Ինչո՞ւ Անդրանիկ, կը ներես փաշան, այնքան շատ տխուր էր: Մանաւանդ այսօր: Ինձ ալ ստիպեցին, թէեւ առանց թելադրելու, որ զինքը փաշա անուանեմ:

Հարցումս ՀԱՅԱՍՏԱՆԻ խմբադրապետին էր: Անոր հետ մեր մտերմիկ խօսակցութիւնները տեղի կ'ունենային միասին տուն-դարձի ճամբուն վրայ, որ շատ քիչ անգամ կը պատահէր: Իսկ երբ սենեակ մտնէինք, ան կ'աճապարէր վաղուան խմբադրականը գրել, մինչ ես կը նետուէի գրքերուս մէջ, մուտքի քննութիւններուս մղձաւանջին անձնատուր:

— Տխո՞ւր: Տօ՛ ի՞նչ տխուր: Հապա եթէ անցեալ տարի տեսնէիր զինքը, շրջուն խրատելիակ մըն էր, հոգի ու մարմին խոցուած:

— Դուք կը կատակէք շարունակ, կը վիճիք, կը խնդաք, կարծես բան մը պատահած չըլլար: Միայն Անդրանի՞կը ազգի հոգ ունի:



— Մեզ ըլ մարդու տեղ դրիր : Փաշան համայն ազգին տառապանքը կ'ապրի, դեռ շատ բան պիտի տեսնես ու լսես :

— Սակայն այսօր մանաւանդ, շատ տխուր մեկինեցաւ : Լալս կու գար :

Այդ օրերուն Ամենայն Հայոց հայրապետութիւնը «Երկու ազդերէն» վեր նկատելով, Անդրանիկ պարբերաբար էջմիածին կ'այցելէր՝ տեղեկութիւններ քաղելու, խորհրդակցելու :

Միակ'անձն էր, որուն ամէն մէկ շարժումը ժողովուրդէն աննկատ չէր մնար : Զինք տեսնել ուզելու շարժառիթները բազմազան էին : Դիմումները կը խոտանային գլխաւորաբար «գաղթական Ազգին» փրկութիւնը իրմէ հայցելուն մէջ :

Այդ անգամին ալ վերադարձին կ'իջեաւնի Ալեքսանդրապոլի Առաջնորդարանը : Լուրը կը տարածուի : Ալեքսանդրապոլ՝ գաղթականներու եւ որբանոցներու մեծ հանդոյց է, ու ժամ չանցած շէնքը կը շրջապատուի :

«Անդրանիկը տեսնել կ'ուզենք», «Թող մեզի տէր կանգնի» :

Ներս կ'առնեն մէկ քանիներ : Որոնցմէ կին մը Մուշ քաղաքի մօտակայ, կարծեմ Մոկունք կոչուած գիւղէն : Շատ կտրիճ եւ անձնագոհ Հայուհի մը, որուն ասպնջականութիւնն ու օժանդակութիւնը վայելած են մեր Փէտայիները, նաեւ Անդրանիկ անձնապէս :

Անդրանիկին համար թերեւս օրուան ամենէն հաճելի անակընկալը, այդ Հայուհին եւ իր բազմանդամ ընտանիքը ողջ տեսնելու յոյս մը : Անոր երկու ձեռքերէն բռնած, իր շուրջիններուն կը ներկայացնէ Փէտայիներու երէկի հերոս ընկերուհին : Կը պատրաստուի հարց տալ անոր ընտանեկան պարագաներու մասին, երբ շնչառութեան մը դադարէն կ'օգտուի իր հիւրընկալներէն մին ու . . .

— Այս կնոջ պատուանշան տալու է իր անցեալ դործունէութեան ի վարձատրութիւն :

Մոկունքցին, որ իր բազում ընտանիքի անդամներէն իր երեք մանչերը միայն կրցած է ազատել ու ողջ պահել, կը պայթի .

— Գլուխն'ուզ փաթթեցէք ձեր պատուանշանները : Երեք ճիւղերով մենք չոր հացի միայն կարօտ ենք :

Երեք ճիւղերուն համար անմիջապէս որբանոցի դռներ կը բացուին, նաեւ հին վէրքեր, որոնց դռները Անդրանիկ ի դուր կը փորձէր դոյ պահել :

Այսպէս ուրեմն, կամաւորական գունդերու բեկանումէն եւ ցրուումէն յետոյ Անդրանիկի անձը պիտի դառնար բոլոր տեսակի ակնկալութիւններուն բեւեռը :

Չարդուփչուր, աւեր հայրենիքի բոլոր ճամբաներուն վրայ դեպերող հողիները, յաջորդող աւելի բարի օրուան ի խնդիր, Անդրանիկի անունը կը մրմնջէին ամէն երեկոյ : Եւ ինչո՞ւ զարմանալ, երբ գրաւուած մեր հողերուն մէջ, թէեւ ինքը բացակայ՝ ու այդ աւելի

լաւ՝ քանզի զերազոյն յոյսի աղբիւր, այդ թափառական մասնիկները ձեռնատարած ընդունող, յուսադրող ու խնամողներն էին Անդրանիկէն հոգեպէս անբաժան ընկերներ՝ Մուրատ, Սմբատ, Սեպուհ, Կայծակ Առաքէլ, Վարդան Շահապազ եւ Վահան Զերազներ, Երզնկա, Պիթլիս, Բաբերդ, Կարին եւ այլուր: Կը հաւատային անոնց, միմիայն անոնց պարզ ու շիտակ խօսքերուն, իրենց ցաւերն ու տենչերը առ որ անկ է հաւատարմօրէն փոխանցող այդ անզուգական էակներուն, որոնք Անդրանիկին հետ կոչուած էին առաջնորդելու աղբին փրկարար լաստը:

Անդրանիկ, ուրեմն, կռիւներու սնանկ արդիւնքէն հոգեպէս ալ ընկճուած, ՀԱՅԱՍՏԱՆ թերթի միջոցաւ նոր շարժում չէ որ կը ստեղծէր: Զայն չհիմնեց, որ իր անձին հանդէպ պաշտամունք ստեղծէ, որ իրմէ ակնածին, որ աղբային ուրիշ անհատ կամ շարժում չուրէ տակ ձգէ:

Այս անգամ ալ Անդրանիկի մէջ կը խօսի մեր ժողովուրդի ինքնապաշտպանութեան բնազդը, կը յայտնուի «Առաքելոց վանքի» ձեռնարկն հրահրողն ու ղեկավարը՝ աւելի ընդարձակ տարրուութեամբ, ջանալով օգտուիլ ուսանական յեղափոխութեան նոր տուեալներէն, որպէսզի ընկճուած հոգիները յուսադրէ, դադթական Հայուն տէր կանգնելով անոր ներչնչէ ապրելու հաւատք եւ կամք:

Ամէն ձախորդութեան կը յաջորդէ բարոյական ընկրկում:

Երբ Անդրանիկ ՀԱՅԱՍՏԱՆով կրկին հանդէս կու գար, տոհմային առաքինութիւններով հարուստ, մեր խտտաբարոյ ժողովուրդէն մնացորդները արդէն սկսած էին վարակուիլ «օտար», «ազատ» միջավայրի բարքերէն, կը դառնային անկազմակերպ, անկարգապահ: Հեռու վայրերէ անձերնին հայրենիքին դոհելու երէկի պատրաստակամ տարրերը ժամ առաջ, ամէն միջոց ի գործ դնելով բռներ էին Սիպիրէն ճամբան Ամերիկա տանող ուղիները: Ռազմաճակատի երկայնքին վրայ վերապրողները կրկին անմիջական վտանգի մէջ էին եւ Անդրանիկ կ'աղաղակէին:

Կը հնչէր մանաւանդ նոր ասպանդ մը:

Ռուսական Հոկտեմբերեան յեղաշրջումով կը խորտակուէին թրքական ճակատի մարդկային ամբարտակները եւ զինազաղարի բերմամբ իր ուժերը վերանորոգած թշնամին արդէն սկսած էր դըլուսի ցցել:

Փետրուարեան Յեղափոխութեան առաջին օրերէն իսկ Անդրանիկի գլխաւոր մտահոգութիւնն էր աղբային ինքնապաշտպանութիւնը, որ ինչպէս ինք կը նախատեսէր արդէն՝ դարձած էր հրամայական:

Հակառակ դէպքերու անմխիթար արդիւնքներուն, Անդրանիկ համոզուած կը մնար Դաշնակիցներու վերջնական յաղթանակին: Մեր խմբադրատունը կը ստանար ամերիկեան օրաթերթեր, որոնց մէջ

ամբողջ էջեր կը դրաւէին Մարեշալ Ժոֆրի լուսանկարներն ու լե-  
ցուն յօդուածներ դէպի Ամերիկա անոր առաքելութեան նուիրուած :

Անդրանիկ ուրեմն պիտի կերտէր նոր հաւատամք մը : Նոր  
ներշնչում մը :

«Ինչ որ ալ ըլլայ վնասելիք գինը, պէտք է զենքը սեռին բա-  
րեւեմք գալիք յաղթութիւնը» :

«Ոչինչ կրնամք ակնկալել գալիք հաշտութեան համաժողովէն,  
եթէ զենքը սեռին չենք մեր հայրենիքէն փոքր անկիւնի  
մը» :

Այս էր Անդրանիկի տառապանքին առարկան, մինչ փողոց-  
ները կը դղրդային խանդավառ կոչերու եւ կանչերու հեղեղին տակ,  
երբ Փետրուարեան Յեղափոխութիւնը իր մեղրալուսնի օրերը կ'ապ-  
րէր, եւ կայսրութեան «ամբոխները խելագար» սահմանադիր նոր  
ժողովի անդամներուն ընտրութիւններու մրցակցութեան մէջ էին :

Տակաւին երբ, Վանէն - Բաղէշ - Մուշ - Խնուս - Երզնկա -  
Բաբերդ - Տրապիզոն քաջուած երկաթէ շղթայէն ներս, ուստական  
բանակներու հովանիին ներքեւ, մեր ցիրուցան խլեակները, ուս-  
թրքական առժամեայ զինադադարի մը շուքին տակ կ'ապրէին :

Օ՛, ո՛րքան սխալած էի : Ձէի կրցած տիրութիւն եւ մտահո-  
գութիւն իրարմէ զանազանել :

Անդրանիկ տիրուր չէր, այլ ծայր աստիճան մտահոգ : Այդ կու  
դար իր վայելած մեծ ժողովրդականութենէն, զոր կ'ուզէր արժեցնել  
ի նպաստ ժողովուրդին, կու դար իրեն ուղղուած «դուն ես մեր պա-  
հապան հրեշտակը, մեր տէրն ու տիրականը» կանչերէն, զորս կը  
ճղնէր արդարացնել :

Սասնոյ լեռներուն մէջ, ինք եւ իր ընկերները, «ղէ՛նք, զէ՛նք»  
կը պաղատէին, ու տակաւին կը յանդգնէին քանի մը փամփուռտով  
թշնամիի քիթին խնդալ : Այժմ յանկերգը փոխուած էր, «բանա՛կ, բա-  
նա՛կ», այնքան էր առատ զէնքը : Ու «բանակ» չկար :

Մեծ բանակ չէր ան ակնկալէր անշուշտ, պիտի դոհանար քի-  
չով : Ամիսներ տառապեցաւ, ու ճամբայ ինկաւ դէպի Կարին...  
առանց փոքր դունդի մը իսկ ընկերակցութեան :

1918 : Ձմեռ : Կարին : Ուր վրացի զօրավարի մը իշխանութեան,  
առաւել կամ նուազ ենթակայ, ուստ քայքայուած բանակին մնացորդ-  
ները անիշխանութեան հրձիգներ դարձած՝ դաւ կը ցանկին, ու անու-  
նով արեւելահայ սպաներ ցարին տուած իրենց երդումին կը զոհէին  
հայ հայրենիքին հաւատարմութիւնը, որ դերիվեր պէտք է ըլլար,  
որ մայրական կաթին հետ ամէն մանուկ իր օրօրոցին մէջ կնքած  
կ'ըլլայ :

Տխուր է պատկերը էրզրումի մէջ, անմխիթարական, վախ-  
ճանը ահաւոր :

Ունէի՜նք հայրենիքի ընդարձակ հողամաս մը պաշտպանելիք՝  
բշնամիէն մաքրուած, բարեկամէն ալ պարպուած: Ունէի՜նք նաեւ  
Յրկու Ազգ: Առանձին խորհուրդներով:

Անմիջական պաշտպանութեան գործին նուիրուած էր ազգե-  
րէն մի՛ն միայն, ու սպասելով միւսին օգնութեան՝ քայլ առ քայլ  
կ'ընկրկէր թշնամիին դերազանց ուժերուն առջեւ, մանաւանդ թի-  
կունքի հարուածներուն տոկալով:

Իսկ զանգուածը խուլ կը մնար ահազանգին:

Անդրանիկ, «Հայաստանի ապահովութեան խորհուրդի» խո-  
ղովակով, ուստի դերագոյն հրամանատարութենէն, իբրեւ աւելորդ  
պերճանք, Զօրավարի աստիճան ստացած կը մեկնէր ուրեմն Կարին,  
ապաւինած իր հմայքին եւ անձնագործութեան, անդամ մըն ալ իր  
անձը հայրենիքին նուիրելու՝ իբրեւ առաջնորդ հետեւեալ յարա-  
ցոյցը ունենալով:

«Կարնոյ բերդին մէջ, ողջունել շատ մօտաւոր ապագայի մեծ  
յաղթանակը՝ զէնքը ձեռքին»:

Մեր պատմութեան սեւ էջերէն մէկն է Կարնոյ հայ ուժերուն  
փլուզումը:

Հոն մեր ժողովուրդը ունէր հող, գէնք եւ թնդանօթ, պաշար  
անչափելի:

Ափսո՛ս, կը պակսէին Հայեր:

## ԱՆԴՐԱՆԻԿԻ ԴԱՓՆԵՊՍԱԿԸ

«Իցիւ թէ կարենան Կարսը պահել»:

Կը մրմնջէր սրտաբեկ, էրզրումէն հեռանալու պահուն, եւ երբ  
Սարըզամիչէն կ'անցնէր իր համոզումը լրիւ էր: Կարինը իրենցը չը-  
համարող, դաղթականութենէն առաջ հոն հասնող, «ակադեմիաներ»  
աւարտած «հայ» զինուորականութեան հետքը չտեսաւ Անդրանիկ:  
Հոն ալ ամէն ինչ իր բախտին ձգուած, հոն, ուրկէ մեկնելէն յետոյ,  
հազիւ կարելի պիտի ըլլար առաջըր առնել նոր արիւնահեղութեան  
մը՝ «երկու ազգերու» միջեւ:

Ասոնք Կարսն ալ կու տան կը հեկեկար դժբախտ հերոսը:

Անդրանիկ, ձախողած էր էրզրումի մէջ եւ Հայաստանն է որ  
կը կորսնցնէր իր անկախութեան վերջին ապաւէնն ու Երաշխիքը:

Կը պարպուէին Արեւմտահայ Հայաստանէն դրաւուած հողա-  
մասերը ամբողջովին: Ինչպէս կուիւի առաջին գծին վրայ, վերջա-  
պահ գունդերուն մէջ նոյնպէս բացակայ էին Հայոց զինուոր եւ սպայ  
կոչումին յաւակնողները, գէթ այնքա՛ն քիչ:

Կային, անպայման, անանուն եւ համեստ, հայրենանուէր տղաք, որոնք արժանի էին ամէն յարգանքի եւ երախտագիրտութեան:

Կը հաւատա՞ր Անդրանիկ Կարինը պահելու կարելիութեան:

Այո՛: Միակ կարելին՝ որովհետեւ անհրաժեշտ էր:

Պատնիչուած վաճի մէջ ապահով, այլուր Սմբատի, Մուրատի, Սեպուհի եւ Թորգոմի փոքրաթիւ գունդերը, խոստացուած օգնութեան կառչած կը դիմադրէին անտեղիտալի կամքով, կու տային զոհեր: Օրուան հռետորներուն կոչերը սակայն կը մնային անարձագանգ. եկաւ պահը, երբ, փոխանակ հետեւելու նախապէս Անդրանիկի կողմէ տեղական ուժերը ամփոփելու խելօք առաջարկութեան, օգնական ուժեր խոստացող սուրհանդակն անգամ չէր գտնուեր: Եւ տրուած խոստումները պիտի ծառայէին այնքա՞ն սուղ վճարել ինքնամփոփումի շարժումները:

Պէտք էր պահել Կարինը. ամէն գնով:

Անդրանիկի սուր, թափանցող մտքէն չէր վրիպած, հակառակ լրտեսական ցանցին եւ քայքայման, որ թշնամին, տարիներ շարունակ չորս ճակատի վրայ մղուած կռիւներէն նոյնքան ուժասպառ էր եւ վերագրաւելիք հողերուն մէջ՝ միայն պիտի ստանար նոր աւիւն, մարդկային թարմ ուժեր, հարուստ պաշար, հոգիները գօտեպնդող նոր ոգի:

Տրուած խոստումները՝ անկատար մնացած, թէեւ չէին թոյլատրած ուժերու ամփոփում, սակայն Կարնոյ դռներուն առջեւ Անդրանիկ ճիշդ գնահատած էր թշնամիի յարձակողական թափը, գիրենք չըջապատելու եւ հալածելու անկարողութիւնը, եւ ինչպէս ցոյց տուին յետագայ դէպքերը, թշնամին, էրզրումի անկումին կը ըստպասէր՝ իսկական եւ նոր բանակ կազմակերպելու համար:

Մինչ հայ ժողովուրդը պիտի կորսնցնէր անկախութեան տիրանալու բացառիկ պատեհութիւն մը:

Ապաքինումի օրեր կ'անցընեմ Ալեքսանտրապոլի մէջ. հիսուածեղէնի գործարանէն կը դառնամ, ուր յաջողած եմ գործ մը ճարել:

Կայարանէն եկող ճամբուն վրայ դրան առջեւն եմ մեր, ուրկէ ամէնօրեայ տողանցքը կը դիտեմ մեզի դաշնակից եզրտի ձիաւոր խումբին՝ Նժդեհի առաջնորդութեամբ:

Գէշ են ճակատի լուրերը:

Յանկարծ իրարու կպած կառքերու արշաւ մը: Երկրորդին մէջ կը նշմարեմ ծանօթ գլուխ մը:

«Առաջնորդարանին ուղղութիւնը բռնեցին», կ'ըլլայ տեղ-տեղ տուած հարցումներուս պատասխանը:

Ձիս ուզած է, կ'ըսեմ տիրաբար դուռը պահող թիկնապահին, զոր չեմ ճանչնար: ՀՍԵՍՍՍՍՍՍ թերթէն եմ:

Մէկ մասը սուտ եմ, անմեղ երեւոյթ ունիմ: Կը ժպտի: Ներս

կ'անցնիմ: Անահնկալ մը, չէի սխալած՝ Անդրանիկն է: Երկչոտ քայ-  
լերով ինքզինքս ցոյց կու տամ:

— Հա՞, դուն ձեմարան չէի՞ր: Ինչո՞ւ տփուոյն ես: Ինծի սափ-  
րիչ մը գտիր: Հոն վարսավիրայ կ'ըսեն, գլտե՞ս, կը կատակէ:

Բերի: Հօրեղբայրս էր: Սափրուելու ատեն կ'ծկուած էի իր  
ետին: Զինքը մխրթարողներուն կը կրկնէր նոյն բառերը: Իր ցաւը:

— Ասոնք Կարսն ալ կու տան:

Շատ առոյգ տեսայ զինք, զօրավարի հազուստով աւելի պատ-  
կառելի, աշխոյժ, նոյնիսկ գուարթ, հաւանաբար ջղայնոտ:

— Ի՞նչ կը տնտնաս, ըսաւ սափրիչին, պարահանդէս պիտի  
չերթամ: Ու անոր ալ՝ «Ասոնք Կարսն ալ կու տան»:

Մօտեցայ: Հօրեղբայրս է ըսի, իրեն համար երջանիկ պահ  
մըն է:

— Այդպէ՞ս է: Լաւ: Կարծես հանդարտած էր: Դուն ի՞նչ ջուրի  
վրայ ես:

Իմ ջրերը սառած էին, մանաւանդ այս անահնկալին ի տես:

1917, Դեկտեմբերի կէսին, ձեմարանի տնօրէնութիւնը հար-  
կազրուեցաւ դպրոցը փակել՝ «առժամապէս»: Նոյն իրիկունն իսկ  
բռնի կը բացուէր ռազմածակատէն «դէպի տուն» վաղող զինուորնե-  
րուն առջեւ: Ինչպէ՞ս ալ հոտ առած էին:

Հինգ ընկերներ, զբպաննիս «վերադարձի իրաւունք նշող»  
թղթիկներ զբպաննիս, կը բռնենք «Էջմիածին» կայարանի ճամբան:  
Կամաւոր կ'երթանք Երզրումի ճակատին համար:

Գալով ինծի մէկը միւսէն նախապատիւ պատճառներ ունիմ,  
մանաւանդ ինքնորոշումի իրաւունք:

Վառ երեւակայութիւն հայրենիք փրկելու: Պաշտպանութիւն  
միակ քոյրիկիս, որ Կարին է:

Անդրանիկի անձնական գունդին մաս կազմելու երազ: Վեր-  
ջապէս չորրորդ մը՝ ուրիշ հանգրուան չեմ տեսներ:

Մինչեւ մեկնելու օրը, դասարաններուն մէջ փոռուած յարգի  
կոյտերուն մէջ նետուած լուցկիներէն յառաջ եկած մէկ քանի հըր-  
դեհներ մարած ենք:

Վերջապէս կը թողունք տաքուկ ձեմարանը, թեթեւ, առանց  
վերարկուի, որ չունէինք, թեւերնիս ազատ փարտելով:

Զուլֆայէն եկող բոլոր զնացքներուն վակոնները փակ են,  
դռներուն ետին սուրններ թխմուած: Աչք մը պատուհանէն ներս:  
Ամէն նստարանի վրայ մէյմէկ զինուոր երկնցած: Իրենց ի՞նչ փոյթն  
է որ ճամբորդներ օրերով կը սպասեն գծի երկայնքին:

Կը բարձրանանք վակոնի մը գոգաւոր տանիքին վրայ, իրարու  
պլլուած՝ ցուրտին դէմ դնելու միամիտ լաւատեսութեամբ: Կը փոր-  
ձենք Սարտարապատ կայարանի դադարէն օգտուիլ, քիչ մը տաքնալ:  
Հոն խոնուած աննկարագրելի ամբոխին մէջ ճօճացող դանակներու

փայլէն սարսափահար կրկին կտուրին վրայ ենք, շուտով ինքզինքնիս  
դտնելու համար Ալագեազ կայարանին մէջ, ուր սառած անդամներով  
կը շրջապատենք հայ բարի կայարանապետին թոնիրը:

— Կամաւո՛ր էք զնում, դէ՛հ լաւ, թէկուզ հոն մանկամսուր  
էլ կը լինի:

— Կամ հիւանդանոց, մարդարէացաւ իր կինը, որ մեր շուրջը  
կը դառնար ինչպէս մայր մը իր հարազատ զաւակներուն, եւ իր  
մատուցած թէյին մէջ գորով կը թափէր փոխան շաքարի:

Մահէն ազատած էի: Անդրանիկ մօտս էր, բաժնուելու ատեն  
առաջին անգամն էր որ թոյլ տուաւ իր ձեռքը համբուրելու, գիտակ-  
ցութիւնը այլուր էր, կը մեկնէր Սպարապետին մօտ:

Շատ չանցաւ: Կարսը տուի՞ն, թէ առին: Մեղքը Անդրկովկա-  
սեան դաշնակցային կառավարութեան վիզը, որ այդ պնով «հաշտու-  
թիւն» կնքէ Թուրքին հետ, մինչեւ որ ան նոր ականջ ուղտադործելու  
հնարաւորութիւն ունենայ, որ Անդրանիկին նոր ազգարարութիւնն  
էր:

Դարձեալ Ալեքսանտրապոլի մէջ (Աենինական):

Հայն ու Հայաստանը Ախուրեանի ձախ ափին կ'ապրին Թուր-  
քին հետ կնքուած համաձայնութեան ծակ հովանիին տակ:

Հայկական բանակին վերակազմութեան եռուզեռ մը կը տիրէ  
քաղաքին շուրջը:

Վերջապէս պիտի ունենանք Ազգային Բանակ՝ Ուսնոցաւորմե-  
րով, երբ յեղափոխական առաջնորդներու գերագոյն պահն է:

Քրոջս հսկողութեան յանձնուած որբանոցին առջեւի դաշտը  
կ'երկարի մինչեւ Ախուրեան, հոն յաճախ կ'այցելեմ: Աջակողմը զի-  
նամթերքի պահեստներու շարան մը, անոնց երկայնքին միմիայն  
արեւմտահայ մէկ քանի վաշտ զինուոր ժամերով ու օրով կը սպասեն  
դռներու բացուելուն, չեն բացուիր:

Հազարէն քիչ աւելի, Անդրանիկի սահմանուած բանակն է, որ  
պիտի մեկնի Ախալքալաքի գիծը պաշտպանելու, աջ թեւը, եւ անոր  
գէնքերու պաշարին շուրջ տեղի կ'ունենան անհամ բանակցութիւն-  
ներ, ու զօրքը կը սպասէ Անդրանիկի եւ Սպարապետին տեսակցու-  
թեան արդիւնքին, որ կ'ուշանար:

Այս անգամ Անդրանիկի զինուորները Ուսնոցներու չէ որ պիտի  
հնազանդին: Այլ Մարդու մը, որուն երդում տալու հարկադրանքին  
ենթակայ չեն: Քաջերու լոբեկայն դաշինք մը կը շաղկապէ զինուոր,  
հրամանատար եւ հայրենիք: Թէեւ քովնտի, անկարեւոր զօրաբաժին:

Վերջին անգամ զինքը պիտի զիտէի հեռուէն, իր ձիուն վրայ,  
բանակը՝ կազմ ու պատրաստ: Վերջին տողանցքը՝ մեկնելու ազգա-  
նշանը: Անդրանիկը կը վերադառնար Փէտայիի կոչումին, բայց Հա-  
յոց Սպարապետի կողքին, անոր հրամանին ներքեւ՝ Ազգային Բա-  
նակի աջ թեւը զրկուած համեստ ուժերուն հրամանատար:

լաւ էին Սպարապետին եւ Անդրանիկի յարաբերութիւնները, աւազ թարգմանի միջոցաւ կատարուելիք: Բաժանումի պահուն ան զգուշացուցած էր Ծերունի զօրավարը, որ զգոյշ ըլլայ թրքական անակնկալ յարձակումէ: Ապահովաբար: Անպայման:

Եւ սակայն անակնկալը եղաւ կատարեալ, ամբողջական: Կեդրոնը՝ գլխաւոր բանակը, Սպարապետի անձնական հրամանին ներքեւ, Արեքսանտրապոլ, բերդ, մթերք, ժողովուրդ իր բախտին ձգած կը հեռանար՝ բռնելու Փամպակի լեռնաշղթան: Ի զուր: Կը յաջողի երեք օրուան ընդդիմութիւն ցոյց տալ, սակայն տասնեակ մը օրեր ետք թշնամին կը պարտադրէ դաժան պայմաններով հաշտութիւն մը, նոր խաղով մը «անկախութիւն»:

Ամենայն Հայոց Սպարապետը չէր իսկ կրցած իր աջ ու ձախ թեւերը տեղեակ պահել:

Անդրանիկ, այս պայմաններուն մէջ, ստոյգ ջարդի ենթակայ ժողովուրդը շարկած, ինչ որ «կանոնաւոր» բանակներուն հոգը չէ, թեթեւ կոիւններ մղելով կը յաջողի անցնիլ Դեքեաի հովիտէն Դիլիջան, ուր բանակէն փշրանք իսկ չկայ, սպայակոյտ՝ բնա՛ւ:

Ճանապարհին Անդրանիկ ունէր շատ մը մտահոգութիւններ: Անտեղեակ էր դէպքերէն եւ Սպայակոյտէն: Ժողովուրդը եւ իր ուժերը փրկելու երկու միջոց ունէր: Անցնիլ Վրաստան, բայց այդ կը նշանակէր զինաթափ ըլլալ, Փէտայիի սկզբունքին հակոտնեայ արարք մը: Կը մնար ժամ առաջ անցնիլ Գուգարաց լեռները, միացեալ ուժերով ստեղծել անառիկ միջնաբերդ մը, ու հոն դիմադրել մինչեւ ընդհանուր հաշտութիւն:

Երազ մը եւս կը ցնդէր, Անդրանիկի ցասումը անսահման էր:

\*  
\*\*

Հոս կ'ուզեմ զգուշացնել ազնիւ ընթերցողները, որ արտայայտութեան այս ձեւը չընդունին իբրեւ հեղինանք, այլ միայն ու միայն արձագանգը այն ամէն դառնութիւններուն, որ զգացած եւ կրած է զայն գրողը՝ տեղւոյն վրայ: Անոնք միշտ աւելի խիստ կ'ըլլան պատանկութեան օրերուն մէջ:

\*  
\*\*

Ամէն նեղ կացութեան Փէտային վճռական է: Վաղեմի իտէալը, միշտ կենդանի, անկեղծ, սուրբ, կը փութայ ներշնչել զինք, ընտրելու իր նուիրական դործին հասնելու լաւագոյն ուղին:

Այդ այն ուղին է, որ Անդրանիկի փառքը պիտի կերտէ, անոր առասպելին վերջնական փայլը պիտի տայ:



Երկաթուղիի դիժերէն քուլած, ջնջին տարածութեան մը վըրայ սեղմուած, քաղաք մը միայն՝ կոնակը լեռներ, մեծամասնութեամբ անտուն՝ փախստական մարդոց զանգուած մը անօթի, պարպուած, զինաթափ, ինքնապաշտպանութեան դոյզն միջոցէ զուրկ, ապաղայ վերջնական հաշուեյարդարի մը դիւրին պատառ, ահա կընթուած հաշտութեան ողջակէզը՝ Հայաստան:

Անդրանիկ կը մերժէ:

Նպատակէ շեղում, հողեկան բեկում, զինաթափութիւն, թըշնամի, սով, վերջնական պարտութիւն:

Կը մերժէ, կը մերժէ, կը մերժէ:

Ունեցա՞ւ նախազգացում մը իր անձին հանդէպ դաւադրական արարքի մը, թշնամի ճնշումին իրրեւ հետեւանք, կամ ա՛յլ բերմամբ: Ո՞վ իրմէ աւելի զգաստ մնալու պատճառներ ունէր, այդ խառնակ օրերուն, երբ շատ դիւրաւ սճիրը կրնար թալանի վերածուիլ եւ թաւանը նախճիրի:

Տակաւին Անդրանիկ ունի շատ ազնիւ մտահոգութիւն մը, իր ներկայութիւնը պէտք չէ որ փորձութեան պատրուակ դառնայ «Անկախ» Հայաստանի դժբախտ վարիչներուն, որոնց ի հարկէ հանդէպելու առիթ իսկ չունի՝ Թիֆլիս եւ անոնք, եւ՛ ապահով:

Կայ էականը մանաւանդ: Անդրանիկի համար ամէն ինչ վերջացած չէ ամէն ճակատի վրայ: Ինք պիտի շարունակէ կռիւը, ո՛ւր հնարաւորութիւն գտնէ:

Կը սպասէ Երեւանի պատասխանատուներուն, անոնց կը յանձնէ Դիլիջանը: Կը հաւաքէ բանակ, ժողովուրդ՝ յայտնելու իր որոշումը, եւ բացատրութիւններ կու տայ: Վտանգաւոր ձեռնարկ, տաժանելի ճամբորդութեան հեռանկար:

Իանակը անշուշտ միաձայն, ժողովուրդը նմանապէս կ'որոշէ իրեն հետեւիլ, ո՛ւր ալ ըլլայ, նո՛յնիսկ դէպի ստոյգ մահ:

«Ձայն բազմաց, ձայն Աստուծոյ»:

Ինքնակա՞մ: Այն ատեն ո՛վ «դեմօկրատ» է՝ թող առաջին քա՛րը նետէ:

Անդրանիկի ձեռնարկները կրած են համազգային բնոյթ: ՀԱՅԱՍՏԱՆ թերթի ժամանակ, զինքը խանդով ու հաւատքով շրջապատողներուն մեծամասնութիւնը եղած է դաշնակցական, որոնցմէ շատերը մնացին իրենց կուսակցութեան մէջ յարգուած մարդիկ, ըսենք առհասարակ արեւմտահայ բոլոր հոսանքներուն պատկանողներ: Ատոր պատկերը՝ Ազգային համախմբում, շատ աւելի ցայտուն է Դիլիջանի մէջ:

Տասնեակ հազարաւորներու ինքնատիպ արշաւ մը: Սեւանի եզերքը քերելով, փոքրաթիւ բանակ մը, բազում դաղթականներ իրենց ճակատազրի տնօրինութիւնը կը յանձնեն Անդրանիկին, հակառակ

Ազգային կառավարութեան մը գոյութեան, ու կը յառաջանան դէպի Արաքսի ափը :

Ճանապարհի իւրաքանչիւր հանգրուանին մէջ, դաղթականները տարհամոզելու ամէն փորձ անօգուտ է :

Կ'անցնին Մայր Արաքսը, Տղմուտն ու Աւարայրը: Խռչի մէջ ամրացած կը հանդիպին թրքական ա'յն բանակին, որ կը փութար նոյնպէս Արաքսը անցնիլ ու գոյն արիւնոտել, անցնիլ Զանգեզուրի գաւառներէն Ղարաբաղ, մահ սփռել ամէնուրեք, եւ հասնելով Բագու՝ ամրոզովին շրջապատել «Հայաստան» կոչուած կորիզը :

Անդրանիկի այս պատմական արշաւին մանրամասն նկարագրութիւնը՝ վերամշակուած, Եղիշէ Քաջունիի՝ հերոսի մօտիկ գործակիցին կողմէ, լոյս տեսաւ վերջերս, տարաբախտ հեղինակի մահէն քիչ յետոյ :

Խռչի ճակատամարտին Անդրանիկ կը դտնէ իր դէմ հզօր բանակ մը: Միշտ զգաստ, անօգուտ զոհէ խուսափելու իր Փէտոյական ըմբռնումով, կը կշռէ իր ուժերը, դիտէ իր ռազմանիւթին քանակը, դաղթականութեան ծանր բեռը կը ճնշէ իր վրայ, ուստի թշնամին զգալապէս տկարացնելէ, գոյն հետապնդելու կարողութենէ զրկելէ յետոյ կը դառնայ դէպի Արաքս :

Բախտաւոր որոշում մը, յօգուտ հայրենիքի, հերոսի իր առասպելին պատշաճ եւ նպաստաւոր :

Առաջին կարեւոր օգուտը կ'ըլլայ, թուրք բանակին տուած իր ծեծին իբր հետեւանք, որ Վանէն հեռացող հայութիւնը յաջողի կտրել զինքը պաշարող շղթան եւ բռնել Մուսուլի ճամբան՝ փոխան Անդրանիկի :

Անդրանիկ կարծես ճի'շդ ժամանակին կը հասնի Նախիջևան, սանձելու տեղական խաներուն ջարդարար ձեռքերը, ու անկէ ալ իրեն հետ ժողովուրդ կցած, կարգ մը թշնամի գիւղ պատժելէ յետոյ կ'անցնի Գողթան գաւառը, Զանգեզուրի երկայնքի գաւառները, որոնք կը փութան Անդրանիկի պաշտպանութիւնը խնդրելու: Ան կը դառնայ այդ գաւառներու հայութեան հողին, ինչքին եւ կեանքին պահպան հրեշտակը, միայն թէ պէտք է հօգան յաւելեալ ազգայինները :

Ան պտրաստ է նաեւ ազատելու Շուշին եւ պատմական Ղարաբաղը, որ իրմէ անկախ, տեղացիներու ձգձգումներուն պատճառաւ կ'ուշանայ, երբ Բագու հասնող Անգլիացիք վերջին արգելքը կը դնեն յանուն ընդհանուր զինադադարի :

Պէտք է սպասել ժողովուրդներու երախտագիտութեան: Ամէն անգամ որ Զանգեզուրցին վտանգը հեռացած կը սեպէ, ծանր կը դտնէ Անդրանիկի բանակը, մանաւանդ դաղթականները կերակրելու բեռը :

«Դաշնակից»ներու Կովկաս Հանդիսաւոր մուտքէն անմիջապէս յետոյ ուրեմն, Անդրանիկ Հայաստանի նորածին Հանրապետութեան իշխանութեան կը յանձնէ իր պաշտպանած ժողովուրդն ու զաւառները ազատ, Էջմիածնայ մէջ կը ցրուէ իր բանակը, անցնելու համար Կիլիկիա, ուր աւելի անկախ հողամասի մը տիրանալու յոյսեր ծլած են :

Անդրանիկ կրնա՞ր մնալ Երեւանի մէջ, նոյնիսկ ոսկի զահու վրայ, երբ տակաւին ուրիշ տեղ իր ներկայութիւնը փրկարար կը գտնեն : Ո՛չ եւ ո՛չ :

Տրամաբանակա՞ն էր Կիլիկիա անցնելու ծրագիրը : Այո՛ : Պէտք էր փորձել :

Թէ Անդրանիկ չէ ուզած Հայաստան մնալ, ատիկա Թիֆլիսի մէջ բնակող, Հայաստան բնակիլ չուզող խեղճ մարդու մը նենգամիտ զառանցանքն է, որ հարցուփորձելու նիւթ կը փնտռէ եւ չ'անդրադառնար իր անյարմար եւ պարսաւելի կացութեան :

Անդրանիկ երբ Էջմիածինը կը թողուր վերջնականապէս, կովկասեան ժողովուրդներն ու Հայաստանը կը գտնուէին երկու կարելիութիւններու եզրին վրայ, եւ ինքը հոն դեր չունէր կատարելիք :

Ակնյայտ էր որ Անդրիացիք փորձեցին եւ կը ջանային ստեղծել Անդրկովկասեան դաշնակցութիւն մը, միացեալ ուժերու թումբ մը Ռուսերու վերադարձն արգելելու : Ատոր մէջ Հայն ու Հայաստանը անկարելոր մասնիկ մըն էին ա՛յն «դաշնակցային» պետութեան, որուն պիտի զար միանալու վերանորոգեալ Թուրքիան՝ իրրեւ առաջնորդող եւ տիրակալ ուժ : Դժուար չէր ուստի հոն նախատեսել Հայաստանի մը ապագան եւ զայն հաշտեցնել մեր ակնկալութիւններուն հետ՝ մեր զոհերուն չափանիշով :

Կը մնար Ռուսերու վերադարձին հետ կապուած նոր յոյսերու պարագան :

Դժուար չէ երեւակայել թէ որո՛ւ կ'երթար Անդրանիկի մը նախապատուութիւնը :

Ան ուստի կը մեկնէր Հայաստանէն դէպի Կիլիկիա, անկորնչելի փառապասկ մը իր ֆակտին, այն նուէրին բերմամբ, զոր ըրած էր իր ա՛յնքան սիրած հայրենիքին՝ Գաւառներ եւ ժողովուրդ :

Հայրենիքը յաւէտ երախտապարտ է իրեն :

Իրապէ՞ս գոյութիւն ունեցած է Հայկ Նահապետը, կը տարուինք հարցնելու այսօր :

Վաղը գուցէ նոյն հարցումը, Անդրանիկի մասին :

Երկարակեցութեան մաղթանք մը իր սիրական ազգին համար :



ՋՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ

## ՔԱԶԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ԻՐ «ՄԵՐԺՈՒԱԾ ՍԱՆ»Ը

Մեր լեռնաչխարհի երբեմնի հայաբնակ դիւղերուն մէջ, ամիսներ տեւող ձմրան երկար երեկոները, այր թէ կիրն, ի հարկէ առանձին խումբերու բաժնուած, տունէ տուն, հաստատուած կարգով մը, «նստիլ երթալու» սովորութիւնն ունէին, իբրեւ միջոց թէ՛ ժամանցի, եւ թէ՛ միաժամանակ ինքզինքնին տեղեակ պահելու համար, մօտիկ թէ հեռուոր երկիրներ դառնուող իրենց պանդուխտներուն մասին:

Տղամարդոց նիստերը ամէնօրեայ էին, դրեթէ պարտաւորիչ: Կանայք, որոնց անպայման կ'ընկերանային մաս մը երկսեռ պատանիներ, մանուկ, ծծկեր, կը հաւաքուէին պարբե՛րաբար միայն, այն ալ զիրենք հովանաւորելու կարող՝ ազդեցիկ մեծ տանտիկիներու «ներսի տուներուն» մէջ:

Այդ նիստերու ընթացքին, տանտիկիներ կը բանար սնտուկը՝ չոր պտուղներով լի: Տարեցները անխտիր կը մեծարուէին սուրճով: Տղամարդիկ, որոնց կը սպասարկէին չափահաս մանչեր, իրաւունք ունէին ըստ կամս՝ օղիի, գինիի, սմանք ցարկիլիէի:

Նման հաւաքոյթներու ատեն է որ մանաւանդ, կը յայտնուէին այլազան շնորհք ունեցողներ, եւ հոս է որ կը նուիրագործուէին անոնց տխրոսները՝ երգիչ, պատմող, արտասանող:

Հեքեաթներ: Տխուր կամ մարտաշունչ երգեր: Տեղական անցուղարձերու շուրջ վէճ, բամբասանք: Հայ յեղափոխականներու, Ֆէտայիներու կեանքին ու դործերուն մասին փոփոսք: Բրդեղէն հիւսուածքի մասին խորհուրդ-հարցում: Ասոնք էին «նստիլ գացողներուն» յայտագիրը կազմող պէսպիսութիւնները, առանց մոռնալու «քարախալ»ը, որ այնքան բուռն վէճի, լեզուազարութեան եւ անորժալի խնդուքի աղբիւր մըն էր:

Մեծ էր ուրեմն այս «նիստ»երուն հմայքը:

— Եթէ խելօք կենաք, կ'ըսէին մայրերը, հետս «նստիլ» կը տանիմ:

— Ի՛ս ըլ տար, մա՛յրիկ, կը պաղատէր իւրաքանչիւր տղայ, Ուսկ'ապլլան հոն տըլլի նէ, հէ՛մ խելօք կը կենամ, հէ՛մ ըլ չեմ քնանար:

— «Ե՛ս ըլ տի դամ»: Ոտք՝ դետին տփող խփողի:

Նստիլ գացող երախան չէր մերժեր ոտքով երթալ, բայց իւրաքանչիւր վերագարձող մանուկի համար զրկող, շալկող մը անհրաժեշտ էր նախատեսել: Քոյրեր, դեռատի հարսներ, կը ստիպուէին մասնակցիլ նիստերուն, դժկամակութեամբ, մանաւանդ եթէ յայտ-

նի հեքեաթ պատմողի մը ներկայութիւնը ապահովուած չըլլար․ հաւաքոյթին հմայքը նուագեցնող պարագայ մը :

Այդ հեքեաթասացներու մուտքը, անխօս շարժանկարի օրերուն պէս, վարագոյրներուն բացումի պահուն ցնծութիւններով կ'ընդունուէր :

Ատոնցմէ էր Ուսկու ապլան՝ անգուզական պատմող : Իրմէ առաջ հասնողներուն կողմէ «ուշացար» բացականչութիւններով կը բուրբուէր : Ներս մտա՞ւ, նոր խումբ մը կը պլլուէր հազիւ պարպուած փէշերուն․ ամէն ոք կը ջանար խոստում մը կորզել, որ իր նախասիրածը պատմէ :

— Ե՛ս տի նստիմ քովդ : Անվերջանալի մրցակցութիւն :

— Է՛հ, Ուսկ'ապլա, կը համարձակէին հարսները : Հերի՛ք նագ էնիս, տոպրակդ բաց : Մեծ ու պղտիկ սրտերնիս հատաւ :

— Ա՛ղջըներ, դուպամ ըլլիմ ձեզի : Ես ի՛նչ գիտեմ, որ ի՛նչ պատմեմ : Ու ի վերջոյ :

— Մինչեւ սուս չըլլիք, տոպրակս չիմ բանար :

Այդ հեքեաթները, ընդհանրապէս, չար ու բարի ոգիներու պայքարն ուէին իբր նիւթ : Արդելափակուած կոյսերու ազատագրում՝ ո՛վ, ինչքա՞ն գեղանի : Արեւ Մանկան իր լոյսերու մէջ լողացող հուրձամ կոյսին միանալու երկարատեւ ճիգ : Նաեւ անմեղ հուրիներ՝ քաջ հովիւ տղեկներու կողմէ ազատուած : Օրեր տեւող հարսանիքներու նկարագրութիւն : Եւ կը վերջանար երկինքէն ինկող երեք խնձորներով :

Գեղեցիկը, բարին, վսեմը, ազատութիւնն ու հաւասարութիւնը կը թեւածէին բոլոր այդ համեստ հողիներուն վրայ, նաեւ սիրոյ յաղթանակը :

Ու երեւակայութեամբ այնքան հարուստ մեր դարաշրջանի սկզբնական երանելի օրերուն, պատճառնե՞ր միթէ՞ կը պակսէին բացառիկ էակներու գոյութեան հաւատալու : Միթէ՞ սուտ էին, Զէյթունէն Սասուն գործող, հայ ասպետներուն քաջագործութիւնները :

Յարէք—Յակոբ, գոյգ կախաղաններուն մարտիրոսները, անոնց տակաւին թարմ հողակոյտները, բաւարար ապացոյցներ չէին, ստրկութենէ ազատութիւն տանող երկար ճամբուն վրայ ցանուած հեքեաթային արկածալից դրուադներուն :

Ինչո՞վ այդ քաջերը պակաս կը մնային Ուսկ'ապլային հեքեաթներուն հերոսներէն, որոնք նոյնպէս կը մաքառէին չարին ընդդէմ, անհաւասար ոյժերով, Արեւ Մանկան մը միամիտ հաւատքովը, ազատելու համար կալանաւոր եւ դժբախտ այն գեղուհին՝ Հայաստանը», բոլոր շրթունքներուն ամենասիրելին, որ հեքեաթները մտիկ ընողներուն համար ե՛ւ հրաշագեղ կոյս էր, ե՛ւ միանըամայն մայր ոսկեծին :

Ու երբ պատմողը, հերոսը անդենականին մօտեցնող վտանգը

ներէն դուրս կը բերէր յաղթական, իր կոյսին ձեռքը բռնած, ամպերուն, փոթորիկներուն ու փոշիներուն մէջէն, շունչերնին կղպած, ինքնազուսպ բայց անհամբեր իր ունկնդիրները դեռատի՝ կը պոռթկային դռաւուղ :

— Քաջանդրանի՛կն է, կեցցէ մեր Քաջանդրանիկը :

Առանց սպասելու որ նոյն երկիւղած լուրթեան մէջ, Ուսկ'ապլան, երկինքէն վար բերած իր խնձորները, լաւ ականջ դնողները վարձատրելու գոհունակութեամբ ժպտի :

— Մայրի՛կ, Քաջանդրանիկը Արեւ Մանուկին եղբա՞յրն է :

— Քաջանդրանիկին ձին սե՞ւ է թէ ճերմակ :

Մեր պատանի օրերուն, Անդրանիկ հաղիւ երիտասարդ, հեքեթային հերոս մըն էր արդարեւ, բոլորին հիացումին եւ պաշտամունքին մարմնացումը՝ Քաջանդրանիկը :

— Մայրի՛կ, ես Քաջանդրանի՛կը տեսնել կ'ուզեմ :

— Կը տեսնա՞ս, տղաս, համբերութի՛ւն ունեցիր : Արդարնե՛րուն իղճը ե՛րբ Ըլլի՛ իրականութիւն կը դառնայ :

— Մայրի՛կ, սուտ չե՞ս : Իրա՞ւ ես արդար իմ :

— Դուն չըլլիս, ս՞իլ աը՛լլի : Հիմա նայէ՛ չքնանաս, քեզ շալկող չմնաց :

Ու մայրը հաւաստեց որ երբ մեծնայ՝ անպայման իր մտրատիւն կը հասնի :

\*\*

Մեծնալէ առաջ սակայն, «արդարները» դարձան պատմութեան նենգ խաղերուն զոհերը՝ մարդ-դայլերէ հալածական :

Երէկ, կեանքին ժպտող, մայր ու մանուկ, մնացին անհայր, անտուն, մերկ, բոպիկ, հացի կարոտ :

Մահ ու սարսափ համատարած՝ ամիսներով քամեցին բարի եւ շինարար ժողովուրդի մը աւիշները :

Հոս, հոն, տակաւին շարժուն խլեակներ, ոտնակոխ եղան, սալալատակի ճեղքերէն բուսած խոտերու պէս, եղան բիրտհար, քարկոծ, նման փողոցի շուններուն. դեռ չմահացած, որդեր բոյն դրին իրենց սակորներու արանքին :

\*\*

Ու յանկարծ կանչ մը յուսատու :

— Մէ՛կ Հա՛յ, մէ՛կ ոսկի՛ :

Ան կ'արձագանդէր Մ'նձուրիի հովիտներուն մէջ, անոնց զառիթափերն ու անցքերը դարձան դէպի ոսկի՛ եւ դէպի կեա՛նք խուժող արահետներ :

- |               |                |               |
|---------------|----------------|---------------|
| 1 Ա հայք      | 7 Աղջնիք       | 13 Արցախ      |
| 2 Բ ”         | 8 Մոկք         | 14 Փայտակարան |
| 3 Գ ”         | 9 Կործեք       | 15 Ուրի       |
| 4 Դ. ”        | 10 Վասպուրական | 16 Գուգարք    |
| 5 Բարձր հայք  | 11 Կարսկահայք  | 17 Առայք      |
| 6 Առարուբերան | 12 Արևիք       | 18 Այրարատ    |

----- Խորհրդային հայաստան  
 ..... ԱՆԵՐԻ Դաշնագրի սահմաններ







Այլ էր զինը անոնց, որ մուրացկան դարձան, ամիսներ առաջ իրենց սեփական տուներէն թալանուած բարիքներուն:

Մէ'կ Հա'յ, մէ'կ ոսկի' հրաւէրն էր, սրտազին կոչը Հայոց նոր համախմբումին:

Մեռա'ն քիւրաւոր Հայեր: Կեցցե՛ր հայ ժողովուրդը, ապրի՛ հայ ազգը:

Հրազէններու առժամեայ դադարին մէջէն յոյսի ճիւղ մը՝ էրզրումի Հայոց լեռներէն: Ուր, Եփրատն ի վեր, հին մեծ բերդաքաղաքին մէջ կը ձմեռէր յաղթական Ռուսը: Անոր բանակին հետ կրնկակոխ, Վանանդի անտառները մրոտելով, «կուկուչկան» հեւալով ու մխալով Կարնոյ դաշտը հասած՝ կը սպասէ բարի դալուատի խրախճանութեանց:

Ինչե՛ր, ինչե՛ր կ'անցնին հայ զաղթականի մտքէն, ի՛ր իսկ երկրին մէջ: Թերահաւատութիւնը անոր հոգւոյն մէջ, պիտի հրաժարի՞ իր դարաւոր կապանքէն խոյս տալ: Գիծը, որ ձգուած է Հայկական Պարի եւ Անդի-Պոնտական լեռնաշղթաներուն միջեւ, յաւիտենականութեան մը յայտարարը չէ՞ միթէ, երէկի եւ դալիքին միջեւ բարեբաստիկ հանգրուան մը չէ՞, թանձրացեալ երաշխիքը անդաստական Հայու իղձերուն՝ ազատութեան, ինքնավարութեան:

Բազմութիւնը կը փութայ Կարնոյ սարահարթը՝ Կարսի դռնէն դուրս՝ Հաւան Ղալէի ուղղութեամբ, «կուկուչկան» դիմաւորելու: (1)

— Պարո՛ն, ո՞րն է Կարսի դրան ճամբան:

— Աղջի՛, չըլլայ կորսուիւնք, սալտաքներուն ճանկն իյնանք:

Ապրիլեան արեւոտ յետ-միջօրէ մը:

Գրաւող ոյժերու իշխանութիւնն է հրաւիրողը: Սարըղամիշէն Կարսին շողեկառքի նեղ դժի աւարտման փառատօսին:

Կ'անցնին դպրոցական շարքերը: Մեծ խումբը «Հայկական Շտապ»ի դպրոցի տղաներն են, ապա «Քաղաքներու Միութեան» եւ «Պրքըստըն»ի որբանոցներուն տղաքը՝ երկսեռ:

Փոչեկոյտերը «սալտաթ»ներու փաշտերն են, մէջ ընդ մէջ փայլող պղինձները՝ զինուորական նուազախումբը:

Կը թրթռան Հայոց լեռները, լուռ է հայ տղամարդը, հայ մա'յրն է, որ կը հեղու ջրվէժի պէս իր հոգին փոթորկող մտածումները:

Ամբոխը կը սողայ դէպի որոշեալ վայրը, շողեմեքենայի զիլ ձայնին ուղղութեամբ: Հո՛ն, ուր համազգեստներ կը պսպղան, ուսա-

---

(1) Սոյն տողերը գրողը, նարտարագէտի վկայականը նոր առած, 1928 թուին առաջին անգամ աշխատանք գտած է, կուկուչկան շինող փրանսական Décoville ընկերութեան մէջ: Այո՛, գարմանահրաշ գուգադիպուրիւն:

դիրներ, փայլուն կոճակներ, գլխարկի նշանակներ, սուրի պատեաններ: Բոլորն ալ արեւու մեղսակցութեամբ իրարու աչք կ'ընեն:

Հանդէսը բացուած է: Հանդիսականներն են՝ զինուոր եւ զաղթական:

Հայը կը մասնակցի իր դպրոցականներու ելոյթներով, ճառերը՝ ուսերէն՝ քիչերու համար են: Բազմութիւնը ինքն իր հետ կը խօսակցի, երազներով կ'ապրի:

Ունկնդրութի՞ւն, ուշադրութիւն դէպի բե՞մ՝ հայ երգին, խաղին, արտասանութեանց՝ պատահականութիւն, երբ քով քովի նստողները կ'ուզեն նիւթ փոխել՝ մէկ խօսակցէն միւսին դառնալու պահերուն:

Բացառութիւն մըն է պարազան, վայելչօրէն հազնուած կնոջ մը, եւ հանգստեան կոչուած հաղարապետի մը՝ համազգեստաւոր, որուն շքիւնքները թէեւ Ռուսի պէս կը շարժին, սակայն իր Հայու աչքերը բեմին կպած են:

— Ուրեմն, սիրելի բալֆովնիկ, դուք հաւանեցիք այդ տղային:

— Նո՛ւ: Նա կարողացաւ իմ մէջ Հայը արթնցնել:

Տիկին Շուշանիկ Տէր Գրիգորեան օրերով փնտոած էր նման պատեհութիւն մը, խօսակցին ձգելով դէպքերու բերումով անակընկալ առաջարկութեան մը խաբկանքը:

— Թէ որ էտպէս է, թո՛յլ տուէք, Զե՛րդ Բարձրապատուութիւն, մի առաջարկ բերել, հէնց է՛տ տղայի վերաբերմամբ:

Նուազախումբի ուժգին մէկ երանգը, ծափահարութիւնները հազիւ դադրած, թէեւ կ'ընդհատի խօսակցութիւնը, սակայն Տիկին Մայրիկը իր մտածումներուն հետ է:

— Գէթ այդ տղային ընդունիլ որպէս Կովկասահայոց Բարեգործական Ընկերութեան «սան», մինչեւ բարձրագոյն կրթութիւն:

Բալֆովնիկ Յակոբեանի բողոքի, «խնդրում եմ», «մի՛ պարտաւորէք զիս» բառերը կը խեղդուին: Իր արտասանած «այո՛»ն միեւնոյն նշանակութիւնը չունի երկու խօսակիցներուն համար: Այս անգամ զինուորականը քաղաքավարական նահանջ կատարելու փորձերուն մէջ կը սխալի, իր գործը տարբեր կնոջ հետ է, Կարնոյ գաղթականին եւ կամաւորներուն սիրական Տիկին Մայրիկին հետ:



Հեւալով, ճշալով, որբերու երգերուն եւ յոյսերուն ալ ոյժովը դօտեպինդ կառաչարը կ'անցնի դարերու արիւնաներկ սարահարթերէն, կը մազլցի վերերը, կը կորսուի անտառներու եւ երկնքին միջեւ ու վերջապէս իր շալակը կը թօթուէ Սարըղամիշի կայարանը, ուր հիանալի վահոններ՝ չորս պատերով, վրանին առաստաղ, պա-

տուհան դռներով, ծալլուող սանդուխներով, ապշած կը թողուն թրքահայաստանի զաւակները :

Հետեւեալ օր, լքուած կալուածի մը պարտէզներուն մէջ լաւ-րուած վրաններուն առջեւ, սիւն մը բոլորած, անոր զապաթէն կախուած դոյնդոյն ժապաւէններուն պոչէն բռնած, մանչ ու աղջիկ, փոխնիփոխ խոնարհութիւն տալով զիրենք խաչածեւոզներուն, կը դառնան սիւներու շուրջ՝ երգելով, հիւսելով :

«Կա'րմի'ր, կա'պո'յտ ժապաւէ'ն ունի'նք . ալ ի'նչ կ'ուզե'նք պէտք է հրեւի'նք» :

Ոչի'նչ կ'ուզեն : Տարիք, օրուան նորութիւնները զիրենք ամբարցուցեր են անմահութեան զաղափարին հետ, ու այլեւս պիտի ունենան, ի'նչ որ ուզեն :

Պիտի դան կուշտ փորով անկողին մտնելու օրեր, զեղեցիկ հագուստներ պիտի ունենան, իրենց հարազատները պիտի դտնեն, պիտի պատժեն չարերը, վերջ պիտի տան աշխարհին ու մարդոց տիրապետող անիրաւութիւններուն :

Ուրիշ ոչի'նչ կ'ուզեն :

Սարըզամիշը խեղդող լեռները կ'արձագանդեն անոնց երգերն ու մտածումները, հողատար տիկիւններ կը հետեւին անոնց խաղերուն, կը հրահրեն ընդարմացողները :

Անոնց հետեւիլ կը թուի նաեւ, խումբին «ճանապարհի ընկեր», Բարեգործականի «սան»ը : Կանաչներուն վրայ մեկուսի ընկողմանած, բարդ հաշուեկշիռի մը մէջէն ելք մը փնտռողի լըջութեամբ :

— Տղա'յ ջա'ն, ինչի՞ դու էլ չես ընկերանում նբանց : Մինչդեռ անոր ախանջին ուրիշ ձայն մը պատուար քաշած կը կրկնէ հօրը կողմէ բաժանումի պահուն կրկնուած խօսքը :

— Գնա', մա'րդ եղիր : Հոս չօպան կը մնաս : Բայց թի'զ մ'անգամ չբաժնուիս քրոջմէդ :

Հեծկլտուքներու մէջ արտասանած «այո'»ն է որ կը տապակէ իր հոգին, մինչ քրոջը անուշ դէմքը մեղադրանքի ժպիտներով կը փսփոսայ «զիս սալտաթներուն մէջ ձգեցիր» :



«Մէ'կ ձա'խ, մէ'կ ա'ջ, մի'շտ յա'ռա'ջ, յա'ռա'ջ : Յա'ռա'ջ, յա'ռա'ջ, հի'սե'նք քա'ջ քա'ջ» :

Բարեգործականի «սան»ն է որ հեղնանքով կը մուտայ, թի՛ֆլիզ նոյն հաստատութեան առաջը դտնուող պուրակին սաղարթածածկ մէկ նստարանին վրայ, ու երէկի ուղեկիցներուն այս բառերը կը խոռովեն իր յամառ որոշումը :

Շարաթ մը, նո'յն վայրին մէջ, ջղերու եւ որովայնային մկան-

ներու պատերազմ մղեր է «մերժուած սան»ը, ու մերժելով կը մերժէ Վրաստանի խորերը դանուող որբանոցներէն մին ընտրելու առաջարկը :

— Ռազմաճակատի վերապրողները այցելող մեր լիազօրը ո՛չ մի իրաւասութիւն ունէր առ այդ :

— Սա՛ մի անպէտք թղթի կտոր է, — յանձնարարականը կը պատուուի, կը նետուի : — Կորի՛ր, թէ՛ չես ուզում որբանոց դնալ :

Դոնապանը, շարաթ տեւող այդ օրերուն մէկ ձեռքով դուրս, միւսով ծրար մը կը հրէ «սան»ին ծոցը, բարի խօսքեր, մարդոց խոստումներուն ու կեանքի խաղերուն վրայ դառն խորհրդածութիւններ :

— Տղաս, մի՛ յամառիր, մի՛նակ ես, անտիրական, անզօր, չես կրնար երկար դիմանալ, կը հիւանդանաս, մեղք ես . . . կը մեռնիս :

Դոնապանին խօսքերը նժարին մէկ կողմը, միւսին մէջ կը ձնչէ քրոջմէն բաժնուած ըլլալու ծանր յանցանքը, որ զինք անդրդուելի կը դարձնեն :

— Թող զիս Կարին վերադարձնեն, ես որբանոց չեմ երթար :

Ի՞նչ գիտնայ բարի դոնապանը, որ գործի ժամերէն դուրս տղուն տուած իր զաղտագողի այցելութիւնները, անոր յամառութիւնը կը կերակրեն :

Միջօրուան մօտիկ ժամու մը, պուրակին մէջ խաղացող մանուկները տուն են վերադարձեր, «մերժուած սան»ը վարանոտ, արեւէն տաքցած նստարանին կը մօտենայ, հազիւ քուն մտած երազները կ'օրօրեն զինքը : Մայրը հեքեաթներ սկսած է պատմել : Խոր քունի մէջ է, ճակատը հուլունքներով ողողուած է, հեքեաթին դործողութեան պատկերը կը փոխուի . փոխանակ Արեւ Մանուկին, ի՛նքն է որ կը հալածուի, բազմադուրս դեւի մը բիւրաւոր ճանկերէն խոյս տալ կը փորձէ, ի գո՛ւր : Ամէն ինչ կորսուած կը թուի, երբ ճերմակ ճիւղերի մը իրեն օգնութեան փութալը կը նշմարէ : Երազի մէջ կրած վախէ՞ն, թէ ականջները դմբող գլորդիւնէ մը ընդոտ կ'արթննայ :

Շուրջը ոչ մէկ կենդանութիւն, արեւը քիչ մը դիւրք փոխեր է, պուրակէն դուրս կ'ելլէ, կը նշմարէ հեռացող երկձի կառք մը՝ երազը պղտորողը :

Հո՛ն է Բարեգործականի շէնքը, վախնալու պատճառ չունի, աննպատակ պտտող աչքերը կ'իյնան իրեն վրայ յառաջացող յաղթանդամ, հերարձակ մէկուին վրայ, ան, մայթը լքելով դէպի իրեն կը խուժէ :

— Այդ դո՛ւն ես, տօ՛ : Հոս ի՞նչ գործ ունիս, ե՞րբ եկար, եւ ինչպէ՞ս :

Վահան Թոթովկեց, աչքերը դողդոջ տղուն վրայ, պահ մը վարանումէ յետոյ խանդով կը գրկէ զայն ու կը համբուրէ Կարնոյ «հայկական շտապ»ի իր իսկական սանը, ու պատասխան չ'ստանար :

— Տօ՛, ինչո՞ւ ես այդքան նիհար, ջրերու մէջ կը լողաս,

ծանր աշխատանքէ՞ կը վերադառնաս, թէ շողին պատճառաւ: Ինչո՞ւ չես խօսիր: Ո՞ւր կը բնակիր: Ճաշած ես:

Սանին գլուխը իր սիրական ուսուցչի թեւերուն մէջ, լեզուն կապ, նոր մտածումներ կ'որոճայ, երբ Վահան իր բամբ ճայնով այլեւս հրամայական՝

— Տօ՛, գլուխդ վե՛ր առ նայիմ: Հա՛, այդպէս: Կարծեցի որ կու լաս: Զեռքերդ տաք են: Ճակատդ կը վառի, չըլլայ թէ հիւանդ ես:

Մօտիկ առաջին նստարանին վրայ, պատմութիւն մը կը սկսի ու կը վերջանայ:

— Վա՛յ ես ձեր...: Ուրեմն այդպէս: Ինչ որ է, այլեւս հոգ մի՛ ընէր, երազիդ մէջ յայտնուած ճերմակ ձիաւորը այս կէսօրէն վերջ կը տեսնես մարմնաւորուած: Հիմա երթանք փորերնիս կշտացնենք:

Դարաստանէն դուրս կ'ելլեն, ձեռք ձեռքի, դէպի ճաշարան:

Հսկայ հրապարակէ մը անդին, լայն պողոտայի մը վրայ են՝ Կալավիմսֆի փռօսփէֆք: Զախին՝ անվերջանալի ցած պատ մը, վրան երկաթեայ բարձրաբերձ ձողեր, ոսկի կամ պղինձ փայլատակող, ներսը ծառաստան, ծաղկանոց դոյնզգոյն, խորքին փառաւոր շէնք՝ Կովկասի ոռու փոխարքային պալատը:

Դարպասի մուտքին մօտ կը դառնանք աջ, կը կտրենք պողոտան: Յածիկ շինութեան մը առջեւ ենք՝ սրճարան մը: Ներսը՝ գետնայարկին մէջ՝ Արամին ճաշարանն է՝ Ժամադրաւայրը Թիֆլիզի եւ անկէ անցնող հայ «ինտելիկիտներուն»:

— Քեզի՛ եմ, կ'ըսէ Վահան. համարձակ եղիր, վե՛ր առ գլուխդ տեսնեմ, սա վարի աղմուկէն ու ինքնաբաւ մարդոց երեւոյթէն չազդուիս, մեզ պէս մարդիկ են:

Սեղանէ մը արձակուած բացականչութիւնները, Թոքովեցի ուշացումը շեշտող, կը մնան անպատասխանի:

— Ժամանակ ունինք, փաշան խմբադրատուն չմտած՝ հոն կ'ըլլանք(1):

— Փաշան ո՞վ է, կը փսիսամ դէպի Թոթովենց:

— Տօ՛, չե՞ս գիտեր, կը գոչէ Վահան զարմացած, հէնց ձերմակ ձիաւորդ՝ Անդրանիկը:

— Քաջանդրանի՞ր՞ կը:

— Հասպա ո՞վ: Քանի՞ Անդրանիկ կայ: Կը տեսնաս աչքերովդ, կը համբուրես ձեռքը:

— Կը վախնամ:

---

(1) Մեր երիտասարդները «փաշա» անունը նախընտրած են, պարոն, տիար, եւ ա՛յլ տիտղոսներով Անդրանիկ անուանել չհամարձակելնուն, պատշան չգտնելնուն միտումով:

Վահան կուշտ—կուշտ կը խնդայ : Կը մօտենան սեղանի մը . բաներ մը կ'ըսէ ու քանի մը ձեռք կը սեղմէ : Ամէնքը կը շարժուին , կը բարեկեն , տեղ կը բանան նորեկին եւս :

Խօսողը այնուհետեւ մինակ ինքն է , աշխոյժով երկու ճաշ կ'ապսպրէ , բառեր կը թափէ կարկատի մէջ , նորեկը ծանօթացնելու խանդոտ խօսքերուն ու դառն խորհրդածութիւններուն կը յաջորդեն ազգային հարցերու մասին տաք վիճարանութիւն , անձեր , դէպքեր , վարդապետութիւններ նոյնպէս դանակի հարուածներով կը կտրատուին : Վահան ախորժով ու աճապարանքով կ'ուտէ :

Թոքոփեցի «աճապարանք»ը իմաստ ունի : Նման վէճերէ բաժնուի ժամանակի կը կարօտի , որով , վերադարձը վազք է : Անոր քայլերուն հետեւիլ , արտակարգօրէն լեցուն փորով , գալիք անակնկալներուն երազով միանգամայն՝ դիւրին գործ չէ :

Բեհպուտեան փողոցի Հայոց «Շտապի»ն դուռն ու սանդուխները կը կլլէ Վահան :

— Տօ' , ուշացեր ենք . փաշան արդէն ներսն է : Եկուր միասին մտնենք :

Երկու ձեռքեր աւելի պինդ կը սեղմուին , մէկուն տէրը միւսը ներկայացնելու խօսքերը կարգի դնելու վրայ է , իսկ այս վերջինը կը թաղուի նուաստ դրութեան մը ծալքերուն մէջ , ուր ամօթաժողովիւն եւ երջանկութիւն գիրար կը հրմշտիկեն :

Բացառիկ պահերու ատեն , միտքն ու հոգին կը քամեն միւս զգայարանքներուն սահմանուած ոյժն ալ . Անդրամիկի գրկին մէջ՝ Վահանի գտնուած «փոքր եղբայրը» աչքերը փակ , ախանջը իր մօր՝ «մուրատիդ կը հասնիս» հաւաստիքին , կը զգայ զոյգ մը համբոյր , որ իր ջերմոտ այտերուն վրայ կազդուրող հովի մը պէս կ'իշխան : Ու մինչ հուժկու ձեռքեր իր գլուխը կը դարձնեն , ան կը կարծէ բազմութենէ մը բոլորուած ու կը լսէ բառեր , հատիկ—հատիկ , անոյշ ձայնով մը :

— Վագգէմը կը պահենք մեզի հետ : Զեզմէ իւրաքանչիւրը անոր կը սորվեցնէ իր գիտցածը , ան մեր «Հայաստան թերթին» սանն է այսուհետեւ : Ե՛ս զինքը դարոց կը դնեմ :

Թոթովենց , չփացած տղեկի մը պէս կը ցատկուտէ ու կը ճանէ , «կարծես փաշան հոն չըլլար» : Իր «պզտիկ եղբայրը» մէկէն միւսը կ'անցնի , բոլորն ալ լուռ կը գգուեն ու կը շոյեն զայն , անոնք կը կոչուին՝ Լեւոն Թիւթիւնձեան , Ներսէս Դժխոյեան , Հրաչ եւ Ռաֆայէլ Զարդարեան , Եզնիկ եւ Եղիշէ Քաջուհի , Եղուարդ Չոփուռեան , Յակոբ Տէր Զաքարեան , Խաչիկ Պոյաձեան , Գարեգին Լեւոնեան , Իշխան (Յովսէփ Պարսամեան) :

Կը տրուին հետեւեալ որոշումները :

«ՀԱՅԱՍՏԱՆ» թերթին վերաբերեալ վազվառուքները կը կազմեն իր գործին էութիւնը : Փոստի հետ յարաբերութիւններ եւ դրա-

մահաւաքութիւն՝ փոքր գումարներու յատուկ, ի հարկին նաեւ սուրհանդակ՝ Անդրանիկի եւ խմբագրութեան միջեւ:

Օրականը մէկ ռուբլի: Մէկ լիդր մածուն՝ 60 կոպէկ. վրացական «պուրի» հացը՝ 35 կոպէկ, խնայողութիւն՝ 5 կոպէկ:

«ՀԱՅԱՍՏԱՆ» կը գրուէ շէնքին Ա. յարկի ձախ յարկաբաժինը: Փողոցի վրայ ունի երկու սենեակ՝ մէկական պատուհանով, ներս քաշուածը՝ խմբագրութեան յատկացուած, միւսը, որ հանրային պարտէզ տանող անցքի մը վրայ եւս կը նայի ուրիշ պատուհանով մը, վարչական աշխատանքի երեք պաշտօնեաներուն: Միշտ պարտէզ տանող անցքին երկայնութեան վրայ սենեակ մը, պատշգամով մը ապակեպատ, խոհանոց եւ լուացարան-պէտքարան: Մուտքին աջակողմը մուտք եւ խոչոր սենեակ մը, օրաթերթի պահեստի թուղթերուն հակերով դրեթէ լեցուն, նախապէս ուրեմն իբր մտան ծառայող:

Հանրային պարտէզ տանող, այն է նոր բացուած «Բուսաբանական այգի» տանող անցքը կը փակուի երեկոյեան ժամուն, ամառ, ձմեռ տարբեր, եւ անոր դարպասը կը դռնուի այգի տանող ներքնադիւ մուտքէն բաւական առաջ, «Հայոց Շտապ» կոչուող շէնքին ուղղութեամբ՝ Բեհպուտեան փողոցի երկայնքին վրայ:

Պաշտօնէութեան սենեակին կից փոքր սենեակին մէջ բազմոցի նմանող կարասի մը նետուած է՝ փլիփլած, կը յատկացուի «նոր պաշտօնեային»: Բայց ան շատ չանցած կը նախընտրէ ինքզինքը թաղել թուղթի հակերուն մէջ, ուր աւելի ջերմութիւն կը գտնէ, նաեւ ապահովութիւն:

— Տօ՛, եղաւ գնաց, կ'ըսէ Վահան, քարէ նստարանէդ հազար անգամ լու է, կը ջանամ վերմակ մը ճարել:

— Զաջօն ողջ ըլլայ, կը յարէ չարաճիճի ձայն մը:

Անդրանիկ այս բոլոր կարգադրութիւններուն հետեւած է սենեակէ սենեակ անցնելով, անպայման առաջին անգամ ըլլալով կը գննէ պատուհաններուն եւ դռներուն փականքները, ու կարծես ապահով՝ կ'աւելցնէ:

— Զինքը շատ վաղցնել մի՛ տաք: Զանացէք որ մինչեւ յառաջիկայ Օգոստոս Ներսիսեան վարժարանի քննութիւններուն պատրաստ ըլլայ:

Այս չնախատեսուած պատահարին առթիւ համարեայ երկու ժամ տեւող կարծիքի փոխանակութիւններէն, դժգոհութեան նոր պոթիլումներ լսելէ վերջ, Անդրանիկի կը տրուին իր «փանաման» ու ձեռնափայտը: Անոր այդ օրուան այցելութիւնը վերջ գտած է:

«Փաշայ»ին մեկնելէն յետոյ, բոլորին համար, նորութիւնը անոր ցոյց տուած գորովագութեամբ եւ բծախնդիր վերաբերմունքն է, կարծես ամէնքին աչքին նոր Անդրանիկ մը ծնունդ առած ըլլար:



— Տօ՛ւ, տեսա՛ք մարդը, կը գոռայ թո՛ղթովենց, երբ ձեզի կ'ըսեմ որ մեզ ըլ կը սիրէ՝ խօսքիս չէք հաւտար :

Տակաւին շարաթներ, Անդրանիկ, միշտ հայրական, իրաւ պիտի զարմացնէ բոլորն ալ : Անոր այցելութեան պահերուն ո՛չ մէկը պիտի ուզէ պատճառն ըլլալ «պաշտպանեալ»ի բացակայութեան, թէեւ փաշան կը փափաքի ամենուն ալ ներկայութիւնը : Սկիզբները, հազիւ խմբադրասպետի սեղանին մօտ իրեն յատուկ տեղը բազմած, անոր առաջին հարցումը կ'ըլլար :

— Ո՞ւր է մեր տղան :

Ուստի նոր պաշտօն մը այդ տղուն համար : Հսկել փաշայի գալուն ու զինքը դիմաւորել վարի դրան առջեւ, կամ սանդուխին գլուխը եւ փաշան ներս կը մտնէր ձեռքը «տղուն» գլխուն վրայ : Անոր կը յանձնէր գլխարկն ու դաւազանը, կ'ուզէր որ զինքը վստահեցնէ թէ բոլոր անհրաժեշտ ժամանակը կը յատկացուէր քննութիւններու պատրաստութեան :

— Որ այդպէս է, ապրի՛ս, զնա ուրեմն պաղ ջուրէդ բեր : Այս թիֆլիզը շատ տաք տեղ է : Պաղ ջուրը, թէեւ ծանր, կը բղխի «Ֆուսարանական այգիի» մուտքին, մեր շէնքին կռնակը, լերան ստորոտը :

Թիֆլիզի տաքերը անտանելի են, բարեկեցիկ դասը ամառը Վերաստանի եւ Կովկասեան լեռներու ստորոտեայ հովասուն վայրերը կ'ապաստանի :

Անդրանիկ, չըջապատի ճնշումներուն անսալով, որոշեր էր այդ տարի Հիւս . Կովկասի ջերմուկները երթալ, իր յօդացաւերուն մեղմացում գտնելու յոյսով : Խմբադրաստուն եկած էր սովորականէն առաջ, կարգ մը թեղադրութիւններ ընելու՝ մինչեւ իր վերադարձը : Ռուսական յեղափոխութեան «Փետրուարեան» շրջանին մէջն ենք տակաւին եւ անակնկալ զէպքերը պակաս չեն :

Պաղ ջրով լեցուն դաւաթը արդէն սեղանին վրայ է :

— Շատ ծարաւ եմ այսօր եւ բժիշկս կը յանձնարարէ շատ խըմեկ, զնա՛, սափո՛րն ալ բեր, ու քովս կեցիր, կ'ըսէ Անդրանիկ, քեզի լաւ լուր ունիմ տալիք :

Այնքան բարձրաձայն եւ ուրախ շեշտով՝ որ ներկաներուն հըրաւէր մըն էր :

— Այսօր, կը շարունակէ փաշան, ճաշի էի Յովհաննէսին մօտ, — թումանեանն է, — կային նաեւ գրողներ, խօսակցութեան նիւթը դարձաւ «Հայ ամուրի հերոսի» մը վրայօք, որուն 14 տարեկան գաւակը յանկարծ մէջտեղ կ'ելլէ :

— Ո՞վ է, ո՞վ է, կը խլրտան շուրջինները քմծիծաղով :

— Անոր գաւակին բարեմասնութիւնները կը թուեն, սա՛նկ է, նա՛նկ է, եւ թէ «Հայ գրողներու ընկերակցութեան» սան ընդունուած է, անոր ներկայացուցած «պատմուածք»ի մը գրական արժէքը զնահատելով :

Շուրջիններուն քահ-քահները կը բազմապատկուին, թէ Անդրանիկի պատմելու ճարտարութեան ի տես, թերեւս անոր՝ Թումանեանի սրախօսութեան զոհ գացած ըլլալուն վրայ: Բայց փաշային տրամադրութիւնը կարծես ա՛լ աւելի կը բարձրանայ:

— Տօ՛, մի՛ խնդաք, պահ մը երանի տալ սկսայ այդ «հերոսին»:

— Փաշա՛, կը ներես, խըրս ելար՝ երբ քեզ այդպէս քաշքէցին:

— Տօ՛, ի՛նչ խըրս, ատ Յովհաննէսին կատակներուն կա՛մ կը վարժուիս, կամ իրմէ ընդմիշտ կը հեռանաս, երկուքն ալ դժուար բաներ են:

Ի վերջոյ Թոթովեց կը խոստովանի որ ինքը սարքուած ճաշկերոյթին տեղեակ եղած է, եւ կը յայտնէ որ այսուհետեւ «Երրորդ մկրտութեան արժանացած սանը» պէտք է զազրի գործէ, միմիայն իր դասերով զբաղուելու համար, որ Հրաչ Զարդարեանը խոստացած է օգնել թուարանական դասերուն: Իսկ ինքը մեծ սենեակ մը վարձած է ու միասին կրնան բնակիլ, քանի որ Թումանեան շէշտած է նաեւ «եթէ որոշեալ դասարանի մուտքի քննութեան ձախողի, տըրուած որոշումը կը բեկանուի»:

— Ուրեմն «ըռպէն կրիտիկական է», կը յարէ Լեւոն Թիւթիւնճեան, խումբին մէջ, «յեղափոխերէն» լեզուի ամենէն սրամիտ եւ յաճախ քաշքշողներէն:



Վայրկեանները իրաւ ալ «կրիտիկական» էին, բոլորին համար, տաղնապալի հայ մնացորդացի եւ վտարանդիներու գոյութեան առնչութեամբ:

Բովանդակ ոռու կայսրութիւնը, առանց կեսաքի, կ'ապրէր օրը օրին, Փետրուարեան Յեղափոխութեան վարանումներուն զուգընթաց:

Տապալուած էր Զարական Ռեժիմը: Պատերազմը կը շարունակուէր: Զինադադար ոռու-թուրք ռազմաճակատի երկայնքին: Ազատազրուած էր պատմական Հայաստանի երեք քառորդը, ըսենք՝ տիրակալ փոխած:

Ռուս Տումայի (ներկայացուցչական ժողով) անդամներուն ընտրապայքարի օրերն էին: Դաշնակցակցութեան թափօրներ՝ թիւ 4 ցանկ, իրենց հռետորներով կը գոռոզոտային:

Բազմազգի, բազմալեզու Կովկասը, ազատութեան ճառերու ընդմէջէն ինքնավար վարչաձեւ կ'երազէր, ու արդէն ազգամիջեան վէճերն ու զոհերը, մանաւանդ հայ-թաթարական հատուածներուն միջեւ, օրէ օր կը ծաւալէին:

Տակաւին «իսկական խորհուրդ»ներու իշխանութիւնը չհաստատուած (սեվիէթ), զանազան «խորհուրդ»ներ կը ծլէին՝ մասնաւորապէս Հայոց մէջ:

Արեւելահայ եւ Արեւմտահայ, նաեւ Հայաստանի ապահովութեան խորհուրդ մը:

Պարենաւորումի դժուարութիւններուն համընթաց ամէն շրջան հրապարակ կը թափէր թղթադրամներ: Տեղական իշխանութեան յամառ զրոյցներ կը շրջէին ի պատասխան զինուորներուն «դէպի տուն» կարգախօսին:

Աւելի քան տարի մը առաջ ցրուած էին հայ կամաւորական գունդերը, գործերնին կէսէն ալ պակաս ձգած: Անդրանիկ, իր «Հայաստան» խմբակով կը բաժնէր վտարանդի հայութեան անձկութիւնը ի խնդիր մօտաւոր ապագային, եւ մանաւանդ գալիքին:

Արհամարհանք, դժգոհութիւն, վէճ, կռիւ, նախատալից խօսքեր հայկական խմբաւորումներուն միջեւ՝ հանրային պարտէզներու խաչուղիներուն վրայ, հանդէսներու ընթացքին, «Չաշկա Չայ»երու մէջ, մամուլով, փողոցը:

Կազմակերպութիւններու մէջ խմբակներ՝ աջ եւ ձախ: Նոր բիւրեղացումներ, բաժանումներ, մահուան փոխադարձ սպառնալիքներ, եւ երբեմն յաջող մահափորձեր:

Անձանութներու (իմա թաթար) կողմէ վար կ'առնուէին Հայեր, Սանահին-Թիֆլիզ, Բագու-Թիֆլիզ զնացքներէն ու կը կորսուէին անհետ:

— Տղա՛ք, կը պաղատէր թոթովենց, հեռագրենք փաշային, որ գիծը չկտրուած վերադառնայ: Թող Արեւմտահայ խորհուրդի անունով ստորագրուի:

Մինչ այդ, հեռուն, «անկանոն» հռչակուած զինեալ ոյժերու բացայայտ զրգուլթիւններ, զինազաւարի դժի երկայնքին, կը պարապըրէին անոր մերձաւոր վայրերու թրքահայ բեկորներուն տեղափոխութիւնը:

Արեւմտահայ խորհուրդին պարտականութիւնն էր տէր կանգնիլ անոնց կեանքին ու դատին:

Այս էր կացութիւնը, երբ Անդրանիկ, վարանոտ, տխուր, վերջին անգամուան մը համար կը մեկնէր հանքային ջրերը, կազդուրելու ինքզինքը, դէմ զնելու համար իրեն սպասող յառաջիկայ փորձութիւններուն:



Փաշան կը վերադառնար: Հեռագիրը չէր ստացած:

— Սիրտս անհանգիստ էր: Ինչպէս յաճախ, դժբախտ օրերու

նախօրեակէին զգացումն ունիմ, պիտի ըլլային իր առաջին՝ բարեւի խօսքերը:

Անտուզութեան, վախի այդ բովին մէջ, Սասնոյ արծիւին յանկարծուտ վերադարձը ոչ միայն արմատախիլ, երիտասարդ իր սիրական տղոց, նաեւ հերոսի հակառակորդներուն համար ազահոլութեան երաշխիք մըն էր:

Աւելի քան երբեք, Ա՛ն էր հայ զինեալ ոյժին խորհրդանիշը, ու իր ներկայութիւնը փոխաբայի պալատին պարտէզներուն մէջ սարքուած բարենպատակ հաւաքոյթներուն, հը զրդօէր կորով թէ եւս վէճեր: Սքանչացում, նաեւ նախանձ, եւ սակայն ազահոլութեան ներշնչում ամէն Հայու:

Թիֆլիզ հասած օրն իսկ Անդրանիկ հը զովանար իր պաշտպանեակին պաղ ջրովը, զայն համբուրելէ վերջ հը կանչէր «Հայաստան» կազմը կարեւոր խորհրդակցութեան:

«Կիսլավոտաքիլ» մէջ բուժուողներէն է Ս. Էջմիածնայ Գէորգեան Հոգեւոր ձեմարանի Տեսուչ Գարեգին Ծայր. Վարդապետ Յովսէփեան: Օրեր, յաճախակի, Անդրանիկի եւ հայր սուրբի խօսակցութիւնները միշտ հը վերջանան ձեմարանի ուսման, ներքին կենցաղի մանրակրկիտ հարց-պատասխաններով, որոնց վախճանը կ'ըլլայ վարդապետին մտահոգ զարմանքը:

— Պարո՛ն Անդրանիկ, թոյլ տուէք իմ կարգին Ձեզ մի հարց տալու: Ինչի՞ համար ուզում էք այդքան մանրամասն տեղեակ լինել վարժարանի եւ տղոց ապրելակերպի վրայօք:

— Ի՛նչ մեղքս պահեմ, Հայր Սուրբ, տղուս համար յարմար դպրոց մը հը փնտռեմ եւ այն եղրակացութեան եկայ որ Ձերինը աւելի նպաստաւոր է իրեն՝ քան Ներսիսեանը:

Այս անակնկալ յայտնութենէն պատրաստարան վարդապետը պահ մը կ'անճրկի:

— Ինչպէ՞ս թէ տղուս համար: Դա մի մեծ նորութիւն է ինձ համար, միթէ դուք էլ մեզ նման մի կուսակրօն մարդ չէ՞ք:

Անդրանիկ, արդարեւ, թումանեանի դրան առաջ շատ անգամներ հանդիպեր է տղոց՝ «Գրողներու Միութեան Սաներուն», որոնցմէ էր անպայման խմբադրատուն այցելող Վաղարշակ Նորենց, որոնք իրենց սահմանուած համեստ կըթաթոշակէն մաս-մաս դանձելու համար պարտաւոր էին քանիցս ներկայանալ:

Այդ տղոց երեւոյթը, պատահաբար կամ ուղղակիօրէն փաշայի ականջին հասած տրտունջները, մասնաւորաբար մեծ քաղաքի փորձութիւնները, բաղդատութեան ոչ մէկ եզր հը հանդուրժէին հայր սուրբի զեկոյցին հետ, ուստի հը մտադրէ իրենց սանին համար աշխարհագրական դիրքի փոփոխութիւն:

Միակ առարկութիւնը մուտքի քննութեանց տարբերութիւններն

էին, յատկապէս կրօնքի վերաբերեալ, որ մինչ այդ պատրաստելիք նիւթերէն դուրս ձգուած էր:

Այս աստիճան հոգաձուքիւն ցոյց տուող զէնքի մարդը, իր ունկնդիրները ամչնելու չափ զարմացնելէ յետոյ՝ զեկոյցը կ'ամփոփէ իրապաշտ թուումներով:

— Քննութեանց յաջողեցա՞ն: Գլուխը կը խուզեն, մօրէ մերկ բաղնիք կը տանին, մաքուր կը հագուեցնեն, կ'ուտէ կը խմէ՝ մաքուր ճաշարանի մէջ, կը պառկի հանգստաւէտ եւ անաղմուկ ննջարանի մէջ, երկու շաբաթն անգամ մը ընդհանուր բժշկական քննութիւն, խնամք, լուսաւոր դասարան՝ յատուկ դաստիարակներով սերտողութիւն եւ հսկողութիւն: Կը մնայ միմիայն, սորվել, սորվել ու սորվել, եւ երբ օրը զայ ծառայել պզգին:

Այսպէս, որոշումը կը տրուի միաձայնութեամբ, խանդավառ ցոյցեր համակրանքի: Ամհկոտ «սան»ը կ'երգէ մտովին՝

«Այժմ դառնանք մե՛նք շո՛ւրջանակի՛

Եւ մի՛շտ ալ հիւսե՛նք աշխոյժ եռանդուն»:

Փաշան կը մեկնի, ամէն մէկը ապշահար անոր գովքը հիւսել կ'աճապարէ, անոր մէջ բացառիկ նոր գիծը՝ հայրականը, նոյնքան ցայտուն եւ հերոսական:



Արեւելեան Հայաստանէն, որբանոցներէն եւ ա՛յլ հատընտիր շրջաններէ չորս հարիւրի մօտ տղաք կը դեգերին Վաղարշապատի մէջ Ս. Էջմիածնայ պատերէն ներս. եկեր են մասնակցելու ձեմարանի մուտքի քննութեանց մրցման: Օգոստոսի կէսերն է: 1917:

Թեկնածուները կըձատող առաջին ապերախտ բաժինը կ'իյնայ վարժարանի բժիշկին:

Խիստ եւ դժուարին են նաեւ քննութեանց հարցումները՝ գրաւոր թէ բերանացի: Ուսողութեան գրաւոր առաջին փորձը հարկ եղաւ չեղեալ հռչակել՝ զեղծումի հետեւանք: Հայերէնի մէջ գերակը՝ չի ունի կը տրուի ուղղագրութեան, ու անոր հատուածին ընտրութիւնը Մանուկ Աբեղեանի մենաշնորհն է: Կրօնի հարցաքննութիւնները տեսուչ վարդապետի ատենապետութեամբ՝ շատերու հեծկլտուքներով կը վերջանայ: Եւ սակայն 1917 Սեպտեմբերին Գ. րդ դասարան կ'ընդունուին 48 աշակերտ, կէս առ կէս արեւելահայ եւ արեւմտահայ վտարանդի տղաք:

«Հայաստան»ին զրկուած աւետարեր հեռագրին թուականէն շաբաթներ կ'անցնին, ո՛չ զլուխ խուզող կայ, ո՛չ բաղնիք տանող: Որբանոցի վերածուած «նոր մատենադարանին» մէջ անբաղձալի մանրէներ սկսած են լրջօրէն նեղել «ձեմարանի սանը»՝ ցերեկօթիկի վիճակի մէջ, երբ օր մը կը քաղէ իր երկար լուութեան պտուղը՝ յան-

դիմանական նամակ մը : Թոթովենցի ծայրաստիճան դժգոհութիւնը փոռած «քսանըջորս փունիթանոց» զրերով :

— Տօ՛, ինչո՞ւ նամակ չես գրեր : Յաջողութիւնը թոցուց երբեմնի իմաստութիւնդ : Ամէն օր սո՞ւտ պիտի հնարենք, անխութութիւնդ փաշայէմ ծածկելու համար :

Ճշմարտութիւնը յայտնել ստիպողական էր այլեւս, թուել ձեմարանի կազմէն դուրս ապրելու անյարմարութիւնները՝ նոր կըլտամբանքներ աչք առնելով :

Երկար սպասել պէտք չ'ըլլար : Դասարանիս դաստիարակը երեք օր անց կը հրաւիրէ իրեն ընկերանալ աշխարհական Տեսուչ՝ Աւետիք Տէր Պողոսեանի մօտ :

Ընդունելութիւնը սիրալիւր է, բնագիտութեան ճիւղի քննիչի հանդամանքով մէկզմէկու ծանօթ են եւ դէր-տեսուչը նախ գովեստի խօսքերով կը շեշտէ առաջին հանդիպումին յիշատակը ու ապա՝

— Ա՛յ տղայ, այդ լաւ չես արեր մեզանից ծածկելով քո պաշտպանի ինքնութիւնը, ինչպէս եւ ձեմարանէն դուրս մնացած ըլլալու պարագադ, որ մեր ուշագրութիւնից վրիպել է. չէ՞ որ դու նոյնքան իրաւունք ունես, որքան միւս աշակերտները, Հայր Սուրբը բարկացել է քո վրայ :

«Հայաստան»ի մէջ կարգալով՝ «Գէորգեան ձեմարանի տեսչութենէն կը խնդրուի անյապաղ գիշերօթիկ ընդունիլ իրենց աշակերտ՝ . . .», Գարեգին Հայր Սուրբը իր մօտ կը հրաւիրէ օգնականները եւ անոնց կը պատմէ Կիւլավոտսիի մէջ Անդրանիկի հետ ունեցած խօսակցութիւնը :

— Կարծում էի Անդրանիկ ինձ հետ կատակում է : Ոչի՛նչ : Դուք կը զբաղուէք իր «տղայով» : Ահա նամակը, որ ես ուղղել եմ իրեն :

Ձեմարանի «հարազատ սան»ին դանդուր մագերը կը կարծրանան, ինչպէս կ'ըլլային հեքեաթներու յողնած եւ յաղթական հերոսներուն վարսերը. ան կը խաղայ տաք բաղնիքի ջուրերուն հետ, իր մտքին, երազներուն թռիչք կու տայ դէպի Մնձուրիի լեռնախորշերը, դէպի Կարին՝ քրոջ ժպիտը հայցելու, դէպի Թիֆլիզ, ուր գինքը սիրող նոր հարազատներու հոյլ մը կայ՝ լծուած ազնիւ պայքարի մը :

Դէպի Բազանդարանիկը :

## ԿԱՐՆՈՅ «ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ» ՄԱՍԻՆ<sup>(1)</sup>

Մեր մօտաւոր անցեալի պատմական դրուազներուն մասին, բոլոր տեսակի՝ մեր եւ այլոց պատասխանատուութիւնները պարզելու համար, անհրաժեշտ են վկայութիւններ, լուսաբանութիւններ, ճշգումներ եւ փաստեր:

1918 թուականի առաջին օրերուն մէջ, Կարնոյ մէջ, ոռւս բանակէն դրաւուած եւ Հոկտեմբերեան Յեղափոխութենէն յետոյ, զբրեթէ առանց կայազորքի մնացած բերդաքաղաքին մէջ, Անկախ Հայաստանի հռչակումը, կատարուած իրողութիւն մըն է, «խենդութիւն» մը, որուն ճախողութիւնը ախտասալի է, երեք քառորդ դարէ ի վեր, բաց մնացած ահաւոր վէրքի մը շարունակական կսկիծին պատճառաւ՝ հայ դատին անլուծելի մնալուն ի տես:

Ինչո՞ւ կատարուած է այդ «խենդութիւնը»: Ի՞նչ հարկադրանքի բերմամբ: Ի՞նչ պայմաններու մէջ: Քանի որ, ափսո՛ս, որեւէ ատեն, այդ ճակատագրական օրերուն եւ անոնց նախօրեակին, ղէպքերը նախատեսող, անոնց հետեւողութեամբ ազգային ուղեգիծ եւ գործունէութիւն պայծառ կերպով կարելի չէ ցոյց տալ հայրենիքէն, այն է մայր հողերէն դուրս գտնուող հայ քաղաքական կեդրոններուն մէջ՝ Թիֆլիզ, Բարիզ, Պօլիս, Գահիրէ, Ս. Էջմիածին, կամ այլուր:

Ժողովուրդի մը համար, որ կը յաւակնի իբր ազգ ապրիլ, իր կամքէն անկախ վարանումներ ու տարուբերումներ աստիճան մը միայն ներելի են: Ու եթէ նոյնիսկ անժամանակ ու անխորհուրդ քայլեր առնուած են, անոնց դարմանը կարելի չէ դառնել անհողութեան եւ ընդհանուր մեղկութեան մէջ:

Արդ, ջարդերու սկիզբէն եւ տեղահանութիւններէն չորս տարի յետոյ, հայ կամաւորական դունդերու լուծարքէն երկու տարի, Ռուսական Ա. Յեղափոխութենէն մէկ տարի, թրքական ճակատին

---

(1) 1918 թուի արշալոյսին, ցուրտ, ձիւնախառն դաշտերուն մէջէն, սահնակի մը վրայ փաթաթուն, արդէն յիսնամեայ Անդրանիկ, մրրկայոյց սրտով, կը սուրայ իր երազն ամբողջացնելու, հայ ժողովուրդի վերածնունդին, անոր պետականութեան յարութեան դրօշը պարգեւու Հայաստանի սրտին վրայ, Բարձր Հայքի կարին բերդաքաղաքին մէջ, վստահ Ա. Ընդհ. Պատերազմի մօտալուտ յաղթանակին, որուն ազգովին, լայնօրէն, եղբարկանօրէն մասնակցած է Հայր:

վրայ Ռուսին հետ կնքուած զինադադարին ոչ պաշտօնապէս խզումէն վեց ամիս վերջն է որ տեղի կ'ունենար Կարմոյ անկախ Հռչակումը :

Այդ քայլը ոմանք կը հռչակեն «աննշան գործ մը, բայց խորհրդանիշ մը» :

Որեւէ գործ երբ ձախողի՝ կը դառնայ աննշան, եթէ չհաշուենք անոր սահմանափակ օգտակարութիւնը :

«Սակայն ինչո՞ւ ան խորհրդանիշ մըն է :

Անհրաժեշտ է ղէպքը թարմացնել, զայն քննել իբր անմիջականօրէն անհրաժեշտ ձեռնարկի մը տեսանկիւնէն, անոր խորհրդանշական տարողութիւնը վեր հանել ու ըստ այնմ զնահատել :

Ի՞նչ էր ուրեմն պատկերը Կարմոյ մէջ, վերջին ապաւէնը ժողովուրդի մը մահու եւ կենաց պայքարին յաջողութեան :

Կարինը գրաւական՝

Հայաստանի ազատութեան, ապա միութեան ու քայլ առ քայլ անկախութեան :

Գործ մը, որ հանգամանք ունեցողներու կողմէ երեսէ ձգուած է, կրնայ ուրիշներու կողմէ գէշ պատրաստուիլ, սակայն զայն ձեռնարկելու միող հրամայական պահանջը մեղմացուցիչ պարագաներ ունի վերջիններուն ի նպաստ :

Արդարեւ, եթէ մեզի ընծեռուած, որքան անակնկալ, նոյնքան ալ խիստ ծանր պայմաններու մէջ, բացառիկ պատեհութիւն մը օգտագործելու կամքն ու ձեռնբերէցութիւնը պիտի չունենայինք, թշնամիէն պարպուած մեր հողերուն վրայ, գէնքով, կենսամթերքով լեցուն Կարմոյ պէս բերդաքաղաքին մէջ, ազդովին մտածուած ու պատրաստուած ծրագրի մը հիման վրայ անկախ դառնալ՝ ուստի պաշտպանուիլ, կը նշանակէ մեր նախապէս, ամբողջ կէս դար տեւող մեր ազմուկը մէկ նշանակութիւն միայն ունէր՝ ջարդեցի՛մ մեզ :

Ոյժի, զոհարեցութեան, մեղկութեան, ի՛նչ անփառունակ խորհրդանշան, ազդի մը համար որուն պակսեցաւ հաւաքական անձնուրացութեան վերջին խոյանքը, քանի որ կը գտնուէին, գէնքը ձեռքին հայ հողի վրայ զինադադարը ողջունելու անհրաժեշտութեան դիտակցութիւնը ունեցող մարդիկ :

Անտարակոյս այս անվճռականութեան ի նպաստ եւս չեն պակսիր մեղմացուցիչ պարագաներ, եթէ նկարագրենք այդ օրերու ժողովուրդին վիճակը :

Անգամ մը եւս ողբերգական, թէեւ մեզի անծանօթ կը մնայ Հայոց պատմութեան չըջան մը, որ ցոյց տայ թէ հայ ժողովուրդին գլուխը, իրանը եւ անդամները ամբողջութիւն մը կազմած ըլլան :

Բոլորովին փճացուած, ցիրուցան արեւմտահայութեան կողքին, կովկասահայութեան պատկերը խիստ հեռու էր ամփոփ եւ միատարր ըլլալէ : Նոյնքան շեշտուած չափերով կղզիացումները ինքնին կը բացատրեն հայ-թաթարական ընդհարումներու պատճառ-



ներէն դիտաւորը եւ անոնց բացած վերքերը հազիւ թէ սքօղուած՝ կը ծագէր Առաջին Ընդհ. Պատերազմը:

Փորձենք թուել 1917 թուի Փետրուարեան Ռուս Յեղափոխութենէն առաջ եւ յետոյ Հայոց երկու հատուածներուն հոգերը:

Ոչ ոք ի հարկէ կը կասկածէր Դաշնակիցներու յաղթանակին մասին, ու Կովկաս ապաստանած Հայերն այլեւս ինքզինքնին յանձներ էին ռուսական հովանիին:

Սակայն, հայ դիտաւոր եւ բազմանդամ հատուածին տրուած մահացու հարուածին բերմամբ, իր այդ անկերպարան վիճակին մէջ, իր տարաբախտ ազդակիցներուն օգնելու հոգերուն հետ, արեւելահայութիւնը, Ֆիզիքապէս մինչ այդ ապահով, պարտաւոր էր ըստանձնել ազգին ճակատագիրը վարելու հոգը:

Ան ռուսական բանակին տուած էր զինուորացուներու իր բաժինը ու կը կրէր պատերազմին առթած գոհողութիւնները:

Կը պատսպարէր, կը խնամէր ջարդերէն իր զիրկն ապաստանող ազդակիցները:

Պարտ էին տէր կանգնիլ արեւմտահայ դատին, որ պարզօրէն Հայոց միակ դատն էր, եւ որուն հրահրողներն եղած էին իր ծոցէն բզխած անհաշիւ հայրենասիրութեան քարոզիչները: Ուստի անհրաժեշտ էր բացատրել հայ կամաւորական ղուեղերուն լուծման պատճառները, որոնք ի հարկէ քաղաքական էին եւ մեր կողմէ չկանխամտածուած, անոր առթած նոր եւ ծանր յուսախաբութեանց զիմապալել, անոր հետեւանքներուն հաշիւը ցոյց տալ ու ելք մը փնտռել:

Իբրեւ ազգ կամ առանձին համայնք, պէտք է մասնակցէին ռուսական յեղափոխութեան առաջադրած նոր կարգերուն, ելեւէջներուն, մանաւանդ Հոկտեմբերեան յեղաշրջումին բերած արմատական որոշումներուն նկատմամբ զիրք ճշդել, դէպքերու բերմամբ, ուրիշ ազգերու հետեւողականութեամբ հայ ժողովուրդի գոյութեան, ինքնորոշման ծրագիրը կերտել եւ անոր իրագործման ձեռնարկել:

Տակաւին, դէպքերու արագ յեղաշրջումին պատճառաւ, այս անդամ բովանդակ ազգին սպառնացող թրջական ոյժերու մակընթացութեան զիմազրաւել, ապաւինիլ սեփական ոյժի՝ բանակ կազմակերպել:

Այս արտակարգ հոգերը կը պահանջէին մեծ կորով, միասնականութիւն, ոյժերու խելացի կեդրոնացում, ինչ որ հակառակորդ՝ նոյնիսկ յայտնօրէն թշնամի տարրերով իրարմէ բաժան-բաժան՝ Երեւանը, Ալեքսանդրապօլն ու Կարսը, Շուշին, Պաքուն, Նախիջևանն ու Թիֆլիզը չէին կրնար յայտնաբերել, ու չպիտի կրնային յեղափոխութեան եւ տուն վերադառնալու բովէն բռնուած ռուս բազմահազար զինուորներուն կողմէ լքուած ճակատին զիրքերը լեցնել՝ ազգային ոյժերով:

Շուտով, պատմական կարեւոր հոգերու կարգին պիտի անցնէր, հայ ժողովուրդի անունով ուսական պետութենէն անջատուելու որոշումը՝ նախ անդրկովկասեան միութեան մը դիմակին տակ, ապա բոլորովին անջատ պետականութեան հռչակում: Քանի որ արեւելահայ մտաւորական, տնտեսական, ձախակողմեան, թէ ժողովրդական խաւերուն մէջ Ռուսէն անջատ Հայաստանի մը դոյութեան հաւատք ընծայող չկար եւ դադարաբար, նոյնիսկ երազն ալ դոյութիւն չունէր: Կովկասահայութեան դիրքը հետեւաբար, անջատման հարցին մէջ սպասողական էր, հետեւողական, խաղալիք դէպքերու, որոշումները կը տրուէին կամքէ անկախ՝ կոտորած սրտով:

Ահա եւ պատկերը մնացորդացին, որ ունէր նոյն հոգերուն հետ սեփական աւելի խոր ցաւեր:

Կովկաս եւ դրաւեալ շրջանները ապաստանած արեւմտահայութիւնը կը բաղկանար՝ վերապրող փախստականներէ՝ որբեր եւ որբեւարիներ: Պանդուխտներէ, հոն փութացող կամաւորներէ, ֆէտայիներէ եւ ցանցառ թուով գործիչներէ:

1918 թուի սկիզբին, ամայացած ու աւեր արեւմտահայաստանի կէսէն աւելին տակաւին դրաւում կը պահուէր, եւ մասնակի զինադադար մը, կնքուած ուսութեամբ բանակներուն միջեւ, դեռ պաշտօնապէս ի գործ էր:

Զինադուլի առաջին ամիսէն սկսեալ, ազատագրուած ցանուցիր խլեակներուն պիտի գային միանալ՝ Վանէն, Մշոյ Դաշտէն, Խընուսէն, Քղի-ձապաղջուրէն եւ Եփրատի վարի հովիտը եղերող Մընձուրիի լեռնային անցքերէն, ջարդէ եւ տեղահանութենէ ճողոպրած խումբ-խումբ փախստականներ:

Երկու թշնամի բանակներու դժերը ճեղքելով «փրկութեան գօտի» մտնողները ուս յառաջապահներուն վրաններուն առջեւ պիտի ճաշակէին՝ քաղցր թէյով առատ սնունդ, ապա ներսերը զիրենք ընդառաջող եւ հիւրընկալող կազմակերպութիւններ պիտի գտնէին:

Մահմանի գլխաւոր կեդրոններուն մէջ, հանրակացարաններէն, որբերը կ'անջատուէին՝ զրկուելու համար արեւելահայաստանի եւ Վրաստանի մէջ հիմնուած որբանոցները: Որբեւարի, աննեցուկ կին ու աղջիկ, զինուորական պարէն կրող ու պարապ վերադարձող կառքերու մէջ լեցուած կը զրկուէին ճակատէն հեռու՝ մասնաւորապէս Կարին:

Տղամարդ կամ չափահաս մանչ ունեցող ընտանիքները սակայն, որ չէին կրնար իրարմէ բաժնուել ու չէին կրնար տրուած չնչին նպաստներով գոհանալ, ստիպուած էին տեղւոյն վրայ ինքնաբաւ դառնալու մասին մտածել: Ասոնց առաջին գործն եղաւ, լքեալ զիրերէն՝ հայապատկան մեծ մասամբ, շալակով պտուղ բերել ու ծախել, առաւելապէս ուս զինուորներուն: Երգնկայի դաշտն ու լեռնալանջի անոր արեւոտ գիւղերը՝ մրգառատ, 1916ի աշնան հայ փա-

խոստականին համար եղեմական անծայրածիր պարտեզ մըն էր : Ապա , շուտով , ամէն կողմ արհեստաւորներ՝ ժրաջան , դործի կը ձեռնարկէին ու հրապարակը կ'ողողուէր ամէն կարգի ձեռներէց տարբերով , սկսեալ հնակարկատներէն ամէն տեսակի վերաբերեալ , ու կեդրոններու մէջ արդէն տուն-տեղ ըլլալ փորձողներ՝ կօշկակար , դերձակ , սափրիչ , հիւան , ատաղձադործ , վստահ դաշնակից՝ իրենց բարեկամ երկիրներու յաղթանակին , ունէին մեծագոյն ապացոյցը մշտական ապահովութեան՝ Ռուսին ձգած Կարս-Կարին երկաթուղադիւր եւ անոր բացումը :

Բացի Վասպուրականէն , Կարին քաղաքի մէջ կը համախրմբուէին , միւս բոլոր դաւառներէն ու շրջաններէն վերապրողները :

Պակասաւոր կողմ մը կար սահայն , անհունօրէն ցաւալի , չըկար այլեւս հայ դիւզ , բոլորն ալ թխմուած քաղաքներու մէջ : Կը նշանակէ ծառ մը՝ առանց արմատի :

Ասոնց պատուարելու եւ կերակրելու դործը կը ղեկավարուէր «Հայոց Շտապ»ին կողմէ , որ ի սկզբան «կամաւորական դունդերու» կազմակերպողն ու ղեկավար մարմինն էր :

Կարնոյ մէջ , հայապատկան տուները «Հանրակացարան» անունով մկրտուած՝ բերնէ բերան լեցուն էին : Փախչող թուրք մեծամեծներու ապարանքներուն մէջ հաստատուած էին որբանոցներ՝ ուսուցչական կազմով՝ կամաւորական ցրուած դունդերէն մտաւորական երիտասարդներ : Կար նաեւ ցերեկօթիկ քաղաքամէջի դպրոցը՝ «Շտապի Դպրոցը» , ուր կը դասաւանդէր Ամերիկայէն կամաւոր եկած՝ Վահան թոթովենց :

Շնորհիւ ձեռներէց օրիորդներու , օժանդակութեամբն ու ղեկավարութեամբը Շուշեցի Տիկին Շուշանիկ Տէր Գրիգորեանի , պիտի հիմնուէին կիներու , մանկամարդ աղջիկներու համար կարի եւ ձեռագործի փոքրիկ հաւաքավայրեր :

Կարծես չէր բաւեր հիմնել ու հողալ որբանոց , դպրոց , արհեստանոց , դանազան կայաններ , կար նաեւ անխուսափելի փորձութիւններու դէմ պայքարելու նոյնքան սրբազան անհրաժեշտութիւն մը : Պայքար անբարոյ եւ անբարոյացուցիչ արարքներու դէմ :

Պահելու համար հայ կնոջ պատիւը , անհրաժեշտ էր ցերեկ եւ մանաւանդ դիչերները , հսկել ոռու բանակայիններու կարգ մը ձեռնարկներուն վրայ : Ասոնք , շաքարեղէն , չոր միրգ , հագուստ , զարդեղէն , ուրբի բաժնելով նոր աղէտի մը դուռ կը բանային : Ասոնց դէմ պիտի ծառանային մանկամարդ աղջիկներ եւ տիկիներ , խումբ մը նուիրեալ նախկին կամաւորներու օժանդակութեամբ եւ դործօն մասնակցութեամբ : Այդ արարքները կանխելու , չհրաքայցելու համար միջոցներ ձեռք առնուած են ու հակառակ ատոնց տեղի ունեցեր են դաղթակիցուցիչ դէպքեր : Մեռած գտնուած է անառակ աղջիկ

մը՝ մօրը հաւանութեամբ դործող, ու այդ առթիւ դատավարութիւնն եւ բանտարկութիւնն :

Մնացորդացը ունէր մանաւանդ դժգոհներու դասակարգ մը, մեծամասնութիւնը, որուն մտահոգութիւնը կը կեդրոնանար Հայուն մօտաւոր ապագային վրայ : Մտաւորականներ, երէկի կամաւորները, քաւորդ դարէ աւելի հայդուկայիմ կեանք ապրողներ :

Հեռաւոր երկիրներէ եկող վրէժխնդիր մարտիկներ, կարճատեան մը յաղթական կռիւներ մղողներ, պատերազմը չվերջացած գործերնիմ կէս, զինաթափ՝ ոռու հրամանատարութեան կողմէ, որուն դրդապատճառները կը թափանցէին օրէ օր աւելի յստակօրէն՝ օրէ օր աւելի զգուանքով լեցուած :

Յուսաբեկ, ուղեկորոյս, չյազեցած վրէժով, կռուի դաշտէն վնասուած, ասոնք տաղտկալի օրերու դատապարտուած էին ու իրենց էութիւնը կը պտըտցնէին դժգոհանքի, բողոքի, դործուած սխալներու եւ ազգային ցանկութիւններու մասին բանակռիւներով :

Անոնք, արդարութեան նկատմամբ միամիտ հաւատքով մը, ոչ միայն իրենցը կը հաշուէին դրաւուած հողերը, այլ աւելիին կը յուսային դալիք հաշտութեան սեղանէն, որմէ, քանզի զինաթափ՝ ինքզինքնին շարտուած կը տեսնէին առանց պատճառաբանութեան :

Դժգոհներէն այս շատերը Կարնոյ մէջ, Ջարդերէն ազատուածներուն հետ կը կազմէին Արեւմտահայ Ինտելիկէնցիաւմ, որ հետզհետէ աւելի յանդուզն, մուտք կը դործէր Զաշկա Զայի սրահներէն ներս՝ ժամանցի, քարոզչութեան այդ կրկէսներուն մէջ :

Յարի եւ իր վարչակարգի փլուզումի նախօրեակին եւ 1918 թուի Փետրուարէն առաջ, ահա պատկերը վերսկսող հայ կեանքին, տակաւին խրախուսիչ ամէն ինչ կորսնցուցած, անլուր արհաւիրքէ ճողպարած, կորովի ժողովուրդի մը կողմէ յայտնաբերուած :

Սկզբունքով բարի, ոռու յեղափոխութեան լուրը, պատերազմի եւ անողոք թշնամիի մը դրացնութեան բերմամբ, ահագանդ մը եղաւ բոլանդակ հայութեան համար :

Զինուորներուն «դէպի տուն» ազազակները հաւասարապէս պիտի դինովցնէին հայ ժողովուրդի յաւիտենական թշնամի թուրք վարիչներուն գլուխները, որոնց համար նոր կարելիութիւններու, նոր յոյսերու դուռ կը բանար կատարուած յեղաշրջումը :

Հազիւ քանի մը ամիսէն, Փետրուարեան Յեղափոխութիւնը, Դաշնակիցներու կողքին պատերազմը շարունակելու եւ անծայրածիր ու բազմազգի ոռու պետութիւնը սահմանադրական նոր կարգերով օժտելու իր երկու անմիջական նպատակներուն մէջ պիտի ձախողէր ու անոր յաջորդող Բ. յեղաշրջումը պիտի հետապնդէր ամէն զնով առանձին հաշտութիւն մը կոփել, որպէսզի աւելի անկաշկանդ կաբեանար արմատական փոփոխութիւններու ձեռնարկել :

Մեր ճակատագրին հետ կապ ունեցող ոռու-թուրք ճակատին վրայ, գինադադարի զծին մեր կողմը ծայր կու տար շարունակական քայքայումներու ազդանշաններ՝ միթիինկ, ճառ, անկարգութիւն, իշխանութեան տիրանալու փորձեր, միւս կողմը, օգտուելով ընծայուած թանկագին պատեհութենէն՝ վերակազմութեան ճիգ կը թափուէր, ուժասպառ եւ հիւժած պետութեան մը բանակին ի նըպաստ :

Հայ ժողովուրդին կը մնար միայն ու միայն իր սեփական ոյժերով լաւագոյն ելք մը փնտռել իր գոյութեան եւ ապագային ի խնդիր :

Ամէն յեղափոխութիւն ունի ձրի գրօսանքի շրջան մը, որուն գինը, որեւէ ձեւով՝ արիւնով ու քրտինքով պէտք է վճարուի :

Նոր Տումայի (Ռուս Սահմանադրական ժողով) ընտրութիւնները կը յատկանշեն Փետրուարեան Յեղափոխութեան գրօսանքը, որուն հարկադրաբար պիտի մասնակցէր արեւելահայը, իրեն սպասող մօտաւոր ապագայի նկատմամբ կատարեալ անգիտակցութեամբ :

Արդէն իսկ Թիֆլիզի եւ Բաքուի հայութիւնը մեթոտիկ կերպով կը կտրուէր հայրենի հողերու բնակչութենէն : Թաթար գիւղերու մէջ կազմակերպուած գինեալ ոյժերու ձեռքով սկսած էին Հայերու մասնակի եւ յաճախակի սպանութիւնները : Թիֆլիզ-Բաքու, Թիֆլիզ-Սանահին տանող դնացքներէն Հայեր վար կ'առնուէին ու կը նետուէին ջրհորներու մէջ : Ճանապարհներու ոչ մէկ ապահովութիւն դէպի Օլթի-Արտասան, Ախալքալաք կամ Նախիջևան : Շուշիմ հետզհետէ կը մեկուսանար :

Ազգային Սորհուրդը դատապարտուած էր վրացի ղեկավարութեան կողմէ «արտօնուած եւ գտուած» հրահանգներ միայն ճամբել դէպի Կարս, Երեւան կամ Ալէքսանդրապոլ :

Հայութեան առաջնորդները, բանտուած Թիֆլիզի եւ Բաքուի մէջ, Վրացիներու կուտակուած նախանձին ու հակակրօթեան, թաթարական բացայայտ թշնամութեան ենթակայ, ի վուր կը ձգնէին ինքնապաշտպանութեան պատրաստութիւններու ձեռնարկել, ու հակառակ այս իրողութեան, Ազգային Սորհուրդի անունով կուտակցական յայտնի գործիչներ կը զրկուէին Հայաստանի գրաւուած մարդերը, որպէսզի դեռ նոր ջարդերէն ազատուածները իրենց տեղերը մընան, տոկան, դիմադրեն ճակատի եւ թիկունքի յարձակումներուն, հաւաստիքներ կը շոյալուէին հայկական օգնական ոյժերու մօտալուտ առաքման մասին, որոնք պիտի լեցնէին ոռու զինուորին թափուր թողած դիրքերը :

Շատ չանցած անդրկովկասեան փոխարքայութեան դաւառները նոյնպէս պիտի անցնէին լքեալ հողամասերու շարքին, ուստի արտաքին թշնամիներուն, թուրքին եւ Գերմանին դէմ պաշտպանուելու բեռն ու հոգերը կ'իյնային զայն բաղկացնող երեք մեծատարր ազգերու վզին՝ Վրացի, Հայ, Թաթար :

Միայն Հայն ունէր սխերիմ թշնամի: Թաթարին համար եկողները ազգակիցներ էին, Վրացուն համար՝ բարեկամներ, շատ-շատ տէր պիտի փոխէր, ուստի առիթէն օգտուելով անկախութեան տիրանալու իր ցանկութիւնը բացորոշ էր:

Միացած անդրկովկասեան պիտակ ունեցող անունի մը կազմին (ՍէՅՄ), ասոնցմէ առաւելարար Հայուն համար անտեղիտալի պահանջ էր ճակատին վրայ ուս գինուորը փոխարինելու պարագան, եւ ամէն գնով, ոչինչէն բանակ ստեղծելու անհրաժեշտութիւնը Հայուն համար անյետաճգելի գործն էր:

Անհրաժեշտ էր գինուորազրել համայն Ռուսաստանի Հայերը: Ռուս ժամանակաւոր կառավարութեանն արտօնութիւն ստանալ գերութեանէ ազատ արձակումը թուրք բանակէն Սիպիր տարուած հայ գինուորներուն ու սպաներուն: Զանոնք Հայաստան փոխադրել:

Զօրահաւաքի աննպաստ պայմաններ: Գերիները հաւաքելու դժուարութիւնները ե՛լ նիւթական էին, ե՛լ փոխադրելու անապահովութիւն, մինչեւ զանոնք Հայաստան հասցնելը:

Արեւելահայ գինուորը, չորս տարի այլեւայլ ճակատներու վրայ ցրուելած՝ իր պարտականութիւնը կատարած էր, յոգնած էր եւ ունէր ուս գինուորին «տուն դարձի» հոգեբանութիւնը: Արեւելահայ սպան ինքզինքը կը պահէր ուս բանակներու երբեմնի հրամանատարութեան տրամադրութեան տակ, դէպքերուն առժամեայ բընոյթ տալով կը սպասէր անոնց ելքին:

Գալով ազգային զօրակոչին, ան Արեւելահայաստանի մէջ կը մնար առանց արձագանգի, երկրին մէջ տիրող ներքին անապահովութեան, նաեւ քաղաքացիական պարտականութեան ու ազգին սպառնացող վերահաս վտանգին անգիտակից մտայնութեան պատճառաւ:

Տեսանք թէ ի՛նչպէս, Երեւանի եւ Կարսի շրջաններն ալ մէջն ըլլալով, Կովկասի հայութեան կը սպառնար ներքին վտանգ: Թաթարները, թուրք սպաներէ մարզուած, համարձակ կը գործէին հազորակցութեանց բոլոր ուղիներուն վրայ, ուր անոնք զուտ թաթար գիւղերու տէր էին ու տիրական:

Ինչպէ՞ս պարտադրել, պատերազմի սոսկումներն ու մահը տեսնելէ յետոյ ետ վերադարձած գինուորին, կամ նորակոչի մը, որ իր սեփական ընտանիքն ու ծննդավայրը անպաշտպան թողելուն հաստատ համոզումն ունի, մեկնիլ հեռաւոր շահերու եւ անձերու պաշտպանութեան, թէկուզ ազգային անունով մկրտուած ըլլայ այդ շահը:

Մանաւանդ կար անսովոր պարագայ մը, ազգային մարմիններու եւ իշխանութիւններու կողմէ զօրակոչի հրաւեր մը՝ առանց սպառնալիքի կամ յետազայ պատիժի:

Այնպէս որ, Տաճկահայր «հիւր» էր Կովկասի մէջ, Ռուսահայր ինքզինքը «հիւր» կը զգար Թրքահայաստանի դրաւուած մարզե-

րուն մէջ: Ի՞նչ փոյթ, որո՞ւ հողը, թէ՛ Բաբերդէն Վան, անցնելով Երզնկայէն, Ճապաղջուրէն, Քղիէն, Խնուսէն, Մուշէն, Բաղէշէն, վերապրող հայութիւնն ու համայն ազգին ապագան վճռական կամքի տէր տանուտէրերու կը սպասէր, եւ ոչ թէ՛ իրենց ձեռքերը լուացող «հիւրերու»:

Օրինակ մը հայկական կարեւոր քաղաքի մը գինուորագրութեան:

Այդ քաղաքի կայազօրը, ի վերջոյ, փողոցէն, սրճարաններէն կամ տուններէն կը հաւաքէր գինուորական տարիք ունեցողները: Ասոնք քանի մը օր մօտակայ զօրանոցը հագուելէ ու մաս մը զէնք ստանալէ վերջ շոգեկառքով կը ղրկուէին դէպի յայտնի բերդաքաղաքը՝ կարճ ժամանակով մարզուելու համար: Տեղ չհասած, ապագայ հայկական բանակի այդ միաւորները՝ տոմարի անցած եւ թիւ չինած, առաջին կայարանէն իսկ կը ծլկէին դէպի տուն, զէնք եւ հագուստ հնչուն դրամի վերածելէ յետոյ: Քանի մը շաբաթ պահուածուէլէ յետոյ երբ օձիք ձեռք կու տային, այս անգամ տարբեր անունով նոյնը կը կրկնէին: Չար լեզուները կ'ըսէին թէ անոնք չէին վարաներ գոյքերը այլազգիին ծախել:

Բայց միւս կողմէ բանակի համար արձանագրութիւնը կը բազմապատկուէր:

Ո՛րք է հայուն կողմէ գինուորագրուելու մէջ ցոյց տուած դժկամակութեան կողքին, աւելի խրախուսիչ չէր ընտրանի կոչուածին վերաբերմունքը: Չկար, հայ ուսանողութեան կողմէ նոյնպէս, խանդավառ հոսանք դէպի ճակատ:

Թիֆլիզի Երեւանեան հրապարակը լեվո-լեցուն կը մնար պատմա-փիլիսոփայութեան ճառող հայ երիտասարդներով: Ս. Էջմիածնայ Գէորգեան ձեռնարանը երբ կը փակուէր 1917 Դեկտեմբերի կէսերուն, անոր լսարանական կարգերէն հազիւ թէ տասնեակ մը ինքնաբերաբար ճակատ կը մեկնէին:

Այսպէս, թուղթի վրայ հայկական բանակը կը բարդաւածէր, զայն կազմակերպել եւ ճակատ ղրկել խոստացողներուն ուղղամտութիւնը խնդրոյ առարկայ չէր կրնար ըլլալ, ու անոնք կը շարունակէին հաւաստել թէ շուտով այդ բանակէն մասնիկներ պիտի հասնէին Քղի, Երզնկա, Բաբերդ, եւ այլուր, ուստի պէտք էր համբերել, չնահանջել եւ տոկալ թշնամիի կողմէ սկսուած յարձակումներուն:

Ցաւազին երկունքով մը, ի վերջոյ, այդ անգոյ բանակին հրամանատար պիտի նշանակուէր՝ Զօր. Անդրանիկ, որովհետեւ արեւելահայ բարձրաստիճան սպաներէն ո՛չ մէկը վստահ էր թէ իրեն կրնային ենթարկուիլ Կարնոյ մէջ տակաւին գտնուող ռուս բանակի մնացորդացը, մէջն ըլլալով հրամանատարական կազմը՝ աւելի վաղուց եւ բարձր աստիճանաւոր զօրավարներով, ու ազգային հերոսը՝ անզուգական հայրենասէր, համակերպելով դառն ճակատագրի մը,

միս-մինակ Կարին կը մեկնէր՝ ճաշակելու համար իր կեանքին ամենէն դառն բաժակը :

Առանց ազգային բանակի, հակառակ ուսւ բանակի մնացորդներուն չկամութեանը՝ մէջն ըլլալով անոնց հայ ծագում ունեցողները, Անդրամիկ, որ կը զիտակցէր իր ոյժերուն անբաւարարութեան, չվարանեցաւ բուս մը զէնքի անվարժ ազգայիններով թշնամին կասեցնելու վերջին փորձ մը կատարելու :

Ու ան, Անդրամիկ մը, որ տասնեակ տարիներ անդադար, զէ՛նք, զէ՛նք, ազազակած էր Հայոց լեռներէն ու կիրճերէն, ա՛ն, որ փոքրաթիւ մարտիկներով թշնամի կանոնաւոր բազմապատիկ ոյժերու զիմադրած էր ու իր անզէն զէրքերը լքած միմիայն վերջին փամփուռի պահուն, պիտի լքէր թնդանօթներով ու կենսամթերքով հարուստ, դնդացիներով սպառազէն զինուոր-սպայ լեցուն բերդաքաղաք մը :

Եւ ան, ի պատիւ իր զգաստութեան, վստահ կանխօրօք, որ ապա պիտի շեշտէր աւելի խոր համոզումով, որ Կարնոյ անկումով, արեւմտահայ՝ ա՛յն է բովանդակ դատը ազգային՝ պիտի գտնէր եթէ ոչ յաւիտենական, զէթ իր առժամեայ վախճանը :



Օդնական ոյժերու սպասող աչքերուն մէջ սկսած էր մագ բուսնիլ, երբ վրայ հասաւ Հայկական Բարձրաւանդակին յայտնի խիստ ձմեռը՝ 1917-1918-ին :

Ու մինչդեռ, հայկական բանակի մը կազմութեան ճիգերը կը շարունակուէին, Թուրքերը ճակատի եւ մանաւանդ թիկունքի յարձակումներով սկսած էին փորձի ենթարկել՝ կշռելու համար Հայոց ինքնապաշտպանութեան տարողութիւնը, եւ զայն ի հարկէ թոյլ դատած :

Պէտք էր անյապաղ նահանջել : Ուրիշ ելք չէր մնացած :

Ինչպէս պատերազմի սկիզբին, ճակատի կեղրոնը դարձեալ պիտի դառնար վճռական կռիւներու թատերավայր : Երզնկա, Մամախաթուն, Կարին, Սարրղամիշ, Կարս եւ Ալէքսանդրապօլ :

«Լաւ է ու՛շ՝ քան երբեք» : Ձմրան սկիզբին Երզնկան կը նահանջէր : Բարերդ, Քզի, Պիթլիս, թիկունքի հետ հաղորդակցութենէ կտրուած՝ պիտի բռնուէին նոյն բովէն :

Եփրատի հովիտներէն, նեղ ու խոր կիրճերէն, Պինկեօլի եւ Հայկական Պարի լեռնային անցքերէն, ձիւնամբրիկի եւ թշնամու դնդակներուն ընդմէջէն, կին, երախայ, ծեր ու զինուոր, զիականեր, սառած անդամներով հարազատներ ցանելով ճամբայ կը կտրեն : Դէպի ո՞ւր :



Դէպի Կարին, որուն առասպելական բերդաքաղաքի անուան պիտի ապաւենին իրենց փրկութիւնը ու տակաւին անխորտակելի հաւատքը Հայուն ապագային նկատմամբ :

Կանոնաւոր եւ գլուխը չկորսնցուցած բանակի մը վայել հա- կայարձակումներովն ու զինուորական մթերքներուն փճացումովը, ճամբու երկայնքին մղած յարատեւ դիմադրութեամբը, ամենէն յի- շատակելի գրուագներէն է արդարեւ Երզնկայի նահանջը, անզուգա- կան հերոսի մը ղեկավարութեամբ՝ գլուխ-գործոցը Սեբաստացի Մուրատի զինական ասպարէզին :

Մեկնելէ առաջ, թշնամիէն օգտագործուելու ծառայող ամէն կարգի մթերանոցներ կրակի տալէ յետոյ, Մուրատ, վերջապահ- ներով կը հասնի նահանջողներուն . ասոնք, Մամախաթունն ու Եր- զնկայի հովիտը բաժնող հռչակաւոր կիրճին երկու կողմերէն իրենց վրայ թափուող զնդակներէն խուճապահար՝ դատապարտուած են ամբողջական ոչնչացման :

Հոտ, հայ պատահական զինուորները, իրենց արի հրամանա- տարին ցուցմունքներուն հնազանդ, կիրճին մէկ եւ միւս կողմերու բարձունքները մագլցելով՝ կը յաջողին թշնամին սաստել եւ ճամբան բանալ, եւ այդ՝ քանիցս կրկնուող նման դրոհներով :

Հոտ, նահանջի այդ օրերուն, պիտի յայտնուին առաքինու- թեանց բոլոր տիպարները : Ոմանք յաւիտենական կսկիծ կը վաստը- կին՝ ետեւնուն ողջ մեռելներ ձգած, շատեր ալ իրենց մարմնոյն ան- դամահատուած մասերուն ի տես ցմահ պիտի չմոռնան այդ պահերը :

Պիտի գտնուին սակայն անխառն երջանկութեամբ եւ հպար- տութեամբ վերյիշողներ ալ, որոնցմէ մասնաւորապէս յիշատակու- թեան արժանի է հայր մը :

Հազիւ վերադարձած թշնամին վռնտելու մասնակցութիւն բե- րած դրոհէ մը, ան կը հարցնէ իր միամեայ մանչուկի մասին, որ թողուած է, շարքերու հետ, խնամքով պարուրուած, հեղեղատին միւս կողմը՝ իր սպաննուած ձիուն հետ շրջուած կառքին մէջ :

Թշնամին մահ կը սփռէ, հայրը՝ Յովհ. Չնկրեան՝ այլեւս ան- հաղորդ է կացութեան : Ձիւն, ձմեռ, գնդակ ու մահ իրեն համար չեն : Զէնքերէն թեթեւցած, գնդակի խուրճերուն մէջէն ան կը սուրայ դէպի կառքը, կ'անցնի հեղեղատը, կը հասնի կառքին, կը քրքրէ ու կը ճանչնայ իր սիրասունը, խելագարի պէս կը գրկէ ու ետ կը նե- տուի :

Թշնամին այս անգամ, բարեբախտաբար Քիւրտեր, մօտակայ բլուրէն կը դիտէ տեսարանը : Եւ ո՛վ զարմանք, կրակը կը դադրի, հերոսութիւնը քարացուցած է իրենց մէջ գազանը, մինչդեռ անձնազոհ հայրը հանդարտօրէն տարտարոսներու մէջէն կը շարունակէ վերա- դարձը՝ հիացումի եւ անձկութեան բռնուած դէպի իրենները, կը

միանայ խումբին, իրեն սպասող մօր մը արցունքները սրբելու համար :

Օրեր յետոյ, նման դրուագներով բեղուն եւ չարչարուած, նահանջողները կը հասնին Մամախարուն, ուր ոչ մէկ օգնութեան հասնող ոյժ կը գտնեն: Որով, անմիջական խնամքի կարօտ՝ ստուած անդամներով հետիոտն ժողովուրդը կազդուրուելու ատեն չունի: Կրակի կը տրուին տեղւոյն լի պահեստները: Շաքար, ալիւր՝ ձիւնին հետ կը հեղեղին դէպի ձոր, ու խումբը ուժասպառ՝ կը հասնի Կարնոյ դռներուն առջեւ, հոն ցուցադրելու համար սրտաճմլիկ տարբեր տեսարան մը մարդկային տառապանքին :

Սիրտ ուշացած այս նահանջին զոհերն ու պատկերը, յուսալքելու աստիճան պիտի գրգռէր Կարնոյ ժողովուրդին անձկութիւնը, հոգերն ու ցասումը, պիտի բազմապատկէր հոն ալ բուն դրած տաղնապը եւ ամէն հրաշագործութիւն մի՛այն այդ ամբողջն սպասող հայրենասիրութեամբ փոթորկող երիտասարդութիւնը :

Մեծ էր հմայքը Կարնոյ ամբուլթիւններուն, որ կը գտնուէր ձեռքը՝ չուքի վերածուած ռուս հրամանատարութեան: Հոն պիտի համախմբուէր փողով ու թմբուկով յայտարարուած Հայոց նորակազմ բանակը՝ ազգային հերոսի հրամանատարութեամբ: Առասպելական էր անոր թնդանօթներուն թիւը, զանոնք վարող «հայ» թընդանօթաձիգներու համբաւը՝ մեծ: Անոր գէնքի եւ սնունդի պահեստներուն ճոխութիւնը՝ անհատնում :

Ովքե՞ր էին սակայն անոր բնակիչները: Որո՞նց ձեռքերուն մէջ նետուած էին անոր բերդերուն ու թնդանօթներուն բանալիները եւ անոր մթերապահները ովքե՞ր էին :

Ուրեմն ո՞վ էր տէրը քաղաքին. ռուս հրամանատարութիւնը, հայ ժողովուրդը՝ իր կամաւորներով: Ստորերկրեայ թուխս նստած, լուռ դաւող ու անտեսանելի թրքութիւնը :

Իրողութիւնն այն է որ անոնցմէ իւրաքանչիւրը ինքզինքը արդար տէրը կը զգար ու ըստ կամս կը գործէր: Ռուսը՝ անհոգ: Թուրքը՝ լռակեաց: Հայը՝ պոռչտացող :

Երեւացող ժողովուրդին մեծամասնութիւնը՝ այն է բնակչութեան, անկայուն հանգամանք ունեցող արեւմտահայութիւնն էր: Տեղացի վերապրողներէն հազիւ նմոյշներ միայն կային, կամ վերադառնալու հնարաւորութիւն ունեցողներ: Թուրք բնակչութեան թիւը ճշդել երբեք կարելի չէր եղած, գրաւման առաջին օրէն սկսած անոնք խուսափած էին ինքզինքնին ցոյց տալէ, անշուշտ հրահանգի մը անսալով :

Ճակատի քայքայման իրողութիւնը ազգին համար մահուակենաց խնդիր էր ուրեմն, եւ գործօն տարրերը մեր, զինուորական կամ ոչ, ռուս բանակայիններուն պարպած Ձաշկա Ձայի սրահներուն մէջ, սանդուխներուն վրայ եւ դռներուն առջեւ, օրն ի բուն

լուրի, հրահանգի, հրաչքի կը սպասէին եւ ջղադրգիւ կը վիճէին, խել մը դարմաններ թելադրելով, կորսնցուցած այլեւս՝ կարելիին ու անկարելիին գիտակցութիւնը:

Յուսարեկ, բայց աննկուն, ամենէն աւելի մտահոգուողներն էին կամաւորները՝ գիրենք մինչեւ Կովկաս առաջնորդող վրէժ-խնդիր ոգիէն միշտ գերուած, հաւատարիմ՝ թուրք ջարդարար պետութիւնը կործանելու եւ ազատ հայրենիք վերականգնելու իրենց սրբազան նպատակին:

Իսկ վտանգուած բազմութիւններուն համար, Անդրանիկի հրամանատարութեան լուրով ոգետոր, ափսո՛ս, չէր լուսնար օրը՝ որը կոչուած էր վերջ տալու Երզրումի մէջ տիրող բազմիչխան քաոսին:

Իրաւապէս բերդին տէր՝ ռուս հրամանատարական կազմը, առանց զինուորի գրեթէ: Հետամուտ միմիայն իր անդամներուն անձի սպահովութեան, արգելք կը հանդիսանար, որպէսզի հայ զինեալ ոյժերը ինքնապաշտպանութեան կտրուկ միջոցներ ձեռք առնեն: Օրինակ, թուրք թաղերու մէջ հսկողութիւն, ի հարկին խուզարկութիւններ եւ զինահաւաք: Երբ անոնց վրայ հսկող հայ փոքրիկ խմբակներ, թէեւ անպաշտօն, շատոնց նշմարած էին թուրք բնակչութեան կողմէ ինքնապաշտպանութեան եւ անշուշտ մանաւանդ ըմբոստութեան որոշ պատրաստութիւններ, կրկնելու համար Երզնկայի նահանջը պարտադրող ձեռնարկները նաեւ Կարնոյ շուրջը, դառնալու համար յառաջապահները թուրք արշաւող բանակին, որ տակաւին թուական տեսակէտով ինքզինքը տկար կը զգար թէ՛ միւս ճակատներուն վրայ գործելու, եւ թէ Կովկասը ամբողջութեամբ զըրաւելու իրենց մշտապէս փայփայած ծրագրին համար:

Եւ սակայն, անոնց այդ փորձերը սաղմին մէջ խափանելու մտօք Հայոց կողմէ ինքնաբերարար կատարուած միջոցառումները կը հանդիպին ռուս սպաներու ընդդիմութեան: Սպաներ, որոնց մէջ կային շատ Թաթարներ, Վրացի, եւ այլասերած՝ Հայեր: Ասոնք ակնյայտ կերպով թուրքը սիրաշահելու ուղին բռնած էին, նախամեծար համարելով յառաջացող թուրք բանակին գերիները դառնալ, քան թէ իրենց զինուորներուն «դէպի տուն» կարգախօսին հետեւիլ՝ կեանքերնին վրայ տալու մեծ հաւանականութեամբ:

Այս անիշխան միջավայրին մէջ, նման խուճապային պարագաներու բերմամբ, կարելի չէր նաեւ, գէթ մասամբ, սանձել անխուսափելի չարաշահութիւնները: Կարելի չէր պատժել հեղինակները տագնապը սաստկացնող հակասական լուրերուն, որոնք զլիսաւորաբար կը վերաբերուէին ներքին թշնամիի պատրաստութիւններուն, ուշացող Անդրանիկի եւ իր բանակին, ու յառաջացող թուրք բանակին:

Դիմակալելու համար հոգիները քայքայող այս կացութեան

եւ խոչընդոտներուն, ոտնձգութիւններուն, դասալքութեան, միակ միջոցն էր իշխանութիւնը ձեռք ձգել, ըլլալ միակ տէրն ու պատասխանատուն քաղաքի պաշտպանութեան, եւ ատոր միակ կարելիութիւնը կը յանդէր ցնցող որոշումի մը՝ անկախութեան հռչակումիւն :

Այս էր այլեւս մեծամասնութեան համոզումը, այս միակ ճանապարհը կ'առաջնորդէր ե'ւ ապրելու բնազդը, ե'ւ ազգին ապահան :

Պէտք էր արթնցնել թմրած ու վհատած հոգիները, վերջ տալ ծաւալող յուսալքութեան, կանխել թուրքերուն ըմբոստութիւնը, հայկական օգնական ուժերու ժամանումին խարկանքը տալ քշնամիւն ու բարեկամիւն. ուստի անհրաժեշտ էր, ա'նյապաղ, Կարինը անկախ հռչակել՝ առա'նց որեւէ դիւանադիտական պատրաստութեան :

Չաշկա Չայի շէնքին հրապարակին վրայ կը հաւաքուին հարիւրաւորներ, դպրոցական, տրամադրելի զինուորութիւն եւ նուազախումբ : Ժողովուրդը անհամբեր, աչքերը շէնքին պատուհաններուն, մերթ ընդ մերթ ծանօթ մարտական երգերն ու քայլերգները կ'որոտացնէ, ճառեր կը խօսուին, ու անկախ Կարնոյ ուղղուած կեցցէներուն մէջ կը կազմուի հսկայ թափոր մը, որ կը շրջի քաղաքին թաղերը, յատկապէս քանիցս կ'ուրուի թրքական մասերը՝ դռուսմ-դռնումով, կեցցէներով : Փողոցները կը թնդան Անդրանիկի ուղղուած մեծարանքի բացականչութիւններով, ու ժողովուրդը իսկապէս հաւատալով անոր ժամանումին, խելայել, թափորին մէջ ծայրէն միւսը կը խուժէր, ազգին հերոսն ու փրկիչը մարմնաւոր աչքերով տեսնելու :

Երբ սաւառնելու անհամբեր արծիւր, հոգեմաշ Սարրզամիշի մէջ կը սպասէր խոստացուած բանակին :

Անոր ժամանումին պիտի հաւատային նաեւ թուրքերը, որոնք այնուհետեւ շարաթներով պիտի սմբէին իրենց թաքստոցներուն մէջ՝ ամբողջ վերածուած, չպիտի համարձակէին գլուխ վեր առնել, մինչեւ թուրք բանակին կողմէ քաղաքին վերջնական գրաւումը :

Շնորհիւ այդ «խենդութեան», Անդրանիկին ժամանակ տրուեցաւ մինչեւ Կարին հասնիլ, եւ շնորհիւ անոր կողմէ մետասաներորդ ժամու ջանքերուն, Կարնոյ հայութիւնը ամբողջութեամբ պիտի յաջողէր քաշուիլ Հասան Գալէ, ու ապա Սարրզամիշ՝ բոլոր ճակատներէն նահանջող Հայոց միացեալ հեծելազօրքի պաշտպանութեան տակ՝ նոյնպէս Քաջն Մուրատի հրամանատարութեամբ :

Ահա շօշափելի, անշուշտ ոչ գանցառելի օգտակարութիւնը Կարինը անկախ հռչակելու խենդութեան, որը, եթէ չէր եղած, ափսո՛ս, ազգովին կանխօրք մտածուած ու պատրաստուած, եղաւ գոյութեան բնազդի ցայտուն արտայայտութիւն մը :

Հազարաւոր Հայերու փրկութեան սատարող այս ելոյթին «Վե՞րջը» :

Կարելի չէ «ոչինչ» հռչակել :

Թէեւ այդ քայլը առնողներուն մէջ կային անբուժելի լաւատեսութեամբ տողորուած, անկարելին փորձելու ընդունակ՝ ոմամանքիկ երիտասարդներ, որոնք շատ աւելի բարձր նպատակի մը կը ձգտէին :

Ասոնց համար արդարեւ, ապագայ անկախ Հայաստանի երազը կրնար իրականանալ Արեւմտահայաստանի հողերուն վրայ, իբրեւ արեան գին հայկական ջարդերուն, վերապրող հայութեան եւ թուրք պետութեան համակեցութեան բացարձակ անկարելի ըլլալուն իսկ պատճառաւ, մինչդեռ, պատերազմի եւ յեղափոխութեան բերմամբ թշնամիէն խլուած, բարեկամէն պարպուած այդ հողերուն վրայ էր որ անկախութիւն հռչակելու քաղաքական պայծառատեսութիւնը կը պակսէր, քանզի ձախողութեան պարագային անգամ՝ այդ քայլին հետեւանքները աւելի ծանրակշիռ չէին կրնար ըլլալ :

Չարմանալի չէ հեռեւաբար, որ սոյն հողբանութեան տէր երիտասարդներ գտնուէին Կարնոյ պէս, այդ օրերուն, ամենահոծ հայութիւն պարունակող Խորհրդանշակաւ մարտկոցին մէջ, երբ այդ տենչը հրահրող ազդակներն ալ անպակաս էին : Աւելի մխլթարական ի՞նչ կար :

Կարինը խորհրդանշիչ մըն էր : Վերջին կայանը հին եւ մշտընջենական երազի մը մարմնացումին : Օտար բառաբաններու մէջ՝ Հայաստանի կեդրոն : Ռազմաբեմին առանցքը, ամուր ոստան մը՝ գէնքի եւ պարէնի առատ ամբարներով :

Սեփական ոյժերով յաղթական դիմադրութեամբ զայն պահել մինչեւ այլեւս մօտալուտ ընդհանուր զինազաղարը, պիտի հանդիսանար ամենավաւերական գրաւականը հաշտութեան ժողովին ներկայացող հայ պատուիրակութեան :

Այդ արիւնոտած սրտով տղոց համար՝ ոչինչ փորձել՝ կը նըշանակէր ոչինչ ունենալ : Այդ քայլն առնողները որակել արկածախնդիրներ՝ արդար դատաստան մը պիտի չըլլայ երբեք :

Այսօր նոյնպէս, կէս դարէ աւելի յետոյ, հայ դատը հետապնդելու համար, ազգովին ընտրուած մարմին-կառավարութիւն մը չունենալը, ոչ ոքի իրաւունք կու տայ արդեւք հանդիսանալ որ այս կամ այն անհատն ու խմբակ մը այդ ուղղութեամբ ձեռնարկ կատարելէ հրաժարի :

Ինքնասպանութեան խտրին դէմ՝ հայ ժողովուրդին կրած ձախողութիւններն ու տառապանքը վերանորոգումի զօրաւոր պատուաստումներ եղած պէտք էին ըլլալ :

Մեր ժողովուրդին պակսեցան այդ օրերուն, թէեւ աննպատ

պայմաններու մէջ, անձնուրացութեան ոգիի տէր զինուորեալներ, յանդուգն եւ խոհեմ, չխօսող՝ այլ գործող, պարծանքէ խոյս տուող՝ այլ սովորող, ինքզինք չցուցադրող՝ այլ խոնարհ, յանպատրաստութենէ խուսափող՝ այլ համբերատար առաջնորդներ :

Մեր թշնամին նուազ հիւծուած չէր : Մինչ մենք կ'երգէինք, ան անոնց կը պատասխանէր լուռ ու մունջ պատրաստուելով :

Անգտանելի պատեհութեանց այդ օրերուն, հայ ժողովուրդին պակասեցաւ յեղափոխականի վայել ընթացք, ուստի Կարնոյ անկախութիւնը յանգեցաւ ոչինչի, ինչպէս Կիլիկիոյ անկախութեան փորձը, որը, պատրաստուեցաւ նոյն ձեւով, եւ ճախողեցաւ միեւնոյն պատճառներով՝ թէեւ ըստ մեր համեստ դատողութեան, այս վերջնոյն պատասխանատուները մեղադրելի ըլլալէ աւելի՝ յանցաւոր են :

Գլխաւոր պատասխանատուն իրմէ դուրս փնտռել՝ ո՛չ ժողովուրդի մը վայել է, ո՛չ ալ անձի մը :

## ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻՎ ԻՐՐԵԻ ՆԵՐՇՆՉՄԱՆ ԱՂԲԻԻՐ

ՆՈՐ ՕՐ

27 Օգոստոս 1957

1915-ի դարնան էր : Զիւնը արդէն հալած էր բարձրաբերձ գիւղերու եւ աւաններու շուրջն անգամ, սակայն երբեք դարնան մը ուշացումը այնքան ցանկալի չէր եղած թերեւս : Քանի՛ կը յառաջանար խուսափուկ ապահովութեան ապաւէն այդ ձմեռը, ա՛յնքան մարդոց դէմքերուն վրայ կը թանձրանար անձկութեան ստուերը եւ կը հալէին նաեւ սրտերը : Հայ մարդը, թուրք կայսրութեան սահմաններուն մէջ պատերազմի մը սովորական ցաւերէն ու վախերէն աւելի դառն հոգերով լի, աշխարհքէն կտրուած եւ իր սեփական բոյնին մէջ անգամ մեկուսացած, հետզհետէ ծանրացող սարսափի մը, — հալածանքի, մահուան ու ցեղային բնաջնջման յանդիման կը գտնէր ինքզինք բնագոյարար : Ան շա՛տ անգամ լսած ու տեսած էր ջարդ, թալան, առեւանգում, աւեր, եւ կը զգար որ այս անգամ՝ ալ փոթորիկ մը կը կուտակուէր եւ դարնան հետ կը յառաջանար :

Ի՞նչ աղէտ սահմանուած էր այս անգամ Հայուն : Ի՞նչ դնով աղէտէն դուրս պիտի կրնար գալ հայութիւնը :

\*\*

Տասներկու տարեկան պատանի մը, իր բնակավայրին կռնակը հանդչող Ս. Սարգիսի հսկայ եւ միակտուր ժայռի մը բոլորտիքը,

քանի մը օրերու դադտագողի փնտռուքէ յետոյ, կրցած էր հոն յարմար տեղ մը ընտրել: Սոչորկեկ փոս մը փորուած էր արդէն ու առաւօտ մը, արշալոյսէն առաջ, բեռան մը տակ կըքած, քրտնաթոր, թիակ մը ձեռքին, ծանրաքայլ կը յառաջանար դէպի փոսը, անտարակոյս կարեւոր գործ մը լրացնելու համար:

Տան մէջ կամ դպրոցի մտերիմները, քանի՛ անդամներ հարցուցեր էին իրեն, ի՞նչ ըրած էր երգարանը եւ վտանգաւոր ու կասկածելի իր գրքերը: Ան հաւաստած էր անոնց ամէնքին ալ թաղուած ըլլալը: Ահա այդ իբր թէ շատոնց տեղի ունեցած արարողութիւնն էր, որ ան կը կատարէր վերջապէս այդ առաւօտ:

Ծանր էր շալակին բեռը իր վտիտ մարմնոյն համար, — խոշոր պարկ մը, մէջը թիթեղէ անօթ, որուն մէջ գրքեր՝ մոմլաթով փաթթուած եւ մաս մը մի՛այն թաղուելիք վտանգաւոր հատորներէն:

Փոսին մօտ մասունքի պէս վար առաւ բեռը, քրտինքին եւ թափուող արցունքներուն հետ դետին ինկաւ, եւ տիրող ամայութեան մէջ, հսկայ քարակոյտին առաջ, լսեց բարձրաձայն հեկեկանքի մը արձագանգը, մինչեւ որ ագռաւներու խումբ մը խզեց իր մինակութիւնը եւ զինք հրաւիրեց աճապարելու, չնչմարուած հեռանալու:

Քակեց պարկին բերանը եւ պարպեց զայն: Դրաւ ծրարը փոսին յատակի քարերուն վրայ, երբ վրան շրջել ուզեց թիթեղէ ամանը, դրքերուն կարօտն զգաց, երգարանի՛ն մանաւանդ, — այն լատկերի՛ն մանաւանդ, — ձերմակ ձին, անոր վրայ թառած հերոսը, մոսինը աջին՝ լայնօրէն դէպի դուրս պարզուած, կուրծքը փամփշտակալներով պատած:

Պէտք էր անգամ մըն ալ տեսնել զայն, վերջին անգամ համբուրէր անոր դէմքը, քանդակէր զայն աւելի խորը իր աչքերուն, իր հողիին եւ յե՛տոյ միայն թաղէր բոլորը: Անշուշտ օր մը պիտի դար հանէր զանոնք, սակայն ժամանակաւոր բաժանումին կարօտը կը տանջէր զինք: Քակեց թանկագին կապոցը եւ փայտայանքով հանեց գիրքերը, — «Գաւիթ Պէկ», «Խեմքը», «Ազատութեան շահագրգիռ»... հասաւ երգարանին, բացաւ անոր ամենասիրած էջը, իր արցունքին կաթիլները ինկան պատկերին վրայ ու թրջեցին անոր ձիուն ոտքերը: Վերստին, հելիհեւ, բայց խնամքով, փաթթեց, ծալեց իւրաքանչիւր անկիւն, ու երբ փոսը դոցուած էր, զգաց ցուրտին խայթոցը, բայց չէր կրնար բաժնուիլ պատանիի իր դերագոյն ստացուածքէն, որ հողին տակն էր այժմ: Նստաւ կրկին քարակոյտին վրայ: Իր դիմացը հսկայ Ս. Սարգիսի ժա՛յուր միայն կար, քիչ մը կարծես աւելի պգտիկցած արշալոյսի շողերուն մէջ:

Սօսքը ուղղեց քարի անուանատիրոջն ու ըսաւ.

«Ի՞նչն, Ս. Սարգիս, գնա՛, դո՛ւր մեր քաջերուն քաջը, քու

ձիդ ու անորը թող քով քովի սլանան, եղէք պաշտպան եւ թիկունք մէկզմէկու, եւ մի՛ ձղէք որ հայ ազգը կրկին ջարդի, զուլումի ենթարկուի: Երբ օր մը դաս ու հանգչիս քարիդ վրայ եւ վերադառնաս դարձեալ անոր ընկերանալու, տա՛ր ինձ հետդ, ես կը մեծնամ ու կը սպասարկեմ ձեզի, ջուր ու կեր կու տամ ձեր ձիերուն, կը յագեցնեմ պաղ ջրով ձե՛ր ալ ծարաւը, կը փայլեցնեմ ձեր սուրերը ամէն օր»:

Ուրախ էր ան այլեւս, իր ձայնը պիտի լսուէր անպայման եւ քանի որ ջ է Անդրանիկ՝ Հայը պիտի ապրի: Ինքն ալ պիտի ապրի, որովհետեւ ան կ'ուզէր, ա'նպայման կ'ուզէր տեսնել սուրբը մեր քաջերուն, այսօր Սասունի հերոս, վաղը ազգային: Նոյն օրը, երբ քաղաքի թրքական թաղէն կ'անցնէր միս-մինակ, առանց Փէսի, հրպարտօրէն՝ բայց ձեռքերը երկու զրպաններուն քարերը շոյելով, դա՛րձեալ լսեց թուրք լակոտներուն սպառնալիքները. ա՛յնքան ահաւոր էր իր կերպարանքը եւ հպարտ, որ ո՛չ ձեռքերը զրպաններէն դուրս ելան, ո՛չ ալ քարերը:

\*  
\*\*

Ջարդը անցաւ:

Ռուս բանակը հասած էր Երզնկա եւ Եփրատն ի վար մինչեւ Քեամախի կամուրջը:

Պատանին վերապրողներուն մէջ էր: Իր վտիտ սրունքները կտրած էին Մոփաց Աշխարհը Բարձր Հայքէն բաժնող Մնձուրի գետն ու լեռները, անտառներն ու կիրճերը, իր ետին թողած էր շատերը Հայաստանի արաղահոս գով վտակներէն, դետակներէն եւ հասնելով Կարին, հոն խառնուած էր Հայ Գաղթականաց Գրասենեակի դպրոցականներուն:

\*  
\*\*

Արդարեւ պատանեկան, ո՛հ, ինչքա՛ն անմեղ եւ սակայն իրօք «լեռներ տեղահան ընելու» զօրութիւն պարունակող փափաք մըն է որ գոհացում գտած է, այն ալ հեքեաթային դասաւորութեամբ, թէ եւ ոչ ակնկալուած բարեյոյս պայմաններու մէջ, այլ ցաւագին պարագաներու բերմամբ, Թիֆլիզ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ թերթի խմբագրատան մէջ», որ Անդրանիկի նախաձեռնութեամբ նոր սկսած էր լոյս տեսնել՝ նուիրուած, վերապրող արեւմտահայութեան հոգերուն եւ դատին:

Այդ բազմաւոր հանդիպումին յաջողութիւնը, որ աւելի առաջաւոր էջերուն մէջ նկարագրուած է, պատանին կը պարտի Կարնոյ մէջ ազգային հոգատար մարմիններէն հապճեպօրէն կազմակերպուած հայ դպրոցին ուսուցիչներէն՝ Վահան Թոթովենցի, մանաւանդ աղ-



գանուէր Հայուհիի մը հողածուծեան՝ Տիկին Շուշանիկ Տէր Գրիգորեանի: (1)

\*\*

Այդ պատանին անտարակոյս գերագոյն բախտն ունեցած է ճանչնալու մեր ժամանակի մեծագոյն Հայերէն մէկը, նոյնիսկ վաճառելու անոր բացառիկ պաշտպանութիւնն ու հովանին: Բացառիկ անոր համար, որ այդ կռիւի մարդը հողածու եղած է ընդհանուրին հանդէպ եւ ծայրայեղօրէն բարեսիրտ:

(1) «Տիկին Մայրիկ»ը՝ Շուշանիկ Տէր Գրիգորեան, ինչպէս կը կոչէին զինք Կարնոյ գաղթական Հայերը, եւ որուն անձին եւ գործին հանդէպ անսահման պաշտամունք ունէին տեղւոյն Հայուհիները եւ թրքահայ ռազմիկներէն կարեւոր խումբ մը: Մեծահարուստ ընտանիքի մը աղջիկն էր, բայց ամուսնացած Շուշեցի համեստ ու սուցչի մը հետ: Իր միակ մանչ գաւակը *Թանընպէրկի* ճակատամարտին մէջ սպաննուելէն յետոյ, կը խնդրէ ամուսինէն, իրենց ունեցածէն առաւելագոյնը առնելով երթալ խնամելու այն բառ'ը պատանիները, որոնք մօր մը կարօտն ունին, որոնք անօթի են ու անխնամ: Նախ կը հիմնէ ու կը կազմակերպէ հարիւրէ աւելի տղոց համար որբանոց մը՝ *Սանահիւի* մէջ, անոր հոգերը ապահովելէ յետոյ կը յանձնէ երկու իկտիքցի ազնիւ Հայուհիներու խնամքին եւ ինք կ'անցնի կարին: Հոն հաւաքուած հարիւր հազարի հասնող գաղթականութիւնը *Նուիրակի* մը առաջնորդութեան պէտքը կը զգար եւ ճա իր շուրջը հաւաքելով փոքրաթիւ երիտասարդուհիներու կորիզ մը՝ կը վերականգնէ հայ կնոջ կորովը, կը հիմնէ կարի արհեստանոցներ, գաւաք մը քէյի հիւրամեծարութիւններու հասոյթներու շնորհիւ կը բազմապատկէ իր սեփական նուիրատուութեան քանակը, ու աւելին՝ հայ կրնոջ եւ երիտասարդութեան կը ներշնչէ հաւատքը մօտալուտ վերելքին, իւրաքանչիւրին պարտադրելով պարտանաչութիւն ազգին ցաւերուն հանդէպ եւ նուիրում: Ան մայրերուն ամենաբախտն էր, սակայն ոչինչ կրնար զինք շեղեցնել իր ստանձնած դերէն: Ո՞ր հազարապետը պիտի կրնար մերժել անոր առաջարկը, երբ ան որոշած էր հայ պատանի մը բարձրագոյն ուսման հասցնել: Ուստի հազարապետը պատրաստ էր Բարեգործականի սան ընդունիլ ա'յն տղան, գոր *Տիկին Մայրիկը* արժանի կը նկատէր:

Ու պատանին արդարեւ հասած էր արդէն *Թիֆլիզ*, ներկայացած քանիցս Բարեգործականի գրասենեակը, որուն տնօրէնը սակայն անդրդուելիօրէն կը մերժէր իր լիազօրին յանձնառութիւնն ու ստորագրութիւնը եւ կ'առաջարկէր *Վրաստանի* հեռաւոր մէկ վայրին մէջ գտնուող իր որբանոցներէն մին զրկել զինք:



ԶՕՐԱՎԱՐ ԱՆՂՐԱՆԻԿ ՄԱՐՍԵՅՆԻ ՄԵՁ 1921-ԻՆ

Ու ինչքա՞ն բծախնդիր էր ան, իր հողածուլթեան մէջ անդամ :  
 Ինչպէս շատեր, ես ալ մանուկ հասակէս երգած եմ մեր Փէտա-  
 յիներուն նուիրուած երգերը եւ մեր տան մէջ ալ ան շուտով սուր-  
 բերուն կարգն անցած էր, վկայ ինձմէ յետոյ մեր յարկին տակ ծնած  
 մանչերու անունները՝ Արտաշէս, Աշոտ, Անդրանիկ, Արտաւազդ,  
 Տորք, եւայլն: Սակայն, եթէ ունեցած հիացումս եւ ազգային մեծ  
 հերոսի ուղեգծին, ինձ համար ալ ճիշդ եւ օգտակար ըլլալը վերա-  
 դրուի երախտագիտական եւ զբացական ելոյթի մը, խոչոր սխալ  
 մը պիտի կատարուի:

Երախտագիտական զգացումները անձնական խնդիրներ են,  
 Անդրանիկ հայ ժողովուրդինն է: Երբեք չեմ փորձած օղտուիլ Ան-  
 դրանիկի «փիւթոն»-էն, ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիք: Նախընտրած  
 եմ, առանց յայտնելու պաշտպանիս անունը, իրբու ճեմարանական,  
 պառկիլ Ս. Էջմիածնայ վանքին հիւրանոցի կարծր եւ մերկ տախտակ-  
 ներուն վրայ, երբ վացած էի հոն քննութիւն անցընելու, եւ երբ ըն-  
 դունուեցայ ապրիլ սրբանոցի վերածուած նոր մատենադարանի ու-  
 ջիլներուն հետ, երբ իրաւունքս էր նիրհելու հոյակապ ննջարանի մը  
 փափուկ անկողիններէն միտյն մէջ, ուր կը մրտիէին հանդիստ միւս  
 դասակիցներս ու երբեք չզանգատիլ:

Սրբարան մըն էր Անդրանիկ մտքով ու մարմնով, ներշնչարան մը էր հողին, ամբողջութեան մէջ նուիրում մը էր մարտիրոս ազգին:

Անդրանիկ ե'ւ Արա Գեղեցիկն էր, ե'ւ Տորքը, Սասունցի Դաւիթն ու Կարմիր Վարդանը: Ինձ նման շատերը ա'լ աւելի բան մը կը պարտին իրեն, զինք ճանչնալով, տեսած եւ հաւատացած ըլլալով նրման արտակարգ անձի մը դոյութեան, կրնան նաեւ հաւատալ, որ դոյութիւն ունեցած են Արա Գեղեցիկը եւ Տորքը, Սասունցի Դաւիթը եւ Քաջն Վարդանը:

Ո՞վ է որ անհունութեան առջեւ, անձանթին ու շարիքին դէմ, չէ ուզած ապաւինիլ մեծազօր ոյժի մը: Անդրանիկի ձեռքով հայ ազգին այդ օրերուն անմիջական ապապայի սղբերգութենէն դէպի լոյս, դէպի կենդանութիւն հասնիլը հաւատացող սրտանին, չէ՞ք կարծէր



ԿԱՄԱՌՈՐՆԵՐՈՒ ԽՈՒՄԻ ՄԸ՝ ԱՆԳՐԱՆԻԿԻ ՀԵՏ

Կեցած՝ Մանուկ Աւետիսեան, զինուոր մը, Արտաշէս Գէորգեան, Յարութիւն Ճոպուլեան, Պետրոս Գարակեաւուրեան, Համբարձում Գալայեան, Սիսակ Գարակեաւուրեան, Արտաշէս Գարակեաւուրեան, Նշան Փիլաւեան, Յովհ. Մանուկեան, Համբարձում եւ Բենիամին Պետմարեան, Վարդան Շահպազ, մարդ մը, Ռուբէն Պետրոսեան:

Նստած՝ Նազար Նիկողոսեան, Հանի Գէորգ Մուրատեան, Եղիշէ Քաջունի, Զօր. Անդրանիկ, Բժ. Ռուբէն Տէր Ստեփանեան, Արամ Թուրեան, Արշակ Մաչանեան:

Գետինը՝ Գէորգ Կիզէլեան, Ալեքսանդր Թոփուզեան, Յար. Պետրոսեան, Արմենակ Միքայէլեան, Ժորժ Յովակիմեան, Տատուր Մաղաֆեան, Թորգոմ Գէորգեան, Վահան Զերպզ:

որ առողջ բնագույն մը ներշնչումին ենթակայ էր : Անդրանիկ այդ օրերուն մեր միա'կ, մեր սեփական հզօր ոյժն էր, վաւերական դիւցազնը՝ իր բարութեամբ, իր քաջութեամբ, իր պայծառ դատողութեամբ, իր մաքուր եւ անկաշառ նկարագրով :

Պէտք է ճշդել այս երկար նախաբանին մէջ ուրիշ կէտ մը նաեւ :

Մեզմէ պէտք չէ սպասել հայ յեղափոխութեան մը դատապարտութիւնը, մանաւանդ որեւէ ճշմարիտ յեղափոխականի : Անոնք որ Հայոց պատմութեան բոլորովին անգիտակ են, ստրուկի հօգի կը կրեն, եւ որոնց թիւը վերջերս շատցած ըլլալուն աւելի համարձակ են դարձեր, անոնց կը թողունք այդ տխուր դործը : Իսկ մենք կ'ափսոսանք, ոչ թէ յեղափոխութեան դոյուլթիւնը՝ ընդհակառակը կը պախարակենք այդ յեղափոխութեան սահմանափակ դոյուլթիւնը :

## ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԸ ԹՆՈՒՆԴ ՏՈՒՈՂ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

1789-ի Ֆրանսական Յեղափոխութիւնը ցնցելով թագաւորներու եւ իշխաններու դահերը, ժողովրդին ներշնչեց գիտակցութիւնը իր ոյժին : Շատ չանցած զանազան ազգեր իրենց միութիւնը հռչակեցին, դարձան պետութիւն : Օսմանեան լուծին տակ հեծող Յունաստանը արիւնյալի կոիւններէ յետոյ կը վերագտնէր իր ազատութիւնը :

Մտքի եւ դադափարի խոյանքը անցաւ ժողովրդային պարարտ խաւին մէջէն եւ 1848-ին բովանդակ Եւրոպան բնուեցաւ յառաջդիմական նոր ալեկոծութեան մը, որուն ալիքները 1860 թուին եկան օրօրելու նաեւ Հայոց երազները :

Ազգային Սահմանադրութիւնը հռչակուած էր ցնծութեանց մէջ եւ քանիցս բեկանուած սուլթաններու կողմէ : Մարդկային իրաւանց պաշտպանութեան յայտարարութիւնները վսեմ հաւատամքներ էին, բայց թուղթի կտորներ միայն հայ ժողովուրդին համար, որուն կը պահէր էականը՝ անոնց դործադրութիւնը պարտադրող ոյժը, քանի որ պարկեշտ կառավարութեան մը յենուկ կարելի չէր :

Հայաստան ծանր մտահոգութեան մէջ էր նաեւ 5-րդ դարուն : Աշխարհակալ պետութիւն մը կ'ուզէր հիմնովին կլանել երբեմնի ազատ երկիրը, որ միաժամանակ շրջապատուած էր այլեւայլ վաչկատուն եւ ասպատակող ժողովուրդներով : Վերջնական փճացումէ ազատուելու միակ յոյսը կը կայանար հայութեան ներշնչել զահաբեութեան նոր ոգի, գիմադրութեան բացառիկ ճիգ : Հայոց աւագանիին շարքերը վարակուած էին նոր վարդապետութեամբ մը, որուն հետեւորդները մինչեւ մարտիրոսութիւն անյողողը կը մնային իրենց հաւատքին վրայ : Հայոց առաջնորդող տարրը ըմբռնեց, որ այդ նոր կրօնքը իր աւելի բարձր արժէքով եւ ներշնչմամբ պատուար

մը կրնար հանդիսանալ հայ ժողովուրդին եւ զայն շրջապատողներուն միջեւ: Եւ հայութիւնը դարձեր էր քրիստոնեայ:

Բայց այս աղբակը անբաւական պիտի ըլլար ինքնին եւ ձուլումի ու բռնի կրօնափոխութեան փորձերուն դէմ, քրիստոնէութիւնը պիտի չյաղթէր, եթէ Վարդանի եւ Վարդանանց ծնունդ տուած չըլլար:

1860-ի Թրքահայոց Ազգային Սահմանադրութիւնը նոյնպէս վըտանդին առաջը առնել չէր կրնար եւ Հայոց վերելքը պիտի չկրնար ապահովել, եթէ այդ թուականներուն Հայը աշխարհ բերած չըլլար սուր վերցնող բազուկները՝ Ֆէտայիները, որոնց առաջաւորներէն եղան Աղբիւր Սերոբ եւ մանաւանդ Անդրանիկ:

Պեղեցէք ընդհանուր ազգերու պատմութիւնը երկայնքին ու լայնքին, չէք կրնար դտնել մէկ հատիկ օրինակ միմիայն «հոգեւոր հայրենիք» ունեցող ժողովուրդի մը:

Քրիստոնէական քաղաքակրթութեան քով անհրաժեշտ էր վարդաւան մը: Մարդկային իրաւանց պաշտպանութեան նոր կարգախօսին համար անհրաժեշտ էր Անդրանիկ մը:

Հողին առանց մարմնի եւ մարմինը առանց հողիի երեւակայութեան ցնորքներ են:

Ազգային յեղափոխական շարժումը Սահմանադրութեան արդիւնքը չէր: Ներքին ինքնավարութեան ուղղամիտ գործադրութիւնը պիտի լուծէր զայն վարող որեւէ կազմակերպութիւն, սակայն կեանքի եւ ինչքի ապահովութեան ոչ մէկ բարելաւում տեղի ունեցաւ:

Դպրոցներ հիմնելու առիթով դաւառ անցնող երիտասարդ գործիչներ հետզհետէ հաղորդուելով բնիկ Հայաստանցիին թշուառ ու անտանելի կեանքին, սկսան այգանել ստրկամիտ համակերպումը: Բողոք եւ ըմբոստութիւն սկսան ծայր տալ եւ տարածուիլ:

1878-ի Ռուս-Թրքական Պատերազմէն վերջ, Սան Սթեֆանոյի դաշնագրին ատեն, այդ շարժումը գործնական ձեռնարկներու ալ հետամուտ եղաւ: Նոյն տարւոյ Փետրուար եւ Յուլիս ամիսներուն, նախ Պոլսոյ վերոյիշեալ արուարձանին մէջ գումարուած, եւ ապա Պերլինի Համաժողովին՝ Հայերը օտար պետութիւններու ուշադրութեան կ'արժանացնէին Հայաստանի մէջ բարեկարգումներ մտցնելու անհրաժեշտութիւնը, որ կը բանաձեւուէր նախ 16-րդ եւ յետոյ՝ 61-րդ յօդուածներով, այդ երկու դաշինքներուն մէջ:

Այդ թուականներուն՝ Անդրանիկ երեք տարեկանին մօրմէ որբ, իր մեծ քրոջ ինամբով կը մեծնայ, ձեռական արհեստի մը կը տիրանայ եւ ըստ դաւառի սովորութեան՝ կ'ամուսնանայ տասնրեօթը տարեկանին:

Ութսունական թուականներուն, Անդրանիկ կ'ապրի ծանր կորուստներու կակիծն ու սուգը: Կը կորսնցնէ իր կիներ, եւ ապա իր միակ զաւակը: Այս դժբախտութիւններուն զուգընթաց՝ անոր ա-

կանջը կը լեցուի յեղափոխականներու քարոզչութիւններով, թէ, մի'այն տեղական եւ մասնակի հալածանքներու չէ որ ենթակայ է հայութիւնը, թէ քաղաքի մը գայմագամը, գիւղի մը միւստիւրը եւ պատահական պաշտօնեաներն ու ոստիկանները չեն, որ վատ անձնաւորութիւններ են, այլ նոյնն է պատկերը ամէնուրեք, Հայաստանի բոլոր գաւառներուն մէջ: Ու մանաւանդ հո'ն, ուր թուրք վարչութիւնը իր նենդ խաղին գործիք քրտա տղետ տարրեր: Թէ, սպանութիւն, թալան, բռնաբարում, մասնակի զէպքեր ըլլալէ շատ աւելի՝ ամէնօրեայ կազմակերպուած գործեր են:

Անդրաւիկ, այդ ազնիւ, մաքուր, ասպետական եւ գորովագութ հոգին, կը խոսիլ, կ'ալեկոծի ու բնածին բարութենէ մղուած՝ կը մասնակցի հասարակաց ցաւերուն սպեղանի դնելու նուիրական գործին:

Անդրաւիկ կը մկրտուի յեղափոխական եւ հայրուկ, տեղւոյն մէջ գործող Հնչակեան շարքերուն խառնուելով:

Շուտով ան պիտի կրէր աւելի ահաւոր հարուած մը: Թուրք մը անիրաւօրէն, անգթօրէն կը վիրաւորէ իր պատուական հայրը: Անդրաւիկ յեղափոխականի կոչումին եւ հանգամանքին անկեղծօրէն հաւատացող մը, իր հարազատ հօրը եւ բոլոր անոր նմաններուն հասած նոյն դժբախտութեանց վրէժը լուծելու համար կը պատժէ չարագործը եւ կը ձերբակալուի: Ան հաւատացած էր, որ արդարութիւնը ի'նք միայն կրնար ի գործ դնել ու կը գործադրէ ի'ր ձեռքով: Արդեօք, ան զիտէ՞ր այդ պահուն, որ հզօր ձեռք մը ոյժ կու տար իր բազուկին, Աստուած մը արդար խօսեցա՞ւ իրեն թէ անխոցելի պիտի մնայ իր մարմինը ա'յնքան ատեն, որքան ժամանակ անչէջ եւ հաստատակամ պիտի ըլլար զինուորը արդարութեան, նեցուկը գրժբախտին, ախոյեանը ազատութեան:

Ինչո՞ւ չհաւատալ որ պաշտպան Աստուածը զինք հանեց բանտէն՝ իր ընկերներուն միջոցաւ, հեռացուց ընդմիշտ զինք իր ծննդավայրէն, տարաւ յանձնեց իր հայրենիքին եւ նոյնացուց այդ հայրենիքին հետ եւ Անդրանիկ մեր նորագոյն պատմութեան ամենէն արժանաւոր գաւազներէն մին եղաւ, հայրուկ մը, հերոս մը, գիւցազնական տիպար մը:

Բարձրօրէն օժտուած էր Անդրանիկ: Այն, ինչ որ մենք դպրոց, ուսում կ'ըսենք, աւելորդ պերճանքներ պէտք ենք համարել, երբ այդ Անդրանիկի մը կը վերաբերի: Իր բնածին ձիրքերով ան ապացոյցը տուաւ որ զիտցած է կեանքի ազրիւրէն առնել ինչ որ անհրաժեշտ էր՝ իր քայլերը անսայթաք եւ անվարան առաջնորդելու համար:

## ԱՆԴՐԱՆԻԿ՝ ԵՐԲ ԿԸ ԿՌՈՒԻ

Չեմ գիտեր թէ այսօր տակաւին կա՞ն մարդիկ, որ ժխտեն Անդրանիկի ռազմավար ըլլալը, տեղին եւ պայմաններուն չափովը՝ հանձարեզ, ճարտար եւ մանաւանդ մարդկային՝ հայ Ֆէտայիին անձը խնայելու գործվալի զգացումով:

Անդրանիկի մէջ զինուորականի հանդամանքը դրժողները կ'ըսեն, թէ ան ո՛չ միայն զինարուեստի, այլ նախնական զպրոց իսկ յաճախած չէ: Ասիկա պարզապէս քմահաճ վճիռ մըն է, քանի որ այդպէս մտածողները, վստահ ենք, որ զպրոցի անունին շուրջ պիտի վէճ յարուցանէին, եթէ պատահէր որ Անդրանիկ զպրոցական մը եղած ըլլար:

Անդրանիկի ռազմադիտական կարողութիւնը ինդրոյ առարկայ դարձաւ ա՛յն օրը մանաւանդ, երբ Ռուսաստանի յեղափոխութեան յաջողող օրերուն, Յարիմ եւ իր վարչաձեւին հաւատարմութեան երդում ըրած հայ սպաները նախամեծար համարեցին, որքան կարելի է, շո՛ւտ բաժնուիլ իրենց զինուորներէն, ինքզինքնին փրկելու համար որեւէ ձեւով՝ ինչ որ դատապարտութիւն մը չէ անշուշտ: Բայց այդ օրը հայ ծաղումով սպաները մեծ գիւտ մը ըրին. իրենք այլեւս Հայեր էին, եւ ի հարկին կրնային կուռիլ հայ ժողովուրդի պաշտպանութեան համար նախ՝ Հայաստանի համար հետզհետէ՛ միայն:

Արդ այս ասպարէզը մինչեւ այդ թուականը «գրաւած» էին հայ Ֆէտայիները: Անոնք ո՛չ ակամայ հայրենասէրներ էին, եւ ոչ պարտադրեալ զինուորներ, այլ իսկական կամաւորներ՝ առաջին, միակ հարազատ զինուորները պաշտպանութեան՝ Հայու պատիւին, ինչքին, արժանապատուութեան, մայրենի երկրին, եւ պէտք էր որ այդ խմբապետները, ըստ նորեկներուն, որեւէ ձեւով մտնէին իրենց պատեանին մէջ, որպէս ռազմավարութեան անատակ:

Տեսնենք ի՞նչպէս կարելի է սահմանել ռազմավարութիւնը:

— Իր ունեցած զինուորը եւ ռազմամթերքը դործածելու լաւագոյն կերպը, զանոնք զսասուրելով ըստ թշնամիի ոյժին եւ ապահովել յաղթանակը, կամ խուսափիլ բնաջնջումէ:

Ձինուորին քանակը եւ որակը կայ, ինչպէս նաեւ զէնքին:

Կայ մանաւանդ զինուորը հրահրող ոգին:

Մենք պիտի անդրադառնանք Անդրանիկի վարած կռիւներուն, անոր ռազմավարութեան եղանակին եւ արժէքին զնահատութեան,

սակայն այս բուրքէն վեր ճշմարտութիւն մը կայ, որ պէտք է յայտարարել:

Այդ ճակատագրական օրերուն Անդրանիկի հմայքն ու հեղինակութիւնը ա՛լ աւելի չբարձրացնելով, անոր կողքին չկանգնելով մէկ սիրտ մէկ հոգի, անոր չօգնելով, անոր չխնայելով աւելորդ սրտմտութիւն, էնթրիկ, եւ ա՛յլ բազմապիսի տազնապներ, անոր չտալով հայ բանակի վերին հրամանատարութիւնը՝ մեր այդ օրերու պատասխանատուները գործած են հոգեբանական ու զինուորական մեծ սխալ, որ յանդած է քաղաքական անանկութեան եւ ազգային աղէտի:

Անդրանիկի տեսակէտն էր՝

«Մէ՛կ թշնամի եւ մէ՛կ ճակատ: Մեր ահաւոր կորուստներէն վերջ քիչ մը աւելի յեղափոխականի ջիղ ունենալ՝ գէնքը ձեռին հաշտութեան շեփորը ունկնդրելու համար»:

Ճշմարտութիւններ, որոնք իր զինուորական եւ քաղաքագիտական կարողութեան բացայայտ վկայութիւններն են:

Իսկ ի՞նչ տեղի ունեցաւ:

Փորձով տեսնուեցաւ, որ ո՛չ մէկ ակադեմական հայ սպայ կըրցաւ աչքառու գործ կատարել, ու չէր ալ կրնար, քանի որ զիտութիւնը հեռու էր դէր խաղալէ: Երկու անգամ անփառունակ կերպով Կարաի նման անառիկ բերդը, Ալէքսանդրապոլի բերդը թշնամիին յանձնող ակադեմականները կու գան հաստատել որ ինքնապաշտպանութեան կռիւը դպրոցականի գործ չէր:

Ասիկա որեւէ ասպարէզի պատշաճող իրողութիւն մըն է:

Երկրորդ աշխարհամարտի օրերուն, սեւ շուկաներու հասութեաբեր թուականին, հարցուցի բարեկամ մեծ վաճառականի մը, որ արդիւնաբերող մըն ալ էր միանգամայն, թէ երբ ոչինչ մարդիկ միլիոններու տէր եղան, ինքը ո՛վ գիտէ ի՞նչ վիթխարի հարստութիւն զիջեց: «Անոնք, ըսաւ, հարստացան իրենց ծախած ապրանքին արդիւնաբերման արժէքը չգիտնալուն շնորհիւ, անոնք մի՛այն դրամ շահիլ կ'ուզէին»:

Այնպէս ալ ակադեմական հայ սպան թերեւս գիտէր իրեն տրամադրուած ոյժերուն քանակը, սակայն յաղթանակը չահելու, անհաւասար կռիւը մղելու սրբազան կիրքը, հաւատքը չունէր, հակառակ անառիկ բերդ եւ անսպառ ռազմամթերք իր ձեռքն ունենալուն:

Անդրանիկ, եւ իր նմանները, իրաւունք իսկ չունէին հարցը քննութեան ենթարկելու, կշիռքի դնելու, — անոնց պէտք էր՝ հայ ժողովուրդի գոյութեան պայքարին յաջող ելքը:

Հայ սպան, անշուշտ հայրենասէր, բայց ժամանակ չունէր իր աշկերտութիւնն ընելու այս ուղղութեամբ: Նազարպէկով ձերուներն, Սիրիկով եւ ուրիշներ չկրցան «Փէտայի» դառնալ: Հայութիւնը բացի իր խմբապետներէն՝ յեղափոխական առաջնորդներ չունէր, բա-



նակի գոմիսէրի առումով: Իսկ Դաշնակցութիւնը, աւա՞ղ, յեղափոխական ոգի եւ անձնուրացութիւն, ո՛չ թէ ցոյց տուող, այլ ունեցող տարրե՛ր չունէր այս Ֆէտայիներէն դուրս:

Ի՞նչ հասկցնել ուզեցին, եւ ինչի՞՞ յանդեցան՝ Անդրանիկը եւ իր նմանները «խմբապետ»-ի տիրոջ սով իբր թէ նուաստացնել փորձողները:

Սասնոյ Ա. եւ Բ. կռիւներու առեւն, միթէ հայ Ֆէտայիները պիտի չնախընտրէի՞ն ամէն մէկ Թուրքի դէմ մէկ հայ զինուոր շարել, առատ ռազմամթերք ունենալ, փոխանակ մէկը հարիւրի, հազարի դէմ պայքարելու տաժանագին պայմաններու մէջ, եւ դպրոցական զինուորականներու նման պահեստի ոյժերով եւ ռազմամթերքով ապահովուած ըլլալէ զատ, ի հարկին նահանջի կամ փախուստի ապահով ճամբայ ունենալ, ամէն ընկերու՞մ չքմեղացնող պաշտօնական բանաձեւերու հետ:

Ասոնց փոխարէն, հայ Ֆէտային զիշերը պիտի թափէր իր հնամենի փամփուշտներու կապարը՝ ցերեկը վարելու ամենէն կատաղի եւ ճարտար կռիւը, ամենէն դժուարին յաջողութիւնները շահելու համար:

Ի՞նչ է զինուորական վարժարանը: Փափուկ անկողիննե՞ր, փայլուն կոճակնե՞ր, պապղուն դէնքե՞ր, գի՛ր, խա՛չ, զուարճութիւն եւ գրականութի՞ւն: Հապա հայդուկին կեանքի դպրոցը, օրհասական մարտնչումնե՞րը թշնամիին դէմ, ցուրտին, անթուլթեան, շուրջը տիրող համատարած թշուառութեան տոկալու պարտաւորութի՞ւնը, դանոնք չկարենալ ամօքելու հոգեկան տառապա՞նքը: Ո՞ւր է դըպրոցը:

Իրաւ է, եթէ Սասնոյ եւ Տալուրիկի մէջ հայդուկ խմբապետներ ունեցած ըլլային դպրոցական ռազմավարներու գիտութիւնը, այսօր այս վէճը մեր զբաղումներուն մաս պիտի չկազմէր եւ ասոնց ռազմավարութիւնը բացատրող հատորները հայ զինուորականին բարձի գրքերը պիտի ըլլային:

Իայց բազմաթիւ եւ անվիճելի են Անդրանիկի ռազմագիտական արժէքը բնորոշող վկայութիւնները:

Ամենէն առաջ խօսք տանք ճշմարիտ հերոսի մը, Սերաստացի Մուրատին: Աղբիւր Սերոբի սպանութենէն յետոյ, անոր յաջորդի ընտրութեան մասին Աւետիս Ահարոնեան կը հարցնէ անոր.

«... Ու հարցրի մի անգամ Մուրատին, թէ ինչո՞վն է Անդրանիկ «ՂէՓ», երբ ինքն ու իր միւս ընկերները նրանից ոչինչով պակաս չեն»:

«Հարցս հաճելի չեղաւ իրեն»:

— Ճանըմ, ի՞նչ կը հարցնես, ասաց, ան գլխաւորն է, չէ՞ մէկը պէտք է գլխաւոր լինէր, որ միւսները հնազանդին, է՛հ, իշտէ ա՛ն յարմար եղաւ... Հա՛յտէ, քէլէ երթանք պտըտի՛նք, վերջացրեց նա

վարպետորէն խոյս տալով իմ հարցի պատասխանից : Չգիտեմ զուցէ ինքն եւս այս մասին մտածած չէր : Օձիքը չթողի :

— Ինչո՞ւ սակայն Անդրանիկը «յարմար եղաւ» եւ ոչ մի ուրիշը չեղնից, կրկնեցի հարցս : Նա ո՛չ քեզնից աւելի քաջ է, եւ ոչ . . .» :

— Ճանրմ, հէ՛մ քաջ է, հէ՛մ խելացի, ընդհատեց ինձ Մուրաս ժպտալով . ամա, գիտնաս բանը քաջութեան մէջ չէ, Անդրանիկը աչք ունի, մենք չունինք :

Ժպտալու հերթը իմն էր, արտայայտութիւնը ինձ համար պարզ չէր :

— Չէ, ինչո՞ւ կը ժպտաս, նա՛, ճշմարիտ կ'ըսեմ, Անդրանիկ աչք ունի, — վէպ գրելու համար չէ, տ'նաչէն, էտիկ քո՛ բանն է : Հա՛, սար ու ձորով կ'անցնինք խմբով, հրացաններնիս ուսերնիս, ու ամէն մէկն իր ճամբան կը քալէ, իսկ Անդրանիկ՝ ամէնքիս ճամբան : Մենք անհող կ'երթանք, ան կը տեսնէ, կը գիտէ, կը պրպտէ ամէն քար ու դար, ամէն ժայռ ու բլրակ, դար ու փոս, մացառ ու պուրակ : Ոչինչ չի վրիպի նրա տեսութիւնից : Եւ ինչ որ մի անգամ տեսաւ, էլ երբեք չի մոռնայ : Թէ նոյն ճամբով յետ դալու լինենք, կոռուով ու նահանջելով, նա հրաշալի գիտէ թէ մինչեւ ո՞ւր պիտի քաշուինք, այն ինչ բլրին, քարին, սարին, ժայռին, թմբին, դարերին հանդիպելու համար . . . :

«Յետոյ նա գիտէ աննման գիրք բռնել թշնամու դէմ : Եւ մի անգամ որ նա մեր տեղերը որոշեց՝ կռիւից առաջ այն ժայռի տակ, այս բլրի ետին, այն պուրակի ծոցում, ապա մենք վստահ ենք որ դա լաւագոյնն է : Արդարեւ նա երբե՛ք չի սխալուում : Ամբողջ օրը կռիւ կ'անենք, եւ մեր գիրքերը մի՛շտ լաւագոյնը կը մնան : Անդրանիկի հրամանի տակ կոռուիլը խաղ ու պար է : Ա՛չք ունի, ասում եմ» :

Եւ Ահարոնեան իր կողմէ կ'աւելցնէ .

«Դժուար էր աւելի յստակ պատկերացնել փորձուած բնագոյով «չէֆ»-ը, որ «աչք ունի», այսպէս էր ծնած . կռիւն էլ իր տեսողն ունի, ինչպէս մտքի ասպարէզը : Անդրանիկ տեսող էր ծնած, այստե՛ղ էր նրա մեծութիւնը» :

Այս վկայութիւնը մէկու մը կողմէ, որ շատ մը պատճառներ ունէր նախանձելու Անդրանիկին, ինքնին փառաստակ մը կը կազմէ ազգային հերոսին համար :

Անդրանիկ շատ մը կռիւներ մղած է, մէկը՝ հարիւրի դէմ, մէկը՝ միշտ տասնի դէմ : Ան նոյն խոշոր համեմատութեամբ զոհեր խրած է թշնամիէն, եւ երբ չէ կրցած յաղթել կամ ետ մղել թշնամին, կրցած է զինք շրջապատող շրթան փշրել եւ խուսափիլ առանց կորուստի :

Վերջին ընդհանուր պատերազմի ատեն Փրանսա ապրողներս, երբ օրուան ուտելիքը ճարելու դործով չէինք զբաղուած, անպայման ռազմագիտական վիճարանութիւններով կ'անցընէինք մեր պա-

րադոյ ժամերը: Շատ անգամ մեր հիացումը կ'երթար երկու կողմի ա'յն հրամանատարներուն, որոնք թուական եւ զինու առաւելութիւնը կորսնցնելով, առաձգական նահանջի հարկադրուած՝ կը յաջողէին խուսափիլ նուազագոյն կորուստով:

Այս տեսակէտով, Անդրանիկի կոխները երբ ուշի ուշով քննենք այսօրուան ըմբռնումով, կատարեալ գլուխ-գործոցներ են:

Ո՞րը յիշենք: Առաքելոց վանքին կոի՞ւր, Կէլիէկիւզանի՞, Խոյի ճակատամա՞րտը:

Ի՞նչ պատահեցաւ Առաքելոց վանքին մէջ: Ինչո՞ւ այդ կոիւր:

1901-ի տեսնները, թուրք զաղթականներ եւ զինուորներ լեցուած են Մշոյ դաշտը: Թալան, ասպատակութիւն, առեւանգում, սպանութիւն՝ ամէնուրեք: Ռուս հիւպատոսը կրօնափոխութիւն կը քարոզէ եւ Հայերը մաս առ մաս կը դիմեն Օրթոտօքսութեան: Ծանր եւ մտահոգիչ է կացութիւնը, սեւ է հայութեան ապագան, ու հոգին՝ մռայլ:

Յեղափոխականները կ'որոշեն հակազդել: Լրտեսներով լեցուն այդ օրերուն, մանրակրկիտ պատրաստութիւններ տեսնելէ յետոյ, կատարեալ զաղտնապահութեամբ, Անդրանիկի գլխաւորութեամբ անոնք կամովին կ'երթան պաշարուելու Առաքելոց վանքին մէջ, հոն կ'ամբանան երկար ատեն կուսելու, ժողովուրդին սիրտ տալու, ընկճուող եւ յուսահատ հոգիները զօտեպնդելու մտօք, հայ վրէժ-խնդիր Ֆէտայիին գոյութիւնը զզացնելու ամէն կարգի հարստահարիչներուն, թուրք կառավարութեան, եւրոպացի քրիստոնեայ «խղճին»:

Հակիրճ է Անդրանիկի պատճառաբանութիւնը. — «Ժողովուրդը յուսահատած՝ Օրթոտօքսութեան դիմած է, չորս կողմերնիս մատնիչով լեցուած», կը գրէ ան՝ իր յուշերուն մէջ:

Վաթսուն ֆէտայիներ կը պաշարուին վանքին մէջ, ուր կան նաեւ միաբաններ եւ յիսունի մօտ որբեր: Հոն է նոյնպէս Գէորգ Չաուչը:

Կոիւր կը սկսի, հազարաւոր թշնամի զինուորներու յարձակումները քանիցս ետ կը մղուին: Օտար հիւպատոսներ կը հետեւին գործողութեանց, բանակցութիւնները անհրաժեշտ կը դառնան, միջնորդ է Վանահայր Յովհաննէս Վարդապետը: Թուրք կառավարութիւնը կը պահանջէ անձնատուութիւն: Անդրանիկ կը պատասխանէ, ակնարկելով Սասունի առաջին կոիւններէն վերջ 1895 Մայիսին խոտացուած բարենորոգումներուն:

«Երբ Մայիսեան Ծրագրի բարենորոգումները երկրին մէջ կը մտնեն, մենք ա'յն ատեն դուրս կու գանք: Գիտցէք որ վեց ամիս կռուելու ոյժ ունինք, ու մեզ ձեռք ձգել չէք յաջողիր: Եթէ կ'ուզէք քնդամօ՛ք բերէք ու զարկէք. մինչեւ ձեր ներս մտնելը՝ ձեզմէ հազարաւորներ կը սպաննուին, եւ ա'պա կրնաք յաջողիլ: Իսկ մենք ա'յն

օրը, որ հրացան առեր ենֆ, ա՛յն օրէն գիտեմք մեր մեռնիրը: Այս-  
չափ տարի լսած է՛ք մարդ մը, կարաւան մը քալելինիս կամ փոսք  
մը գարձելինիս: Լսած է՛ք անկեղ Քիւրտ մը կամ Թուրք մը սպան-  
նելինիս: Էն մարդը, որ մեզի վնաս կը հասցնէ, քառսուն տարի ալ  
անցնի՝ մեր վրէժը կը լուծենֆ: Եթէ մենք ինքներս չկրնանք, մեզ-  
մէ յետոյ եկող ջան փէտայիները կ'առնեն իրենց ընկերներուն վը-  
րէժը»:

Մարդ կը տարուի մտածելու թէ ո՞վ է խօսողը:

Հայկ Նահապետը՝ Բէլլիօն, Սասունցի Դաւիթը՝ Մորա Մելի-  
քիօն, թէ Վարդանանք՝ Յազկերտին:

Առաքելոց վանքին փորձը նպատակին հասած է, հիւպատոս-  
ներ եւ Թուրք կառավարութիւն կը հետեւին դէպքին եւ բանակցու-  
թիւններուն: Անդրանիկ երբեք պիտի չհաւատայ թշնամիին, անոր  
վստահութիւնը աժան տեղաւորուելիք սպրանք չէ, այնքան լա՛ւ  
ճանչցած է Թուրքը:

Անդրանիկ ռազմական հանճար, ճերմակ ձիւնի վրայէն «Լու-  
սին չկար» գիշերով, վանքի ճերմակ շապիկները կը հագցնէ իր մար-  
տիկներուն, խումբը կը բաժնէ, Ժամադրավայր կը նշանակէ, կը  
լքէ վանքը եւ կը հեռանայ կատարեալ յաջողութեամբ, առանց զոհի,  
ափիբերան ձգելով թշնամի գորք եւ հրամանատարութիւն, եւ անհուն  
հրճուանք պատճառելով համայն հայութեան:

Դիմադրութիւնը կը տեւէ 21 օր: Հայ զոհերու թիւը՝ չորս  
սպաննուած, Թուրքերու կորուստն է՝ հարիւրաւոր մեռեալ, քանի  
մը տասնեակ ալ ցուրտի եւ հիւանդութեան զոհեր:

Առաքելոց վանքի կռիւներէն վերջ Անդրանիկ Ֆէտայիները կը  
ցրուէ լեռնականներու մէջ, ասպարէզը կը թողու հիւպատոսներու եւ  
հայ երեւելիներու քաղաքական դործունէութեան: Սակայն Թուր-  
քը որոշած է ո՛չ թէ 1895-ին խոստացուած բարենորոգումները գոր-  
ծադրել, այլ կիսատ թողած ջարդերը շարունակել: Զօրանոցներ կը  
կառուցուին Սասունի, Տալուրիկի բարձունքներուն վրայ, Շէնիքի,  
Կէլիէկիւզանի մէջ: Անդրանիկ հակառակ էր Դաշնակցութեան որո-  
շումին՝ զինաթափուելու. բայց զինուոր էր ան կարգապահ, եւ քար  
դրած սրտին՝ կը հնազանդի, մինչդեռ կը տեսնէր, — «աչք ունէր»,  
— իրենց շուրջ կատարուածը:

1902-1903 թուականները Սասնոյ եւ Տարօնի բնակչութեան  
համար դարձեալ ա՛հ ու դողի օրեր էին: Վտանգը կը մօտենար, Ժո-  
ղովուրդը եւ անոր ցանցառ սպառազանները կը գիտակցէին գալիքին:  
Հայ Ֆէտային կը սեղմէր իր ակռաները: Զէ՛նք, դէ՛նք. ահա՛ իր  
մղձաւանջը: Ու կարելի է ուրեմն երեւակայել մեր օրերու լաւագոյն  
իրատեսին, ողջմիտ եւ սպայծառատես Հայուն՝ Անդրանիկի հոգեկան  
վիճակը:

Պատրաստ էր թշնամին. Հայոց օգնութեան փութացող ոյժերու քանակը՝ փոքր, յոյսերը՝ մեծ: Քսան հոգի կը հասնին վերջապէս: Ի՞նչ ողբերու թիւն:

«Լուր եկաւ ինծի», կը դրէ Անդրանիկ իր յուշերուն մէջ, «թէ քսան հոգիէ բաղկացեալ ձիաւոր խումբ մը եկաւ Սէմալ: Ելանք դայինք Սէմալ. տեսուեցանք Թոււանի հետ: Նրանց մէջ կային իմ նախկին ընկերներս, 95-էն, Քեռին, Սեպուհը, Դուրբախը, Մուրատը: Ուրախութիւնը մեծ էր, ամբողջ ժողովուրդը ողբերուեցաւ»:

Այս էր երգին արձագանգը.— «Կովկասի՛ քաջեր, խումբե՛ր կազմեցէք, Քաջ Անդրանիկին օգնութեա՛ն հասէք»: Քսա՛ն հոգի միայն, եւ Անդրանիկ կը հրճուի:

Համերաշխութիւնը կը վերահաստատուի Հայոց ցանցառ շարքերուն մէջ, պահն է սրբազան կոիւին: Մասուն նման կոիւ դեռ տեսած չէր. հոն էին հայ քաջերը, Մասունցի Դաւթի թոռները, ամէն մէկը հազար թշնամի արժող: Հոն վերադարձած են Գէորգ Չաւուշը, Հրայրը, բոլորը կը համբուրուին, եւ իրենց յորդ արցունքներով կը կնքուի նոր ուխտը:

Կ'ընտրուի հրամանատարը: Թեկնածուները չէ որ կը պահսին: Մուրատ խօսք կ'առնէ.

«Հրամանատարի պաշտօնը տալու ենք ա՛յն ընկերոջ, որ Սերոբի մահէն յետոյ առաջնորդեր է Փէտայիներու շարքերը: Անդրանիկն է այդ մեծ առաջնորդը: Եւ եթէ անգամ նա մեռած լինի, անոր շէնքը մեր զբօշակին հետ պէտք է տարուի մեր առջեւէն՝ դէպի կոիւ եւ ազատութիւն»:

Եւ նոր վարդապետ կ'անցնի իր առիւծներուն գլուխը:

Դէպքերը կը դահավեժին, Քիւրտերու կողմէ Անդրանիկի դէմ լարուած դաւի մը ի դերեւ ելլելովը: Ֆէտայիները կը դրաւեն Տափըկ դիւղը եւ կը վռնտեն Քիւրտերը: Քիւրտերը կը յարձակին Տալաւէ Գոմ ըսուած Հայոց դիւղը եւ Մուրատ հոն կը փութայ՝ զանոնք պատժելու համար, օգնութեամբը Շէնիքցիներու եւ Սէմալցիներու: Յաղթութիւնը կատարեալ է. մէկ հայ սպաննուածի փոխարէն՝ թըշնամին կը թողու 25 դիակ եւ բազմաթիւ գէնքեր:

Ասոր վրայ Քիւրտերը կը վառեն ազդանշան կրակը եւ թուրք կանոնաւոր դունդերը՝ Մասունը արդէն շրջապատած, կ'անցնին յարձակման: Ամբողջ Մասունը կրակի տակ է:

Անդրանիկ դասուորած է իր պաշտպանութեան յատակագիծը, խարխալ ունենալով հարաւէն՝ Տալուրիկ եւ Իշխնձոր, հիւսիսէն՝ Տափըկ եւ Շէնիք, կեդրոնը՝ Կէլիէկիւզան: Գլխաւոր եւ վտանգաւոր կէտերը իրեն վերապահած, Գէորգ Չաւուշին կը յանձնէ հիւսիսի ճակատը, Հրայր պիտի ջանայ որ թշնամին չմտնէ Անդրանիկի թիկունքը եւ կեդրոնը կազմող Կէլիէկիւզանի միջեւ:

Ապրիլի սկիզբին Թշնամին կը յարձակի, մերոնք յաջող պաշտպանողական եւ համախմբման կռիւներ կը մղեն: Թշնամին կը յառաջանայ շնորհիւ իր անհամար թուին եւ Անդրանիկ կը պարպէ կարգ մը գիւղեր, զանոնք այրել տալէ վերջ: Ապրիլ 11-ին, Թուրքերը երկրորդ ճակատամարտի մը ելքին կը մտնեն Շէնիք: Հայերը կը դիմեն հակաշարձակողականի եւ չորս ժամ թուրք զօրքին դէմ կռիւ մղելէ վերջ զայն յետ կը շարտեն եւ բաւական հետապնդելէ յետոյ կը վերադառնան իրենց գիւղերը:

Թշնամին կը դիմէ աւելի մեծ թուով զինուորական ոյժի եւ նենդութեան՝ միջնորդ ընտրելով Հայեր: Ապրիլ 12-ին Սէմալ կու գայ Ս. Յովհաննու վանահայր Առաքէլ Վարդապետը, որ 1894-ին ստորագրած էր Թուրքերուն համար նպաստաւոր դրութիւն մը:

Անձնատուութիւն անկարելի էր. կը վճռուի ժողովուրդը հաւաքել Կէլիէկիւզան եւ հոն կատարել զիմադրութիւնը: Անդրանիկ գիշերով կը մեկնի Տափըկ, բոլոր գիւղերը կրակի կը արուին:

Բանակցութիւններու խաբկանքը շուտով կը պարզուի, Ապրիլ 13-ին իսկ Թուրքերը կը յառաջանան Սէմալի վրայ, Հայերը ամէն ջանք կը թափեն յարձակումը դանդաղեցնելով՝ իրենց համախմբումը յառաջ տանիլ: Թշնամիին ոյժը ահաւոր է՝ աւելի քան տասը հազար զինուոր եւ բազմաթիւ Քիւրտեր: Հոգ կը նահատակուի Հրայրը: Հարուածը ծանր է եւ Հայոց դիրքերը վտանդուած: Դարձեալ կը յայտնուի Անդրանիկ, օգնութեան կը փութայ՝ յարձակելով կատաղօրէն: Թուրքերը կ'ընկրկին ու կը սկսի փախուսար: Անդրանիկ կը հետապնդէ զանոնք մինչեւ գիշեր:

Ապրիլ 14-ին, Թուրք նոր ոյժեր կրկին կը յարձակին, կրկին կը պարտուին:

Ապրիլ 20-ին, Թուրք բանակը աւելի մեծ բազմութեամբ, տասնէ աւելի թնդանօթներով, քիւրտ աշիրէթներու եւ զանազան կռուողներու բազմութեամբ մը կը վերսկսի յարձակումը: Թարմ ոյժեր չունի հերոսական հայ Ֆէտային. ո'չ թնդանօթ, ոչ ալ զինամթերք: Կէլիէկիւզանի մէջ համախմբուած են քսան հազար կին ու երախայ, ծերեր եւ հիւանդներ: Մերիները կը դիմադրեն օր մը եւս, մեծ վնասներ հասցնելով Թշնամիին, բայց պէտք է փրկել քսան հազար Հայերը ստոյգ ջարդէ եւ Անդրանիկ զինուորական խորհուրդի մը մէջ կը վճռէ քաշուիլ մաս մը Տալուրիկ, ուր կը շարունակուին կռիւները, մաս մըն ալ ժողովուրդ ֆէտայիներու պաշտպանութեամբ կ'անցնի Մշոյ դաշտը, շարունակ հետապնդուելով Թշնամիէն: Անդրանիկ ինքն ալ անձամբ Մշոյ դաշտին մէջ կը ցրուէ իր պաշտպանութեան տակ գտնուող մնացեալ ժողովուրդը: Թշնամին չկրցաւ ձեռք ձգել հայ կռուող ոյժերը: Մեծ էր սակայն Սասունցիներու կորուստը:

Հակառակ քսան հազարի բարձրացած Թուրք կանոնաւոր բանակին եւ հայ գիւղերուն մէջ ցանցնուած քիւրտ հրոսակներու բաղ-

մութեան, Գէորգ Չաւուշ չլքեց Սասունը. իսկ Անդրանիկ, Սեպուհ, Մուրատ երկար ատեն պահուած մնացին Մշոյ դաշտին մէջ: Անդրանիկի դիխուն համար մեծ պարզեւ խոստացուած էր, ոչ ոք համարձակեցաւ անոր մօտենալ, ոչ ալ մատնութեամբ դաւաճանել զինք:

Անդրանիկ փոքր դադարէ վերջ կրկին կը բարձրանայ Սասուն, միանալով Գէորգ Չաւուշին: Յուլիս 16-ին երեսունըչորս զինակիցներով կ'երթան Կուրավու դիւղը, լսելով որ հոն հարիւրի չափ թուրքեր բռնաբարումներ եւ ա'յլ շահատակութիւններ կը կատարեն: Անդրանիկ կը բաժնէ խումբը, եւ երբ թուրքեր կը պաշարեն խումբերէն մէկը, կը յարձակի եւ կը տանի փառաւոր յաղթանակ մը, եւ այնուհետեւ միայն ան կ'որոշէ անցնիլ արտասահման, Վասպուրականէն Պարսկաստան ու ապա Կովկաս:

1904-ին էր որ տեղի ունեցան այս դէպքերը: Սասունը այս անգամ կ'ուռւած էր հերոսաբար ու պարտուած միմիայն զէնքի պակասին պատճառաւ:

Հայութիւնը չէր կրցած օգնել Սասունին, ո'չ զէնքով, ո'չ մարդով: Կատարուած բոլոր փորձերը անյաջող անցած են, ոռւս եւ թուրք սահմանադրուելներու պահանջներու հսկողութեան պատճառով: Սասնոյ շարժումը եւ ինքնապաշտպանութիւնը սակայն արձագանգ դատած էր Եւրոպայի մէջ:

Անդրանիկ Հայաստանէն դուրս դալով, իր մղած կռիւներուն առթիւ հանդիպած խոջընդոտներուն մասին կը խորհրդածէ եւ կը սկսի քարոզել իր տեսակէտները: 1905-ին ժընեւ է, իր յոգնած մարմինը կաղըւորուելու պէտք ունի, բայց ան շարունակ մօտէն կը հետեւի ազգային եւ թուրքիոյ հետ կապ ունեցող միջազգային հարցերուն:

1907-ին Վիեննայի մէջ դումարուած Դաշնակցութեան ընդհանուր ժողովին ներկայ է Մուրատի հետ, եւ երկուքն ալ դէմ են «Կովկասեան նախադիւծ»-ին, ինչպէս բոլոր Ֆէտայիները. ինքն ալ խորքին մէջ Միհրամախան «Ազգային նախադիւծ»-ը կ'արդարացնէ: Վերոյիշեալ նախադիւծը Կովկասի համար կը պահանջէր հանրապետութիւն, թէեւ կը նկատէ զայն անանջատ մասը Ռուսաստանի, ունէր քաղաքական եւ տնտեսական պահանջներ, որոնց իրադրութեան համար, Դաշնակցութիւնը «ինքնապաշտպանութեան շրջանէն պէտք էր անցնէր բուն յեղափոխական դործունէութեան»:

Ուրեմն յեղափոխութիւն թուրքիոյ մէջ, Ռուսաստանի մէջ, խաւար Պարսկաստանի մէջ, դիխաւորաբար Հայոց կողմէ: Այս բոլոր Քաջ-Նազարութիւնները, բնական է, Անդրանիկի փորձառութիւնը եւ պայծառատեսութիւնը ունեցողին համար՝ զարհուրելի հետեւանքներով համազգային աղէտներ կը սպառնային: Անդրանիկ հրաժարեցաւ Դաշնակցութենէն, բայց ոչ հրապարակաւ՝ տեղի տալով զա-

նազան թախանձանքներուն: Ան քաշուեցաւ Պուլկարիա, ուր հանդարտ մնաց մինչեւ Պալքանեան Պատերազմ:

Անդրանիկ ոչ մէկ հաւատք ընծայեց Երիտասարդ (ժէօն) Թուրքերու յեղափոխութիւն ըսուածին, եւ 1909-ին Թուրքիա մտնելու իրեն եղած հրաւերներուն դրական պատասխան տալ փափաքեցաւ՝ անձնապէս երթալու եւ զգուշացնելու համար թրքահայ ղեկավար տարրը: Անցաւ Պօլիս, ուր քանի մը օր գաղտնի հիւր եղաւ Ռուբէն Զարդարեանի տունը, ոչ մէկ Թուրքի ձեռք ուղեց սեղմել եւ իր խոր թերահաւատութիւնը, յուսատեսութիւնը յայտնելէ վերջ՝ մեկնեցաւ Եգիպտոս: Նոյն տարին տեղի կ'ունենայ Կիլիկիոյ ջարդը՝ կարծես Անդրանիկին «յուսատեսութիւն»-ը ապացուցանելու համար:

1912-ին Անդրանիկ կը մասնակցի Պալքանեան Պատերազմին՝ 250 հոգինոց հայկական վաշտով մը միանալով պուլկար բանակին: Ինք եւ իր զինակիցները անզամ մըն ալ կը բարձրացնեն Հայուն զինուորական համբաւը եւ կ'արժանանան զովեստի եւ պատուանշաններու:

1914-ի աշնան, Անդրանիկ վերստին կը գրէ Պօլիս, թախանձելով որ Հայերը զգոյշ ըլլան եւ մանաւանդ հեռանան Թուրքիայէն, եւ ինք Պուլկարիայէն կ'անցնի Կովկաս, ուր հրաւիրուած էր Թիֆլիզի Հայոց Ազգային Խորհուրդին կողմէ: Հոն Անդրանիկ, իբրեւ հայկական կամաւորներու Ա. Գունդին հրամանատար, իր 1200 կամաւորներով Ռուսերու կողքին կը մասնակցի Ա. Համաշխարհային Պատերազմին:

Անդրանիկի երազներէն մին իրականացած էր, կոթնիլ մեծ պետութեան մը, ունենալ առատ ռազմամթերք:

1914-ի Նոյեմբերին իսկ, Անդրանիկի գունդը Խոյի գծով կը ջանայ շուտով Վան մտնել եւ անկէ անցնիլ Սասուն: Կը հասնին Վանէն մէկուկէս օր հեռու Մալլա Հասան գիւղը, ուր կը ստանայ նահանջի հրաման: Սրտակոտոր Անդրանիկ իր ստիպուի նահանջել. Թուրքերը՝ Թալրիզը զրաւելով՝ կը սպառնային անցնիլ ռուսական բանակին թէկունքը:

1915 Ապրիլ 17-ին տեղի կ'ունենայ Տիլմանի համբաւաւոր ճակատամարտը, որու ընթացքին, Անդրանիկ եւ իր կամաւորները հայ զինուորին վարկը այնքան բարձրերը պիտի հասցնէին, որ այնուհետեւ, Ռուս Կողակները հայ զունդերէն անբաժան պիտի ուզէին մնալ:

Խալիլ Փաշա կը սկսի յարձակումը եւ կը հանդիպի Անդրանիկի յառաջապահ գունդին, վերջնապէս կը զրկէ Անդրանիկին եւ կը սահանջէ ճամբայ տալ: Անդրանիկ իր գունդով միայնակ՝ կը մերժէ վերջնապէս եւ երեք օր անընդհատ ետ կը մղէ Թուրքերուն կատաղի յարձակումները, մինչեւ հայազգի Նազարպէկով իրեն օգնութեան կը զրկուի ռուս հրամանատարութեան կողմէ: Հայ երկու զինուորա-



կանները կը տանին մեծ յաղթանակ մը, որուն շնորհիւ Թուրքերը կը ստիպուին լքել Վանը եւ Այդեհատան համախմբուած հայութիւնը, շնորհիւ իր մղած հերոսամարտին եւ արտաքին միջամտութեան՝ կ'ազատուի ստոյգ բնաջնջումէ: Անդրանիկ կը գրաւէ Պաշլաւէն: Այս փայլուն կռիւին յաղթականի փառքը Նազարպէկով եւ ուսս հրամանատարութիւն չեն սակարկեր հայ «խմբապետ»-ին եւ իր քաջարի դունդին հետ...:

Անդրանիկ, մեծ մասամբ լուծած էր Սասնոյ վրէժը Թուրք բանակին վրայ տարուած յաղթանակով, թէեւ դեռ շատ գործ ունէր կատարելիք: Այդ օրերուն՝ ան դիտէր, որ նոր եւ աւելի ահաւոր ջարդի մը սպառնալիքին տակ կ'ապրի Տարօնի հայութիւնը եւ ան շարունակ յառաջ կը մղէ իր դունդը, միշտ նախադարձակ՝ առանց երբեմն ուսս հրամանատարութեան նախապէս հաւանութիւնն իսկ ստացած ըլլալու: Արիւնը կը հոսի Հայաստանի մէջ ամէնուրեք, Անդրանիկ որ «Աչք ունի եւ սիրտ», անհամբեր է:

Դատաւանի յաջող կռիւէն վերջ, Անդրանիկ Պիթլիսը պաշարող ուսսական բանակին առջեւէն կը նետուի դէպի Մշոյ դաշտը, բայց ի զուր: Նահանջի հրաման մը կրկին կը կոտրէ իր ազգասէրի թռիչքը՝ երբ արդէն Վարդեմիս հասած էր:

Ռուս հրամանատարութեան տակ իր մղած վերջին կռիւը կ'ըլլայ Պիթլիսի գրաւումը 1916 Փետրուարին: Անդրանիկ իր իսկ պատասխանատուութեամբ, անտեսելով ուսս հրամանատարութեան սխալ հրահանգները, հանձարեղ ռազմավարութեամբ մը, յանդուզն գրոհներէ վերջ կը յաջողի քաղաք մտնել: Ռուսերը, բնական է, գինք պիտի չպատժէին այդ անհնազանդութեան համար, այլ պատուեցին գինք Ս. Գեորգի բարձրագոյն խաչով:

Սակայն հայ կամաւորներու յաջող կռիւները, անոնց ստացած համբաւն ու կարեւորութիւնը շատ հաճելի չէղան ուսս կառավարութեան, որոնք հայկական պահանջներու մասին տարբեր տեսակէտ ունէին, ուստի 1916-ի աշնան կը լուծուին կամաւորական դունդերը ու Անդրանիկ կ'անցնի Թիֆլիզ:

1917 Թուրք ֆետրուարեան եւ Հոկտեմբերեան ուսս յեղափոխութիւնները դարձեալ Անդրանիկը պիտի նետէին կռուի դաշտը:

Տուն դարձող ուսս զինուորներուն տեղ, որոնց թիւը կովկասի ճակատին վրայ կէս միլիոնը կ'անցնէր, կովկասեան Ժողովուրդները, մանաւանդ Հայերը, որոնք դարաւոր թշնամի մը կը դիմապարսէին, պէտք էր կազմակերպէին ինքնապաշտպանութեան իրենց սեփական կռիւը:

Դարեր յետոյ, Հայաստանի արեւելեան մասը, բախտի բերումով ձերբազատուած էր Թուրքէն, իսկ Ռուսը ահապիս ռազմամը-

Թերք թողելով կամովին կը քաշուէր: Բախտաւոր եւ նպաստաւոր օրեր՝ եթէ միայն հայ ժողովուրդի ղեկավարութիւնը այս պատեհութեան կարենար զիտակցել:

Այդ օրերուն Անդրանիկին վերապահուած էր ամենէն տաժանելի հիասթափութիւնը: Ան թրքահայ զաղթականին գոյութիւնը պահելու կոխը կը մղէր այս անգամ՝ երբ ճակատը պարպուելով՝ Հայաստան կրկին թրքական ներխուժումի սպառնալիքին կ'ենթարկուէր:

Անդրանիկ միակն էր, որ բանակ կազմելու, զինուոր հաւաքելու համարձակութիւնն ունէր: Ռուսական բանակի հայ սպաները ինքզինքնին զինուորի մ'անգամ ցոյց տալ չէին համարձակեր: Անդրանիկ այդ մասին մտածելու ժամանակ չունէր: Ստացաւ զօրավարի աստիճան: Տակաւին բանակատեղին՝ Կարին չհասած, ան շատ լաւ ծանօթ էր ճակատի դրութեան, եւ լաւ ճանչնալով իր մշանջնական թշնամին, ան գիտէր որ Թուրքերը շուտով պիտի խախտեն ռուս-թրքական զինազաւարը եւ պիտի ներխուժեն: Հայկական բանակի կազմութիւնը դանդաղ կը յառաջանար ու կազմուելիք ալ չունէր: Անդրանիկ գիտէր, որ ծայրամասերու առաջաւոր փոքր ոյժերը՝ Թրքահայերէ հապճեպօրէն կազմուած՝ օգնութիւն չեն կրնար ստանալ, հակառակ շատախօսներու խոստումներուն, ուստի փութաց հրահանգել, թելադրել Մուրատին՝ որ Երզնկա էր եւ Բաբերդ՝ Սեպուհին, որ ժողովուրդին հետ միասին, քանի ուշ չէ, քաշուին Մամախաթուն, որ առատ ռազմաթերանոցներով օժտուած էր եւ հոն ամրանան: Այս առաջարկները նկատի չեն առնուիլ տարբեր աղբիւրէ եղած հրահանգներու պատճառաւ: Եւ գիտենք թէ որքա՞ն Հայեր սառեցան, մեռան ու սպաննուեցան ձմեռնային նահանջի ահաւոր օրերուն, երբ Մուրատ ստիպուեցաւ ընկրկիլ գերմարդկային ճիգերով:

Անդրանիկ, երբ 1918 Փետրուար 8-ին ճամբայ կ'ելլէ դէպի Կարին, ուր կը հասնի Փետրուար 16-ին, հոն ինքզինք կը գտնէ անօրինակ լաբիրինթոսի մը մէջ: Կոռուղ ոյժերը անկարգութեանց անձնատուր եւ ոռւս, վրացի եւ ա՛յլ սպաներ՝ թուրք բնակչութեան դաւերուն եւ յառաջացող թշնամի բանակին մեղրակից: Իսկ հայ զինուորականութիւնը ակադեմական՝ անգիտակից, անյոյժ եւ անկարգապահ՝ վերագտնուած սեփական հայրենիքի սրտին մէջ կանգնած:

Թուրք բնակչութիւնը ապստամբութեան մը նախօրեակին, Անդրանիկի ժամանումովը կը ահամուկի իր պատեանին մէջ եւ կը սպասէ: Քաղաքին մէջ զիչերային հրացանաձողութիւն, զանազան անկարգութիւններ, հայ զաղթականութեան աննկարագրելի վիճակ՝ ձիւն-ձմեռին նոր նահանջողներու կարաւաններուն հասնելուն պատճառաւ, հիւանդանոցները լեփ-լեցուն են անդամները սառած հիւանդներ-

րով: Անդրանիկ ամէն փորձ կ'ընէ՝ վերահաստատելու կարգ-կանոնը, հրամանադրերով կ'ապահովէ թուրք բնակչութիւնը ու անոր կը թե-  
լադրէ խելօք մնալ:

Բայց թշնամին կը յառաջանայ, Կարնոյ բերդին հարիւրաւոր թնդանօթները լուռ են, զանոնք դորձածող չկայ, մէկ քանի հրե-  
տանիի հայ սպաները լուռ կ'ընդդիմանան Անդրանիկի հրամաննե-  
րուն: Անդրանիկ իրենցմէ չէ, հապա իրենք՝ Հայեր չե՞ն: Մի՞թէ  
այս հայ սպաները կրնային որեւէ Ռուսի կամ Վրացիի հոգեբանու-  
թեամբ շարժիլ:

Հազիւ ութ օր է Անդրանիկ Կարին հասած է, թշնամին այդ քա-  
ղաքին դուռն է, 1918 Փետրուար 25-ին Անդրանիկ կը ստանայ Վէ-  
հրպ Փաշայի վերջնագիրը: Ասոր ի պատասխան, Անդրանիկ կը դառ-  
նայ իր հաւատարիմ զինուորներուն, թրքահայ ոյժերուն ու կը նե-  
տուի Իլիճէ: Թուրքերը կը յարձակին. Անդրանիկ կը դիմէ հակայար-  
ձակման, բայց լուռ են Կարնոյ թնդանօթները, իսկ իր ցանցառ ոյ-  
ժերը կը հալին: Ի դուր կ'անցնի ամէն յորդոր, հայրենասիրական  
ամենաջերմ խօսքեր, հայ զինուորը կը թողու Կարինը, պաշտպանե-  
լու համար Կարսը:

Անդրանիկ կը մեղքնայ իր փոքրաթիւ սղոց թանկագին արիւնը  
ի դուր թափելուն եւ հարկադրուած կը հրահանգէ նահանջել:

Հայ ժողովուրդը սկսած է թողուլ Կարինը: Անդրանիկ օրեր  
առաջ ականելով կացութեան անդարմանելի վիճակը, յանձնարարած  
էր, որ հայ բնակչութիւնը հետզհետէ քաշուի դէպի Կովկաս: Հայ  
կիներու ընտրանիին կ'իյնայ այս կենսական դործին հետապնդումը:  
Օրերով սայլեր, անասուններ, ինչ որ արամադրելի է կը տրուին  
ժողովուրդին, որ անցնի Սարրգամիշ: Ոչ մէկ Հայ կը մնայ Կարնոյ  
մէջ, ողջ կամ վիրաւոր, ամէնքը կը զրկուին:

Անդրանիկ՝ վիրաւոր արծիւը, հայ զնդակէ մը ստքէն զարնը-  
ւած, հրամանատարութենէն հրաժարելով կը փութայ հաշիւ տա-  
լու, մանաւանդ թաքուն ցանկութեամբ՝ հնչեցնելու ահազանգը,  
որովհետեւ ան բոլորովին թերահաւատ է, թէ հայ զինուորը եւ  
զայն առաջնորդողները պիտի կրնան պաշտպանել Կարսը: Նահանջ է:

Երկու հայ դեռատի աղջիկներ վերջին կարաւանին հետ, գէնքե-  
րը կռնակնին, մերթ ընդ մերթ իրենց ետին նայելով, դուրս կ'ելլեն  
Կարնոյ Կարս անուն դռնէն դէպի Հասան Գալէ: Իրենց ետին ոչ մէկ  
Հայ չձգած ըլլալու դոհունակութեամբ երբ կը հեռանան քաղաքէն,  
միւս ծայրէն, «Նարբերդ»-ի դռնէն, թուրք բանակին քաղաք մտ-  
նելու եւ զանոնք դիմաւորող խուժանին խրախճանքի զոռում-դո-  
չումները լսելով դառնօրէն կ'արտասուեն՝ իրենց երէկուան վառ  
երազներուն փլուզումին առջեւ: Վար կ'առնեն հրացանները, կը ճըը-  
դեն որ լեցուն են մոսիներուն փողերը, կը գլուեն իրենց կուրծքը

սեղմող փամփուռները անհուն գորովով, պատրաստ գործածելու իւրաքանչիւրը անոնցմէ, բայց մանաւանդ վերջինը՝ իրենց վերապահուած :

Կէսօրուան մօտերը կը հասնին Հասան Գալէի բլուրներուն, յանկարծ ձիաւորներ հորիզոնին վրայ՝ դիտակներ իրենց ուղղուած : Աղջիկները այլայլած դետին կը փոստին, պատրաստ կրակելու : Զիաւորները կը յայտնուին ձեռքերնին օդին պարզուած եւ հայերէն կոչերով : Մուրատի ձիաւորներն են, որոնց եկած են միանալ լեռնային ճամբով ձապաղջուրի եւ Քղիի կռուող ոյժերը եւ կամովին ստանձնած են փրկութեան պաշտօն մը՝ չթողուլ որ թուրք բանակը հետապնդելով հասնի փախչող գաղթականներու շարանին :

Ուրախութենէն, անքնութենէն, յոգնածութենէն, վախէն թէ յուզումէն աղջիկները գետին կը նետեն իրենց հրացանները եւ իրարու դիրկ նետուելով կը փղձկին : Զիաւորները վար կը նետուին ձիերէն եւ հիացումով, ապչահար՝ կը հանեն իրենց դլխարկները : Այդ իսկ վայրկեանին աղջիկներէն մին՝ Վարդանոյշ Անդրէասեան եւ հայրուկ մը քաջարի՝ Վահան Զերազ, լռելեայն կը կատարեն սիրոյ ուխտ մը եւ երբ կը բաժնուին՝ ամէն մէկը քալելու համար իր ճամբէն, նշանակած են ժամադրութիւն մը՝ ազատ հայրենիքի մէջ՝ Ս. Էջմիածնայ տաճարին մէջ :

Գետերով արիւն թափած Թրքահայուն խորհրդանշան, հայրենի Կարին քաղաքը դարձեալ անցած էր թշնամիին ձեռքը :

Առաջին անգամն էր, որ Անդրանիկ պիտի ունենար, առանց չքմեղանքի, իր մեծագոյն հրասթափութիւնը ազդային ոգիին ի խընդէր : Այդ փոթորկոտ եւ պղտոր օրերուն, բանակ մը վերակազմելու եւ յաղթական կռիւ մղելու իր հաւատքին մեծութիւնը, անտեսել տուած էր իրեն, ամէն արդեւք, ամէն խոչընդոտ, մանաւանդ ան երբե՛ք, երբե՛ք չէ՛ր կրնար երեւակայել ու հաւատալ, որ հայ զինուորը պիտի չուզէ պաշտպանել իր անառիկ բերդերը՝ վերջնականապէս ազատելու համար իր սեփական հայրենիքը, սրբելու համար արտասուքը Մայր Հայաստանին :

Անդրանիկ, իրաւ է, չմեռաւ Հայու զնդակով : Կարնոյ անկումին մեծ ու ահաւոր կորուստը դարերը հազիւ կրնան դարմանել : Քաջուող հայ ոյժերն ու երիտասարդութիւնը չէին կրնար ընդունիլ կատարուած դաւաճանութիւնը, եղբայրասպան կռիւի մղձաւանջը տիրեց օրեր եւ շաբաթներ :

Վերջացած չէր սակայն Անդրանիկի նախախնամական դերը :

Հայաստանի բերդերը մէկը միւսին ետեւէն, առանց կռիւի, կ'իյնան թշնամիին ձեռքը, «ակադեմական» հայ զօրավարները կը քնանան, կ'օրօրուին ժամանակ չահելու միտումով, իսկ հայ Յեղափոխական կուսակցութեան «մարտական» շնորհքը ոչ մէկ տեղ կը

յայտնուի, բացի Թիֆլիզի սալօններուն մէջ կամ հրապարակներուն վրայ: Միմիայն «խմբագետ»-ներն են դարձեալ, որ պահապան հրեշտակներու պէս կը հսկեն փախչող դաղթականին վրայ, մղելով վերջապահ կռիւներ զիշեր ու ցերեկ:

Կարսը իր կարգին կ'իյնայ, Ապրիլ 13-ին եւ Թուրքերը Ապրիլ 16-ին կը հասնին Ալեքսանդրապոլի առջեւ՝ Ախուրեանի ափը:

Անդրանիկ, թրքահայ զօրաբաժինով մը, գլխաւորաբար Սիպերիայէն ազատ թողուած զերիներէ կազմուած, կ'անցնի ծերունի Զօրավար Նազարպէկեանի հրամանին տակ եւ կը զրկուի պաշտպանելու աջ թեւը՝ Ախալքալաքի շրջանը:

Անդրանիկ մեկնելէ առաջ, չի մոռնար ազգարարելու իր հրամանատարին, որ չհաւատայ Պրեսթ-Լիթովսքի դաշնագրով եղած կարգադրութեան եւ թէ Թուրքերը մէկ օրէն միւսը կրնան անցնիլ Ախուրեանը:

Արդարեւ Մայիս 16-ի առաւօտեան, Տաճիկները կ'անցնին դեմքը, կը դրանեն շուտով Ալեքսանդրապոլը եւ իր բերդը, կը հասնին Ղարաքիլիսա, ուր կը հանդիպին հերոսական զիմադրութեան մը, որ երկար չի տեւեր: Անդրանիկ, Ալեքսանդրապոլի բերդին եւս անփառունակ անկումին պատճառաւ կը ստիպուի լեռնաճանապարհով քաշուիլ եւ Լօռիի վրայէն կ'անցնի Դիլիջան, փոքր կռիւներ միայն մղելով զինք հալածող ոյժերուն դէմ:

Այդ օրերուն, Թուրքերու յառաջխաղացումը դէպի Երեւան՝ կը հանդիպի ուժգին զիմադրութեան մը Սարտարապատի մէջ, եւ Գերմաններու միջամտութեամբ, կովկասեան ժողովուրդները կը հրաւիրուին Պաթում, առանձին հաշտութիւն կնքելու Երբեակ Զինակցութեան հետ:

Հայաստան ինքզինք անկախ կը հռչակէ Մայիս 28-ին: Անդրանիկ Յունիս 7-ին Տիլիջանի մէջ կը ստանայ Պաթումի ժողովին պայմանները, որոնց մաս կը կազմէ զօրացրումը: Հայաստան 1200 զինուոր միայն պահելու իրաւունք ունի. անոր հողամասերէն խլուած են Կարսը, Սուրմալուն, Նախիջեանը, Զանգեզուրը, Ղարաբաղը, Ալեքսանդրապոլ քաղաքը:

Անդրանիկի տեսակէտն է՝ զինաթափ, երբե՛ք: «Ըսէք Վեհիպ փաշային, որ Անդրանիկ իր զօրքերը պիտի չցրուէ» «... Իմ զօրքերը թրքահայեր են, ես ինքս թրքահայ: Հաշտութիւնը կնքողը եղած է Ռուսահայ Աղլ. Խորհուրդը: Ես ինքզինքս պարտաւոր չեմ զգար ենթարկուելու անոր ստորագրած հաշտութեան դաշնագրին: Բայց, որովհետեւ, ես իրաւունք չունիմ ապրելու այս երկրին մէջ եւ անոր դժուարութիւններ ստեղծելու, դուրս կ'ելլամ անոր սահմաններէն»: Ան, Նազարպէկովին զրկած խիստ նամակով մը կ'առաջարկէ իրմէն ստանալ Տիլիջանը: Արդարեւ, ուրկէ որ անցած է Անդրանիկ, տեղա-

կան Թաթարներուն դէմ պաշտպանած է հայ բնակչութիւնը եւ չէր կրնար անպաշտպան թողուլ Տիւրքները իր մեկնումով :

Անդրանիկ կը հաւաքէ իր զինուորները եւ ցոյց տալով անոնց թէ՛ Երեւան, եւ թէ՛ Նախիջեւան տանող ճամբաները՝ կը յայտարարէ . — «... Հիմա ազատ էք ընտրելու այս խճուղիներէն մին կամ միւսը : Ես քսան եւ հինգ տարի կռուած եմ թրքահայաստանի ազատութեան համար, դեռ պատերազմը չէ վերջացած, ոչ ալ հաւանաբար իմ կռիւս : Ես, ինծի հետեւողներուն հանգստութիւն չեմ խոստանար, ոչ ալ փափուկ անկողին : Իմ ճամբան փշոտ ու արիւնոտ է, ձեզմէ իւրաքանչիւրը պէտք է իր ազատ կամքովը ընտրէ » :

Մէ՛կ սպայ միայն դուրս կ'ելլէ շարքերէն, մնացեալները կ'արձակեն ահեղ հուռոսներ, գոչելով՝ «Անդրանիկ՛, կեցցէ՛ մեր ազգային հերոսը, կեցցէ՛ թրքահայաստանի ազատութեան նուիրակը, մինչեւ մեր արեան վերջին կաթիլը քեզի հետ ենք» :

Հագիւ Անդրանիկ հեռացած է Տիւրքներէն, քերելով Սեւանայ լճին եզերքը, ուր զինք զիշերներ շարունակ խոռոված է Աշոտ Երկաթի ուրուականը : Ահա ան կը նշմարէ Նոր Պայազիտէն Դարալակեազ տանող ճամբուն մէկ դազաթէն՝ բազմութիւն մը, որ իր ետեւէն կը շարժի : Ասոնք ամէն տեղերէ հաւաքուած թրքահայեր են մասնաւորապէս, որոնց մէջ կան Վանի զօրամասէն դումարտակներ : Ասոնք այն յուսախարուածներն էին, որոնք բանակ մտնելով կը կարծէին զտնել «խմբապետներէն» աւելի մեծ հանճարով զօրականներ եւ յանգած էին այն եզրակացութեան, որ իրենց բուն ղեկավարը եւ հարազատ առաջնորդը՝ Անդրանիկը միայն կրնար ըլլալ :

Անդրանիկ ուրեմն, զօրքերով եւ գաղթականներով, լեռնային ճամբաներով 1918 Յունիսի վերջերը կը հասնի Զուլփա : Հոն աստուածները կրկին կ'առաջնորդեն իր քայլերը : Քանզի իր դալուստը լսող թուրք զօրաբաժնի պետ Ալի Իհասն կը ստիպուի թուլցնել Վանէն դադլթող 60,000-է աւելի հայ եւ ասորի ժողովուրդին վրայ իր կատարած ճնշումները, եւ ասոնք, որ Սարմաստի շրջանը հասած, մտադիր էին Կովկաս երթալ, կրցան առիթէն օգտուիլ եւ առանց նոր զոհեր տալու անցնիլ Համատան ու անկէ Միջագետք : Իսկ ասոր փոխարէն, Անդրանիկ իր դիմաց կը գտնէ զօրեղ եւ կանոնաւոր բանակ մը, որուն դէմ պիտի մղէ Խոյի մէջ ճակատագրական կռիւ մը : Պահ մը իրեն կը յաջողուի դրաւել Խոյ քաղաքը, սակայն թշնամի ճակատ մը ճեղքելով, գաղթականներու բազմութիւն մը առանց զոհի առաջնորդելը անհնարին գտնելով, կը նախընտրէ անցնիլ Զանգեզուր, ուր նոյնքան ազգանուէր գործ ունէր կատարելիք :

Խոյի մէջ տարբեր հեռանկարներով, երկու հակառակորդ ուժեր իրարու կը բախին : Հոն ալ Անդրանիկ կ'ըլլայ յաղթական ազատարարը, որովհետեւ շնորհիւ իրեն՝ պիտի փրկուի հայութիւն մը, Զանգեզուրէն մինչեւ Բազու : Ալի Իհասանի ծրագիրն էր ոտքի հանել

Ձանգեզուրի եւ Ղարաբաղի թրքութիւնը եւ անոնց մասնակցութեամբ զօրացած՝ անյապաղ քաղել Պաքուի վրայ, ժամ առաջ վերջ տալ կովկասեան ժողովուրդներու անկախ գոյութեան եւ այնուհետեւ ազատօրէն այլուր փոխադրել թրքական բանակը: Ան բոլորովին ճախողեցաւ իր հիմնական նպատակին մէջ, եւ այդ պարագան ուղղակի մեծ օրհնութիւն մը եղաւ լեռնային Հայաստանի բնակչութեան՝ որ չնորհիւ Անդրանիկի մղած կռիւին կրցաւ բնաջնջումէ զերծ մնալ:

Այսպէս, Անդրանիկի վերջին եւ մեծագոյն զործերէն մէկն եղաւ Ձանգեզուրի 180,000 հայութեան փրկութիւնը՝ նախանձեղի փառապսակ մը եւս իր հերոսի ճակատին:

## ԱՆԴՐԱՆԻԿ՝ ՄԱՐԴԸ, ՆԿԱՐԱԳԻՐԸ

Իր հայրենիքն ու ազգը սիրող, մարդասէր եւ եղբայրասէր, գերազանցապէս անշահախնդիր, Անդրանիկ եղաւ մարմնացումը կատարեալ ասպետի մը: Մարդկութեան պատիւ բերող, հայ ազգին համար արդար եւ անխառն հպարտութիւն պարզեւող դիւցազն մըն է ան, կտրիճ, անձնուրաց եւ արդարադատ:

Իր կեանքը ներչնչման աղբիւր մըն է, քանի որ թշուառին եւ ընկճուածին համար իր նուիրումը անսահման էր եւ իր կեանքին ընթացքին այդ պայծառ նուիրումը երբեք չունեցաւ խաւար պահ մը. յարատեւ, ամբողջական սպրում մըն էր ան, որ ընդհատում չճանչցաւ եւ հակառակ անարկու խոչընդոտներու՝ ընկրկում չունեցաւ բնաւ:

Յեղափոխականի անարատ նուիրումը ան սրբազան ուխտի մը պէս պահեց, եւ հոգիով, մտքով, մարմնով ան մնաց մաքուր, անեղծ:

Իր մէջ զինուորականը պէտք չէ փնտռել, — ան ըմբոստ մըն է, ազատատենչ, պատերազմիկը բոլոր տեսակի բռնութեանց եւ անիրաւութեանց դէմ:

Իրմով հայկական դիւցազնավէպը կը վերակենդանանայ եւ մեր ցեղային առաքինութեանց գլխաւոր յատկանիչները ամենացայտուն կերպով կը յայտնաբերուին:

Գոյութիւն ունեցած են թէ ո՛չ, — Անդրանիկի մարմնացած հերոսապատումին մէջ պէտք է փնտռել պատասխանը՝ թէ՛

Ինչո՞ւ բաժնուեցաւ Հայկ Նահապետը իր բազմամարդ ընտանիքով, իր բնակավայրէն. եւ ինչո՞ւ ծառայաւ Բելլի դէմ, իր գերդաստանին կեանքը վտանգելով: Որովհետեւ ան ըմբոստ մըն էր բռնութեան դէմ եւ ազատութիւնը զերիվեր էր իրեն համար բոլոր փառքերէն, ամէն հանգստութենէ:

Ինչո՞ւ Արա Գեղեցիկ պատերազմեցաւ Շամիրամի դէմ, երբ

կրնար թագաւորել փառքով, հարստութեամբ, հաճոյքով: Որովհետեւ ան մարդկային արժանապատուութիւնը, ընտանեկան սրբութիւնը, ազատ եւ հպարտ կեանքը նախամեծար համարեց եւ չէր փափաքեր ոչ միայն բռնանալ՝ այլ կամովին բռնութեանց ականատեսն իսկ ըլլալ:

Ինչո՞ւ, եւ որո՞ւ դէմ, հաստաբուն ծառերով, որոնք արմատներէն կը խլէր, Տարբ հսկան կը հալածէր ու կը պատուհասէր իր հայրենի երկիրը ասպատակող հրէշները:

Ովքե՞ր էին Սասնոյ Դաւիթը, Առիւծ Մհերը: Զինապաշտնե՞ր, աշխարհակալնե՞ր, ալան-թալանի հերոսնե՞ր, հասարակ մարդասպաննե՞ր: Բնա՛ւ:

Ի՞նչ էին Կարմիրն Վարդան եւ իր յաջորդ հայ սպարապետները:

— Ասպետներ, արդարութեան մարտիկներ, որոնք կը նախընտրէին ազատութիւնը, եւ եթէ ոչ, այն ատեն միայն՝ մահ:

Անդրանիկ կու գար այդ երկար ու փառաշող շղթային մեր օրերու օղակը դարբնել: Եւ ո՛վ տեսած, լսած, կարդացած է Անդրանիկը, եւ հետեւաբար չի կասկածիր անոր դոյութեան, կրնայ վստահօրէն հաւատալ թէ ապրեր ու պայքարեր են հայկական դիւցազնավէպի նախորդ հերոսներն ալ, որոնց շառաւիղն է ինք, անոնց՝ մեր օրերու արժանաւոր յաջորդը: Մեր օրերու տիպարը Հայը՝ մեծ ու ազնիւ մարդը միանգամայն:

Թուենք, բոլոր թերահաւատներուն համար, մէկ քանի մանրամասնութիւններ:

Անդրանիկ կը սիրէ իր ծնողքը, իրենները: Ան՝ անվրէժ չի կրնար թողուլ իր հայրը, որ աշխատասէր, առաքինի արհեստաւոր մըն է, ազնիւ ու պարկեշտ մարդ մը: Ինք, երեք տարեկանին որր, երբեք պիտի չմոռնայ իր քոյրերը, որոնց հանդէպ ունի կատարեալ պաշտամունք: Ի՞նչ յուզիչ է Անդրանիկին աչքերը վերջնապէս փակելու պահը. այդ վճռական մարդը, որ երբեք մահէն չէր վախցած, եւ ոչ ալ որեւէ որոշումի ատեն ընկրկած, կ'ունենայ իր անորոշութեան բոպէն, — ո՞ւր պէտք է հանդչի իր անկենդան մարմինը: Պուլկարիոյ հողին մէջ, իր սիրական քրոջ մօտիկ, կամ Հայաստանի ո՞ր մասին մէջ: Եւ ան կը փափաքի, որ իր մասունքները, կտոր-կտոր, հանդչին, իր քրոջ մօտ, իր ծննդավայրին մէջ, Արարատի փէշերուն, Ս. Էջմիածնայ ծոցը, Առաքելոց վանքին մէջ, Կէլիէկիւղզանի, Մէխիքի, Մէմալի մէջ:

Անդրանիկի կեանքին մեծագոյն եւ վերջնական պարտութիւնը պիտի ըլլայ, երբ իր այդ ցանկութիւնները չիրականանան: Արգարեւ, հող է որ ան կը զգայ ու կը գիտակցի իր գործին կիսատ մնացած ըլլալուն:

Ո՞վ գուք ժողովրդանուէր եւ ազգաչէն վարիչները իր սիրած ու



պաշտած Հայրենիքին, այսօրուան կամ վաղուան, դո՛ւք էք որ պիտի կատարէք իր վերջին փափաքը՝ տանելով աճիւնները Հայ ժողովուրդի ամենէն համեստ, բայց ամենէն մեծ եւ մարդասէր զաւակներէն Անդրանիկի, որ ծնաւ ժողովուրդի ամենէն ազնիւ եւ խոնարհ ծոցէն, եղաւ պահակը անոր պատուին, կեանքին ու մշակոյթին, մնաց հաւատարիմ իր ծագման, երբեք չուզեց ու չթափեց անմեղ արիւն, չզանազանեց ո՛չ ազգերը, ո՛չ ցեղերը, ո՛չ կրօնները, այլ ծառայաւ միայն ու միայն չարին դէմ ու դործեց բարին եւ մարանչեցաւ ազատութեան համար՝ ընդդէմ բռնակալութեան:

Ուր որ ալ ամփոփուին իր ոսկորները, այսօրուան Հայաստանի ծոցին մէջ, անոնք մշտնջենապէս պիտի շարժին այցելելու ամէն սար ու դար, ձոր ու բլուր, ուր Անդրանիկ թեւածեց իրբեւ արծիւ, ի խընդիր Հայոց ազատութեան:

Անդրանիկ բանտէն ճողպրեկէն վերջ, լքելով ծննդավայրը կ'անցնի Պոլիս, բայց հոն մնալ չի կրնար, ուստի իրբեւ աշխատաւոր նաւ կը նստի ու կ'երթայ Պաթում, եւ շարունակելով փշոտ այլ փառաւոր ճամբայ մը՝ կը մտնէ Հայաստանի սուրբ հողը: Մշոյ դաշտը, Սասնոյ լեռներն ու հովիտները այնուհետեւ իր ապաստարաններն են, Հայաստանի ծերպերը իր անկողիները, իսկ քարերը՝ իր գլխին բարձերը:

Անգամ մը այդ հողին վրայ, Անդրանիկ փոխանակ յուսահատելու, գղջալու, տարակուսելու, աւելի կը գօտեպնդուի իր հաւատքին մէջ: Իր գործին նուիրականութեան մասին ոչ մէկ կասկած: Հող պատկերը աւելի ահաւոր է, քան իր ծննդավայր Ծապին-Պարահիսարի մէջ: Հող ժողովուրդ մը ամբողջ կը հեծէ, կը շարշարուի, կը քամուի մինչեւ իր արեան վերջին կաթիլը:

Անդրանիկի հողին կը փղձկի, կը նորոգէ իր ուխտը, կը համբուրէ իր հայդուկի խեղճուկ հրացանը եւ կ'երգնու ըլլալ միմիայն վրիժառու՝ երբեք մարդասպան, կը խնդրէ Հայոց Աստուծո՛վէն զինք պահել անխոցելի, խոստանալով պատժել չարագործը ամէն ազգի, պաշտպանել թշուառը՝ ամէն ազգի:

Անդրանիկ մտած է Ֆէտայիներու խուճրին մէջ, կամովին յանձն առած է ենթարկուիլ անոր խիստ կարգապահութեան՝ ըլլալ չարքաշ, անվեհեր, տոկալ ծարաւի եւ անօթութեան, երբեք չյանձնուիլ թըշնամիին, վերջին փամփուշտը իր իսկ փրկութեան վերապահելով: Ըլլալ հաւատարիմ եւ զազտնապահ, եթէ անարգ դաւի մը զոհ՝ ողջ բռնուելու չար բախտին ենթարկուի:

Ամէն զրկանքի տոկալ Ֆէտայիին համար կոչում ու պարտք է. ան բնաւ իրաւունք չունի, միս մինակը կ'նոջ մը հետ քանի մը խօսք փոխանակելու, առանց իր ընկերներուն խիստ դատաստանին ենթարկուելու:

«Օր մը, — կ'ըսէ Անդրանիկի զինակից եւ դեռ Փէտայիներու շարքերուն մէջ նոր մտած Ջօր. Սմբատ, — Կարաւ զիւղին մէջ, Հըրայրի կարգադրութեամբ ժողովի հրաւիրուած ենք, միջոցներ խորհելու, որպէսզի Պիթլիսի ուսական հիւպատոսի դաւանափոխութեան քարոզչութեանց առաջին աննենք: Ժողովի վերջաւորութեան, բակին մէջ հանդիպեցայ զիւղացի ծանօթ կնոջ մը, որ մօտեցաւ ինձ եւ սովորական խօսակցութեան մը հարցումներէն յետոյ՝ հետաքրքրուեցաւ ինձմով, — դե՞ն ալ եկար Փէտայի դատնալու: Տակաւին չէի պատասխանած, երբ դուրս ելլող ընկերներու խոժոռ աչքերը վրաս դամուեցան, մանաւանդ Հրայրինը, որ զիս իր մօտ կանչեց խիստ թոնով մը: Ափսո՛ս, դեռ նորեկ էի, պատասխաններս թերեւս ալ գոհացուցիչ, բայց առիթն էր որ ստանայի Փէտայիի կատարեալ դատարարակութիւն: Նոյն օրը ուրիշ ընկեր մը նոյնպէս տեսնուած էր կնոջ մը հետ խօսակցութեան բռնուած ու տեղն ու տեղը արժանացած փառաւոր տիպոցի մը: Ինչպէս ըսի, ես նորեկ էի, ինձ հետ պէտք էին վարուիլ դատարարակազական աւելի մեթոտիկ կերպով: Ենթարկուեցայ խիստ եւ կանոնաւոր հարցաքննութեան, բայց չկրցայ ինքզինքս ազատել ճիպօտի մը հարուածներէն: Հարուածներուն տակ արիւնս կ'եռար, կը պոռթկար, տաքութիւն կը զարնէր զլիսուս, բայց հպարտութեամբ կը զրպէի ցաւս ու ձայն չէի հաներ: Յեղափոխութիւնը, որ այնքան դժուարակ եւ անտանելի պայմաններու մէջ կը կազմակերպուէր, իր մասնաւոր պահանջներն ունէր իր իսկ փրկութեան եւ ամբապնդման համար: Գաւառական եւ զիւղական պարզ ու խիստ բարքերուն մէջ, սովորական գիծէն թեթեւ շեղում մը մեծ դալթակցութեան մը համեմատութիւնը կ'առնէ: Վա՛յ անոր որ փոքր սայթաքում մը ունեցաւ»:

Այսպէս ուրեմն, յեղափոխականը՝ Փէտային, իր կազմով, պէտք էր մնար անսայթաք եւ զերծ որեւէ մեղադրանքէ: Անհատ Փէտայիին յոռի մէկ ընթացքը իր հետեւանքները կը սփռէր ամբողջ շարժումին վրայ: Ամէն Հայու տուն եթէ տեղ ունի Փէտայիին համար, ամէն Փէտայի պարտաւոր է այդ տունը համարել սրբաբան մը, որուն պաշտպանութեան ու բարեկեցութեան համար ինք կամօլին ընտրած է զրկանքի ու կռիւի ճամբան: Եւ Սմբատ կը շարունակէ.

«Ծեծէն յետոյ, Սաւլախ երթալու համար ճամբայ ելանք, Արածանիէն անցնելու ատեն առաջարկեցի Հրայրին շալակս առնել զինք: Կարճահասակ էր՝ չմերժեց:

— Գոնէ, ըսի, ատով վրէժս քեզմէ լուծած կ'ըլլամ»:

Անդրանիկ անցած է նոյն ճամբաներէն, ան երբեք չէ պատմած իր տառապանքներու մասին: Անդրանիկ, իբրեւ զեկաւար եւ Փէտայիներու առաջնորդ՝ բնական է որ աւելորդ նկատէ այդ շատ «հասարակ բան»երու մասին խօսիլը:

Ձինք կը դռնենք անձնուրացութեան զմայլելի օրինակ, ընտանեօք Հայոց մեծութեան սուրբ խորանին առջեւ ողջակիզուած Հերոս՝ Աղբիւր Սերոբի խումբերուն մէջ: Անդրանիկ չէր կրնար անկէ աւելի մեծ վարպետ ունենալ:

1893-ին, Աղբիւր Սերոբ, որուն նախապէս ձեռք ձգել ուզած գէնքի եւ չարքաշութեան կամովին վարժութիւնները զինք ստիպած էին թողուլ Հայրենի հողը, կրկին կը մտնէ երկիր, Բաղէշի նահանգը՝ Ախլաթ: Ան ունի բաւական թիւով խումբ մը, տեղւոյն վրայ իրեն կը միանան երիտասարդ մարտիկներ եւս:

Տեղի կ'ունենան 1894-1895 թուի Մշոյ եւ Վանի դէպքերը՝ կոտորած: Արհաւիրք ամէնուրեք: Սերոբ կը յաջողի Ախլաթի 27 դիւղերը ջարդէն փրկել: Իր ձգած սարսափը եւ վրէժխնդրական անյեղի հարուածները խելքի կը բերեն այդ շրջանի թուրքերը եւ անոնց ձեռքը սգիտօրէն գործիք դարձած Քիւրտերու խաժամուժը:

Այդ դէպքերէն յետոյ Սերոբ իր եւ զինակիցներուն հետքերը կորսնցնել կու տայ Սասնոյ բարձրաբերձ լեռներուն մէջ, ատեն-ատեն միայն իր վրէժխնդիր ձեռքը հասցնելու համար հո'ն, ուր պէտք էր, թուրքին, Քիւրտին եւ ազգուրացին դէմ միանգամայն:

Սերոբ անպարտելի կը մնար, առանձին կամ խմբով վարած կռիւներու ատեն. թուրք իշխանութիւնը լաւ ըմբռնած էր, որ միայն դաւն ու դաւաճանութիւնը պիտի կրնային դայն տապալել: Երբ մարդ մը՝ Սերոբ, միայն հինգ հրացանակիրներով կրնայ թեղուտ գիւղէն ծանր կորուստներով ետ մղել հարիւր Հասնանցի քիւրտ ձիաւորներ, ու միւս միակ քանիցս կորել զինք պաշարող շղթան, անոր դէմ գէնքով հաշիւ տեսնել այլեւս գժուար է:

Պէտք է դործածել թոյն, եւ թոյնը ոչ իսկ թշնամու ձեռքով, այլ ազգակիցի: Այսպէս է որ Աղբիւր Սերոբ կ'իյնայ 1899-ի աշնան, մատնուած եւ թունաւորուած, կը պաշարուի Կէլիէ կիւղանի մէջ քիւրտ Սալիլ ցեղապետին կողմէ, որ Սերոբի թմրած մարմնոյն վրայէն կը կտրէ հերոսին գլուխը, մինչ այդ՝ Սերոբի կիւնը՝ Սօսէն, կ'առնէ թոյնէն անշարժացած իր ամուսնոյն հրացանը, շարունակելու համար կռիւը, կը սպաննուին զիւցազնին երկու եղբայրներն ու իր կորիւնը, գիւղի Տէր Քաջ քահանան, մէկ կին եւ ուրիշ 13 հոգի՝ պաշարուած 1500 զօրքերու եւ քիւրտ խուժանին կողմէ:

Անդրանիկ՝ որ արդէն սիրուած ու յարգուած կտրիճ մըն է, կու լայ դառնօրէն Աղբիւր Սերոբի կորուստը եւ կը մնայ անմխիթար մինչեւ այն օրը, երբ արդարութեան սուրբ իր ձեռքին մէջ ուժգնօրէն սեղմած՝ ան կը կտրէ նոյն Սալիլ փաշային գլուխը՝ տարին չբոլորած:

Կարելի է երեւակայել, թէ ի'նչ ծանր հարուած մըն էր Սերոբի մարտիրոսացումը: Ան կրցած էր սանձահարել բոլոր արիւնհարբու գազանները եւ այլեւս չկար: Թշնամին ամէնուրեք, դաւաճանութիւնը համատարած: Սալիլ կ'արժանանայ թուրք պետութեան կողմէ զա-

նագան վարձատրութեանց, կ'ունենայ յատուկ շքախումբ եւ անձնապաշտպան գունդ մը:

«Տեսնելու էր այդ քիւրտ գագանին սոնքացումը, կը դրէ Բաղչի առաջնորդ Ջիլինկիրեան Եպիսկոպոս, երբ սուլթանին շքանշանը իր կրծքին, շրջապատուած իր մարդոցմով, կու գար Մուշ, կ'երթար Դուռը եւ կը բազմէր ՄիւթասարըՖին քով: Իր թեւաւոր ու փէշաւոր հագուստին թափթփածութիւնը, իր խոշոր աչքերը արեւէն սեւցած դէմքի մը խոռոչներուն մէջ, լեցուն ատելութեամբ եւ արիւնոով, խոզի մազերուն պէս քստմնած իր պեխերը կ'աւելցնէին իր դէմքին վայրագ գիծերուն խորութիւնը...: Հեծեալ եւ զինեալ մարդոց խումբով կ'ասպատակէր միշտ եւ կը յոխորտար, թէ ինքը վախցող մը չէր Ֆէտայիներէն եւ կ'ուզէր հանդիպիլ անոնց անդամ մը...»:

Այդ էր նաեւ փափաքը Անդրանիկին, բունն ու հիւանդագին փափաք: Ո՛չ քուն ունին հայ Ֆէտայիները, ոչ հանգիստ, սուրբ եւ Հայուն պատիւը իրենց ձեռքին՝ վերջապէս օր մը լուր կ'ունենան թէ Սալիլ պիտի անցնի Մուշի Սասգիւղէն, դէպի Սուրբ Աղբերիկ երկարող կիրճէն: Անդրանիկ, թէեւ յօղացաւ խիստ կը տառապի, եւ իր յուզմունքներուն եւ յարատեւ հետապնդումներուն հետեւանքով Ֆիզիքապէս տկար, կ'որոշէ եւ կը հրահանգէ դարանակալել՝ ողջ բռնելու համար ճիւղադը: Ռազմավարութիւնը կը յաջողի, թէեւ դժուարին է գործը՝ ողջ բռնելու այդքան լաւ զինուած ու պաշտպանուած ոստիւր:

Ֆէտայիներու համազարկէն Սալիլի ձին կը տապալի, իր տակը առնելով հեծուորին ոտքը: Անդրանիկ կը հետեւի ուշի ուշով: Ինչքան ալ անհամբեր, Ֆէտայիները ճշգիւ գործադրած են Անդրանիկի նշանը, դահիճին շքախումբը փախուստի մատնուած է: Անդրանիկը Սալիլէն բաժնող չորս հարիւր քայլերը կը կտրուին ողիմպիական արագութեամբ, ոստիւր ողջ կը բռնուի, եւ երբ Անդրանիկ կը պատրաստուի արդարութիւնը գործադրել, իր կողմէ տրուած հրահանգը կը մտաբերէ՝ հարցաքննել նախ մարդասպանը, թէ որո՞նք էին իրեն ծառայող հայ լրտեսները: Եւ յետոյ կը կտրէ Սալիլի գլուխը:

Ու Ջիլինկիրեան Եպիսկոպոս կ'աւելցնէ՝

«Հայակեր Քիւրտին գլխատումը ափ ի բերան բրաւ Մշոյ թուրք կառավարութիւնը, եւ պահ մը խաղաղութիւն բերաւ խոշտանգուած Սասունի»:

Կը խաղաղի նաեւ Անդրանիկի փոթորկած հողին:

Անդրանիկի մէջ տիրական մարդկային, հոգեբուզիւ այդ դիծը շեղում չունի նաեւ, երբ Սերորի վրէժը լուծելէն երկու տարի վերջ, Առաքելոց վանքի պաշարման շղթան կտրելու որոշումը կը յետաձգէ ան, որպէսզի իրենց վիրաւոր եւ մահամերձ մէկ ընկերը չլքուի, անոր չտալու համար պարտուածի դառնութիւնը, որպէսզի ան իր աչքերը փակէ իր ընկերներով շրջապատուած, իր եղբայրական եւ հոգածու ղեկավարին՝ Անդրանիկի ձեռքը բռնած:

Այսպէս, Անդրանիկ, եղակի հոգի, մայրական գորովագութ սրտի մը հաւատարմութեամբ ու զեղումով՝ պատուով ու փառքով, Հայոց եպիսկոպոսով եւ վարդապետով, հոգին կը յանձնէ Ուրուփայ Յարութիւնը (Արթիւնը) եւ այն ատեն միայն կը հրահանդէ, թէ հասած է վանքը լքելու պահը:

Որքա՛ն դժուար է դատել մարդը, բայց մանաւանդ Փէտայիններու խումբի մը զեկազարը, որ պէտք է ցոյց տայ դաժան եւ խրոխտ երեւոյթ, երբ ան ունի ամենէն քնքոյշ սիրտը:

Անդրանիկ, 1915-ին, երբ Վանը ուսւ բանակին կողմէ կը դրաւուի, առանց Վան մտնելու կ'անցնի Վարազայ վանքը, եւ իրեն գործելու շրջան նշանակուած է Մանագիւերտը: Վանի երեւելիները երբ լուր կ'ունենան, կը փութան երթալ տեսնել զինք եւ հրաւիրել, որ Վան մտնէ: Պատգամաւորները զինք կը փնտռեն երկար ատեն եւ ի վերջոյ կը դտնեն ընկուզենիի մը շուքին տակ, զինուորի մը քովը նստած ու թեւը անոր ուսին՝ մտերմական խօսակցութեան մէջ: Զինուորը հիւանդ էր եւ Անդրանիկ եղբոր մը պէս եկած էր գուրգուրաւու անոր վրայ, սրտապնդելու զայն:

Իրեն բարի դալուստի առաջին բառերը արտասանողը կ'ընդմիջէ, հարցնելով, թէ կարելի՞ է շուտով բժիշկ մը գտնել, — «Բժիշկ մը, որ տեսնէ Սաքոյի սիրտը, անոր սիրտը ոսկիէ է, Տիւմանի մէջ առիւծի սրտով նա կուռեցաւ»:

1918-ին Անդրանիկ՝ երեսուն հազար զաղթականներով՝ դէպի Վասպուրական եւ Զուլամերկ զաղթի ատեն, Աւարայրի պատմական հողին վրայ կը հանդիպի թրքական վերակազմուած բանակի մը՝ Ալի Իհսան փաշայի հրամանատարութեան տակ: Պոյի ճակատամարտը կը սկսի: Թշնամին շատ աւելի զօրաւոր է: Անդրանիկ կը ստիպուի տալ նահանջի հրաման, դոյզն հաւանականութիւն կայ, որ իր զինուորները մեծ կորուստ ունենան եւ ընկերացող զաղթականութիւնը վտանգուի:

Անդրանիկ նման պարագաներուն՝ իր զօրքին վերջապահ է:

Եօթը թնդանօթ, տասներկու արադահարուածներ իր վրայ լաւուած կը կրակեն, իր ճերմակ ձին մերթ ընդ մերթ կը կորսուի ուսմբերու պայթիւններէն դոյացած ամպերուն մէջ: Կը փարատին այդ ամպերը եւ ճերմակ ձիաւորը միշտ սուրը ձեռքին կը խոյանայ ճակատամարտի դիմ երկարութեամբ, հաւաքելու համար իր ձագերը՝ ողջ կամ վիրաւոր: Կը նշմարէ հողին մէջ կորսուած իր կտրիճներէն մին՝ Վահան Զերազը, որ արադահարուած մը դրկած կը կրակէ դէպի թըշնամին, նահանջել չփափաքողի պաղարիւնութեամբ: Անդրանիկ կը մօտենայ, իր սուր դատողութենէն չի վրիպի, որ թշնամիին դանդաղաշարժութիւնը այդպիսի հրազէններու պատճառաւ կրնայ միայն

բացատրուել· կը կարծէք, որ ինչպէս ուրիշ հրամանատարներ, վերջապահ գունդ մը զոհելու փորձի՞ն պիտի ենթարկուի: Ոչ: Ոչ իսկ մէկ հատ պիտի ուզէ զոհել ան, եւ կը հրամայէ զինուորին լքել զնրացիրը եւ անմիջապէս միանալ վերջապահ իր ընկերներուն:

Կը պատմեն ականատեսներ, որ Անդրանիկ կարգապահութեան դէմ մեղանշումներու եւ ա՛յլ աւելի ծանր յանցանքներու ատեն երբ կը ստիպուի ապտակել կամ պատժել իր մէկ զինակիցը կամ զինուորը, անմիջապէս յետոյ կ'առանձնանայ, իր լալը եւ յուզումը պահելու համար:

Չանդեգուրի մէջ է Անդրանիկ: Տեղույն հայ ազգաբնակչութիւնը ազատած է ամէնօրեայ ջարդի սարսափէն: Ղարապաղն ու Շուշին կը հրաւիրեն հերոսին, որ անցնի այլեւս իրենց կողմերը:

Հագիւ թէ շարժած է ան դէպի հիւսիս, երբ Պաղուի Թաթարներու դրդումով հոն կը զրկուի անգլիական զինուորական պատուիրակութիւն մը, վերջ տալու համար Անդրանիկի «աւազակութիւններուն»: Թաթարները ջանք չեն խնայած «պատշաճ» ձեւերով ներկայացնելու Անդրանիկն ու իր զինուորները:

Տասնեակներով հայ զիւղերու բնակչութիւնը ճնշումի տակ, կամ մօտալուտ փորձանքներու սպառնալիքներուն հետեւանքով, լքած տուն տեղ՝ եկած բոլորուած է իր շուրջը, ուր ապահով է, բայց ո՛չ ուտելիք կայ, ոչ պառկելու տեղ: Այս թշուառութեանց ականատես՝ մտահոգ է Անդրանիկ եւ տխուր: Յայանուող զինուորական չքախումբին պաղ եւ նոյնիսկ թշնամական երեւոյթը բոլորովին աւելորդ մտատանջութիւն մըն է իրեն համար: Մինչդեռ Թաթարական շահատակութեանց տխուր լուրերը դադար չունին: Անդրանիկ զիտէ, որ յարմար թարգման մը իսկ չունի եւ լուր կը ձամբէ, հրահանգելով որ անդլերէն գիտացողները իրեն ներկայանան՝ շեշտելով զործին կարեւորութիւնը:

Ընկերներու պնդումներուն եւ թախանձանքներուն տեղի տալով, զինուոր մը ի վերջոյ կը համակերպի ձգել Մեղրիս եւ իր զինակիցները, որոնց հետ ուխտած են անբաժան մնալ մինչեւ մահ:

Նորեկ թարգման թեկնածուն կը ներկայանայ Անդրանիկին: «Ես քեզ տեղ մը տեսած եմ, կ'ըսէ Անդրանիկ, այո, միտքս ինկաւ, Խոյի մէջ էք, ինչո՞ւ կը ստես անունդ, լաւ անդլերէն գիտես կ'ըսեն քովէս փսփսալով եւ անունդ տալով, տեսա՞ր որ պէտք է իր ողջ մնալ: Ըսէ նայիմ, ի՞նչ ըրիր զնոյնիցը»:

— Բանակին մէջն է, փաշա, ահա իր թիւը:

Անդրանիկ այլափոխուած, դէմքը մարմարի պրկութեամբ՝ կը դռոայ. «Անհնազանդ քեզի, եթէ դուն ալ միւսներուն նման կ'իսկատար անդլերէն գիտես, վայ եկեր է քեզի. ճիշդ անունդ տուր»:

— Վահան Գասպարեան, փաշա:

«Այսպէս, ստախօս ալ ես, Վահան Չերազ է անունդ ըսուեցաւ քովէս, որդին Գասպարի: Երրորդ յանցանքիդ շան սատակ կ'ընեմ քեզ»:

Հիմա գնա ըսէ սա քու «նէնթըլմէն»ներուդ, որ իրենց պատասխանը պիտի տրուի վաղը առաւօտեան արշալոյսին, իսկ ժամէ մը զինուորական խորհուրդ կայ, դուն ալ պէտք է ներկայ ըլլաս՝ քանի ատեն որ այդ մեր ազնիւ «զաշնակիցները» մեր մէջ են, պէտք է տեղեակ ըլլաս մեր բոլոր հոգերուն»:

— Բայց, փաշա, արշալոյսին, Անգլիացիք... ի՛նչ պէտք կայ այդքան կանուխ...:

«Կանուխ չէ, զինուո՞ր են ատոնք՝ թէ զբօսաշրջիկներ...: Տղա՛յ, յանցանքներդ կը կրկնես, գիտցիր որ պէտք է հնազանդիս կուրօրէն, թէ ոչ վերադարձիր ուրիշ եկած ես»:

Փողովին մէջ Անդրանիկ կ'որոշէ, առանց Անգլիացիներու գիտութեան, զիչերանց վաշտ մը զինուոր փոխադրել մօտակայ գիւղերէն մին՝ ուր նոր ժամանող զաղթականներու սովորական թշուառ տեսարանը իր հոգին ալեկոծած էր նոյն օրը, զաղթականներ՝ որոնց լքած շէն տուները կը տեսնուին ձորին միւս կողմը՝ լերան լանջին:

Արշալոյսին Անդրանիկ իր ձին հեծած եւ պաշտօնական համագրեատով, հագիւ տասնեակ մը իր անմիջական հետեւորդներով ընկերացած՝ ճամբայ կ'ելլէ դէպի նշանակուած գիւղը: Անգլիացիք հեծեալ կը տանի իր հետ, ըսելով որ իր պատասխանը պիտի տայ քանի մը վերստ հեռու գանուող գիւղին մէջ:

Կը հասնին նշանակուած վայրը, կռուերթի պատրաստ վաշտ մը զինուոր պատուի կ'առնեն իրենց սիրելի զօրավարն ու հիւրերը, մինչ ճամբուն երկայնքին ու գիւղին մէջ՝ փողոցներու երկայնքին թէ տանիքներուն վրայ՝ մարդկային խեղճներու ահաւոր պատկեր մը կը պարզուի:

Անդրանիկ թեւն երկարելով, Անգլիացիներուն ցոյց կու տայ հեռաւոր, գլխացի գիւղը եւ կ'ըսէ.

«Ահա, պարոններ, իմ պատասխանը. այս ժողովուրդը, որուն թշուառութեան ականատես էք, որ իր գլխուն վրայ ծածք չունի, նաեւ բերանը դնելու ցամաք հացի կտոր մը, մեծ մասամբ այդ գիւղէն փախած եւ մեր «աւազակի» սուրին ապաստանած է այդ գիւղը՝ գոլտ հայաբնակ՝ զբաւուած թաթարներու կողմէ, որոնց օգտին եկած էք միջամտելու մեզ մօտ, դեռ շատ մը գիւղեր արժանացած են նոյն չար բախտին, սակայն գանոնք մէկիկ-մէկիկ ձեզի ցոյց տալու հնարաւորութիւնը չունիմ: Այդ բոլոր գիւղերը թաթարներուն կողմէ քանդուած, թալանուած են, իսկ բնակչութենէն մաս մը, որ չէ կրցած մեզ մօտ ապաստանիլ, ջարդուած է առանց տարիքի եւ սեռի մէջ խորութիւն դրուելու: Ժամէ մը այդ գիւղը պէտք է զբաւուի, որպէս»

զի այս թշուառները իրենց սեփական տուները վերադառնան եւ իրենց կարգին պատասպարան տան նաեւ անո՛նց, որ դեռ տուն-տեղ չունին : Մենք կը փափաքինք անշուշտ, որ ատիկա ըլլայ առանց կռիւի ու եթէ կարելի է նոյնիսկ ձեր միջնորդութեամբ : Մեզի համար տարբեր ընտրութեան կարելիութիւն չկայ, ինչպէս կընաք զնահատել դուք ինքներդ» :

Անգլիացիք կը միջամտեն ի դուր, ոչ թէ Թաթարներու մօտ՝ այլ սպառնալով Անդրանիկին՝ Անգլիոյ եւ իր կայսրութեան անունով : Անոնք Թաթարներու կողմէ զրկուած են «աւազակ» մը զինաթափ ընելու եւ ոչ թէ անոր պայմանները լսելու :

Անդրանիկ մէ՛կ կայսրութիւն կը ճանչնայ, իր ժողովուրդին կեանքն ու անոր ապահովութիւնն է ատիկա, եւ ան կը հպատակի մէ՛կ հրամանի մը միայն՝ այն որ իր սրտէն կու գայ : Իր թագաւորը՝ իր թշուառ այլ հարազատ ժողովուրդն է :

Եւ Անդրանիկ կը դործադրէ իր որոշումը : Գիւղը յարձակումով կը գրաւուի, Թաթարներ գերի կը բռնուին : Անդրանիկ, առանց մէկուն քիթը արիւննելու՝ Անգլիացիներուն կը յանձնէ գերիները, պայմանով, որ անոնք նոյն օրն իսկ հեռացուին հայկական շրջանակէն :

Դեռ սառոյցը կտորուած չէ, ըսենք փշրուած չէ :

Անդրանիկ կը հրահանդէ, որ Անգլիացիք ընդունելու հանդիսաւոր ճաշկերոյթի պահն է այլեւս : Գիւղին մէջ մէկ հատիկ խոշոր բակ կայ, հոն կը սարքուի սեղանը : Ներկայ են՝ անգլիացի սպաները, Անդրանիկ իր սպայակոյտով եւ թարգմանը : Երբ սեղան նստելու հրաւէրը կը կրկնուի, անգլիացի սպաները կը հրահանգեն իրենց ընկերացող պարզ զինուորներուն դուրս դալ սրահէն : Զինուորները կը սկսին դուրս ելլել, Անդրանիկ կը նշմարէ եւ թարգմանը կը բացատրէ խնդրոյն էութիւնը :

«Ըսէ՛ սա մարդոցը, որ պատերազմը շահողը զինուորն ալ է, եւ հոս, Հայաստանի լեռներուն մէջ, զինուոր եւ սպայ միեւնոյն Աստուծոյ ստեղծադործութիւններն են» : Եւ Անդրանիկ ներս դարձնել կու տայ անգլիացի զինուորները, կը նստեցնէ նոյն սեղանին եւ իր բաժակը կը պարպէ, Անգլիոյ թագաւորին, ժողովուրդին, կայսրութեան բանակի հրամանատարութեան, ինչպէս նաեւ անգլիացի զինուորին կենացը :

Այդպէս էր Անդրանիկը, մարտիկն ու մարդը : Եւ անթիւ են նման դրուագները :

Յեղափոխութիւն է, օրուան կարգախօսն է «դէպի տուն» : Ռուս զինուորը կը թողու ճակատը թշնամիին առջեւ բաց, եւ զէնքը՝ որուն դեռ պէտք ունի, շալակն առած կը դիմէ տուն :

Ճակատներէն մին է Հայաստանը : Անդրանիկ ժողովի մը կը



հրաւիրուի, ուր կ'առաջարկուի Պարսկաստանէն ու ա'յլ տեղերէ Հա-  
յաստանի ճամբով անցնող ոուս զինուորը զինաթափ ընել՝ զէնքի ու-  
ժով խլելու համար անոր միակ զէնքը: Անդրանիկ համաձայն չէ:

«Մեր միակ բարեկամը Ռուսիան կրնայ ըլլալ, այդ ազիտաբեր  
ձեռնարկով զա՞յն ալ կ'ողջէք հեռացնել մեզմէ: Պիտի հետեւինք ու-  
րեմն Թաթարներու օրինակի՞ն, որոնք Գանձակի մէջ հինգ հազար  
ուս զինուոր կոտորեցին: Ռուսիան մեզի թողուց հսկայ ռազմամը-  
թերք, հարստութիւն, ուտելիք ու հագնելիք, մենք պէտք չունինք  
անոր զինուորի սեփական հրացանին, մենք անոր բարեկամութեանը  
պէտք ունինք: Եթէ զինաթափ ընել պէտք է, թող Սեյմը Թիֆլիզի մէջ  
զինաթափ ընէ զանոնք: Հոս, Հայաստանի մէջ այդպիսի քայլ մը,  
մեր ցեղին, մեր անունին, մեր ասպետական ոգիին եւ ազգային  
առաքինութիւններուն հակառակ արտայայտութիւն մը պիտի ըլլայ»:

Աւելորդ չէ յիշել, որ այդ հինգ հազարին փոխարէն՝ Ռուսերը  
կոտորեցին երեսուն հազար Թաթարներ, երբ վերստին Կովկաս մտան:

## ԱՆԴՐԱՆԻԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ ԵՒ ՈՒՂԻՆ

Հոս, Եւրոպայի մէջ շատ անգամներ լսած ու կարդացած ենք,  
որ բարձրագոյն կրթութեան տէր մարդիկ անյօր կ'ըլլան շուտափոյթ  
որոշումներ տալու եւ յստակատեսութենէ զուրկ են, մէկ խօսքով՝  
անոնք մեծ մտքեր են, բայց ղեկավարի, առաջնորդի ջիղ եւ յամա-  
ուութիւն չունին, մինչդեռ նախակրթարան միայն տեսած, օժտուած  
եւ տաղանդաւոր մարդիկ առհասարակ աւելի պայծառօրէն կը տեսնեն  
իրենց հետեւելիք ուղին:

Այս վարկածին կամ սխալ ըլլալուն քննութիւնը ձգելով իմաս-  
տասէրներու վիճաբանութեան եւ ընդունելով որ Անդրանիկ նախա-  
կրթարան մը տեսած էր լուրի, չենք կրնար չհիանալ իր պայծառատե-  
սութեան՝ հիմնուած թափանցող տրամաբանութեան մը վրայ, որ  
առհասարակ յատուկ է բարձրագոյն կրթութիւն ստացած մարդոց,  
որոնք տեղեակ են տիեզերական պատմութեան մասն ու մեծ դէպքե-  
րուն եւ որեւէ որոշումէ առաջ նկատի կ'ունենան շարք մը հաւանա-  
կանութիւններ:

Անգամ մը, որ թափանցած ենք իր նկարագրին խորերը, արդէն  
կը տեսնենք, որ Անդրանիկ պատերազմասէր մը չէ, զէնքի մարդ չէ,  
եւ եթէ պէտք էր գործածել զէնք՝ եւ եղաւ լաւագոյն ռազմիկ մը, ան  
երբեք չէր անտեսեր քաղաքական պայքարի ուժը, կարեւորութիւնը  
եւ ի վերջոյ՝ անով միայն հաստատ հիմերու վրայ իրազործուելիք  
մեծ նպատակը, — հայ ժողովուրդին ազատութիւնը:

Անդրանիկ ունեցած է հիմնական որոշ ուղի մը :

Մեր ժողովուրդը ճնշող մէկ պետութիւն կար, թրքակա՛նը : Ան էր միակ թշնամին եւ ծայրայեղ յիմարութիւն կը հռչակէր շատ մը պետութիւններու դէմ միանգամայն զէնքի եւ քաղաքական պայքարի մտնելը : Քիւրտ, Պարսիկ եւ Ռուս պէտք էին նկատուիլ որպէս Հայերու բարեկամ : Եթէ անկեղծօրէն այդ անկարելի էր, անհրաժեշտ էր խուսափիլ որեւէ զրգոութիւն ստեղծելէ : Քիւրտին դէմ կռիւլը, տգէտ եւ չարազործ աւատապետներու հետ ըլլալիք անխուսափելի պատժական միջոցն էր :

Անդրանիկ 1904-ին երբ կը թողու Սասունը եւ Վանէն Պարսկաստանի վրայով Կովկաս եւ անկէ ալ ժընեւ կ'անցնի եւ իր քայքայուած առողջութիւնը կազդուրելու ստիպողականութեամբ չի կրնար մասնակցիլ Կովկասի հայ-թաթարական կռիւններուն, ունէր սակայն այդ հարցի մասին իր յատուկ տեսակէտը, — այդ կռիւններէն խուսափելու միջոցը դտնել՝ ձարական կառավարութեան մէկ խաղը տեսնելով անոր մէջ : Եւ իր այդ տեսակէտը ճիշդ էր :

1904 Օգոստոսին, երբ Անդրանիկ Մշոյ դաշտը կը թողու եւ Աղթամարէն Վան կ'անցնի, Թուրքերը, որ ամէն տեղ կը լրտեսեն Ֆէտայիները, հայ դաւաճաններու միջոցաւ, անոր Վան հասնելուն կը տեղեկանան եւ կը սկսին նեղել հայկական թաղամասերը եւ հոն զինուորներ տեղաւորել : Անդրանիկ կը հեռանայ Վանէն, համոզում մը իր հետ տանելով, որ հայ յեղափոխութիւնը առժամաբար որեւէ ներքին խարխիս չունի, ո՛չ զէնք, ո՛չ զինուոր, ուստի պէտք է մեծ պետութեան մը կռիւնի :

Երբ Անդրանիկի կ'ըսուի թէ, օտար պետութիւններ Սասնոյ առաջին եւ երկրորդ դէպքերու պահուն խոստացած էին միջամտել եւ չեն ըրած, ան կը պատասխանէ, որ անոնք ոչ մէկ խոստում ըրած ըլլալու են, մե՛նք է որ ինքզինքնիս խարած ենք :

«Երբ ես Սասունէն հրացան եւ փամփուշտ կը պահանջէի, կ'ըսէ Անդրանիկ, ինծի կը զրկէին թերթերու յօդուածներ եւրոպացի հայասէշներու կողմէ ստորագրուած : Հարիւր մոսիւնով, քանի մը պէրտաններով, աչքը փամփուշտի ճամբան, պետութեան մը դէմ կռիւ մղել կարելի չէ» :

Անդրանիկ այս քարոզութիւնները կը տարածէ ամբողջ տարի մը, Պարսկաստանէն Կովկաս, Պալքաններէն մինչեւ ժընեւ : Ան համոզուած է, որ ձարական իշխանութիւնը նոյնպէս կը ձգտի՝ Հայն ու Թաթարն ու Թուրքը շարունակ թշնամիներ տեսնել :

Զէնքով ու մարդով իր կողմէ եղած օգնութեան կոչերուն անարձագանք մնալը, ան կը վերադարձրէ ձարական կառավարութեան չկամութեան՝ դէպի Հայոց ազատազրման բոլոր փորձերուն, եւ ատոր համար է, որ 1905-էն 1907 թուականներուն Անդրանիկ եւ իր բոլոր

Փէտայի ընկերները դէմ եղան Դաշնակցութեան կովկասեան ուղեգր-  
ծին: Ռուսական կայսրութեան դէմ պայքարելու այդ որոշումին մէջ  
ան տեսաւ հզօր վտանգ մը՝ նոր թշնամիի մը ստեղծումը, արդէն իսկ  
անբաւարար ուժերու՝ ցրուումը:

Անդրանիկ համոզուած էր, թէ ազգային ինքնուրոյն կեանք եւ  
ի վերջոյ անկախութիւն հնարաւոր էր, միջազգային դաշնագրու-  
թեամբ՝ միայն Հայաստանի թրքական սահմաններուն մէջ: Եւ մենք  
այսօր ականատես ենք այն իրողութեան, որ Սովետական Հայաստանէ  
մը լաւագոյնը երազել կարելի չէ: Ազատ Հայաստանը՝ Անդրանիկի  
փափաքած ա՛յն հողամասին վրայ կրնար գոյութիւն ունենալ, որ այ-  
սօր բոլորովին ամայի է, աւերակ ու առանց Հայու:

1904-ին, ան շատ լաւ կը դիտակցէր, որ հայ ժողովուրդի փըր-  
կութիւնը պէտք էր դար բարեկամ պետութիւններու օգնութեամբ: Ան  
լաւ ըմբռնած էր, թէ ինչո՛ւ 1894-ին Մուշը ջարդուեցաւ եւ 1904-ին  
Սասունը ընկճուեցաւ իր կարգին: Ի դուր սպասած էր խոստացուած  
զէնքերուն եւ զինուորին, ի դուր սպասած էր, որ Վան, էրզրում, եւ-  
այլն միաժամանակ ըմբոստանալով՝ թօթափէին թրքական անարդ  
լուծը:

Այս ճշմարտութիւններով առաջնորդուած էր, որ Անդրանիկ  
մասնակցեցաւ Պալքանեան Պատերազմին եւ 1914-ին, Մեսրոպ Եպիս-  
կոպոսի, Սամսոն Յարութիւնեանի եւ Սատիսեանի հրաւէրը ընդունեց  
ու մեկնեցաւ Թիֆլիզ, անցնելու համար հայկական կամաւորական  
առաջին գունդին գլուխը:

Եւ հետզհետէ Անդրանիկ որոշապէս եւ ճշդիւ կը գնահատէր ի-  
րերու դրութիւնը: Երբ ան կը յայտարարէր Վանի ժողովուրդին ըլ-  
լալ աջալուրջ, թէ Վանի գրաւումով ամէն բան վերջացած չէ, թէ  
պատերազմը շատ մը անակնկալներ ունի, երբ կ'ըսէր, թէ հայկա-  
կան բանակ գոյութիւն չունի, թէ հեռու պէտք է մնալ չափազան-  
ցութիւններէ, որ ամէն ինչ կախում ունի Ռուսերու ընթացքէն,  
որոնք կրնան ուղած ատեննին քաշուիլ, ան մարզարէանալու ցան-  
կութիւն չունէր, այլ պարզապէս կացութեան իրատես գնահատու-  
մը կու տար:

Ի՞նչ կ'ընէին միւս կողմէ մեր բուն քաղաքագէտները: Միամիտ  
եւ խանդավառ անհողութեամբ ցուցամոլութիւն, որոնց մասին խօ-  
սիլն արդէն անօգուտ եւ հետեւաբար աւելորդ է: Անդրանիկ զըժ-  
բախտաբար իրաւունք ունէր: Չէ՞ որ ան անգամ մը Վանէն կէս օր  
հեռու տեղ մը հասած ու յանկարծ նահանջելու հրաման էր ստացած:

Անդրանիկ նախատեսած էր նաեւ կամաւորական գունդերուն  
լուծումը՝ որ տեղի ունեցաւ 1916 թուին: Արդարեւ, երկրորդ ան-  
գամ երբ դարձեալ Վանը կը գրաւուէր եւ հայութիւնը իր տեղը կը  
վերադառնար, ան կը յանձնարարէ, ուր որ անկ է, աչքերը լայն  
բանալ, անգամ մըն ալ ջարդի չենթարկուելու համար:

Կամաւորական դռնդերու լուծումով կը սկսի Անդրանիկի բուն քաղաքական դործիչի կեանքը: Ո՛ւր ան կը պտըտէր, ամէն քայլափոխի կը դանէր թրքահայ զաղթականութիւն մը, երեսի վրայ կամ բախտին ձգուած: Իւրաքանչիւր անհատ թէ հատուած նման պարագաներու մէջ իր սեփական հոգերն ամոքելով զբաղած էր: Անդրանիկի սեփական հոգը համայն հայ ժողովուրդին, նման պատմական շրջանի մը կրած չարիքներէն՝ յարութիւն առնելուն սատարելու հոգն էր:

Բազմապիսի էին դժգոհութեանց պատճառները:

Կամաւորական շարքերը լուծուած, զանազան երկիրներէ Կովկաս անցած երիտասարդութիւն մը կար՝ անգործ, թափառական, դժգոհ, եկած էր վրիժառութեան եւ հայրենիքի պաշտութեան լուսալուծ, ու չէր կրնար հանդուրժել իր բոլոր իղձերուն քայքայուելուն:

Անդրանիկ շուտով թափանցեց տիրող հողերանութեան: Չկար ուրիշ որեւէ հեղինակութիւն, որ կարենար նոր կորով, նոր հաւատք ներշնչել հայութեան, նորահաս անապսեւրի պատուհասին՝ թուրք եւ դերման ոյժերու դէպի Կովկաս յառաջխաղացման դիմադրաւելու համար, ուստի զինուորին պաշտպանութենէն զրկուած:

Հակառակ դէպքերու շարարաստիկ հանդամանքին, Անդրանիկի խոր համոզումն էր թէ՛ քաղաքական խառնաչփոթ պայմանները կը պարտադրեն, որ թրքահայութիւնը, այլուր եւ նամանաւանդ Կովկասի մէջ, իր սեփական ճակատագրին տէրը կանդնելու էր, որ՝ հայկական դատի մը դոյութիւնը կապուած է աւելի քան երբեք, թրքական հողամաս կազմող Հայաստանի հարստահարուած ու կոտորուած հայութեան անունին, ուստի պէտք չէ ուստական յեղափոխութեան պատճառաւ ստեղծուած անկայուն վիճակը վերջնական նկատելով՝ քաղաքական նոր սխալներ դործել՝ Հայոց իսկական դատը իր միակ ճամբէն շեղեցնելով թուրք դիւանապիտութեան ջաղացքին ջուր տանիլ, եւ ուստի կառավարութեան առջեւ դժուարութիւններ յարուցանելով՝ անոր բարեացակամութեան փոխարէն՝ թշնամական վերաբերմունքին արժանանալ:

Այս ողջմիտ տեսակէտը՝ Անդրանիկի կողմէ հրապարակ նետուած, շուտով արձագանդ գտաւ արեւմտահայ շարքերուն մէջ եւ զնահատուեցաւ նոյնիսկ քանի մը ականաւոր թրքահայ Դաշակցականներէ:

Անդրանիկի այս դործունէութեան իբր հետեւանք, կազմակերպուեցաւ թրքահայոց ներկայացուցիչներու համապումար մը, Երեսանի մէջ, ուրիշ ծնունդ առին երկու դործոն մարմիններ՝ «Հայաստանի Ապահովութեան Խորհուրդ» եւ «Արեւմտահայ Ազգային Խորհուրդ» անուններով:

Այս փորձերով, Անդրանիկ, միշտ անվհատ, թէ՛ զինուորական

եւ թէ քաղաքական ուղիներով կը ջանար հետապնդել միակ իրաւա-  
կան դատը՝ Թրքահայոց ինքիբը, որուն յաջողութեան արդիւնքէն  
պիտի յարութիւն առնէր Ազատ եւ Անկախ Հայաստան մը :

Ուստի գոյութիւն ունեցող միակ հայկական դատը կար ու կը  
մնար՝ Հայոց եւ Թուրք Կայսրութեան միջեւ լուծուելիք հարց մը :

Իր այս տեսակէտը անմիջապէս արժանացած էր Ռուս ժամա-  
նակաւոր Կառավարութեան գնահատութեան, որուն անդամները թէ-  
եւ ընկերվարականներ, սակայն երբեք պիտի չհանդուրժէին նախկին  
Ռուսական Կայսրութեան մաս կազմող հողամասին վրայ անկախ  
Հայաստանի մը ստեղծուելուն, ինչպէս որ շատ դիւրաւ կարելի է  
եզրակացնել, նոյնիսկ այդ կառավարութեան անկումէն տարիներ  
վերջ՝ անոր մաս կազմող փախստական անդամներուն հրապարակաւ  
արտայայտած մտքերէն, ինչպէս պարզօրէն յայտնի պիտի ըլլայ նա-  
եւ բոլոր անոնց համար, որոնք ձանձրութիւնը յանձն պիտի առնեն  
կարգալով, այդ ժամանակաւոր կառավարութեան անդամ, ինքզինք  
ծայրայեղ ընկերվարական յորջորջող, արտաքին գործոց նախարար՝  
Միխիլուֆովի տասնեակ տարիներ յետոյ գրած Ռուսաստանի Պատմու-  
թիւն անունը կրող գիրքը :

Ուրեմն, չնորհիւ Անդրանիկի եւ իր անմիջական հետեւորդներու  
ողջմտութեան, այդ ժամանակաւոր կառավարութիւնը, ճանչցաւ  
Թրքահայ հատուածին իրաւական գոյութիւնը, արտօնեց եւ ազատ  
արձակեց Սիպերիա դատուող Թրքական բանակի հայ զերիները, որ  
երթան պաշտպանեն իրենց ազգակիցները, հաւանութիւն տուաւ՝ որ  
Հայաստանի Ապահովութեան Խորհուրդը բանակ կազմակերպէ գուտ  
հայ ծագում ունեցող զինուորներով, եւ չհալածեց հայ դաշխակա-  
նութիւնը՝ այլ խոշոր դումարներ դրաւ «Արեւմտահայ Ազգային Խոր-  
հուրդ»ի տրամադրութեան տակ ու չնորհիւ այդ նպաստներուն՝  
Թրքահայ դաշխականը պահ մը եւս կրցաւ ապրիլ եւ յուսալ իր Հա-  
յաստանը՝ պայմանաւ որ ան ըլլար ռուսական 1914-ի սահմաններէն  
գուրս, Արեւմուտք :

Անդրանիկ, անտարակոյս եղաւ այդ օրերու հայ քաղաքական  
թէ զինուորական գործունէութեան յառաջապահը :

Հագիւ թէ կազմուած էր «Հայաստանի Ապահովութեան Խոր-  
հուրդը», երբ Փարիզէն Փրանսական ծածկագիր հեռագրով մը կը  
ստացուէր այս անգամ Պօղոս Նուպարի պատգամը .

«Եթէ Թրքահայերը իրենց սեփական ոյժերովը պաշտպանելու  
ելլէին իրենց սահմանները, դաշնակիցները պիտի ճանչնային անոնց  
անկախութիւնը եւ պիտի պաշտպանէին զայն», որ կու գար չեչոե-  
լու Անդրանիկի յանկերգը՝ սուրը ձեռքին, Հայոց Աշխարհի նա-  
խախնամբար պարպուած բերդերուն մէջ ամբացած՝ դիմաւորել  
զալիք հաշտութեան վեհաժողովը :

Այս էր միակ ճշմարտութիւնը եւ այս պէտք էր ըլլար միակ ուղեգիծը ամէն Հայու :

Այդ օրերուն , Անդրանիկի յստակատեսութիւնն ու իրատեսութիւնը արհամարհողները , այսօր հայ ժողովուրդի շահերուն տեսակէտով՝ ամենէն վնասարար պայքարը կը մղեն , երբ Սորհրդային Հայաստանը կը դատապարտեն իր էութեանը մէջ , մինչ այն օրերուն իրենք ամենահլու կամակատարներն էին կովկասեան երկու միւս ժողովուրդներու ղեկավարներուն՝ մասնաւորաբար Վրացի Ազգայնական Ընկերվարականներուն , որոնց հրամանով , Հայու արիւնով ներկուած հողերուն անառիկ բերդերը կը յանձնէին դարաւոր թշնամիի մը , որուն քայլերովը հայ մնացեալ ժողովուրդին մասն էր որ կը յառաջանար :

«Սքանչելի» ուղեգիծ մը ազատութեան եւ անկախութեան ճրգտող յեղափոխական գործիչներու յատուկ , որոնք Հայաստան մը ստեղծելու յաւակնութիւններ ալ ունեցան մետասաներորդ ժամուն միայն :

Փաստօրէն ուրեմն՝ տարբեր ուղղութիւն չէր կրնար գոյութիւն ունենալ , քանի որ կովկասահայ ղեկավարութիւնը Թիֆլիսէն Բագուցրուած , Հայաստանէն դուրս՝ շղթայուած էր զրացի օտար ժողովուրդներու ծոցին մէջ , որոնք աւելի նպաստաւորուած էին քաղաքական տեսակէտով , այլ ունէին նաեւ ձեռներէց ղեկավարներ :

Ինչպէ՞ս կը մոռնան , եւ ի՞նչ շուտ կը մոռնան՝ այս իրողութիւնները անոնք , որ այսօր Սովետական Հայաստանի պարզեւած առաւելութիւնները կ'ուրանան , երբ ուրիշ բան կարելի չէր յուսալ եւ որ ըստ Անդրանիկի տեսութեան՝ Ռուսական Կայսրութեան մաս կազմող Հայաստանի հողին վրայ մեր բոլոր ակնկալութիւններէն լաւագոյնը կը հանդիսանայ :

Մեղաւո՞ր էր Անդրանիկ , որ ճիշդ ըմբռնեց եւ կրցաւ ըստ էութեան գնահատել այսօրուան միակ Հայաստանը :

Այդ իսկ պատճառով , զէնքը ձեռքին , հաշուեյարդարի օրը , իր սեփական միջոցներով հայրենի հողէն գէթ մաս մը ազատագրած , — այդ էր պայմանը Ազատ եւ Անկախ Հայաստանի մը կարելիութեան , եթէ հայ ժողովուրդը իր վերջին ճիգը չխնայէր՝ որքան ալ արիւննաբամ :

Այդ դադափարը իրականացնելու ճամբուն վրայ , Անդրանիկ , վերապահութիւն եւ վարանում չճանչցաւ , իր տեսակէտները քարոզելու համար հիմնեց «Հայաստան» օրաթերթը Թիֆլիզի մէջ , որուն խմբագիրն էր , հազիւ 25 տարեկան , երիտասարդ համալսարանական մը , խանդավառ եւ հայրենասէր մտաւորական մը՝ Վահան Թոթովենց , որ Ամերիկայի իր հանգիստը եւ ուսումը անաւարտ թողելով , եկած էր կուռելու իր ազգին ոչնչացումը երզումած թշնամիին դէմ : Թերթին խմբագրութեան եւ վարչական գործերուն մաս-

նակցողները նոյնպէս երիտասարդ թրքահայ մտաւորականներ էին՝ Եղնիկ Քաջունի, Լեւոն Թիւթիւնճեան, Հրաչ Զարգարեան, Մանուկեան, իսկ շարժման համակիրներէն մասնաւորաբար՝ Երուանդ Զոփուրեան, Դշխոյեան, Յակոբ Տէր Զաքարեան եւ ուրիշներ :

«Հայաստան» թերթի հրատարակութենէն վերջ, Անդրանիկի եւ Դաշնակցական Կուսակցութեան Բիւրոյի միջեւ անուանապէս դոյութիւն ունեցող կապերը վերջնականապէս խզուեցան, ու հոն Անդրանիկ հրատարակեց իր հրաժարականը Դաշնակցութենէն, գրուած ու պատրաստ 1907 թուականէն ի վեր, որ Ռոստոմի պնդումներուն վրայ մինչ այդ լոյս տեսած չէր :

Անդրանիկ իր թերթին մէջ կը ջատագովէր Թրքահայաստանի ազատութեան հետապնդումը միայն, — ազատ եւ անկախ հայրենիք մը, բոլոր հայութեան համար, որուն յաջողութեան համար անհրաժեշտ էր ազգային միութիւն՝ առանց որեւէ խտրիի :

Այս քարոզութիւններուն իբր հետեւանք, կազմուեցաւ Թրքահայոց բոլոր հոսանքները ներկայացնող պատգամաւորական ժողով մը, մասնակցութեամբ Հայոց վախճանեալ Կաթողիկոս Գէորդ Զ. ի, այն ատեն եպիսկոպոս, եւ Տիկին Զապէլ Եսայեանի: Այս համագումարէն ծնունդ առած «Արեւմտահայ Սորհուրդ»-ի դիմումներուն եւ ջանքերուն շնորհիւ, Կովկասի ոռւս հրամանատարութիւնը բացաւ իր զինապահեստները՝ թրքահայ ազատ արձակուած զերիններէն կազմուելիք բանակը զինելու համար, եւ Անդրանիկ նշանակուեցաւ այդ բանակին հրամանատարը՝ զօրավարի աստիճանով :

Անդրանիկի այս բանակը, բարեկամ Ռուսիի կողմէ զինուած, հայ առաջին կիսանկախ բանակն էր, որ Կարնոյ մէջ մղուելիք յաղթական զիմադրութեամբ կոչուած էր դառնալու ատաղձը ազատագրուած հայրենիքին :

Եւ սակայն, ոռւս բանակը կը պարպէ Թրքահայաստանէն կարելոր հողամաս մը, ուրկէ դուրս չպրտած էր նախապէս թուրք բանակն ու վարչութիւնը, ունենալով հանդերձ անսպառ ռազմամթերք, պաշար, զօրք ու զօրականներ, զորս յանձնեց Հայերուն :

Հայ ժողովուրդը թափելէ յետոյ գետերով արիւն, վերջին մէկ կաթիլը սակարկեց սակայն եւ դիտապաստ ինկաւ հասնող թշնամիին ոտքերուն տակ : Թէ ի՞նչպէս :

Երբ կորստեան վերջին կէտին հասած, Անդրանիկ ու Նազարպէկով զօրավարները կը խորհրդակցին ու կը յանդին այն եզրակացութեան, որ առանց մահապատժի օրէնքին, քայքայուող բանակներն ու նոր կազմուելիք այլատարր զինուորական գունդերը կարգապահութեան մէջ պահել ու կռուի հանել անկարելի է, անոնք միասնաբար կը զիմեն ազգային քաղաքական կազմակերպութեանց, եւ, ո՛վ դժբախտութիւն, այդ իրաւունքը ստանալ չեն կրնար, հանրային պարտէզներու եւ շքեղ հիւրասրահներու ընդունակ մեր «յե-

դափոխական» գործիչներէ բաղկացած ազդային վերին մարմիններուն կողմէ :

Ահա թէ ինչո՛ւ, եւ ի՛նչպէս, սովալլուկ եւ ուժասպառ, ջարդուած ու թափառական թրքահայութիւնը՝ իր Անդրանիկով, ուսասահայութիւնը՝ իր անկազմակերպ ու օտարացած պոլիթուազիայով, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ աջի, կեդրոնի, ձախի աննպատակ ղեղերումներով եւ իր ղեկավարներուն անկարողութեամբն ու զոհաբերութեան ոգիի պակասին հետեւանքով, չկրցան խլել իրենց հայրենիքի ազատութիւնը, եւ ներքին թէ արտաքին թշնամիները անզամ մըն ալ յաջողեցան զգետնել հայութիւնը :

Անդրանիկի կրքոտ ցանկութիւնը՝ Կարնոյ բերդերէն, Վանէն ու Բաղէշէն հարիւր եւ մէկ թնդանօթի ցնծութեան հարուածներով յաղթութիւնը ողջունելու տենչը՝ մնաց երազ :

Անդրանիկ հանդիպեցաւ այս ճակատին վրայ ամենանենգաւոր թշնամիին, անմիաբանութեան, անզիտակցութեան, անիշխանականութեան ու փոքրոգութեան, եւ իր անկումին հետ տարաւ (կը յուսանք առժամաբար) Թրքահայաստանը ազատագրելու մեր մեծագոյն յոյսերը՝ հակառակ թափուած ահաւոր զոհաբերութեանց :

Եւ իր ժողովուրդին ծառայելու սուրբ գործին մէջ հետեւողական այդ մարդը, երբ ստիպուեցաւ քաշուիլ Ամերիկա, Կիլիկիա երթալու իր փորձերը ձախողելէն յետոյ, չդադրեցաւ իր հոգածութիւնը թափելու հայ ժողովուրդի թշուառութիւններն ամօքելու համար, եւ ինքզինքը նուիրեց բազմարդիւն ու օգտաշատ հանգանակութիւններու յաջողութեան :

Աստուածներու պաշտպանութիւնն ու բարութիւնն ալ սահման ունի :

Իրաւ է, որ անոնք, մեր դարու Հայոց մեծագոյն հերոսը անխոցելի դարձուցած էին թշնամիին կողմէ՝ եւ հազարումէկ փորձանքներէ անվնաս պահած ու պահպանած էին զինք, այն աստիճան՝ որ Անդրանիկ ինքը՝ անխախտ հաւատք գոյացուցած էր այդ մասին, եւ շատ անգամ իր մահը ազգակիցէ մը միայն գտնելու ակնարկութիւններ ըրած էր :

Էրզրումի կռիւններուն ատեն, տեսնելով որ կանոնաւոր կոչուած բանակի հայ սպաները իրենց զինուորներով կը լքեն ճակատը եւ կը հեռանան, մինչդեռ թշնամին գրոհ տալով կը յառաջանայ բերդաքաղաքը գրաւելու, — այդ դաւաճան եւ ամօթալի արարքին առաջը առնելու անկարող Անդրանիկը, կրկին հայրուկի շապիկը հագնիլ կը ստիպուի ու դիմելով իրեն հաւատարիմ բոլոր մը քաջերուն՝ կ'ըսէ .

«Ես պիտի չիյնամ թշնամիի զնգակէն, թշնամիին սուրը այս կուրծքէն ներս չպիտի մտնէ : Եթէ ես իյնամ, հայ դաւաճան զնգակէ մը պիտի զարնուիմ : Ուստի հետեւեցէք ինձ անվախօրէն եւ կուրծք տանք յառաջացող թշնամիին դէմ, կոխկոտենք անոնց դիակները,



ազատելու համար մեր տանջուած հայրենիքի մնացած հողամասերն ալ» :

Աստուածները սակայն, գլացան ազգային հերոսին՝ իր հայրենի հողին վրայ փակելու իր աչքերը, յաղթանակի սուրը ձեռքին :

Եւ որքա՞ն դառն ճակատագիր սահմանեցին այդ անզգամ աստուածները հայ ժողովուրդին, որ հազիւ տեսած էր իր յոյսերուն փրկուղումը, երբ լսեց զինադադարի հաստատման աւետարեր լուրը, մինչդեռ Ռուսաստան կը փոթորկէր յեղափոխութեամբ, երբ Կովկասի մէջ այեկոծութեան բռնուած էին ժողովուրդները, երբ Մայիս 28-ի որոշմամբ անկախ հռչակուած Հայաստանը մատնուած էր սովի, անիլխանութեան, ներքնապէս Թաթարին, դուրսէն թուրք ազգայնականութեան անողոք թշնամանքին :

Այսուհանդերձ թուրք կայսրութիւնը պարտուած էր պաշտօնապէս, Թուրքին ուղղակի ճնշումը Կովկասի հայութեան վրայն վերցուած, ու սպասելով ռուսական յեղափոխութեան եզրակացութեան, անհրաժեշտ էր անդրադառնալ հայ ժողովուրդի շահուն եւ վնասին հաշուեկշռին, որ շատ խրախուսական չէր :

Թուրքերը՝ պարտուած, Հայաստանի նորաստեղծ կառավարութեան յանձնած էին Կարսը, Սարըգամիշը, Օլթին :

Անդրանիկի հոգին սակայն կը տառապէր անձկութեամբ : Ան չէր հաւատար Կովկասեան Հայաստանին Ռուսաստանէն անջատ ապրելու կարելիութեան, երբ Հայոց իսկական դատը դեռ կը մնար չյուծուած : Եւ ան տեսաւ վերջին յոյսի նշոյլը՝ Կիլիկիոյ մէջ ստեղծելու անկախ Հայաստանի կորիզը : Ան Կովկասի մէջ աւարտած կը նկատէր իր գործը, եւ այժմ Կիլիկիան չկորսնցնելու միտքն էր, որ կը խռովէր իր հանգիստը :

Հարիւր ութսուն հազար լեռնահայաստանցիներու կեանքը փրկած, անոնց ինչքերը պահպանած, Անդրանիկ անխառն հպարտութեամբ եւ հանգիստ սրտով կրնար անցնիլ հոն, ուր ուրիշ Հայեր իր սուրին պաշտպանութեանը կը կարօտէին, նոյնքան հարագատ հայրենի երկնքի տակ : Հոն, ուր կը գտնուէր՝ իր պարտականութիւնն էր՝ տեղաւորել հազարաւոր գաղթականներ, հանգիստ տալ տարիներով իր կողքին մարտնչող անձնուէր զինուորներուն՝ դանոնք վերադարձնելով դէպի ընտանեկան բոյն, եւ թռչիլ դէպի հարաւ, հաւաքելու այս անգամ տեղահանութենէն հրաշքով ողջ մնացած հայկական բեկորները :

Անդրանիկ ուրեմն, Զանգեզուրն ու Ղարաբաղը կը յանձնէ Երեւանի հայ օրինաւոր կառավարութեան, եւ կ'որոշէ իր բանակով եւ կազմուածքներով անցնիլ Ս. Էջմիածին, Հայոց հայրապետի օրհնութիւնը ստանալու համար, իր քաջարի զինուորներուն, կառավարութեան թողուլ իր բանակին մթերքն ու ձիերը՝ փոխարէն իւրաքանչիւր զինուորի ձեռքը դնել, իր տունը կամ իր յարմար դատած վայրը դառ-

նալու նիւթական բաւարար օղնութիւն :

Շատ պարզ եւ դիւրաւ կատարուելիք դործեր էին ասոնք, որոնք սակայն եղբրական հանդամանքներ ունեցան :

Անցաւ Անդրանիկ Հայաստանէն : Հարկ չկայ հոս մանրամասնել այն դժուարութիւնները, տազնապներն ու հայածանքները, որոնց մատնուեցան Անդրանիկի զինուորները, հայ հայրենիքին մէջ, — ա՛յն զինուորները՝ որոնք խնդրած էին անհատապէս զտուելու բանակէն, երբ արդէն ինքզինքնին ապահով կրնային զգալ հայ պետութեան մէջ : Անոնք եղան զինաթափ, կողոպտուեցան եւ սպաննուեցան ազգակից՝ ոչ թէ հրոսակներու՝ այլ կարգը պահպանելու եւ քաղաքացիի կեանքը ապահովելու կոչուած խմբակներու կողմէ :

Այս ցաւալի դէպքերը ծանրակշիռ դրութիւն ստեղծեցին Անդրանիկի բանակին եւ Երեւանի կառավարութեան միջեւ, եւ մազ մնաց, որ պատճառ դառնային մայրաքաղաքին գրաւման եւ եղբայրասպան կոխներու :

Այդ դէպքերուն ականատեսը կը պատմէ թէ, Երեւանի օրուան վարչապետը՝ Խատրսեան իր հետ առնելով ոչ միայն Հայոց կաթողիկոսը, նաեւ եպիսկոպոսներ եւ կառավարութեան մօտ իբր ներկայացուցիչ անգլիացի եւ Փրանսացի զինուորականներ, կը փութայ Անդրանիկի մօտ, Երեւանը գրաւելու որոշումը ետ առնելու համար, մասնաւորաբար անգլիացի սպայի միջնորդութեամբ : Հազիւ այս վերջինը Անդրանիկի ընկերացող անգլիացի սպաներուն հետ քանի մը բառ փոխանակելու պատեհութիւնը կ'ունենայ, արդէն իր միջնորդի դերին մէջ վերապահ է : — «Դուք այս մարդուն ո՛վ ըլլալը հասկնալ կ'ուզէք, կ'ըսէ Անդրանիկի ընկերացող Անգլիացին իր միւս պաշտօնակցին, ես ալ բնական է չեմ ճանչնար այս անձերը, որոնց մօտ դուք Նորին Վեհափառ Թագաւորին կառավարութեան ներկայացուցիչն էք, բայց իմ մարդս՝ սուրբ մըն է, ես անոր հաւասարող մարդ ոչ միայն այս շրջանակին մէջ, այլ աշխարհի ուրիշ որեւէ տեղ գտնել անկարելի կը նկատեմ : Իմ միջամտութիւնս բոլորովին աւելորդ է, ան գիտէ իր ընելիքը, եւ ինչ որ կ'ընէ, վստահ եղէք որ լաւագոյնն է » :

Անդրանիկի մօտ զրկուած անգլիացի բանագնացները Բագուի գրաւման կոխներուն հետեւանքով այլեւս չկրցան այն ճամբով կամ ուրիշ ապահով ճամբէ մը ետ վերադառնալ. անոնք այլեւս Անդրանիկէն անբաժան մնացին մինչեւ անոր Հայաստանէն դուրս գալը, թեւեւ տարբեր պատճառներ, կամ մասնաւոր հրահանգ ալ ունէին այդ մասին : Անոնցմէ մին, գրաղումով համալսարանի ուսուցչապետ, Անգլիա վերադարձին գրած եւ տպած է իր յուշերը՝ որոնք 1920-ի ատենները Թարգմանուած եւ տպուած են Եգիպտոսի «Արեւ» օրաթերթին մէջ :

Թէ՛ իրենց պաշտօնի կիրարկութեան օրերու արտայայտութիւններէն եւ թէ՛ յետագային Անդրանիկի զինակիցներուն հետ ունեցած

Թղթակցութիւններէն ի յայտ կու գայ՝ Հայոց ազգային հերոսի անձին հանդէպ անոնց ունեցած հիացումը: Աւագակ մը զսպելու դացող մարդիկ կը հանդիպին սուրբի մը, ու այլեւս հմայուած անոր հզօր անձնաւորութենէն եւ կախարդական գրաւչութենէն, պիտի չուզեն բաժնուիլ: Անոնք սքանչացած են նաեւ Հայոց Աշխարհի գեղեցկութենէն: Երբ Անդրանիկ եւ իր հետեւորդները բլուրէ բլուր կը բարձրանան, ու ամէն բլուրի գագաթէն Արարատը տեսնելու յոյսով խանդավառ, շատ մը յուսախարութիւններէ յետոյ, վերջապէս կը տեսնեն զայն ու անօրինակ գոռում-գոչումներով եւ հրացանաձգութեամբ կ'ողջունեն այդ տեսիլքը, իրենք՝ Անդրիացիք, երբ բլուրի նոյն կէտին կը հասնին՝ անդիմադրելի շարժումէ մը մղուած՝ իրենց զինուորական գլխարկները կը հանեն՝ բարեւելու զոյգ Մասիսները:

Արդար է որ, յիշուի նաեւ անոնց այդ կերպարանափոխութեան մեծապէս սատարող Թարգմանը, որ ոչ միայն բազմակողմանի զարգացումի տէր մտաւորական մըն էր, այլ նաեւ քաջարի մարտիկ մը, միանգամայն համեստ հայրդի մը՝ Վահան Չերազ:

Ան Պօլսեցի յայտնի փաստարան Գասպար Չերազի անդրանիկ զաւակն էր, մօտէն հետեւած իր հօրը ազգանուէր գործունէութեան, անվախ եւ անզուգական պաշտպանը Սուլթան Համիտի օրերուն բանտ կամ ա'յլ հալածանքի ենթակայ ամէն Հայու: Իսկ իր հօրեղբորը՝ Մինաս Չերազի մեր ժողովուրդի ազատագրական դատին նուիրումը բոլորին ծանօթ է արդէն:

Վահան Չերազ՝ Ֆրանսայի մէջ կը կարդայ հայկական ջարդերուն լուրը: Բոլոր գործուած խժուժութիւններուն տեսակները՝ գրպանի տետրի մը էջերուն վրայ կ'արձանագրէ եւ անոր հետ կը լեցուի նաեւ իր սիրտը՝ անհուն վշտով: Այլեւս ամէն հնար կը մտածէ եւ կը յաջողի անցնիլ Կովկաս, խառնուելու վրէժխնդրի եւ ազատարար հայ կամաւորական գունդերուն: Առանց հանգիստ կամ դադար առնելու, շարունակ կը մասնակցի Թուրքին դէմ մղուած բոլոր կռիւներուն՝ միշտ ճակատի առաջին գծին վրայ, շատ անգամ ծածկելով իր ինքնութիւնը: Իր նշանաբանն էր՝ «Ինչպէս ջրհեղեղը՝ արիւնն ալ պիտի չիեղդէ Արարատը»:

Երբ զինակից ընկերներ իր քաջագործութիւններուն գրուագները կը պատմեն, Ժպտելով կը պնդէր, որ աւելորդ գովեստներ են ատոնք՝ երբ իր մարմինը Հայաստանի հողին վրայ մղած կռիւներուն ընթացքին փուշէ մ'անգամ խայթուած չէ:

Անդրիացի սպայ ուսուցչապետը կը վկայէ անոր մասին. —

«Չանդեգուրէն Երեւան վերագարձի ատեն, ճամբուն եղերքը փրոռուած կը նշմարեն մարդկային մարմին մը: Անդրանիկի Թարգմանը անմիջապէս կ'ուղղուի հոն եւ կը գտնէ աղջնակ մը, որ դեռ չնչիւրէ չէ դադրած: Վահան Չերազ, առանց տատամսելու, իր վերարկուին մէջ գայն խնամքով կը փաթթէ, կ'առնէ իր ձիուն վրայ ու գայն դըր-

կած՝ ճանապարհին ամէն հոգածութիւն շոյալելէ վերջ կը հասցնէ մինչեւ Երեւանի հիւանդանոցը, կը հետեւի աղջնակի բժշկութեան եւ անոր հիւանդութենէն վարակուելով իր կարգին կ'իյնայ ու մահուանէ հաղիւ կ'ազատուի: Անոր միակ դառնութիւնը իր այս արկածին վերաբերմամբ, իր սիրական զօրապետէն վերջնականապէս բաժանումը եղած է»:

\*\*

Մեկնեցաւ Անդրանիկ Հայաստանէն, անցաւ Վրաստանէն պատուով, քանի որ սկզբունքով եւ էպպէս ան թշնամական որեւէ արարք ունեցած չէր Վրացիներու հետ, եւ անկէ արտասահման:

Իր վերջին ձախորդութիւնը արձանագրեց՝ երբ Կիլիկիա մտնելու արտօնութիւնը իրեն մերժուեցաւ:

Իր վերջին դառն յուսախաբուցութիւնը կրեց՝ երբ լսեց, թէ ինչպէս երկրորդ անգամ, առանց կոիւրի «ակադեմական բանակին» Հայոց՝ Կարսը յանձնեց նոյն թշնամիին:

Եւ ազգային այս բոլոր կսկիծներուն բաժակը պարպելէ վերջ, դեռ ծերութեան դուռն անգամ չհասած, իր հետ տարաւ թրքահայ դատի եւ ազատագրութեան դարաւոր երազին առժամեայ փլուզումը:

Թէ ի՞նչ եղած կ'ըլլար Հայոց վիճակը, եթէ Անդրանիկի հետ, հայ զինուորը սուրը ձեռքին մնար Կարնոյ բերդերուն մէջ, կամ Կիլիկիոյ, — այս «եթէ»-ները այն որդերն են, որ անդադրում պիտի կրճեն ամէն հայրենարդձ եւ հայրենասէր Հայի սիրտը:

Եւ մինչդեռ, Արծիւն Հայոց թեւարեկ՝ հեռաւոր Գալիֆորնիայի ափերէն դառնօրէն կ'արտասանէր իր վերջին բառերը. «Գործս կիսատ մնաց», հոն, Հայաստանի մէջ, այդ ձայնին կ'արձագանգէր Արագածէն Արարատ, հայ համայնավար կուսակցութեան պատգամը՝ որ իբրեւ ժառանգորդը հայրենիքի՝ կը յայտարարէր. «Մենք ամենայն Հայոց կառավարութիւն չենք»:

Այդ երկու պատգամները զիրար կը լրացնեն, անոնցմէ առաջինին հեղինակին մօտ ո՛չ մեծամոլութիւն փնտռելու է, ոչ ալ յաւիտենական յուսալքութիւն, իսկ երկրորդ պատգամախօսներուն մօտ՝ ո՛չ անտարբերութիւն դէպի մեր ազգային տենչերը, եւ ոչ ալ դասալքութիւն: Այդ յայտարարութիւններէն ո՛չ մին եւ ոչ միւսը պէտք է որ ահաբեկեն գալիք սերունդները:


Ընդհակառակը, Անդրանիկ իր խօսքով կը յանձնարարէ շարունակել գործը, իսկ Հայաստանի օրուան պատասխանատուներու խօսքերը կու դան զգաստ պահելու զաղութահայութիւնը համայն, ըսելով անոնց, որ դեռ իրապէս գործը չէ վերջացած, թէ անոնք միշտ տէրն են իրենց ճակատագրի փոփոխման եւ թրքահայոց արդար դատին, եւ պէտք չէ ուրեմն որեւէ ճիշդ, պայքար, կոիւ խնայեն թըրքահայաստանի վերջնական ազատագրութեան համար: Քննադատել

այդ բացայայտ խօսքերը տգիտութիւն է, եւ ափսո՛ս, որ տարիներու փորձառութենէն յետոյ ալ, Դաշնակցութիւնը չկրցաւ ըմբռնել այդ յայտարարութեան տարողութիւնը, եւ ո՛չ միայն մնաց խուլ, համբ, անդամալոյժ, մեր բոլորին ոյժն ու ճիւղը միակ նպատակին յատկացնելու, այլ զազութահայ զանգուածները վերածեց հատուածներու, ըսենք բուն բառով՝ թշնամիներու:

Ուրեմն Անդրանիկ իրաւամբ կը մնայ ուղեցոյցը հայ քաղաքական մտքին, հայ զինուորական բարձր արժէքին բեւեռացոյցը, եւ ներշնչողը ապագայ սերունդներու լաւագոյն՝ մարզկային եւ հայրենասիրական գործերուն:

Անդրանիկ՝ ամէնօրեայ տիպարն է հայ պատանիին եւ հայ երիտասարդութեան:

Ամբողջութիւն մըն է Անդրանիկ, ու մենք կը հաւատանք, որ պիտի դայ օրը, երբ անոր մարմնաւոր գոյութիւնն իսկ կասկածելի պիտի դառնայ, որովհետեւ կատարելութիւնը մարմին առած տեսնել՝ միշտ ալ անհաւատալի պիտի մնայ:



ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶ

Համայնք

Նարաքիսի

ՆԵԿԱԿՆ ԼՅՁ

Հեն Երոբո

Վարդ 1/100,000

Իլարտա

Սահմանային գիծ

Պարսկաստան

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

Սահմանային գիծ

## ԱՆԴՐԱՆԻԿ

I

Նստած եմ գրասենեակս, 1918 թուի այդ 13 Դեկտեմբերին: Կը փորձեմ զորացրուածի տաղտուկներս փարատել, երբ Գնդապետ -Տ-ին ձայնը հեռախօսով զիս սպայակոյտ կը հրաւիրէ, շուտափոյթ զինքը տեսնելու: Ու քարտէս մը, եւ թղթեր՝ առջեւս հրելով կ'ըսէ, «Կարդացէք ասոնք, եթէ ուրիշ հարցումներ ունիք, ըրէ՛ք: Կ'ուզեմ որ ա՛յս զիշեր իսկ մեկնիք»:

Զանգեզուր առաքելութեան մը հրահանգներ էին, Անդրանիկի մօտ, հայ ղեկավար մը, որուն անունը լսած չէի: Նպատակը զոյգ էր. նախ՝ ի՞նչ կարելի էր ընել իրեն եւ իր երեսուն հազար վտարանդի բազմութեան համար, ու ապա տեղեկանալ այն խժողութիւններուն մասին՝ զորս Թաթարները իրեն կը վերադրէին միւլիւման զիւղերուն մէջ զործուած, զինազաղարը կնքուէին յետոյ: Տրուած հրահանգներն էին՝ երթալ Շուշի, անկէ անցնիլ Գորիս՝ Անդրանիկի դըլ-խաւօր կեդրոնը: Մեր խումբը կը բազկանար՝ երեք անգլիացի սպայ, զինուորական կառախումբ մը, ներկայացուցիչներ՝ Ատրպէյնանի կառավարութեան եւ Պաքուի Հայոց Ազգային Խորհուրդին կողմէ: (1)

(1) Կովկասեան նախտի ոռս բանակներուն քայքայումէն յետոյ, Դաշնակիցներու կողմէ ջանք քափուած է միացնելու հայ, վրացի, թաթար եւ մնացող ոռս ոյժերը, արգիլելու թուրք եւ գերման ներխուժումը Կովկաս: Այս փորձը ձախողեցաւ, գլխաւորաբար երեք ազգերու փոխադարձ նախանձները հրահրող՝ թուրք եւ գերման սադրանքներուն պատճառաւ, որով, ի բաց առեալ Ղարապաղի եւ Զանգեզուրի լեռներուն, երկրին մնացեալ մասերը ի վերջոյ ինկան թուրքո-գերման գրաւման տակ: Պաքումի դաշնագրով Անդրկովկասը բաժնուած էր երեք խամանիկ հանրապետութիւններու՝ հայ, վրացի եւ թաթար:

Հրահանգուեցաւ մեր առանձին վակոնը կցել նոյն օրուան ժամը 19-ին մեկնող Թիֆլիզի դնացքին, որով մենք կէս ժամ առաջ կայարանն էինք: Ըստ սովորականի մեկնումի դժուարութիւն կար: Ռուս յեղափոխութենէն յետոյ Կովկասի երկաթուղային կարգ-կանոնը խանգարուած էր: Թուրքերը վերցուցած էին շատ մը առարկաներ, ուստի քիչ էին նաեւ վակոններն ու շոգեմեքենաները: Պաքուն նոր սկսած էր յարաբերիլ դուրսի աշխարհին հետ. իր բնակիչներէն հարիւրաւորներ կը ջանային լքել քաղաքը՝ սնունդի պահասին պատճառաւ: Տեղւոյն թաթար ոստիկանութիւնը անձեռնհաս էր, երկաթուղային պաշտօնեաները անհաշիւ տոմսեր կը կտրէին: Նախորդ երեկոյէն մնացած՝ կարծեցեալ ճամբորդներ, «վտար» յով գինովցած, սպաննած էին պահակն ու մեքենավարը եւ հրամայած գնացքը ճամբու հանել, «քաջալերելու համար» միւս պաշտօնեաները: Վերջապէս մեկնեցանք ժամը 22-ին:

Եվլախ հասանք ժամը 10-ին: Կայարանը լեցուն էր դէպի Թիֆլիզ նահանջող Թուրքերով: Պաշտօնէութիւնը՝ մեծ մասամբ Ռուսեր՝ հաճոյակատար էին, թուրք գինուորները հետաքրքրութեամբ կը դիտէին մեր զրահապատ սայլերը, մինչ իրենց սպաները կ'անտեսէին մեր ներկայութիւնը: Տեսակցութիւն խնդրեց պատահաբար կայարանը գտնուող Շուշիի շրջանին ատրայէյնաճախի գունդերուն հրամանատարը: Նախապէս Կալիցիոյ ճակատի ռուս բանակի զօրավար մը, այժմ բաւական դէշ հագուած՝ աղտոտ էր համազգեստը, ինքը՝ չէր լուացուած ու չէր սափրուած: Կովկասի մէջ առանձնանալը անսովոր է, որով կը խօսակցինք ճաշարանի մը մէջ, շրջապատուած հետաքրքիր ամբօխով մը, անոնց խուզարկու աչքերուն տակ:

Որովհետեւ կառքերուն պարպուելը երկար ժամանակ կը պահանջէր, որոշեցինք յաջորդ առտու կանուխէն Շուշի մեկնիլ: Կովկասի մէջ տարբեր բաներ են, փափաքիլը եւ կարենալը: Խումբին ոչ-անգլիացի անդամները կը ճամբորդէին Ատրպէյճանական կառավարութեան տրամադրած կառքով: Այդ կառքը 1914-ին թերեւս դեղեցիկ էր, բայց այժմ թանգարանի առարկայ մը միայն: Մէկ զլանը կը գործէր՝ լաստիկները կարկոնուած: Վարորդը Ռուս մըն էր՝ ծագումով Լեհ, խոնարհ տղայ մը, ժպտուն, որ հակառակ մեր յոռետեսութեան, կը հաւաստէր որ ի վիճակի էր որեւէ տեղ հասցնել: Ի վերջոյ, երեք ժամ վերջ ճամբու ինկանք, մենք մեր զրահապատ կառքերով եւ ֆօրսերով, ամենուս ետեւէն այդ նշանաւոր կառքը՝ որ հեւալով կը յառաջանար գնդացիրային միանուազ աղմուկով:

Շուշի տանող պողոտան, առաջին 15 մղոնը՝ մինչեւ Աղտամ, տափարակ է եւ անհետաքրքրական: Բնակչութիւնը՝ այժմ բոլորովին միւսալիման: Շատերը վաչկատուն՝ հովիւներ, որոնք ամառները, ընտանեօք եւ անասուններով Ղարապաղի արօտավայրերը կը



բարձրանան : Ռուսերու օրօք ասոնք շատ մը խոռվութիւններու դուռ կը բանային , իրենց թիւին եւ նախնական բնազդին բերմամբ : Այժմ զինուած եւ Ռուսերուն հակակշիռը վերցած , մնայուն սպանալիքներ էին լեռնականներու խաղաղակեցութեան , մանաւանդ Հայերու ապահովութեան : Ասոնք պատերազմէն քիչ վնաս կրած ըլլալ կը թուէին , տարբեր էր սակայն կացութիւնը երկաթուղազծին հիւսիսը՝ Շամախի շրջանը , ուր հազիւ կարելի էր դտնել շայրուած թաթար տուն մը :

Պարտաւի մէջ հանդիպեցանք թրքական վաչտի մը՝ հրետանիի կազմածքով , դէպի Եվլախ նահանջելու վրայ : Ասոնք մնացորդներն էին , ըսին , Շուշիի շրջանի թրքական ոյժերուն : Ատրպէյճանական կռօքը , ժամուան մը մէջ մեզի երկու կամ երեք անգամ կանդ առնել կու տար , որով , կէսօրէ վերջ ուշ ատեն Աղտաւ հասանք : Վաճառաշահ քաղաք մը , այժմ ամբողջովին միւսլիման բնակչութեամբ , փողոցները նեղ , շատ ազտոտ , սակայն խանութները լեցուն էին ուտելիքներով եւ արեւելեան պազարի սովորական ապրանքներով : Ժողովուրդը մեզի նկատմամբ անուշադիր էր : Այս տարօրինակ անտարբերութիւնը թաթարներու յատուկ ըլլալով հանդերձ աչքի կը զարնէր՝ Պարսկաստանէն յետոյ , ուր մարդիւն աւելի հետաքրքրուող էին : Պատանիներու հետ բաղդատութիւնը աւելի նշանակալից է . պարսիկ տղաքը մեզ կը դիմաւորէին ժպիտով , սակայն երբեք չտեսայ թաթար տղեկ մը , որ հաճոյակատար արտայայտութիւն մը ցոյց տար :

Գիշերը հիւրընկալուեցանք տեղւոյն միւսլիման կալուածատէրի մը մօտ , ուր ծանօթացանք տեղական ղեկավար տարրին : Ասոնցմէ կարեւորներն էին դատաւորն ու զինուորական հրամանատարը : Առաջինին գիտութիւնը օրէնքի վերաբերեալ չնչին էր , նաբողիտնեան Օրէնսրութեան բոլորովին անտեղեակ թաթար մը , զինուորականը՝ հասարակ զինուորի մը համարժէք : Անոնց քաղաքավարութիւնը մեզի հանդէպ՝ թելադրուած էր , այնպէս որ բոլորն ալ ուրախութիւններն յայտնեցին նախ , ապա նկարագրեցին տեղական անիշխանութիւնը՝ իբր հետեւանք Հայերու օրինազանցութեանց , ու վերջապէս մեզի օգնելու առաջարկ՝ կարգը վերահաստատելու մէջ , անտարակոյս ի հեճուկս Հայերու :

Աղտաւի եւ Շուշիի միջեւ երկրամասը զգալի հակադրութիւն մը կը ներկայացնէ ցածի (դաշտային) ճանապարհին բաղդատմամբ : Դէպի Ասկերան (\*) — ճամբան կ'ոլորուի լեռներու մէջէն , շարունակական դարձուածքներով ու վերելքներով դէպի լեռնանցք եւ ուղղաձիգ կը հասնի Շուշի քաղաքը : Խանգէնտի մօտակայ միւսլիման զիւղը , ուր ոռոսական կայազօր կար ատենին , բնակչութիւնը կը խնդրէ գիրենք պաշտպանել Հայերուն դէմ : Այստեղ մեր թէյ առած

(\*) Ղարաբաղի դուռ :

պահուն ; ատրպէյճանցի զինուոր մը սպաննուած էր , ճանապարհէն երեք մղոն վեր՝ Հայերու կողմէ , եւ թաղման ճամբուն վրայ , անոր մարմինը մեզի բերուած էր՝ առ ի քննութիւն :

Շուշիի մօտակայքը նկարչագեղ է : 1500 ոտք սեպածեւ մազըլցում մը մեզ կը հանէ ձմեռնային մարզէն վեր եւ շեղ շրջադարձումով մը քաղաքը կը յայտնուի , թառած ժայռի մը դազաթին , ձորին միւս կողմը : Համայն բնակչութիւնը կը թուի թէ մեզ կը սպասէ : Փօքա կառքերուն ղժուար վերեւքը կը ստիպէ սպասել միասնաբար հանդիսաւոր մուտք գործելու համար : Հեծեալներ մեզ կ'առաջնորդեն դէպի մուտք , ուր քաղաքապետը՝ Գերասիմ Մելիք Եսիմազարեան , պաշտօնական համազգեստով , բարի դալուստի ճառ կը խօսի : Տուրա էր , մութը կոխած՝ կարճ կապել տուի այս արարողութիւնը ու քաղաք մտանք : Իսկոյն կը ներկայանայ փափուկ դրութիւն մը : Քաղաքը դրեթէ համահաւասար հայ եւ թաթար բնակչութիւն ունի եւ երկու համայնքները կ'ապրին անջատ թաղերու մէջ : Այդ թաղերուն միջեւ աւերակ մաս մը կայ՝ այրուած 1905-ի խռովութիւններէն ի վեր : Երկու համայնքներն ալ մեզ ընդունելու բնակարաններ պատրաստած էին : Ընդունիլ մէկունը՝ միւսը վերաւորել կը նշանակէր : Հարցը լուծելու համար հրահանգեցի թափորին երթալ ա'յն թաղամասերը , ուր քաղաքապետարանը կը դանուէր՝ քաղաքապետի հանդամանք կրողի առումով , եւ ըստ այնմ խօսեցայ թաթար ղեկավարին , որ բացատրէ խնդիրը , առանց ազգային հանդամանք նկատի ունենալու : Այսպիսով հասանք հայկական թաղի ընդունելավայրը : Երկար օր մը՝ որ վերջացաւ ճաշով , կենացներով ու ճառերով :

Կովկասցիի մտայնութեան հետաքրքրական կողմն այն է , որ ան խորապէս կրած է ուսու հին ոգին , ինչպէս յետոյ յայտնի եղաւ անոնց վերաբերմունքէն՝ հանդէպ անգլիացի զինուորներուն : Ասոնց սպաններուն հաւաստիացուցած էին որ ամէն կարգադրութիւն եղած է իրենց մարդոց հանդիստին համար , բայց , յետ քննութեան , ոչ մէկ յայտարար նշան կ'երեւնար անոնց սնունդին եւ բնակութեան համար : Այս առթիւ խօսակցութեան ընթացքին , հայ թէ թաթար չէին կրնար ըմբռնել , թէ ի'նչպէս անգլիացի սպան , իրենինէն առաջ մտահոգուած է իր զինուորներուն հանգստութեամբ :

Առաւօտը սկսաւ շրջակայքի լեռներուն հայ բնակիչներու դեկավարներուն հետ տեսակցութեամբ , տեղեկադրութիւն՝ վտարանդիներու թիւին , եւ անոնց ապրելակերպի պայմաններուն մասին , անոնց ունեցած պակասները սնունդի , դեղորայքի եւ բնակարանի վերաբերեալ : Հիւանդութիւնը՝ յատկապէս քիֆիւսը կը տարածուէր , եւ թաթարներուն խոշտանգումները՝ դիւզերուն հրկիզումները եւ անոնց բնակիչներուն ջարդը : Անշուշտ չափազանցելու միտում կար տրուած թիւերուն մէջ , սակայն , յայտնօրէն ողբերգական էր լեռնաբնակ Հայերու վիճակը : Կէսօրէ վերջ կարգը միւսլիմաններուն

էր: Ասոնք կը հայցէին բրիտանական ոյժերէն վերահաստատել օրէնք եւ կարգ-կանոն, կը դանդատէին թէ ինչո՞ւ թուրքերը ճամբած էինք առանց զիրենք փոխարինելու անգլիացի զինուորներով, ու եթէ ի վիճակի չէինք խաղաղութիւնը ապահովելու, պէտք է թոյլ տայինք իրենց, որ Հայերուն հետ իրենց դժուարութիւնները իրե՛նք կարգադրեն: Այս վերջին խնդրանքը անշուշտ «պլըՓ» մըն էր: Հաջիւ տասը օր առաջ դիմած էին Պաֆու՝ Անգլիացիներուն, որ Հայերու դէմ իրենց պաշտպան հանդիսանան, այլապէս պիտի բնաջնջուէին եւ ասիկա ճշմարտութեանէ շատ հեռու չէր: Այս էր ընդհանուր վիճակը: Հիմա որ հոն էինք, Հայերը մեզմէ դժգոհ էին, որ եկած ենք իբրեւ «չէզոք»ներ, եւ ոչ թէ իրենց դաշնակիցները, միւսլիմանները նոյնպէս դժգոհ՝ քանի որ պիտի օգնենք հայ տարագիրներուն եւ տեղահանուածներուն:

Փամանակին մեծ մասը կը յատկացուէր «D»-ին հետ մեր դործերու կարգադրութեան. անիկա հրասայլերուն հետ ետ պիտի մնար՝ իրերու փոխադրութեան եւ մեր խումբը Գորիս հասցնելու: Սկզբնական որոշումով խումբը պիտի կայանայ Տ-է, ինձմէ, Ատրպէյճանի ներկայացուցիչէն, Հայէ մը՝ Պաքուէն, Քօհէն թիկնապահէս եւ Տ-ին վրացի «պօյ»էն, 14 տարեկան տղեկ մը, զոր փողոցէն դտած էր՝ բազմալեզուանի՝ վրան շատ մը տարօրինակ զէնքեր կրող: Այս բոլորին համար անհրաժեշտ էր երեք ֆայթօն: Խնդրեցի նաեւ որ մեզի ընկերանար փոքրաթիւ անձնապահ խումբ մը, քանի որ ճամբաները անպահով կը թուէին: Անհամութիւնը յետոյ սկսաւ: Ճամբան Շուշիի եւ Գորիսի միջեւ փոխնիփոխ Հայերուն եւ Թաթարներուն ձեռքն էր: Իսկ Անգլաքանիկի եւ Թաթարներուն միջեւ դոյութիւն ունէր հողամաս մը ամեմայնոց (no man's land) պատկանող՝ հինգ կամ վեց մղոն երկարութեամբ: Կառավարները չէին ուզեր այդ դօտին մտնել առանց պահակազօրի: Ոչ մէկ Հայ անոնց ընկերանալ կ'ուզէր թաթար դօտիին մէջ, եւ ոչ ալ Թաթար մը Հայոց մասին մէջ: Ոչ ո՛ք, մէկը միւսին դօտիին մէջ կ'ուզէր առանձին սպասել մինչեւ մեր վերադարձը: Դեռ աւելին կար՝ թաթար ներկայացուցիչը մերժեց Գորիս դալ, եւ իբր փոխանորդ իր զարմիկը առաջարկեց: Վերջապէս երկու Պաքուցի Հայեր մեզի ընկերացան: Ճամբայ ինկանք յաջորդ առաւօտ փամբ 10:30-ին: Գիշերը մէկ ոտքի չափ ձիւն դիզուած էր եւ ձիերը ամիս մը անօթի-անսուղ մնացածի կերպարանք ունէին: Բազմութիւն մը դժուր ինկած էր մեր մեկնիլը դիտելու՝ նաեւ քաղաքապետն ու ոստիկանապետը: Կառավարներուն մայրերը իրենց զաւակներուն համար կ'ու լային, երկարատեւ «ողջերթներ», նաեւ անհամութիւններ՝ մինչեւ բլուրին դադաթը: Վերջապէս մեկնեցանք:

Շուշիէն Ապուլար, Գորիսէն հեռաւորութեան կէսը՝ ճամբան կանցնի 7000 օտք բարձր լեռնանցքէ՝ մը: Անոր դադաթէն մինչեւ Պարսկաստան տեսարանը իրար յաջորդող ձիւնապատ լեռնաշղթա-

ներու ահասարսուռ երեւոյթ մը կը պարզէ՝ որուն երբեք ակնատես եղած ըլլայի: Զորերը, որոնք երկու տարի առաջ Հայ խիտ բնակչու-թիւն ունէին՝ ամայացած էին, բոլոր գիւղերը հրկիզուած, բնակիչները լեռները ապաստանած: Բացի գայլի եւ աղուէսի կանչերէն՝ անդորրութիւն խանգարող չկար: Ապուլար՝ ճամբէն դուրս բլուրին վրայ թառած, Շուշիէն Գորիս երկայնքին վրայ տակաւին կանդուն մնացած գիւղերէն մին էր: Բնակիչները միւսլիման էին, գիւղը կը բարձրանար բլուրի կողերուն վրայ, տուները քարաշէն հիւղակներէ քիչ տարբեր: Անդրանիկ այս գիւղը գրաւելու վրայ էր, երբ ստացաւ առաջին հաղորդագրութիւնը, որ զինադադար կնքուած է, եւ պէտք է դադրեցնէ դէպի Շուշի յառաջընթացը: Տեղւոյն պիտտաւը՝ (ոստիկանապետ) մեզ դիմաւորեց, գիշերեցինք մօտ 14 քառ. մեթր յատակով անպատուհան խուցի մը մէջ, թուրք զինուորի մը ընկերակցութեամբ՝ որ Ատրպէյճանցիներու կողմէ նշանակուած էր մուտքն ու ներսը հսկելու, մինչեւ որ դժուարաւ հեռացուցինք զինքը:

Գիշերը առատօրէն ձիւնած էր: Մեկնելէ առաջ գիւղացիներուն պատուիրականութիւնը ընդունեցինք: Գիւղացիք յայտնապէս յոգնած էին պատերազմէն եւ կը փափաքէին իրենց խաղաղ աշխատանքին վերադառնալ: Բայց կը սարսափէին Հայոց փոխ-վրէժէն՝ իրենց ուճիրներուն ի պատասխան: Երբ հասած էինք թաթար վերջին կայանը, Տ. . . ին կառքը ձիւնածածկ ապառաժի մը զարնուեցաւ եւ ինքն ու իր ծառան անյայտացան շրջուած կառքին ներքեւ: Բացի ձիւնալու-գանքէ՝ ուրիշ վնաս չէին կրած: Սակայն կառքը անխնդրէն անջատուած էր: Կը թուէր որ մէկ կառք պակաս պիտի ունենայինք: Այսուհանդերձ կառավարը յաջողեցաւ կտորները կապկպել ու ապա կրցանք կրկին մեկնիլ: Ամենահեռուի թաթար կայանէն անդին, մինչեւ ակոսները զինուած երեսուցի խայտաբղէտ լեռնականներու հանդիպեցանք: Ընկերացող թաթարը անոնց հաղորդեց որ խաղաղութիւն բերողներ ենք: Որով «Ալլահը ձեզի հետ» մաղթանքէ վերջ, անցանք «ամենայնոց» դօտին: Զորին միւս բերանը հանդիպեցանք Անդրանիկի ձիւնուր խումբին, որ մեզի ընկերացաւ մինչեւ Տիկ: Խորապէս սպաւորուեցայ այդ մարդոցմէն, նկատի ունենալով որ ամբողջ տարի մը անոնք աշխարհէն կտրուած էին, արտակարգօրէն լաւ երեւոյթ ունէին, կովկասեան լաւ ձիեր ունէին: Հրացանի հետ շատերը սուր կը կրէին, ոմանք դաշոյն եւս, գրեթէ բոլորն ալ ատրճանակ, շատեր ռուսական պատուանշաններ: Զեռք թօթուեցի սպային հետ — որ թուրքօ-պուլկար պատերազմին ծառայած էր պուլկար բանակին մէջ, — քալեցինք միասին, ապա անոնք ձիավարեցին, անցան մեր առաջ, երգեցին հայկական երգեր՝ մինչեւ Տիկ: Հոն գիւղացիք մեզ ողջունեցին «աղ ու հացով» եւ ուղղուեցանք դէպի դպրոց՝ գիշերելու:

Մերինը, տարիէ մը ի վեր Զանգեզուր մտնող առաջին խումբն էր եւ մեզ շրջապատեցին լուրեր ստանալու, ի՞նչ էր պատահած թուր-

քերուն, Գերմանացիք պարտուած էին, ո՞ւր էին Անգլիացիք, ե՞րբ պիտի դային Հայոց օչնութեան, ի՞նչ էր պատահած իրենց Պաքուի ազգակիցներուն, խել մը հարցումներ, որոնց պատասխանելը դժուար էր, մանաւանդ կ'անգլիտանայինք :

Մեկնելէ առաջ գիւղին ուսուցիչը պատուեցինք՝ շաքարով թէյ, ծխախոտով : Երկարատենէ ի վեր անգլտանելի բաներ : Գորիսէն հինգ վերստ անդին, որը բլրային փոքրիկ քաղաք մըն է, ձորին մէջ ուսուսական ոճով արդիական թաղին մէջ մեզ գիմաւորեցին հեծեալ ուղեկիցներ եւ Ռժ. Ռուբէն Տէր Մինասեան, Անդրանիկի բժիշկ սպան, Պոստոնէն վկայեալ՝ բաւական լաւ անգլերէն կը խօսէր : 1915-ի ջարդերը լսելով երբ կ'իմանայ իրեններուն ջարդուած ըլլալը, իբր կամաւոր կը միանայ ուսական բանակին եւ յեղափոխութենէն յետոյ՝ Անդրանիկին : Ասոնց կ'ընկերանային երկու կիներ՝ առնաբար հեծած :

Մեր ձիերը Տիկի լեռներէն անցած էին, որով խումբը ուղիղ դէպի գիւղ սկսաւ արշաւել, անոր կանաչ դաշտերուն մէջէն : Հոն դիմաւորուեցանք Ռժ. Միշա Պարոնեանի կողմէ՝ Ազգային Խորհուրդի նախագահը, եւ տեղւոյն գումարտակէն, այնուհետեւ դէպի շէնքը, ուր Անդրանիկ մեզի կը սպասէր :

Անդրանիկ կանգնած էր պատշգամին վրայ, առանց աստիճան (ուսնոց) կրող ուսական զօրավարի հագուստով : Ունէր բազմաթիւ պատուանշաններ : Իմ առաջին տպաւորութիւնս եղաւ՝ որ ան զօրեղ կազմ ունէր, միջահասակէն քիչ մը բարձր, մեծղի զլուխ՝ լայնրեւ : Մազերը մոխրագոյն՝ ետ սանտրուած՝ պուլկարական ձեւով : Բեխերով ծածկուած բերանը խիստ երեւոյթ կու տային առաջին ականարկով, բեխերուն ծայրերը վեր էին տնկուած : Բայց իր աչքերուն մէջ ժպիտ կար եւ բարութիւն : Դէմքը կ'արտայայտէր նկարագրի կնիք, ձեռք սեղմումը ուժեղ, շեշտակի նայուածքը իր՝ արդէն զիս տպաւորեցին, որ անձնաւորութեան մը առջեւ կը գտնուիմ : Վերջը՝ երեկոյեան, երբ իր դէմքը կը դիտէի հանդարտ պահու մը, նկատեցի որ միշտ մտազբաղ երեւոյթ ունէր, շարունակական հոգերու բերմամբ մաշած :

Երբ դէպի ընդունելութեան սրահ կը յառաջանայինք միասին, զգացի որ նախապէս Կովկասի մէջ հանդիպածներէս տարբեր մէկն էր : Իրենները՝ առաջին իսկական զինուորներն էին, զորս տեսած էի : Իրազեկ եղայ որ հոս մէկը կայ, որ զինուորի կոչումին գիտակից է, եւ իրեններն ալ իր անձին արտացոլանքն էին : Ինչ որ կարելի էր ընել, ըրած էր, բնազդս կ'ըսէր ինձ՝ որ հոս կար սպիտակ ցեղին մարդը :

Ազգային Խորհուրդի նախագահին կողմէ պատրաստուած ճաշին քով քովի չորս տեղ նկատի ունեցած էին՝ Զօր. Անդրանիկ, Հրամանատար Dyryd Siraid, ինքս եւ թիկնապահս : Չէի փափաքեր վիրաւորել հիւրընկալս, բայց կը տարակուսէի նաեւ թէ ի՞նչ կրնար ըլլալ Զօրավարին ըմբռնումը հասարակ զինուոր մը սեղանակից ընելու՝ իրեն

հարց տուի: «Բրիտանացի զինուորը, ըսաւ, շահած է այս պատերազմը» ու նաեւ «հարաւ եմ անոնցմէ սեղանակից ունենալու»: Աւելի վերջը՝ բաժակաճառերու ընթացքին, կրկին ոտքի ելաւ ու ըսաւ. «Բաժակս կը վերցնեմ անգլիացի զինուորներուն եւ անոնց մայրերուն կենացը»: Իր անձը շուքի մէջ կը ձգէր բոլորն ալ: Երբ կը խօսէր՝ ամէն ոք լուռ գինքը կ'ունկնդրէր: Երբ որեւէ խնդիր քննուէր, փաշայիմ (ինչպէս կը կոչէին զինքը) կարծիքը կը փնտռուէր: Պատմութիւն մը երբ պատմուէր՝ պատմողին հերոսը Ան էր: Ունէր մազնիսական քաշողութիւն մը, որով ամէն ոք իրեն կը կապէր: Ես անձնապէս բոլորովին իր ցանցերուն մէջն էի:

Ճաշէն յետոյ առանձին տեսակցութիւն ունեցանք՝ Անդրանիկ, Ատրպէյճանի ներկայացուցիչ Ապտուլֆաթ Պէյ Հասանպէկով եւ մերոնք, կարգադրութեան փորձ մը ընելու համար Անդրանիկի եւ Թաթարներու պահանջներուն, փախստականները սնուցանելու խնդրոյն շուրջ: Անդրանիկ բացայայտօրէն խիստ դժգոհ էր, որ Բրիտանացիք՝ որոնց ժամանումը՝ մահասփիւռ տարիներէ ի վեր սպասուած էր ու երազուած, պիտի գային իրեն թելադրելու Թաթարներուն զիջիլ եւ անոնց հետ համաձայնութեան նստիլ, ու ան չկրցաւ աւելի երկար ինքզինքը զսպել ու պոռթկաց Թաթարներուն դէմ եւ անոնց Հայերուն հանդէպ ընդգրկած ճիւղալային քաղաքականութիւնը չեչոտեց, թուեց հայկական ջարդերը՝ մասնակի թէ հաւաքական: Իր երկրի դատին համար ընդվզող Անդրանիկիմ պատկերը պիտի չանհետանայ մտքէս: Ոտքի վրայ կանգնած, ճակտի երակները ուռած, աչքերէն կրակ ցայտող, դողդողացող մարմնով ան կը պոռար իր անվստահութիւնը իր ցեղը խոշտանգողներու հասցէին: Վստահօրէն Հին Կտակարանի ներշնչեալ մարգարէները նոյնաման էին: Փոթորիկը անցաւ, անգամ մը եւս՝ ըստ երեւոյթին նոյն ուժեղ եւ լուռ մարդն էր, դէմքը աւելի խոր դրոշմ կը կրէր՝ արգիւնք իր մտածումներու դառնութեան:

Մեր հետ եղող Թաթարին համար կացութիւնը փափուկ էր: Հասարակ Թաթարի չէր նմաներ՝ այլ կրթուած, քաղաքավար, իրաւի մէկնթլմէնի մը երեւոյթով: Իր նպատակն էր համաձայնութեան օժանդակել, երկու ազգերուն ցաւերը մեղմացնել եւ օգնել անոնց իրենց դժբախտութեան այդ օրերուն մէջ: Ան լուրթեամբ լսեց Անդրանիկի պոռթկումը, ու ապա հանդարտօրէն, բնազդական փափկութեամբ անցաւ համաձայնութեան եզրերու փնտռութիւն: Երեկոն անցաւ ընդհանուր քննութիւններով, մանրամասնութիւնը թողելով հետեւեալ օրուան: Գլուխ չէզոք մնաց, բայց սիրտս կը թռչտէր դէպի հայրենասէր մարտիկը, որ իր հաւատարիմ գունդը ի մի պահած էր՝ իր սեփական սրտին ոյժով, իր անյեղլի հաւատքին շնորհիւ, զոր կը տածէր հանդէպ Անգլիացիներու ժամանումին՝ օգնելու իրենց: Այժմ անոնք եկեր էին, հոն էին, կը պահանջէին թշնամիին հետ սակարկել՝ անոնց հաւատք ընծայել:

Հարիւրապետ Siraid, Թողուց Շուշին, Պաքուն տեղեակ պահելու եւ D...էն հրահանգներ ստանալու համար: Օրս անցուցի այցելութեամբ, հիւանդանոց, որբանոց, զինուորական կայաններ՝ տեսնելու անոնց իրական վիճակը սեփական աչքերով: Հիւանդանոցինը զարհուրելի էր, ո՛չ վերմակ, ո՛չ բժշկական գործիք, ո՛չ թէյ, ո՛չ շաքար, եւ ոչ ալ վառելանիւթ: Մեծ թիւով հիւանդ եւ վիրաւորներ աղտոտ՝ օճառի չգոյութեան պատճառաւ: Երբ հիւանդանոցին մէջ լուր տարածուեցաւ անդլիացի սպայի մը այցելութեան մասին, մարդիկ կը պոռչտային իրենց մտքէն անցածը, թշուառ վիճակնին վերադրելով Դաշնակիցներու ուշանալուն: Որբանոցին վիճակը քիչ մը աւելի լաւ էր: Տնօրէնուհին «էնֆլիւէնցիա»յով պառկած էր երախաներով լեցուն սենեակի մը մէջ՝ որոնց կէսը նոյնպէս հիւանդ: Ասոնց համար իսկ կաթ չկար: Գորիս իբր կեդրոն, լաւագոյն պայմաններն ունեցողը կը թուէր ըլլալ: Մարդ կրնար երեւակայել մերձակայ Սիսիան գաւառին կացութիւնը, ուր 30,000 թրքահայ փախստականներու բազմութիւն մը խոնուած էր: Կէսօրէն յետոյ Անդրանիկ եկաւ զիս տեսնելու: Ան, հարցումներուն առակներով պատասխանելու սովորութիւն ունէր: Կը խօսէր կամաց, չուրջը ակնարկներ ուղղելով՝ վատահ ըլլալու համար որ ինչիբը ըմբռնուած է: Ան ինչրեց որ յաջորդ օր հանդիպում ունենամ Ազգային Խորհուրդի նախագահ Գուրգէն Զիլիկիլիբեանի եւ իր սպաներուն հետ:

Այցելեցի տեղւոյն պաշտօնատները՝ տեղեկանալու թէ ի՛նչպէս կը գործեն: Թղթատարական պատասխանատուն՝ Պալքեան Ռուս մը, անպործ էր տարիէ մը ի վեր: Դատարանը՝ ծեք Ռուս մը, կը դատէր ըստ ռուսական օրէնսդրութեան, առանց վճարում ստանալու: Այնքան սղբատ էր, որ ստիպուած էր լեռներէն փայտ հաւաքել իր ծերացած մարմինը տաքցնելու համար: Կէսօրէն վերջ Անդրանիկի սպայակոյտին ժողովին գացի: Կլոր սեղանին վրայ ինծի տեղ յատկացուած էր ճիշդ Անդրանիկին դիմացը: Բոլորին աչքերը անոր վրայ սեւեռած էին: Ապա ան ոտքի ելաւ եւ խօսքը ինծի ուղղելով, թուեց նախ, Թուրքիոյ կողմէ Հայոց կրած զուլումը պատերազմի ատեն, թէ ի՛նչպէս անոնք ամէն բան փճացուցած էին, ու կը հաւատային որ Անդլիա, Տրանսա եւ Ամերիկա պիտի օգնեն իրենց, թէ ի՛նչպէս ռուս ճակատի փլուզումէն յետոյ, Համաձայնականները կամաւորներ արձանագրած էին Թիֆլիզի մէջ, եւ այդ բանակը փչրուած էր Թուրքերէն, անոր մեծ մասին թըշնամիին հետ լեզու գտնելը յայտնեց, թէ ի՛նչպէս իր զօրամասը մերժած էր հասարակաց թշնամիին ենթարկուիլ: Եւ թէ ի՛նչպէս Խոյի, Ճուլֆայի կռիւներով Պարսկաստանի մէջ Անդլիացիներուն միանալու ապարդիւն ճիգերէն յետոյ եկած էր Ղարաբաղ, հայութիւնը ջարդերէ փրկելու և Թուրքերուն դէմ կռիւը շարունակելու համար, թէ ի՛նչպէս ան, միւսլիմաններուն չէր վնասած մինչեւ անոնց Թուրքերուն հետ գործակցիլը Հայոց դէմ, թէ ի՛նչպէս Դաշնակիցներուն կողմէ իրեն

յատկացուած գումարը երեք իրեն չէ հասած, որ՝ Թուրքերու ձեռակերտ Երեւանը զինքը ուրացած էր, թէ ինչպէս ինք, անխախտ հաւատք ունեցած էր որ, ի վերջոյ Անգլիացիները իրեն օգնութեան պիտի դային: Իր սպաները ինձ հաղորդած էին որ իրենց զինուորները երկար պիտի չկարենային տոկալ այս տառապանքին: Զօր. Բագրատունի, Բաքուէն միայն մէկ միլիոն թուրքի զրկած էր: Փախստական ժողովուրդը Նախիջեւան իրենց տուները վերադարձնելէ ետք, ան կ'ուզէր մնացեալ գումարով իր զօրքը ցրուել եւ Երեւանէն խնդրած էր զանոնք փոխարինել, Զանգեզուրը պահելու համար: Կ'ուզէր տուն դարձնել Նախիջեւանցիները՝ որոնցմէ ամէն օր երեք տասնեակ կը մահանային: Մնացեալ փախստականներուն հոգը պիտի ձգէր Ազգային Սորհուրդին: Վերջաւորութեան ըսաւ թէ ինչպէս մէկ միլիոն Հայեր ջարդուած են Թուրքերու կողմէ եւ թէ Շուշի հասնելու իր ձեռնարկով կ'ուզէր փրկել տեղւոյն հայութիւնը, որ անոնք ալ չարժանանան Բաքուի իրենց ազգակիցներու բախտին՝ երբ Անգլիացիք հրահանգեցին կռիւր դադարեցնել հոն չհասած: Որ իր այժմու միակ հոգը, Թուրքերէն ասպատակուած հողերէն իրեն ազաւինող փախստականներն էին: Անոնք փրկուած էին իր ձեռներէցութեամբ եւ իր վերջին պարտականութիւնն էր զանոնք իրենց տեղերը վերադարձնել:

Իր ճառը զիս անակնկալի բերաւ: Մինչդեռ այն կարծիքը ունէի որ համաձայնութեան վրայ էինք, վստահօրէն ան կը մտադրէր Նախիջեւանի վրայ արշաւել, շատ լուրջ կռիւներ տեղի պիտի ունենային, ուստի առաջարկեցի յետաձգել իր ծրագիրը, մինչեւ ես կարենայի Պաքուի հետ հաղորդակցիլ, խոստանալով ամէն ինչ ընել փախստականներուն վերադարձը փութացնելու եւ օգնելու, որուն, վերջապէս համակերպեցաւ:

Երեկոն չվերջացած, Անդրանիկ, միւսլիման ներկայացուցիչը, եւ ես, ուզեցինք անցնիլ Անդրանիկի դէմ Թաթարներու ամբաստանութիւններուն, եւ միւսլիման ներկայացուցիչը յայտնեց որ ինքը գոհացում ստացած է լսելով որ ամբաստանութիւնները իրաւացի չեն: Անդրանիկ այս ձեւակերպութիւնները լսեց հանդարտօրէն եւ իր զգացումները ցոյց չտուաւ:

Առտուն կանուխ՝ մեկնեցայ Շուշի, հետո՝ միւսլիմանները եւ Պաքուցի Հայը, նաեւ 400 շուշեցի փախստականներ, որոնք անցեալ ամառ Զանգեզուր ապաստանած էին եւ չէին կրցած վերադառնալ: Հասանք ժամը 20-ին ձիւնամբրիկի մէջ: Հայերը բրիտանական վաշտին ընդունելութեան վրայ էին: Զիս հրաւիրեցին ընթրիքին, սակայն Անդրանիկին հետ երեք օր անցընելէ յետոյ նախընտրեցի մինակս ճաշել՝ ներկայութեամբը այդ մարդէն կրած յիշատակներուս, քան ընկերակցութիւնը վայելել «բաղաբազան միմոսներու»: Ուստի մերժեցի:

Ժողովի հրաւիրեցի մեր սպայակոյտին կեդրոնը (հայ եւ թաթար ղեկավարները) եւ խնդրեցի մեզի ընկերացող թաթար ներկայա-



ցուցիչն պատմելու ի՛նչ որ տեսած էր : Իր զեկոյցը կը ժխտէր Անդրա-  
նիկի դէմ բերուած ամբաստանութիւններուն մեծ մասը : Միւս լիւրժանի  
մը կողմէ ասիկա զժգոհալի էր իրեններուն համար , բայց անոնք ինք-  
զինքնին զսպեցին , տարբեր հարցումներ ընելով :

II

Ռուսերը եւ անոնց սովորութիւնները ընդգրկող կովկասեան ցե-  
ղերը մեծ հաւատք կ'ընծայէին աղերսագրերու վրայ : Անոնք ըստ սո-  
վորութեան կը գրուէին մեծածաւալ պաշտօնաթղթերու վրայ : Զայն  
բերողը կ'աղերսէր որեւէ նիւթի մասին , մասնաւորաբար իր գրպանին  
վերաբերեալ եւ բոլորովին վստահ՝ որ ձեզ եւս կը շահագրգռէ : Ան  
միշտ համոզուած է որ այդ մասին դուք ոչինչ գիտէք , որով կը սկսի  
Կովկասի վերջին հարիւր տարուան պատմութեան սկիզբէն , անկէ վերջ  
իր անձնականին վերաբերեալ մանրամասնութիւններով : Աղերսագրի  
վերջին էջին մէջ կու գայ զայն գրողին ճարտասանութիւնը՝ դրամ չու-  
նի , կ'ուզէ Թիֆլիզ երթալ , կ'ուզէ որ Անգլիացիս զինքը կառքով տանի .  
կամ թէ՛ թալլուած է , թուրքին , թաթարին կամ Պօլչեւիկներուն կող-  
մէ եւ կ'ուզէ որ Անգլիացիին ետ առնել տայ կամ փոխարժէքը հատու-  
ցանէ : Կայ աւելին՝ ամօթ ըսուած բանը չունի : Զեզ կը հետապնդէ  
մինչեւ ընդունարան , ննջասենեակ՝ ամէն ժամ . ձեզմէ կը սպասէ ան-  
միջական գոհացում : Եթէ սակայն տրամադիր չէք իր ուզածը ճշգրտօ-  
րէն կատարելու , դուրսը կը սպասէ ձեր որոշումին՝ գաղտնօրէն ձեզ  
կը հետապնդէ ամէն ձեւով :

Ամէն օր պատգամաւորներ կը տեղան աղերսագրերով . բոլորն  
ալ՝ հայ թէ ռուս նոյն գանգատը , որ Ատրպէճանական կառավարու-  
թիւնը կը մերժէ իրենց վճարել : Անոնք չէին հասկցած որ «նուագողը  
կը վարձատրուի» : Եթէ իրենք չէին ճանչնար այդ իշխանութիւնը՝  
ան պիտի չվճարէր իրենց :

Միւս լիւրժանները տնտեսական ճնշումներ ի գործ կը դնէին  
Հայերու վրայ՝ զանազան ձեւերով , որոնցմէ էր Պաքուէն Եուշի Հա-  
յոց անունին դրամատան միջոցով դրամ զրկելը : Պանքի մէջ հաշիւ ու-  
նեցող՝ գլխաւորաբար Հայերն էին : Այդ ընթացքին պատճառաւ ա-  
նորեայ գործերու դադար , ուստի քաղաքացին ուրիշ ընելիք չունէր  
բացի քաղաքականութիւն եւ դաւեր խաղալ :

Սուրհանդակներ զրկեցի հայ ղեկավարները հրաւիրելու , գիտ-  
նալու թէ ի՛նչ քայլեր կ'առնէին օգնութիւն կազմակերպելու , անոնց  
ծանօթանալու համար : Անոնց պետին՝ Սեդրակ Միլիք Եանազարեա-  
նիմ գալուստը պատեհութիւն մը եղաւ հայանպաստ ցոյցի՝ ժապաւէն-  
ներով , դրօշակներով : Քաղաքապետը գործունէութեան հիմունքը կը  
կազմէր եւ ըստ այնմ իմ կողմէ «փետտուեցաւ» , ճնշումի ենթարկուե-  
ցաւ : Բայց Սեդրակ Պէկ կը մերժէր ականաւոր դիրք ունենալը :

Հայերու հետ հաւաքոյթը հետաքրքրական էր: Ամէն տեսակի տիպարներ՝ իւրաքանչիւրը իր տեղամասին մէջ ունէր զինեալ ոյժ՝ կանխելու համար թաթար յարձակումները: Անոնցմէ ոչ մէկը վարժութիւն տեսած զինուորներ էին: Սեդրակ կալուածատէր էր՝ լաւ ընտանիքէ, ապացոյց տուած է իր ճարտարութեան՝ թէ՛ կազմակերպելու, եւ թէ՛ Թուրքին դէմ դիմադրելու գործին մէջ, երբ անոնք փորձած էին արշաւել հիւսիսային Ղարաբաղի վրայ: Պետերէն մին նախկին կրօնաւոր մըն էր: Բացի Սեդրակէն ոչ մէկը աչքառու՝ իբր կարող:

Ամսու 30-ին Ծ-էն սուրհանդակ մը հասաւ, հաղորդելու որ Ապուլարի մէջ միւսլիմանները յարձակած եւ սպաննած են Հայեր: Երեկոյեան ճիշդ մեր կեդրոնատեղիին մօտ հրացանածգութիւն մը սկսաւ, սակայն դուրս դալով ճշգեցինք որ ոստիկան մը կրակած էր գողի մը վրայ:

Պաքուէն հեռագիր մը, Անդրանիկի զաղթականութեան տունը արձի եւ իր զօրամասին առժամեայ պահպանումին մասին:

31-ի յետմիջօրէին մէջ հեռագրաթերը կտրուած է Աղտամի մէջ, ուր թաթար զինուորները ըմբոստանալով ձերբակալէր են զիրենք մարդող ուս սպաները՝ Ատրպէյճանի կառավարութեան վարձկան: Մեր Գօրա կառքերը՝ կայարան զրկուած մեր իրերը բերելու, չէին կրցած վերադառնալ:

1919 թուի Նոր Տարուան օրը իրար յաջորդող տեղափոխութիւններու եւ ահազանդերու շարք մը բերաւ: Նախաճաշին լուր եկաւ թաթար շրջանի պետէն, խնդրելով որ երթամ զինքը տեսնեմ՝ տեղեկանալու տեղւոյն մէջ կատարուած դէպքերուն մանրամասնութիւններուն: Որովհետեւ կացութիւնը մթին է, մեկնեցանք հրասայլերով, սակայն ճամբան անոնցմէ մին խանդարուեցաւ: Երբ եզներ կը փնտռէինք զայն դուրս քաշելու համար, ուս կառավար մը՝ որուն նախապէս պաշտպան եղած էի, լուր տուաւ որ ինքը քուրճ սպայ մը բերած է Աղտամէն, որ այժմ զօրակայանին մէջն է: Միւս կառքով մարզին պետին սենեակը երբ հասանք, Ատրպէյճանի ներկայացուցիչը եկաւ մեզի միացաւ ու յայտնեց որ ըմբոստութիւն մը տեղի ունեցած է Աղտամի մէջ, որ տեղւոյն բնակչութիւնը կասկածելով որ մենք Հայերուն կ'օգնենք՝ մեր բռնակառքերը կեցուցած եւ ետ զրկած են Սվլախ, որ զինուորները բանտարկած են իրենց ուս սպաները, եւ որ ինքը եւ մարզին պետը գործնապէս ձերբակալութեան տակ են Շուշիի մէջ: Յայտնեց նաեւ որ, Պաքուէն մեզի ընկերացող Հայը, Աղտամ վերադարձին ձերբակալուած է եւ իր թուղթերը վերցուած են, գրութիւններէն մին՝ նամակ մը Պաքուի Հայերուն Անդրանիկի մեղադրանքները պարունակող, գրաւուած են նաեւ անոր միջոցաւ մեզի բերուելիք իրերը: Ինչ որ ալ ըլլայ եղելութիւնը՝ հաճելի բաներ չէին: Եթէ ըսուածները ճիշդ էին՝ մենք ալ

կրնայինք նեղ դրուժեան մէջ իյնալ: «Ով որ տատանում ունենայ», կը կորսնցնէ: Ուստի իրեն ըսի որ հրամայէ Շուշիի թաթար ղեկավարներուն, որ զան շուտով եւ ինձ, զեկուցում տան:

Թաթարները ասխացիներ են, արեւելքի մէջ մարդը պէտք է դատել իր միջավայրին առնչութեամբ, որով երբ անոնք եկան, երեսունի չափ, մէջն ըլլալով երկու թուրք սպայ, ըսի իրենց որ սուրհանդակները կեցնել պատերազմական արարք մըն է, որ կատարած են Դաշնակիցներուն դէմ եւ լուրը Պաքու հասնելուն պէս զսպիւն ոյժեր պիտի զրկուին եւ թէ իրենց մորթը փրկելու լաւագոյն կերպն է դաւին տէր չկանգնիլ եւ թէ ինչ ինձ կը վերաբերի, կը պահանջեմ իրենցմէ զբաւոր երաշխաւորութիւն մը, որուն մէջ պէտք է նկատի առնուի առաջին՝ մեր կառքերուն եւ սուրհանդակներուն շուտով անցըր եւ որ երթեակը երբեք պիտի չխանգարուի. երկրորդ՝ երեք օրուան մէջ ինծի յանձնուի շարժումը ղեկավարողներուն ցանկը, երրորդ՝ որ բերեն Անդրանիկի նամակը առ ի ստուգում (վստահ որ նման գրութիւն գոյութիւն չունէր եւ նամակը երբեք պիտի չերեւնար): Վիճիլ փորձելէ յետոյ, համաձայնեցան եւ ստորագրեցին: Ճամբելէ առաջ, ըսի որ, եթէ դանդատներ ունին, կրնան յայտնել: Պատասխանեցին որ իրենց ըսուած է որ Հայերը կը պատրաստուին դիշերը իրենց վրայ յարձակիլ եւ խնդրեցին որ հայ պահակախումբ մը դիշերը չըջագայի իրենց թաղամասը, ինչպէս նաեւ թաթար պահակախումբ մը Հայերունը: Ասոր համաձայնեցայ, պայմանաւ որ երկու խումբերուն մէջ ալ, Անգլիացի պիտի զրուի:

Յետ միջօրէին Տ-ին հետ շրջագայելու ելանք, մեր վրայ կրակ բացուեցաւ հայ զիւղի մը շրջակայքէն: Առաջին գնդակները բարձրէն անցան, յաջորդները աւելի մօտէն, ուստի վերադարձանք սպայակոյտ:

Գիշերը խաղաղ անցաւ, թէեւ Աղտամէն լուր չկար: Որոշեցինք որ ես Գոքիս վերադառնամ Անդրանիկի դորժերով, մինչ Siraid պիտի մնար Շուշի: Որով Անդրանիկի բժիշկին ընկերակցութեամբ, ես եւ թիկնապահս, ջորեխումբ մը ցորենի պարկերով բեռնաւորուած՝ Նախիջեւանի փախստականներուն համար, ճամբայ ինկանք ձիւնի մէջէն: Շուշիի թողելէ քիչ ետք մեր վրայ կրակ բացուեցաւ, այլուր խաղաղ էր: Նոյն գիշերը ուզեցի Գոքիս հասնիլ. առանց դադարի յառաջացանք եւ վերջապէս ժամը 1.30-ին հասանք, 55 մղոնը 16 ժամէն կտրելով: Ճամբուն վերջին մասին ատեն ցուրտ էր: Մութին մէջ երկու անգամ ձիէն ինկայ խոր ձիւնի մէջ. հաճելի օր մը չէր:

Անդրանիկ այցելութեան ելած էր առտուն կանուխ: Գիտցածներս իրեն հաղորդեցի եւ խնդրեցի որ իր կարգադրութիւնները լրացնէ զաղթականներու մեկնումին համար: Զանազան աղբիւրներէ կ'իմացուէր, որ հայ եւ միւսլիման կռիւները կը շարունակուէին տակաւին Ղափանի շրջանին մէջ:

D... որ զիս կը ներկայացնէր բացակայութեանս, կէսօրէն յետոյ Շուշի վերադարձաւ :

Պաֆուի Ատրպէյճանի Խորհրդարանի մէկ անդամը, որ Շուշի ինձ եկած էր Զանգեզուրի Հայերուն եւ Անդրանիկի ղէմ գանգատներով եւ պաշտպանութիւնս խնդրած՝ հասաւ ամսու 4-ին : Դժգոհեցաւ որ զինքը ղիմաւորող չէ եղած : Դիտել տուի որ ինքը եկած է իր սեփական հրաւերովը, ո՛չ թէ իմին, ես իր պաշտպանութենէն բացի զինքը ընդունելուն մէջ զեր չունէի : Այսուհանդերձ, Անդրանիկ եւ Ազգային Խորհուրդ՝ հաճեցան ընդունիլ զինքը : Ես ներկայ էի խօսակցութեան : Զօրավարը շատ քաղաքավար էր իրեն հանդէպ, իր հարցումներուն եւ մեղադրանքներուն պատասխանեց հանդարտութեամբ, թէ եւ իր կարգին մատնանչեց՝ որ հակառակ կնքուած զինագաղարին Թաթարք միշտ կտրած կը պահեն Գոքիսի եւ Ղափանի ճամբան Հայերու ղէմ, սովի մատնած գաղթականները՝ ցորենի ճամբան կտրելով : Թաթարք յետոյ խնդրեց որ այցելեմ Զանգեզուրի շրջանի իրենց գիւղերը, ես այդ ըրի ամսու 7-ին :

Մեկնեցանք կանուխէն միւսլիմաններու «միթինկին»՝ երկու Հայերու հետ : Առինք վերելի ճամբան եւ գիւղին մօտ վրանիս կրակ բացին : Այսուհանդերձ գիւղ մտանք եւ տեղեկացանք որ «ժողովը» տեղի պիտի ունենար 5 վերստ հեռու Թաւուր Մուսֆանկի վայրին մէջ : Շրջանին մեծաւորը, խորհրդարանի անդամը եւ մօտաւորապէս հարիւր հոգի մեր ժամանումին կը սպասէին : Սովորական ամբաստանութիւնները Հայերու ղէմ, որ՝ խաղաղ գիւղերու վրայ կը յարձակին, ու ահա, ի դէպ, սուրհանդակ մը կը հասնէր 20 վերստ հեռու Թաթար գիւղէ մը՝ ըսելու որ Անդրանիկի առաջնորդութեամբ ձիաւոր Հայեր յարձակած են գիւղին վրայ եւ օգնութիւն կը խնդրեն : Կարճ կապելու համար, Հայեր՝ ինծի հետ համաձայն եղան երկու միւսլիմանի հետ այդ գիւղը երթալ եւ տեղեկանալ իրականութեան : Անոնք ուշ ատեն Գոքիս վերադարձան երկու կողմերէն ստորագրուած վկայութիւնով մը՝ որ այդ գիւղը որեւէ կռիւ տեղի ունեցած չէր :

Վերադառնալէ առաջ հրահանգեցի, որ Գոքիսի եւ Ղափանի միջեւ ճանապարհը բանան, միւսլիմանները երդում ըրին որ ճամբան երբեք գոցուած չէր : Բայց նոյն առաւօտն իսկ յարձակում կրած էի, եւ ժխտեցի զիրենք : Զքմեղացան ըսելով որ կրակը նշան տալու կը ծառայէր, բայց չկրցին արդարացնել թէ զնդակները ինչո՞ւ մեր գլուխին այդքան մօտէն կ'անցնէին :

Վերադարձին օրը մեր Թաթար պահակագործը գանգատեցաւ խորհրդարանի անդամէն, որ կը պահանջէր մեկուսացնել դրացի բարեկամ հայ գիւղերը (պոյքթի ենթարկել) սպառնալով պատժել ամէն անոնք որ Հայերուն հետ առեւտուր կ'ընեն :

Բացակայութեանս, Անդրանիկ Նախիջեւանի խաներուն գրեր է որ, պատերազմը դադրած է եւ փախստական Հայերը պէտք է իրենց

տեղերը վերադառնան եւ որ անդլիացի սպայ մը պիտի ընկերանայ անոնց, ու պատասխանի կը սպասէր: Իրենց պատասխանին մէջ խաները ժամանակ կը խնդրէին, սպառնալով մանաւանդ զինեալ արդեւէ՞ եթէ վերադարձողներուն ընկերային զինեալ ոյժեր, եւ իրեն հետ միասին կը հրաւիրեն անդլիացի ներկայացուցիչը Նախիջեւան՝ հարցին քննութեան համար, իրենց՝ եւ այն պատուիրակութեան հետ, որ Երեւան գացած էր նոյն խնդրոյն համար եւ որ շուտով պիտի վերադառնար: Ո՛չ Անդրանիկ, եւ ոչ ինքս սիրեցինք այդ նամակին շեշտը, ուստի ըսի իրեն որ կ'ուզեմ Նախիջեւան երթալ ամսու Ց-ին եւ տեսնել թէ ի՛նչ կարելի է ընել, քանզի պէտք չէր միւսլիմաններու հետ կռիւով բանալ ճամբան:

Խաներուն գրեցի որ Նախիջեւան պիտի դամ զիրենք տեսնելու: Շուշիէն տակաւին ոչ մէկ լուր:

Անդրանիկի բժիշկին եւ իր երկու մարդոց հետ ճամբայ ինկանք դէպի Նախիջեւան: Ժողովուրդին մեծ մասը ներկայ եղաւ մեր մեկնումին, խոստացայ մէկ շաբաթէն վերադառնալ:

Զիտով մէկ օրէն հասանք Ղարաֆիլիսէ: Ճամբան՝ աւելի ճիշդը արահետը կ'անցնի ամայի, անկենդան վայրերէ: Բարձրութիւններուն վրայ քարէ եւ յարդէ հիւղակներ կան շինուած անցեալ ամառ թրքահայ եւ նախիջեւանցի փախտականներէ: Ասոնցմէ մնացողները այժմ տեղաւորուած էին կենդանիի գոմերու մէջ: Մինչեւ որոշ ատեն 30-էն 40,000 Հայեր սպաստան գտած էին այդ բլուրներու լանջերուն վրայ, որոնց սակայն մէկ քառորդը մահացած էին՝ սովէն, ցուրտէն եւ հիւանդութիւններէն: Ղարաֆիլիսէ կը գտնուի Պագար Զայի հովիտին մէջ: Մեզ դիմաւորեց Անդրանիկի քարտուղար Եղիշէ Քաջուհի, որ սովահարներու օգնութեան գործով կը զբաղուէր: Գիւղին մէջ հանրակացարանէն զատ, կային հիւանդանոց մը եւ որբանոց մը, աւելի լաւ կազմակերպուած՝ քան Գորիսի մէջ: Պատճառն այն էր որ հոն՝ Գորիսի մէջ զբաղուողը Ազգային Խորհուրդն էր, մինչդեռ Ղարաֆիլիսայինը՝ Անդրանիկի հոգատարութեան ներքեւ:

Անցանք լեռնային կիրճէ մը, որմէ յետոյ Նախիջեւանն է: Ամէնուրեք մէկ քանի ոտք խոր ձիւնով ծածկուած է եւ սովորական ճամբան ձիւնու համար անանցանելի: Մեզի ընկերացող Անդրանիկի սպաներէն մէկը՝ տեղւոյն ծանօթ, ըսաւ որ ինք կրնայ լեռնային կածաններով մեզ առաջնորդել Կիւմրիի անցքէն: Այդ անցքէն առաջ, վերջին գիւղին մէջ մէկ ժամ հանգստացանք եւ տեսնուեցանք տէրօր եւ ուրիշներու հետ: Գաղթականներու վիճակը օր ըստ օրէ կը վատթարանար: Անդրանիկի միջոցառումները կանխած էին մեծածաւալ սովամահութիւնը: Խանդավառուեցան որ մենք իրենց տուն դարձը կարողադրելու կ'երթանք եւ Անդլիոյ հասցէին օրհնութիւններ կը չըռայլէին:

Գիւղը թողելէ յետոյ, սկսանք մազլիլի գագաթ՝ 3000 մեդրէ

աւելի բարձրութիւն մը : Ոչ մէկ ծառ կամ կենդանի էակ անծայրածիր ձիւնին վրայ, մինչեւ վերելքի կէս ճամբան, ուր մեզ դիմաւորեց Կիւմրիի ոստիկանապետը եւ պահակազօրք մը, որոնք մեզ պիտի առաջնորդէին լեռնանցքէն : Ուստի մէկ շարքի վրայ իյնալով ելլելով, լուռ կը յառաջանայինք : Տեղ մը անցանք խումբի մը «մնացորդ»ներուն քովէն, որոնք յանկարծակի մըրիկի մը բռնուած էին եւ կորսուած : Ժամը 3-ին մօտ դադարէ հասանք եւ սուր անկիւն մը դառնալով դէմ դիմաց դանուեցանք զմայլելի տեսարանի մը : Պայծառ արեւը՝ ամէն կողմ կ'ողողէր հսկայ ձիւնածածկ լեռներ եւ կ'արտացոլար ծիածանի բոլոր գոյներով լեռնազազաթներուն միջեւ :

Վարը՝ հեռուն ամպերու շերտերը ընդարձակ ծովու կերպարանք կու տային ձորին, մինչդեռ Արաբսէն անդին հեռաւոր եզերքէն կը բարձրանայ երկզագաթ լեռը : «Արարատ» պրոպագի եւ դարձայ դէպի բժիշկը՝ «հիմա ես հայ հաւատացեալներէն եմ վերջապէս, քանի որ տեսայ ձեր սրբազան լեռը» :

Ան ժխտեց այդ լեռն ըլլալը, բայց ճիշդ էր, եւ պատրանք մը եւս փշրուեցաւ : Հայրենասէր Հայ մը՝ չի ճանչնար Արարատը :

Այսուամենայնիւ նոյնիսկ Արարատը՝ չուտով մոռցուեցաւ, փոթորիկ մը կ'ոռնար : Հասանք դառիթափի մը, որմէ անցնիլը նոյնիսկ ամենավարժօտն ձին պիտի չուզէր հմայուիլ : Անոնց սանձէն բռնած սկանք սողալ ձեռքի եւ ծունկերու վրայ : Ի վերջոյ մշուշի մէջ՝ ձիւ վայրէջքէ մը ինկանք ցանցառ ձիւնի մէջ եւ խաւար գիշերով եղանք Կիւմրի դիւղը : Պատահաբար իմացայ որ խաներուն դրած նամակս նոր զրկուած է, քանզի Հայերը վախցած են անցնիլ միւսլիւման Գուլաքի դիւղէն՝ մինչեւ այդ առաւօտ :

Շուտով ըմբռնեցի Հայոց այդ խորշանքը, որովհետեւ մենք մեծ դժուարութեամբ կրցանք Գուլաքի մօտենալ : Հազիւ տեսողութեան վրայ էինք, երբ գետանցքի պահականոցէն ազդարարող կրակ բացուեցաւ : Ասոր յաջորդեց ժամ մը տեւող բանակցութիւն՝ խորխորատի երկու կողմերէն, որպէսզի կարենանք իրենց մօտենալ գետի հունին եզերքը : Հոնկէ զիս տարին դիւղին պրիստաւի մօտ՝ իբրեւ անդլիացի ներկայացուցիչ եւ ապա պահակներով՝ դիւղ :

Արդէն շատ ժամանակ կորսնցուցած էի այդ դիշեր նախիջեւան հասնելու համար, ըստ այնմ, մեծին իմացուցի, որ իրեններէն երկու հոգի մեզ առաջնորդեն, որքան կարելի է մինչեւ Ծախբուղ՝ որ 8 վերստ հեռաւորութեամբ յաջորդ մեծ դիւղն էր : Վերջապէս, շատ ժամանակ վերջ, երկու հոգի տրուեցան ու ճամբու ինկանք : Մօտ երեք վերստ վար ձորին մէջ ճամբան զոցուած էր հայ պահակներէ դիմացի բլուրներուն վրայ, եւ դարձեալ ժամանակ կորսնցնել հարկ եղաւ մեր ինքնութիւնը բացատրելու համար անոնց «լեռնային» բացականչութիւններով : Այդ միջոցին մեզ առաջնորդողները դասալիք եղան, թողով որ մենք մինակնիս ճամբորդենք : Ծախբուղին մղոն մը

մնացած, միևնույն պահակներ մեր դէմէն կրակ բացին վրանիս, որով ձիերէն իջանք եւ երեքը հոն թողլով, բժիշկին հետ ձիերու սանձերէն բռնած զացինք 600 եարտ հեռու գտնուող պահակախումբը: Կրկին կրակեցին, զնշանները մեր շուրջը կը պարէին, մեր երկու կողմերէն սկսաւ կրակ տեղալ: Ենթադրեցի որ ծուղակն ինկած ենք: Հապճեպ՝ կրակներու մէջէն ետ դարձանք մեր խումբին մօտ, եւ այս փախուստիս ատեն հաւասարապէս կ'անիծէի ե'ւ Հայերը, ե'ւ Թաթարները, որ զիս նման անելի մը առաջնորդած էին՝ զինադադարէն ամիս մը վերջ, զնշան մը կոնակէս ուտելու: Բայց կը ձգտէինք հասնիլ խումբին, որ թումբի մը ետեւը չոքած անվնաս մնացեր էր: Հոս մենք զինուորական խորհուրդի նստանք եւ որոշեցինք որ Բուլլանի վերադառնալէ բացի ուրիշ բան չկար ընելիք:

Վերադարձին զիւզացիները ներողութիւն խնդրեցին որ մեզ լքած էին, որովհետեւ կը վախնային բլաքրմեքու Հայերուն յարձակումին ենթարկուիլ: Համոզուեցայ որ նամակս զրկուած չէր, ըսի թէ Կիւմրի կը վերադառնամ, մինչեւ որ խաները առաջնորդներ զրկեն զիս Նախիջեւան հասցնելու համար: Արդիւլեցին մեր ետ դարձը: Կուսահեցի որ մեզ հայ լրտեսի տեղ առած են եւ մտադիր էին մեզ փճացնել կողմասեան եղանակով: Ի վերջոյ համաձայնեցան ինձմէ նամակ մը տանիլ Շահբուղի խանին, որով կը հրահանգէի իրեն, զալ զինուորներով մեզ առնելու: Իմ խումբէն մէկ սպային արտօնուեցաւ ետ դառնալ Կիւմրի՝ Հայերուն զգուշացնել որ ճամբորդողներուն վրայ չկրակեն: Ուրիշ մը իրենց սուրհանդակին ընկերացաւ դէպի Շահբուղ: Բժիշկը, ես եւ թիկնապահներէս մին՝ բանտուած մնացինք զիւզին մէջ: Երկու օր մնացինք բռնի հիւր եւ մեր սուրհանդակներէն ոչ մէկը վերադարձաւ:

Սակայն ուր որ կը մնայինք՝ մեզի տուին կարագ, հաւկիթ, մենք անոնց՝ շաքար եւ թէյ, ու բարեկամացանք: Տունը սենեակ մըն էր, մէջտեղը խորը ինկած կրակարան մը՝ (թոնիր ըլլալու է) վրան գոցուած ցած սեղանով մը, որուն շուրջը նստանք ամբողջ օրը սրունքներնիս ծալլած անոր ներքեւը, որ տաքնանք: Մէկ ծայրը բարձրագիւր տեղ մը (թախթ) քնանալու: Բայց ցուրտին պատճառաւ նախընտրեցինք գետինը:

Երեկոները զիւզացիք՝ ամէնքն ալ արդիական հրացաններով, կու գային մեզ տեսնելու եւ խօսակցելու պատերազմին եւ քաղաքականութեան վրայ: Յայտնի էր որ անոնք ինքնութեանս չէին հաւատար, որովհետեւ միայնակ էի: Կը հաւատային որ Անգլիացիք պիտի դան հեծելագործի գումարտակով մը եւ իրենց զիւզը պիտի քանդէին: Յոգնած էին տիրող անկարգութիւններէն եւ դժգոհ իրաներու իշխանութենէն, կը փափաքէին Ռուսիմ վերադարձը, որ գոնէ կեանքի ապահովութիւն կու տար: Կը փափաքէին խաղաղութիւն Հայերուն հետ, սակայն փախստականներու անգէն վերադարձը կ'ուզէին: Զէն-

քերու պարազան մեծ խնդիր էր : Հայերը չէին ուզեր եւ չէին կրնար առանց Թաթարներու դէմ պաշտպան ունենալու՝ անգէն վերադառնալ : Անցեալ տարի անգէն Հայեր Նախիջեւանի մէջ ջարդուած էին եւ միայն անգլիական ոյժերու ներկայութիւնը կրնար արգելք հանդիսանալ նման դէպքերու կրկնութեան, եթէ փախչողները անգէն վերադառնային : Պատմեցի Թուրքիոյ պարտութեան ճիշդ ըլլալը, թէ ինչպէս Անգլիացիք կը փորձէին խաղաղութիւն եւ բարեկեցութիւն հաստատել այս երկրին մէջ, թէ մենք միւսլիմաններու դէմ չենք պատերազմիր, այլ միայն Թուրքերուն դէմ, եւ թէ մեր բանակին մէջ բազում միւսլիմաններ կային Թուրքին դէմ կռուող : Խօսեցայ Միջագետքի եւ անոր սուրբ քաղաքներու մասին : Անոնցմէ մին Նեմեփ դտնուած էր վեց ամիս առաջ : Գիւղացիք խիստ հեռաքրքրուած էին : Ի վերջոյ երբ երկու օր վերջ Շահբուղէն պահակազօրքը եկաւ, իրենցմէ մէկ երկվեցեակ մը որոշեցին մեզի ընկերանալ Նախիջեւան : Խանը անձամբ չգալուն ներողութիւն խնդրեց եւ կը զրկէր իր փոխհրամանատարը : Գիւղացիք որ յայտնապէս կ'արհամարհէին զինքը, կ'ըսէին, որ ան կը սոսկար ճամբորդելու :

Շահբուղ հասանք առանց միջադէպի, բացի այն որ քանիցս վրանիս կրակ բացին մերձակայ պահականոցներէն : Խանը՝ բարձրահասակ, նիհար, երիտասարդ սպայ մըն էր ուսւ բանակէն : Այժմ կը հրամայէր ջոկատի մը, որ կը հսկէր Նախիջեւան տանող ճամբուն ապահովութեան՝ հայկական հաւանական յարձակումի մը պարագային : Մեր քաջածններուն համար ցաւ յայտնելէ յետոյ, յայտնեց որ մտադիր էր մեզի ընկերանալ Նախիջեւան, որով, լուացուելէ եւ սաիրուելէ վերջ՝ մեկնեցանք : Ճամբու ընթացքին պանգատեցաւ երկրի վիճակին մասին եւ յատկապէս, նման վայրի մը մէջ իր աքտորականի կեանքէն : Յայտնօրէն ան կարօտ էր Թիֆլիզի նախապատերազմական պերճութիւններուն : Շահբուղը թողած ատեննիս տեղացող թեթեւ ձիւնը բարդացաւ՝ կէսօրէ յետոյ : Ճամբուն բոլոր հայ դիւղերը քանդուած էին : Երբ Նախիջեւան հասանք՝ մուտք կոխած էր, մեր խումբը խոր ձիւնին մէջէն անցաւ՝ ամայի փողոցներէ :

Մեզ առաջնորդեցին գլխաւոր խաներէն մէկուն տունը եւ առանց այլեայլ ձեւակերպութեան մտցուցին ընդունելութեան սրահը՝ բազմութեամբ լեցուն, գլխաւորաբար համազգեստաւոր : Երեսնամեկ զարճող պատգամաւորներէն կէս ժամ վերջ հասած էինք : Գործերուն ընթացքը Նախիջեւանի մէջ կնճռոտած էր : Երբ Հայ Հանրապետութիւնը վրացիներու հետ պատերազմի մէջ էր, Թուրքերու քաջուելէն յետոյ Նախիջեւանի Թաթարները՝ որոնք ինքզինքնին Արաքսի Հանրապետութիւն կը յորջորջէին, յարձակած էին Երեւանի հարաւային մարզերուն վրայ եւ սովորական ջարդերը տեղի ունեցած էին : Վրաստանի հետ հաշտուելէ յետոյ, Երեւան՝ անդեղէնի եւ փախստականները վերադարձնելու ստիպման տակ յարձակած էին ներխուժող



միևսլիւմաններուն վրայ, եւ Նախիջեւանի ճամբով կ'ընթանային յաջողութեամբ՝ անխուսափելի փոխ-վրէժի հաւանականութեամբ, երբ Պարսից Շահին Թաւրիզի ներկայացուցիչը՝ երկու հայ պատգամաւորներով՝ մին կրօնաւոր, երկու նախիջեւանցի միևսլիւմաններու հետ կը հասնին Երեւան հաշտուելու միջնորդ հանդիսանալու համար: Շարաթ մը կը վիճին առանց եզրակացութեան մը յանդելու: Ամէն պարագայի ոչ մէկ դրաւոր բան գոյութիւն ունեցած չէր, եւ Երեւանէն երկու Հայերու ընկերակցութեամբ՝ Թաւրիզ վերադառնալու վրայ էին: Այս բաններուն տեղեակ չէի, ո՛չ ալ գիտէի թէ ո՛ւր կը գտնուէին մօտակայ անգլիական ոյժերը: Թիֆլիզ կը գտնուէին՝ գիտէի: Անգլիացի սպայ մը տեսնուած էր Ալեքսանդրապօլ, Ֆրանսացի մը՝ Երեւան՝ որ արդէն հեռացած էր: Իմ պարտականութիւնս Անդրանիկի դաղթականները Նախիջեւան վերադարձնելն էր և այստեղ կացութիւն մը ստեղծուած էր որ խնդիրը կը բարդացնէր՝ այդ մասին ոչինչ գիտէի, եւ ո՛չ ալ հրահանգներ ունէի: Այսուհանդերձ անգլիացի սպայ մը՝ Արեւելքի մէջ, շուտով կը վարժուի անսովոր կացութեանց, ուստի թէյէն յետոյ կարգով հարցուփորձեցի՝ Պարսիկները, Թաթարներն ու Հայերը: Խաները կ'ըսէին որ պատրաստ են Անգլանիկի Հայերը ընդունիլ՝ բայց անզէն. կ'ուզէին որ նախապէս միևսլիւմաններու պատուիրակները ընդունիմ՝ միացեալ ժողովէն առաջ: Երկու կողմերն ալ կը փափաքէին որ անգլիական ոյժերը պահպանէին կարգն ու կանոնը: Եքեղ ճաշ մը յաջորդեց: Ժամը 2-ին անկողին:

Թաթար ներկայացուցիչները պարտ էին դալ ժամը 10-ին, 13-ին դեռ ներկայ չէին: Լուր զրկեցի որ նիստը տեղի պիտի ունենար առանց իրենց: Փափաքուած արդիւնքը տուաւ, անմիջապէս երեւցան ու փոսցին սովորական դանդատները, թէ ինչե՛ր ըրած էին Հայերը եւ կրակ կտարած՝ կ'ըսէին, թէ իրենք ինչե՛ր պիտի ընեն Հայերուն:

Բոլոր խօսակցութիւններէն, չորս հետեւութիւններ որոշակի էին: Խաները կը վախնային տղէտ միևսլիւման տարրէն, եւ զանոնք գրգռողներէն՝ Թուրքեր եւ մուլլաներ, եւ պատրաստ էին անոնց հաճելի ըլլալ՝ իրենց դիրքերը պահելու համար: Թաթարները կը վախնային հայկական վրէժխնդրութենէ եւ չէին ուզեր վիճեալ Հայերու մուտքը միևսլիւման մարզին վրայ: Անզէն Հայերը առանց անգլիացի ոյժերու պիտի ջարդուէին: Ամէն կողմէ կ'ուզէին անգլիական ոյժեր տեսնել Նախիջեւանի մէջ, անիշխանութիւնը վերցնելու համար:

Ճաշէն յետոյ, միացեալ ժողով մը ունեցանք, Պարսիկ, Միևսլիւման եւ Հայ: Ապարդիւն վէճերը կանխելու համար երեք առաջարկ բերի՝ Դաշնակիցներու անունով: 1) .- Ո՛չ մէկ կռիւ. 2) .- Զինուորական ո՛չ մէկ շարժում ներկայ գիրքերէն. 3) .- Մինչեւ անգլիական զօրքին ժամանումը ո՛չ մէկ մուտք գաղթականաց: Երկար վիճելէ յետոյ համաձայնութեան միւս կէտերն էին՝ 1) .- Ապրանքի փոխադրութեանց համար Նախիջեւանէն Երեւան եւ Զանգեզուր ճամբաները

պէտք է բաց մնան : 2) — Նախիջեւան պէտք է ցորեն վաճառէ Երեւանի : 3) — Երկաթուղին պէտք է դործէ անմիջապէս որ անդլիական հսկողութիւնը հաստատուի : Վերջապէս , միւսլիւմանները համաձայնեցան տասը հազար փութ արմտիք վաճառել Երեւանի 50 ուլբիէն փութը , որովհետեւ Երեւանցիներուն կարիքը աւելի մեծ էր քան Անդրանիկինը : Այս էր միակ կարելին : Բայց այս կարգադրութիւնները ծանր էին Չանդեղուրի Հայերուն համար , որոնք կը ձգտէին կարգը պահպանել , ու պիտի տառապէին՝ որովհետեւ Թուրքերը խոստում պիտի չյարգէին :

Քանզի ամէն կարգադրութիւն պիտի թարգմանուէր հինգ լեզուով , պարսկերէն , անգլերէն , հայերէն եւ թաթարերէն , եւ ստորագրուէր՝ ձեւակերպութիւնները տաղտկալից էին , ժամը 2.30-ին միայն անկողին մտանք :

Անհրաժեշտ էր շիման մէջ մտնել անդլիական ամենամօտիկ ոյժերուն հետ , որով Անդրանիկին լուր զրկեցի , եւ պատրաստուեցայ Երեւան մեկնիլ ժամը 8-ին : Ժամը 14-ին սակայն կարելի եղաւ միայն ճամբայ իյնալ տեղւոյն իշխանութեանց սազրանքներուն պատճառաւ : Նախ , միւսլիւման խորհրդարանը որոշեր է զիս տեսնել եւ ուղած-չուղած զիս տարին տեսնուելու՝ խօսելու : Կրկին ուշացում կէսօրուան ճաշին պատճառաւ : Մեզի համար պատրաստուած թրէնին միակ մեքենան կը պատկանէր Արաֆսի Հանրապետութեան , որովհետեւ վառելարիչ չունէր : Երկաթադծերը կրող փայտերը դործածուեցան իբր վառելանիւթ : Անդրանիկի բժիշկէն եւ ինձմէ բացի , ընկերացող 200 նորակոչ զինուորներ կային եւ Կ , Նախիջեւանը կառավարող խաներէն մին , նախկին ռուս հեծեալգորաց սպայ՝ որ մեզի կ'ընկերանար , տեսնուելու համար սահմանէն մեր սպահով անցնիլը :

Գնացքը մեզ տարաւ Պաշնոբաշէն , ճամբուն վրայ կանդ առնելով Շահքախք , որ ռուսական ռազմական երկաթուղիին միացման հանդոյցն էր , դէպի Թուրքիոյ սահմանապծի երկարութեան ձգուած , եւ ուր զինուորները վառելափայտ պիտի «ճարէին» : Գիշերը մնացինք բանակի հրամանատարին հետ : Իր հրետանիի սպան երիտասարդ պէլ մըն էր , ըստ երեւոյթին ռուս բանակին ծառայած՝ նաեւ թրքականին : Անցեալ Օգոստոսին՝ Պաքուի մեր առաջին զրուման տտեն , ան Պաքու էր եւ հոն մեր սպայակոյտէն շատերուն հետ ծանօթացած : Դժգուհ էր իր այժմու վիճակէն , կ'ուզէր իբր կամաւոր կոտուի Պօլշեյիկներուն դէմ , այսուհանդերձ փոփոխամիտ երիտասարդ մը :

Կարգադրեցի որ նոյն օրն իսկ Ֆայթօնով ժամը 8-ին ճամբայ ելլենք միւսլիւման հողամասէն , բայց ժամը 7.30-ին , ռուս զնդապետ մը՝ իր կնոջ հետ եկաւ , Դաշնակիցներու պաշտպանութիւնը ինդրել : Կինը մարզին մէջ ընդարձակ կալուածներ ունէր , տեղւոյն խանը որ Նախիջեւան դացած էր , կը բռնանար զինքը Նախիջեւան տանիլ , անչուչտ անոր կալուածներուն տիրանալու գիտաւորութեամբ : Անոր , պաշտպանութեան զրութիւն մը տուի եւ մեկնեցան ուրախ :

Պաշտօնակատի եւ Սատարաք՝ վերջին միևսիւման դիւղին միջեւ, մեր անցած պահուն տեսանք անթաղ կամ կէս թաղուած շատ մը Հայերու դիակներ: Հաւանաբար նոյն տեղը սպաննուած զինուորներ: Սատարաքի մէջ գլխաւորուեցանք միևսիւման դրդուած ամբողջ մը: Պատճառն այն էր որ փախտականներ սկսած էին հոն հասնիլ Երեւանի զօրքերէն թալանուած դիւղէ մը եւ կը վախնային նոյն բախտին արժանանալէ: Լսած էին նաեւ, որ Անդրանիկ արշաւելու վրայ էր, ընկերակցութեամբ երկու անգլիացի սպաներու՝ որոնցմէ մէկն էր ես, ըստ իրենց: Գոհ էի որ խանը մեզի կ'ընկերանար: Կը յուսամ որ մը վերոյիջեալ երկու սպաներուն հանդիպիլ եւ պատմել անոնց թէ ինչե՛ր կը պատրաստէին իրենց Սատարաքի միևսիւմանները, իբր բարի դալուստ:

Սահմանը դէպի Արաքս երկարող բլուրներուն ստորոտն էր՝ գիւղէն մէկ մղոն: Այդ բլուրները խրամներով պատուած էին, եւ անոնք բռնուած էին միևսիւմաններով, որոնց ըսուած էր բաց երկինքին տակ սպասել իրենց սյոթերով՝ զիս տպաւորելու համար: Շարուած մէկ դծի վրայ, բլուրներէն կարելի էր դիւրաւ զիրենք չըջապատել, ուստի տպաւորութիւնս իրենց ակնկալածէն տարբեր եղաւ: Խրամները փորուած էին թրքական ձեւով: Տեսնուած միակ հրացանը կեղծ էր: Հոս Կ. խանը մեզմէ բաժնուեցաւ:

«Ամենայնոց» դատին մղոնի մը չափ լայն էր: Ինքզինքնիս դէմ առ դէմ դտանք Հայոց պահականոցին, անգլիականից անոր դոյուլթեան, առանց գլուշաւորութեան երբ ուզիլ հոն կը դիմէինք: Ուշագիւր պըրպտումը երեւան հանց ուրիշ պահականոց մը, թումբի մը վրայ՝ լաւ դիրքով՝ մղոնի մը չափ դէպի արեւելք, բայց ուրիշ զինուորներ չէին երեւնար: Ասոնք իրական զինուորներու տպաւորութիւնը թողուցին, աւելի լաւ քան մեր տեսած թաթար խումբերը:

Այստեղ դտանք՝ D. Տավալուի դունդին հրամանատար, ուր գրահասպատ դնացք մը մեղ կը սպասէր՝ Երեւան տանելու: Այս գրահասպատը Վրացիներէն դերուած էր վերջին կռիւներուն ատեն ու նոր հրամանատարը անով շատ հպարտ էր:

Երեւան հասնելով դիմաւորուեցանք քաղաքի զօրաց հրամանատարին եւ պատերազմական նախարարին ներկայացուցիչին կողմանէ, նաեւ հեծելազօրաց վաչառէ մը: Անգլիացիները տակաւին չէին եկած՝ կը սպասուէին ամէն օր: Հայերը անթելի կայան մը ունէին՝ ուստի Բաքու հաղորդեցի Երեւան գտնուելս եւ Թիֆլիզ մեկնելու ծրագիրս: Կրկին անկողին առաւօտեան ժամը 2-ին, փառաւոր ճաչէ մը վերջ՝ երեւանեան զինիով ողջուած՝ լաւագոյնը զոր Կոմիկասի մէջ ըմբռնանցի:

Երեւանի կառավարութիւնը ազնուութեամբ տրամադրեց իր վակոնները զիս Թիֆլիզ տանելու համար, ժամը 20-ին մեկնող շոգեկառքով: Առաւօտը փողոցները թափառեցայ: Անգլիական քաղա-

քի մը պէս վաճառաշահ չէ, լեցուն է մեծաւ մասամբ թշուառ փախըստականներով: Փողոցը՝ չորս ընկոյզը կը ծախուի մէկ ուրբլիի, որ համարժէք է երկու շիլինկի: Նախարարապետին հետ տեսակցութեան ընթացքին հաղորդեցի ինչ որ կատարած էի Նախիջեւանի մէջ: Միւսլիւմաններու խօսքին հաւատք չէր ընծայեր, նաեւ ես, սակայն լռեցի: Երբ բաժնուեցանք անգլիական գորքերը տակաւին չէին ժամանած:

Առաւօտ կանուխ գետեղուեցանք անգլիական զինուորներով լեցուն գնացքի մը մէջ, ուր պատահեցաւ որ հանդիպէինք հարիւրապետ Լ-ին, որ Թիֆլիզէն ջողատ մը զինուորներով զրկուած էր տեղեկանալու համար թէ ինչե՛ր տեղի կ'ունենային Նախիջեւանի մէջ: **Whisky-and-soda**-ի մը գլխուն նստած՝ շատոնց չվայելած հաճոյք մը, ի վիճակի եղայ իրեն տեղեկացնել թէ ի՞նչ կարելի էր ակնկալել եւ իմ կարգիս տեղեկանալ անգլիական ոյժերու դրութեան մասին Կովկասի մէջ: Պաքումի զորամասը Թիֆլիզ փոխադրուած էր, ուր կար սպայակոյտ՝ եւ յարաբերութեան մէջ Պաքուի հետ: Ամենամօտիկ անգլիական ոյժերը կը գտնուէին Կարս:

Մեր գնացքը խանգարուեցաւ Ալէքսանդրապօլին 30 վերստ մընացած: Սպասեցինք մինչեւ որ դաղթականներով լեցուն Երեւան-Կարս դացողը մեզ առնէ իր հետ: Անոնց վիճակը զարհուրելի էր: Բաց վակոններ, ձիւն, գրեթէ ո՛չ հագուստեղէն, եւ ոչ ուտելիք ունէին: Շոգեմեքենային ջուրը սպառած ըլլալով, թիւրով ձիւն պիտի նետէինք կաթսային մէջ եւ պիտի սպասէինք անոնց ջուր եւ շոգի դառնալուն: Մութ էր ուրեմն երբ Ալէֆ-պօլ հասանք, ուր հանդիպեցայ գնդապետ Լ․․․ին, նախկին ռուսական բանակէն, որ կարգ մը տեղեկութիւններ տուաւ Կարսի անկարգութեանց վրայօք՝ Թուրքերու կողմէ յարուցուած: Ալէքսանդրապօլի կայարանը լեփ-լեցուն էր այլազան վիճակ ունեցող դաղթականներով, անսնունդ, անասպատան, եւ որոնց կարելի չէր Կարս՝ իրենց տուները վերադառնալ:

Ալէֆ-պօլէն մեկնեցանք առտուն կանուխ, բայց Երեւանի եւ Վրաստանի միջեւ ստեղծուած «չէզոք դօտի»էն անցնելու ի վիճակի չեղանք: Մեքենավարը չուզեց ո՛չ իր, եւ ոչ ալ մեքենային Վրաստան մուտքը: Երկար ժամանակի կորուստը անխուսափելի էր, հեռագիր կամ անթէլ չկար, երբ անգլիացի բժիշկ սպայ մը եկաւ Վրաստանէն՝ շոգեմեքենայով մը: Պատահեցաւ որ ան «չէզոք դօտի»ին անգլիական զօրքը քննելու ելած էր եւ եկաւ հայկական կողմի կայարանը: Մենք իրեն փարեցանք: Մեզ տարաւ Վրաստան: Ժամը 21-ին Թիֆլիզ հասանք՝ ուր ընդունուեցայ գրկաբաց, մեր գումարտակին կողմէ:

Պօլսոյ եւ Պաքուի մեր հրամանատարները նոյն առաւօտ Թիֆլիզ ժամանած էին, որով քաղաքը ինձ նմաններուն տեղ չկար: Գործերս կրցածիս չափ շուտ վերջացուցի եւ հրահանգ ստանալէ յետոյ կարգադրեցի Նվլախի թրէնը առնել եւ անկէ կառքով յաջորդ օրը վերադառնալ Շուշի:

Հակառակ կանուխ ճամբայ ելած ըլլալնուս, Գորիս հասանք ժամը 21-ին: Վերջին 18 վերստը ոտքով կտրեցինք: Զինը շատ խոր էր ձիերուն համար: Անդրանիկ ծերացած, յոգնած երեւոյթ ունէր: Կը տառապէր որ փախտականներուն համար մթերք չէր կրցած ճարել: Մերժեց Շուշիէն Եվլախ ճամբան առնել: Լուր ունէր որ Թաթարները կը պատրաստուէին միջադէպ ստեղծել Ադտամի մօտակայքը: Կը վախնար որ Շուշիի Հայերը իրեն՝ արգիլէին Ղարաբաղը լքել, ուստի անկարգութեան պատճառ կրնար ըլլալ: Վերջապէս, եթէ ուզէր Թաթարներու մէջէն անցնիլ, իր զինուորներուն զիջերելու եւ պատասպարելու հնարաւորութիւն պիտի չունենար: Այդ եղանակին եւ պայմաններուն մէջ, շատ նեղութիւններու պիտի դիմադրուէին: Իր նախընտրած ճամբան պիտի ըլլայ ուրեմն դէպի Երեւան՝ Սիսեանի եւ Գարալագեազի ճամբով (Տաւալուէն): Գաղթականներու թիւը իջած էր 23,000-ի, զինուորներունը՝ 1320-ի: Կը տարակուսէր թէ, պէ՞տք էր գաղթականները տեղեակ պահէր՝ ինքն էր անոնց ասպհուլութիւնը: Ասիկա խնդիրը կը կնճռոտէր, ուստի ըսի իրեն որ ան պէտք չէ թոյլ տար որ առանց մեր սպայակոյտի համաձայնութեան անոնք իրենց տեղերէն շարժին:

Վերադարձայ Պաֆու այս խնդրոյն լուծման համար:

#### IV

Գաղթականներուն Անդրանիկին ընկերակցելու լուրը դէպի Երեւան՝ ահ ու դողի մէջ ձգեց Խնամատար մարմինները: Շրջանի Ամերիկացիները՝ խումբ մը մեծահոգի միսիոնարներ, որոնք նախապէս թրքական Հայաստան եղած էին, դժուար թէ կարենային հոգալ գանձը, տեղւոյն դժնդակ պայմաններուն մէջ: Մարդակերութեան փրփուքներ կային տեղ-տեղ: Նոր 25,000-ի մը յաւելումը սովամահութեան սպառնալիք էր բոլորին ալ համար: Ուստի իմ ստորադասներէս Howells կանուխ մեկնեցաւ Անդրանիկին հաղորդելու, որ ինքը նոյնպէս պէտք էր ընկերանար զօրքին, եւ ո՛չ մէկ դնով՝ գաղթականութիւնը:

Փետրուար 18-ին Շուշիէն Գորիս հասայ կառքով կէսօրէն յետոյ: Զինը գրեթէ հալած էր, բացի Լուսալուարսի կիրճէն, ու կառքերը փոսի մէջ ինկան եւ 150 եարտայի երկարութեամբ պէտք եղաւ զանոնք դուրս քաշել: Howells հասած էր օր մը առաջ:

Անդրանիկ ա՛լ աւելի դէմ էր Ադտամի ճամբան առնելու: Զէր ուզեր նաեւ առանց գաղթականներու դիտակցութեան եւ հաւանութեան հեռանալ: Վերջապէս առաջարկեցի որ կրնայի Howellsը թողուլ Սիսիան գաղթականներու վրայ մինչեւ Ամերիկացիներուն դալը: Ամսուն 20-ը որոշուեցաւ գաղթականներու ներկայացուցչական ժողովի օր:

Ժողովին Անդրանիկ բացատրեց կացութիւնը եւ իր կարգադրու-  
թիւնները անոնց վերաբերմամբ՝ իր մեկնելուն իբր հետեւութիւն :  
Ներկայացուցիչները պատասխանեցին որ թէեւ իրենք կ'ըմբռնեն կա-  
ցութիւնը, բայց կը տարակուսին որ անօթի-անսուաղ ժողովուրդը  
պիտի կրնային համոզել Անդրանիկէն բաժնուիլ : Բացի անօթութեան  
հարցէն, երկրորդական դժուարութիւններ ալ կային՝ տեղացիներու  
եւ Թրքահայոց միջեւ հակառակութեանց զօրանալը՝ Անդրանիկի բա-  
ցակայութեան : Որքան ատեն որ Անդրանիկի զօրքը զիրենք կը պաշտ-  
պանէր Թաթարներու դէմ, Ռուսահայերը զանոնք կը հանդուրժէին  
առանց տրտնջալու, Թուրքերուն հեռանալէն յետոյ եւ անմիջական  
վտանգէ զերծ, սնունդի պակասը զգալի էր դարձած տեղացիներուն  
համար եւս : Անձնասիրութեան բնազդը շեշտած էր այս վիճակը եւ  
Անդրանիկն էր որ արդիւած էր զաղթականներուն վտարումը : Ան-  
դրանիկին մեկնումը պիտի խախտէր այս գոյավիճակը :

Իմ առաջարկս որ անդլիացի սպայ մը պիտի մնար Սիւիան  
զաղթականաց պաշտպան, Անդրանիկի խոստումը՝ որ մեկնելէ ա-  
ռաջ զիւղացիներէն ցորեն պիտի բռնագրաւէ ձերերուն եւ հիւանդնե-  
րուն համար, տեղացիներուն խոստումը՝ որ մինչեւ Երեւանէն սննդե-  
ղէն զալը իրենց կարելին ընելու, կամ մինչեւ տուն դարձը անոնց՝  
զանոնք մասամբ ապահովուց :

Անդրանիկ, վերջին երկու երեկոնները ինծի հետ անցուց : Թուր-  
քերուն դէմ երեսուն տարուան պայքարի պատմութիւնները հետաքրք-  
րական էին՝ Պիքլիսի գրաւումը, Կարնոյ նահանջը, Խոյի եւ Նախի-  
ջեւանի շուրջի կռիւները, իր ջանքը Թավրիզի մէջ Անգլիացիներուն  
հետ կապուելու, Զուլֆայի կամուրջին քանդելը եւ վերջապէս իր  
Զանգեզուր քաշուիլը : Բոլորն ալ, զմայլելի գրուագներ՝ առանձին  
հարուածող մարտիկի մը կեանքէն, արեւելեան ճակատին վրայ : Եր-  
կու ամիս, անցեալ տարի, հունձքէն առաջ իր բանակը սնանած էր  
մորմերով : Հետաքրքրական պատմութիւններ կ'ընէր նաեւ իր անձին  
աննպաստ : Կովկասեան մակատի սկզբնական կռիւներուն ատեն, երբ  
տակաւին ռուս բանակը ամբողջացումի մէջ էր, ընդհանուր հրահանգ  
տրուեցաւ «լրտեսական ճիւղէն», արշաւներ կազմակերպել՝ զերիներ  
ձեռք ձգելու, հակառակորդին ոյժերը ճշդելու համար : Օրէնք էր՝  
Հայ եւ Թուրքի միջեւ գերի չէր պահուեր՝ ուստի չէր բռնուեր : Բայց  
այս պարագային Անդրանիկի տղաքը 30 գերի բռնած եւ առաջնորդած  
են սպայակոյտ : Քիչ յետոյ անկէ հեռախօս մը՝ «Քեզմէ ստացանք 30  
գերի, արդեօք սխալմունք է» :

Իր տեսակէտը Թուրքերու մասին հետաքրքրական է : Բոլորո-  
վին հաւատացած էր որ Թուրքերուն հետ գործը տակաւին վերջացած  
չէր եւ որեւէ մեծհոգիութիւն, անոնց կողմէ պիտի մեկնուէր տկա-  
րութեան նշան : Որքան ատեն որ, Էմվէր եւ իր արբանեակները ձեռք

անցուած չեն եւ Իքթրիաաւ կոմիտէն վերջնականապէս բնաջնջուած՝ Միջին Արեւելքի մէջ հաշտութիւն կարելի չէ: Իր տեսակէտը ապագայ Հայաստանի մասին կ'արժէր նկատի առնել: Ան՝ մեծ Հայաստանի (Միջերկրականէն-Պարսից Ծոց) կողմնակից չէր, որովհետեւ դինուորական տեսակէտով, ջարդերէն յետոյ, անբաւարար կը սեպէր դիրենք, նման տարածութեամբ հողամաս մը պաշտպանելու: Աւելին կար՝ արեւելեան Անդրկովկասը՝ բացի Թիֆլիզէն եւ Բաքուէն, աղքատ երկիր է, կ'ուզէր հետեւաբար փոքրիկ Հայաստան մը՝ Կիլիկիայով, կամ Տրապիզոնով, ծովային ելքով եւ ներքնագաւառ մը երկաթուղային հաղորդակցութեամբ, նաեւ անգլիական ազդեցութիւն՝ Միջագետքի մէջ: Այս պարագային Ռուսիոյ Հայերը պիտի ուզէին վերագառնալ վերածնուած Հայաստանը եւ հոն պիտի դառնային իսկական Հայեր: Ան կ'ընդունի նաեւ անհրաժեշտութիւնը հողատար ոյժի մը, մէկ սերունդ տեւողութեամբ՝ ներքին եւ արտաքին ոտընծգութիւններուն դէմ, եւ որ, առնուազն մէկ սերունդ պէտք էր անցնէր հայ եւ միւսլիման արիւնհեղութիւնները մոռնալու համար:

Մնաք բարովի ճաշ մը տրուեցաւ Անդրանիկին Փետրուար 22-ին կէսօրէն յետոյ քաղաքապետին կողմէ՝ Արսէն Շահնազարեան: Շրջանի ականաւոր Հայերը, Երեւանէն նոր հասած կառավարական ներկայացուցիչները ներկայ էին: Ճաշի ընթացքին Անդրանիկ առաջարկեց խմել Դաշնակիցներուն կենացը: Գանդատներ ըսուեցան հանդէպ Անգլիացիներու, «որոնց մօտեցումը Թաթարներուն հետ օրըստօրէ կը զարգանար», ու առիթէն օգտուելով ըսի «Թէ որքան պարտական են Անդրանիկին»: «Պատերազմէն առաջ Անգլիոյ միջին դասակարգը ինչ որ դիտէր Անդրկովկասի մասին Պաքուի քարիւղն էր, եւ Պաքու-Պաքու՛մ երկաթուղին, ուրկէ քարիւղը դուրս կ'արտածուէր»: Շնորհիւ Անդրանիկին է որ մենք տեղեկացանք Զանգեզուրի Հայոց գոյութեան մասին: Մենք քիչ բան գիտէինք Հայերու մասին, անոնք նմանապէս մեր մասին: Անցեալ տարի երբ Պաքու հասայ, այնտեղի լրագիրներուն մէկ մասը մեզի դէմ դրած էին, քարոզելով որ մեզի չօգնեն, որովհետեւ մենք կայսերապաշտ ցեղ մըն էինք»:

Անդրանիկը կրկին ոտքի հանելու պատճառ մը եղաւ՝ իմ ըսածներս նկատի առած էր: Նախ հանդարտ, ապա աւելի շեշտակի սկսաւ թուել իրենց ազգովին կատարած սխալները: «Երբ միութեամբ յաջողուելու յոյս կար՝ հատուածականութիւնը այդ յոյսը բեկանեց: Երբ արտաքին վտանգը կը սպառնար իրենց գոյութեան, չկրցին շարքերը սեղմել: Հարուստ թէ աղքատ իրենց շահը կը խորհէին միայն, ոչ թէ ազգին: Ռուսահայերը իրենց թրքահայ եղբայրներուն օգնելու մէջ ընկրկեցան եւ թողուցին իրենց ճակատագրին: Շատ ուշ սկսան կազմակերպուիլ Թուրքիոյ դէմ եւ ի վերջոյ իրենք ալ փչրուեցան»: Ապա իր խօսքերէն աւելի յուզուելով կարծես թէ ինքզինքը կորսնցուց եւ դարձաւ աստուածաշունչեան՝ ներշնչուած մարդարէ

մը : Հրաւիրեց թաղել իրենց անձնական շահերը եւ միանալ վերջին ճիւղերով վերաշինելու Հայաստանը : Վստահութիւն Անգլիոյ եւ Դաշնակիցներուն հանդէպ միայն ա՛յն ատեն , երբ իրենք-իրենց վրայ վըստահութիւն եւ հաւատք ունենան :

Ոչ մէկ զրիչ կրնար զինքը նկարագրել , երբ ան կը խօսէր : Նոյնիսկ ես՝ որ միայն իր բառերուն ընդհանուր իմաստը միայն կըրնայի ըմբռնել՝ ելեքտորականացած էի : Իր կրակոտ ճարտասանութեամբ՝ իր հոգիէն բղխող՝ Հայաստանն էր որ կը խօսէր Անդրանիկի բերնով :

Յուզումէն յոգնարեկ , ինկաւ աթոռին վրայ : Շոնթալից ծափահարութիւնները եկան հաստատել իր անդուզական հեղինակութիւնը , ծնունդով ատաղձագործ՝ ան իրենց անթաղ թաղաւորն էր :

Ամսու 25-ին առաւօտեան Գորիսը թողինք : Մեկնումը տպաւորիչ էր : Քառակուսի հրապարակին վրայ՝ երեք կողմը հեծելագորքը , ժողովուրդը չորբորդ կողմը խոնուած : Անդրանիկ կը տողանցէր զօրքը՝ արագ ձիավարելով , կանգ առաւ դրօշակներուն առջեւ՝ անգլիական , ռուսական եւ իր զօրամասին , զորս կը ներկայացնէին Գորիսի տիկնայք : Յետոյ քաղաքին տարեցները շնորհակալութիւն յայտնեցին յանուն ժողովուրդի , ողջերթի մաղթանքներով : Անդրանիկ պատասխանեց անոնց ասպնջականութիւնը վեր հանելով եւ զիրենք յանձնեց Դաշնակիցներու պաշտպանութեան :

Բլուրները արձագանգ տուին օդին արձակուած համազարկերուն : Զօրասիւնը մէկ շարքի վրայ՝ դրօշակները առջեւէն , — որոնք դոյն կու տային ձմեռնային տեսարանին , — դանդաղօրէն կը բարձրանար դէպի լեռան նեղ կածանը , եւ կը կորսուէր ձիւներուն մէջ . . . :

Ղարաֆիլիսէի սովորական ճամբան դոցուած էր ձիւնով , պէտք էր շրջան մը կատարել , որով օրուան ճամբորդութեան վրայ մէկ քանի վերստ կ'աւելնար :

Մեր հոն հասնելուն պէս , հայ հողամասի վրայ բնակող միւսլիման պետերը եկան Անդրանիկը տեսնելու : Անոնք կը վախճային որ իր մեկնելէն վերջ տեղւոյն Հայերը իրենց դէմ պիտի դառնային , բայց բաւարարուեցան , իմանալով որ մնացող անգլիացի սպան պիտի հոգար իրենց ապահովութեան վրայ :

Անդրանիկ 10 վերստ հեռու Անգեղակոթ մեկնելուն , ես Howellsի հետ քշեցի դէպի Բոնակոթ գիւղը՝ փախստականները տեսնելու : Անոնց վիճակը ողբալի էր : Թխմուած էին ախոռներու , բակերու մէջ , ցորեն զրեթէ չկար , բաժնուած դրամը արժէք չունէր : Անոնք որ Փիզիքապէս կրնային , իրենց օրը կը վատնէին հալած ձիւնին տակէն բոյսի արմատներ հանելով ու խաշելով : Սովը , հանդերձի պակասը , նաեւ կրակի՝ քիֆիւպիմ համար պարարտ հողեր էին : Սենեակը , ուր մտանք , 18 հոգիէն չորսը ողջ էին՝ անոնցմէ երկուքն ալ վարակուած :



Howells իրեն հետ բերած էր ասորի մանչ մը Պաքուէն, Սամւի անուն, ի բնէ Ուրմիոյ լիւնի չըջանէն փախած, մեր հոգածութեամբ Պաքու տարուած գաղթականներէն՝ որոնք Պաղտատի մօտ Պաքուպայի հիւղերուն մէջ պատսպարուած էին նախ: Սամւի մօտ 15 տարու, ինքզինքը անբաժան ըրած էր Համատանի զօրագունդին՝ անցեալ Յուլիսին, չէր ուզած Պաքուպայի «քէմբ»ը մնալ: Մեծ ընդունակութիւն ունէր լեզուներ սորվելու: Բաւական լաւ անգլերէն կը խօսէր, նաեւ ռուսերէն, հայերէն, տաճկերէն եւ արաբերէն, անչուշտ նաեւ սիրիանի՝ իր մայր լեզուն: Անգլիացի քօմմիի մը պէս մարզուած՝ կը ծառայէր իբր թարգման եւ լաւ կը կատարէր իր պաշտօնը: Ան՝ Անդրամիկի մարդոց մէջ գտաւ շատ մը հայրենակիցներ, եւ բոլոր իր նմաններուն պէս կը սիրէր ձի եւ հրացան՝ ինչպէս բաղերը՝ ջուրը: Անդրամիկ ալ, ինծի յատկացուց թրքահայ մանչ մը՝ Գէորգ անուն, իմ բեռներս կրող ջորիին համար: Կրթուած էր, լաւ ընտանիքէ եւ շատ սիրուն: Ասորախան գլխանոցով, զինուորի վերարկուով եւ սըրով, մեր խումբին նկարչագեղ մէկ մասնիկն էր: Թուրքիոյ մէջ կատարուած ջարդերու ատեն ան ականատես եղած էր իր քոյրերուն առեւանգումին եւ իր ամբողջ ընտանիքին բնաջնջման:

Ան կ'ապրէր փոխ-վրէժի համար:

Անգեղակոթի մէջ Անդրամիկ ժողովի հրաւիրած էր փախըտականներու ֆոմիսիոններն (վերակացու) ու ներկայացուցիչները: Գիւղը եռուզեռի մէջ էր: Շրջանի բնակչութեան վրայ աւելցած էին մօտակայ զիւղերու փախստականներու ներկայացուցիչներն եւս, խայտաբղէտ գոյներով ցնցոտիներ հագած, եւ երկուքէն երեք հարիւր զինուորներ՝ իբր հետաքրքիրներ: Անդրամիկի ամպիտինն դիմաց կային իր ողջ մնացած ուղտերը՝ իրենց պարսիկ հսկիչներով, արեւելեան չտեսնուած տեսարան մը Անգեղակոթի մէջ: Անդրամիկի կողմէ վերակացուններուն հրահանգուած էր կարգալ բռնագրաւուելիք ցորենին քանակը իւրաքանչիւր զիւղէ՝ գաղթականներու սնունդին համար եւ տրուելիք հատուցումները: Մէկ-երկու հօգի փորձեցին ընդգրկմանալ, բայց Անդրամիկ զիտէր անոնց կարողութիւնը եւ իր որոշումը չփոխեց: Յորենը Ղարաֆիլիսա եւ Անգեղակոթ պիտի յանձնուէր երկու օրուան մէջ՝ ի հարկին զինուորներ պիտի զրկուէին: Ընդամէնը 2600 փութ (50 թոն) կը բռնագրաւուէր՝ ձերերու եւ որբերու համար: Այս հարցը կարգադրելէ վերջ, Անդրամիկ պատշգամէն խօսեցաւ գաղթականներուն՝ թէ ի'նչ կ'ընէր ի նպաստ իրենց եւ անոնց ներկայացուց Howellsը:

Մարտ 29-ին (1919) Ռուս-Մալականներ հասան, ժամը 5-ին, ինծի ցոյց տալու բլուրներուն մէջ սպաննուած իրենց երեք մարդոց զիւղները: Չերպազ որ ետ թողուած էր բերելու թէյ, շաքար, զորս Պաքու խոստացած էր զրկել ճամբայ ելած զինուորներուն համար, իր կարաւանին հետ հասաւ երեկոյեան՝ ցնծութիւններու մէջ: Վերջին 9 ամիսները մարդիկ չէին ճաշակած ո'չ թէյ, ո'չ շաքար:

Անդրանիկի ձեռքերէն ծանր «բեռները» անպակաս էին, որով ան տարրին մէջն էր :

Իմ խումբս առաջ անցաւ դէպի Պազար Զայ, մալախան գիւղ մը, որ խաղաղ օրերուն համբաւաւոր էր իր կաթնեղէններով : Զիւնը այդ ձմեռ դանդաղ կը հալէր : Այս գիւղին եւ Ղուշպէլի միջեւ, անցքին միւս կողմը, 25 վերստ հեռու, աւելի քան 10էն 15 ոտք ձիւնի խորութիւն կար : Հալքին պատճառաւ մակերեսը ձիերու ծանրութեան չէր տոկար եւ յառաջանալ կարելի չէր : Սակայն Անդրանիկ հրահանգած էր ճամբան բանալ երկու կողմերէն եւ յայտարարեց որ երկու օրէն պէտք էր անցնիլ : Տիկին Աղանի, բժիշկին կինը, որ մեզի կ'ընկերանար, գրեթէ անյայտացած էր ձիւնածածկ ճահիճին մէջ եւ անմիջապէս դուրս հանուած : Այնքան ուշացած էինք որ գիւղացիները ապարդիւն սպասած էին մեզի, եւ շատ մը ներողամտութիւն խնդրեցին որ չէին կրցած մեզ դիմաւորել, կամ մեզ ընդունիլ «աղ ու հացով» :

Առաւօտեան գիւղի աւագանին եկաւ մեզ տեսնելու : Անոնք դալիքին համար խիստ մտահոգ էին, քանզի քիւրտ եւ թաթար վաչկատուններ ամէն ամառ լեռնարօտները կը բարձրանային, այն է մէկ ամիսէն պիտի գային : Միայն Անդրանիկ ներկայութիւնն էր որ անցեալ տարի գիրենք փրկած էր, առանց անոր ինքզինքնին պաշտպանելու ոյժ չունէին : Մալախաները կրօնական աղանդաւորներ են՝ հետաքրքրական : Գիւղերը համայնական են, որոնց մէջ ամէն չափահաս այր մարդ մէկ ձայն ունի իշխանութեան մէջ : Առանց ընդհանուրին հաւանութեան, ո՛չ ո՛ք, նոյնիսկ աննշան գործի մը չի կրնար ձեռնարկել : Նախապէս անոնք հակաաւթուական էին, (ջուր խմող), կը մերժէին զէնք կրել, այժմ նոր սերունդի մարդիկ կը խմեն եւ մինչեւ ակոսները զինուած են : Իրենց մտրուկներուն վրայ, բոցալառ մազերով, կարմիր այտերով, երկարամօրուս, անոնք կը նմանէին հիմ սկավտիական տիպարներու :

Անդրանիկ հասաւ կէսօրէն յետոյ, առաջնորդուած քով քովի չորսական ձիւտորներով, ուսական ձեւով շարուած, որոնք կ'երգէին ներդաշնակօրէն ժողովրդական երգեր, ինչ որ գեղջուկ տեսարանին փայլը կ'աւելցնէր :

## V

Ապրիլ 4-ի արշալոյսի առաջին ճառագայթներուն հետ, ոտքի էինք մեր իրերը կապելու : Հետեւակազօրքը մեկնած էր արդէն : Ռաւսերը, խմբերով ընկերացան Անդրանիկին եւ ողջերթ մաղթեցին : Արեւը ամպերէն դուրս գալով կը փայլէր մեր դրօշներուն վրայ եւ ճամբան կը լուսաւորէր : Հետեւակազօրքը մեր առջին կ'երեւայ մինչեւ մէջքերը ձիւնի ակօսին մէջ ու կ'անհետանայ՝ երբ ձիւնի պատերը մարդահասակ կը բարձրանան : Գագաթէն քանի մը վերստ անդին,

Սիսիանի եւ Դարպալագեագի միջեւ, ճամբան կ'անցնի Պապար Զայի մէջէն: Այնտեղ անհրաժեշտ էր ձիերուն եւ փոխադրութիւններուն համար ճամբայ բանալ: Զիւնը պատերու ձեւով կը կտրուէր եւ պող ջուրի մէջէն քար կը հաւաքուէր ոտքի ճամբայ շինելու համար: Անդրանիկ անձամբ կը մասնակցէր այս աշխատանքին, իր կորովին եւ օրինակին շնորհիւ արգելքը շուտով վերցաւ: Ու այսպէս հալուող ձիւնի ջրերը եւ գետին ջրերը, սկսան կարկաչել իրենց պատմութիւնը եւ մարդիկ՝ միայնակ, զոյգ կամ երեքով ճամբայ կը բանային իրենց անկօշիկ ոտքերուն: Լեռնաշղթայի անցքէն յետոյ շուտով անձրեւը սկսաւ տեղալ: Նեղ կիրճը հեղեղին պատճառաւ շուտով դարձաւ կէս սառած ցեխոտ գետ մը: Զիւնը, մինչեւ փորերնին մխրճուած՝ սայթաքումներով կը յառաջանային յաճախակի դադարներով: Մէկ քանի կենդանիներ, այնքա՛ն տկար՝ ինկան:

Օրուան վերջաւորութիւնն էր, երբ զօրասիւնին գլուխը Դուշպէլէկ հասաւ: Երեւանի հողամաս մեր մուտքը, առանց պատահարի չանցաւ: Ինչպէս յետոյ իմացայ, գիւղին վերակացուն մեղադրուած էր՝ ձմրան օրերուն, անպարկեշտ եւ անգուժ վերաբերմունք ցոյց տուած ըլլալով, Աւստրիոյ ճակատէն Սիսիան վերադարձող պատերազմական զերիներուն հանդէպ: Զմրան ձիւնները արգիլած էին որ Անդրանիկի երկար բազուկը հոն հասնէր՝ յանցաւորը պատժելու համար, սակայն այսօր անոնք կը գտնուէին դէմ դէմի: Անդրանիկ, ընդմիջտ պաշտպանը տկարին, խարազանեց զայն այնքան ուժեղ կերպով, որ նոյնիսկ իր ձեռքերը արիւնեցան: Այսպէս պատժելէն յետոյ նետել տուաւ իր «սեփական» բանտին մէջ՝ մինչեւ զօրասիւնին մեկնելը:

Մաս մը զբաստներ դժուարութեան մատնուած էին լերան վըրայ: Անդրանիկ ջորեպաններուն հրամայեց բեռները լքել, կենդանիները բերել եւ խնամել՝ որքան կարելի էր:

Ապրիլ 5-ին անվերջանալի պատահարներ: Մեկնեցանք ուշ ատեն՝ կարգադրելու համար լեռը նետուած գոյքերը: Ուղիքը գործի լծուեցաւ, արդիւնքը՝ զարմանահրաշ: Վնասները որքան կարելի եղաւ ճշգրէլ՝ 15 բեռնակիր ձիեր եւ երկու ուղտ:

Ճիշդ մեկնելու պահուն սկսաւ ձիւնել: Գետը անցնելու ատեն, Գէորդ, իր ջորիին հետ սահեցաւ եւ գլխիվար մխրճուեցաւ ջուրին մէջ: Կը նմանէր թրջած մուկի մը, երբ միւս ափը դուրս ելաւ, բայց ասպետօրէն փրկած էր իմ գոյքերս:

Սկսանք վայրէջքը: Զիւնը վերածուեցաւ անձրեւի եւ արեւը կը ցոյրար ամպերու արանքէն: Կիրճի մը դադաթը հասած կը տեսնէինք՝ վարը՝ հազարէն երկու հազար ոտք բարձրութենէն, դահալէժ վայրէջքով, գալարուն եւ ժայռոտ ձոր մը: Ոստամբեր եւ վայրի քալտոնիակաւ (Սկովտիա) տեսարան մը կը պարզուէր մեր աչքին առջեւ: Կանաչ, դորչ, կարմրորակ, ծիրանեղոյն, կապոյտ երանգներով

խառն, կաղնիի խիտ ծառերով զահավէժ մը, ձիւնապատ դադաթնե-  
րով պարուրուած, մառախուղի շարժական ամպերու մէջ ցրուած՝  
աչքի տեսողութեան չափ հեռուները:

Հերիեթ դիւղին մէջ ժամ մը հանդիստ, դիւղը միւսլիմաննե-  
րուն կողմէ գրեթէ ամբողջութեամբ քանդուած էր, այժմ վերագրա-  
ւուած Հայերու կողմէ: Ուտելիքը հոն խիստ սակաւ էր, սերմնցու  
չկար այդ տարուան հունձքին համար: Երեւանէն դեռ ուտելիք հասած  
չէր: Կէսօրէն վերջ՝ ուշ ատեն, հասանք Մալիշխա: Անդրանիկ անցեալ  
տարի դէպի Խոյ արշաւանքի ատեն այստեղ կանգ առած էր: Փռուած  
էր ձորի մը ստորոտին, հոն մուտքը կը կատարուի յանկարծուստ:  
Պահ տուինք ինքզինքնիս մինչեւ խումբին մեզի միանալը: Ապա, դը-  
րօշները պարզած, հրացանաձգութիւններով, ումբեր նետելով, բը-  
լուրի գազաթէն իջանք: Մեր ներքեւը կանաչ դաշտեր, պտղաստան-  
ներ: Գարուն էր կրկին: Շքախումբ մը, տեղւոյն հրամանատարին հետ  
մեզ դիմաւորեց: Զօրավարը եւ ես միասին դիւղ մտանք: Հրաշալի  
օր մըն էր, որ աղարտուեցաւ երեկոյին մեր լսած պատմութիւններէն՝  
տեղւոյն եւ Երեւանի միջեւ պարզուող սարսափելի անձկութիւննե-  
րուն վերաբերմամբ:

Յաջորդ առաւօտ յառաջացանք միայն 8 վերստ դէպի Քէշիշ-  
ֆէնտ, որովհետեւ դրաստը խիստ յողնած էր եւ օրուան մը հանդիս-  
տի պէտք ունէր: Մեր հասնելուն Անդրանիկ ինձ ըսաւ որ շատ մը  
փախստականներ կը սպասէին բակը եւ կ'ուզէր որ ես զանոնք տես-  
նէի եւ խօսէի իրենց: Տան վերնաշարկը կը նայէր ընդարձակ բակի  
մը վրան, ցած պատերով շրջապատուած, լեփ-լեցուն էր՝ մարդ, կին,  
երախայ, մեծաւ մասամբ անսուաղութեան ծայրը հասած: Անոնց  
մէջէն երեք ծերեր ընտրուեցան խօսք առնելու: Մին Կարնեցի էր՝  
որուն անկումէն վերջ իր ընտանիքը փախած էր լեռները, կնոջմէն  
բացի միւսները մեռած են եւ ահա առանց դրամի եւ առանց ուտելի-  
քի: Երկրորդը հագիւր ոտքի կանգնելու կարող՝ արտասուալից, պատ-  
մեց իր գաւակներուն սովամահ ըլլալը: Երրորդը Նախիջեւանի մօ-  
տակայքէն՝ ցոյց տալով շրջակայ լեռներէն մին՝ ըսաւ՝ «Այս բլու-  
րին վրայէն կը տեսնուին միւսլիմաններու կողմէն դրաւուած մեր  
տուները, ուր անոնք կ'ապրին մեր պարէններովը: Մեզի վերադար-  
ձուր մեր տուները, որովհետեւ մենք հոս հետզհետէ անօթի պիտի  
մեռնինք»: Տեսարանը սրտաճմլիկ էր, մահուան դրոշմ կար շատե-  
րուն դէմքին վրայ: Մայրերը երախաներուն վրայ կը բաժ ի վիճակի  
չէին դիեցնելու ծծկերները, որոնք մորթի մէջ փաթթուած կ'մախք-  
ներ էին: Մարդ, կին, այնքա՛ն հիւժած, որ մահէն դատ ուրիշ բանի  
չէին կրնար սպասել: Բազուկները վեր, աղաչանօք մեզմէ կը խնդրէին՝  
«Ազատեցէք մեզ, կամ կը կորսուինք»:

Կան այնպիսիներ՝ որ իրենց տուներուն մէջ հանդիստ նստած՝  
կ'ըսեն «Թուրքերը Գերմաններէն խարուեցան: Անոնք իրականին մէջ

պատուական մարդիկ են, յարգելի ցեղ մը, աւելի շատ շահագործուած են, վնասուած են՝ քան վնասած»։ Թող այդպիսիները կարենային տեսնել, գէթ հինգ վայրկեանի չափ, անիծեալ արարքները թուրքերուն, եւ որ կը շարունակեն տակաւին ի գործ դնել։ Աւելի ու աւելի մահաբեր եւ անխուսափելի մեթոտով անոնք կ'ամբողջացնեն ոչնչացումը հայ ցեղի մնացորդներուն, ինչ որ չէին կրցած ընել կոտորածներով։

Կէսօրուան ճաշին, Անդրանիկ մերժեց ուտել, խմել եւ ամբողջ յետ միջօրէին լուռ էր։ Աւելի ուշ՝ այս ժողովուրդին օգնելու մտադրութեամբ հարցուցի իրեն թէ ի՞նչ կենսամթերք կրնայ անոնց թողուլ, եթէ ես երաշխաւորէի ուտելիք զրկել Տաւալու՝ իրեններուն համար, որ իրեն պիտի հասնի իրենց հետ միաժամանակ։ Անկարող ինքզինքը զսպելու, պոռթկաց՝ «Գնա Անգլիացոց ըսէ, որ այսօրուէն Դաշնակիցներուն գործերուն մէջ ձեռքերս կը լուամ, ինչ որ դրամ ստացայ իրենցմէ պիտի վերադարձնեմ, երբ ձիերս ծախեմ Երեսնի մէջ։ Դուք մեզի առաջարկեցիք կռիւր զաղրեցնել եւ սպասել հաշտութեան ժողովի կարգադրութեան եւ մեր կրած աւերներուն հատուցումին։ Հաւատալով ձեզի պահեցինք խաղաղութիւնը՝ ցաւ ի սիրտ եւ համբերութեամբ սպասեցինք մեր փրկութեան։ Դուք հաւաստեցիք որ թուրքերէն անխախտ հայաստան մը պիտի ունենանք։ Շուտով Հայ պիտի չմնայ զայն վերաշինելու համար։ Կը մերժէք որ մեռնինք մեր երկրին ու կեանքին համար ու մեզի ամօթալի մահ կը պարտադրէք՝ սովամահութիւն։ Մինչեւ այսօր ձեզի հանդէպ հաւատարիմ, օրինապահ էի, աւելի երկար չեմ կրնար այս վիճակին հանդուրժել։ Էջմիածին պիտի երթամ, ինչպէս խոստացած էի։ Հոն հասնելէս յետոյ պիտի մտածեմ թէ ո՞րն է ժողովուրդիս բարիքին համար անելիք քայլերս։ Պատրաստ եմ նոյնիսկ Աստուածս ուրանալ, եթէ ան փորձէ զիս տարհամոզել հայրենապաշտ ըմբռնումներէս։

Նախապէս ծրարած էի իրեն հետ Տաւալու անցնիլ, մօտակայ թավրիղ-Երեւան երկաթուղային կայարանը, ուր անգլիական կայազօր կար, կարգադրելու իր մարդոց չուեկառքով Էջմիածին երթալը։ Ստեղծուած նոր կացութիւնը կը ստիպէր աճապարել, ուստի առաւօտեան Ձերազի եւ թիկնապահիս հետ զացինք երկաթուղալի՞ծ եւ Երեսն։

Սենեկակից եղայ այդ գիշեր Անդրանիկին հետ։ Ան, գիշերը անցուց փոխնիփոխ, ջղազրկու եւ հողեխոտով։ Առաւօտուն անգամ մը եւս հարցուցի իրեն թէ պիտի չուզէ՞ր սպասել մինչեւ իմ Անգլիական Կեդրոնին հետ խօսակցիլս իր վերջնական որոշումէն առաջ։ Պատասխանեց՝ «Էջմիածին կ'երթամ ընելու համար ի՛նչ որ լաւաւոյնն է՝ իմ ժողովուրդիս համար»։

Կ'անձրեւէր, երբ դուրս ելանք։ Մեր ձիերը յոգնած՝ ողորմելի վիճակ մը ունէին։ Երթը ուրեմն դանդաղ էր եւ մութը կոխած էր,

երբ հասանք Չամախը, թէեւ կը ձիավարէի հանդարտութեամբ : Օրուան մէջ անցանք հայ դիւղերէ , որոնց բնակիչները նոր վերադարձած էին : Գիւղերը բոլորն ալ քանդուած էին , բնակիչները ողորմելի վիճակի մէջ : Հազիւ կրցանք տանիք ունեցող տուն մը ճարել : Մեզ հիւրընկալողը պատմեց երկրին թշուառ վիճակին մասին : Այստեղ ալ ուտելիք բնաւ չկար :

Մեկնելէ առաջ մեր հիւղակին առջեւ խոնուած դիւղացիներուն խօսեցայ : Ողբալի տեսարան մը՝ Քէշիշէֆնտի ցոյցերը կրկնուեցան : Եթէ սերմնցու չստանային՝ դատապարտուած էին ստոյգ մահացումի : Ամբողջ առաւօտուն հեղեղանման անձրեւին հետեւանքով եւ ձիւրու յոգնութեան պատճառաւ , միայն մէկ քանի վերստ կրցանք կտրել : Աւերուած բազմաթիւ դիւղերէն մէկուն երբ հասանք , լսեցինք որ , երեք վերստ հեռու Գարա Աղան դիւղի ճամբուն վրայ հայ հեծեւազօրաց ջոկատ մը կար եւ հաւանաբար մեզի թարմ ձիեր պիտի կրնար տրամադրել : Մեր սնունդի պաշարն ալ հատած ըլլալով , որոշեցինք հոն երթալ : Ջոկատը թէեւ Գարա Աղան էր , բայց ճամբորդական ձի չունէր : Այսուհանդերձ անոնք դիւղին մէջ պահ դրուած տեղէ մը մեզի ալիւր տուին :

Զինջիրլի հասանք մութին եւ գիշերեցինք վերակացուն մէկ սենեակնոց տունը : Իր տասը տարեկան աղջիկը ջերմով հիւանդ էր — հաւանաբար քիֆիւս : Ձերազ դայն խնամեց մօր մը պէս : Այստեղ ալ դիւղացիք վերին աստիճան թշուառ էին . «Մեզի սերմնցու գրկեցէք՝ եթէ ոչ կը մեռնինք» :

Օրուան ճամբորդութենէն յողնած հազիւ քանալու վրայ էի , մօտակայքէն հրացանաձուլութիւն մը արթնցուց զիս : Ներս ինկաւ հիւրընկալը՝ ըսելով որ Գանտիլլի դիւղին վրայ կը յարձակին միւսլիմանները՝ չորս-հինգ վերստ հեռաւորութեամբ գիւղ մը , ձորին միւս կողմը : Դուրս գալով տեսանք որ դիւղացիք կը կրակեն միւսլիման դժին վրայ՝ անկանոն կերպով եւ անժամանակ : Շուտով Ձերազ ստանձնեց ղեկավարութիւնը , կրակը կեցուց եւ հասկցուց որ ի դուր տեղը փամփուշտ կը վատնեն : Ի վերջոյ պահակներ դնելով միւսները դիւղ դարձուց : Բուռն հրացանաձուլութիւնը տեւեց մօտաւորապէս ժամ մը եւ հետզհետէ թուլցաւ եւ առաւօտը եկաւ առանց ուրիշ անկարգութեան՝ մեր դիւղին մէջ :

Գանտիլլիէն լուրի չէինք կրնար սպասել՝ ուղիղ հաղորդակցութիւն չկար : Հոն չուեցինք փախստականներու մէկ մասին հետ եւ դիւղացիները ճամբան կը բանային դէպի Տաւալու : Ծամբան քանդուած էր Նախիջեւանի միւսլիմաններուն կողմէ , որոնք դարան մտած կը սպասէին հայկական փոքր խումբերու : Մօտաւորապէս երկու շաբաթ առաջ երեսունի չափ Հայեր կոտորուած էին այնտեղ : Մենք ճամբուն վրայ տեսանք երկու-երեք դիւղներ , բայց Տաւալու հասանք առանց պատահարի ու անկէ ճամբան շարունակեցինք դէպի Երեւան՝ երկաթուղիով :

Երեւանի մէջ այցելեցի Անգլիական Առաքելութեան Կեդրոնը, ուր զինուոր չկար, եւ Ամերիկեան Նպաստամատոյց: Յետոյ Թիֆլիզ անցայ՝ Ձերազը Երեւան թողելով: Հոն սերմնացու ունենալու ոչ մէկ յոյս կար, հայ գիւղերու նոյն տարուան վարուցանքին հասցնելու համար: Անոնց մեծագոյն մասը պիտի չկրնար տոկալ յաջորդ ձմրան...:

Յաջորդող երկու շաբաթները անցան Թիֆլիզ-Էջմիածին երթեւեկով: Անդրանիկ Էջմիածին հասաւ իր զօրքին հետ Ապրիլ 13ին եւ մեր համաձայնութեամբ սկսաւ իր բանակը ցրուել: Անոնք որ Պոլսէն, Պուլկարիայէն եւ Սուրիայէն էին՝ պիտի արձակուէին որքան կարելի է շուտ, մեծամասնութիւնը ի վերջոյ պիտի կցուէր Երեւանի բանակին:

Չգաղաքական տարակարծութիւնները սուր էին հայ հատուածներուն միջեւ: Թրքահայերը կը դանդառէին որ Ռուսիոյ Հայերը զիրենք իրենց բախտին լքած էին եւ այդ պատճառաւ իրենց բազում ընտանիքներուն ջարդին պատճառ էին: Միւս կողմէ Ռուսահայերը, կը մեղադրէին Թրքահայերը, որ զիրենք պայքարի մէջ նետած էին եւ փոխ-վրէժ հրահրելով զիրենք Թուրքերուն ձեռքը մատնած էին: Սակայն, Հայերը ամբողջութեամբ, կը ճանչնային կաթողիկոսին հեղինակութիւնը, որ աշխարհի բովանդակ հայութեան տենչերը կը մարմնացնէր: Օրուան կաթողիկոսը՝ դեղեցկադէմ, յարզարժան ծերունի մըն էր, միջնադարեան վանականի պէս ապրող: Վանականները մեծապէս զարգացած մարզիկ էին՝ արեւմտեան եւրոպական առումով:

Վերջին երկու օրերը հետաքրքրաշարժ էին մանաւանդ՝ հոդեյոյց: Զիբրու վաճառումը Երեւանի կառավարութեան, Սկովտիոյ ձիերու տօնավաճառի տպաւորութիւնը թողուց վրաս: Միայն զինուոր մը զիտէ, թէ ի՞նչ կը նշանակէ ձին, որ իրեն ընկերն եղած է: Զինուորները 250ական ուրբի կամ երկու Անգլ. Ոսկի կը ստանային իրենց կառավարութենէն՝ իրենց ծառայութեան փոխարէն: Զինաթափ եւ ազատ արձակուած՝ զիրենք տեսայ Անդրանիկի բնակութեան մօտերը՝ մնաք բարով մաղթելու իրենց: Անկարող եղայ երեւակայել այդ մարդոց ազապայ կեանքը, որոնք, ինչպէս ինքս, ամբողջ պատերազմի տեւողութեան կռուած էին Թուրքին դէմ: Ձերազ պառկած էր քիֆիւտով, անտարակոյս Զինհիրլիի տաղաւարին մէջ վարակուած:

Ապրիլ 27ին 1919, Անդրանիկ իր 15 սպաներուն հետ, յատուկ թրէնով մեկնեցաւ Թիֆլիզ: Իր ճամբորդելուն լուրերը զինքը կանխած էին: Ամէն կայարանի մէջ ամբոխը կը խոնուէր իր ազգին հերոսը տեսնելու: Սակայն Անդրանիկ՝ կտորած սրտով՝ ցոյցերէ խուսափելու համար ինքզինք ցոյց չտուաւ:


Վրացական սահմանադուրի հասնելնուս, փոքրիկ սնտուկի մը մէջ հաւաքեցի իր հետեւորդներուն ղէնքերը եւ չորս անգլիացի զինուորներ անոնց վրայ պահակ դրի, որ Վրացիք չպաշին: Անդրանիկ,

Թէեւ իմ նախաձեռնութիւնս ընդունեց՝ բայց դո՛հ չէր ձեռք առնուած միջոցներէն: Վրացական առաջին կայսրանը երբ հասանք, Անդրանիկ ինձ ցոյց տուաւ Վրաց կառավարութեան յղելիք իր հեռագիրը, որ մօտաւորապէս կ'ըսէր հետեւեալը՝ «Թշնամիներէս հալածուած կու գամ Ձեր զեղեցիկ ոստանը: Մեր անցեալ սիրալիր յարաբերութիւններուն յիշատակը հաւատք կը ներշնչէ ինձ, որ մենք կրկին պիտի վերանորոգենք զանոնք: Ինձ հետ կը բերեմ զինեալ հետեւորդներ՝ իմ սպաներէս»:

Թիֆլիզ, Վրաց Պատերազմական Նախարարը իր ներկայացուցիչը դրկած էր Անդրանիկը գիմաւորելու, իր կառքը արամազրելով եւ յայանելով բարի զալուստ իրեն եւ իր զինեալ հետեւորդներուն: Անդրանիկ, Ժպիտով մը ցոյց տուաւ բարի զալուստի ուղերձը, բայց գէնքերը թողուց ուր որ էին:

.....

Տասնհինգ օր յետոյ անդլլական փոխադրանաւ մը՝ Պաթու՝ մէն, սպայ եւ զինուոր լեյուն տուն կը վերազառնար իրենցներուն մօտ: Կամրջակի մէկ անկիւնը խումբ մը կար՝ օտար սպաներու համազգեստով, բոլորն ալ անհասկնալի լեզու մը խօսող: Մնացեալ ճամ-



ԽՄԲԱՆԿԱՐ ԱՆԳԼԻՈՅ ՃՈՐՃ Ե. ԹԱԳԱԻՈՐԻՆ ԿՈՂՄԷ ԿԱՏԱՐՈՒԱԾ՝  
 ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՈՒԶՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՊԱՐԳԵՒԱՏՐՄԱՆ ՊԱՀՈՒՆ  
 MAJOR GIBBON ՇԱՐՔԻՆ ՄԷՋ ԱՋԷՆ ԶՈՐՐՈՐԴՆ Է՝  
 ՀԱՒԱՆԱԲԱՐ ՀԱԶԱՐԱՊԵՏ (COLONEL) ՆՇԱՆԱԿՈՒԵԼԷՆ ՅԵՏՈՅ  
 ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒԱԾ:



բորդներուն համար երազուած օր մըն էր տարիներու աքսորէն յետոյ, երբ կը կոտուէին օտար երկիրներու մէջ: Բայց այդ խումբին համար տուն դարձ մը չէր: Անոնց համար յազթութեան եւ խաղաղութեան խրախճանքները բան մը չէին նշանակեր: Աքսորականներ՝ անոնց մտապատկերը սեւցած տուներ էին, սպաննուած ազգականներ: Օտարականներ՝ անոնց մէջ, որոնց հետ կուուած էին հասարակաց թշնամիին դէմ, անոնք զէպի Արեւմուտք կը նաւէին՝ երթալ պաշտպանելու իրենց ժողովուրդին դատը՝ շաղակրատութիւններու ոստաններուն մէջ:

Ի՞նչ կ'սկսեցալէին մեծերէն: Մարտիրոս ազգի մը կոչն է այս ուղղուած անդլիախօս ժողովուրդներուն:

Իցի՛ւ թէ անոնք կարենային լսել:

## LIAISON

Liaison — կցորդ ստորազրութիւնը դնողը կը կոչուի՝ Major Gibbon. Անգլիական Կայսերական Զինուորական վարժարաններու դասախօսներուն անձնակազմի համալսարանական անդամներէն: Անոնց զիւանադիտական կազմին պատկանող, ուստի յատուկ առաքելութիւններու պատրաստութեան տէր սպայ մը:

Անդրանիկի մօտ, իր կատարած առաքելութեան (1) նկարագրութեան տակ իր ինքնութիւնը ծածկելու պարագան կընայ տարբեր-տարբեր մեկնութիւններու կարօտիլ, սակայն ինչ որ բացայայտ է, անոր խոր համակրանքն ու դնահատանքն է Անդրանիկի անձին հանդէպ եւ իր արտայայտած բարեկամական զգացումները զէպի հայ ժողովուրդը:

Իր սրտագին կոչն է այս զրութիւնը՝ յաւարտ իր ստանձնած պարտականութեան:

Նաեւ թանկագին եւ յուզիչ վկայութիւն անո՛ր մասին, զոր իրուամբ մենք զինքը հռչակած էինք իբրեւ մեր օրերու Ազգային Հերոսը, զոր ինքը կը կոչէ Մարդը՝ որուն հանդիպած է, իր զեզերումներուն բերմամբ:

Շուտով անդլիացի համալսարանականը կը դիտակցի թէ որքան փափուկ է իրեն վստահուած առաքելութիւնը: Երբ «իր միտքը պէտք է առաջնորդուի իրեն արուած հրահանգներէն ու իր գործելակերպը պէտք է մնայ չէզոք դետնի վրայ, մինչ, իր սիրան ու հոգին կը յառին առանց վերապահութեան ա՛յն անձին, զոր կը կոչէ

---

(1) Այս առաքելութեան օրագիրը բռնուած է Անդրանիկի փարաուղար Եղիշէ Քաջունիի կողմէ եւ վերահրատարակուած՝ Պոստոն:

Մարդ մը, որ իրեն նկարագրուած է իբրև «աւագակ» մը, նաեւ անոր տառապակոծ, չարքաչ եւ ազնիւ ժողովուրդի մը դատին» :

Իր ծայրայեղ զգուշաւորութեան մէջ, ինչպէս ցոյց կու տայ անձերը մէյմէկ զլիազորով նշանակելու պարագան, դիւանագէտ ուսուցչապետը անվերջ կը ներբողէ Անդրաճիկի անձը, անոր հետեւորդներուն նուիրումներն ու բարոյական արժանիքները, զորս թէեւ զուսպ կերպով կը ներկայացնէ, բայց յուզիչ են, վաւերական եւ անվիճելի :

Ապագայ Հագարապետ Կիպպընի միտքն ու հոգին թէեւ տըպաւորուած են իր տեսածներովը, սակայն շնորհիւ Անդրաճիկի թարգման՝ Վահան Զեբազի, այդ տպաւորութիւնները հիմնաւորուած են, եւ հաւատացած է որ իր տեսածները պատահականութեան խաղ մը չեն, այլ համայն ազգի մը հարագատ պատկերը, նաեւ զգացած է մեծութիւնը այդ ազգին ազատօրէն ապրելու ի խնդիր մղած պայքարին :

Անոնք որ ապրած են այդ տարիներուն մէջ տեղի ունեցած եղելութիւններովը՝ ըլլա՛յ անձնապէս, ըլլա՛յ պատմական գրականութեան ուսումնասիրութեամբ, պիտի ընդունին որ անվիացի կցորդին թուած մէջբերումներով հայ հատուածներու միջեւ գոյացած կամ գոյութիւն ունեցած տարակարծութիւնները բոլորովին շինծու չեն, որքան ալ ափսոսալի ըլլան անոնք : Այդ պայմաններուն մէջ ապրելու դատապարտուած ժողովուրդ, Հայը վստահօրէն աւելի բարձր մակարդակի վրայ պահած է ինքզինքը՝ քան որեւէ ուրիշ ժողովուրդ :

Նման պարագաներու մէջ, արձակուած դառնութեան խօսքերն ու փոխադարձ մեղադրանքները ե՛ւ ճիշդ են, ե՛ւ մանաւանդ դիւրաւ հասկնալի :

Հայրենանուիրումի եւ պատուախնդրական դեանի վրայ, այդ անիծեալ տարիներուն մէջ մեր ժողովուրդին մասնիկները, սեփական հակաշիճի տակ երկար դարեր ազգային դատաւարակութեան տուեալներէն զուրկ՝ կրցան իրենց զլուխը բարձր պահել՝ ե՛ւ արժանապատուութեամբ : Ռուսահայի եւ Տաճկահայի միջեւ ոչ մէկ անդամանելի վէճ գոյութիւն ունեցած է, գործելակերպի արդեւք ալ չէր կըրնար տեղի ունենալ, բացի ընդհանուր ընկրկումէ՝ առաջնորդողներու թերացումներէն կամ չգոյութենէն բղխած :

Այդ օրերուն, անասելի զոհողութիւններէ եւ պայքարէ յետոյ, արդարօրէն ակնկալուած սեփական հայրենիքի մը հոգամասին վերաբերմամբ՝ խոստացուած Հայաստանին մասին՝ Հագարապետ Կիպպընի կողմէն Անդրաճիկէն կորցած տեսակէտը՝ անկախ պետութիւնը ունենալով իբրև նպատակ եւ նշանակէտ, այսօր մեզի կը թուի աւելի պայծառատես :

Անդրանիկ այդ անկախ Հայաստանի պաշտպանութեան անմիջականօրէն կարելիութիւնը կը տեսնէ Եփրատի միջին հովիտներուն

Հողամա'սը՝ իբրեւ ծովու վրայ արտաքին աշխարհի վրայ ելք ունենալով կա'մ Տրապիզոնը, կամ Կիլիկիան ծովափը: Եւ իր այդ տեսակէտը դարձեալ արդարանալի է, մանաւանդ այն օրերուն, երբ տակաւին Ռուս Կայսերականութիւնը վերջնականապէս զգետնուած չէր:

Մէկ կամ միւս կարելիութեան ան՝ բացի ծովային ելքէն, Հաստատնի կողքին կը տեսնէր ռուս ժողովուրդը, կամ անդլիական ազդեցութիւնը, ուստի կրկնակի ապահովութիւն:

Ստորեւ՝ առանց թարգմանուելու ընթերցողը կը գտնէ այդ հրատարակութեան առթիւ Վահան Զերազի եւ Հազարապետ Կիպարնի նամակները, անդլերէն լեզուով: Անոնք, երկու կողմէն՝ ուղղակի եւ ամենասերտօրէն գործակցողները բնորոշելու կը նպաստեն:

Dear Colonel,

I have just returned to Constantinople from Asia Minor, where I was on a mission with a Scottish officer. In the mail waiting for me was a letter from Egypt, in which a friend of mine speaks of your contribution in the Blackwood's, quoting from the article some extracts where I am personally concerned. So far, I failed to secure a copy of the magazine. I owe you my thanks, Colonel, for the very favourable way you certainly have depicted my dear General and am very sensible to your so kind appreciation of my person and services. Your allusion to my "finest day" would, in some people's opinion, somewhat affect my safety in this place but that is not exactly the prospect which will frighten me. What I apprehend most is that my confidence may give rise to certain suspicions, and, filed by our enemies in their dummy stock of "Armenian Atrocities", be brandished by them to hurt our cause, not withstanding that the unprecedented scale and character of our presecution would legitimate any kind of reprisals from us. Moreover, and this is a point on which I am most eager to lay stress, the record might appear, to those unfamiliar with the actual facts, as a shadow to the name of our beloved National Hero, whose military fame and acknowledged renown of a humane, chivalrous and clean, fighting warrior we are all jealous to see preserved. The hatchet ordeal was a fighting episode (General Antranik at the time had not yet assumed his command on the field). In the course of a painful retreat, the "peaceful" turkish mob behind our lines suddenly broke into the wretched procession of frozen, famished and panick stricken refugees whose progress we had to cover. It was a hand to hand, bitter struggle.

The hatched was a turkish one, wrestled from turkish hands. It was clean fighting, and a "fine day" it certainly was. We gave them hell and cleared the rod...

Colonelին պատասխանը :

Dear Tchéraz,

Many thanks for your letter with the news of your doings, which I was very glad to get.

I am very sorry if what I wrote has in any way upset you, I wrote the article originally as a partial fulfilment of my promise to Antranik's soldiers, when I said good-bye to them at Erivan, that I would plead their cause in England. I never contemplated the article finding its way to your quarter. Before allowing it to be published, I sent it to Antranik and asked for his approval and for any alterations which he desired should be made in it. All the points which he commented on were altered, except one with regard to the respective values of Trebizond and Cilicia, which I somewhat misunderstood, but which has now been put right in the reprint.

The American Refugee's (Lord Mayor's) Fund Committee is reproducing it for propaganda purposes and "Ararat" is also reproducing it. I have written to them both, asking them either to cut out the sentence or alter Tchéraz to some other name throughout, and they have agreed to do so. I am very sorry indeed that the use of your name should have in any way involved you.

As to the other point in your letter, I wrote the article in the forme, I did, with the purpose. It was written to attract the attention of the type of English man who reads Blackwood; namely the men of action and the country gentlemen who count for a great deal in English political life. Your country's cause has been prejudiced in their eyes by the types of Armenian they have met in their travels, or in England, The Levantine Cosmopolitan trader and financier in the Near East, and in England the business man Generalising from the types they have met, and the tales that came through from Baku that the Armenians could not fight (the Baku town rabble being the first Armenian troops that the British came in contact with), the impression among this class in England, who as I say count for a great deal, certainly last summer was that the Armenians were not a fighting race, toote their persecution lying down, and put money before everything else.

The object underlying my article was to try and show how, although that type undoubtedly existed (it exists in every race), yet there was another type personified in Antranik, which possessed all the characteristics which the best, type of Englishman delights to honour. The shortcomings in Antranik's whole personality are so human that they make him the more fascinating a personality. The

fact that the Armenian does hurl his defiance at the Turk, or the British, or anyone else for the matter of that, when he thinks he is unfairly treated, makes us respect him. We should despise him if he did not lay out the Turk whenever he got the chance, and with whatever weapon that came to his hand. The average Britisher will back you laying out Turks with a hatchet, while he will probably pass you by on the other side, putting statistics of massacres before him, and advertising propagandist cinematograph films. The average Englishman does not worry much about Cross and Crescent, but the cruelty of the bully rouses him, and he likes backing the plucky youngster who stands up to the bully and gets one back on him at times.

I tried to show that the Armenians, as I found them, had this characteristics, and to enlist sympathy for them on that account. I think, from letters I have received since, I have been to a certain extent successful.

.....

I spend my time training future officers. It seems a long way from Zangezur to close order drill on the Square.

Write me and let me know how you are getting on when you have any time. Sometimes at the end of the day, when I sit down and think, a longing comes back to me to be back in the old surroundings in Caucasia, as I recall the old scenes which seem now almost a dream. Some day I hope to go back and see the old spots.


## ԱՆԴՐԱՆԻԿԻ «ՇՐՋԱԴԱՐՉՈՒԹԻՒՆԸ»

«... Ո՛չ հետաքրքրութիւն ու յարգանք՝ մեզ ազգովին ապրեցնող իրագործումներու... կամ հանրային գործիչներու հանդէպ»:

6 Սեպտեմբեր 1972. «Հայրենիք» օրաթերթ: Մ. Թ.  
Արտատպուած Փարիզի «Յառաջ»էն:

Նախորդող յօդուածի մը մէջ, վերելի գլխադրութեամբ իր տըրտունջը յայտնող Մ. Թ. մահուան տարեկից մը յարմար առիթ նկատելով, Անդրանիկը կ'ողեկոչէ թերեւս զայն յարգելու դիտաւորութեամբ: Յօդուածաւերը՝ «Հայրենիք» օրաթերթի խմբագիր մեր ազդի մօտաւոր անցեալը չէ ապրած, ինչ որ բախտաւորութիւն մըն է եւ ոչ թէ յանցանք, ու զայն սերտած է հարեւանցի:

Ու ինչպէս իր ինքնութիւնը պահելէն կը հետելի (գէթ «Յառաջ»ի մէջ), Անդրանիկի մասին անձնական համոզումէ եւ դատողութենէ զուրկ ըլլալուն, Հայաստանի Հանրապետութեան վերջին նախարարապետին կ'ապաւինի, ողորմելի վերջաբան մը հրամցնելու համար հայերէն կարգալու կարող Սփիւռքի մեր երխտասարդութեան



ԿՐԻՎԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿ

ՊԱՏՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ  
 ԲԱՆԱԿԱԿԱՆՆԵՐ  
 ԵՐԵՎԱՆ, 200 000:10 ԳՐԱԿԱՆԱԿ

չատ քիչերուն, եւ այդ է, իր գրութեան տուն տուող բուն շարժառիթը: Ահա քսութիւններու այդ կոյտը՝

— Հոգեկան բեկում: — Շրջադարձութիւն: — Դաշնակցութենէ հրատարում:

— Նորաստեղծ հանրապետութիւնը «չճանչնալու» յամառութիւն: — Ինքնագլուխ, այլամերժ քայլեր:

— Յետագայ ծայրայեղութիւններ՝ որ գինքը մղեցին էջմիածնի ճամբով գինաթափութեան:

— Երեւանի վրայ արշաւելու սպառնալիք:

\*  
\*\*

Կարճ վերջաբանի մը մէջ այս որքա՞ն նենգամիտ խօսքեր:

Ինչպիսի՞ փոքրօրդի մօտեցում, «սկնարկներու» շարքի մը մէջ, նուիրուած մեր ամենավաւերական հերոսի յիշատակին:

Հերոս մը, իր կենդանութեան խոյ առասպելական, որուն «յետագայ ծայրայեղութիւններուն» ազգը, մեր ազգը, Երախտապարտ է: Ոչ միայն հարիւր հազարաւորներու կեանքը պահպանել ուզելուն եւ փրկած ըլլալուն համար:

Այլ, այսօրուան Հայաստանին փոքրիկ հողամասին գրեթէ կէսը կազմող Լեռնահայաստանի գաւառները քշնամիլէն կորզելով, անոր նուէր բերած ըլլալուն համար:

Այն է փառապսակը՝ Անդրանիկի «յետագայ ծայրայեղութիւններուն»:

Երանի թէ, մեր այդ օրերու Հայոց «սպարապետն» ու մէկ-երկու ուրիշ «գորավարներ» ցոյց տուած ըլլային նման ազգանուէր ծայրայեղութիւններ:

Ամբողջ Ղարապաղ մը, մեր պատմութեան վերջին դարերուն մէջ մեզի այնքա՞ն հպարտութիւն ներշնչած, ափսո՞ս, չունեցաւ տեղւոյն վրայ Անդրանիկ մը, որ համարձակէր «ինքնագլուխ» զործունէութեամբ մը փրկել մեր այդ արծուերոյնը, թերեւս շատ մօտէն ենթարկուած ըլլալուն համար «գլուխի» մը, որ ամէն օր իր «հոգեկան բեկումներուն» շարքը կը ճոխացնէր:

Անդրանիկի մասին քսութիւններ տարածել, կը նշանակէ Հայոց պատմութիւնը գրկել իր ամենաչքեղ փայլէն:

\*  
\*\*

Պատանի՛ ուստի տպաւորութիւնները յստակ ու թարմ պահելու ընդունակ: Բոլորովին առարկայական մերձեցումի հոգեբանութեան շրջանի մը մէջ, բախտը, դիպուածը մեզի օգնած է մերձաւոր վկան ըլլալու, կամաւորական գունդերու ցրուումէն յետոյ, Անդրանիկի ո՛չ թէ «հոգեկան բեկում»ին, այլ այդ սնանկ օրերուն մէջ անոր ցուցաբերած հոգեկան ահեղ ոյժին:

Այդ ոյժը, մանաւանդ 1917-էն յետոյ, — թուական մը, որ տրուած է վերոյիշեալ «ակնարկներուն» մէջ, — այդ ոյժը, տակաւին զինքը պիտի մղէր՝ ստանձնելու, խոստացուած, սակայն իրականին մէջ անոյժ բանակի մը հրամանատարութիւնը, բազմիշխանութեան, կողոպուտի, դասալքութեան որջ դարձած բերդաքաղաք մը պաշտպանելու պարտականութեան գլուխն անցնելու: Միմիայն իր հոգեկան զօրութեան ապաւինելով, նուիրական պարտք մը կատարելու վսեմ զգացումէ տարուած:

Ոյժ մը, որ Կարնոյ մէջ կրած իր ձախորդութենէն յետոյ, մանաւանդ Կարսի առաջին անփառունակ անձնատուութենէն վերջն ալ, այս անգամ աւելի ազիտալի հետեւանքներով յայտնի, եւ այդ, ազգին ընտրանիին, ապազայ վարչապետներուն, յեղափոխական կուսակցութեան մը, թրքահայութիւնը ազատագրելու յաւակնութիւնը ունեցող ինքնակոչ դործիչներու քթին տակ իսկ դարձնուած, ոյժ մը, որ դարձեալ անբեկանելի ըլլալու էր, Անդրանիկին ստանձնել տալու համար, երկրի պաշտպանութեան իրեն սահմանուած բաժինը՝ աջ թեւը:

Զինուորական շատ բարձր հեղինակութիւններու կողմէն չափուած-ձեւուած պաշտպանողական այդ ծրագրին ու ռազմավարութեան ամբողջական ձախորդութենէն վերջ ալ, Անդրանիկ, դեռ մտքի բաւական ուշիմութիւն եւ հաւասարակշռութիւն պէտք էր ունեցած ըլլար, իր ռազմավարի տաղանդը անխախտ պահած, որպէսզի կարենար անեղծ պահել զինեալ իր համեստ ոյժերը, հակառակ կեղերնի գլխաւոր ոյժերուն խայտառակ ռազմավարութեան եւ ընկրկումին, բանակի ընդհանուր պետին թուլութեան, անհոգութեան կամ անբաւարարութեան եւ զայն առաջնորդելու մէջ ցոյց տուած ապիկարութեան:

Ոչ մէկ տարակոյս, որ Անդրանիկի անձը, իր ոյժերուն գոյութիւնն ու արժէքը նկատի առնելուն համար է որ, թշնամին չէր կրցած բաւականաչափ ոյժ համախմբել Սարդարապատի ուղղութեամբ, Հայոց ընդդիմութիւնն ընկճելու համար:

Մենք համաձայն ենք, որ Հայոց պատմութեան համար կարեւոր է պանծացումը Սարդարապատի յաղթանակին, Ղարաբիլիսէի հերոսամարտին:

\*  
\*\*

Ո՞վ էր, որո՞նք էին հոգեկան բեկում ունեցողները: Սալոնական յեղափոխութեան մը քարոզիչներն էին, զինուորական սկազեմիաներն աւարտող ցուցամոլները: Անոնք էին, որ մեկուսացուցին, արհամարհեցին, հեռացուցին, մեր երկրին ու պայմաններուն ծանօթ, մեր խտեալին, ազգային շահերուն նուիրուած՝ հին ու նոր, փորձառու, անձնագոհ, անչահախնդիր, որեւէ «հոգեկան բեկում» չու-



նեցող խմբապետները, որոնցմէ, յիշելու համար մէկը միայն՝ ինկաւ Բաղուրի մէջ, անդուզական Մուրատը :

«Ակնարկներու» հեղինակը, իր դատաստանը կերտելու ատեն, այս, եւ դեռ ուրիշ աղաղակող ճշմարտութիւններուն չէ հանդիպած, ու մեր դժբախտութիւններուն պատասխանատուները կը փնտռէ հո՛ն, ուր չկան, զի «վարդապետն» ասաց :

Մարդկային է : Յեղափոխականի վայել, ո՛չ :

\*  
\*\*

Արդ, մինչեւ 1917, շատ ձիւն տեղացեր էր Հայոց գլխուն, արիւնոտ էր ու աւեր Հայ ժողովուրդի սիրտը :

Պատանի : Կովկասի կեդրոնը թափուած այդ օրերու ինձ նմաններու ողբերգութեանց մօտէն ծանօթ, իւրաքանչիւր Կիրակի, պատահականօրէն ճանչցած ու հիւանդանոց նետուած տղայ մը մխիթարելու փութացող մը, քանի՛-քանի՛ անգամներ, թաց աչքերով ու մռայլ, ետ դարձած, «ընկերդ ուրիշ տեղ փոխադրուած է» բռռերը լսելով, որոնք այսօր տակաւին մէջս կ'արձագանդեն : Ճշմարիտը կ'ըսեմ :

Ո՛չ մէկ ցանկութիւն, փորձութիւն ունեցած եմ շնորհաւորելու մեր գործիչները :

Անդրանիկ, համատարած չարիքին բովանդակ տարողութիւնը կշռելու հօր բնազդով օժտուած, այդ բարի մարդը, Հայուն Հայը, անձնագոհութեան տիպար հայրենասէրը, պատանիէ մը նուա՞զ արիութիւնը պիտի ունենար, շարունակել միշտ ոտքերը իյնալ մարդոց, որոնց գործը մահ կ'ազաղակէր, ու բերաւ :

Ու ինչ որ հոգեկան ոյժի, հրաշքի համագոր քայլ մըն էր, Դաշնակցութեան բացարձակ տիրակալութեան այդ օրերուն մէջ, Անդրանիկ, այդ ոստումը կատարեց անկէ հրաժարելով :

Իր բողոքն էր, անցեալի ու ներկայի հանդէպ ժողովուրդի բողոքն էր, ու նաեւ իր հաւատքն էր մեր ապագային նկատմամբ :

Ո՞ւր է հոգեկան բեկումը : Ո՞ւր է շրջադարձութիւնը :

Ո՞վ մեղադրանքներու ամենէն չընաղը : Ի՞նչ յաւակնութիւն :

Կուսակցութիւն մը ազգին հետ նոյնացնելու այս որքա՞ն մեծամտութիւն :

Նւ սակայն, իրօք, այդ մտամոլորութեան մէջ պէտք է փրկուող յաշնակցութեան բոլոր ձախորդութիւններուն բանալին, ոչ թէ իրենց բարի ցանկութիւններուն, իրենց թափած ջանքերուն եւ զոհաբերութիւններուն կեղծ կամ արդահատելի ըլլալուն մէջ, ո՛չ իրենց անգամներուն անհատական արժէքին պակասաւորութեան մէջ, այլ իրենց հաւաքական բնոյթ կրող այդ սխալ հոգեբանութեան մէջ, որը արզելք մըն էր թէ՛ իրենց սեփական ոյժը չափելու, եւ թէ՛ մանաւանդ ազգին կարելիութիւններուն թափանցելու, այլ զիրենք կը տանէր ոյժերու թերազնահատութեան :

Յօժարակամ կ'ընդունինք, որ Դաշնակցութիւնը այդ տարիներուն մեր ազգային ամենածաւալուն կազմակերպութիւնն էր, հայ ժողովուրդը ատկէ աւելին չէր կրցած տալ :

Այդպէս է նաեւ այսօր, Սփիւռքի մէջ, քանի որ երիտասարդ մը հրապուրող ամէն իղձ կամ հեռանկար, Դաշնակցութեան հակառակորդները յամառօրէն կը շարունակեն անոր մենաշնորհը պահել :

Սակայն այդ իրողութիւնները, ա'լ աւելի կը փաստեն Անդրա-նիկի հոգեկան ոյժին ի նպաստ :

Անդրաանիկ, որ երիտասարդ յեղափոխականի մը յատուկ լաւատեսութեան շրջանը բոլորած էր այլեւս, շատ խոր կերպով կը դիտակցէր, որ իր կուսակցական կեանքի ամբողջ գործունէութիւնը յանգած էր ահաւոր սնանկութեան մը, ու անկէ հրաժարելէ վերջ արդարեւ աւելի ազդօգուտ քայլեր առաւ, իր հոգեկան հսկայ ոյժին շուրջ քաշելով առողջ տարրեր, որպէսզի առանց շրջադարձութեան հետապնդէ հայ ժողովուրդին իսկական շահերը :

Եւ ան, անպայման աւելի մեծ արդիւնք կ'ապահովէր, եթէ իր փորձառութենէն, իր հզօր բնազդէն ծնունդ առնող իր պատգամները լսելի դառնային, ու ազգի շահերուն իբր խթան, ոչ թէ տարբեր մոլեռանդութիւններ, այլ իրենը յաղթանակէր :

Անդրաանիկ, ոչ թէ անշուշտ միակը, բայց ինքն էր դրօշակիրը իսկական Ազատ եւ Անկախ Հայաստանի մը դադափարին եւ զայն կերտելուն :

Առանց դոյզն շրջադարձութեան, ան յամառօրէն եւ իմաստուն դատողութեամբ հետապնդեց ազատ եւ անկախ պետականութեան հասնելու ուղին :

\*  
\*  
\*

Աւա՛ղ : Ինչ որ «Հ. Հանրապետութիւն» կը կոչուէր, դեռ չը-փթթած՝ չքացաւ :

Որովհետեւ անոր ստեղծումը ակամայ էր :

Չայն վարելու կոչումը ինքնիրեն տուած կուսակցութիւնը, սկզբնական մեղքը գործած էր, անտեսելով քարոզել այդ նորածին Հանրապետութեան բնիկներուն ազգային անկախութեան մը կարելիութիւնը, որ իբր թէ Մեծն Ներսէսի «երազէն» ի վեր կ'սկսկալուէր : Հոն կար շատ-շատ տեղացիական հայրենասիրութիւն եւ անշուշտ նաեւ ազգային մշակոյթի սէր : Հայ անունը կրող ունեւորն ու քաղաքացին, օտարացած, թերահաւատ էին ազգային վերելքի յաջողութեան : Իրենց հետաքրքրութիւնն ու օժանդակութիւնը արհամարհանքի դրոշմ մը կը կրէին, իսկ հայ պատուական դիւղացին շարք մը «կղզիներ» ձեւացնող իր աւաններուն մէջ անտեսուած կեանք մը կ'ապրէր :

Այդ Հանրապետութիւնը չքացաւ, որովհետեւ զինք ապրեցնել

ճգնողները արմատախիլ տարրեր էին, ու անոնց հանդէպ ալ կար, եթէ ոչ օտարի, այլ ստորադաս տարր մը նկատելու հոգեբանութիւնը:

Այդ շատ դառն կորուստ մը եղաւ հայ ազգին համար:

Անդրանիկ, հետեւաբար, այս իրողութիւններուն խորապէս թափանցած ըլլալով հանդերձ առանց շրջադարձութեան ու կորովով, հաւատարիմ մնաց Հայու եւ յեղափոխականի սկզբունքներուն, ու թէեւ դառնութեամբ, այլ խղճի կատարեալ հանդարտութեամբ, հոգեկան անբեկանելի որոշում մը տուաւ, ինքզինքը հեռացնելով, թէ՛ նորածին Հանրապետութեան դոյութեան անուղղակիօրէն չլինասելու առողջ եւ ասպետական մտածումով, եւ թէ իր անձնատուութեամբ մեր պատմութեան արատ մը չհասցնելու ճիշդ դատողութեամբ, որովհետեւ պէտք էր պայքարը շարունակել:

Բուն ճակատամարտը կը շարունակուէր:

Դեռ մեծ էին յոյսերը:

Ձէնքը ձեռին Կարնոյ մէջ Ընդհանուր Պատերազմի զինադադարը ողջունելու Անդրանիկի յանկերգը, պատգամը, ինչ խօսք, որ աւելի հօր էր քան պաղատագին շէշտով, թշնամիէն ծնկաչոք խնդրուած որեւէ դաշնագիր:

Ա՞յս է շրջադարձութիւնը:

Այնքան ակներեւ ճշմարտութիւն է այս, որ տակաւին այսօր, ի տես փոքրիկ Խորհրդային Հայաստանի լուսաւոր իրողութեան եւ անոր հանդէպ ցոյց տրուած հաւատարմութեան, կը պնդենք որ Անդրանիկ եւ իր հետեւորդները, Ազատ Հանրապետութեան մէջ, Անկախ Հայրենիքի դադափարին մէջ ո՛չ մէկ թշնամութիւն կը տեսնէին ու կը տեսնեն հանդէպ իր դրացիներուն ու մանաւանդ հանդէպ իր մեծ բարեկամներուն՝ ռուս եւ ուքրայնացի ժողովուրդներուն, որոնց հետ դաշնակցիլը այնքան բնական կը նկատեն, որքան բնական եւ արդար՝ հայ ժողովուրդին Ազատ եւ Անկախ ապրելու իրաւունքին արժանի ըլլալը:

Մանաւանդ որ, Անդրանիկին համար այդ ձեւի պետականութիւն մը ունենալու պարագային նուազ կորուստ տալու մեծ յոյսեր կային:

Հետեւաբար ի՛նչ արտառոց միտք՝ Անդրանիկին վերադրել նորաստեղծ Հանրապետութիւնը «չճանչնալու» յամառութիւն:

Այն ատեն, հարիւրաւոր, հազարաւորներու կը հասնի զայն «չճանչնալ» յամառողներու թիւը:

Այո:

Ու դարմանալին հոն է, որ երբ Անդրանիկ, բազմահազար դադարականներով ու բուռ մը մարտիկներով դեռ հայկական հողերու վրայ էր, մեզի հետ էին, Կովկասեան լեռներէն անդին, Տարիալի կիրճէն հիւսիս, արեւմտահայ իլեակներուն մեծ մասը, իր բոլոր դործիչներով, ամէն հոսանքի պատկանող, մանաւանդ Հ. Հանրապետութիւնը վարող կարկառուն դէմքերը:

Հայրենիքէն դուրս էին Մուրատ, Սեպուհ :  
Ինչո՞ւ հեռացան կուսակցական այդ դործիչները, առաջնորդները :

Չուզեցի՞ն ճանչնալ Հ. Հանրապետութիւնը :

Իրե՞նք հեռացան :

Ո՞ւր է Հ. Հանրապետութիւնը «չճանչնալու» հարցը :

Այդ ամէ՞նքն ալ չուզեցին դայն ճանչնալ :

Ոչ :

Այդպէս բան գոյութիւն չէ ունեցած :

Ու որքան ալ դառն ըլլայ, խոստովելով մանրամասնութիւններէ այդ դառնութիւնը մեղմելու համար, այդ տնակէր, ուղեկորոյց հայկական զանգուածը, իր ընտանիքներով լքեց հայրենի հողը, իր կեանքը փնտոեց եթէ ոչ ազատութեան մէջ, բայց անպայման մահէն հեռու :

Անդրանիկի՞ն պատիւը :

Այդ պատիւը հոն է, որ ժողովուրդի առողջ բնագոյը զինք ընտրեց, զինք վերադասեց, ու ցաւով կ'ըսենք հակառակ Հ. Հանրապետութեան գոյութեան, իրեն կ'պաւ իբրեւ ուղեցոյց, նիզակ, ապրելու եւ յաղթելու համար :

Նման հերոսի մը մասին երբ մէկը գրել կը ցանկայ, անոր խորհուրդ կու տանք դո՛հանալ պակասաւոր գրութեամբ մը, փոխանակ էականը անտեսելու ու թեթեւ վերադրումներու անձնատուր ըլլալու, հոգ չէ թէ այդ բոլորովին հաճելի չըլլայ իր մեծաւորներուն կամ հետետրոյններուն :

Իրենց մարտիկի կեանքին եւ յեղափոխականի անցեալին հաւատարիմ, ուրիշ անուանի հերոսներ, նոյնպէս հողեկան բեկում ցոյց չտուին, երբ պայքարը շարունակեցին հայրենի հողէն հեռու :

Իսկ Անդրանիկ, ժողովրդական հերոս, իր սեփական խօսքով, զինք շրջապատող զէնքի ընկերներուն կամքին, իր հովանիին ապաստանած հազարաւորներուն ապրելու բնագոյին ականջալուր, պարտադրուեցաւ առնելու ոչ թէ «ինքնազուլուս եւ ալյամերժ» քայլեր, այլ եղաւ, ճշմարիտ ընտրեալը, եղաւ «ձայն բազմաց»ին հնազանդ, եղաւ խորապէս ալյասէր :

Այնքան շատ են Անդրանիկին կառչող, անկէ ակնկալութիւններ ունեցող, զինք ընտրեալ նկատող, իրեն հանդէպ վստահութիւն ունեցող, ուրիշ շատ շատեր, գերազանցօրէն անձնագոհ, պարկեշտ, անձնատուութիւնը մերժող, ազգային պայքարը անվստօրէն շարունակել ուզողներու թիւը, որ ամենէն խստապահանջ «տեճօկրատ»ն անգամ պիտի խղճահարէր Անդրանիկի քայլերը «ինքնազուլուս եւ ալյամերժ» անուանելու :

Ուստի մեր այս գրութիւնը կը նուիրենք ապագայ պատմաբանին, այսօր դայն ոչ ոքի պարտադրելու միտումն ունինք :

\*  
\*\*

«Ակնարկ»ներու այդ դժբախտ վերջաբանին մէջ կայ աւելի աններելին :

Ձանցառութիւնը, Անդրանիկի վերջին, ամենաերախտաւոր դործունէութեան :

Այն է, խափանելը, Գողթնի, Սիփանի, Ձանդեզուրի, Ղարապաղի վրայով, այդ դաւառներու հայութիւնն ալ սրբելու մտօք, թրքական բանակի արշաւանքն ու անոր միացումը ատրպեճանական «վայրենի» կոչուած զօրամասին :

Քանզի, առանց Անդրանիկի դոյութեան, անոր «այլամերժ ու ինքնազուլուս» դործունէութեան, ինչպէս Ղարապաղը, Ձանդեզուրն ալ պիտի անցնէր այն ցանկին մէջ, որ կ'ողբերգենք «Ներքին հողերու» անունով :

Ու Ղարապաղը դեռ աւելի դժբախտ ճակատագիր մը կ'ունենար, եթէ անոր սահմաններուն վրայ Անդրանիկ մը չգտնուէր :

Հասկցողին շատ բարեւ :

Մեր նոր սերունդին դաստիարակը ըլլալ յաւակնող Մ. Թ. ն իր «ակնարկ»ներով ցոյց կու տայ, որ չէ կըրցած թափանցել հայ սպորումներու իմաստին :

Անդրանիկի, իր կեանքի վերջաբանը կազմող դիւցազնական պոստյոր պարտադրուեցաւ կատարել երկու զլխաւոր պատճառներու բերմամբ :

Մերժել սովը :

Մերժել թշնամին :

Այս երկու յաջողութիւններուն վրայ ան աւելցուց լեռնահաստանի ժողովուրդին ու հողերուն փրկութիւնը :

Միթէ՞ «հոգեկան բեկում» կը նշանակէ, ժողովուրդի ազատ հովութիւնը ունենալով իբրեւ գերագոյն հող, զայն թշնամիէն հեռու պահել ու կերակրել, կռուիլ շարունակ, յառաջանալ, նահանջել, կորուստներ տալ ե՛ւ թշնամիին, ե՛ւ բնութեան տարերքներուն, ու մանաւանդ անցնիլ գիւղերէ, աւաններէ, անոնց «բարեկամ» բնակիչներուն ետափրութեան, այլամերժութեան եւ խուլ թշնամանքին համը առնել :

«Ինքնազուլուս եւ այլամերժ» Անդրանիկ, քանի-քանի անգամներ դառնութեամբ պիտի հաստատէր, թէ ինչպէս, ժողովուրդ մը իր պաշտպանութիւնը կը խնդրէր ծնկաչօք, ու հազիւ վտանգը անցած կարծելով, կ'ողէր, իր եւ իրեններուն անյապաղ հեռացումը, շատ չանցած կրկին աղերսարկու դառնալու համար որ մնայ :

Եւ ամէն անգամին ալ, ան այդ պատեհապաշտ բնակչութիւնը կը հրաւիրէր որ կամովին արտայայտուի ու միշտ դիտցաւ իր դառնութիւնը հպատակեցնել պայմաններուն եւ տեղացիներու ցանկութեան :

Ուրեմն, Լեոնահայաստանը Հայոց եւ Հ. Հանրապետութեան համար պահել պահպանելէն ետք, դաշնակիցներու յաղթանակին օրը, գէնքը ձեռին ինքն ալ Ձանգեղուրի մէջ յաղթական, Անդրանիկ պարտաւորուած էր հեռանալ:

Նոր մեղադրանք մը շարկած:

Որ ան չէր ուզած «ինքնագլուխ եւ այլամերժ» քայլ մը եւս առնել, չէր փափաքած ամէն խոչընդոտ տապալել Ղարապաղն ալ ազատագրելու համար:

Ո՛վ հեղնանք:

Սակայն պէտք էր հեռանալ, իրեն ընկերացող, իրմէն բաժնուել չուզող ժողովուրդը սնուցանելու համար այլուր:

Դէպի Կիլիկիա, անձնապէս, կէս մնացած իր դործը լրացնելու բուն ցանկութեամբ:

\*\*\*

Ձանգեղուրէն հեռանալու համար իր բազմութեան առջեւ երեք ձամբաներ կային:

Երեքն ալ փակ:

Երկուքը, ամենէն յարմարները, թշնամիին կողմէ:

Երրորդը՝ դժուարանցանելին, Հ. Հանրապետութեան մատակարարութեան անձուկ վիճակին պատճառով անբաղձալի:

Այո: Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան սահմաններուն մէջ:

Գարնան սկիզբն էր: Լեոնահայաստանի մէջ՝ ձիւն-ձմեռ:

Ոչ մէկ արմատական օգնութիւն յաղթական մեր դաշնակիցներուն կողմէ:

Պատեհապաշտ, անոնք ոչ մէկ ազդու միջոց ձեռք կ'առնէին մեր եւ իրենց երէկի պարտուող թշնամիները զսպելու համար, եկած էին նոյնիսկ արգելք ըլլալու Անդրանիկին իր սեփական ուժերով դործելուն:

Անդրանիկի անձին հանդէպ գէշ տրամադրութիւններով առաջուած անդլիացի սպան՝ Մայր Կիպպոն, իրաւ է որ պիտի չուզանար, ոչ միայն ճշգրտէն գնահատելու մեր հերոսն ու իր տեսակէտը, այլ պիտի դառնար մշտատեւ ու դործօն բարեկամ մը Հայոց: Ան իր կարելին կը փորձէր լաւազոյն ճանապարհը բանալու, սակայն, շըրջադարձութենէ միշտ հեռու յեղափոխական Անդրանիկի համար, լաւազոյնն էր ընտրել դժուարին ուղին, տեղ-տեղ անապահով լեռնային ձամբան, քան թշնամիին կոտորած գէնք մը իսկ յանձնելու մղձաւանջն ապրիլ:

Թշնամիին հետ նոր ընդհարո՞ւմ, զինաթափութի՞ւն:

Ժողովուրդին կեանքը եւ հայ գէնքին պատիւը ո՛չ մին կը հանդուրժէր, եւ ոչ միւսը:

Ու այդ ճանապարհի ելքին էր, որ Անդրանիկ, պիտի ապրէր, Հայոց երկրին մէջ, հայ կոչուողներու կողմէ կողոպտուած, խոշտանուած ու բանտուած իր զինուորներուն վերջին սուգի օրերը:

Բայց ասոնք, «ակնարկներ»ու հեղինակին համար ակնարկէ վրիպած ու թերեւս «աննշան» դէպքեր են:

Բայց նախկին Փետայիին համար, հասարակ ժողովուրդին եւ իր սակաւաթիւ քաջերուն կեանքը խնայողին համար, ո՛չ:

Կարեւորը, Անդրանիկի կողմէ Երեւանը դրաւելու «սպառնալիք»ն է, որ անշուշտ ան կատարած է պարզապէս իր քմահաճոյքին համար: Հայ կտրիճի մը կորուստը սգալ «ակնարկներ»ու հեղինակին համար այնքան ալ կարեւոր բան մը չէ:

Արդարեւ, Անդրանիկ, գիտնալով հանդերձ որ անհասներու եւ փոքրաթիւ նոյնիսկ զինուած ճամբորդներու համար, Հայաստանի մէջ ալ տակաւին երթեւեկելու ապահովութիւնն չկայ, երբ Երեւանի մօտեցաւ, տեղի տուաւ եղած խնդրանքներուն եւ արտօնեց ոմանց խումբէն բաժնուիլ՝ ժա՛մ առաջ ընտանեկան բոյն հասնելու համար:

Դժբախտաբար ասոնք առանց բանտարկութեան խոշտանուեցան, կողոպտուեցան:

Ու էջմիածին դեռ չհասած, ան խոր ցատումով լսեց այս լուրերը, որոնց հանդէպ չէր կրնար անտարբեր մնալ:

Տարիներով, իրեն հետ, կեանքերնին թշնամիին սակարկող անդուգական տղաք, Հ. Հանրապետութեան հողին վրայ կը գտնէին առնուազն նուաստացուցիչ ընդունելութիւն:

Առանց բողոքի, առանց ձայն-ձուն հանելու պէտք էր ուրեմն անպատի՞ժ թողուլ ոճիրին հեղինակները, ինչպէս շատ մը ուրիշ սպանութիւններու պարազան էր, ու գաւաթ մը ջուր խմել եղածին վրայէն:

Անդրանիկ չէր կրնար գոհանալ նման վատութիւն ընտրելով:

Ու երբ Երեւանը դրաւելու սպառնալիքը վերցնելու համար, բանազնացներ կու դան զինքը գտնելու օտար զինուորական կցորդներու ընկերակցութեամբ, Անդրանիկը աւելի երկար օրեր մօտէն ուսումնասիրող եւ իր մօտ պատուիրակ անգլիացի սպան կու տայ նաեւ իր կարծիքը, ըսելով՝ «Այս մարդը սուրբ մըն է, ես կը հաւատամ անոր որոշումներուն արդար ըլլալուն»:

Եւ սակայն, Անդրանիկ, Երեւանը դրաւելու բնաւ միտք չունէր, հետեւաբար իր սպառնալիքը չգործադրեց, ոչ թէ Դրոյի ուժերէն վախնալով, ուժեր՝ որոնք Երեւան-էջմիածին կարճ խճուղիին անդամ տէրը չէին, ոչ թէ որովհետեւ կը հաւատար յանցաւորները պատժելու համար տրուած խոստումին, քանզի Դրօն ատոր ալ անկարող էր, ոչ թէ թերեւս չփափաքող, այլ որովհետեւ եւ դժբախտաբար դէթ այդ օրերուն, այդ Հայաստանի բնիկ տարրին մէջ բացակայ էին Անդրանիկի իտէալը ունեցող մարդիկ: Որովհետեւ

Անդրանիկ, իր շրջադաշուի թեման ընթացքին համը առած էր այդ ժողովուրդի փոփոխամիտ մտայնության՝ հայ պետություն մը ստեղծելու հաւատքէն զուրկ :

Անդրանիկ էջմիածնի մէջ ցրուեց իր դօրքը : Անոնց իւրաքանչիւրին իբր դրամական հատուցում տուաւ ինչ որ ունէր, որ սակայն կը կրէր հերոսի վեհ նկարագրին կնիքը, ու հեռացաւ Հայաստանէն, ոչ թէ Հ. Հանրապետութիւնը ճանչնալ չուզելուն պատճառով, այլ իր կիսատ ձգած գործը լրացնելու ակնկալութեամբ :

Տակաւին այսօր, ոչ ոքի համար խնդրական է, այդ նուիրական գործին կէսէն աւելի պակաս մնացած ըլլալը :

Անդրանիկ կը հեռանար այլամերձ միջավայրէ մը, ուր ճակատամարտներու մէջ սնած եւ ուսած ռազմիկները տեղ չունէին, ուր կը տիրապետէին ակադեմիաներն աւարտած մարդիկ, որոնք ամէն բացառիկ առիթ ունէին իրենց շնորհքը ցոյց տալու եւ չափուն ցոյց :

Անդրանիկ կը կարծէր, կը յուսար, կը տենչար պայքարը շարունակել ուրիշ տեղ, թերեւս ի գուր ենթադրելով հոն գտնել լաւալոյն միջոցորտ մը :

Եղաւ յուսախար :

Այնուհետեւ ալ անոր հոգին տառապեցաւ, բայց երբեք բեկում չունեցաւ :

## ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ՏՕՆԱՎԱՃԱՌԻ ՄԵՐ ՅԵՂԱՓՈԽԱՎԱՆՆԵՐԸ

Անխորհուրդ եւ ազիտաբեր գործունէութեան մը հետեւանքներուն ծանրութիւնը կը շարունակէ ճնշել հայ ժողովուրդի ուսերուն՝ հակառակ Ս. Հայաստանի բարեբաստիկ իրականութեան :

Անցեալի փորձութիւններէն խրատուելու լաւալոյն կերպն է քաջածանօթ ըլլալ դէպքերուն եւ այդ օրերու պատասխանատուններուն կամ առաջնորդներուն հոգեբանութեան եւ նկարագրին :

Դարձեալ Ադամ Տարօնցիի գիրքը՝ «Պատասխանատուները Տարօնի Եղեռնին», այդ առաջադրութեամբ գրուած, ազնիւ եւ արի գործ մըն է :

Հոն էջեր յատկացուած են ուրիշ առասպելի մը եւս, այն է, Մշոյ եւ Սասունի 1915 թուի ջարդերէն փախստական բեկորները ազատելու առնչութեամբ, Ազգային հերոս Անդրանիկի «պատասխանատուութեան» :

Պատանի, Թիֆլիզ հասած 1917 թուին, գործի բերմամբ, աւելի ճիշդը պատահմամբ, ինկած տեղւոյն հայ եւ յատկապէս թրքահայ ինտելիկէնցիայի եւ կամաւորական ցրուած դուռնուներուն ռազմիկներու շրջանակին մէջ, այդ օրերուն, դառնութեամբ ունկնդրած էինք յա-



բատեօրէն կրկնուող բանակութիւններ, փոխադարձ ամբաստանութեան բռնն խօսքեր եւ մատուց հոգիի մը անձանօթ ալլանդակ հայհոյութիւններու փոխանակութիւններ :

Հակառակ այդ տարիքին յատուկ լաւատեսութեան, որմէ բացառաբար շնորհուած էինք բարեբախտաբար, դառնութեան պարբերական պահերու ընթացքին, այդ կոիւններուն ալ պարտադրած խոհերուն անձնատուր, յաճախ յորդ արցունքներն եղած են մեղ մխիթարողը :

Ու ահա, յիսուն տարիներ ետք, Ադամ Տարօնեցիի գիրքը կու գայ տալու ամենահարազատ պատկերը ո՛չ միայն Մուշ եւ Տարօն, Սասուն դաւառներու ահաւոր եղեռնին, այլ եւ թարմ ու ճշգրիտ նկարագրութիւնը նոյն եղեռնէն ազատուած, կամ դուրս մնացած հայ հոգիներու խռովքին :

Արդ, ո՛չ միայն թրքահայաստանի աւերածութեան եւ ամայութեան վիշտն էր որ կը հրահրէր ալեկոծութիւնը մեր հոգիներուն եւ մտածումներուն, այլ, մասնաւորաբար, կամաւորական շարժումին սնանկութիւնը, որ մեր, անզա՛մ յոյսերուն վախճանը կ'ահագանգէր :

Վերապրողներու միջեւ կատարուած այս սուր բանակութիւնները, որոնք զայն վարող մարդոց դժբախտ ըլլալը կը յատկանշեն, ի հարկէ, տարբեր տեղեր, դանազան առիթներով յիշատակուած են, սակայն Ադամ Տարօնեցիի գիրքը միակն է որ, հարցը կը դնէ իր բոլոր աւերակներով, զայն քննելու համար կը բերէ թեր ու դէմ վիկայութիւններ, փաստեր, ու ապա միայն կ'եզրակացնէ, կամ կը վճռէ :

Ահաւասիկ հարցը եւ իր տուեալները .—

— Մշոյ դաշտի, Մուշ քաղաքի եւ Սասնոյ Հայերը անսպասելի հեշտութեամբ ջարդուած եւ անոնցմէ քիչեր միայն փախուստ տալով կը թափառին առաւելագէտ Սասնոյ լեռներուն, ձորերուն եւ անտառներուն մէջ :

— Ռուսական բանակը յաղթական՝ հասած է կորստեան դատապարտուած այդ հայ բեկորներուն շատ մօտիկ, տեղ-տեղ հազիւ քանի մը ժամուան հեռաւորութեան վրայ : Բայց այդ բանակը հրահանգ ստացած է նահանջել : Պատճառները անհասկնալի :

— Այդ բանակին մաս կը կազմեն հայ կամաւորական դուռդեր, որոնց առաջնորդներուն համար մեծ երեւակայութիւն անհրաժեշտ է, տեղեակ ըլլալու համար մեր երկրին մէջ տիրող կացութեան :

— Կամաւորական այդ խումբերուն այցելութեան եկած են Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեան անդամներ՝ Նիկոլ Աղբալեան, Բժիշկ Բաբալեան եւ Սիմոն Վրացեան, որոնք նաեւ կամաւորական շարժումի ղեկավար մարմնոյն մաս կը կազմեն :

— Կամաւորական այդ դուռդերուն կոչումն է, նպաստելով ռուսական բանակի յաղթանակին, ազատագրել քրքահայաստանը, նուազագոյնը՝ ջարդերէն վերապրողներու կեանքին փրկութիւնը :

— Դաշնակցութեան «երեք հսկաներու» ներկայութեամբ, եւ մասնակցութեամբը կամաւորական խումբերու ղեկավար՝ փորձուած հայդուկներուն, կը գումարուի գիշերային ժողով: Կ'որոշուի արշալոյսին հետ յառաջ նետուիլ ազատելու համար Սասնոյ լեռներուն մէջ առժամեայ ապաստան գտած հայութիւնը:

— Այդ որոշումը չի գործադրուիր, որովհետեւ ըստ Սիւննի վրացեանի վկայութեան, Անդրանիկ մերժած է մասնակցիլ անոր գործադրութեան:

\*  
\*\*

Այսօր, խորհրդակցութեան միայն նիւթ ծառայող վերոյիշեալ թուարկումը, անտարակոյս ի'ր ժամանակին, մեր ազգային տաղանապին մաս կազմող սովորական պատկերներէն մէկն էր, ու անկարելի է, անոնցմէ յար եւ նմանը ապրողի մը համար, համատարած անզօրութեան թափահարումներուն հանդիսատես, առանց սրտի մորմոք ունենալու տեսակէտ ներկայացնել:

Այսօր, ամբաստանութեան եւ ոչ իսկ մեղադրանքի խնդիր կայ, այլ դարերով անպատում շարքաշուութեամբ իր կեանքին եւ իր հոգին կապուած ժողովուրդի մը, կենաց եւ մահու պայքարի մը անփառունակ վախճանին պատճառները թափանցելու պարտաւորութեան հարց մը:

Մանաւանդ, երբ այդ նոյն խնդրոյ մասին դիրք բռնողն ու պատմութիւն գրողը, պատահական մէկը չէ, այլ Սիւննի վրացեանի պէս անձնաւորութիւն մը:

Գործիքն է մեղաւորը, ոչ թէ դորձաւորը, ահա իր տեսակէտը: Նման վարկած մէջտեղ նետելը պատասխանատուութիւնը տեղափոխելու անազնիւ, նոյնիսկ ապրիկար ձեւ մըն է:

Այդ ծանր մեղքը եւս, Հ. Յ. Դաշնակցութեան վերին մարմնոյ եւ յատկապէս անոր երեք աժան հերոսներուն վրայէն նետելը ցոյց կու տայ, որ եթէ այդ կուսակցութիւնը անժխտելիօրէն ունէր արժանաւոր շարքայիներ, իր ղեկավարները սակայն եղած են իսկ եւ իսկ տօնավաճառի յեղափոխականներ:

Այդ է որ կ'ապացուցանէ նաեւ Աղան Տարօնեցիի «Պատասխանատուները Տարօնի Եղեռնին» գիրքը, որուն ընթերցումը անհրաժեշտ է ամէն ազգասէր Հայու, ամէն հայրենասէրի համար, ու ամենէն աւելի եւ յատկապէս, բոլոր օտար համալսարաններու հայկական ծագումով դասախօսներու համար, որպէսզի անոնք հայ դատին չնուրեն իրենց պարապոյ ժամերը՝ ըլլա'յ իբրեւ ժամանց, ըլլա'յ յաւելեալ եկամուտի կամ փառքի ակնկալութեամբ:

Այդ դրքին ընթերցումը բացայայտօրէն ցոյց կու տայ որ 1915 թուականի աշտը, թուրք իշխանութեան վաղուց ծրագրած, մանրամասնութեանց մէջ պատրաստուած ոճիրն էր, որ աներեւակայելի

ոխով ու զազտնապահութեամբ դործադրուեցաւ, ծաւալապաշտ ցարական Ռուսիոյ մեղսակցութեամբ :

Այդ գիրքը կը բնորոշէ նաեւ տխուր պատկերը Հայ յեղափոխութեան զեկավարութեան՝ անմտութիւն, անփութութիւն, անբաւարարութիւն, եւ երկու իրարմէ անբաժան զլիսաւոր յատկանիշներ՝ պոռոտախօսութիւն եւ մեղկութիւն :

Հետեւինք Աղան Տարօնեցիի գրքին եւ տեսնենք ինչե՛ր կը պատմէ Պարոն Սիմոն Վրացեան :

Ռուսական բանակը, որուն անբաժան, մանաւանդ անկէ կախեալ մէկ մասնիկն է Հայ կամաւորական գունդը, նահանջի հրաման ստացեր է : Բայց անոր բարեպաշտ հրամանատարներէն մին, բացի իր աչքերը փակ պահելէ, յանձն կ'առնէ նաեւ 3500 լաւ զինուած Հայ կամաւորներուն միացնել 200 հեծեալ կողակ եւ չորս թնդանօթ, որպէսզի ասոնք իրենց ճամբէն շեղին, անցնին երեք ժամ միայն հեռու գտնուող Մշոյ դաշտէն եւ վտանգուած Հայ բեկորները հետերնին առած Մանգլիքտի մօտերը միանան բանակին :

Ու այդ տուեալներուն համաձայն, Դաշնակցութեան գերագոյն Բիւրոյի յիշեալ երեք անդամներու ներկայութեամբ, Վանայ ծովու հարաւակողմը՝ Թուխ գետի ափին կը գումարուի զինուորական նիստ եւ կ'որոշուի անյապաղ օգնութեան փութալ :

Այս պատմութեան ալ սուտն ու իրաւը ճշդուած է Աղան Տարօնեցիի գրքին մէջ :

Ենթադրենք որ ճիշդ եղած ըլլայ Սիմոն Վրացեանի պատմածը :

Սակայն տխուր կողմը հոն է որ Անդրանիկի եւ միւս խմբապետներու ներկայութեամբ գումարուած ժողովին յաջորդող օրուան արշալոյսին հետ է որ պիտի գործադրուէր տրուած որոշումը եւ մեր երեք պատկառելի «յեղափոխական» առաջնորդները ոչինչ կը գտնեն ընելիք՝ եթէ ոչ կծկուիլ դէպի Վան, նիստէն անմիջապէս յետոյ :

Հիմա հարցնենք Պարոն Վրացեանին :

Կա՞ր աւելի անմիջական, աւելի սրբազան պարտականութիւն մը, գործ մը, որ Հ. Յ. Դաշնակցութեան այդ երեք զեկավարները միասնաբար դէպի Վան կը հայցէր :

Մեզ համար, ո՛չ :

Քանի որ անոնք, շուտով, թերեւս աւելի ապահով ճամբով, իրենք-զիրենք Իկաիք կը գտնեն ու հոն, հարցուփորձերով կը հաստատեն թէ Անդրանիկ «մերժած» է հնազանդիլ տրուած որոշումին :

Ու ոչ միայն մեր համոզումը, այլեւ տեսակէտը այն է, որ այդ աններելի զանցառութեան մեծագոյն պատասխանատուները եղած են եւ են, կամաւորական բանակներու բարոյական վերին հրամանատարութեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան այդ լիազօրները :

Անոնցմէ մէկը դէթ՝ օրինակ բժիշկը անհրաժեշտ էր որ անպայ-

ման ընկերանար փրկութեան փութացող դուռներուն :

Ծանօթ ըլլալով անձնապէս Սիմոն Վրացեանին, մեր փափաքն է որ ինքն ըլլար այդ մէկը, իբրեւ ճշմարիտ յեղափոխական եւ ազնիւ մարդ, իբրեւ լաւ հայ եւ Հ. Յ. Դաշնակցութեան գերագոյն մարմնոյ անգամ, հետեւաբար իբրեւ բծախնդիր պատասխանատու ղեկավար, որ ան մնար եւ ընկերանար կամաւորներուն, որոնք ուսերէն լեզուին անձանօթ էին, պարտադրէր որոշումին գործադրութիւնը, ի հարկին կռուիլ, փնտռել, դտնել ու հաւաքել վտանգուածները եւ փրկութեան գօտի առաջնորդել զանոնք :

Հապա ո՞ր օրուան, ի՞նչ ընելու համար էին կազմուած կամաւորական դուռները :

Ռուսական հրամանատարութեան նահանջի որոշումին դէմ ըմբոստանալու արկածախնդրութիւնն ու վտանգը բաժնելով, անոնք ոչ միայն պարտականութիւն ունէին խրախուսելու, այլ անձամբ հաստատելու որ եթէ անկարելի էր հաճի Յալոք Կոտոյեանի ուշացած երազը իրականացնել, այսինքն տէրը դառնալ երկրին, դէթ նուազագոյնը՝ մարդկայինը ձեռք բերելու փորձին վիճակները կ'ըլլային :

Թերեւս այսօր, Պարոն Վրացեան, ի վիճակի է նաեւ մեզի ըսել թէ ինչո՞ւ ուսու հրամանատարութիւնը ցրուեց կամաւորական դուռները ու տալ մեզի ճիշդ՝ այսինքն բուն պատճառները :

Շատ դառն պարտաւորութիւն մըն է անշուշտ պատասխանատուութիւններ ճշդել, սակայն անհրաժեշտ հայութեան գալիք սերունդներուն համար :

Դժբախտաբար բազմաթիւ են մեր զժբախտութեան պատասխանատուները :

Կրնան ոմանք, դառնացածներ, անձնական նեղմիտ հաշիւներով, մեղրածորան գովել իրենց Ա. Բ. Գ. սորվեցուցած՝ սակայն վրիպած յեղափոխական ղեկավար մը, զայն սրբացնել պարզապէս ուրիշներու հակադրելու միտումով, ափսո՛ս, ա՛յդ չէ պատասխանատուութիւններ ճշդելու ուղիղ կերպը :

Եթէ ճի՛շդ է Վրացեանի պատմութիւնը :

Անգամ մըն ալ ափսո՛ս քեզի, խե՛ղճ հայ ժողովուրդ, որ ցուցամոլներու, որ տօնավաճառի քաղաքագէտներու եւ յեղափոխականներու միայն ծնունդ տուիր :

Սակայն գիտակից անոր հզօր կենսունակութեան, մենք կը հաւատանք լաւագոյն ապագայի մը :

## «ԱՅ ՏՂԱ, ՍՓԻՉՔԱ ՉՂԱՍԵՍ»

«Հորիզոն»ի Սիմոնը Թիֆլիզեցի իմ առաջին բարեկամս էր : Ինձմէ քանի մը տասնեակ տարիներով հարուստ, իր եւ այն օրերու իմ ասպարէզիս մէջ բարձր վարկի տէր :

Անոր շնորհիւ է որ, ուսն թղթատարական պաշտօնէութիւնը, «Հայաստան» թերթին դրամական գործառնութիւնները ինծի վստահիլ սկսաւ: Նախ փոքր գումարներ, ու ապա ինչ որ ալ ըլլային՝ թէեւ առհասարակ նիւար:

Ունէի սակայն ուրիշ դժուարութիւններ, որոնց համար կարելի չէր իմ այդ նորագոյն ազնիւ բարեկամիս հետ ժամադրուելով անոնց լաւագոյն լուծումը տալ:

Այն ատեն այդ անհամութիւններուն հանդէպ չափազանց աններող էի: Այժմ նուազ՝ չըսելու համար հաշտուած եւ եթէ դրի կ'առնեմ զանոնք, պարզապէս ապրուած կեանքի մը պատկերը քանդակելու համար է:

Ուրեմն, Սիմոնը եւ ես, երկու տարբեր օրաթերթերու վազըլըտուֆներուն գործակատարներն էինք: Ան, հարուստ «Հորիզոն»ին կը ծառայէր, որ թէեւ չափաւոր դաշնակցականներու օրգան, կը համարուէր կովկասահայ զանգուածներուն թերթը, հաշուելով նաեւ «պուր-ժուա»ներէն մաս մը: Իսկ ես կանչուած էի աղքատիկ «Հայաստան»ին, որ Անդրանիկի թերթը կը սեպուէր, Կովկաս ապաստան դուռ թըրքահայ մտաւորականներու, կամաւորներու եւ դադթականութեան հոգեբովը տարուած եւ լոյս կը տեսնէր խումբ մը նուիրեալներու գործակցութեամբ, որոնց գրեթէ բացարձակ մեծամասնութիւնը կը կազմէին տակաւին Դաշնակցութեան անդամ տարբերը: Անոնց մէջ ոչ մէկ չէր տարր՝ անկախ իմաստով, եթէ ինքզինքն չհաշուեմ, դպրոցականի յաւակնութիւններ ունեցող դեռատի տարիքիս պատճառաւ:

Թերեւս «Հայաստան» ինձ նման պաշտօնեայի կարիքն անդամ չունէր, ու եթէ խիստ համեստ օրավճարով դիւս ալ իբրեւ թէ գործի մը կապեցին, այդ եղաւ շնորհիւ վահան Թոքոլիեցիի, «Հայաստան»ի աւագ խմբագիրը, 1916ի ձմրան պահ մը Կարնոյ մէջ հայերէնի ուսուցիչս, եւ որուն պատահամբ պիտի հանդիպէի Թիֆլիզի փողոցներէն մէկուն մէջ, երբ զրկուած էի այդ ուստանը, համաձայն ինծի տրուած դպրոցական դառնալու խոստումի մը, եւ կը յամառէի հոն մնալ տաղնապալի վիճակի մատնուած՝ խոստումին դրժուած ըլլալուն պատճառաւ, պատուաւոր լուծումի մը յոյսով, որ կ'ուշանար ու պիտի չքանար:

Այդ հանդիպումով վահան Թոքոլիեցիի եւ իմ միջեւ ստեղծուած շատ սովորական կապ մը, պիտի վերածուէր եղբայրականի ու պիտի մնար մշտապէս:

Օրերու ընթացքին կուտակուած դառնութիւններս, անձնապէս առաջին անգամ խաբուած մը ըլլալու ցասումը, յանկարծ տեղի կու տար բնութեանն ամուր հաստատուած լաւատեսութեանս առջեւ, նոյնիսկ տակաւին անծանօթ Թիֆլիզ քաղաքը կը դառնար ամենէն գեղեցիկը, ու դեռ մինչեւ այսօր ալ իրապէս պիտի մնայ գրեթէ անգերազանցելի:

Այդ պահուն զիս զգուող մտերմիկ խօսքերը կ'ուռեցնէին հաւատքս, մանաւանդ կամքս, ու այլեւս չէի անդրադառնար վիճակիս դառնութեան, կը ներէի զիս անձկութեան մատնողներուն: Եւ այդ բոլոր յանկարծուստ փոփոխութիւններուն պատճառը մէկ բան էր միայն՝ Թոքովեցիի հանդիպիլս:

Որքա՛ն, որքա՛ն շատ լսած էի, հէքեաթներու մէջ, պարիկներու մասին: Գրեթէ ամէն երեկոյ, երբ մահիճս ցոյց տրուէր, օրուան անվերջ խաղերէն ջարդուած մարմնոյս, մանաւանդ տնեցոց հանդիստ տալու համար: Բաւ էր որ մայրիկս, կամ եղբրաբախտ քոյրիկս իրենց շրթունքին ծայրովը միայն փոքր խոստում մը ընէին անոնց ակնարկելով: Անկողինը սիրելի կը դառնար, թռչելով հոն կը մտնէի: Կը հաւատայի պարիկներու դոյութեան, նաեւ որ անոնցմէ մին անպայման ինձ հսկելու էր սահմանուած:

Այդ պահուն, մի՞թէ ան չէր, ձեռքս Թոքովեցի ափին մէջ դնողը: Անոր ականջին փսփսայէ յետոյ, անգամ մը եւս անհետացած, առաքելութիւնը վերջացուցած ըլլալու դոհունակութեամբ:

Այդ քանի մը սեւ օրերու մթութեան մէջ ի՞նչ թովչական անակնկալներ յղացած էր իմ բարի վճուկս, որոնք Թոքովեցիի միջնորդութեամբ նոյն օրն իսկ կէտ առ կէտ լոյս աշխարհ կու դային, սկսելով դերադոյն երջանկութեամբ, ամէն հայ պատանիի երազներուն լաւագոյնը իրականացնող ձեռնադրութեամբ մը, ամենայն Հայոց հերոսի՝ Անդրանիկի կողմէ: Տակաւին կը զգամ թշնամին պատժող իր ծանր բազուկին թեթեւութիւնը գլխուս վրայ, պաշարուած, զլարթ եւ խեղացի, դեռատի եւ գեղեցիկ գլուխներով:

Նոյն իրիկունը, փոքրիկ պուրակի մը քարէ նստարաններէն աւելի հանգստաւէտն ունէի, իսկական պալատ մը. «Հայաստան» թերթի թղթածրարներուն նոյնքան կարծր դէգերը, սակայն սենեակի մը մէջ, քանի մը դոցուող դուռներէ ներս: Յաջորդ օրերուն Վահան կրցած էր ճարել առանց սաւանի վերմակ մը, ու քանի մը շաբաթ վերջ, երկու հոգինոց յարմար սենեակ հայ ընտանիքի մը մօտ, ուր միասին կը բնակէինք վայելելով առաւօտեան թէյը եւ հայ տանտիրուհիի հոգածու վերաբերմունքը:

«Ալէա Ժաֆթա Էսթ»: Ռուպիկունը ետիս էր:

Առողջ էի: Բերանս լեզու կար, բայց ո՛ր կողմը որ դարձնէի դայն, ներս քաշէի թէ դուրս հրէի, միմիայն հայերէն բառեր դուրս կու տար:

Պէտք էր սակայն արդարացնէի ինձի յատկացուած օրական հարիւր կողկի — մէկ ուրբլի — փոխարժէքը:

Դժուար չէր վազն ի վազ, Պէհպուրթեան փողոցէն, Երեւանեան հրապարակին մօտերը գտնուող տպարանը քանիցս յօդուածներ տանիլ, սրբագրութեան կարօտ պատճէններ փոխանակել կամ որեւէ նոր լուրեր հասցնել: Հոս լեզուն կատարելիք մեծ գործ մը չունէր ու չէր

մաշեր : Ինչքա ինձ ալ մեղքնալու պատճառ մը չէի կընար մէջտեղ դնել , եթէ կօչիկի հարցը նոր տաղնապի մը դուռ չբանար :

Իմ կարեւոր գործունէութեանս մաս կը կազմէր նաեւ անձերու փնտռուքը :

Երկու գլխաւոր անհետացողներն էին , առաջինը Փաշան , ինչպէս կը կօչիկինք մեր շրջանակին մէջ Ազգ . հերոսը , ու ապա Թոթո-վեցը՝ խմբագրապետը , որ յանկարծ կ'անհետանար :

Երբ գտնելիք անձս Անդրանիկն էր , պաշտօնը խիստ սահմանափակ բնոյթ ունէր . պէտք էր միայն հետախուզէի իր ուր գտնուիլը , որպէսզի ինձմէ մեծերէն մին , Վահանը կամ խմբագիր մը , ուղղակի յարաբերութեան մէջ մտնէր :

Օր մը միայն , իմ կամքէս անկախ , Մելիքեաններու դռնապանին հարցուփորձի պահուս , ուղղակի Անդրանիկի համհարզ , վայելչազեղ եւ զեղեցիկ երիտասարդ Սուրէն Մելիքեանին վրայ կ'իյնամ : Անակնկալի եկած սեպելով ինքզինքը , որ Անդրանիկ իրենց մօտ էր ու այլ իր բացակայութեան , քիչ մը այլայլած , Սուրէն թեւէս բռնելով պարտադրեց որ միասին բարձրանանք իրենց փառահեղ բնակարանը , ընդարձակ միջանցքներ , սրահներ , տնային մշտադալար ապակեծածկ պարտէզներ : Ապարդիւն փնտռուքէ յետոյ , հեւ ի հեւ դարձի պահուս , քրտինքի պիտի վերածուէր հիւրընկալիս մատուցած օշարակը :

Թոթովենցի պարազան լէզ-մաժէսթէի խնդիր չէր յարուցաներ , մանաւանդ պաշտօնին բերմամբ իրեն այցելելիք վայրերուն ընտելացած էի , յաճախ ընկերանալով :

Ասոնք ալ վերջապէս ինձի վախ պատճառող հանգամանքներ չունէին , լեզուի մկանները յոգնեցնող գործեր չէին :

Բայց , եկուր տես որ , օրին մէկը , «վարչապետ» Եզնիկ Քաջունիւն , զիս փորձելու մտօք , ձեռքս թուղթի կտոր մը կու տայ :

— Կ'երթաս Երեւանեան հրապարակին աջ ծայրին անկիւնը գտնուող նամակատունը , հոն ցոյց կու տաս տուածս ու տասը ուրբիւն գանձելով ինձի կը բերես :

Դող կ'լլեմ , դուռ , սեղան , դարակ , պատուհան , մարդիկ իրար կը խառնուին : Մեքենադրող տեղացի օրիորդին ժպիտը աչքս կը մտնէ ու տեղս քարացած կը մնամ :

— Այլայլելու պատճառ մը չկայ , օրիորդը թող քեզի սորվեցնէ , ըսելիքդ մէկ նախադասութիւնը չանցնիր , թուղթն ալ ցուցուր , պըրծաւ : Հայտէ՛ , քեզ տեսնեմ , կ'աւելցնէ Եզնիկ , խնդուքը զսպելով :

Պրծա՛ւ գնա՛ց : Վա՛յ պապամ , վա՛յ , մըթմըթալով ինքզինքս փողոց կը նետեմ , հոն պարտկելու տաղնապս , օրիորդին օգնութիւնը անտեսելով , քանզի աւելորդ էր եւ անօգուտ :

Հապա՛ եթէ գոց ըրած նախադասութիւնս չբաւեց , եթէ հոն բազմութիւն չըլլայ ու պաշտօնեան խօսելու մարմաջէն բռնուի :

Թեւերովս , աչք , այտ չորցնելու ատեն որոշումս կու տամ հե-

տեւեալ բառերու ուսերէնին : «Չեմ գիտեր ուսերէն, հայերէն լրագիր ու թուղթը կ'երկնցնեմ, եղա՛ւ, եղաւ, չեղա՞ւ, ես կու գամ» :

Մամուռս վերջ դաժժ չէ սակայն, ըսելիքս ճոխացնելու փորձեր կ'ընեմ : Քայլերս հետզհետէ կը դանդաղին : Հրապարակին հասած, անկիւնը, արդէն «պատալստա» բառը քշելով խումբ մը ուսերէն իրարու հետ վիճող հայ տղաքը բարկութեամբ մէկդի կը հրեմ ու կ'անցնիմ վազելով :

Բախտէս կամ ոչ, նամակատան մէջ մարդ չկայ, ծակի մը մէջէն քաղցրած պիտ պաշտօնեային առջեւն եմ, ու «պատալստա, նի կալբիու, Արմենաքի կազէթ» ու թուղթը կը հրեմ ներս :

Մարդը կը սկսի խնդալ ու կաշաղակ կտրած հեղեղի պէս բառեր կը թափէ : Ամէն ծակերէն խնդուքները հետզհետէ աւելի բազմաթիւ են, բարձրաձայն :

Չեմ ընկրկիր, կը սպասեմ, բայց վերջ չունի, անսպասելի քաջութեամբ մը ես ալ կը վարակուիմ խնդուքներէն, աչքերս նամակատան բացուող դուռին : Տարեց, թուիս, միջահասակէն վար մէկը, ձախ անութիւն կապոց մը սեղմած ներս կը մտնէ :

Կապոցը նստարանին վրայ դետեղելէ վերջ քրտինքը կը սրբէ, ու չես գիտեր ինչո՛ւ, ան ալ կը սկսի խնդալ, երբ յանկարծ, աչքերը իմ կողմս, ձեռքը ինծի երկարած կը մօտենայ : Ու հայերէն .

— Բարեւ ձեզ, դուք ինծի երեւի չյիշեցիրք :

— Դժբախտաբար ոչ :

— Վահան թոթովենցի եղբայրը չէ՞ք : Նա ձեզ այդպէս ծանօթացրեց մեզ «Հորիզոն»ի խմբագրատան մէջ : Յաճախ հանդիպել եմ ձեզ իրեն ընկերանալիս :

Մինչդեռ պաշտօնէութիւնը կը սկսի ուսերէն խօսակցութեան մեր խիտ մօտաւոր ապագայի բարեկամ Սիմոնին հետ, վերջիչելով մեծ մայրիկիս պատգամ դարձած խօսքերէն մին, մտովի կ'ըսեմ . «Օ՛, քեզ Աստուած զրկեց հոս» :

Գործս կարգին է, տասը ուրբլին խնամքով ծոցիս մէջ կը սպասեմ որ Սիմոն իր խօսակցութիւնն եւս աւարտէ, որպէսզի կարգը ինծի դայ շնորհակալութիւնս յայտնելու :

Սիմոն ինծի կը դառնայ խօսակցութիւնը շարունակելով, ու ապա հայերէն կը բացատրէ թէ փոխանակուած խօսքերը իմ մասին էին, եւ որ այսուհետեւ առանց մտահոգութեան կրնամ դալ ու յանձնարարութիւններս կատարել :

Անոյ ժպիտներ փոխանակելով պաշտօնէութեան հետ, Սիմոնին հետ դուրս կ'ելլեմ : Ան իր բովանդակ պաշտպանութիւնը կ'առաջարկէ ինձ, կը յայտնէ թէ ո՛ր ժամերուն առհասարակ նամակատուն կու գայ, ու նաեւ որ իր օժանդակութեան երբ կարօտն զգամ չվարանիմ խմբագրատուն հանդիպելէ :

Մինչեւ բաժանումի պահը Սիմոն կը հարցուփորձէ «եղբորս»



վրայօք, կ'ուզէ իմանալ իր մտաւոր կրթութեան աստիճանները :

Գիտցածս այդ պահուն մեծ բան մը չէր, կու տամ երկու անուն : Սարրերգի մէջ Թլկատինցիի եւ Ռուբէն Չարդարեանի աչակերտած ըլլալը : Ամերիկեան համալսարան մը հազիւ աւարտած կամաւոր դալը : Իսկ մեր եղբայրութիւնը կնքուած ի յիշատակ իր լեւոն, դեռատի եղբօր կորուստին՝ զոհ մեծ եղեռնին :

— Ինչ որ մեզ մի քիչ տարօրինակ թուեց այն է, որ, մինչդեռ Թոթովենց ամբողջովին հիւսիսային «վիքինկ» ցեղի տիպար մըն է, յաղթանդամ, դեղեցիկ, կապուտաչեայ, երկար ու ծածանող չէկ մազերով, դուն, մարմնապէս դեռ պատանի, սակայն թուխ ես, մեր Ղարապաղի տիպարներէն, սեւ ու դանդուր առատ մազերով :

Երկու մեծ բարեկամներ էինք արդէն :

\*  
\*\*

Շատ չանցած Վահանի ընկերային շրջանակին մեծ մասը նաեւ իմս էր. դէթ զիս իրենցը սեպոյներ՝ եթէ ես ինձ համարձակութիւն տայի :

Դերենիկի ճաշարանը միմիայն շաբաթ առաւօտները կանուխ կը յաճախէի, փոխարքայի պալատին դիմաց, հոն, մէկ ուրբիէն հինգական կոպէկ օրը խնայածովս կաթով, կարագով համեղ նախաճաշի համար : Կէսօրները հոն ինձ համար բոլորովին մատչելի չէր, միայն մերթ ընդ մերթ, երբ Վահանի պնդումներուն տեղի տայի :

Հոն, միմիայն ճաշով չէր որ կը յագենայի, տիրող մթնոլորտը կը հետաքրքրէր զիս : Նորերու ծանօթութիւն, տեղի ունեցող անվերջ ու կրքոտ վիճարանութիւններ, ներքնայարկի բաժինին մէջ ամբողջովին Հայերով լեցուն :

1917 թուի վարնան օրերն էին ու բոլորին համար, մանաւանդ Հայոց, կային խիստ տագնապալի խնդիրներ :

Հաճելի էին, աւելի ճիշդ հիանալի, Վահանի ելոյթները : Իր «ստենտորեան» ձայնը, անձը, հանգամանքը, միշտ ալ յաղթական վերջ մը կ'ապահովէին :

Որքա՛ն, ինչքա՛ն հպարտ էի իրմով :

Երկուքէն ոչ աւելի անգամներ միայն ընկերացած եմ իրեն ֆետրուարեան Յեղափոխութենէն յետոյ, փոխարքայի պալատի պուրակներուն մէջ կազմակերպուած ազգանպաստ «Պաշկա Չայ» երուն :

Լսեր էի, իմբազրատան մէջ կողմնակի խօսակցութիւններու ատեն Վահանին յաջողութիւնները կովկասահայ իգական շրջանակներուն մէջ : Շատ բաներ կը պատմէին մեր տղաքը, ըսեմ անմիջապէս բարի նախանձով տարուած : Այնքան ախորժակ եւ բաղձալի շեշտ կը դնէին իրենց խօսքերուն մէջ, այնքա՛ն կը գրգռէին արդար հպար-

տութիւնս, որ ներսէս բունն ցանկութիւն մը կ'արթնար անձամբ տեսնելու իր շփացածութիւնները: Զախլի<sup>օ</sup> կ էր շատ շատերուն նման:

Ո՛հ, որքան բազմապիսի էին ծիծաղելի ելոյթները մեր խոտաբարոյ հայրենեաց անմեղունակ զաւակներուն, մեծ մասը օտար եւ հեռաւոր հորիզոններու գործարանները ձգած, իրենց յաւէտ կորած սիրելիներուն փնտռութիւն ու վրէժխնդրութեան բովէն գէնք վերցուցած:

Անոնք, երկու տասնեակ ամիսներ, մէյժէկ սուխնի ծայրն անցուցած իրենց երազները, անտուն, անտիրական, մահուան հաճոյքէն զրկուած՝ անցած էին վաղուանին:

Երիտասարդներ էին:

Ամէն յոյս որ կը մեռնէր իրենց մէջ, ծնունդ կու տար նորերուն՝ աւելի խանդավառ, միշտ լաւատես:

Կ'ուզէին ապրիլ:

— Տեսէ՛ք, ո՛վ է եկողը, Կացիմեանն է, մեր Տափօն, ձայն մի՛ հանէք:

Կացիմեան արդարեւ քանի օր է մէջտեղ չկայ, Ամերիկայէն նոր դրամ ստացեր է, լուրջ հետապնդումներու լծուած: Տասներկու տարեկանին Միացեալ Նահանգները պանդուխտ ելած է, Խարբերդի դաշտին ծաղիկները, մետաղագործարանի տաշեղներուն մէջ ոսկիր վերածուած գտնելու յոյսով:

Երբ զինքը բերող շոգենաւը Սառուցեալի եզերքները կը քերէր, այնքա՞ն մտած էր որ շատ չանցած փափախը ծուռ, իր նժոյգով պիտի կանգնէր «Ուուլէ գիւղ»ի իրենց հայրենի տան առաջ: Այդ օրը, ինքը պիտի ըլլար իր վաշտին հեծեալներուն հրամանատարը: Համայն գիւղացիք, հայ թէ այլազգի, պիտի հաւաքէր իր դրան առաջ ու տան պատշգամէն պիտի յայտարարէր հայ ժողովուրդի ազատագրութիւնը, պիտի հրաւիրէր ժողովուրդը որ անյապաղ տէր կանգնի իրմէ բռնագրաւուած արտերուն, այգիներուն, անտառներուն, առուներուն, պիտի հրահանգէր որ երէկի գաւթիչները կա՛մ աշխատին իրենց օրինաւոր տէրերուն կալուածներուն մէջ, եւ կամ շուտով հեռանան:

Տարիները չէին դադրեցուցած իրենց հոլովոյթը ու Տափօն նոյնպէս չէր կտրած իր երազներուն ծածանող թեւերը: Ան յաճախ ինքզինքը կը դիտէր ծննդավայրին մէջ, չէն, ուրախ: Մայր, քոյր, մօրաքոյր եւ դրացի «հինա» դրած դժուարահաճ տղուն հարսնացու կը փնտռէին: Ու ամէն անգամուն ալ իր հարսնետորները եկեղեցիին դուռը հաղիւ հասած, զանգակներուն ձայնը կը փչրէր պատկերը:

Նորէն, դարձեալ Թիֆլիզ է, նոր ստացած տոլարներու ուժով պճնուած, եփ ելած, միս-միսակ: Ու կանանց ձեռքը համբուրելու քանի մը վարժութիւններ կրկնելէ վերջ հայելիին առջեւ, դուրս կը նետուէր, մինակութեան դարմանը գտնելու վերանորոգուած հաւատքով:

Ա՛խ, այդ ձեռք Համբուրելու արարողութիւնները, մեր կամաւոր երիտասարդութիւնը չարչարող կարճ բայց հրամայական ժեստը:

1916ի գինաթափութենէն յետոյ, գիրենք մարդոց ընկերութեան կապող երկու վիսաւոր պահանջներ ունէին գոհացնելու տուարներու հովանին պարզելով:

Ինքզինքնին ցոյց տալ կենցաղագէտ եւ զարգացած: Այսինքն «պատրաստուած մարդ է» կոչուելու արժանի:

Կենցաղագիտութեան նախարանը կը կազմէր, որեւէ հանդիպումի պարագային պատշաճ կերպով ձեռք Համբուրելը: Կամաւորին համար «պատրաստուած» ըլլալը ցոյց տալու համար, քանի որ ոռւսերէն խօսելու փորձութիւնը շատ հեռուները կը տանէր, կը բաւէր օտար լեզուներու հմտութենէն ճառել, «յեղափոխերէն» խօսելու շնորհք ցոյց տալ, մէկ քանի միջազգային հեղինակութիւններ կարգացած ըլլալ, անգլերէն կամ զաղղիերէն բնագիրներու մէջ, խուսափելով զանոնք հայերէն թարգմանութիւններու մէջ կարգացած ըլլալու «յիմար» յաւակնութիւններէն:

Այսպէս է որ երբ, դժբախտութիւններու բերմամբ, մեր սեփական պատասխանատուութիւնները ճշգրիտ բուռն վիճաբանութիւններուն վերջ մը տալ կը փորձուէր, մնացեալ նիւթը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ ծանօթ տղոց ի վնաս բամբասանք եւ քրքիջ, պատկերազարդ նմանութիւններ կեղծել՝ ձեռքի համբոյրներու, «յեղափոխերէն», այն է արեւելահայերէն խօսելու:

\*\*\*

— Դժբախտաբար, սիրելի Տիկին Աննա, մեր խելօքիկ, այն է սատանայ աղբարիկը, երկու երգում ըրած է, Ամենայն Հայոց Կաթողիկոսէն անդամ անքակտելի: Մին կանանց ձեռք Համբուրել, մանաւանդ երբ սիրուն են եւ մատղաջ՝ ինչպէս դուք, ու ապա «յեղափոխերէն» չխօսիլ:

«Ձաշկա Ձայ»ի մը առթիւ Վահանին վերջին ընկերակցութեանս պահուն էր:

— Վա՛յ, ինչո՞ւ է նման դաժան որոշումներ տուել:

Ու ահաւասիկ, օրուան հիւրընկալներէն դեղանի հայ կին մը ընդառաջ կը փութայ նախկին կամաւորի մը՝ Թոթովենցին Ամերիկայէն ընկերացող ու ծանօթ տղայ:

Վահանն է ընդոստ:

— Եթէ կ'ուզէք, սիրելի տիկին, աճապարեցէք այս կողմն ուղղել ձեր աչքերը ու շուտով կը հասկանաք:

Հագիւ խօսքերն աւարտած էր, երբ մեր կամաւորը հագար նազերով իր մարմինը քառասուն կտորի վերածած սկսած էր տիկնոջ ձեռքը փնտռել իր ծարաւ շրթները հոն տեղաւորելու համար:

Ինչքա՛ն չար են մարդիկ : Պուրակներուն մէջէն , ծառերու ետեւէն քրքիջները երկինք հասան :

— Դէ՛ , այժմ ի հարկէ իմանում եմ պատճառը : Ու ճայն բռնելով համանուազին , ինքն ալ բարձրաճայն սկսաւ խնդալ , եւ ձեռքը միշտ ուսիս , շարունակեց .

— Նոյնքան եւ ծիծաղելի են , երբ փորձ են անում մեր լեզուով խօսել , ինչպէս դուք ասում էք «յեղափոխերէն» . ախր ի՞նչ կարիք ունեն :

— Մանաւանդ , վրայ բերաւ Թոթովենց , երբ այնքան հազուադիւր է ձեր մէջ , ձեր լեզուով իսկ հայերէն գիտցողներ , յարգելով ձեզ նման բացառութիւնները :

— Խնդրում եմ , մի՛ չափազանցէք , պարոն Թոթովենց :

Եւ սակայն , Տիկին Աննային համար անբախտ օր մըն էր :

Քիչ հեռուն , սեղաններու շուրջ ազմուկ մը կը բարձրանար , շատերը ոտքի , այս ու այն ուղղութեամբ յիշոցներ :

Պատահած էր անխուսափելին :

Մեր տղաները՝ «հոս-հոս»ները , իրենց ապսպրանքը կը փորձեն տալ մօտեցող տիկնոջ մը , ո՛վ գարմանալի , իրենց դիտցած լեզուովը : Ու շնորհալի սպասարկուն , պէտք է շեշտել իր ծառայութիւնը շնորհող մեր «բարձր դասուն» մէկ զաւակը , ինքզինքը վերաւորուած գզալով առանց այլեւայլ յետ քայլի որոշում կու տայ՝ բողբոջելու համար առ որ անկ է :

Վայնասուն մը նաեւ կազմակերպիչ հոյլին մէջէն , ուր վազելով կը փութայ մեր խօսակից տիկինը , իբրեւ իրենցմէ մէկը :

Մենք եւս , Թոթովենց եւ ես , կը փութանք «մեր» կողմը , հոն ուր , թռչող ու շառաչող խօսքերէն բան մը կը փորձենք հասկնալ , «հոս-հոս»ներուն մօտ :

Շատ չանցած , մեր կողմը գինուորական հրահանդի ուժով կարգ-կանոնի կը հրաւիրուի : Շատեր վերստին աթոռ կը զբաւեն , ոմանք բարկաճայթ կը հեռանան :

Հանդիպակաց տաք դուրիներն եւս խելքերնին տուն կը կանչեն , ու կը սկսի բանազնացներու երթեւեկը :

— Ա՛խր , ո՞նց կարելի է անարգել արխտոնկրացիայի մեր ազնուազարմ աղջիկները , որոնք գերազանց ազգասիրութեամբ եկել են ու սրամադրուել բարեսիրական մէկ ձեռնարկի :

— Բայց տիկին . . .

Վահանն է անհամբեր .

— . . . Մի՞թէ հայերէն լեզուով , հայ ազգկայ մը դիմել , ինչ ալ որ ըլլայ իր դասակարգային հանգամանքը , զայն անարգել է :

— Ի՛նչ արած , երբ Տիկին Զանազա՛նուլան , ինքզինքը խիստ վերաւորուած կը զգայ : Հարկաւոր է անյապաղ ներողութիւն խնդրել :

. . . . .

«Հոս-հոս»ները կը մեկնին:

«Հայաստան» թերթի վարչական կամ խմբագրական դործերուն խառնուկու ո՛չ իրաւասու էի, ոչ ալ կարող: Նիւթականի հասկացողութիւնս ալ օրական մէկ ուրբլիէն անդին չէր անցնէր՝ իմ բաժինս միայն: Կը տեսնէի, կը լսէի սակայն որ պուտ-պուտ ինկող մանէքները տեղ չհասած կը ցնդէին: Ձէի հետաքրքրուեր թէ ո՞րքան կը վճարուէին խմբագրապետ, խմբագիր եւ միւս պաշտօնէութիւնը:

Կանոնաւոր կը ստանայի՞ն իրենց ոտձիկները:

Երբ դիմումները անտանելի կը դառնային՝ «վարչապետ»ը կը բանար տետրակը, դեռ չվճարուած ծանուցումի հասցէ կը գտնէր ու դինքը քրտնցնողներուն կ'ըսէր.

— Լաւ, համբերեցէ՛ք քիչ մը, տղան զրկեմ, Հայ Առեւտրական Գրասենեակ, հարիւր ուրբլի պարտք են, եթէ վճարեն, բան մը կ'ընեմ:

— Ես չեմ երթար... ձեզմէ մէկը թող երթայ: Քիչ փարս չէ, կարելի է ինձի չեն տար:

— Ծօ՛ ինչո՞ւ: Հայկական հաստատութիւն է, հող որեւէ դժուարութեան խնդիր չկայ:

— Հոն Հայ չկայ: Ձեմ երթար:

Միաձայն «Վահան» կը պոռան:

— Եկուր սըւոր ըսէ թող երթայ: Ռուսերէնի խնդիր չկայ:

Պահանջը կը դառնայ խնդրանք, պաղատանք, Վահան բերանը չի բանար, աչքով կ'ընէ որ երթամ, ու ապա.

— Ծօ՛, անօթի են. չե՞ս հասկնար:

Ճամբայ կ'իյնամ ճարահատ:

Վարը դարպասին մօտ Բարդէնին հետ քիթ քիթ ենք: Թիրեաքեանին տղան է, մօրը եւ քրոջը հետ Կովկաս կրցած են ապաստանիլ, ինչպէս Ջարդարեանները: Գիմնագիտութիւն համազգեստով, ինձի տարեկից, մեր նմաններէն ամենէն քիչ հողեր ունեցող, զուարթ, վառ-վռուն:

— Հետս եկուր, կ'առաջարկեմ:

— Ո՞ւր, հեռո՞ւ է:

— Հայ Առեւտրական Գրասենեակ: Սիրած տեղերուդ մօտիկ: Հարիւր ուրբլի առնելիք ունինք:

— Ե՞ս ինչ դործ ունիմ: Եղնիկը վե՞րն է:

— Հարկաւ: Ե՞րբ տեսած ես անոր բացակայութիւնը:

— Վահանը, Հրաչը (Ջարդարեան) վե՞րն են: Փաշան կա՞յ:

— Փաշան դեռ չէ եկած, սակայն Եղնիկ (Քաջունի) քեզ դարձեալ կը վռնտէ: Հազիւ ամէն ոք, վիճաբանութիւն դադրեցուցած, աշխատանքի են:

— Այդ չեղաւ:

— Հետս եկուր, միասին վերադառնանք, մանաւանդ ձեռքերնիս լեցուն, բան մը չ'ըսեր:

Նպատակս անշուշտ բոլորովին անշահախնդիր չէր, ճամբու  
ընկերէն աւելի, իր համազգեստի հրապոյրէն կ'ուզէի օգտուել, ուս-  
տերէնի մէջ հաւանաբար օգտակար կ'ըլլար, յուսալով որ գիտէր:

— Եկո՛ւր, եկո՛ւր, աւելցուցի, դրասենեակը անպայման աղ-  
ջիկներով լեցուն կ'ըլլայ, նոր «սիմփաթիա» շինելու առիթ մը քեզի:

Մեքենաբար Բարզէն սկսած էր համազգեստին վրայ տարա-  
ծել ձեռքերը, կարծես փոշիներն առնելու, կոճակները զննելու ու  
գլխարկն ալ քիչ մը աւելի ճակատին վրայ բերելով... ու հետեւե-  
լով...

— Այդ բառը նո՞ր սորվեցար, երեւի անոնց կարօտն ունիս:

— Անկեղու բերան, դրպանս անկոպէկ, պոյէս վեր բաներ են  
ատոնք: Եկուր գիմացը անցնինք քեզի ցոյց տամ:

Վաճառատան մը մէկ անկիւնը հասակով հայելի մը կար, ուր  
յաճախ ինքզինքս քննութեան կ'ենթարկէի: Գացինք առջեւը տնկուե-  
ցանք:

Մնացեալը հոգ չէ, կ'ըսեմ մտովի, դպրոցական մաշած հա-  
զուստ մըն ալ ես ունենայի, մինչեւ անոր դրպանը դատարի ըլլալը  
հասկնալու ատենը դար, երբեմն-երբեմն «սիմփաթիա» մը շարաթ  
մը գէթ պահելու յոյսը կրնայի ունենալ:

Քովիս պատկերը մինչ այդ անհետացած էր: Աչքերս վեր առի  
կօշիկներուս հիանալէն: Կոնակս, մայթին վրայ, խումբ մը աղջիկ-  
ներ. Բարզէն, զառիվար առու ինկած ջուրերուն պէս հոն կը վազէր:

Ետիս դառնալու հարկ չկար, հայելիին մէջ մինչդեռ խումբը  
կ'անհետանար, ես ինքզինքէս կամ երեւոյթէս նուազ դժգոհ դուրս  
կու գայի:

«Ենթադրեմք որ սա դիմացիս պատկերին տէրը, ունենար հա-  
րուստ եւ շքեղ արտաքին մը, իր ուղեղին մէջ կուտ մը աւելի պիտի  
գտնուէ՞ր»:

Շատ հաւանած էի այս գիւտիս: Ինչե՛ր չեմ պարտիր անոր:  
Օ՛րն, ուրեմն:

Գեղեցիկ մուտքէն վեր, առաջին յարկի աջակողմեան դուռը  
կը բացուի: Սիրունիկ օրիորդ մը, բարեձեւ եւ ժպտուն: Կ'արտասանէ  
անխուսափելի հրակէրը, որու կը հետեւի հարցում:

Այս վերջիններէն բան չեմ հասկնար, կը կուսհեմ:

— Հայկական Առեւտրական գրասենեակ, այնպէս չէ՞: Կը փա-  
փաքիմ ձեր նախագահը տեսնել:

Պատասխան չկայ: Կը կրկնեմ:

Աղջիկը ձեռքը դրան, քչիկ մը եւս ետ քաշուելով գետին կը  
նայի ամէն կողմէ արձակուած քրքիջներէն շիտթած:

Կը յոգնին, կը լռեն:

Հարցումս կ'երրորդեմ:

Մուռջի պէս դէմքը ծամածուռ, մէկ բազուկը տարածելով

դուռը, եւ զիս դէպի դուրս կը հրէ զգալի նազանդով: Խնդուքը կը վերսկսի, խեղճ աղջիկը արիւնը այտերուն զիս եւ դուռը լքելով կը փախչի: Ուրախութեան ճիչերը՝ ո՛չ:

«Շան որդիներ» մըմտալով, ես ալ, դուռը կլիսաբաց, ճակտիս քրտինքի կաթիլներուն հետ վար կը թափիմ:

Պէհպուլթեան փողոցի անկիւնէն, սովորականին պէս, աչքերս խմբագրատան պատուհաններուն են, մէկ-երկու լաւատես ժպիտներ, եւ բռունցք ցոյց տալով ու մենախօսելով բարկաճայթ կը յառաջանամ:

Միջանցքի դռնէն ձայնս կը բարձրացնեմ, ուղղակի կը պոռամ:

— Ես ձեզ հազար, միլիոն անգամ ըսած եմ որ հոս «Հայ» չկայ: Որո՞ւ հոգ:

— Ծօ՛, պարա՞պ եկար: Հարիւր ուրբիւն բա՞ն մըն է որ չունէին, կամ չուզեցին տալ:

— Նորէն դուք «ձեր էջը կը քէք», հագու թէ կը դոչեմ զայրացած, երբ Եզնիկ այլայլած՝ նշան կ'ընէ որ լռեմ: Ու ապա:

— Սո՛ւս, ծօ՛, փաշան ներսն է:

Բնական է ձայնս կը կտրեմ, սակայն Վահանն է որ քովի սենեակէն զիս Անդրանիկի մօտ կը կանչէ:

Միայն ես չեմ զարմանար, «անօթիներն» ալ իրար կ'անցնին, «մեզի բերան չտաս» փսփսալով:

— Վախէն բերանը արդէն բռնուած է, կ'ըսէ Եզնիկ խնդալով:

Մատներուս վրայ յանցապարտի պէս կը յառաջանամ: Անդրանիկ, Թոթովենցի եւ Թիւթիւնճեան Լեւոնի սեղաններուն միջեւ, միակ թիկնաթոռին մէջ բազմած է, սրունքները առջին փուած, երկու ձեռքերը իրմէ անբաժան դաւազանին դուրսը պլլած: Ներսէս Դժխոյեան ոտքի վրայ: Նստած, դրան մօտիկ, Յակոբ Տէր-Զաքարեան «տանտի» իր պերճ կերպարանքով «փանաման» դաւազանի դիտուն դրած կ'օրօրէ արմուկը՝ դրած «Իշխան»ի (Բազմալեզու Յովսէփեանը) գըրասեղանին, Հրաչ Զարգարեան անկիւնը իր սեղանին վրայ դուրսը ցցած, իր եղբայրը բանաստեղծ Ռաֆայէլը ետին կանգնած, երկուքն ալ չափազանց լուրջ: Եղիշէ Քաջունին խոհուն, սիրուն դէմքին վրայ փայլող ակնոցներով:

Ինչպէս միշտ, Թոթովենց կը յաղթանակէ. դիտուն մէջ արդէն կը պճլտան իր ըսելիքները, անհամբերութիւնը զսպած փաշայի ծանր շուքէն:

— Մօտեցի՛ր, մօտեցի՛ր, կ'ըսէ հայրական շեշտով՝ Անդրանիկ. քո՛վս եկուր, խօսէ՛: Տեսնենք ի՛նչ նեղութիւններ կու տան ասոնք քեզի՛՝ հակառակ պատուէրիս:

Մօտն եմ, ձեռքը դանդուր մազերս կը շոյեն, կը պնդէ որ համարձակ պատմեմ թէ ի՛նչ է ցասումիս պատճառը:

Պատճառը մէկ հատիկ է: Հայկական կոչուող, ու այդ իրա-

պէս, Թիֆլիզի մեր Թաղամասին մէջ, ես ուսներէն չեմ դիտեր, իսկ բնիկները հայերէն, կամ չեն ուզեր խօսիլ:

Խօսակցութեան ընթացքին Անդրանիկ, ձեռքս իր ափին մէջ պահած կը խրախուսէ զիս:

— Նորութիւն մը չէ, տղա՛ս: Հոգ մի՛ ըներ: Դուն դնա սա պաղ ջուրէ՞դ սափորդ լեցուր բեր, ու մնացեալ ժամերդ դասերուդ յատկացուր:

Փարչ ու դաւաթ ձեռքերուս, կը վերադառնամ փաշային մօտ, ուր սովորական կրակոտ վիճաբանութիւնը կանդ կ'առնէ միայն, երբ լեցուն դաւաթը Անդրանիկին կ'երկարեմ: «Օձն որ օձ է, ջուր խմելու պահուն մարդը չի խայթեր» կ'ըսէր մեծ մայրիկս:

Սակայն, դաւաթը ետ առած, դարձի ատենս Վահան թեւս սեղմած կը կեցնէ:

— Ինձի կը սիրե՞ս:

Ձայն չեմ հաներ: Միւսները նոյնպէս ու կը սկսին խնդալ, մանաւանդ երբ Լեւոն իր անխուսափելի «Ֆիլան»ը կը կոխէ:

— Խաղքս պիտի չկոտրես: Նորէ՛ն պիտի երթաս այդ... որջը: Չըլլա՛յ որ հայերէն խօսիս, կը սկսիս անդլերէն բարեւ մը ու քանի մը բառեր թխել (ինձի անդլերէնի դասեր կու տար): Անշուշտ հասկցող չ'ըլլար: «Իշխանէն» սորված Փրանսերէն բառերդ դուրս տուր: Չեղա՞ւ, թուրքերէն, քրտերէն հայհոյանքներ անպայման միտքդ մնացած կ'ըլլան:

Անդրանիկ անհամբերութեան նշաններ ցոյց կու տայ. Վահանը զսպել կարելի չէ:

— Ծո՛ւտ, վաղէ՛, դրամը ա՛ն, եկո՛ւր: Փաշան կը սպասէ մինչեւ վերադարձը: Գլուխս դրաւի կը դնեմ, գաւազանը թող վրաս կոտրէ:

— Տէր-Ձաքարեանինը աւելի հաստ է, կ'ըսէ փաշան քմծիծաղով մը, չէզոք դիրք բռնած:

Միւսները կը ճաթին, կը պատուտին:

Ստիպուած կ'երթամ: Ու իրապէս հարիւր ուրբլին ափիս մէջ ձմոթքելով կը վերադառնամ:

Հետեւած եմ, կէտ առ կէտ, Վահանի ցուցմունքներուն, ու ասա նախադահին մօտն եմ: Աւելի ճիշդ ինքն է որ, նախասենեակին մէջ բարձրացուցած խօսքերս լսած, կրկնակի դոները բանալով դըլուխը դուրս կը ցցէ, «ըլտօ, ըլտօ»ի պէս բառերով: Ազջիկները ցոյց կու տան զիս, վանդակորմի մէջ բռնուած իրբեւ անդտանելի նմոյշ:

Գլուխը մէկ քանի դէրօ աստիճան խուզած, ակնոցաւոր, կ'ըր դէմքով համակրելի մէկը: Դուռը կրունկին վրայ կը բանայ զիս ներս հրաւիրող ձեռքի շարժումով:

Համարձակութիւն մը պատած է զիս, ու «բացի հայերէնէ ուրիշ լեզու չեմ խօսիր», պատասխանելով ներս կ'անցնիմ:



— Դրսում, բարձրաձայն կարծեմ ուրիշ լեզուով էիք խօսում, այն էլ խիստ բարկացած քռնով: Մի՞թէ մի անախորժ բան պատահեց ձեզ հետ:

— Ոչի՛նչ: Սակայն մանրամասն կը պատմեմ առաջին այցելութեան մասին:

Դուրս կը թռի, եւ ուսերէն բռներու կձող հեղեղ մըն է որ կը թափէ: Ապա զիս կը կանչէ, նախասրահին մէջ հաւաքուած չորսհինգ աղջիկները ցոյց տալով կը դռչէ:

— Ո՞ր մէկն էր սրանցից, խնդրում եմ ասէք:

— Ո՛չ մին, եւ ոչ միւր. բոլորն ալ, կ'ըսեմ ու կը դռհանամ:

Գոհացում ստացած է նաեւ առաջելութիւնս:

Վերադարձս կ'ըլլայ հելիհէլ: Ափիս մէջ սեղմած մանէթներուն կորուստի վախը չէ պատճառը, այլ Վահանը:

Վահանը, որ հիմա ո՛վ դիտէ ի՛նչ լեզու կը թափէ փաշան սպասցնելու:

Երբ կը հասնիմ շնչասպառ, արդարեւ Անդրանիկ ոտքի վրայ է, պատուհանէն վազքս տեսնողները արդէն աւետիսը սուած են:

— Նա՛, հարիւր ուրբլին, մէկ հատին ալ կէ՛սը քեզի՛ կէ՛սը ինծի:

Տնօրէնը մինչեւ փողոց իջաւ այս մէկ ուրբլին եւս ձեռքս դնելու պնդումով:

«Մեզի ալ բաժին», կը պոռան չորս կողմէ, մինչ փաշան դըլուխ շոյելով, իր դըլուխն երեքցնելով բառ մը չարտասանած կը մեկնի շքախումբով մը, բացակայութեանս բաւական ճոխացած:

Վահան, պաշտօնին կոչմամբ, երբ ստիպուած էր բացակայիլ, երթալիք տեղին անունը տալով, ինծի նախապէս կը հարցնէր թէ այդտեղ բնաւ իրեն ընկերացած էի:

Միմիայն օգտակարութեան ի խնդիր չէր, կը փափաքէր միջավայրին եւ արեւելահայ դեկամպար տարրին ծանօթացնել, որպէսզի զիս մղէ աւելի համարձակ, եւ հետաքրքրուող մը դառնամ:

Գլխաւոր կեդրոններն էին «Մշակ»ի եւ «Հորիզոն»ի խմբագրատուները:

Առաջին անգամ, օրինակ, երբ «Հորիզոն»ի շէնքին, թերթին յատուկ յարկաբաժինը բարձրացանք, զիս հետը առած պտըտցուց բոլոր սենեակները, իւրաքանչիւր տեղւոյն դորձակատարներուն ծանօթացնելով հանդամանքս:

Ի սկզբան, յարաբերութիւնները թէեւ պաղ, սակայն տակաւին թշնամական չէին Դաշնակցութեան գլխաւոր օրգան վարչներուն հետ, եւ այդ օրերուն խմբագրապետն էր Միքայէլ Վարանդեան՝ Աւետիս Աճարոնեանի մերձաւորներէն: Խուլ եւ սուր թշնամութիւնը հետզհետէ պիտի զարգանար:

Իմ դերս էր, ամենէն դառնը: Դիտել, լսել, ամբարել: Ուլուկ:

Ո՞վ էի ես :

Ամենավերջին կարգի համակերպող ոչնչութիւններէն մին :  
Տարբերութիւնը շուրջիններէ՞ս, նոյնքան անգոր, տարիքի բերմամբ  
ինքզինքնուն իրաւունք տուողներ :

Մտածումներս կը պրպտէին յիշատակը մեր փոքրիկ դիւզին՝  
Հագարի նահատակ ուսուցիչ Անդրանիկ Ոսկերիչեանի : Քանզի այժմ,  
հոգիս կը փշաքաղուէր աւելի բուռն ցաւով՝ քան երբ կը լսէի անոր  
պատմելը Հայոց պատմութեան դրուազներէն, անոր խորհրդածու-  
թիւններն ու խրատները՝ երբ կը սաստէր, կը դատապարտէր մեզ  
յօշոտող ներքին պատճառները, երբ ամէն դասի վերջաւորութեան  
մեզի կրկնել կու տար որեւէ առիթով անմխարհութեան արարքներէ  
հետո մնալու երդումը :

Այժմ, բոլոր հարցումներս իրեն կ'ուղղէի : Ո՞ւր էր, ի՞նչպէս  
մեռացային այդ բարի մարդը, ի՞նչ պիտի ըսէր ու ի՞նչ պիտի ըլլար  
իր դիւքը, երբ ան եղած ըլլար վկան՝ տեսածներուս, լսածներուս :

Տարակարծութիւն, հակառակութիւն, թշնամութիւն : Ուրեմն  
այդ բոլորը անխուսափելի էին նաեւ Աւարայրի օրերուն, Անիի ու  
Սիսի պարիսպներէն ներս :

Մեղա՛յ, մեղա՛յ :

Տարիներ շարունակ մանուկ հոգիի անէծքս, ի՞նչ իրաւունքով  
թափեցի անոց գլխուն :

Ու դժբախտ էի :

Արդ, մարդ իրապէս կը զարմանայ թէ ի՞նչպէս սպանդանոց  
տարուող անասուններու պէս, արեւմտահայ առաջնորդութիւնը  
իրենց հեռուոր եղբայրներուն քաղաքավար ընդունելութիւններ ըն-  
ծալէն աւելի դերագոյն շնորհ մը ըրած են, իրենց ճակատագիրը  
յանձնելով, տարբեր միջավայրէ եկած, խակ, արկածախնդիր ու  
ասպարէզ փնտուղներու, որոնք իրենց դործելիք սխալներուն հե-  
տեանքներէն բոլորովին դերծ մնալու առանձնաշնորհը կը վայելէին :

Գերագոյն զոհողութիւններու, ժզոհութիւններու բեռան տակ,  
Անդրանիկի տեսակէտն ու փորձը որքան ալ ուշացած կամ անօդուս  
նկատուի, այսուհանդերձ միշտ է բոլոր ժամանակներու համար,  
իւրաքանչիւր ժողովուրդի նակատագրի տնօրինութեան գալով :

Մարդ իրապէս կը զարմանայ թէ ինչքա՛ն անհար թեթեւա-  
մտութեամբ, բռնութեամբ, մարդիկ տէր կանդնած են իրենց հասո-  
ղութիւններէն դուրս գտնուող դատի մը, եթէ նոյնիսկ հայ պետա-  
կանութիւն ստեղծելու սրբազան հեռակէտն ըլլայ զիրենք առաջնոր-  
դողը :

Մարդ իսկ եւ իսկ կը զարմանայ, թէ ի՞նչպէս բնիկ հայ դան-  
դուածէն դուրս ապրող, մեր երկու հատուածներուն մտաւորականու-  
թիւնը, տգէտ հուշակելով հայրենի հողին կառչած ժողովուրդը,  
յափշտակած է անոր ինքնորոշման իրաւունքը :

Ոչ մէկ ժողովուրդ տգէտ է :

Տգէտ են զայն չճանչցող թերխաչ եւ արկածախնդիր փրկիչները միայն :

Անդրանիկ եւ իր հետեւորդները ի զուր փորձեցին, տարազնեւորով լեցուն մտքերն արթնցնելու, ձեռք առնելու արդար իրաւունք մը, որմէ, աւա՛ղ, հրաժարած էին իրենց նախորդները :

Ի՞նչպէս թէ : Ո՞վ կ'ըլլան բողոքողները, ճայն եւ իրաւունք պահանջողները, երբ համակերպելէ զատ ուրիշ ելք չէ մնացեր, ոչ ալ ապաւէն :

Այս էր իմաստը «Հայաստան»ի դէմ հետզհետէ ուռճացող հակառակութեան :

Այդ մռայլ օրերուն Անդրանիկի դժբախտութիւնը կը բխէր իր հմայքէն : Անոր կ'ուղղուէին բողոք, դժգոհութիւն : Անկէ կը խընդրուէր, կը սպասուէր դարման, եւ շուտափո'յժ :

Կար հետեւաբար թափառական խլեակներու մարմիններուն եւ անոնց հողիններուն ալ կայաններ ստեղծելու ստիպողականութիւնը : Կար մանաւանդ համայն Հայոց մնացեալ ուժերը համադրելու անհրաժեշտութիւնը :

Այդ էր «Հայաստան»ի առաքելութիւնը : Ու Վահան Թոթո՞վեց, այդ բիւրեղ հողիով տղան, քսան եւ քիչ աւելի տարիներու զեղումով կը քարոզէր, կը ճգնէր համոզելու, որ իրեցնց, այսինքն Անդրանիկի առաջնեկ եւ յետին մտածումները կը կրէին ցիրուցան բեկորներու առօրեայ կամ ըստ կարելոյն մօտաւոր վաղուան հոգիները, որ անձնապէս, իր յաւակնութիւնները բանաստեղծի, գրապէտի սահմաններէն անդին չէր անցներ :

Սովորաբար կը քոտ ու բարձրաճայն թոնով վիճող Վահանը, երկու հայ օրաթերթերու խմբագիրներուն մօտ կը դառնար կորովի փաստարկող, համոզիկեր, սկիզբէն իսկ կորսուած դատի պաշտպանողի պատմուճանով :

— Քալէ՛ . . . Այս մարդոց փորը կուշտ է, կոնակնին տաք :

Արդարեւ, Վահան եւ իր գործակիցները կը գտնուէին դժուար դիրքերու մէջ, անշուշտ պատուաբեր, նոյնիսկ նախանձելի՝ սալին ու մուրճին միջեւ :

Գանդատ, դժգոհութիւն հաւաքել, ու անոնց դարմանին վրայ մտածել Անդրանիկի իրաւարարութեամբ : Դէմ դնել, Ազգ. հերոսին ուղղուած անարդար հակառակութիւններուն :

Այս բարեացակամ տղոց պիտի վերագրուէին մէկ կողմի դժգոհներուն կողմէ՝ անմարակուքիւն, ղեկավար օրուան տիրող կարգին կողմէ, նմանապէս դժգոհ, անոնք պիտի դառնային Անդրանիկի «սեւ» հոգիները :

Մինչդեռ ա՛յլ էր իրականութիւնը : Վահան եւ իր ընկերները Անդրանիկի հանդէպ պաշտամունք ունէին, ինչպէս ժողովուրդը,

ինչպէս կ'ըլլան այն բոլոր քսանամեայ երիտասարդները՝ երբ կը հանդիպին անձնուրաց յեղափոխականի մը եւ անշահախնդիր հայրենասէրի մը: Իսկ Անդրանիկին համար անոնք իր ընտանիքն էին, ուստի որդեական ու հայրական սէր մը ներբողուած էր փոխադարձ, ու ես, երբեք անոնց յարաբերութիւններուն մէջ Անդրանիկի վերագրեալ խիստ կամ անհաճոյ բնաւորութեան արտայայտութիւն չըտեսայ:

Ու իրենց կեանքի մնացեալ օրերուն մէջ ալ, ինձ համար հերոսը մնաց հերոս, իսկ միւսները, շատերը մեզմէ հեռացած, ու սակաւաթիւ ողջերը, ոչ մէկ արատ բերին իրենց անձին, Անդրանիկի յիշատակին, Հայու անունին:

Օրերէն մէկը, սովորականին պէս, ըսի տպարան հանդիպիմ: Թոթովենցը հոն էր, կարգ մը սրբազրութիւններու համար: Յանկարծ, ուշացած եմ ըսելով, ծոած գլուխին առջեւէն երկար մազերը ետ նետելով, մատիտը ձգեց, ձեռքս ուրբի մը դնելով դուրս վազեց:

— Ուշ մնացի: Ես վազելով «Հորիզոն» կ'երթամ, ինծի տուփ մը «բարբիրոս» գնէ՞՝ հո՛ն եկուր, միասին կը վերադառնանք:

Ես ի՛նչ գիտնամ որ «բարբիրոս»ները վառելու լուցկի չունի: Երեւնաւքի վրայէն երկու տուփ գլանաւոր բարբիրոս գնելով ետեւէն հասայ:

Խմբադրապետին դուռը զարկի, պատասխան չստացայ: Ներս մտայ. վահանին ձայնը իր հոն ըլլալը մատնած էր: Տուփերը առջեւը դնելով դուրս թոայ: Հազիւ դուռը դոցած էի, ետեւէս լսեցի.

— Է՛հ, լուցկի՞ն:

— Ինծի չըսիր որ լուցկի ալ գնեմ, մէկէ մը վառէ:

Դուրսը, Միմոնը վնասեցի, գործով բացակայ էր: Միջանցքին մէջ կը սպասեմ: Կրկին վահանն է.

— Ծ՛օ!, որո՛ւն հարցուցի, լուցկի չունինք ըսին, նայէ սա սենեակներէն մէկուն մէջ ունեցող մը կա՞յ:

Սկսայ պտըտիլ սենեակները:

— Պարոն, լուցկիի տուփ մը ունի՞ք:

Մէկ-երկու սենեակի մէջ, գլուխնին առաստաղին տնկած քուլա՛յ-քուլա՛յ մուխ դուրս կու տային:

— Լուցկի ունի՞ք:

Ոչ մէկ շարժում, ոչ մէկ պատասխան, կարծես չեն լսեր: Դէմքով, աչքով, կզակով չհասկցողի համը նշաններ:

— Լուցկի ունի՞ք:

Ուրիշ ճար չկայ, քանի մը յարկ վար իջնել, վաղել կրկին հրապարակ:

Յարկի մը սանդուխին կիսուն հանդիպեցայ բարեկամիս: Սիմոն, առաքեալի պէս կը տնկուի՝ երբ իրեն պէտք ունենամ:

— Ո՞ւր ես վազում, ա՛յ տղայ :

— Լուցկի ունի՞ս :

Չպատասխանեց, շարունակելով վերելքը : Անպայման կ'ունենայ ըսելով ետ կը դառնամ : Կը մտնենք իր դրասենեակը, ծրարները կը դնէ սեղանին վրայ, գլխարկը կը կախէ :

— Է՛հ, կրկին բարեւ : Սիմոն ջան, Լուցկի ունի՞ս :

Նորէ՛ն չի պատասխաներ :

— Եղբա՛յր Սիմոն, Լուցկի ունի՞ս :

Պահ մը մտածելէ յետոյ .

— Դա ի՞նչ բան ա՛ :

— Լուցկի՛, է՛լի, Լուցկի՛ :

— Ա՛յ տղայ, Լուցկին ի՞նչ է : Ինչի՞դ է պէտք, դրանով ի՞նչ են անում :

Կ'անցնինք հարեւան դրասենեակը : Երկու հոգի կը շարունակեն մթնոլորտն ամպոտել, սակայն միտքս կը լուսաւորեն :

— Տե՛ս, է՛լի : Ասոնք ինչո՞վ են վառեր իրենց բարբիրոսները :

Ու ամէնքը միաբերան .

— Ա՛ տղայ, ափիչկա չասե՞ս :

Դարակներէն Լուցկիի տուփերը դուրս թռան :



«Հորիզոն»ի խմբագրատան մէջ էր :

Գարուն՝ 1917 :



Ղ. Ա. ՍՈՖԵՆԱՅԻ

ՊԵՏՐՈՍ  
ՄԱՐԶՊԱՆԵԱՆ  
(ՓԻՓ)

Խմբագրեց՝

ՎԱԶԳԵՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Ազգային հերոսները՝

համարձակ են ու վճռական, տոկուն են ու շրջահայեաց, մեծահոգի ու անձնազոհ, ազնի ու շիտակ, հնարամիտ ու հեռատես, խոհեմ ու առաքինի:

«Աւանդապատում»

Պետրոսը (Փիթ), ընկեր ըսուած բանին կատարելութիւնն է:  
Սովորական կեանքի մէջ աշխատող է, ճարպիկ, հնարագետ:  
Իսկ կոյի ատեն արագ, յանդուգն, վուարթ ու պաղարիւն:

ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ



ԿԱՄԱՒՈՐՆԵՐ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ  
Մէջտեղը՝ հրացանը ձեռքին, Պետրոս Մարգպանեան



# ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ՀԱՏՈՐԸ

Պետրոս Մարգարանեան, հայ ժողովուրդին վիճակուած նմանը չտեսնուած Եղեռնին իբրեւ վրէժխնդիր, ու ապա վասն հայրենիքի ազատագրութեան տարիներ մղուած բազում կռիւներուն իր կամաւոր մասնակցութիւնը բերաւ :

Հայրենի իր սեփական տունը աւեր, քոյրերը առեւանգուած, ծնողքը չարչարալից ու վաղաժամ մահ գտած, ինքը պանդուխտ, անհամայն ազգը ըրաւ իր ընտանիքը :

Ժրաջան աշխատող, ճարպիկ, Պետրոս, տուն, վաստակ տրամադրեց իր հարազատներուն եւ իրեն դիմող ամէն կարօտ ազգայինի :

Երբ ոռւս բանակը, իր կողմէ եւ հայ կամաւորներու օժանդակութեամբ գրաւուած հայկական հողերը թշնամիի զինեալ ոյժերուն առջեւ բանալով հեռացաւ, Պետրոս եղաւ զինուորը «Միացեալ եւ Անկախ Հայաստանին», զայն ոգի ի բռին իրականութիւն դարձնելու համար մղուած պայքարին իր Հայու բաժինը բերաւ :

Այդ Հայաստանէն, ինչ որ մնաց, երբ դարձաւ խորհրդային, ան եղաւ, ափսո՞ս, զայն կերտելու յաւակնող «ազգայիններու», սակայն օտարին միմիայն հլու «գործիչներուն» անթիւ զոհերէն մէկը :

Տեսաւ հալածանք, բանտ, զրկանք, աքսոր :

Յաջողեցաւ փախուստ տալ սովիէտական երկրէն :

Մանրամասն զրեց իր կեանքէն, մանաւանդ այդ փախուստէն դրուադներ :

Ինչո՞ւ գրեց :

Կտա՞կ մըն էր :

Ազատ էր՝ երբ գրեց :

Վերագարձաւ :

Անէացաւ :

Ի՞նչ էր այդ խոնարհ ծագումով, բայց ճշմարիտ եւ կտրիճ Հայուն, շատերու կողմէ ունայնութիւն սեպուած յաւակնութիւնը :

Հայրենիքը ազատ տեսնել :

Իր մարմինը անոր ծոցին մէջ :

Փոխան իր յոգնատանջ, թերեւս ջարդ ու փշուր մարմինին, սոյն հատորին օրինակները, իր ոգիէն մասնիկներ պարունակող՝ թող ծածկուին հայ գրադարաններու փոշիին տակ :

Անպայման ա՛յդ էր իր կտակը :

# Ո՞Վ Է ՊԵՏՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ (Փ Ի Թ)

Փիթիմ հետ կուռի երթալ՝

հարսնիք երթալ է:

ՎԱՀԱՆ ՁԵՐԱԶ

Պետրոս Մարզպանեան ծնած է 1890ական թուականներուն, հին Հայաստանի Ծոփաց աշխարհի Չմշկածագ (1) դաւառին Սիւնա կոչուող բացառաբար թրքախառն դիւղերէն միուն մէջ, Չմշկածագ քաղաքէն 2,5 ժամ հեռաւորութեան վրայ, դէպի արեւմուտք, Եփրատ գետի ձախ ափէն քիչ հեռու:

Բնակչութեան գլխաւոր զբաղմունքներն էին, հողագործութիւն եւ այգեմշակութիւն: Գիւղին խաղողը արդարեւ անուանի էր:

«Առատ ծիրանով, անթիւ պտղատու ծառերով, այգիներով, պարտէզներով ու մանաւանդ իր անուշ ջուրով, հիւրասէր՝ նաեւ ասպետական դիւղ մըն էր» կը գրէ, ջարդէն մազապուրծ, տեղւոյն վերջին քահանան՝ Խորէն Քհնյ. Անէմեան:

Սակայն Հայոց հողերը հետզհետէ խլուած էին դրացի կամ ա՛յլ՝ թուրք իշխանաւորներու կողմէ: Արօտավայրէ նոյնպէս գուրկ, ինչպէս շրջանի ոչ-դաշտային բոլոր հայ դիւղերը, բնակչութեան մեծ մասը իր պանդուխտ գաւակներուն ձեռքը կը նայէր:

Նոյն ստիպողականութեամբ է որ, պատանին Պետրոս Մարզպանեան 1912-էն առաջ կը խառնուի արտագաղթի կարաւանի մը, դէպի հեռաւոր Հիւս. Ամերիկա:

Մինչեւ 19-րդ դարու սկիզբները, հազորդակցութեան ճամբաներէ բոլորովին մէկուսի մնացած՝ Չմշկածագ դաւառի հայ դիւղերը, շատ քիչ թուով, այն ալ դոյզն տոկոսով թուրքերով բնակուած էին, ու հայ տարրը տէր էր բարեբեր արտերու, այգիներու եւ հարուստ արօտավայրերու:

Ուստի երբ բռնագրաւումներու շարքը երկնցաւ, հայ դիւղացին, մինչ այդ տքնաջան աշխատող՝ սակայն անկախ հողագործ, ի հարկէ պիտի դժուարանար համակերպիլ, իրմէ խլուած հողերուն վրայ ուրիշի մը, այն ալ բռնատիրոջ հաշտոյն աշխատիլ: Այդ է հոգեբանական պատճառը որ անոնք նախընտրեցին շահագործուիլ հեռաւոր, անծանօթ միջավայրի մարդոց կողմէ ու այդ էր որ ծնունդ տուած էր պանդխտութեան:

---

(1) Չմշկածագ գաւառը կը շրջապատեն՝ հարաւէն Արածանի (Մուրատ չայ) գետը, արեւմուտքէն եւ հիւսիսէն Եփրատ գետը, արեւելքէն՝ Տերսիմի եւ Բիւրակնեան լեռները: Մէջտեղէն կը հոսի Արածանիի մէջ քափուող Թաղար (ըստ ոմանց Ծոփի) գետակը:

Թուրք պետութիւնը հաճոյքով կը դիտէր հայ երիտասարդութեան փախուստը, գոհ էր իր ընդգրկած քաղաքականութենէն, մէկ կողմէ կը հրահրէր յափշտակողները, միւս կողմէ կը դիւրացնէր ու կը քաջալերէր այդ նորօրինակ արտագաղթը:

Հայոց երկիրը կը պարպուէր իր հարագատ տարրէն:

Կարգը ուրեմն Պետրոսինն էր, լքելու «առատ ծիրանով... անուշ ջրով» իր հայրենի գիւղը, հրաժարիլ ծնողական դուրգուրանքէ, բաժնուիլ բոլոր հարագատներէն ու ինքզինքը նետել դէպի անստոյգ կեանք:

Պոչընդոտներով անհամար նման ճամբորդութեան մը դիմադրաւելու համար պատանի Պետրոս իբրեւ պաշար ունի միմիայն առողջ մարմին մը եւ բնատուր ուշիմութիւն:

Հայրենի դպրոցէն ստացած իր ուսումը կը կայանայ հայերէն գրել-կարդալու մէջ, մէկ քանի տարիներ ընթերցանութեան միեւնոյն գրքոյկը համեստ վարժապետի մը խիստ հսկողութեան տակ ծայրէ ի ծայր սերտած՝ դոց գիտէ: Գիւղին խարխուլ Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ փոխ-քարոզասացութեան շնորհիւ աչքը դոց կ'արտասանէ ու կ'երգէ մեր եկեղեցական երկար արարողութիւնները: Թուրքերէն կարդալ-գրել գրեթէ չի գիտեր, ուրիշ լեզու՝ բնաւ:

\*

\*\*

Ամերիկայի մէջ Պետրոս չուտով կը համակերպի դործաւորի նոր վիճակին, չի փախչիլ երկաթի դործարաններուն ծանր եւ տանջալիր պարապմունքէն: Իր նիհար վաստակէն «երկիր» գրկելիք բաժինը մէկ կողմ դրած, յոռետեսութիւն մերժող, խանդավառ, շէնչող բնաւորութեամբ կը դառնայ ընկերներուն եւ չըջապատին սիրելի տղայ:

Ունի պակասներ, զորս պէտք է լրացնէ: Տեղական լեզուն սորվիլ, արհեստի մը տիրանալու կարելիութեան մասին մտածել եւ իր դիտցած հայերէնին ապաւինած ինքնազարգացման ճգնիլ, քանի որ ընտանիքին օգնելու անմիջական պարտադրանքը տակաւին թոյլ չէն տար դործաւորի հանգամանքէն դուրս դալ:

Զուարթ եւ ընկերասէր Պետրոս, արգէն Փիք յորջորջումով կը մասնակցի Նիւ Եորքի եւ Պոստոնի չըջանակներու հայկական կեանքին, անոր շաբաթական դասախօսութիւններուն եւ հայրենակցական հաւաքոյթներուն:

Բարեւաւուած պայմաններու ստեղծումով իր հարագատներուն գիրկը դառնալու կրակը կայ հոգւոյն մէջ, խուլ չէ «գրոց-բրոց»ներու հայրենաբաղձութեան քարոզչութիւններուն: Նոր հեռանկարներ ցոյց կը տրուին, նոյնիսկ յետամնաց Թուրքիոյ մէջ, ինչ որ յեղափոխութեամբ ընկերային նոր կարգուսարք ստեղծելու պայքարի մը լծուած

են մարդիկ : Օրոտան սնունդին համահասար իր հոգին շողկապուրլի կ'ուզէ, անոր նուիրուած իր հայրենակիցներուն :

Անդամ է ուրեմն, եւ ինչքա՛ն դործօն, Հայ Յեղ . Դաշնակցութեան :

Կուսակցական կեանքը զինքը կը ստիպէ ընկերային դործունէութեան՝ ուստի ինքնաշխատութեան, ու խելացի եւ հետաքրքիր Փիք կը դառնայ «Հայրենիք» թերթի շուրջ բուրուած մտաւորակա-նութեան մօտիկ անձ մը :

Սոյն հատորին մէջ իր նամակներուն ոճը եւ լեզուն պահուած են, ցոյց տալու որ ան հեռու է անգրագէտ մը ըլլալէ, հաւատարիմ մնալու համար մանաւանդ իր կատակասէր խտառուածքին : Անոնցմէ ոմանք բնաւ ապացոյցը չեն մաքուր հայերէն գրելու մէջ անոր անվարժ ըլլալուն :

Իր նամակագրութիւնը հայերէն շարագրութիւն գրելուն հետ պէտք չէ չփոթել : Անոնց ուղղագրութիւնը անթերի է, եւ լեցուն են պատկերալից սրամտութիւններով :

\*  
\*\*

Նիւ Եորքի նահանգ, Սիրաքիւզ քաղաքին մէջ մետաղի դործարանի մը մէջ բանուոր է Փիք, երբ առաջին աշխարհամարտի դոյժը կ'ընդունի, արդար շուարումի մատնուած, կսկիծը սրտին :

«Երկրէն» նամակները սկսած են նուազիւ, թիւրքիան եւս 1914-ի Հոկտեմբերին պատերազմիկ կողմ է, ճամբայ ելած միջազգային մարզպաններէն մին՝ հօֆ՝ ժամանելուն յաջորդ օրը ետ է ճամբուած :

Ոչ միայն բարենորոգումներու յոյսերն են յօդս ցնդած, այլ հաւոր վտանգի մը նախազգացումը սկսած է կրծել պանդուխտ մեր հայրենագուրկ երիտասարդութեան էութիւնը :

Ամերիկեան լրագիրները լեցուն են միջազգային կեանքը վերդովող պատերազմի ծաւալումին լուրերովը, սակայն ոչ մէկ այլազգի համայնք այնքան խոր տազնապի մատնուած է՝ ինչքան մերինները, որոնց հեռաւոր սիրելիները արդէն իսկ մարդ գազաններու ճիրաններուն մէջ են, ու անոնց սանձարձակ ոճրածին քմայքին ենթակայ :

Վասն ծայրայեղ խնայողութեան, խմբովին միասին ապրող հայ բանուորները գործի ժամը լրանալուն կ'աճապարեն զիրար գլտնել, ձեռքէ-ձեռք կը խլեն օրուան հայ թերթերը, որոնք իրենց չփոթը աւելի կը հրահրեն :

Փոխանակ հանդիստի, որուն պէտք ունին, մօտակայ քաղաքներուն մէջ աշխատող իրենց բախտակիցներուն այցելութեան կը փութան : Միւրիւրական, սուտ կամ իրաւ, խօսքերու կարօտն ունին :

Ի գո՛ւր :

Կտրուած են «երկրէն» :

Անկէ ստացուած վերջին բոլոր նամակները այնքան յստակ են՝ որքան Ազատութեան Արձանին տեսքը մշուշապատ օրերուն :

Ո՛ւր են այն համարձակ ճառախօսները, որոնք հայկական հաւաքոյթներու մէջ Հայուն պայծառ ապագան կը պատգամէին, վստահ իրենց կազմակերպութեան ուժին :

Այժմ շուարած, ցած ձայնով կը փոփսան, զիրար կը հարցուփորձեն :

Հայ բանուորը կը սպասէ : Կը հալի իր սիրելիներուն, յանկարծ բռնկած, կարօտովը անհուն :

Ի՞նչ կ'անցնի—կը դառնայ հոն, «Էրզրումի Հայոց լեռներուն մէջ» :

Հայոց լեռներէն, ձորերէն, հովիտներէն ազիտորմ ձայներու արձագանդը կը հասնի : Կարմիր են ներկուած հայրենեաց դետերն ու վտակները :

\*  
\*\*

Պետրոս Մարգարանեան կամաւոր է :

Հազիւ քառորդ դարու ծնունդ՝ հայ զիմադրական մարմինները կոչեր են ստացեր :

Կամաւորական շարժումը կը ծաւալի :

Հեռո՛ւն, հո՛ն, ուր իրենց սիրտը կը բարբախէ, կոխ է օրհասական :

Երբ կը հասնի Կովկաս, հայ ժողովուրդին բաժին ինկած արհաւիրքի պատմութիւնները՝ անհաւատալին դերագանցող իրականութիւններ են, ու Փիք գէնքը ձեռքին հայրենեաց հողերուն ազատագրման առեւն ականատես եւ ականջալուր է ի դորձ դրուած ահաւոր ու անպատում սճիրին :

Ամէն քայլափոխին՝ աւեր :

Խոչտանդուած դիակներ՝ ամէնուրեք :

Ռուսական յառաջացող բանակին հետ, Անդրանիկի եւ այլոց կորիւններուն հետ թոքապատառ ան կը ձայնակցի յառա՛ջ, յառա՛ջ պատգամող ազգազակներուն, «կռուի մէջ յանդուզն, զուարթ ու պաղարիւն» Փիք ներկայ է ամէն տեղ, ընկերներուն ցաւերուն ու կարիքներուն նուիրուած, մանաւանդ անոնց լաւատեսութիւն ու կորով ներշնչող :

Քանի կը յառաջանային Հայաստանի սրտին մէջ, Վասպուրահան, Տարօն, Բարձր Հայք, ջարդին ու աւերին պատկերը զարհուրելի կերպարանք կը ստանար :

Ժամ առաջ Հայոց աշխարհը դրաւելու անհամբերութիւնը կը սաստկանար կամաւորներուն հոգւոյն մէջ, մինչ ուս հրամանատար

րութիւնը յաճախակի ու անհասկնալի նահանջի հրամաններ կը տեղար :

Արածանիի ակունքներուն հասած, Պետրոս, վրէժխնդրութեան բովէն հալումաչ, իր արցունքները կը խառնէր անոր ջրերուն, որ դէժ անոնք իրմէ առաջ կարենային հասնիլ իր կարօտած ծննդավայրին փերը :

Հոն ի՞նչ պիտի գտնէր :

Դժուար էր այլեւս իրականութեան վերահասու ըլլալ :

Բայց կը յուսար, այդպէս է մարդ արարածը :

Միայն թէ բանակը առաջ շարժուի, ու իրենք Բիւրակնեան լեռնաշղթան անցնին, ու ձիւնհալքի ջրերուն հետ չուեն դէպի արեւմուտք, միշտ աւելի հեռուները . . . :

\*  
\*\*

Հեռո՞ւ . . . բայց կոտի դաշտէն, աւա՞ղ :

Կամաւորներ, ողջ մնալու մէջ յամառ, ձեռքերնին պարապ, ցիրուցան ըլլալու զինուորական հրամանադիր մը, իբր վարձատրութիւն : Հեռու . . . հեռու իրենց օժանդակութեամբ գրաւուած վայրերէն :

1916-ի գարնան, լուծուած են կամաւորական գունդերը :

Ի՞նչ աւելի խոշոր ապացոյց որ Սուլթան եւ Յար մէկ խօսք ըրած տապանաքար մը պատրաստած են հայ ժողովուրդին համար :

Ռուսական կայսրութիւնը այլեւս ի՞նչ պէտք ունի հայ կամաւորին, որուն ապրելու, այն ալ ազատ, յաւակնութիւններուն պէտք է վերջ մը տալ : Ի՞նչ յանդգնութիւն :

Ի վերջոյ այս ի՞նչ յամառ, մանաւանդ հպարտ ժողովուրդ է հայ կոչուածը :

Այո՛, տակաւին ընկճուած չէ խումբ մը հայ կոչուած քաջերուն հպարտութիւնը, անոնք կը մերժեն մաս կազմել ռուսական բանակին, ազգային հրամանատարութեամբ իրրեւ անկախ գունդեր հասարակաց թշնամիին դէմ կռուելու իրենց որոշումէն ետ չեն կենար :

Ու կը ցրուին :

Աւեր տներ, աւեր սրտեր :

Եղան Սիւլիք-ձաբոն գծով Ամերիկա վերադարձողներ : Պետրոս ինքզինքին տուաւ նոր առաքելութիւն մը : Մտնել գրաւուած շրջաններու խորերը, սպանդէն փախչողներուն մէջ իր հարազատները փնտռել, զանոնք հաւաքել, անոնց կեանքը տանելի դարձնել. եթէ այդ իրեն չյաջողուեցաւ՝ ինքզինքը նուիրել ընդհանուր բարելաւութեան :

Չնչին զոհաբերութիւն գերադոյնին պատրաստակամ մարտիկին համար :

Կարնոյ մէջ, Պետրոս, բախտը կ'ունենայ դտնել իր մօր կողմէ զարմուհիներ, կը տեղեկանայ սեփական ընտանիքին տեղահանութեան :

Կեանքը նոր հրապոյր մը կը ստանայ, անմիջական պարտականութեան դիտակցութիւնը անզգալարբար զինքը կը կերպարանափոխէ, կը վերստանայ կորսնցուցած գուարթութիւնը, ու այցելելով, դիտելով Կարնոյ հանրակացարաններուն մէջ խճողուած հայ կիներն ու մանուկները, նոր հաւատք մը կը ծնի իր մէջ դէպի Հայուն ապագան :

Պէտք է տոկալ... յուսալ... մի՛շտ յուսալ :

Հակառակ Հայոց ազգային քաղաքական ձախոտըութիւններուն՝ հայրենիքին եւ իրեններուն ծառայելու իտէպլը միշտ վառ է Պետրոսին մէջ :

Ամերիկա վերադառնալը բոլորովին անիմաստ է, դասալքութիւն :



Կամաւորներու խումբ մը, 1916, Երևան

Կեցած՝ Ստեփան Տէրտրեան՝ Սեբաստիա, Նապարէթ Զրէիկեան, Յովակիմ Յովակիմեան, Վահան Զերպօ՝ Պոլիս, Մկրտիչ Ասլանեան՝ Մալաթիա, Համբարձում Տոյմանեան՝ Սեբաստիա :

Նստած՝ Մետրոպ Սահակեան՝ Սեբաստիա, Զինագործ Մարգար, Պարուշիկ Մելքումեան (Ռուսահայ), Հրանդ Կէպիրճեան՝ Երզնկա, Երուանդ Փալանճեան-Սուրիկեան՝ Արաբկիր :

Գետինը՝ Յովսէփ Եազըճեան՝ Պոլիս, Պետրոս Մարպպանեան՝ Զմշկածագ, Եղիշէ Քաշունի՝ Արաբկիր, Պետրոս Այճեան՝ Արաբկիր :

Ի՞նչ ունի հոն :

«Երկիր» ղրկած դումարէն յետոյ, ունեցածը ծախսած է «կամաւորի» ճանապարհածախսին :

Կարնոյ մէջ դտաւ աղբականներ, կան ընկերներ : Ետին՝ Արարատը, էջմիածինը : Վաղուան Հայաստանը ինքնավար, կամ ուսուցանողութեան մէկ նահանգը՝ դա՛րձեալ Ամերիկայէն գերբիւլեր է : Ի՞նչ փոյթ թէ տիրող վարչակարգը ազատական չէ, ասոր փոխարէն հայրենիքի կարօտը չունի :

Արգիլուած է միթէ յոյսեր սնուցանել յանուն ապագայի :

Իբրև է ունի անմիջական մտահոգութիւն մը :

Գործ մը ճարել, ապրել ու ապրեցնել :

Արհեստ չունի, չլոյ է դրամադրուիս, պատերազմական վիճակ : Առժամեայ մանր առեւտուրի կարելիութիւն միայն :

Քաղաքներու եւ գիւղերու միջեւ : Աղպապայի գիւղերուն հազուատ հայթայթել՝ քաղաքի ձեռակերտներէն տանիլ, փոխարէնը պանիր, իւղ, կարագ, մեղր եւ ա՛յլ սննդեղէններով վերադառնալ Ալեքսանդրապօլ, Սարըզամիշ, Կարս ու նոյնիսկ մինչեւ Կարին :

Ռուս բանակը կը թուի թէ ամուր ոտը դրած է գրաւեալ տեղերուն վրայ, Թուրքը Երզնկայէն հեռու շարտած : Սարըզամիշը Կարնոյ հետ կապող շողեկառքի նեղ դիժը աւարտած է, Ֆրանսական Տէֆոլիլ ընկերութեան բաց վակոնները օրը անդամ մը երթուղարձի մէջ են :

Պետրոս, օժանդակներ ճարած, օրն ի բուն հետապնդելով իր նոր դործը՝ յաջողելու վրայ է : Պարբերական բացակայութիւններ Կարինէն, ուր զինքը կը քաշէ վերապրող հարազատներուն յաճախ տեսնելու ցանկութիւնը, անոնք այլեւս իր միակ ընտանիքի անդամներն են :

Կռուող բանակներուն միջեւ կնքուած զինադուլի վայելքներուն անձնատուր, հայ կեանքը եւ Պետրոսին առեւտրական դործերը եւս հազիւ կերպարանք են առած՝ երբ . . .

Երբ գլուխնուն գնելիք քար չունեցող փախստական Հայերուն համար բոլոր մասնակի նահանջներէն ամենէն աւելի ազիտաբեր ձայներ կը լսուին :

Դէպի՛ տուն . . . դէ՛պի տո՛ւն :

Ռուս զինուորը, գրաւուած եւ աւեր Արեւմտահայաստանը թուրք եւ գերման ոյժերուն զիմաց բաց ձգած, ամէն ինչ լքելով, տուն կը փախչի :

Ահազանդը կը դոռուտայ հայ մնացորդացի գլխուն :

Փիթ, յաւիտենական կամաւորը, իր հազուագիւտ զինակիցներուն հետ կը նետուի ռազմաճակատ, բռնելու պարագ թողուած գիրքերը :

Քսանի դէմ մէկ, մեծամասնութիւնը գէնքի երես չտեսած տը-



դաքններով, Հայոց ոյժերը, զինադադարը խախտող թուրք բանակին ճակատի յարձակումներուն եւ թիկունքի ճնշումներուն ենթակայ, քայլ առ քայլ կը ստիպուին նահանջել Պիթլիսէն, Երզնկայէն, Բաբերդէն սկսած, Վան, Կարին, Հայ կամաւորներու ալ արիւնովը ողորուած հողերը կրկին կ'անցնին թշնամուն ձեռքը :

Պետրոս Խնուս-Քղի-Ճապաղջուր շրջանն է . Թէէէ Տէրիի անցքը կողպած են իր փոքրաթիւ զինակիցներուն հետ՝ երբ բանակի կեդրոններէն կտրուած կը ստիպուին նահանջել, լեռ ու ձոր կտրելով կը յաջողին ինքզինքնին դանել Կարնոյ հիւսիսը եւ միանալով Մուրատի ձիաւորներուն վերջապահի կռիւներ կը մղեն մինչեւ Սարըղամիշ :

Ամօթալի եւ տխուր օրեր են Պետրոսի եւ նախկին կամաւորներուն համար :

Մեղադրանքներ լեռնակուտակ :

Հազիւ առաջը կ'առնուի միջհայկական կռիւներու :

Անդրկովկասեան Հայաստանն անցած է նոր իշխանութեան մը ներքեւ : Ազգութիւններու անունով ոտս կեդրոնական կառավարութենէն անջատ նոր պետութիւն մը հիմնելու գործին կապուած է Հայ ժողովուրդին ճակատագիրը :

Գահավիժող դէպքերը ծնունդ կու տան Անդրկովկասեան երեք ազգերուն կողմէ անկախութիւն հռչակելու խաղին, մինչ Հայաստանը սուրբ կոխան է թուրք եւ դերման ասպատակներուն :

Էրզրումէն անփառունակ փախուստը, Կարսի ամօթալի վախճանը եկան լայնօրէն ապացուցանելու որ Հայ ժողովուրդի բնազդը կուրցած էր : Ան կորսնցուցած էր ազատ ասլրելու ի խնդիր քաղաքացիական պարտականութեան դիտակցութիւնը :

Հայոց անկախութիւնը երգ էր ու ճառ :

Որեւէ չքմեղանք անընդունելի է, որովհետեւ ամենէն աւելի կորով եւ զոհաբերութիւն ցոյց տուողները եղան մեր ազգին էն աւելի տանջուած տարրերը, չնչին քանակի մը վերածուած :

Այնուհետեւ յաճախ ըսին, գրեցին, ճառեցին՝ իրր թէ հերոսամարտներու մասին, սակայն արդար ըլլալու համար պէտք է նըշել՝ որ թշնամին նոյնպէս յոգնած եւ հիւժած, եւ սակայն չնորհիւ իր զոհաբերութեան ու կարգապահ ոգիին՝ յաջողեցաւ մեր փոքրաթիւ իսկական հերոսներուն ճիգերը չքացնել :

Հայ ժողովուրդի պայքարը աւելի արդիւնաբեր դարձնելու համար միջոցները չէ որ պակասեցան, այլ պատուաւոր դիմադրութիւն ցոյց տալու կամքը, արդիւնք ազգային դաստիարակութեան չղոյութեան, որ մեր յեղափոխական կոչուած շարժումներուն առաջին գործը պէտք է եղած ըլլար :

Նոյնիսկ նկատի ունենալով մեր կարեւոր հատուածին ջարդուփշուր եղած ըլլալը, 1917-1920 տարիները անդտանելի պատեհուութիւն մըն էին որ դարերու ընթացքին միայն կրնան ներկայանալ, մենք պատրաստ չէինք ու խիստ պակասաւոր :

Պետրոս այլ զխտակցութեամբ է որ իր կեանքը զոհելու չէր վարանած, արիստ որ իրեն պէս շատ քիչեր միայն կային:

Այլ պատմական օրերուն հայ ժողովուրդին ո՛չ միայն զաւակները ցրուած էին, այլ մտքերը՝ մեղկ հոգիներու մէջ:

\*\*

Կարինէն եւ զրաւուած միւս հողերէն ամբողջովին քաշուելէ յետոյ, Պրեսթ-Լիթովսքի եւ Պաթումի անուններով յայտնի զինադադար-հաշտութիւններուն բերմամբ, 1914-ի ուս-թրքական սահմաններուն պաշտպանութեան ի խնդիր նոր կարգադրութիւններ եղան: Այլ առիթով Պետրոս, ինչպէս իր երբեմնի զինակիցները, մաս կազմեցին գրեթէ ամբողջովին նախկին կամաւորներէ եւ արեւմտահայերէ կազմուած գունդի մը, որ Հայոց մնացած երկրին աջ թեւը պաշտպանելու համար Անդրանիկի գլխաւորութեամբ զրկուեցաւ Ախալքալաքի շրջանը:

Ախուրեանի եզերքը արդէն հասած, Ալէքսանդրապօլի դիմաց են թուրքերը:

Փոքր դադար մը, նոր պատրաստութիւններ: Անոնք կրկին անակնկալ յարձակողականի անցան, յաջողեցան տասնեակ մը օրեր յետոյ, բանակի կեդրոնը ցրուելէ յետոյ էջմիածնի եւ Երեւանի դռները հասնիլ, ու այս անգամ ալ, «վերջը կը տեսնուիմքի» հաշիւով Հայոց պարտադրեցին դաժան պայմաններով հաշտութիւն մը:

Նորաստեղծ Անկարա Հայաստանի անձնատուութիւնը ամբողջական է:

Մարդ մը սակայն, հին յեղափոխական, ծաղումով խոնարհ, հայդուկներու երբեմնի խմբապետ, ապա զօրավար, իր կոչումին, իր բնազդին ապաւինած Ընդհ. Պատերազմի ձախող դէպքերէն մին նկատելով կովկասեան ճակատի ընկրկումը, տրուած ըլլալով թէ՛ իր, եւ թէ՛ իր բանակայիներուն քաղաքացիական առանձնայատուկ վիճակը, դէմ է ամօթալի դաշնագրի ստորագրուելուն, կը մերժէ զինաթափ ըլլալ, եւ հայ պատասխանատու իշխանութեան աւելորդ տաղտուկ չստեղծելու մտօք, կ'որոշէ իր զինուած ոյժերով երթալ միանալ հարաւէն արշաւող դաշնակից անգլիական բանակին եւ կոխը շարունակել մինչեւ վերջնական հաշուէյարդարի օրը, զոր ան կը զգայ խիստ մօտալուտ:

Պետրոս Մարգարանեան շատոնց կատարած էր իր ընտրութիւնը, կամաւոր արձանագրուած օրէն:

Անդրանիկի անձին հիացող մը, անոր տեսակէտը աւելի քան երբեք իրն ալ է:

Հայկ. Առաձիգ Հարուածող Զօրամասին զինեալ պոստոն է որ կը սկսի Տիլիջաւեհ, քանի մը իրմէն բաժնուել չուզող տասնեակ

Հազար գաղթականներով, որը վերջ պիտի գտնէ մօտ տարի մը յետոյ էջմիածնայ մէջ :

Անդրանիկի յեղափոխական եւ մարտական գործունէութեան փառքը կը կազմէ արդարեւ այս ձեռնարկը, որ եթէ իր ծրարքէն շեղեցաւ, սակայն անոր արդիւնքը եղաւ ա՛լ աւելի օգտակար՝ հայրենայէն :

Այս քայլին շնորհիւ է որ այսօրուան Հայաստանին մաս կը կազմեն Լեռնային Հայաստանի գաւառները, բացի, ափսո՛ս, Ղարաբաղէն :

Անդրանիկ եւ իր հազարհինգհարիւր անձնագոհ տղաքը, թըշնամիի ներխուժումէն զերծ պահեցին հայրենեաց այդ հողերը եւ ջարդէ, հալածանքէ ու ցրուումէ փրկեցին հարիւր հազարաւոր ժողովուրդ :

Եւ Անդրանիկ իրաւ ալ միշտ զէնքը ձեռին ողջունեց Ա. Ընդհ. Պատերազմի յաղթական ելքը :

Այս փառապանծ եւ հայրենանուէր գործին մէջ, ինչպէս իր միւս զինակից ասպետները, Պետրոս Մարգպանեան խիստ պատուաբեր բաժին մը ունի, որուն համար հայ ազգը իրենց երախտապարտ է յաւէտ :

Վերջնական համարուած ընդհանուր յաղթանակէն յետոյ երբ Անդրանիկ Հայաստանի մէջ իր բանակը կը ցրուէ, Պետրոս նոյնպէս ազատ, իրագործուած կը նկատէ իր մեծադոյն երազը, հայրենիքն ազատ է եւ անկախ, հոն է իր տեղը, ունի նոր ակնկալութիւններ :

Պետրոս իր Հայու եւ դաշնակցականի պարտականութիւնը կատարելէ վերջ կը միանայ իր հարազատներուն, որոնք փորձութեան այդ օրերու ընթացքին շարունակած են իրենց որբանուէր գործունէութիւնը, հարիւրաւոր որբեր Ալէքսանդրապօլէն Սանահին փախցնելէ վերջ զանոնք տարած ու յանձնած են Թիֆլիս ու վերստին Հայաստան բերած :

Այդ որբերն են որ իրենց ղեկավար եւ հոգածու առաջնորդներով եղած են առաջին ներգաղթողները :

Պետրոսի անմիջական գործն է ընտանեկան հաւաքը, անոր տնտեսութեան հոգը եւ տեղաւորումը : Գիւղերէն քաղաք առեւտրական իր նախկին գործին կը լծուի, միաժամանակ ինքզինքը դնելով կառավարութեան տրամադրութեան տակ, երկրի ներքին ապահովութեան իրբեւ օժանդակ :

Արդարեւ Անկախ Հայաստանը սպասելով իրեն համար ալ վերջնական յաղթանակի, հատուցման եւ ապահովութեան օրին, կը տուայտի անօրինակ խռընդոտներու մէջ, ներքին եւ արտաքին դաւերու խաղալիք դարձած :



# ՊԵՏՐՈՍԻ ԾՆՆԴԱՎԱՅՐ ՍԻՍՆԱ ԳԻՒՂԻ ԲՈՒՆԻ ԱՔՍՈՐԸ ԵՒ ԶԱՐԴԸ

Սիսնան (1) Չմշկածագ քաղաքէն 2,5 ժամ հեռու, դէպի արեւմուտք, ունէր 35 տուն Հայ եւ 20 տուն Թուրք: Հայերու թիւն էր մօտ 150 անձ:

1915 Յունիս 11-ին, դրացի Կարմրի գիւղէն 16 ոստիկան, Թուրք ենթասպայի մը ղեկավարութեամբ կու գան հաւաքելու Հայոց զէնքերը, ընդամէնը 30 ատրճանակ եւ որսի հրացան:

Երկու օր յետոյ գիւղը կը պաշարուի 28 ոստիկաններով: Թըրքախառն ըլլալով գիւղին յատուկ ոստիկան պարտադրուած չէր, ինչպէս միւս բոլոր զուտ հայաբնակ գիւղերուն պարագան էր, թէ եւ բոլոր շրջականերուն հետ հաղորդակցութիւնները նոյնպէս կտրուած էին:

Պաշարողները, համագիւղացի Թուրքերու աջակցութեամբ, տուրք հաւաքելու պատրուակին տակ հայ տղամարդիկը կանչելով կը բանտարկեն Թուրքի մը ախոռին մէջ: Այդ միջոցին, ժայռերէ ցատկոտելով խոյս տուող երկու պատանիներն անգամ կը հետապնդեն ու կը ձերբակալեն խոշտանգուած վիճակի մէջ: Ասոնց անուններն են՝ Հմայեակ Բարնակեան եւ Ներսէս Մաթէոսեան:

Այրերու հաւաքը լրացուցած, անոնք ձեռնակապ կը տարուին մօտակայ Մամսա գիւղը, միշտ տեղացի եւ ոստիկան Թուրքերու հըսկողութեան տակ:

Ուշ գիշերին, ետ վերադարձող գիւղացի Թուրքերը կը պատմեն բոլորին ալ սպաննուած ըլլալուն մասին, կը նկարագրեն թէ ինչպէս Աւագ Փափագեանը փախչելու փորձ կ'ընէ Եփրատի ջրերուն մէջ նետուելով ու կը սպաննուի տեղատարափ գնդակներով խոցուած: Կը պատմեն ափսոսալով որ հակառակ իրենց ակնկալութեանց, առ ի վարձատրութիւն իրենց բերած աջակցութեան, չեն կրցած տիրանալ սպաննուածներու հազուստ-կօշիկներուն կամ այլեւայլ իրերուն, որոնք իբր թէ քաղաք տարուած են:

Այրերու ջարդին մասնակցած են 30 ոստիկաններ, որոնց միացած են չես գիտեր ուրկէ՛ բուսած 30 կացինաւորներ:

---

(1) Սիսնան, Մամսա գիւղին գրեթէ կից, կէս ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուի Կարմրի գիւղէն, ուր փոխ-ֆաղաֆապետարան կայ, ոստիկանական կազմով (Տե՛ս Բարսէս էջ 208):

Տասներեթ ծանօթ Սիւնացի նահատակներուն մէջ են՝ Կարապետ եւ Աղահան Մարգպանեաներ : Նախապէս զինուոր տարուած ու Պերեթել զիւզին մէջ խողխողուածներու թիւը ութն է՝ որոնց մէջ կը գտնուէր Պաղտասար Մարգպանեան :

Յունիս 14-ին, Կիրակի օր, հսկողութեան տակ առնուած զիւզը կը հասնին Չմշկածագէն եւ Կարմրիէն պաշտօնատարներ, բոլորն ալ զինուած : Ասոնք ամէն հայ տուն կը մտնեն, կը ցուցակազրեն, կին, ազջիկ, երախաներու անունները եւ գոյքերը : Ամէն տան մէջ իրենց արտուր պաշտօնը կատարելէ յետոյ չեն քաշուիր յայտարարել՝ «Վաղը պիտի գաղթէք մէկ տարի ետք վերադառնալու պայմանով : Չեղի հետ վերցուցէք միմիայն քիչ իրեր եւ անհրաժեշտ սնունդ քանի մը օրուան համար, մնացած թանկարժէք գոյքը պիտի դրուին եկեղեցին, զոր մենք պիտի կղպենք ու կնքենք, որպէսզի վերադարձին ստանաք» :

Յունիս 15-ին յայտարարեցին որ ամէն ոք կրնայ իր տունէն կրցածին չափ գոյք առնել ու ներկայանալ Հեթիմեաց թաղը :

Ամէն անկիւն պահակներ դրուած էին եւ տունէն դուրս եկողը անգամ մըն ալ չէր կրնար ետ դառնալ :

Տեսարանը դիտող թուրք զրացի կիներ կը թելազրեն չճանրաբեռնուիլ, քանի որ «Երթալիք տեղերնիդ մէկ օրուան ճամբայ է միայն» : Փողովուրդը սակայն բնագոյով կրցածը կը շարկէ, ընտանի կենդանիներ իսկ կը բեռցնէ, որուն ի տես նոյն թուրք կիները չեն ամչնար պոռալու թէ «Խայիմներ (1), ո՞ւր կը տանիք» :

Փողովրդական կարաւանը ոստիկաններով պաշարուած՝ մութը կոխած կը հասնի Կարմրիի մզկիթին հրապարակը, ուրկէ, տարբեր գիւղերէ եւս հաւաքուածներուն հետ կը քշուի Եփրատի եզերքը :

Գետեզերքը կը մնան կէս շաբաթ, մինչեւ որ մակոյկներով հնարաւոր կ'ըլլայ ամէնքն ալ Եփրատի աջ ափը անցընել :

Այդ պահէն կը սկսի Սիւնայի կարաւանին մաս կազմող 76 հայ ընտանիքներու գողգոթան, Եփրատի հովիտներէն մինչեւ Ռագգա, մինչեւ Տէր-Զօրի արաբական անապատները :

Այս կարաւանին մաս կազմած են, Պետրոսի մայրը, եղբայրն ու երկու քոյրերը, հայրերնին նախապէս սպաննուած :

Պետրոսի քոյրերը առեւանգուելէ յետոյ յաւէտ կ'անյայտանան, մայրը կը մահանայ անպատմելի տանջանքներու մէջ, միմիայն եղբայրը ողջ կը մնայ, իր ապրելու կամքն ու կենսունակութիւնը խախտուած վիճակի մէջ :

(1) Խայիմ = դաւահան, չար :

# ՄՐՏԵՐՈՒ ՏԻՊԱՐ ՄԻՈՒԹԻՒՆ ՍԸ

Փիթին հետ կռուի երթալ  
հարսնիք երթալ է:  
ՎԱՀԱՆ ՉԵՐԱՁ

Պետրոս Մարգարանեան (Փիթ), Վահան Չերազի մտերմութեան մէջ բացառիկ տեղ մը կը զբաւէ:

Այդ մտերմութիւնը, եւ մէկզմէկու ցմահ նուիրումը, կը բացատրուի մանաւանդ Վահանի, որ Փիթ կը կոչէ Ձերի անունով, իսկապէս վեհ հոգիովը: Այն է մարդոց հանդէպ իր վերաբերմունքը ճշգէլ ոչ թէ անոնց ծագումին, զարգացման աստիճանին, նիւթական ոյժին կամ ունեցած դիրքին համաձայն, այլ նկատի ունենալ միմիայն անհատին սեփական արժանիքը եւ բարոյական բարձրութիւնը:

Ահա թէ ի՛նչպէս կ'արտայայտուի Վահան՝ Փիթի հետ տարիներ տեւող շարունակական փորձութիւններէ յետոյ:

«Պետրոսը՝ Փիթ, ընկեր ըստած բանին կատարելութիւնն է: Սովորական կեանքի մէջ աշխատող է, ճարպիկ, հնարագէտ: Իսկ կըռուի ատեն արագ, յանդուգն, զուարթ ու պաղարիւն»:

Արդարեւ, ապագայ երկու անբաժան ընկերները, տարբեր հորիզոններէ, Կովկաս եկած էին կռուելու համար:

Կամաւոր կռիւ: Յաւերժական նուիրում ազգային անկախութեան:

Կռիւ ամենէն անարդ թշնամիի մը դէմ, որ չէր վարանած բարբարոսի իր վաղեմի բնազդը հրահրել, զայն հասցնելու համար ամենազերազոյն աստիճանին, որ է ոչնչացումը, այն ալ տանջանքներու ամենէն անլուր կերպերովը, ամբողջ ժողովուրդի մը, անոր բոլոր անդամներուն՝ օրօրոցէն մինչեւ մահուան դուռը հասած:

Ազգին ծառայելու միակ ճամբան էին ընտրած անոնք:

Այդ ճամբուն վախճանը իբրեւ անհատ՝ իրենց մտահոգութեան առարկան չէր:

Իբրեւ անմիջական վարձատրութիւն իրենց դերագոյն զոհաբերութեան, կը բաղձային կամաւորի այնքան երկարատեւ կեանք միայն, որպէսզի զոհունակութիւնն ունենան առաւելագոյն պատիժը տալու հայ ժողովուրդի անողորմ ջարդարարներուն:

Իսկ եթէ ապրին...

Այն հաւատքն ունին, որ մնացող Հայուն համար, այլեւս վերջ պիտի գտնեն, անցեալ երկար դարերու ստորնացուցիչ պայմանները՝ դերութիւնը, կեղեքումը, ջարդն ու հայրենագուրդ կեանքը:

Անխուսափելի յաղթանակէն ողջ դուրս գալու մասին տարա-

կուսա՞նք, թերեւս : Բայց իրենց պարկեշտ ու մխամիտ էութիւնը, վերապրող ազգակիցներուն համար տարբեր ելք չի տեսներ : Ու քանի որ յօժար են իրենց կեանքը նուիրելու, ինչո՞ւ իբր վարձատրութիւն, չբաղձան որ այնուհետեւ հայրենիքն ըլլայ Ազատ, Հայաստանը Անկախ :

Ճակատէն հեռու, իրենց երազներուն անձնատուր, մահուան հետ խաղալէ առաջ, Պետրոս եւ Վահան, շփումի առաջին օրերէն, շատերու հետ, բաժնած են նման համոզումներ, վստահ որ իրենց ազգային քաղաքական գաղափարները անվիճելի են ամէն Հայու համար :

Երազը արգարեւ, կեանքին լաւագոյն համեմն է :

\*  
\*\*

Պետրոս, Վահան, կամաւորական շարժումին երկրորդ կարեւոր հոսանքին կը պատկանին : Բախտի բերումով երկուքն ալ նշանակուած են մաս կազմելու առաջին գունդին : Բոլորին ընտրութեան բեւեռն է Անդրանիկը, որուն հրամանատարութեան տակ համով է կըռիւրը, մահը հեռաւոր ու ի հարկին քաղցրահամ :

Կարճահասակ, վառվռուն, յոյժ կատակասէր երիտասարդ մըն է Պետրոս, որ սակայն մէկ քանի շարաթներ տեւող զինուորական կրթութեան պահերուն այնքան լուրջ է, կարգապահ, ուշադիր, որքան ինքնիր մէջ ամփոփուած Վահան :

Ամերիկայէն, Ռուսիոյ Արխանկէլ հիւսիսային նաւահանգիստը հասնող խումբին մէջն է Պետրոս, բոլորին ծանօթ, ամենուն կողմէ իր ընկերութիւնը փնտռուած :

Դէպի Հիւս. Ամերիկա պանդխտութիւնը, Թուրքիոյ ներքին գաւառներու հայութեան համար ատենի մը վարակիչ հիւանդութիւնն էր՝ իր զոհերով : Արդիւնք տիրապետող պետութեան հայաջինջ քաղաքականութեան, որ կը կայանար մասնաւորաբար հայ գիւղացին թշուառացնելու մէջ : Անոր աշխատանքի միջոցները դժուարացնել, դայն դարձնել ի վերջոյ հողագուրկ՝ ամէն ապօրինի կերպերը պարտադրելով, այլազան բռնութիւններու շնորհիւ :

Պետրոսին եւս վիճակուած էր լքել իր հայրենի Սիսնա գիւղը, հոն ապրիլ ճգնող իր ծնողաց եւ հարազատներու ծոցէն հեռու աշխատանք փնտռել, իր թափած քրտինքին գնով անոնց կեանքը տանելի դարձնելու երջանկութեամբը միայն գոհանալ :

Մեծ գոհողութիւններով կը կատարուին այդ հեռաւոր ճամբորդութիւնները : Ճանապարհի փորձութիւններն ու զրկանքները կըրող պատանին, պէտք է «հալալ կաթ» ծծած ըլլայ, որ տեղ հասնելէ յետոյ, ողորմելի պայմաններու մէջ յանձն առնէ աղբիլ ու երկաթի դործարաններու մուրին ու ծուխին մէջ երկարատեւ տաժանելի աշ-



խատանք տանիլ, յարատեւ զրկանքի գնով վճարել նախ իր ճանապարհածախսի պարտքերը, ու ապա չմոռնալ պարբերաբար նիւթական առաքումներ հասցնել երկիր :

Պետրոս այդ տիպար պանդուխտ պատանին է, անձնազոհ ու անտրտունջ, միայն թէ իր հարազատները ապրին ու տոկան :

Իսկ այդ պահուն, հայրենիքին այնքան մօտիկ, սիրտը անձն-կութեամբ ճմլուած չի դադրիր հարց տալէ :

Կ'ապրի՞ն անոնք եւ ո՛ւր են :

\*  
\*\*

Վահան, Պետրոսի եւ իր նմաններուն այդ սեփական տառապանքը չունի : Սակայն ինքն ալ բռնած է անոնց ուղին, նոյն դործին համար, նմանօրինակ վախճանի մը յանդելու հաւանականութեան դէմ անտարբեր :

Ապրած էր յարաբերաբար աւելի ազատ մթնոլորտի մէջ, ընտանեկան նպաստաւոր եւ տանելի կեանք մը վայելած : Ծնած Կ. Պօլսոյ մէջ, հոն եւ եւրոպական երկիրներու մէջ ուսում էր ամբարած : Ամէն կարելիութիւնները ունէր ծննդավայրէն ու հայրենիքէն ալ հեռու տէր դառնալու սեփական բարեկեցիկ եւ երջանիկ գիրքի մը :

Սակայն Վահանի մէջ ալ Հայու սիրտը փոթորկած կը բարախէր : Իր մէջ միշտ զգաստ եւ կորովի՝ այլասէր մարդը, ազգասէրն ու հայրենասէրը չէր կրնար հանդուրժել այն ամէն նախատինքները, որ թուրք բարբարոս պետութիւնն ու իր ժողովուրդը, զարեք շարունակ, թափած էր իր սիրական ազգի զաւակներուն գլխուն, ու այժմ, իր օրերուն, նոյն Տաճիկը, Հայուն հպարտութիւնը ընկճելուն մէջ անզօր կը ձեռնարկէր Հայը վերջնականապէս բնաջնջելու անարգ դործը :

Վահան ուրեմն, իր կեանքը ի սպաս կը դնէր, ե՛ւ արատ մը սրբելու նուիրական գաղափարին, իբրեւ վրէժխնդիր զաւակներէն մէկը իր ցեղին, ե՛ւ մանաւանդ վերջնական ազատութեան մը հաստատման առիցուն :

\*  
\*\*

Տարբեր հորիզոններէ, տարբեր միջավայրէ Կովկաս հաւաքուած միաւորներուն մէջ Պետրոս եւ Վահան անչուչտ անծանօթներ են շատ մը պարագաներու բերմամբ :

Պետրոս զաւակն է գիւղացի ընտանիքի մը, իր մտաւոր պաշարը պատանեկութեան օրերուն մէջ կարդալ-գրել սորված ըլլալուն մէջ կը կայանայ, մինչդեռ Վահան որդին է բազմաւեցու եւ եռուն ոտանի մը մէջ ապրող բարեկեցիկ եւ զարգացած ծնողքի մը :

Երկուքն ալ հետաքրքիր, անհամբեր, նոր փորձութիւններու նախօրեակը կ'ապրին :

Իրենց կամաւոր միւս ընկերներուն հետ կը հետեւին, հեւիհեւ տարուած աւօրեայ զինուորական մարզանքներուն, քիչ են իրենց պարապոյ ժամերը, որոնց մեծադոյն մասը յատկացուած է նոր միջավայրին ծանօթանալու գործին՝ նոր երկիր, զինուորական եռուզեռ, հայկական նոր մթնոլորտ մը, լեզուով տարբեր, աւելի ազատ :

Հանգիստի պահերնին լեցնողն է տեղական հայ մամուլին ընթերցումը, մեր ժողովուրդին գլխուն թառած պատուհասին մանրամասնութիւններովը ճոխ: Օրուան տխուր պահը՝ յոգնած պարտասած կամաւորներու աչքին պատկերացող իրենց սիրելի ծնողաց ղէմքերը: Նաեւ քոյր, եղբայր եւ ա՛յլ հարազատներուն ու անտէր, աւեր իրենց գիւղերուն յիշատակները :

Պետրոս ինքն ալ, իր շուրջը, ղէմքերնին ծածկած՝ նոյն օրաթերթերը լափող ընկերներուն ցասման խօսքերուն իբր արձադանդ, ականջալուր յարատեւօրէն թռչող նոյն բառերուն :

Վրէժ, վրէժ, վրէժ . . .

Ու երբ թըջուած աչքերը կը կորսնցնէին զիրերու յատակութիւնը, գլուխնին ցցած մէկիկ-մէկիկ կը պտամէին, վշտերնին դուրս թափելու համար, իրենց ծննդավայրի երանութիւններուն մասին, կը թուէին անունները իրենց ծնողաց, հարազատներուն, որոնք անպայման այդ թերթերուն մէջ նկարագրուած դժբախտներու ցանկին մէջն են :

Մինչդեռ Վահան, իբր թէ անտարբեր, մեկուսի լուռ նստած կը մնար, Պետրոսն էր միշտ որ տղոց վրայ յաճած տխուր մտքերը փարատելու կը փութար :

Նման թախծոտ պահու մը ատենն է որ Պետրոս, առաջին անգամ խօսք կ'ուղղէ Վահանին .

«Ընկե՛ր Գասպարեան (1), դո՞ւք ինչու ձեր սիրտը չէք թեթեւցնէր, չէք խօսիր ձեր ծննդավայրին ու հարազատներուն մասին» :

Ու կը ստանայ հետեւեալ կարճ պատասխանը .

«Ձեր բոլորին հարազատները իմ ալ են, ձեր բոլոր կորուստներն ալ» :

. . . . .

Տիվաճի յաղթանակ :

Հայ եւ ոռու թերթերը կը ներբողեն Անդրաճիկի եւ իր քաղերուսն զճռական դերը այդ փայլուն յաջողութեան ի խնդիր, որ անկիւնադարձն եղաւ ոռուական բանակներուն ձախ թեւի ապագայ ներխուժումին հայկական նահանգներէն ներս :

Այդ ցնծութեան օրերուն կը զուգարկուէր, քանի մը շաբաթներ միայն մարզանք տեսած կամաւորներու նոր խումբին ձախատ մեկնելը, լեցնելու պարպուած շարքերը :

---

(1) Վացան, իբր հօր Գասպարի անունով արձանագրուած էր, «Ձերազ» հանրածանօթ անունը չգործածելու համար :

Արարատեան նահանգէն անդին, անցած էին Արաքսի յորդա-  
հոս եւ Տղմուտի պղտոր ջրերը: Հին Հայաստանի, Հեր եւ Զարեանդ  
նահանգներու ամալութիւններուն մէջէն անցած՝ Վարդանի գերեզ-  
մանին քարակոյտին վրայ իրենց վերջին կարեւոր աղօթքն ու ուխտը  
կատարած:

Նոր Վարդանի մը հովանիին տակն են ուրեմն, անոր հետ ա-  
ռաջին հանդիպումէն ոչ մէկը յուսախար չէ, վառ երազի մը կենդա-  
նի պատկերն է Անդրանիկ: Անոնք չեն կշտանար Տիլմանի կոխին նը-  
կարազրութիւններէն:

Վերջապէս հասած է իրենց համար ալ, եթէ ոչ փառքի, բայց  
արդար վրէժխնդրութեան մը ծարաւը յազեցնելու պահը:

.....

Յառա՛ջ, յառա՛ջ կը գոռան հայ հրամանատարները, ուղղու-  
թիւն եւ գրաւելիք գերքերը ցոյց տրուած են ու հայ այծեամները  
դէպի լեռ կը սուրան:

Նշանակուած կէտին վրայ հասած, Պետրոսի եւ Վահանի աչ-  
քերը զիրար կը գգուեն քաղցր ժպիտով:

Այդպէս շարունակ ամէն գրոհի, յառաջ կը նետուին առանց ե-  
տեւ նայելու, միշտ զիրար կը տեսնեն քով քովի յառաջաւոր գծին  
վրայ: Ու ափսոսեալ, գերքէ գերք, միշտ զիրար կը փնտռեն, միշտ  
յառաջ, դնդակներուն մէջէն սողոսկելով:

«Ո՞վ է, ո՞վ, սա կողքիս սակաւախօս մարդը, կ'ըսէ Պետրոս  
ինքնիրեն, որ մեզմէ բոլորէս առաջ ոտքի վրայ է, որ ցուրտ ու բու-  
քին մերկ մարմինով, ամէնօրեայ լուպանքը կ'առնէ, ինչպէս ուրիշ մը  
«Հայր Մեր»ը պիտի արտասանէր, որ զինուորական կարգապահու-  
թեան եւ աշխատանքներու մէջ տիպար մըն է, որ կուրի պատրաս-  
տութեան հրամանը կ'ընդունի միշտ իրեն յատուկ նոյն ժպիտովը, որ  
առաջինն է գրոհներու ատեն եւ որքա՛ն խիզախ, ու վերջինը դէպի  
հանդիստ փութացող: Եւ ինչե՛ր կը խօսուին իր մասին, իր համբա-  
ւաւոր ընտանիքի մասին, իր զարգացումին, իր գիտցած լեզուներ-  
բուն, իր տեսած երկիրներուն վրայօք»:

Այս է Պետրոսին լուծելիք հանելուկը:

«Ո՞վ է արեօք, սա պզտիկ ճպլտրուն տղան, որ այսքան օ-  
րեր մարդկային սպանդին տեսարաններն ու լուրերը կ'ընդունի ա-  
ռանց դանդաւտ եւ դայրոյթ ցոյց տալու, որ զինուորի իր սարտակա-  
նութիւնները կը կատարէ լրջութեամբ ու խնամքով, որ հողածու է  
ամէն մէկ ընկերոջ հանգէպ, խնամք ունի զինուորի գոյքին եւ պաշա-  
րին հանդէպ, որ իր անվերջ կատակներով ու ըստ պատշաճութեան  
կը խրախուսէ գժպոհ զինուոր մը, վերաւոր ընկեր մը, որ կուրի  
նետուղներուն առաջին շարքին մէջն է անպայման, թեթեւ, զուարթ,  
կարծես հարսնւոր մը ըլլայ ինք, եւ դեռ աւելին՝ մեզ կը վարակէ իր  
խանդովը»:

Այո, այս ալ Վահանի առեղծուածն է :

Եւ այս անգամ Վահանն է, որ հմայուած իր զինակիցի անձո-  
վը՝

— Թոյլ կու տա՞ս որ այսուհետեւ ես ալ «Փիթ» անունով կոչեմ  
քեզ, ինչպէս Ամերիկայէն քեզի ընկերացողները :

— Եթէ փոխադարձաբար թոյլ տաս ինձ քեզ «Վիզ» կամ «Չերի»  
կանչելու, կը պատասխանէ Պետրոս :

Ու յաջորդող մարանչումներու ատեն, դժուարին ու մեծ կո-  
րուստներով յաջող կոխներու վերջաւորութեան մանաւանդ, երբ  
թշնամին պարտուած անհետացած է, վերջին պարտականութիւն մը  
ունին, մէկգմէկու գիրի նետուիլ զոչելով :

— Ո՞ղջ ես, Փի՛թս :

— Ո՞ղջ ես, Վի՛զս :

Արցունք եւ կատակ իրարու խառնած :

Այդպէս պիտի մնան անոնք իրենց մնացեալ կեանքի բովանդակ  
տեւողութեան :

Արդարեւ երկուքն ալ ինքնատիպ իրենց տեսակին մէջ :

\*  
\*\*

Իրենց հասարակաց գիծն է, գերազանցօրէն մարդասէր եւ ազ-  
գանուէր խառնուածք : Անկաշկանդ եւ ազատ ապրելու կիրք՝ մինչեւ  
գերազոյն զոհարերութեան տանող անվեհեր ոգի մը :

\*  
\*\*

Կամաւորական զունդերու ցրտումէն յետոյ, Փիթ-Վիզ, հա-  
կառակ Հայոց դէմ դրուած արգելքին, պիտի յաջողին անցնիլ թըր-  
քահայաստանի գրաւեալ վայրերը :

Փիթ պիտի ընտրէ Կարնոյ շրջանը, հոն ապաստան գտած փախ-  
չողներուն մէջ փնտռելու իր ընտանիքէն ողջ մնացողներ, կամ անոնց-  
մէ լուրեր ստանալու ի խնդիր :

Վիզի ընտանիքը աւելի ծաւալուն է, ամէն վերապրող իր ըն-  
տանիքէն է, ու քանի որ կամաւորի տարիները անցուցած է Վանի,  
Պիթլիսի, Մուշի, Մանազկերտի գաւառները, այս անգամ կ'որոշէ  
չրջագայի գրաւման շրջանի արեւմտեան կէսը, հոն ապաստան գըտ-  
նողներու հաւաքումին եւ հոգածութեան նուիրուելու համար : Իր  
գործունէութեան կեդրոնը Կարինն է, ուր ի վերջոյ կը զրկուին ռազ-  
մաճակատի առաջաւոր կէտերէն հաւաքուած Հայոց բեկորները :

Ազատուածներուն մէջ Պետրոս իր ծնողքը, եղբայրն ու քոյրե-  
րը չի գտներ դժբախտաբար, անոնք բռնի տարուած են դէպի հարաւ,  
Միջագետքի անապատները, սակայն իր հարազատներէն մաս մը Կա-  
րին են հասած, որոնց, իր պաշտօնին բերմամբ եւ պատահաբար պի-  
տի ծանօթանայ Վահան, ու այդպիսով ոչ միայն իրենց զինակիցի

կապը պիտի վերահաստատուի, այլ սկիզբը պիտի դրուի ճշմարիտ եղբայրական յարաբերութեան մը, ազատուածներուն հետ կազմելով մի եւ անբաժան ընտանիք մը :

Արդարեւ Վահան բարձրորէն տպաւորուած է նաեւ այդ ընտանիքին մասին, անոր վերապրող բեկորներէն : Ահա թէ ի՛նչպէս ան կ'արտայայտուի այդ մասին, այդ ընտանիքի անդամուհիներէն միուն պատահած դժբախտութեան մը առիթով :

«Նարդուհին պատահած դժբախտութիւնը հարկաւ լսեցիք : Այդ Մ...ցին ալ հետերնին բերած են : Տղէտ ու անկիրթ մէկն է, եւ նահապետական ու զարդացած գերդաստանի մը մէջ իր մտնելը շատ տգեղ երեւոյթ եղաւ...» :

Պետրոսի եւ իր պարագաներէն ոմանց յայտնութեամբը, հայ գիւղացին Վահանի աչքին կը ներկայանայ աւելի բարձր եւ ազնուական՝ քան երեւակայած էր, ու անգամ մըն ալ ան ինքզինքը երջանիկ կը զգայ, իր յանձն առած զոհողութիւնները վարձատրուած :

Փոխադարձ գնահատանք, սէր եւ անհուն գորով կը ցուցաբերեն Փիթ եւ Վիւ մէկգմէկու հանդէպ : Մէկ է իրենց լտէպը, ինչպէս ազգն ու հայրենիքը, ունին այժմ նոյն ընտանիքը :

Հող չէ թէ տարբեր միջավայրէ սերած են, մէկ են իրենք, եղբայրներ են :

Վահան պիտի չլընայ ապրել առանց Պետրոսի գոյութիւնը իր կողքին զգալու :

Իսկ Վահանի գնդակահարութենէն յետոյ, կեանքը, Պետրոսի համար կորսնցուցած է ամէն հրապոյր :

Անոնց նամակներէն կրկնակի մէջբերումներ աւելորդ չեն, շեշտելու համար այն խոր սրտակցութիւնը, որ բոյն դրած եւ ուռճացած է երկու զինակիցներու մէջ :

Եւ ինչպէս, պատերազմներու ատեն հայ հողի վրայ ոչ մէկ գնդակ իրենց ջսուած չէ, ոչ մէկ քարի կտոր անոնց ոտքը չէ սայթաքած, եւ ոչ մէկ փուչ չէ ծակծկած իրենց մորթը, այնպէս ալ իրենց բարեկամութեան եւ եղբայրութեան մէջ չնչին սկիթուք տեղի չէ ունեցած :

Վահան : — «Փիթը, ընկեր ըսուած բանին կատարելութիւնն է : Սովորական կեանքի մէջ աշխատող է, ճարպիկ, հնարագէտ, իսկ կռիւի ատեն արագ, յանդուգն, զուարթ ու պաղարիւն» :

— «Պետրոսի (Փիթ) հետ կռուի երթալ՝ հարսնիք երթալ է» :

Փիթի մօր մահուան առթիւ՝

— «... Սրտերնիս «նասըր» կապած, քարացած է եւ չենք ազդուելի սուգէ : Մեր միտթարութիւնը այն է, որ երկուքս, կողք կողքի կեցած, անյապ կերպով լուծած ենք

Հաղարաւոր Հայ Հայրիկներու եւ մայրիկներու վրէժը, եւ այդ է Փիթին հետ անցուցած անմոռանալի օրերնուս զերպոյն զոհունակութեան օրերը»:

— «Պետրոսին հետ, ամէն արկածի, կոխի, ճամբորդութեան միջոցին քով քովի եղած ենք, ոչ միայն մարմնով, այլ եւ սրտով ու զազափարով»:

— «... Պետրոս, վստահ եմ որ պիտի պատրաստուի մեկնիլ եւ այդ կողմերը (Հայէպ) դալ իր քոյրերը փնտռելու: ... Եթէ զիւրութիւն զտնեմ, իրեն պիտի ընկերանամ...»:

Պետրոսի եղբորը նամակէն (15 Ապրիլ 1919)՝

— «Ինչպէս կը դուշակես, ես ու Պետրոս եղբայրդ, իբրո՞ւն հետ այնքան կապուած ենք, միտակ անցուցած մեր անպատմելի օրերուն ու արկածներուն բերմունքով, որ եթէ որեւէ առիթով ես ստիպուիմ երկիր երթալ, անպատճառ ան ալ պիտի հետեւի ինծի, եւ փոխադարձաբար»:

Մնամ սիրով՝ եղբորդ եղբայրը՝ Վահան Չերազ»:

Պետրոս: — Հայաստանէն դրուած՝

— «Երեք ամիս, վեց օրը լրացաւ (3 Ապրիլ 1925) Վիզը բանտարկուած է. Թիֆլիզի Չեկան, դեռ եւս բան մը ըսած չունին թէ ի՞նչ է պատճառը: ... Խիստ մեկուսացած կը պահեն: ... Շատ ըսի-ըսաներ եղան, բայց պօշեփեկեան օդիւրէ իմացանք որ իբր դաշնակցական զրականութիւն տարածողի ամբաստանուած է: ... Ի հարկէ դուք ալ կը դարմանաք... Չերի՛ն ո՛ւր, Դաշնակցութի՛ւնը ո՛ւր...»:

— «Վիզը դեռ եւս Թիֆլիզի հիւանդանոցն է, you know: ... Այդ պատճառաւ տրամադրութիւնս տեղը չէ: Զըրկանքը Վիզի...»:

Արտասահմանէն դրուած՝

— «Բայց Չերի՛ի կորուստը անբուժելի է, չեմ մոռցած, չպիտի մոռնամ ու պիտի չներեմ...»:

— «Կեանքիս զազանիքը կարելի է ըսել լուծուեցաւ: Երբ եղբորս թղթերու տրցակի մը մէջէն, Չերի՛ի զրած նամակները վտայ, կարգացի ու կուշտ մը լացի: Այժմ, աւելի քան երբեք, կը հասկնամ որ հոպեկան անդորրութիւնս կորսնցնելուս հիմնական պատճառը Վահանի կո-

րուսան է, ու արտասահմանն ու միջազգայրը, պայմանները՝ շատ երկրորդական դեր կը խաղան եղեր: Ռուսաստան վերադառնալու ցանկութիւնս իր հոգեբանական պատճառը ունի եղեր՝ Ձերին հոն թողած եմ: Կա՛մ կը փոխարինեմ վատերուն, կա՛մ հոն կը թաղուիմ»:

— «1928 Փետրուար 17-ին մեր խումբը 50 հոգի, փոխադրեցին Թիֆլիզ: Տարին Մետեխ. ներս մտայ, սկսայ չորս կողմս նայել եւ կ'ըսէի. Ձերին ո'ւր որ է՝ հիմա Փիթ կը պոռայ... Բայց ձայնը դուրս չելաւ. խորհեցայ ուրիշ բաժանմունք է, կամ Ձեկան է: Խուզարկեցին, հանեցին երրորդ յարկը. հոն կային ծանօթներ, որոնք դիտէին թէ եւ որ Վահանը ընկերս է, բայց չէին դիտեր որ մտերիմներ ենք: Յայտնեցին որ Վահանը ամիս մը առաջ դնդակահարած են: Ուղղակի շանթահարուեցայ, պոռայ, հայհոյել, լալ. տղաները հաւաքուեցան, չզիտէին ի՛նչպէս միտիթարեւ, հանգստացնել»:

Երեւան, 19 Փետրուար 1921.

## ԹԷ ԻՆՉՊԷՍ «ՎՈՆՏԵՑԻՆՔ» ՊՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ ԵՒԱՅԼՆ, ԵՒԱՅԼՆ

Ձեմ դիտեր ի՞նչպէս սկսիմ եւ ինչպէ՛ս վերջացնեմ:

Երէկ, Փետր. 18-ի լուսարացին, Հայաստանի ժողովուրդը՝ ըմբոստութեան պանծալի եւ աննախընթաց ժեստով մը, իր ուսերէն թափ տուաւ եւ ցեխին մէջ ձգեց պօլշեւիկներու բռնակալ ու դարձելի լուծը:

Ձեմ դիտեր ի՞նչպէս պատմեմ, այնքան բարձր, այնքա՛ն դեղեցիկ, այնքա՛ն հրաշալի ու երազային էր կատարուածը:

Երկուքուկէս ամիս է որ այստեղ էին խուլիկանները: Հայաստանի ժողովուրդին կեանքը իր ամէն մանրամասնութիւններուն մէջ, դարձուցած էին անտանելի: Թունաւոր, ժանտահոտ, հեղձուցիչ, անշնչելի մթնոլորտ մը ստեղծած էին: Սարսափի սեւ ամպ մը պատած էր մեր երկինքը, սուրը կախուած էր ամենուն գլխուն, կասկածը ամենուն աչքերուն մէջ էր, ոչ ոք չէր դիտեր թէ երեկոյին տուն պիտի երթա՞յ, առաւօտուն իր անկողինին մէջ պիտի արթննա՞յ:

Երկուքուկէս ամիս է որ աւաղակութիւնը, լրտեսութիւնը, գրպարտութիւնը, հրէշային վայրագութիւնները սանձարձակ դիտեցինք:

Եւ երէկ առաւօտ յանկարծ ուսերնիս մէջ մը թօթուցիներ, ա-  
մէն բան չբացաւ, եւ նորէն ոտքի ելանք, ազատ, անկախ, եւ շուտով  
միացեալ:

Երէկ առաւօտ «Բարլամենտի» վրայէն վար քաշուեցաւ կարմիր  
դրօշը, ու նորէն բարձրացաւ մեր դրօշակը, Պօլիսէն եկած փառաւոր  
եռագոյն մը: (1)

Փետրուար 17-ի երեկոյեան, արդէն քաղաքի շուրջը հասած  
էին շրջանի ապստամբները, Ալազեազի լանջերուն վրայ տեղաւորուած  
Սասունցիք եւ Մշեցիք, Ապարանի, Կոտայքի, Էջմիածնի զիւղացի-  
ները:

Հետեւեալ առաւօտուն արթնցանք հրացանի, զնղացիբի եւ  
թնդանօթի ձայնով, դրոհը սկսած էր եւ երկար չի տեւեց: Երկու ժամ  
չանցած, կոմունիստ հրէջները խուճապային եւ անփառունակ փա-  
խուստի դիմեցին: Քաղաքի երիտասարդութիւնը զինուած դուրս ե-  
կաւ, ներս մտան ազատարար առաջին խումբերը եւ փողոցները զար-  
դարուեցան եռագոյններով: Հայաստան ազատ էր:

Կարծես երազ էր, կարծես մոզական դաւազան մը կը անօրի-  
նէր դէպքերը:

Պօլսեւիկ վոհմակները հազիւ քաղաքէն դուրս ելած էին, երբ  
արդէն զինուած ամբոխը դունդապունդ դիմեց դէպի բերդի բանտը եւ  
Ջրէզու չալկան (արտակարգ դատարան), եւ ազատեց բանտարկուած-  
ները: Բայց արդէն ուշ էր, որովհետեւ շատեր դազանաբար սպան-  
նուած էին պօլսեւիկներու կողմէ:

Համազասպ Օհանջանեանը եւ Բարլամենտի Նախագահ Աւե-  
տիս Սահակեան սպանդէն մազապուրծ փրկուած, ուսամբարձ բերուե-  
ցան Բարլամենտ: Ծովածաւալ բազմութիւն մը, զինուած, դրօշակ-  
ներ բռնած, երգելով ու կեցցէ դոչելով, կը հետեւէր: Նուապախում-  
բը կը նուազէր «Մեր Հայրենիք»ը, որ շատոնց արգիւրուած երգ էր  
մեզ համար: Անգոր եմ նկարագրելու խանդավառութիւնն ու ցնծու-  
թիւնը: Ամէն ոք կը համբուրուէր, արտասուողներուն հաշիւը չկար:  
Օհանջանեանը, մէկ ձեռքը փոքր դրօշ մը բռնած, երախայի նման կը  
պոռար: Յետոյ բարձրացաւ պատշգամ եւ ժողովուրդին խօսեցաւ սա  
բառերով: «Քաղաքացիներ, կը շնորհաւորեմ ձեռք բերուած ազա-  
տութիւնը: Բայց մենք չպէտք է տարուինք ցոյցերով: Պէտք է լինել  
լուրջ եւ զգաստ, որովհետեւ վտանգը դեռ անցած չէ, ու շրջապա-  
տուած ենք թշնամիներով: Պէտք է շուտով կազմակերպուինք, որ-  
պէսզի դիմադրենք նրանց ու պահենք մեր ազատութիւնը: Կը կազ-  
մուի առժամեայ կառավարութիւն: Շուտով կը նշանակուի ընդհ-  
հրամանատար, որուն կը տրամադրուին զինուած ոյժերը: «Կեցցէ  
Անկախ Հայաստան»:

---

(1) Որովհետեւ այդ օրերուն Հայաստանի մէջ կարելի չէր  
նարնջագոյն կերպաս գտնել:



«Մեր Հայրենիքը» կրկին հնչեց, եւ ժողովուրդը գլխաբաց ընկերացաւ նուազին :

Բայց թշնամին դեռ մօտ էր, պէտք էր հետապնդել : Փախուտական հրէշները դիմած էին կայարան, ուր շողիի վրայ պատրաստ կը սպասէին երկու շողեկառք : Զինուած ժողովուրդը ուղղուեցաւ դէպի կայարան : 10-12 տարեկան տղաքներ անգամ, հրացան կամ դաշոյն վերցուցած, միացած էին զինուած ոյժին, որ որոտացող գետի նման կը թաւալէր :

... Հազիւ թէ զինուած դուրս էինք եկեր, երբ մեր փողոցի մօտէն տան մը դրան առջեւ պառաւ մը տեսանք որ հայկական դրօշ կը կարէր, գոյները սխալ-մխալ իրարու մօտ բերելով : Այս մամիկը կանչեց մեզ ու դրօշը... նուիրեց :

Նոր կայարանին մէջ ժողովուրդը համախմբուեցաւ անցնելու համար հին կայարանը : Բայց այդտեղ որոշ վարանում յառաջ եկաւ, այդ անկազմակերպ խումբերուն մէջ : Ամէնքը ղեկավարել կ'ուզէին, ամէն ոք ծրագիր մը կ'առաջարկէր : Ասոր վրայ ես նեղացայ եւ դրօշիկը առած առաջ անցայ, եւ երեք-չորս հոգիով խոյացանք առաջ : Ճիշդ այդ պահուն զնացքները ճամբայ ելան : Առջեւէն կ'երթար զբրահապատը, իսկ երկրորդ զնացքը, որ 20-30 վահոնէ կը բաղկանար, անոր հետեւեցաւ վիթխարի օձի մը նման սողալով սպիտակ դաշտին վրայ :

«Փախնին կը՛, փախնին կը՛, ինչը՛ փախնին կը...» :

Մտանք կայարան : Պահակազօրքը դեռ հինգ րոպէ առաջ «կարմիր բանակ» կոչուած ողորմելի խուժանը, սպիտակ դրօշով մեզ դիմաւորեց, ցոյց տուաւ թողնուած աւարը, հրացան, ռազմամթերք, եւայլն :

Վահոնի մը մէջ երկու ռուս պօլեւիկ զերեցինք, որոնք չէին կրցած մեկնիլ : Մէկ հատը գլխուն դրած էր կոմունիստներու ծանօթ սրածայր գլխարկը : Անմիջապէս վերցուցի, եւ կը պահեմ այս չարագուշակ գլխանոցը՝ իբր այս սեւ ու կարմիր օրերուն յիշատակ :

Ի՞նչ ըսեմ : Վա՛յ անոնց, որոնք Փետրուար 18-ի օրը տեսնելու բախտը չունեցան : 14 Juillet մըն էր իր ամբողջ մանրամասնութեանց մէջ, իր Պասթիլով, ժողովուրդին դերազանց ոգիով :

Քաղաքը հազիւ մաքրագործուած, ժողովուրդը կրկին դիմեց դէպի բերդի բանտը, այս անգամ ալ տարբեր ուխտազնացութեամբ :

Կեդրոնական բանտի նկուղներուն մէջ, զազիր դազանները, խուճապի րոպէներէն կորզուած մի քանի վայրկեան կորզած էին, եւ աննկարագրելի խժժութիւններով սպաննած էին բանտարկեալներուն մէկ մասը, թիւով 37 հոգի :

Հոն դացինք : Արդէն բակն էին հաներ իմբապետ Համազասպին դիակը : Թեւերուն կապը նոր էին քակած, մաւգէրի զնդակը մտած ու մնացած էր բերնին մէջ : Ակոսները կոտորած էին, չրթունքները լայն

պատճառ : Աչքին մէկը կապուեցած եւ ուռած էր, եւ աջ քունքին վըրայ երկու հատ գուլպահեռական ու երկար դաշոյնի հարուածներ կային : Գլխուն ետեւի մասը ջարդուելոյն էր :

Նկուզներուն մէջ, կիսաթաղ թողնուած էին միւս նահատակները, ամբողջովին մերկացուած, եւ ամէնքն ալ կը կրէին ամէնաւաւրաւ վազանու թեան հետքերը : Ոմանք խեղդամահ եղած էին, գըլուխները ջախջախուած, սրովայնները բացուած : Նահատակներուն մէջ էին ի մէջ այլոց ծանօթ Արտուշ Խանը, Սերաստացի Մանուկ Չաւուշը, իմ գումարտակապետս՝ Վարդան Բագուրը (Թէլլալեան), եռանդուն եւ խոստմնարից սպայ մը, հրէշային անյաղ կերպով յօշոտուած էր մարմինը : Գնդակ, կացին, դաշոյն, ջուան, սուխ, ամէն սպանիչ գործիք ազատ ասպարէզ դատած էր հէզ երիտասարդին մարմնին վրայ :

Ժողովուրդին ցատումը սոսկալի էր : Արցունք ու կրակ կը ցատկէր ամենուն աչքերէն :

\*  
\*\*

Փողոցներուն մէջ գուարթութիւն, խնդուք ու ծիծաղ է : Տուներէն՝ նուագ ու երգ կը լսուի : Ծանօթները իրարու աչքի լոյս կուտան՝ «անցած ըլլայ», «ապաշխարանք ըլլայ», «Քրիստոս յարեաւ», «աչքը լոյս» : Կարծես Նոր Տարի կամ Ձատիկ : Փրկուած բանտարկեալները զիրկէ զիրկ կ'անցնին : Մի քանի վայրկեանի հրաշքով ազատուած են, Օհանջանեանը, Քաջազնունին, Ալբալեանը, եւ ուրիշ շատ ու շատեր :

Յնծութիւնը մեծ է նաեւ Թուրքերուն մէջ : Սիրոյ եւ եղբայրութեան երզում կ'ընեն եւ կարծեմ անկեղծ են այս անգամ : Յայտնի Ալի Խանը, որ բանտարկուելէ փրկուեցաւ եւ կեցցէներով անցաւ մեր գինուած խումբերու մէջէն, ուրախութենէն մեռաւ :

Թուրքերը զինուած իրենց թաղին տուները մէկիկ-մէկիկ մանկու դան եւ կը ձերբակալեն իրենց կոմունիստները : Նոյն անվերապահօրէն համակիր տրամադրութիւնը ցոյց տուին նաեւ Քեմալական ներկայացուցիչն ու իր տաճիկ զինուորները :

Հետգհետէ կը սկսին քաղաք մանել զիւղացիներու կամաւոր խումբերը : Ամէն զիւղ իր պօլշեւիկ Կոմիսարը ձերբակալած ու յատուկ պատգամաւորութեամբ կը զրկէ քաղաք : Ծերունի կուռղներ ալ կան, երախտներ ալ : Պօլսեցին թող երեւակայէ Նիազի Պէյի հետ Պօլիս մտած մակեդոնացի կամաւորները :

Արդէն մեծ նմանութիւն կայ այս օրերուն եւ Համիտի գահընկէցութեան պատմական օրերուն միջեւ :

Իսկ մեր ընկերական շրջանակին մէջ, կրնաք երեւակայել թէ ի՞նչ անսանձ ու անզուսպ գեղում պատճառեց այս պանծալի յեղաշրջումը : Իբր տաճիկահայեր եւ խորունկ ազգայնականներ, արդէն մեր

սիրտը բզբտաւած էր մեր մէկ հատիկ հայրենիքին վերջին կոտորակին չբացոււմը տեսնելով: Եւ ահա, բոլոր յոյսերը կը վերադառնան, եռագոյնը նորէն կը փայլի, եւ Հայաստանը նորէն մեծ յոյսերու խոստմնալից ու անսպառ դանձը կը դառնայ:

Բնաւ չէինք յուսահատած: Իմ լաւատեսութիւնս անվերապահ, անսահման ու անսասան էր: Եւ սակայն ճնշուած էինք: Գրեթէ ամէնքս ալ անցանք բռնութեան բովէն: Ես գերի էի Տիլիման, իսկ այստեղ ալ ամենափոքր «հէրիֆ» մը, խուլիկանի քամահանոյքը բաւական էր, որպէսզի ձերբակալուէի, կա՛մ իբր սպայ, կա՛մ իբր տաճկահայ, կա՛մ իբր «ոչ-պօլզեւիկ»: Արդէն ձերբակալուեցան եւ Ա օրով բանտարկուեցան «թիւրիմացութեամբ» Եղնիկը, Գուրգէն եղբայրը, Խաչիկ Պօյաճեանը եւ ուրիշ ընկեր մը: Եղիշէն նոյնպէս ենթակայ էր հետապնդումի, իբր Անդրանիկի եւ Անդլ. Հիմնարկութեան ներկայացուցիչ: Իր պահեստը կնքեցին, դործունէութիւնը խափանեցին, եւ զինքն ալ պիտի ենթարկէին դատաստանի, բայց վերջին օրերը յաջողեցաւ շրջակայ գիւղերէն մէկը ապաստանիլ: Իր օգնականն ալ կարող էր հետապնդուիլ իբր պահեստապետ, Աւետիսը՝ իբր հաշուապահ:

Հիմա այլեւս չկան: Թոա՛ն, եւ Հայաստանը նորէն ազատ է: Ա՛յն Հայաստանը, որ նախ Ղարսի անխառնակ պարխպներուն տակ եւ յետոյ պօլզեւիկներու դաժան օրերուն թաղեց իր բոլոր յոյսերը: Այսօր նորէն ազատ ենք ու անկախ, եւ վաղը պիտի ունենանք կրկին մեր Միացեալ Հայաստանը:

## 21 Փետրուար

Պօլզեւիկներու ձերբակալութիւնները կը շարունակուին: Իրենց որջերէն կը հանեն ու կը բերեն խումբ-խումբ կամ մէկիկ-մէկիկ, եւ մաւզէրի խողովակը վրանին բռնած, կը բերեն կը լեցնեն Բարլամենտի սրահը, որ դեռ քանի մը օր առաջ Շահումեանի անուան նուիրուած բանուորական տուն էր: Այստեղ է նաեւ Վահրամ Զիթունին, Տիգրան Զիթունիին եղբայրը, որ այստեղ «ներանց» ծանօթ պարազուլներէն էր:

Բայց մեծ մասը փախած է զնացքով, եւ 1500-2000ի չափ զինուած ոյժ առած, ապաստանած է Ղամարլուի կողմերը, ուր մի քանի զիւղ գրաւած է, սպանդանոց սարքած, եւ այնտեղ կատաղի յուսահատութեամբ կը դիմադրեն: Օրերնին համբուած է: Հետերնին տարած են հսկայական հարստութիւն: Տոպրակներով թղթադրամ, ոսկի, արծաթ եւ վակոններով կենաս եւ ոստմամթերք:

Այսօր մեծ հանդիսաւորութեամբ կատարուեցաւ 37 նահատակներու յուղարկաւորութիւնը: Ամենէն առաջ կը տանէին Համազասպը (որուն սեւ շրջանակով պատկերը «ճակատամարտ»ը կանխիկ հրատարակած էր 24 Դեկտեմբերի թիւին մէջ), յետոյ միւսները: Ամէն օր

նոր դիալոգներ ու դիալի մասեր կը գտնուին բանտի նկուղներուն մէջէն :

Կօմունիստ ընկեր Կարօ Համտեւեանը սպաննուած է էջմիածնի կռիւներուն , լուրը ստուգման կը կարօտի :

Որդիք Քէմալականի եղբայրը՝ Գալուստը՝ պոլշեւիկեան լըրտեսուծիւն կ'ընէր , եւ կարծեմ նոյնպէս սպաննուած է : Եթէ Որդիքին լուր պիտի տաս , նախ միայն առաջին լուրը տուր , որպէսզի նախապատրաստուի երկրորդը լսելու :

Աղասին այս բոպէխ աշտեղ է : Պօլշեւիկեան առաջին օրերուն , բաւական կասկածելի դիրք բռնած էր , յայտնի լըտես Նաւասարդ Նաւասարդեանի մտերմութեան մէջ լինելով : Հիմա Ամերիկեան Կոմիտէի մէջ Փէլաշէր է : Ամէն օր մեզ մօտ կու գայ ու կ'երթայ եւ ինքզինքը բաւական լաւ կը պահէ , դէթ երեսանց : Այդ տղան շատ պիտի յաջողի , որովհետեւ ամենուն վստահութիւնը եւ համակրութիւնը գրաւելու տարօրինակ ձիրքը ունի : Կարեւոր անձնաւորութեանց պաշտպանեալն է , բաւական դրամ շինած է : Թէ ի՞նչպէս , չենք դիտեր : Նշանուած ալ է :

Հ.Մ.Բ.Մ. ցաւով պիտի լսէ , եթէ դեռ չէ լսած , որ Տօքթ. Գարրիէլ Սուրեանը սպաննուած է Ղարսի դրաման միջոցին :

Իսկ Ջաջուռի կռիւին սպաննուեցաւ մեր սպաներէն Ջօհրայ Բազրեւանդեանը , Սամաթիայի , որուն եղբայրը փաստարան է եւ Ջերի'ի ընկերը եղած է :

«Ճակատամարտ»ի թիւեր ստացանք , որոնց մէկուն մէջէն Տաճատի Պօլիս հասնիլը լսեցինք : Հետեւցուցինք թէ քուրիկներս ու Կէնկիւռեան գերդաստանն ալ հասած կը լինին : Քստոյին մասին մտահոգ ենք , որովհետեւ դաղթի ճանապարհին հիւանդ է եղեր :

«All Right»ի միջոցաւ իսկոյն եւեթ սկսէք գրել Երեւան : Երկար գրեցէք , առանց զանց առնելու եւ ոչ մի տեղեկութիւն ու մանրամասնութիւն :

Օննիկ Եպիմաճեանը նոյնպէս հիմա հասած կը լինի , եւ բաւական բան պատմած :

Այս ամսուն սկիզբները ստացայ Հոկտ. 25-ի նամակդ , որքան ուրախ եղայ գոհ տրամադրութիւնդ լսելով . ի՞նչ յոյսեր էք ունեցեր մեր պատերազմին համար : Մեծ յոյսեր մի՛ ունենաք , բայց բնաւ յոյսերնիդ մի՛ կտրէք :

Օննիկը պատմած կը լինի թէ ի՞նչպէս պօլշեւիկները խափանեցին սկաուտական շարժումը , որովհետեւ «հայրենիքի կործանիչ եւ յետադիմական գաղափարներ կը ներշնչենք եզեր մանուկներուն» եւ թէ «անգլիական իմպէրիալիստական մեթոտներուն կը հետեւինք եզեր» : Իսկ հիմա նորէն շարժումը կը վերսկսի : Բայց ո՛չ Վիզը , ոչ ալ Եգնիկը տրամադիր են գործը ստանձնելու : Հ. Մ. ր թող նոր մարդիկ զրկէ , պայմանաւ որ հոգայ անոնց ապրուստը եւ Հ. Մ. ր պետա-

կանացնելու վնասակար պայմանը չի դնէ : Պետութիւնը ամէն կերպ ջլատեց մեզ, իսկ դալով վարձատրութեան, ամիսը 50-60,000-էն աւելի չի տար, մինչդեռ այստեղ օրական 20,000 պէտք է սպրեւու համար : Հացը արժէ 1500, միսը՝ 4000, շաքարը՝ 40,000, պանիրը՝ 15,000, իւղը՝ 25,000, մեղրը՝ 30,000, չամիչը՝ 10-12,000, մէկ պընակ կերակուր՝ 6000, եւայլն : Բոլորն ալ Փունտի հաշուով :

Ալէք-պօլ թողուած իրերու մասին տեղեկութիւն չունիմ : Թուրքերը քաղաքը կը պարպեն, եւ արդէն միլիցիա կ'ուղարկուի քաղաքը ստանձնելու համար : Այսօր էջոյին նամակ գրեցինք :

Տիկին մայրիկէն նամակ եկաւ Աշխէնին : Տրամադրութիւնը լաւ չէ, ինչպէս միշտ, բայց շուտով կը լինի : Տիգրանուհին ալ այստեղ է :

## 25 Փետրուար

Կառավարութիւնը որ կազմուած է խրատուած չի թուի այս վերջին վեցամեայի անցքերէն : Նորէն կազմեցին «միակամ եւ միաձոյլ» կառավարութիւն մը, որուն մէջ Կարօ Սասունի ներքին գործերը ստանձնած է : Գնա՛ երեւակայէ :

Ղամարլուի կողմը փախած պօլչեւիկները այնտեղ կազմակերպուելով սկսած են նեղել մերոնց : Զօրակոչ կայ, բայց մի'այն կամատոր : Մենք ալ կ'երթանք :

## 2 Մարտ

Անձկութեան օրեր սպրեցանք, թանձրօրէն պատմական, ճախատագրական օրեր, բայց յաղթեցինք : Համառօտ կերպով պատմեմ :

Ղամարլու փախչողները օգտագործելով իրենց ձեռքը դատնող զրահապատ գնացքները, սկսան յառաջանալ դէպի Երեւան, ետ քշելով մեր զինեալ ոյժերը, որոնք զուրկ էին որեւէ կազմակերպութենէ եւ ղեկավարութենէ, եւ որոնք յաճախ ալ խուճապի մատնուեցան : Փետրուար 26-ին, ատելի թշնամին հասաւ Երեւանի շատ մօտ Նորագաւիթ գիւղը : Դրութիւնը լուրջ դարձաւ : Եղիշէ, ես... ղէնքերը հանեցինք ու գնացինք ճակատ, որը Յ վերստ հեռու էր քաղաքէն :

Հրամանատարութիւն, զանազան դիրքերու միջեւ կապ, կռիւլը ղեկավարող մարմին չկար, եւ չարաչար տուժեցինք : Դիրքերը հասանք թէ չէ կռիւլ սկսաւ : Մարդուն մէկը խուճապ յառաջ բերաւ եւ դիրքերը պարպուեցան : Երբ մի տեղ հաւաքուեցանք, ո՛չ խուճապ հանողը գտանք, ոչ ալ խուճապին պատճառը : Դիրքերը նորէն բռնեցինք : Տեսնելով որ այս տրամադրութեամբ զուր է դրական արդիւնք յուսալ, դուրս նետուեցանք խրամներէն կատաղի «հուռոսներով» ու խոյացանք առաջ : Այնքան գինովցած էինք որ միտքերնիս եկածը դուրս կու տայինք «վա՞ր մի պիզէ եան պագան», «բրասա կիպի քէսէրիզ», եւայլն : Մեր ոյժերը հետեւեցան մեզի, եւ թշնամին խուճապով սկսաւ փախնիլ : Տեսնայիք ինչիս փախնէին կը : Մերոնք զրաւե-

ցին Նորագաւիթքը, մինչդեռ մենք ձախ կողմէ պաշարողական շարժում կ'ընէինք 5 հոգիով, երկու պիծա, եւ անծանօթ մը:

Հակայարձակման դիմող օգնական ոյժերու դէմ բաւական երկար դիմադրեցինք, մինչեւ մեր ծունկերը հասնող ձիւնին, ջուրին ու ցեխին մէջ: Յանկարծ տեսանք որ կղզիացած ենք: Կեղրոնն ու աջ թեւը առանց պատնառի ետ կը քաշուին, այնպէս որ թշնամու կեղրոնացեալ կրակին տակ մենք ալ նահանջեցինք: Զուր անցաւ այդ փայլուն խոյանքը եւ մեր հին դիրքերը մտանք նորէն: Յուրտը այնքան սաստիկ էր: Մեր ոյժերը, որոնք արդէն պետ մը չունէին, դիւզին տունները լեցուեցան տաքնալու, ցեխով ու ջուրով ծեփուած հագուստին չորացնելու: Առտուն կանուխ, մերոնք դեռ իրենց դիրքերը չէին բռնած, երբ թշնամին վրայ տուաւ, եւ մերոնք խուճապով թողեցին Եփագաւիթքն ալ: Զինուած ոյժերը բռնեցին քաղաքին անմիջական դիրքերը, իսկ թշնամուն թնդանօթները սկսան ծեծել քաղաքին կայարանին շրջակայ մասերը: Ամբողջ օրը տեղի ունեցաւ ճիշդ մեր աչքերուն տակ, հրաշալի թնդանօթամարտ, որուն մէջ մեր հրետանին յայտնապէս գերազանց ելաւ: Արեւմուտին, Սմբատի գորամասը Ուլուխանլուի կողմէն թշնամիին կոնակը անցաւ: Քաղաքը ծեծող թշնամիները սկսան դէպի ետ կրակել: Բախտը դարձած էր: Առաւօտուն արդէն թշնամի չկար: Խուճապով փախած էին Ղաւարլու:

Փետր. 28-ի օրուան կռիւները զիս այնքան տաժանելիօրէն յոգնեցուցին որ դեռ սրունքներս հազիւ կարող են զիս պահել: Այդպէս ծայրայեղ, լարուած ու խտացեալ խոնջէնք երբեք չեմ ունեցեր: Այսքան տարի է որ կը կռուիմ:

Քաջ Աղասին հերոսացաւ: Զախ սրունքէն վիրաւորուեցաւ Նորագաւիթի կռիւին: Վէրքը շատ թեթեւ է, եւ այսօր գացինք այցելելու:

Վտանգը անցաւ, բայց մեզ կը մտահոգէ Թիֆլիսը, ուրկէ քանի մը օր է լուր չունինք: Եթէ Վրաստան ինչայ եւ մի որեւէ ոյժ չի հասնի մեզի, վա՛յ է եկեր Հայաստանին:

### 3 Մարտ

Նամակս պիտի փակեմ, որովհետեւ վաղը կամ միւս օր Զանկեղուր կը մեկնիմ: Կառավարութիւնը առաքելութիւն մը կը զրկէ, որպէսզի Նժդէիին հետ կապ հաստատենք, պարզենք գրութիւնը եւ բըրօբականտ ընենք որ Զանկեղուր չի լքէ իր դիրքերը, եւ ամուր մնայ իբր պահեստի ոյժ վտանգի պարագային: Ճամբորդութիւնը դժուար է, ձիւնը բռնած է գլխաւոր անցքերը: Բայց ոչինչ:

Հետս եկողներէն մէկն է Խոտորքուրցի Թորգոմը, որ լաւ ծանօթ է ձերոնց, եւ մանաւանդ մեր թանկագին Յակոբ Զաւուշին:

Այդտեղ թող լաւ գիտնան ամէնքը որ պօլշեւիկեան լուծը թափ տուող եւ անցեալ օր ալ Երեւանը փրկողները եղան տաճկահայերը,

մասնաւորաբար Վանեցիները: Տեղացիները առ հասարակ աւելի վերապահ դիրք պահեցին, եւ մի քանի դիւղեր միայն փոքր խումբեր ուղարկեցին: Ելեմուվիայի շրջանի 4-5 հայ դիւղեր շատ յամառութեամբ կռուեցան մերոնց դէմ:

Շատ հաւանական է որ վաղը մեկնինք. այնպէս որ առ այժմ նամակս կը փակեմ, առաջին առթիւ թղթակցութիւնս վերսկսիլ խոստանալով: Զեզ չափէ դուրս կարօտցած եմ, եւ հակառակ այն բանին որ այս անգամ նորէն դոհունակութիւն ունեցայ կռուիլ այս ապերախտ հողին համար, դեռ չեմ կարողացած ներել ձեզմէ բաժնուիլս: Մեծ վտանգներ անցուցի, եւ եթէ ողջ եմ, երեւի ինձ վերապահուած է նորէն սիրականներս համբուրելու:

Առողջութիւնս շատ լաւ է եւ տրամադրութիւնս խիստ բարձր: Երջանիկ եմ անով որ այս յեղաշրջումը վերահաստատեց մեր վարկը: Նոր Պայագիտն ալ պարպուած է, ճամբան բաց, այնտեղէն անցնելուս կ'այցեկեմ դժբախտ Արմաշականներուն:

### 5 Մարտ

Ներփակ կը գրկեմ մի քանի հայկական թղթադրամներ, հիմակ նոր եւ աւելի գեղեցիկ փողեր երեւան ելած են, բայց դեռ քիչ են:

Զանգեզուր երթալու ծրագիրը մէկ կողմ թողուեցաւ: Արդէն Դարալագեագն ալ արստամբած է եւ Զանգեզուրի զօրամասը հասած է Քեշիշէմս: Շուտով կապ կը հաստատուի:

Երեւանի ճակատին վրայ մեր զօրքերը Ղաւմարլու մտած եւ աւելի առաջ ալ անցած են: Պօլշեւիկները հոն կոտորած են սարքեր: Գինիի եւ օղիի կարասները, ցորենի հորերը, գոմերն ու մարաղները լեցուած են դիակներով:

Երեւանի մէջ նորմալ է կեանքը, բայց պարէնի սակաւութիւնը սկսած է մտահոգիչ դառնալ:

### 8 Մարտ

Վաղը չէ միւս օր կը մեկնիմ Ալէք-պօլ: Այնտեղի դրութեանէն կախում ունի որոշումս: Հաւանական է այնտեղէն ճանապարհ որոնեմ դէպի ձեզ:

Այսօր Աշխէմը տեսայ, Տիկնոջ համար նամակ տուաւ, ձեզ բարեւներ ունի:

Կարօ Համտելեանը Վաղարշապատի բանտը կը դռնուի:

Երէկ լաւ լուրեր ստացանք եւ ժողովուրդը ոգեւորուած է: Վրաստանէն լուր չի կար:

### 10 Մարտ

Վարդանանցի օր է, փողոցները ոգեւորութիւն կայ: Նուէրներ կը հաւաքուին վիրաւորուած կռուողներուն օգտին:

Շատեր կը մեկնին: Վաղը ճանապարհ կ'ընկնեմ ես դէպի Ալէք-պօլ:

Շիրակը այսօր գնաց, իսկ ինձ հետ պիտի լինի Հմայեակը: Այս անձերը ծանօթ են Վարդանոյչին:

Այստեղ թանկութիւնը, պարենաւորման տաղնապը ծայրայեղ են եւ դեռ կը լինեն: Մի քանի շաբաթէն, անխուսափելի սով է: Այդ հեռանկարը ահաբեկման մատնած է ժողովուրդին, որ ուր երթալը, ինչ ընելը չի գիտեր:

Աբրահամին հետ (Հալէպ) եթէ կը թղթակցիք, համբոյրներս ուղարկեցէք:

Աղասին ալ կը բարեւէ, սոքին վէրքը բորբոքած է, բայց մը-տահողութիւն չի սրտոճառեր:

Արդեօք «հանում»ներս գրազում գտա՞ն: Երանի թէ որբանոցային աշխատանք մը ճարած լինեն:

Ահա նոր գրամներէն 50 ուրլիանոց մը:

Յաջորդը կը գրեմ Ալէք-սօլէն:

Համբոյրներով Փիբի Փինքօ



ՎԻԳ

ՓԻԹ

ԷՋՕ



Երէկ Թիֆլիզ եկայ մեր Ֆօնտի գործերով, այսօր Պաթում կ'երթամ ու քանի մը օրէն կը վերադառնամ Հայաստան :

Մեր խանութներուն նամակները կ'ուշանան : Ինձ համար ոչինչ, դիտեմ որ առիւծի պէս են, բայց մեր էջօն հակամէտ է կարծելու որ չար բան մը պատահած կ'ըլլայ :

Գալէս ի վեր դրած եմ մի նամակ միայն, ան ալ դեռ Թիֆլիզ կը սպասէ եւ եթէ բախտ ունենաք այս նամակիս հետ կը ստանաք :

Գրելու մէջ առ այժմ շատ ծոյլ եմ, մանաւանդ որ լաւ տրամադրութեան մէջ ալ չեմ վերջերս, թէեւ արտակարգ ոչինչ էլ չէ պատահած որ ազդած ըլլայ վրաս, բայց առ հասարակ չեմ դիտեր ինչօ՛ւ, լաւ չէ :

Զերիմ այս անգամ չկրցաւ գրել, նախորդ գրածներն ալ դեռ կը սպասեն Թիֆլիզ : Հ.Մ.Ը.Մ.ին ըսէ ինչո՞ւ Զերիմ գրածները անհետեւանք թողուցեր են, թող օգնեն, ինչով որ կրնան : Զերիմ տղաքները տեսնողին հիացում կը պատճառեն եւ կ'արժէ որ անոնց համար կարելին ընէ Հ.Մ.Ը.Մ.ը :

Մեր խանութները չդրելուս համար եթէ վշտանան, տար Մեծ կղզի կամ շրջակայ պաղ ջուր ունեցող գիւղ մը, լողանք առնել տուր որ տաքութիւննին անցնի : Ի՞նչ կը մտածեն, կու գա՞ն թէ կը մնան այս ձմեռ : Եթէ դան լաւ կ'ընեն ի հարկէ, առանց սակայն ապագային ինձ պատճառ բռնելու : Զմեռուան համար բաւական պատրաստութիւն տեսած եմ, պակասը վերադարձիս կ'աշխատիմ լրացնել : 15 փութ ցորեն եւ 20 փութի չափ սոսլ ունինք, 2-3 փութ ալ ամերիկեան ալիւր առնելու վրայ եմ : Մաս մը ցորեն ու գարի, դարնան ցանել տալու համար :

Վառելիքի պատրաստութիւն նոյնպէս տեսած եմ : Կը մնայ, իւղ, պանիր եւ ինձ համար մի աղջիկ, այն ալ սաղ ըլլայ Սէսիլը՝ նորէն Ալէք-պօլ եկան եւ նորէն կը սկսիմ յարաբերութիւններս շտկել :

Արդեօք խանութները Երուանդին հաղուսաները կը պահե՞ն : Եթէ այո՛, ապա ուրեմն գալիս խնդրում եմ (ճան ուսուսակ լեզու) :

Շատ հետաքրքիր եմ իմանալ թէ Գօրգօն, Արամը եւ Պաճանաղը ի՞նչպէս վերաբերուած են խանութներուն հետ, եւ ի՞նչ «հիւներ» խաղացած, թող դրուի մանրամասն որ ըստ այնմ դիրքս կարենամ ճշգրէլ անոնց հանդէպ :

Էջօն, Զերին լաւ են եւ սիրով կը բարեւեն :

Պաթում, 5 Հոկտ. 1921.

Սեպտ. 1-ին Թավրիզէն վերադարձայ Երեւան, ու քանի մը օր յետոյ ալ Ալէք-պօլ :

Ամիս մը կ'ըլլայ որ Ալէք-պօլէն նամակ մը գրած եմ՝ ծանօթ վանեցի օրիորդի մը միջոցաւ : Բայց Պօլիս գալու մեծ դժուարու-

Թիւններ կան՝ մինչեւ այսօր օրիորդը Թիֆլիզ է, ու հազիւ 10-15 օրէն կրնայ ճամբայ իյնալ :

Երկու օր է Բաքում եմ : Մեր Փօնտի գործերով : Շուտով լիկ-վիտացիայի կ'ենթարկենք մեր գործը ու անկէ յետոյ երեւի դիւղացի դառնալու ցանկութեանն անսպով դարնան ցանքս ընել կը սկսիմ :

Դրութիւնը առ այժմ լաւ է : Պօլչեւիկեան իշխանութիւնը կարծուածին չափ անտանելի չէ, եթէ այսպէս շարունակեն իրենց վերաբերմունքը :

Թուրքերու մասին որոշ ոչինչ չեմ կարող ասել, Ալէք-պօլէն 7-10 վերստ հեռու են այժմ, բայց քանի խորհրդային է Հայաստանը՝ կարելի է ըսել Թուրքերէն վտանգ մը չի պար, մանաւանդ յունական յաջողութիւններէն յետոյ :

Էջօն ու Չերին շատ լաւ են, նոյնպէս Տալէն ու իր լաճը, որ վազդոյի յաջորդն է ուղղակի :

Սանուսներ, ձեր դալու մասին գրած եմ առաջին նամակով ու յայտնած որ ես դալու բնաւ մտադիր չեմ եւ ոչ ալ Էջոյին կ'ուղարկեմ : Եթէ դուք գաք՝ մեր աչքի, քթի, բերնի, գլխի եւ ձեռքի մասներու վրայ տեղ ունիք, միայն յառաջիկային ըսի-ըսուներ չլսեմ, որ պատճառը ես եղայ, եւ այլն : Սանում վարդանոյշը նոր չքմեղանքներ թող չընէ, ինքը որոշէ, իսկ Թադուին խօսք չ'իյնար, ան աղջիկ է ու ամէն ինչ կ'սխալուի է ինձմէն, հոս բերել, թէ Ամերիկա դրիւել՝ պըսակել, վերջապէս փեսացու գտնել, ի հարկէ եթէ կ'ուզէ :

Եթէ գաք, երեւի Չերիի հայրիկը հետեւնիդ կը բերէք : Այս մասին Ալէք-պօլ երբ վերադառնամ, Չերիի հետ դուստակ ու խիստ դաղտնի մեր մարմինի բոլոր անդամներով միասին «կօնֆերանս» մը կ'ունենանք եւ մեր որոշումը կ'իմացնենք : Եթէ կարող էք մի կերպ ապրիլ մինչեւ դարուն, դուզէ նկատելի փոփոխութիւններ կ'ըլլան հոս, ու վերջնական որոշում մը կու տանք թէ ո՛ւր պէտք է հաստատուինք :

Եթէ Եղիշը Պօլիս դայ շուտով, որոշ կարգադրութիւն մը կ'ընեմ :

Չերին դժգոհ է որ Հ.Մ.Բ.Մ.ը իր դիմումները աննկատ կը թողու :

Պաթում, 24 Հոկտ. 1921.

Միրելիք՝ եւ ազնիւ, համեստ, պարկեշտ խանութներ

Նախորդ գրածներս երեւի ստացած էք :

Չերիները կ'ուշանան : Հասկնալի է որ վ'ն սիրունիկ, խուշիկ, պուպուշիկ ու թումպուլիկ օրիորդներէն, իսկ դուք «սօյլու պօյլու» չէկ, աղուորիկ պարոններէն աչք բանալ չէք կրնար ու հետեւաբար հնարաւորութիւն չէք ունենար գրելու :

Դէմ չեմ, պալաներս, միայն մի՛ մոռանաք եւ մեզ, մանաւանդ

անխելք, անկուտ Պետոյին եւ բաժին հանեցէք աշխարհային, լոխու-  
մի չափ կակուղ ու քաղցր վայելքներէն :

Պաթումէն գրած նամակէս յետոյ Հայաստան դացի ու եկայ :  
Էջօն, Ձերին, Տալէն ու ձաղուկը լաւ են, կը դանդատին որ նամակ  
չէք գրեր :

Ես ի հարկին Էջոյին կ'աշխատիմ համոզել որ մեր «պաճի»ները  
անպայման պօսակուած կ'ըլլան ու մեզ մոռացած :

Յուսով եմ որ յանձնարարութեանս համաձայն չամատանս  
դրկած կ'ըլլաք : Արամին ըսելով նոյնիսկ վաղը նաւ մը պիտի գայ ու  
անոր հետ ալ եկած կ'ըլլայ :

Մեր գործերը արդէն «լիկուխտացի»-ի ենթարկեցինք : Շու-  
տով Եղիշը այդտեղով կ'անցնի Անգլիա : Իմ մասին անկէ կը ստա-  
նաք մանրամասն տեղեկութիւններ, գուցէ նամակ ալ տամ, թէեւ  
չատ կարիք ալ չկայ :

Այս անգամ, այստեղ Արամին յանձնեցի 30 տաճկ . թղթադրամ,  
այդտեղ կը ստանաք Յակոբէն :

Գրեցէք, Ի՞նչպէս կ'ապրիք, Ի՞նչ էք մտադիր ընելու, որպէս-  
զի ես ալ իմ գործերը ըստ այնմ դասաւորեմ :

Շուտով նշանուելու վրայ եմ : Յարմար թեկնածու մը աչքի  
առաջ ունին ընկերներս : Յաջորդ անգամ միասին նկարուած կ'ուղար-  
կեմ : Կարմիր հուլունք պատրաստեցէք վրան կապելու՝ «աչիչ» չըլ-  
լայ : Ու պատրաստուեցէք հարսանիք գալու :

Ընկեր Աբոյին նամակ կը գրէ՞ք : Ի՞նչ տեղեկութիւն ունիք :  
Վանեցի աղջիկ մը ձարած եմ իրեն :

Ամերիկայէն Ի՞նչ տեղեկութիւն : Նարգուն աղջիկ ունեցաւ, թէ  
տղայ : Քեռկինին բարեւ գրեցէք՝ իմացուցէք որ դեռ ողջ եմ :

Վարդանոյշ, Աշոտ, Չապէլ եւ միւսները ինչպէ՞ս են, տեղե-  
կութիւն ունի՞ք : Բանձար մօրքուրին ալ բարեւ գրեցէք :

Արբահամ աղան եթէ գայ կը կարգեմ : Թագու «պաճին» թող  
չի նեղանայ՝ իր մասին որեւէ ակնարկութիւն մը չընելուս, հոգ թող  
չընէ, միշտ նկատի ունիմ յարմար փեսացու մը : Նոյնպէս Վարդոյին՝  
եթէ ցանկանում է...

1922էն առաջ՝ Պօլիս զրկուած .

Ազնիւ, համե'ստ, պարկե'շտ, խոհեմ (1)

W. X. Y. Z.

Ոչ յաճախ, բայց երբեմն առիթ կ'ունենամ նամակներդ ստա-  
նալու :

(1) Պետրոս, կամ Փիք, ամենէն դժնդակ պայմաններուն  
մէջ անգամ, իր շուրջիներուն հետ ունեցած յարաբերութիւններուն  
ստեն եղած է միշտ ուրախ եւ զուարճարան :

Էջօն լաւ է: Անցեալ շաբթու երկու օր հիւանդացաւ: Ըսի երկար ճամբորդութիւն մը կ'ընէ առանց ձեզ տեսնելու: Բայց ոչինչ, մասձ էր, կոնակը տաքցնող չի կայ, անկէջ է երեւի: Եթէ ձմեռը չելած Ձերիին հայրը գայ, միտք ունիմ էջոյին հետ պսակել! Դուք ի՞նչ կ'ըսէք:

Իմ մասին մի՛ հարցնէք, գիշերները քանի մը ժամ միայն կը քնանամ, միւս ժամանակը արթուն եմ, այս ու այն կողմ դառնալով կողերս կը ծակին: Ձեմ գիտեր մինչեւ ե՞րբ առանց կնիկի պիտի մընամ: Անտէրը «խյամաթ» եղաւ կարծես գլխուս:

Ամիս մըն է Կարօմ մեզ մօտ է: Կը ցաւակցինք, կ'այրինք, մուխերնիս չ'ելլար: Հնարք մըն ալ չենք կրնար գտնել, դրութիւննիս փոխելու: Կ'ըսեմ «օրթախ» կնիկ մը առնենք՝ չի համաձայնիր, հակառակ անոր որ «սիւննի» պօլշեւիկ է:

Երբեմն Կազաչի-պօսթ կամ Սեւերսքի (Արփա-Ձայի մօտ) կ'երթանք, անհամար աղջիկներ կան, բայց «ողորմած հոգու» մը չենք հանդիպիր: Անտէր մնայ ասանկ ապրուստը, անա՛մ: Մարդ օր ձմեռը տաքուկ-տաքուկ չի գրկէ պսակի, էլ համն ի՞նչ է ապրելուն:

Ամէն երեկոյ էջոյին հետ կը կոուինք ես ու Կարօմ՝ բայց անոր ձեռքէն ալ չի դար մէյ-մէկ աղջիկ ճարել: Ախպար, հիմակ մէկ-մէկ հատ թող գտնուի, մնայուն չ'ըլլայ, ի՞նչ կայ որ:

Հիմակ պիտի ըսէք, ամէն մարդ «պապըլօն» կու լայ: Երեւի դուք ալ ձերին «տարտ»ը ունիք, բայց ես ի՞նչ ընեմ: Միշտ ըսած եմ եթէ կ'ուզէք, կարգեմ՝ բայց դուք նազ կ'ընէք: (Այս նամակս Ղազիկին կարդալու չէք, ան «չօճուխ» է, աչքը կը բացուի: «Ձահլէնիտ» կը տանէ, ինձ կարգեցէք ըսելով): Պօյերնէդ պօսէրնէդ ամչցէք: Վարսօն եւ Արուսը նշանուեցան, իսկ դուք, իսկ մե՞նք: Այսօր Երեքշաբթի է, Շարաթ օր Վարսոյին հարսնիքին փառաւոր քէյֆ պիտի ընեմ եւ գիտէ՛ք, Սէսիլիս հետ: Շան աղջիկը երթալով կը սիրուննայ, մարդ գլուխը կտրէ վերցնէ՝ մնացածը նետէ: Տիկին Հեղինէն (անոր քով գնացինք Կարոյին հետ) ձեզ հարցուց: Բարեւ մը չի գրելնուդ կը ցաւի:

Արուսի հարսնիքն ալ դուք կ'ընէք երեւի, նշանուած է եւ շուտով դուցէ Պօլիս գան ու հոտ պսակուին:

Է՛հ, այսպէս՝ կ'այրինք, բայց վա՛յ էս ապրելուն: Եթէ դարնան նոր դէպքեր չի պատահին կու դաք: Իսկ եթէ ոչ մէյ մէկ լաւ նըշանած կը ճարէք, բայց Ամերիկայի մէջ: Աշխատեցէք ընտրել այնպիսիներու՝ որոնց՝ դրամը շատ ու խելքը քիչ ըլլայ, որ կարողանանք Ղազիկի հետ կովի պէս կթել: Ան Եւրոպա կ'երթայ մասնագիտութիւն սորվելու. իսկ ես իմ ուզած անուշիկ օրիորդներու հետ աշխարհիկ կեանք մը կը վարեմ:

Այսպէս ուրեմն աղջիկներս՝ տուած խորհուրդիս համաձայն շարժուեցէք:

Տալէն իր ձագին հետ շատ լաւ է : Ակօն ի՞նչ կը խորհի , դեռ երկար պիտի մնա՞յ հոս , թող շուտով տանելու ճարը նայի :

Գուցէ ես շուտով անորոշ ուղղութեամբ մը ճամբորդեմ : Էջոյին ապրուստը մի կերպ կ'ապահովեմ , ու մէկուն կը յանձնարարեմ : Իսկ Տալէն ի՞նչ պիտի ընեմ : Ախպէր խոմ «էթիմ պապասի» չի դարձայ ես : Ո՞ր մէկուն նայիմ : Աս Աննան է , սա Չմբուլթն է , Կարապետ էֆէնտի , Մաքրու պաճի , Թորչիի մայրը , Սօչիկ օղլի : Ի՞նչ գիտնամ պէ՛ : Հաշիւը կա՞յ :

«Ինիսաֆ տէտինին եարըսի» :

Չերին լաւ է , բայց անհասկնալի տկարութիւն մը ունի , որ գինքը կը հիւժէ : Նոյնպէս մալարիա ունի , կը նեղուի կոր : Երբեմն տըղաքն ալ անհամութիւններ կ'ընեն , անկից ալ է :

Հա , Կարօն , շուտով Պօլիս պիտի գայ . հետը կը գրեմ , ան կը պատմէ ամէն ինչ :

Հայրիկը եթէ եկաւ՝ հետը կը դրկէք : Պլաշքս , օճիֆներս (չապկի) , մէկ շապիկ , օճիֆի գնդասեղներ՝ ծայրերը կ'լոր : Սափրուելու օֆառ եթէ մնացած է : Յովակիմի նկարները : Երուանդին շորերը ու վատաճիւն , ուրիշ ոչինչ : Կ'ուղարկէք միմիայն ուղածներս՝ ո՛չ աւելին : Եղած շոր կամ կօշիկ որը կը յարմարի թող Ղազիկը գործածէ որպէս իրը : Ես շատ ունիմ հոս : Հասկցա՞ք ձագուկներս :

Բարեւներս Ակոյին , Ապլային , գող Ֆարոյին , Կորիւնին համբոյրներ : Բարեւներ մօրքուրին եւ ծանօթ հայրենակիցներուն :

Փիթ , Փիմ , Ֆիմթ , Փիմթօ-Պետօ :

Լեհիմակամ , 3 Ապրիլ 1925 .

Սիրելի Եղիչ ,

Գուցէ անակնկալի դաս նամակս առնելով ու «քիւֆուրիդ» տողալը բանաս : Չէ՞ որ «արխային» ես , հանգիստ ես , ազատ , Սաթիկ ունիս , պէպէք ունիս :

Շիտակը եթէ ոչ քեզ , դէթ Սաթիկի համար կ'ուզէի քիչ մը կատակարանել , որ կուշտ մը խնդաս , բայց տրամադրութիւն բնաւ չի կայ : Եթէ գիտնամ շատ «մաքս» չեն վերցնէր՝ այդ բանէն պիտի ուզէի մի քիչ :

Երեք ամիս , վեց օրը լրացաւ որ Վահանը բանտարկուած է Թիֆլիզի Չեքան , դեռ եւս բան մը ըսած չունին թէ ի՞նչ է պատճառը , եւ ոչ ալ գիտենք քննութիւններու արդիւնքը : Որտա մեկուսացած կը պահեն , ուրիշ երկու Ամերկումի պաշտօնեաներու հետ , որոնք միաժամանակ բանտարկուած են :

Շատ մը ըսի-ըսաներ եղան , բայց պօլչեւիկեան աղբիւրէ իմացանք որ իբր դաշնակցական գրականութիւն տարածողի ամբաստանուած է :

Ի հարկէ ինձ հետ դուք ալ պիտի զարմանաք անհեթեթ զրպարտութեան վրայ : Ձերին ո՛ւր , Դաշնակցութիւնը ո՛ւր : Խօսք չի կայ , որ բոլորն ալ առհասարակ դիտեն որ նա միշտ ալ հակադաշնակցական եղած է , բայց որ միտքերնին դրած են ժամանակ մը պահել , կը պահեն , է՛լի :

Վերջին նամակը որ եկաւ 15 օրուան բանտարկուած էր , նամակը Վարդանոյշը բացաւ (այժմ Տիկին Ձերազ) , ես ալ կարդացի , ուղեցի անմիջապէս պատասխանել , բայց Թիֆլիզ գնացի Վահանի համար , այս ու այն կողմ եւ մոռացայ :

Բանտարկուելէն ճիշդ 15 օր առաջ էջմիածին գնացինք ու հոն պսակեցինք , այն ալ այսպէս եղաւ : Լաւ կ'ըլլայ Ձերի՛ր ծանօթ տղոց դրեա այս մասին եւ յայտնես :

You know!

15 օր առաջ ես ալ 7 օր պառկեցայ հոս , շատ յիմար բանի մը համար :

Լաւ եմ , բայց շատ դժգոհ , բնաւ տանելի չէ որեւէ դործ ընել , հեղձեալէ անհնարին կը դառնայ : Այս վերջին 8 ամսուայ մէջ 100 ոսկի կորուստ ունեցած եմ : Որքան միանուազ դրամ շահելու պատեհութիւնը շատ ըլլայ , նոյնքան եւ աւելի կորսնցնելը անխուսափելի :

Մտադրած եմ մինչեւ Հապեշիստան չուել , Վահանի աղատուելուն կը սպասեմ , բացի այդ էջօն ձեռքս-տաքս կապած է , բայց ամէն գնով որոշած եմ երթալ :

Իմացանք որ Վարդանեանին տեղ դու պիտի դաս եղեր , լաւ որ չես եկած , քանի դեռ ամերիկեան քաղաքացի չես . բնաւ մի՛ մտածեր Ամերիկայէն դուրս դալ , միակ յանձնարարութիւնս է : Քաղաքացի եղա՞ր , կ'արժէ պտոյտ մը ընել այս կողմերը :

Լաւ եմ , բայց հասակս փոխանակ երկննայու կարճըցեր է , դիրքած եմ շատ , մազերս սկսած է ճերմկիլ , քանի մը հատ ալ մարտօքիս մէջ կայ : Աղջիկներս ըսես լաւ են , է՛ր փառք Աստուծոյ , կա՛ն , է՛լի : Դարսեցին հոս է , բայց նախկինը չէ մնացած : Աւետը Երեւան է , պետական դործի մէջ : Շմօն ալ տեսայ , լաւ են : Զաւէնը , Տիկինը , հարսնցուս եւ հարսը շատ լաւ են , քանի մը օր առաջ Երեւան էի :

Արաքսին հոս է , Ամերիկոմի մէջ ուսուցչուհի :

Ներփակ կը ստանաս նկարս : Տիկին Վարդանոյշ Ձերազը կը բարեւէ ձեզ :

Պիճ Պիճը (Պաճօն) , Անպաճը , քովս է , լաւ է , բայց քանի մը ամիս է որ անդործ է , վա՛յ անամ պապայում Պաճօ վա՛յ :

Բենօն ըրաւ-չըրաւ Թավրիզի աղջկան հետ նշանուեցաւ , 5-6 ամիս ալ ան պառկեցաւ . . . բաւական վնասով , այժմ լաւ է , քանի մը օրէն Խաչիկին քով կ'երթայ :

Փիբի Փինթօ

Միրելի Եղբւ,

Քանի մը շաբաթ կ'ըլլայ որ նամակդ ստացած եմ, պատասխանը այսօր-վաղը կը յետաձգեմ, պատճառը անտրամադիր վիճակս է:

Վիգը դեռ եւս Թիֆլիզի հիւանդանոցն է, you know: Թէեւ առաջուան հիւանդանոցէն աւելի լաւը փոխադրած են: Այժմ անհամեմատ աւելի լաւ կը զգայ ինքզինքը, բայց հիւանդ ըլլալ ու հոն պառկել՝ մանաւանդ այսքան երկար ժամանակ եւ դեռ եւս անսպասելի մէջ, ինքնին շատ ծանր է արդէն:

Այդ իսկ պատճառաւ տրամադրութիւնս տեղը չէ: Զրկանքը Վիգի, իմ ալ մտահոգութիւնս, կրկնակի ու աւելորդ ծախսեր, որոնք անպայման կ'անդրադառնան գործիս կանոնաւորման եւ յաջողութեան վրայ: Առանց ատոր արդէն պետական անհամար դժուարութիւններ կան մասնաւոր առեւտրական եւ ուրիշ անհատական գործեր ընել ուղղներու համար:

Տարդ նիւթապէս նեղութիւն չեմ կրած, բայց իրերու այս դժուրութիւնը եթէ երկար շարունակուի ա. ք. գ. էն սկսելու պիտի ստիպուիմ: Այս բոլորէն յետոյ, մայրիկ հարցնողներուն հաշիւ չի կայ, պարագայ մը նեղացուցիչ, որմէ բնաւ չեմ կրցած օձիքս ազատել: Կարծես հօրենական պարտք ունեցած ըլլամ իրենց հանդէպ, կամ Armenian Refugies Clothing Fundի պահեստը տրամադրութեանս տակ ըլլայ: Ինձ կը թուի թէ Մասիսի գլուխն ալ բարձրանամ, պիտի դան գտնեն, հազուատ, դրամ կամ գործ ուղեւոր:

Իմ Պիճը, Անպաճը՝ քովս է, կամայ-սկամայ գործի կ'երթայ-կու գայ: Տօն օրերը քիչ մը կը կոնծէ: Վիգը հոս չէ որ երբեմն յանկարծ փորին զարնելով ը'հ ընել տանք: Մեր Մկոյի հետ «չախմաթ» կը խաղան, ժամեր կը տեւէ, այնքան լարուած կը խաղան որ հաստ ակնոցներուն տակէն աչքերը անուշ մը բացած, մտապրալ, ձեռքի անօրմալ շարժումներ կ'ընէ ինքնիրեն, ու ինծի կը ստիպէ «անամ պապամ Պաճօ» ըսելով զինքը սթափեցնել:

Աւետը դեռ Երեւան, պետական կօօպերաթիւի ծառայութեան մէջ է: Շմօն կարծեմ վերադարձած է զիւզ: Գրեմ իրեն որ Օգոստոս 5-ին «տիւտիւկը չալէ», դուն ալ հոտ ուստիոյով մտիկ ըրէ, չ'ըլլար:

Բենոն, իր դրածին նայելով, այս ամսու 20-ին կ'ամուսնանայ Թավրիզ ու կու գայ: «Մեռնիմ իմ լաճուն զնացեր է... կոտորէ»:

Քանի մը օր առաջ Զաւէնը ինձ մօտ էր, կը զանգատէր նամակ չգրելուդ համար, նոր հասցէդ առաւ:

Մեր Մկօն պիտես որ ամուսնացաւ, երկու աղջիկ ունի, քանի մը շաբաթէն մէկ հաստ ալ կ'ունենայ: Մկրտիչ Աճէմեանի հետ կ'աշխատին Ամերկոյմը:

Ստեփանը մի' հարցներ, Թիֆլիզ է, մօտիկութիւն չունինք այժմ, վատ օրի է, վարքով շատ ինկած: Ըստ մեր ստացած տեղե-

կութեան, չար լեզուներ կ'ըսեն որ լրտեսութեամբ կը պարապի: Արաքսը հոս է՝ հազորդեցի բարեւներդ:

Սաթրիկին սիրով բարեւներս, համով-հոտով նամակ գրելը լաւ, բայց տրամադրութիւն ալ անհրաժեշտ է: Մէկ ալ նամակները անտեղի կասկածներու տեղի կու տան եւ հաւանաբար զամբլուղի ալ բաժին:

Քէօն Շիրազին բարեւներդ յայտնեցի, մայրիկ կը հարցնէ: Իրանցին լաւ տրամադրութեան մէջ չէ, ներսիակ կը ստանաս իր նամակը:

Հաճի Գէորգը մէկ ամիս առաջ դնաց Ռուսաստան եղբօրը մօտ՝ լաւ է, բայց խեղճ:

Փիք

Սիպիր-Պարապել, 20 Դեկտեմբեր 1928.

Հոկտմ. 31 թուակիր Վ.ին դրած նամակիդ ինձ վերաբերեալ մասը ձեռքս հասաւ: Քու սիրալիր ու անկեղծ զգացումներուդ համար շնորհակալութիւն յայտնելը ոչ միայն քիչ է զգացածիս հետ բողբոսելով, կարծես աւելորդ է անգամ: Հոգեկան ամուր կապերով շղթայուած բարեկամներու համար նման դարձուածքներ, քաղաքավարական իմաստ ունի եւ բնաւ չի կարող արտայայտել հոգեկան այն ապրումներն ու ցանկութիւնները, որ հեռաւոր տարածութեան վրայ լուրեւան կը գլան մեր սրտերը:

Ձեմ դիտեր՝ արդեօք պէտք պիտի զգամ քու եւ քեզ նման մի քանի թանկագին բարեկամներու, բնկերներու օղնուքիւնը: Եթէ ըզդացի՝ վստահ եղիր անվերապահօրէն կը յայտնեմ: Բայց մինչ այդ ինդրանքս է, ուշագիւր եւ բծախնդիր վերաբերմունքդ մեր թանկագին Բուրիկի դաստիարակութեան եւ լաւագոյն կըթութեան վերաբերմամբ:

Ինչ կը վերաբերի Վ.ին, անիկա շատ տանջուեցաւ, ու ասկէ յետոյ հանդիստ կեանք մը ապրեցնելը նուիրական պարտքդ թող ըլլայ:

Ինչպէս դրած եմ իրեն, ես այնքան վարժուած եմ անոր փաղաքանքին ու դուրդուրանքին, որ առանց իրեն իմ երջանկութիւնը (եթէ տակաւին այդ բանին համար յոյս մնացած է) բնաւ կատարեալ պիտի չըլլայ, ուր եւ ինչ լաւ պայմաններու մէջ ալ գտնուիմ:

Եթէ ճակատագիրը վերջ ի վերջոյ ինձ մի աւագակ, ոճրագործ ու մարդասպան չի դարձուց, եւ իմ այդ կեղտոտ գոյութիւնը թափառումի մէջ քարչ չի տուի, մի օր կը միանանք նորէն, ու կը մոռնանք այս նոր վէրքն ալ ու անլուր տանջանքները, ինչպէս մոռցած ենք նման շատերը, եւ ո՞վ դիտէ, զուցէ ժամանակ մը յետոյ երջանիկ ալ զգանք զմեզ: Իսկ մինչ այդ պէտք է կորսուած, մեռած մէկը հաշուել դիս:



Անշուշտ այս արտայայտութիւնն պիտի չի վերագրես լքումի եւ յուսահատութեան, այլ մարդ-զազանի պարտադրած այն սարսափելի լրկումներուն, որ ինձ անխուսափելիօրէն մաքրագործութեան պիտի մղէ: Իսկ ոճրագործ մը ինքնին մեռած մարդ է:

Այսօր այսքան, եթէ գրածս դամբիւղի բաժին չգարձաւ:

Փորձէ հասցէիս դրել բացարձակ վերապահութեամբ, ընտանեկան նամակ:

Russia - Donski - Barabel

կամ ռուսերէն

.....

Պետրոս



ՆԿԱՐՈՒԱԾ 1930 ՄԱՐՏ 15-ԻՆ

ՍԻՊԻՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՏԱՐԱԶՈՎ .

ԸՆԿՈՂՄԱՆԱԾ՝ ՊԵՏՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ

ԵՏԻՆ ԿԱՆԳՆԱԾ ԻՐ ԶԱՐ ԲԱՆՏԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ

ԵՏԵԻԸ՝ ՌՈՒՍ ՏԱՆՏԵՐԸ, ՓՈՔՐԻԿԸ՝ ԻՐ ԶԱԽԱԿԸ

Նամակը սիրելի անակնկալ մը եղաւ : Հասցէդ չունէի որ անմիջապէս գրէի : Այդ առթիւ Վ.ին վրայ բարկացած եմ : Սիւլիբէն սկսած, մինչեւ երկրորդ աքսորս Թուրքեստան, քանի մը անգամ հասցէդ ուզած էի իրմէն : Մանաւանդ 1930 թ. Նոյեմբերին Թուրքեստան գալէս յետոյ վրայ-վրայի կը գրէի որ թէ՛ Պօլսոյ, եւ թէ՛ քու հասցէդ ուղարկէ : Կը մոռնա՞ր, ինչ կ'ընէր չգիտեմ :

է՛, ո՞րտեղէն սկսիմ : Այնքան գրելիք բաներ կան, մանաւանդ այնքան ցաւեր կան դիզուած ներսիդիս, վրէժով կուտակուած մաղձ մը՝ զայրոյթով ու քննախնդրութեամբ լեցուն : Ինձ հասած գրկանքն ու սանջանքը, նիւթական կորուստները, հրասթափութիւնները վըզ կու գան, եւ հեզնանքիս, արհամարհանքիս արժանանալէ աւելի տարբեր բան մը չէ եղած պօլչեւիկ դահիճներու ճիւղիզխանեան մեթոտները :

Բայց Ձերի՛ի կորուստը անբուժելի է, չեմ մոռցած, չպիտի մոռնամ ու պիտի չը ներեմ, մինչեւ «Թէքէտէրէի» վրէժխնդիր արարքներս, այս անսպասելի կարմիր զազաններուն վրայ գործադրելու օրս :

Դեռ կորովս կը պահեմ : Առողջութիւնս երկաթէն ալ ամուր է : Անտրամադիր՝ բայց բնաւ ընկճուած : Եւ բնաւ մի՛ գարմանար եթէ ըսեմ, Թեհրան հասնելէս ամիս մը հանդստանալէս յետոյ, Թաւրիզ գացի զաղանի Հայաստան անցնելու համար, բայց կուսակցական ընկերներս արգելք եղան : Դեռ յուսահատած չեմ, այստեղ կը սպասեմ ընկերոջ մը, եթէ անոր համաձայնութիւնն ու բարոյական աջակցութիւնը ապահովեցի, միտք ունիմ մերոնք տեսնելու, եթէ յաջողեցայ Վ.ին արտասահման անցընելու : Իսկ դահիճներուն դէմ պայքարը իմ մտածումներուն առանձը կը կազմէ :

Երիտասարդական վաւժառն օրերս անցուցի երկար ողիսական մը ապրելով. կամաւորական օրերէն մինչեւ այսօր, կորսնցնելիք բան մը չունիմ այլեւս : Միայն իզձ մը, մարդ զազանները պատժել :

Անհամ սկսայ նամակս, բայց թոյլ տուր ատով վերջացնեմ մաղձս, ու համառօտ գրեմ փախուստս :

1930 թուի Հոկտ. 11-ին թողի Սիւլիբի ստոնամանիքները : Հակառակ անոր որ աքսորի ժամանակամիջոցս կը լրանար 1930 Սեպտ. 19-ին, բայց կարգադրութիւնը ամիս մը ուշացաւ :

Տոմսկի՝ Սիւլիբի գլխաւոր քաղաքներէն մէկը գալով ներկայացայ տեղւոյն Կպուլին, որտեղ յայտնեցին նոր վճիռ մը : Ազատ՝ բայց Միևուս 6 (1), իրականին մէջ 9ը : Այսինքն : Լենինկրատ, Մոսկուա, Խարկով, Կիւեւ, Օտեսայ, Ռոստով, Կովկաս, Հիւսիսային Կովկաս, Տաղըստան եւ իր շրջանները ապրելու իրաւունք չունէի : Մնացեալ

(1) Այսինքն պակաս 6 տեղեր :

քաղաքներէն մէկ ու մէկը կրնայի ընտրել, ուր պարտ էի անցընել 3 տարուայ նոր աքսորի ժամանակամիջոց մը :

Տակաւին Նարիմ եղած ատենս (Հիւս. Սիպիր՝ անպիտան տեղ մը) փախուստս ծրագրած էի, ու այդ նպատակով ալ ընտրեցի Թուրքիստանի Աստղասպատ քաղաքը :

Նպատակս էր լաւ մը ուսումնասիրել եւ մերոնց բոլորին հետս փախցնել : Նոյեմբեր 7-ին հասայ տեղս ու անմիջապէս հեռադրեցի որ դան խորհրդակցելու : Ընդամէնը 2 կամ երեք օրուայ ճանապարհ էր քովս գալը եւ որովհետեւ ձմեռ էր որոշեցի մինչեւ 1931 թ. Մարտի վերջը սպասել :

Մանաւանդ որ շատ մը դաշնակցական տղաներ իմ հոն հասնելէս յետոյ, յոյսերնին վրաս դրած էին թէ սահմանը անցնելու գործը կը կազմակերպեմ : Անոնք ալ աքսորէն «ձանձրացած»՝ փախչելու նըպատակով պարսկական սահմանի մօտիկ քաղաքները ընտրած էին : Միւս կողմէ շատ լաւ ընկերով մը հետ՝ (Ճեմայլ Փաշայի տէնօրիստը) պայմանաւորուած էինք որ միասին ըլլանք : Կը խորհէի ան ալ հետս ունենալով մերոնց փախուստը աւելի պիտի դիւրանար : Ամիս ու կէս անցաւ, հակառակ վրայ վրայի դրած նամակներուս որ գալը փութացնէ, «չան որդի» իր ծառայած տեղի վարիչը արձակուրդ չէր տար խեղճ աղջկան, իսկ գործը եթէ բոլորովին ձգէր դար, կը վախնայի որ չի յաջողուի հետս վերցնել, անգործութեան մասնուի, ինչ որ շատ վատ պիտի ըլլար :

Ահա դրութիւնը այսպիսի վիճակ մ'ունէր, երբ օրին մէկը, հարաւային Սիպիրէն, մեր նախկին սկաուտ որբ տղաներէն մէկը Աստղասպատի մէջ յանկարծակի փողոցին մէջ դէմս տնկուեցաւ եւ առաջին խօսքը այն եղաւ որ, եկած է Պարսկաստան անցնելու, արդէն մարդ ճարած է եւ երկու օր յետոյ պիտի փախչի :

Ես ամիսէն աւելի էր այդ քաղաքն էի, Ռիսկ չէի ընէր այդ ուղղութեամբ որեւէ մէկուն բան մը ըսել, ու դեռ նոր ծանօթներ ճարած էի, իսկ անիկա երէկ եկած էր՝ այսօր կ'ուղէք Պարսկաստան անցնիլ : Ինձ համար պարզ էր որ լրտեսներուն ծուղակը ինկած է : Հակառակեցայ եւ ըսի որ մնայ ու սպասէ, միասին անցնելու համար : Վճռած եմ, ըսաւ, պիտի երթամ, բանտարկուելու գնով : Ըսի, փողոցին մէջ չեմ կարող քեզ հետ երկար խօսիլ, երեկոյին կու գաս այսինչ տեղը : Եկաւ, փաստերով ապացուցի որ ինք ծուղակը պիտի իյնայ, ու աւելցուցի — Եթէ չես ուզեր սպասել դարնան, ուրեմն մօտիկ ըրէ զիս : Քեզ ով որ խոստացած է սահմանը անցընել ապահով, իրեն կ'ըսես որ դեռ 10 օր պիտի մնամ, հեռադրած եմ մայրիկս դայ, տեսնեմ՝ յետոյ : Իսկ մինչ այդ, ես քեզ ապահով սահմանը անցընել կու տամ, բայց դուն վաղն իսկ կ'երթաս Չեկա, կը փոխես ներկայի բնակած հասցէդ՝ քանի որ Հայու տուն է, թող անոնց չի նեղացնեն փախուստէդ յետոյ : Այս տղան համոզուեցաւ : Միւս օրը Չեկա կը ներկայանայ, կ'ըսէ որ,

այժմեան կեցած տեղէն դուրս կ'ընեն, ինձ սենեակ մը տուէք, կամ ստիպեալ կայարանի «պիւֆէն» պիտի քնեմ: Չեկայէն կը պատասխանէն որ հոս դաշնակցականներ կան, օրինակ, Պ. Մարզպանեան՝ զընայ անոր մօտ: Տղան կը պատասխանէ որ ո՛չ կ'երթամ, եւ ոչ ալ կը ճանչնամ զինքը: Կը խնդան: Ապա երէկ այսինչ փողոցին անկիւնը որո՞ւ հետ կը խօսէիր: Այս բոլորը զալ ինձի յայտնելէն յետոյ՝ ըսի, Հա՛յկ, ժամանակ մը քու դաստիարակն ու սկստապետը եղած եմ, Չերազի ողբերգութեան ծանօթ ես, ծանօթ ես նաեւ որ 1922-էն ի վեր կը հալածուիմ, 1924 թուէն ի վեր բանտի ու աքսորի մէջ եմ, մերձաւորներս մնացած են անտէր-անտիրական, եթէ դուն հիմակ ուզես փախչիլ պիտի բանտարկուիս, ու ես ալ պիտի վտանգուիմ: Չէ՞ որ մեր առաջին հանդիպումին ժամանակ, հազիւ երկու խօսք փոխանակած ու հապճէպով բաժնուած՝ Չէկան տեղեակ է: Կը նշանակէ կը հետապնդուինք, ու լրտեսողները քեզ սահմանը անցընելու խոստում տուողներն են:

Այս տղան համոզուեցաւ, խոստացայ փախուստիս ժամանակ հետս վերցնել իրեն: Ըսած էի որ Վ.ին գալէն յետոյ ամէն բան կ'որոշուի եւ կարգ մը երկրորդական խօսակցութիւններ:

Այս տղան առանց իմ դիտութեան եւ խորհուրդին, պարսկական արծաթ զրամներ կը գնէ, պահել չկարողանալուն ինձ տուաւ, ես ալ զանոնք ծանօթի մը մօտ պարտկեցի: Դրամը գնած էր իր կեցած տան տղայի միջոցաւ, որ միեւնոյն ատեն սահմանը անցընելու խոստում տուողն է եղած:

Ժամանակ մը յետոյ զիս զգուշացուցին որ այդ սրիկան Չեկայի լրտես է, ես մօտէն չէի ճանչնար, հազիւ բարեւ կը փոխանակէի հետը: Սակայն իմ կարգիս զգուշացուցի Հայկը: Որո՞ւ կ'ըսես, մինչեւ վերջը կը պնդէր որ ան շատ ազնիւ է, հաւատարիմ, վստահելի: Այս խօսակցութենէն քանի մը օր յետոյ, իրեն դուրս ըրին տունէն, սենեակ չէր ճարուէր, ստիպուած բերի քովս: Ճիշդ Յ օր յետոյ, երեկոյեան ուշ ժամանակ 4 Չէկիստ սկիւնակս մտան: Սենեակ ըսածս՝ հաւաքոյն մըն էր, փոքրիկ, կեղտոտ խոհանոց մը: Սկսան խիստ խուզարկել: Ամէն ինչ տակնուվրայ ըրին, իրենց փնտռածը չգտան: Երեւի պարսկական զրամի կը նայէին, քանի որ որեւէ գրութեան չդպան: Յը ըսելով գացին: Արդէն վտանգուած էի, բանտարկութիւնս անխուսափելի էր: Յիմար տղան՝ պնդումիս վրայ խոստովանեցաւ որ, մեր խօսածները կրկնած էր իրենց տան տղային:

Ուրեմն Չեկան տեղեակ էր մտադրութեանս, սպասել անխոհեմութիւն էր: Հապճէպ պատրաստուեցայ, ըսի որ ինքն ալ պատրաստուի: Ամէն ինչ պէտք էր թողէինք սենեակին մէջ, այդ էր պատգամս: Անպիտանը սակայն ինձմէ ծածուկ իրեր կը հանէր սենեակէն դուրս: Բարկացայ վրան, ըսի մէկ ժամէն պէտք է մեկնինք:

Որոշեալ ժամուն մէջտեղ չելաւ, բանտարկուելը աչքս առնելով

այդ օրը սպասեցի, զգուշութիւններ ձեռք առնելէ վերջ. յաջորդ օրը նշանակուած տեղը դարձեալ չերեւցաւ: Այս անգամ առաջնորդ Քիւրտերը չուզեցին սպասել: Ստիպեալ ուրիշ ընկեր մը հետս առնելով Գեկտեմբեր 26-ի դիշերը հեռացանք եւ 27-ի առաւօտեան ապահով սահմանէն անցանք:

Վերջին պահուն գրեցի Վ.ին եւ ծանօթներէս մէկուն ալ դրամ տուի որ հեռագրէ, չըլլայ յանկարծ գործը թողու գայ: Առանց ուրեմն զիրենք տեսնելու եւ համբուրուելու հեռացայ: Նոյնպէս ջուրը ինկաւ տասնեակ քարորական ընկերներուս փախուստի գործը՝ անակնկալ մեկնումով: Սահմանին վրայ քիւրտ զիւզէ մը գրեցի ապահով անցնիլու եւ մեզ առաջնորդող Քիւրտերուն վստահեցայ որ ուսասկան փոստը ձգեն, Աստղապատի մէջ:

Այսպէս ուրեմն, ամէն ինչ նոյնութեամբ տեղույն մէջ թողելով, առածներս ալ սահմանին վրայ գտնուող Քիւրտերուն մէջ ձգելով, չոր գլուխս ազատելով դուրս ելայ:

Երանի այդ ըլլար բոլոր կորուստս: Եթէ մանրամասնեմ, տասնեակ էջեր պէտք է լեցնեմ, իսկ ես յոգնած եմ՝ ուղեղով ըսել կ'ուզեմ: Գալէս ի վեր, ծանօթներուս, ընկերներուս հարցասիրութեան բաւարարութիւն տալու համար, այնքա՞ն խօսած եմ, նաեւ գրած:

Այսօր՝ նամակիդ հետ 5-6 ուրիշներ ստացած եմ Ամերիկայէն եւ ա՛յլ տեղերէ: Թագուլիկէն 2 նամակ 25 տոլար չէքով մը: Տուած ընդարձակ տեղեկագրիս պատճենէն ստիպեցին քանի-քանի օրինակ արտագրել: Փարիզէն ընկեր մը, չգիտեմ ի՛նչպէս է իմացեր փախուստը՝ զրկած է երկար հարցացուցակ մը, ստիպուեցայ երկարօրէն գրել, նոր եմ լրացուցեր:

Ամենէն մօտիկս դուն ես, ներողամիտ ես առաւել քան ոչ ոք որ համառօտ գրեմ, մանրամասնութիւնները յետագային թողելով, կամ մօտիկ ապագայի տեսութեան վերապահելով:

Ռուսաստան լսած էի որ, Պարսկաստանի մէջ որեւէ դժուարութիւն չի յարուցուիր, բայց սխալ դուրս եկաւ:

Սահմանի մօտիկ Մեմետապատ գիւղաքաղաքը հասնելուս պէս Պարսիկները մեզ բանտարկեցին: Ամենասարսափելի օրեր ապրեցայ, պարսկական կեղտոտ ու դժոխք բանտերու մէջ: Սկիզբը կարծեցի որ քանի մը օր պահելէ յետոյ, կեդրոն, Մէշէտ քաղաքը կ'ուղարկեն եւ հոն Հայերու միջոցաւ կ'ազատուիմ: Այդպէս չեղաւ:

Քսան օր Մեմետապատ պահեցին, տեղացի Հայերը աներեւակայելիօրէն վատ հոգի դուրս եկան: Իմ իսկ դրամով, Թաւրիզի ընկերներուս եւ Մելիք-Թամգեան Արքեպիսկոպոսին չուզեցին հեռագրերէ միջնորդելու համար:

Քսաներորդ օրը եկան խաբեցին որ Մէշէտ պիտի ուղարկեն: Նեզմիայէն հանեցին տարին քաղաքապետարան, քաղաքապետը յայտնեց որ կը ցաւի բայց ստիպուած է, Ռուսաստան վերադարձնել մեզ,

ուուս-պարսկական նոր համաձայնագրին համաձայն: Եռացած ջուր թափեցին մեր գլխուն, ուրեմն դէպի մահ, լաւագոյն պարագային տարիներու բանտ, կրկին դէպի Սիպիբրի սառնամանիքները: Առանց պաղարիւնութիւնս կորսնցնելու՝ ընդդիմացայ, յայտնեցի պարսկահպատակ ըլլալս, որ իսկապէս էի 1916-էն ի վեր: Անցապիբր խլած էին պօլշեւիկները, բայց համարները կաք: Վերջին անգամ Թաւրիզ նորոգած էի, պահանջեցի որ ստուգեն, իմ իսկ ծախքով (քովս դրամ կար): Այս չօգնեց, մէջ բերի միջազգային օրէնքը: Մենք քաղաքական փախտականներ ենք, ըսի, ըստ միջազգային կանոնի մը դուք իրաւունք չունիք մեզ յանձնելու ա՛յն պետութեան՝ որու երկրէն փախած ենք: Եթէ մեզ չէք ուզեր հիւրընկալել ձեր երկրին մէջ, հնարաւորութիւն տուէք հեռանալ ուրիշ երկիր: Ո՞րու կ'ըսես: Այն ալ մի ետ ընկած պարսիկ զիւղաքաղաքի տգէտ պաշտօնեայի մը: Օգուտը այն եղաւ որ համաձայնեցան ոուս սահմանապահներուն չի յանձնել մեզ, այլ տանիլ դիշերանց ոուսական սահմանէն ներս հրել եւ մենք կամովին վերադառնայինք ոուսական հող: Կային եւ 3 Ռուսեր, որոնք ամիսներով բանտն էին, լեզու չէին գիտեր, իմ բարձրացուցած ազմուկէս բան չէին հասկնար: Երբ բացատրեցի, դէ՛վս դեղին կտրեցան. մէկը Սիպիբրցի զիւղացի էր, կուլակ նկատուած, մէկը շատ համակրելի երիտասարդ՝ ճարտարապետ, միւսը՝ ծառայող: Քաջալերեցի զիրենք, քիչ սրտապնդուեցան: Ի՞նչ երկարեմ, հետեւեալ օր երկու ոստիկաններ մեզ տարին սահման, ես արդէն որոշած էի կրկին Պարսկաստան վերադառնալ: Ոստիկանները շատ բարի գտնուեցան, քաջալերեցին, իրենք ալ խորհուրդ տուին Ռուսաստան չերթալ, այլ դադտնի, մի կերպ ուրիշ ճամբով դառնալ պարսկական «Քոչան» փոքր քաղաքը, հոտ հեշտ էր ազատուիլը: Ուշ ժամանակ սահմանը անցանք, մի քիչ ոուսական հողը յառաջանալէ յետոյ, Ռուսերէն գատուեցանք ու կրկին ետ դարձ: Յունուար 21-ի դիշերը, դէպի արեւմուտք դըտնուող լեռը բարձրացանք, յոգնած, ջարդուած, առանց ցուրտին մըտիկ ընելու անուշ մը քնացանք ձորակի մը մէջ: Յաջորդ օրը մօտեցանք զիւղի մը, Հոտ մտնել վտանգաւոր էր, անձրեւ ալ կու գար ձիւնախառն. զիւղի մօտերը աշխատող Քիւրտերուն մօտեցանք Թուրք ձեւանալով, խնդրելով ու համոզելով որ մեզ Քոչան տանին: Զիւնձմեռ, ճամբաներուն անձանօթ փախտական մը սպառնուելու, սառելու վտանգին ենթակայ է: Խոստացանք լաւ վարձատրել: Որպէս Թուրք 3 օր պահուրտեցանք այդ զիւղը ու 4 օր ճամբայ կտրելէ վերջ մեծ դժուարութեամբ հասանք Քոչան: Ընկերոջս յիմարութեան երեսէն հոս ալ բանտարկուեցանք: Հայերը նոյն անտարբերութիւնը ցոյց տուին, վերջապէս մէկը ընկերներէս մէկուն ծանօթ դուրս եկաւ, մեր ծախքով հեռադրեց Թաւրիզ, Արք.ը փութացած էր երաշխաւորել. բայց նորէն հարց ու փորձ պատասխան՝ տեւեց 19 օր: Դրութիւննիս սոսկալի էր. այդ ժամանակամիջոցին մէջ 8 հոգի մեռան բանտին

մէջ: Կեանքիս տեւողութեան այդ պատկերը պիտի չի մոռնամ, քիչ մնաց զիմում ընէի Ռուսաստան՝ ետ զրկեն:

Երկրորդ հեռագրի մը վրայ 19երրորդ օրուայ երեկոյեան քըննիչը լուր բերաւ որ ազատ ենք:

Ի այց ի՞նչ գնով ու դժուարութեամբ ձեռք կը բերուի եղեր ազատութիւնը: Եկանք Մէշէտ, 10 օր մնացինք: Նահանգապետը անձամբ հետաքրքրուեցաւ ինձմով որպէս բարեկամ՝ թէ ինչո՞ւ, որո՞ւ ծանօթութեամբ, չզիտցայ: Ըսին որ բոլորովին ազատ ենք եւ կրնանք ուզած տեղերնիս երթալ:

Թեհրան եկայ, որտեղ գտայ թանկագին բարեկամ ընկերներէս՝ Սերաստացի... Տիգրան Գոլյումճեանը եւ իր կիինը՝ ամենուս քոյրիկը, զիս ընդունեցին հարազատի մը նման: 10 օր քովերնին մնալէ յետոյ, դէպքի մը պատճառաւ փոխադրուեցայ, մեր Չմշկածառ, Ինչպէկցի Թաթեան ընտանիքի մօտ, որուն տղան Հմայեակը քեզի կը յիշէ: Յետոյ գնացի Թալլրիզ, թէ՛ ծանօթներու տեսնելու, եւ թէ՛ Հասաստան անցնելու մտադրութեամբ: Մօտ ամիս մը տեւեց երթուղարձն: Ընկերս Տիգրանը խորհելով որ կ'ուշանամ, իր հասցէին եկած նամակները հոն զրկած էր, ինչպէս եւ քուկինդ: Ութ օր առաջ ալ եղբորմէս Հալէպէն ստացայ նամակ մը Գ անդլիական չէքով, կը փափաքի որ քովն երթամ: Փոքրութենէ բաժնուած ենք, համարեայ իրար տեսած չենք: Հաւանական է որ Հալէպ երթամ, հոն կը որոշեմ, ո՛ւր եւ ի՞նչ գործով հաստատուիլ: Մասնագիրտութիւն մը չունիմ, եւրօպական լեզուներուն ալ ծանօթ չեմ: Գիտցած քիչիկ մը անդլերէնս համարեայ մոռցած եմ, 16 տարի է չեմ գործածած: Եթէ հնարաւոր եղաւ փոքրիկ առևտրական գործով մը զբաղուիլ՝ լաւ, այլպէս բանտի մէջ, 1925-26 թուին քիչ կօշկակարութիւն սորվեցայ, ժամանակս պարապ չանցընելու համար: Իսկ Սիպիւրի աքսորավայրիս մէջ, ամէլիով եւ շորի միւրատով մը Կովկասցոց ըսածին պէս «տէլէքութեան» (սափրիչ) սկսայ, եւ ի՞նչ կը կարծես՝ դարձայ նշանաւոր սափրիչ մը այդ շրջանին մէջ: Ո՛չ միայն քերթելով (մեղա՞յ, մեղա՞յ, ի՞նչ քերթել, կակուղիկ թրաչ մը կ'ընէի) տղամարդիկ, այլեւ համեստափայլ տիկիներու եւ «փափկաշուն» անուշիկ «հորէհորթներու» մագերը կը կտրէի ըստ նորաձեւութեան: Թէեւ առաջին օրերուն մինչեւ վերջացնելս ժամեր կը տեւէր, քրտինքը մինչեւ կրունկս կ'իջնար ու խաբ-խայտառակ բան դուրս կու գար, ու կը տառապէի կոտորուած ոտներէնով մը վերջին մօտա է ըսել ու կլլեցնել: Ոմանք քիչ դժգոհ, շատեր գոհ կը մեկնէին: Ի՞նչ երկարեմ, այնքան անուն հանեցի որ, հացի փոռերու առջեւ ինչպէս հերթի կը կենան, ու շատ անգամ հոն կը լուսցնեն, այնպէս ալ «տէլէք խանէիս» առջեւ, առաւօտները (մանաւանդ Կիրակի օրերը) Սուրբ Թորոսա քոթրուս պէս շարուած են: Մեկնած ժամանակս, տիկիներն ու օրիորդները իրար անցան, ըսին, կ'երթաս՝ մեր մագերը ո՞վ պիտի կտրէ, քիչ մնաց

Սթալինին հեռագրեն որ 5 տարի աւելցնէ աքսորս : Ըսի իրենց՝ եթէ այդպէս բան ընէք, ես ալ կը պոռամ «տէլէքներ բոլոր երկիրների միացէ՛ք» ու հաւաքուելով ձեր ալ, Սթալինի ալ խէրը կ'անիծեն : Կոչ մը կը հրատարակեմ՝ Հնդկաստանի, Չինաստանի, Ադուանիստանի Աֆրիքայի, Հնդկաչինի, Նոր Զելանտայի, Ալժերիոյ, Պարսկաստանի և այլ և այլ բոլոր դադուլթային ու կիսադադուլթային (եւրոպական երկիրներու տէլէքները պուրժուական լաքէներ են, զուրկ դասակարգային դիտակցութենէ՝ ըմբռնումէ) երկիրներու տէլէք ընկերներու եւ Յորդը Ինտերնասիոնալի տէլէքական սեկցիայի փոէգիտէնս՝ Ընկ. Փալաս Փանթրասօֆին, որոնք պիտի փուլթան իրենց բողոքի ձայնը բարձրացնել մէջչէական ու հակայեղափոխական կիներու դէմ, մօտայական ձեւերով մազ խուզող ընկերոջ մը վրայ բռնադատութիւն գործ դնելնուն համար, որակելով զիրենք ինչպէս որ հարկ է, իբրեւ աջ ու ձախ թեքում ունեցողներ, քաղքենիական եւ մանր պուրժուական ստոր արարածներ : Անոնք խորհուրդ պիտի տան փոխանակ ինձ Սիպիր պահելու, իմ նոր հաստատուելիք տեղս զրկեն իրենց գըլուխները : Այս սպառնալիքիս վրայ, «Կարմիր տէլէք»ի պատուոյ նըշան մը ստացայ, որ, Հոկտեմբերեան Յեղափոխութեան տօներուն «Թէփէխ» վրայ տնկելու եւ բոլորին ցոյց տալու պատիւը ունիմ :

Կատակը մէկ կողմ, իսկապէս բաւական կը յարմարցնեմ, եւ ինքնասիրութեան մանր-մունր բաներու ալ կարեւորութիւն չեմ տար, ոչ ոքի պարտական՝ հաց ուտելն է կարեւորը, հոգ չէ թէ կաշի կըրծող ըլլանք :

Գամ քեզ մօտ կամ հաստատուել յայտեղ, կը մնայ կարեւորը, մերոնց ազատիլը այդ դժոխքէն, մանաւանդ չափահասները, որոնց ապագան կերտելը մեծ մտահոգութիւնս եղած է միշտ :

Կը սարսափիմ մտածելով որ անոնք անտէր-անտիրական թողուած են, կամայականութիւններով լիքը վարչաձեւի մը մէջ, ուր սուտ ու փուտ վկայութիւններով կրնան տասնեակ տարիներու աքսորական կեանքի դատապարտուել, ու ես դիտեմ ի՞նչ տաժանելի պայմաններու մէջ ու դառն հետեւանքներով բեղուն : Ա՛լ չեմ խորհիր դպրոցական կրթութեան, զարգացումի եւ ա՛յլ դժուարութիւններու մասին :

Այդ մասին 1928-ին, աքսորի տեղէս երկար-բարակ գրեցի, թեւադրեցի, խորհուրդներ տուի, բան դուրս չեկաւ : Ու այսօր, դարձեալ իմ որոշումս ու ընելիքս անոնց վիճակէն կախուած է :

Ի՞նչ պահեմ քեզմէ : Եթէ կուսակցական ընկերներս օգնեն, բարոյապէս, տեխնիքապէս եւ ա՛յլ միջոցներով, գէթ ապահովեն ապահովութիւնս պարսկական հողի սահմանադուլիս վրայ, թէ՛ աքսորականներու օգնութիւնը, եւ թէ՛ ա՛յլ գործերու կարգադրութիւնը գլուխ կը բերեմ, կը տեսնուիմ հոն մերոնց հետ եւ ոմանց դուրս հանել կը ջանամ : Այժմ այդ ուղղութեամբ կը մտածեմ, նայինք ի՛նչ դուրս կու գայ :



Նամակներդ զրկէ եղբօրս հասցէին, դրամ զրկելու մասին չի մտածես: Ձորս կողմէն կու դայ: Եղբայրս 9 անգլիական, Թադուն 25 տուր: Առնելիքներէս Եղնիկ Քաջունին մէկէ մը պանձած 50 թումանը յանձնեց: Պօլիս Քէնկիւռէն 5 տուար, կամաւոր ընկերս Ե. Սուրիկեանը կ'առաջարկէ 300 թուման՝ ուղած գործս ընելու յատկացնելու համար: Ամերիկայէն նոյնպէս՝ ընկերներ դրամ կ'առաջարկեն, ինչպէս դուն: Հասպ մոռցայ նաեւ հայրիկդ:

Ամէն ծայրէ տեղացող այս դրամները ի՞նչ պիտի ընեմ, ախպէր Զան: Խո՛ւ՛, զիս խեղդելու չէք, պրօլետարական?? կենցաղով ապրող ու վարժուող մէկը ի՞նչ ընէ այդքան դրամ:

Ուրեմն դրամի կարիք չունիմ այժմ:

Ձանազան հարցերու շուրջ յետոյ կը դրեմ, այսօր գրելիք տեղեր շատ ունիմ:

Մեր Եղնիկը Թավրիգի մօտիկ ճանապարհի վրայ garage կը պահէ: Երեք ընկեր են, հազիւ ծախքերը կը հանէ, քովը մնացի 2 շաբաթի չափ: Նորէն Գուլումճեաններու մօտ եմ:

Յարգանքով՝ սիրով բարեկներս «Խամպաճիլիս» (կովկասահայերէն):

Կարօտով՝ Փիթ

Հալէպ, 18 Յուլիս 1931.

Երեք օր է Հալէպ եմ: Եկայ որ եղբայրս կը բացակայի, երէկ եկաւ: Ստացած եմ 4 թուակիր (Յունիս) նամակդ:

Նամակս ուշացնելուս նեղացած կ'ըլլաս: Կ'ընդունիմ ուշացուցած ըլլալս, քանի մը հատ գրելու էի: Բայց վերջին ժամանակները հողեկան այնպիսի դրուժեան մէջ կը գտնուէի, որ կեանքիս ընթացքին գտնուած եմ միայն Մեռելի բանտին մէջ, Ձերի՛ի գնդակահարութիւնը լսելով:

Արտասահմանը զիս հիասթափեցուց: Անշուշտ եկած ատենս վառ դոյներով պատկերացած չէր ան երեւակայութեանս մէջ: Անգամ մը գտնուած էի Պարսկաստան, եղած էի արտասահման, անոր կեանքին ծանօթ էի: Բայց չէի երեւակայէր որ այսքան բացասական ազդեցութիւն պիտի թողու վրաս՝ իր ցոփ, մեղկ, շահամուլ ու այլասերութիւն ճամբուն վրայ գտնուող կեանքով:

Կա՛մ ես փոխուած եմ հիմնովին, իմ գաղափարներով ու աշխարհահայեացքով, կա՛մ արտասահմանի կեանքը փոխուած է ու Սոգոմ-Գոմօր մը կ'երեւայ աչքիս, եւ ափսոսանքով փնտռել կու տայ պօլչեւիկեան դաժան ուժիմը:

Որոշած եմ վերադառնալ Ռուսաստան: Ինչքան ալ վայրագ ու ոճրազործ, իմ հողին հոն չի աղճատիր, կը մնայ այնպէս՝ ինչպէս որ կայ:

Պայքարի, յոյսի սպասումներու մէջ կորույս ու նկարագիրս կը պահպանեմ, խիղճս հանգիստ ու հողիս միշտ բարձրին ձգտելու հակումը կ'ունենայ: Աւելի մօտիկ պիտի ըլլամ անոնց, որոնց ամբողջ ապագաս զոհաբերեցի, ու հիմակ պատճառ մը չի կայ զանոնք լքելու, հեռու ապրելու անոնցմէ:

Ինչքան կը հեռանամ Հայաստանի սահմաններէն, ինչքան կը ծանօթանամ այս դուրսի կեանքին, հայրենակիցներու ապրելակերպին՝ բարքերուն, մտայնութեան, պայքարի ձեւերուն, կուսակցական ընկերներու կեանքին, այնքան կարօտով կը յիշեմ քստորական ընկերներս, ու անբացատրելի կարօտ մը զիս հոն կը քաշէ:

Որպէսզի եղբօրս ըսել չի տամ «Իմ դրամով ինձ տեսութեան չեկաւ», արդէն վերադարձած կ'ըլլայի: Կար անշուշտ դիւզացիներուս, եւ Չմչկաձագի հայրենակիցներս տեսնելու փափաքը: Գալս ունեցաւ նոր հիասթափում: Երկրի նոյն տափակ, խեղճուկրակ մարդիկը մնացեր են, իրենց բարքերով, մտայնութեամբ: Ինչքան խեղճ ենք Չմչկաձագիներս, եւ որքա՛ն կեանքի մարդ չենք, համեմատած ուրիշ տեղացիներուն:

Սպասածէս շատ աւելի աննպաստ պայմաններու մէջ գտայ եղբայրս: Լսած էի իր «տէվրիշվարի» ապրելակերպի մասին, բայց կը կարծէի իր համար քիչ շատ տանելի կեանք մը ստեղծած է: Ի վերջոյս, կատարեալ յուսախարութիւն: Չարմացայ մանաւանդ երբ ստուգեցի որ ինձ ուղարկած 9 անդլիականը պարտքով վերցուցած է: Տասնըհինգ տարիէ ի վեր ինկած է Կարմրցի Թօփճեաններու կարածը, օրական 12-13 ժամ ծանր աշխատանքով, չէ կրցած արհեստին տիրանալ, ուր մնաց ինքնուրոյն դործ ունենալը: Կը ստանայ մօտ երեք Օսմ. Ոսկի, ու ատով կը քաշքշուի: Հօրս երկիր վերադառնալէն յետոյ, խելքը-գլուխը եկած ու պատուաւոր կեանք մը ապրած է, այդ ինք կը խոստովանի եւ բոլոր հայրենակիցները կը հաստատեն: Բայց պէտք է զարմանալ որ մարդ 30 տարի Հալէպ ապրի եւ մնայ հո՛ն, ուր էր: Ո՛չ մի յառաջդիմութիւն: Իր եւ շատերու ըսելով, քստորականներու ծայրը Հալէպ հասնելու ատեն օդնած է, այդ է բոլորը: Սակայն 5-6 տարի է այդ ազդականուհիին եւ իր երախաներուն Պուլկաբի մեկնելէն յետոյ, այդ հողսէն ալ ազատուած է եւ չէ կրցած սեփական տանելի կեանք մը յարմարցնել:

Է՛, հողիս շատ խոռված է: Կեանքիս մէջ ո՛չ հարուստ եղած եմ, ոչ ալ հարստութիւնը սիրած ու անոր ձգտած: Սակայն ուր որ եղայ, անգամ հեռուոր հիւսիս, համեստ ապրուստ մը կրցի ապահովել ինձ եւ իմիներուս: Հայրենակիցներս ու ընկերներս թիթեռնիկի պէս շուրջս դարձած են, ունեցածս բոլորին համար եղած է, եւ ատոր մէջ գտած եմ անսահման բաւականութիւն եւ հողեկան հանդիստս: Իսկ այսօր ինչքան կը ճնշուիմ երբ բոլոր հայրենակիցներս դորովով ու

սիրով ընդունեցին, սուրճով կամ օշարակով պատուեցին, որոնց փոխադարձաբար ընել յարմարութիւն չունիմ :

Երէկ եղբօրս կ'ըսեմ, ըստ տեղական սովորութեան օշարակ առնենք որ եթէ հայրենակիցները փոխ-այցելութեան դան, պատուենք: Է՛հ, կ'ըսէ, ահանջ մի՛ տար ատանկ բաներու, ինձ մօտ մարդ չի դար, դիտեն որ յարմարութիւններ չունիմ :

Տարիներով վարժուած ամէն կերպ հիւրասիրելու շրջապատներս, անգամ հեռաւոր հիւսիսի մէջ, ամենաանախանձելի պայմաններու մէջ ապրեցայ, (Երանի հոն մ'նայի), տան տէրս կու դար սենեակս եւ կատակելով կ'ըսէր, «Ի՞նչ քաղաքական քսորեալ ես որ՝ առանց քաքաօ-ի, կարագ ու մեղրի մի օր չես անցըներ, պուրժուայի պէս կ'ապրիս, այդպէս սոցիալիստ կ'ըլլայ» :

Ողորձ վարդօն ու Էջօն ինչեր կը քաշէին: Եթէ հիւր մը եկաւ, ու ամէն ինչ տեղին չկրցան կատարել, այնպէս կը պոռայի որ ինչպէս երկիրը կ'ըսէին լեզիճաթ կ'ըլլային: Իսկ հոս եղբօրս այս վիճակը տեսնելով կը պատուիրմ :

Է՛հ, ճանրմ, շատ բարակ մտածելն ալ բան չէ. խերն եմ անիծեր, ինչ կ'ուզէ ըլլայ, թողունք այս բոլորը, ամէն կողմէ արտասահմանը դիտ հիասթափեցուց, հոգեկան հանդիստս կորսնցուցի, անբեակայելիօրէն ջղային քայքայման մէջ եմ: Ելք կը փնտոսեմ գործած սխալ դարմանելու՝ բոլոր մտածումս այդ մասին է :

Նամակովը հոտ դալու առաջարկ կ'ընես, դիտ մատնելով դրժուար ու փափուկ վիճակի մէջ: Մինչդեռ մինչեւ հոս դալուս զղջացած եմ, ու ինչքան մերկններէն՝ Հայաստանի սահմաններէն կը հեռանամ, այնքան կը շատնայ կարօտս, ու նոյնքան կը բազմապատկուի ատելութիւնս դէպի այս դրսի անհրապոյր կեանքն ու շրջապատը, խորթ ու անհարազատ: Հոս ատելի թուրք լեզուին վրայ, որ բոլոր Հայերը կը խօսին, Փէսն ալ աւելցաւ, որ աւելի քան զգուանք կ'արթնցնեն մէջս: Ի՞նչ մեղքս պահեմ, մեր չի հաւնած պօլշեւիկները, քիչ շատ աւելի հայ լեզուն յարդել եւ խօսիլ փորձելուն մէջ աւելի լաւ Հայեր են, քան այստեղի կէս թրքացած Հայերը :

Մօրս, քոյրերուս, հայրենակիցներուս կրած տառապանքները, սարսափները աւելի մանրամասնութեամբ տեղեկանալով, դադանական բնագրէ արթնցաւ մէջս, պօլշեւիկներուն դէմ այնքան ատելութեամբ ու ռիսակալութեամբ լեցուած ըլլալուս հակառակ, քիչ կը մ'նայ մոռնամ ամէն բան, — անգամ Ձերի'ին ըրածնին, — որ կեանքիս մէջ բնաւ չի պիտի ներեմ, երբ թուրքերու ըրածին հետ կը համեմատեմ :

Կը ցաւիմ որ քեզ ցաւ, վիշտ կը պատճառեմ նման տողերով: Հոգուս անդորրը գտնելու ուրիշ ելք չի կայ, բացի ետ՝ Ռուսաստան վերադառնալէ: Շատ անգամ մտածեր եմ, դուցէ մտերիմներու շրջանակի մէջ, միտքս դադրի հազար ու մէկ բաներ որոճալէ, արկածա-

խնդրական գործերը դադարին զիս ոգեւորելէ, անօգուտ մտածում, կեանքը տաղտկալի ու անիմաստ կը թուի՝ եթէ վտանգներով չըջապատուած չէ:

Եթէ անվտանգ անցայ, հետքս կորսնցուցի, պիտի քաշուիմ Ռուսաստանի կեդրոնական մասերը, կամ հարաւային Սիպիւր՝ գիւղ մը, գիւղաքաղաքի մը մէջ, լծուիմ Փիզիքական արդար աշխատանքի մը, հեռու մեծ քաղաքներու ժխորէն, խարդախութիւններէն, շահամոլութիւններէն, հազար ու մէկ կեղծ ու պատիր ձեւերէ ու ձեւականութիւններէ, որոնք կը կատարուին քաղաքավարութեան, քաղաքակրթութեան անունով:

Հոգիս մինակութեան կը կարօտի, մինակ, բոլորովին մինակ, իմ յուշերուս ու յոյզերուս հետ, երբեմն տեսութեան մերոնց մօտ, եթէ չուզեն իրենք մնալուն գալ ինձ մօտ: Այդ հնարաւորութիւն պիտի տայ ինձ, գաղտնի չըջելու ուղած ատենս ու քանի մը մարդոց հետ հաշիւներս ալ մաքրելու՝ եթէ առիթ ներկայացաւ:

Այսպէս ուրեմն, ինչքան ալ իմ փափաքս ալ է տեսնել համբուրել ձեզ բոլորդ, կը ցաւիմ որ պիտի չգամ, ինչպէս ըսի հոս դայիս զղջացած եմ, աւելի հեռուներ երթալ չեմ ուզեր, մանաւանդ նիւթական ահագին ծախքեր պատճառել իմ իններուս: Եթէ գիտնայի որ եղբայրս պարտք ըրած ու ինձի դրամ զրկած է, քայլ մ'անգամ չէի առնէր տեղէս, ու կերպ մը յարմարութիւն կը ստեղծէի եկած ճամբովս ետ դառնալ:

Պիտի զարմանաս անշուշտ որ դեռ առաջին նամակովս մերոնց դուրս բերելու մասին կը խօսէի, իսկ հիմա ոչ միայն անոնց զալուն համամիտ չեմ, այլ իմ հոն անցնիլս լաւագոյն կը դտնեմ: Արտասահմանի մասին հանած եզրակացութիւններս ինձ բերին ա՛յն համոզումին, որ հոս ոչինչով լաւ չէ մանաւանդ մերոնց մտայնութիւնը ունեցողներուն համար: Որեւէ ջնջին գործով մը մերինները հոն շատ լաւ եւ աւելի հանգիստ կ'ապրին նիւթապէս: Փոքրիկները մինչեւ որոշ տարիք անասճման հնարաւորութիւններ ունին բազմակողմանի զարգանալու՝ շատ ջնջին վճարումներով: Այս կողմերը առանց սեփական միջոցներու կամ այլոց օգնութեամբ չեն կրնար: Մանաւանդ կայ փախուստի դժուարութիւնները ծեր կնոջ եւ երախայի մը գոյութեան պատճառաւ:

Կատրած եմ Վ.ին դէմ սակայն, զիս կը խաբէ, ցոյց կու տայ իր գիրովը որ կ'աշխատիմ, մինչդեռ ուրիշ աղբիւրէ կ'իմանամ որ բաւական ատենէ ի վեր անգործ է ու Երեւան գացած է գործ փնտռելու: Վերջին նամակով մը կը բարէ Երեւան եւ Թիֆլիզ երթալը ու «արձակուրդ վերցուցած եմ»ի պատմութիւն մը կը հիւսէ: Թիֆլիզ դնալուն պատճառը հասկցուցած է, պահեստի դրամս որ Երեւանի բանտէն յաջողած էի իրեն զրկել ստիպուած է եղեր գործածել: Մինչ այդ դայն անձեռնմխելի պահած էր, իսկ այժմ պէտք է վերջին ծայր խեղճու-

թեան մատնուած ըլլան: Գրածը հետեւեալն է: «Մեր Ղուկասին տեսայ, կօշկակարութիւն կ'ընէ, իմ հին կօշիկներս պիտի նորոգէ, խոստացած է գոյգ մը նոր կօշիկ ալ կարել, եւլն»:

Այդ պահեստի դրամին խնդիրը հետեւեալն է: Առաջին փախուսախ, որուն մասին յետոյ պիտի գրեմ, մօտ 500 տօլար դրամս կօշիկիս տակ կարեցի, եւ երբ սահմանին վրայ դաւաճանութեամբ բռնուեցայ ու Երեւանի Չեկան ու ապա բանտը փոխադրուեցայ, յաջողեցայ կօշիկներս տուն դրկել եւ այդպէս ալ պահեմ եմ:

Մտահոգութիւնս ուրեմն իրենց ապրուստի մասին չէ, եթէ անդործ է, այդ դրամով ժամանակ մը պօլ-պօլ կ'ապրին, անվտանգ զանոնք ռուբլիի եթէ յաջողին վերածել, կը նշանակէ երկու տարի կրնան ապրիլ: Մէկ տօլարը 15 ռուբլի կ'արժէ, իսկ 15 տօլարը իրենց ամիս մը կ'ապրեցնէ:

Վրին քով երթալու ակնարկութիւն ըրած էիր, ինչո՞ւ, չեմ հասկնար: Եթէ հոտ գալու «փաս» առնելու մէջ քեզ օգնելու համար է, ի գուր, իմ կարծիքը առնելու էիր: Ինչ կը վերաբերի որեւէ դրութիւն իրենց ձեռքը չի յանձնելու, այդ անհնարին է: Աքսորի մէջ գտնուող տղաներու եւ ընդհ. կացութեան մասին տեղեկագիր չի ներկայացնել չէր կարելի: Մի՛ կարծեր որ բոլորի վրայ վստահութեամբ կը նայիմ, բայց համոզումս է որ ան լաւագոյններէն է, որուն հետ անձնական մօտիկ ծանօթութիւն ունեցած եմ: Ըսեմ նաեւ որ, դեռ չուրջս կ'ուսումնասիրեմ ու պատկանած կուսակցութեանս անցեալէն ու ներկայէն տեղեկութիւններ կը հաւաքեմ: Եթէ քննադատական կարեւոր փաստեր ունիս՝ դո՛ւ պիտի մնամ եթէ գրես, կողմնակի դիտողներու կարծիքները ինձ համար շատ շահեկան ու արժէքաւոր են:

Բնաւ մի՛ մտահոգուիր, որ որեւէ դրութիւն յանձնելովս, ես կամ մերոնք կը փտանդուիմ, իրենց հարկ եղած զգուշացումը ըրած եմ, որ գրածներս դուրս չելլեն ու չելան: Իսկ ինչ կը վերաբերի ընկերներ ազատելու հարցին, միշտ եւ ամէն ատեն, եթէ ընկեր բառը դործածեմ, բնաւ չի մեկնաբանէա կուսակցականօրէն: Հազարաւոր կուսակցական ընկերներ կան, բայց իսկական հոգեկան ընկերներ շատ քիչ ունիմ ու խօսքս աւելի անոնց մասին է, որոնց հետ կ'ապուած եմ, անկախ կուսակցական հանգամանքէ: Եթէ ըսէի որ ընկերս Չերազը ազատելու պիտի երթամ, պիտի մեկնաբանէի՞ր որ դաշնակցական է, անոր համար:

Այժմ որոշ ըսեմ ինչ եմ վճռած:

Արտասահմանը դործիս չեկաւ: Գուցէ տարբեր ըլլար տպաւորութիւնս, փոխանակ Պարսկաստանի, Իրաքի (համեմատաբար լաւ) եւ Սուրիոյ, մի ուրիշ աւելի քաղաքակիրթ քրիստոնեայ պետութեան մէջ գտնէի ինքզինքս: Բայց թուրքերէն լեզուն, պարսկական բանտի տպաւորութիւնը (թէեւ մեզ հետ շատ քաղաքավար եղան), բանտարկեալներու վիճակը, պաշտօնեաներուն անոնց հասցուցած անարդան-

քը, կաշառակերութիւնը եւ զանազան երեւոյթներ (Քոջանի բանտը 15 օրուայ մէջ 8 հողի մեռան եւ 15 հողի ալ մեռնելու վրայ էինք մեր մեկնած ատենը) ինչպէս եւ շատ յիմար ձեւականութիւններ զիս վատ տպաւորեցին :

Այստեղ դէթ, մեծամասնութեան ապրելակերպը ոչինչով լաւ չէ Ռուսաստանէն. հոն աւելի լաւ պայմաններու մէջ է դիւղացին, նաեւ բանուորը, համեմատած անցած երկիրներուս եւ այդ հակառակ արտակարգ բէժիմին : Եթէ «քառթային» սիստեմը չըլլայ, անհատին քիչ մը աւելի ազատ թողուն դործելու, այսինքն ազատ ծախելու իր ունեցածը, իսկ գնողը կարողանայ գնել իր պէտքին չափ, շատ մը երկիրներէ լաւ է հոն : Պարսկաստան հանդիպեցայ շատ մը փախստական շայերու, անգործ, թշուառ, նպաստընկալի վիճակով, եթէ ինձ հարցնեն, կը նախընտրեմ ըլլալ Ռուսաստանի ամենավատ աքսորի մէջ՝ ու նպաստընկալի անունը վրաս չի կրել եւ անգործ ու թշուառ թափառիլ Պարսկաստան կամ այլուր :

Իրականութիւնը այն է որ, աքսորանքի մէջ, — դուցէ բացառութեամբ իմ դտնուած շրջանէս եւ մասամբ Արխանկէլ, — մնացած բոլոր տեղերուն մէջ աքսորուածները որեւէ գործ գտած կ'ապրին, ու անպայման նախընտրելի է, քաղաքական աքսորեալի պատուաւոր անունը կրել, քան նպաստընկալի անպատիւ անունը : Սակայն թողունք այս բոլորը, որ արտասահմանի մէջ շատ բան չափազանցուած ներկայացուցած են Ռուսաստանը, այդ ալ պէտք է ընդունիլ, առանց սակայն ժխտելու դաժան ուժի մը գոյութիւնը հոն :

Նիւթէս շեղեցայ : Ուրեմն կը վերադառնամ Պարսկաստան միջոցներ ստեղծելու համար վերադարձի : Եթէ յաջող անցայ՝ հետքս կը կորսնցնեմ, ուրիշ անունի մը տակ : Որեւէ գործով կ'ապրեմ, եթէ յարմարութիւն եղաւ քանի մը հոգու հետ հաշիւս կը մաքրեմ ու այն ատեն ես ալ թող մաքրուիմ :

Եթէ մատնութեամբ, սահմանին վրայ կամ քաղաքի մը մէջ բանտարկուեցայ, կարող է պատահիլ զնդակահարեն : Լաւագոյն պարագային հինգ տարի բանտ ու ըստ օրէնքի նորէն Սիպիլ՝ աքսոր :

Գնդակահարելու երբ բաժին իյնայ, ոչինչ ունիմ կորսնցնելիք, այս անիմատտ կեանքը ապրեք եմ կամ ոչ հոգս չէ : Բանտ գնեն, դրքերու մէջ կ'աշխատիմ մոռնալ ամէն բան եւ վիճակակից ընկերներուս հետ կ'անցընեմ օրերս : Այս բոլորը այնքան յստակ կը պատկերանան աչքիս : Հաւատքս այն է որ ձեռք չեմ անցնիր :

Այս բոլորէն կը պատկերացնես, որ, բաց է ի բաց դէպի մահ կ'երթամ : Ճշմարիտը կ'ուզե՞ս : Ապրիլ կ'ուզեմ ոչ թէ կեանքը վայելելու համար, այլ մարդ-ղազանին չարիքները փոխարինելու մտօք : Առանց խորհրդային որեւէ տօքումէնս ձեռք ձգելու պիտի չերթամ : Իսկ եթէ չի յաջողիմ, կայ հետեւեալ գործը :

Թեհրան, ընկերս Տիգր . Գույումճեանը, խանութի մը մէջ կը

ծառայէր: Տէրը ուզեց խանութքը ծախել, Տիգրանի անդործ մնալը անխուսափելի էր: Ունի կին եւ դաւակ մը, որոնք թշուառութեան պիտի մատնուին, քանի որ հազիւ հազ կ'ապրէին, ինչպէս այդ տեսայ երկու ամիս իրենց մօտ մնալով: Տիգրանը առաջարկեց խանութքը մի կերպ միասին վերցնել: Ո՛չ կարող էի ընդունիլ, եւ ոչ ալ մերժել, բայց անհրաժեշտ էր իրեն ի նպաստ բան մը ընել: Կիսատ խօսք մը տուի՝ առանց ծածկելու վերադարձի մտադրութիւնս, որուն բացարձակ հակառակ է ինքն ալ:

Նախկին կամաւոր ընկերներէս մէկը, որ այժմ Թաւրիզ դորդերու առուտուրով կը զբաղի եւ ներկայիս դործով Ամերիկա կը դառնուի, դեռ պարսկական բանար գտնուած ատենս, կնոջմէն կ'իմանայ դուրս գալստ սովիէտական դժոխքէն ու նամակ նամակի վրայ կը գրէ որ բոլոր պէտքերն հոգան եւ դործ մը սկսելու համար ալ դրամ տրամադրեն:

Մինչ այդ ձեռքս հասած դումարները բաւարար համարելով կը մերժէի, բայց Տիգրանի խնդրոյն վրայ 250 թուման խնդրեցի ու այժմ զիս խանութին ընկեր կը նկատէ, թէ եւ վճռական որեւէ խոստում չունի ինձմէ:

Պանութի տեղի արժէքը մէջի կահ-կարասիներով 900 թուման առնուեցաւ: Առեւտրական կեդրոն եւ ամենազլխաւոր փողոցի վրայ է ու մեկնած ատենս արդէն 1200 թուման առաջարկ ընող կար: Մեկնելէս քանի մը օր առաջ խանութքը յանձնուեցաւ Տիգրանին, բայց դատարկ, ձեռքը ընդամէնը 150 թուման մնաց: Պանութի նախկին տէրը խոստացած էր բաւական ապրանք տրամադրել ու շարթէ շարթ ծախուածի դրամը ստանալ: Տիգրանը յոյսը դրած էր որ հոս, ընկերներէս Յովսէփի վրայ ունեցած առնելիքս դանձելով, կ'օգնեմ իրեն անմիջապէս ու կապուելով իրեն կը շարունակենք դործը: Պարտատ հասած ատենս, հոն տուած հասցէիս նամակ դրած էր Յովսէփը, եւ ցաւ յայտնած էր որ, տանը եւ խանութի վարձքը միանուազ վճարելուն համար այժմ ի վիճակի չէ: Իսկ հոս գալէս յետոյ որեւէ խօսք բացած չեմ, սպասելով Եփրատէն ստանալիք հաշուեցուցակին, որուն դրած էի որ փութացնէ: Դուն ալ տես ու յիշեցուր իրեն:

Ուրեմն եթէ չի յաջողի եւ համոզուած չըլլամ սահմանը ապահով անցնելուս, պիտի մնամ Պարսկաստան եւ Տիգրանին ընկերանամ խանութի դործին մէջ: Պարսկաստանի ներկայ առեւտրական կացութիւնը շատ անմխիթար է, շնորհիւ կարգ մը օրէնքներու: Ամէն մարդ չի կարող ապրանք ներմուծել, կայ եւ դրամի անկումը:

Քանի որ դործ մը ընելու համար դրամ կ'առաջարկես, դրէ տեսնեմ ի՞նչքան կրնաս տրամադրել, որպէսզի Պարսկաստան մնամ ու այդ դործին ընկերանամ, այլապէս առ այժմ դրամի պէտք պիտի չունենամ: Հիմա քովս կայ 15 սուրիական թուղթ (3 Օսմ. Ռսիիէն քիչ պակաս): Եթէ Յովսէփին հետ հաշիւս կրցայ կարգադրել, իմ հաշուով

90 Ռուսական Ոսկի, որուն 10 հատը Պարսկաստանի ընկերներս արդէն առած են իրմէն: Ըստ իրեն 50 միայն պարտական է, Եփրատի հաշուեցուցակը ստանալէս յետոյ կը պարզուի:

Եթէ նոյնիսկ Յովսէփէն 40 ռուսական հնչուն առնեմ, 10ը եղբորս պարտքին կը յատկացնեմ, 10ը Պարսկաստան վերադարձի, 5ը Տիգրանի կնոջ եւ երախային նուէր, քանի որ երկու ամիս իրենց մօտ մնացի եւ բացի առձեռն ըրած ծախսերէս՝ ինձմէ դրամ չընդունեցին: Որով մնացածը զիս Ռուսաստան կը հասցնէ, ու հոն դրամի պէտք չի պիտի ունենամ, որեւէ դործ կ'ընեմ:

Այսքանով կը բաւականանամ, արդէն նամակներս երկար կըրկնութիւններ կը պարունակեն: Քեզի ղրկուած... անկապ նախադասութիւններով նամակը ինծի ղրկէ, եթէ վերապահումներ չունին մէջը, դուցէ մէջէն բան մը հանեմ. վ.ի գործէն դուրս գալը զիս կը մտահոգէ, ինչո՞ւ եւ ե՞րբ պատահած է, իմ փախուստիս ատենները գիտեմ որ անգործ չէր:



ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶ ԿԱՄԱՒՈՐԻ ՀԱԳՈՒՍՏՈՎ, ԵՐԵՒԱՆ, 1915



Եփրատին զրած եմ քու նամակիդ օրը, տես զինքը. թող հաշուեցուցակը փութացնէ : Իսկ դուն պատասխանէ նամակիս, հոս մինակ եմ, անգործ, առանց շրջանակի հոգիս շատ ու շատ կը նեղուի համեմատելով Պարսկաստանի :

Գրէ Վր.ին հետ տեսնուելուդ նպատակն ու արդիւնքը :

Պօլսէն ճիշդ հիմակ ստացայ Վահանէն նամակ մը : Պարսկաստանէն զրած երկար ու կատակներով լի նամակս չէ ստացեր, շատ կը ցաւիմ, քանի որ նման տրամադրութիւն եւ Մուսա քիչ անգամ կ'ուենամ :

Եղբայրս եւ ծանօթ հայրենակիցներ կը բարեւեն քեզ :

Հալէպ, 30 Յուլիս 1931.

Կեանքիս դադտնիքը կարելի է ըսել լուծուեցաւ :

Երէկ եղբորս թղթերու տրցակի մը մէջէն, Ձերի'ի զրած նամակները գտայ, կարդացի ու կուշտ մը լացի :

Այժմ աւելի քան երբէք, կը հասկնամ որ հոգեկան անգորրութիւնս կորսնցնելուս հիմնական պատճառը Վահանի կորուստն է, ու արտասահմանն ու միջավայրը, պայմանները՝ շատ երկրորդական դեր կը խաղան եղեր :

Ռուսաստան վերադառնալու ցանկութիւնս իր հոգեբանական պատճառը ունի եղեր՝ Ձերին հոն թողած եմ : Կա'մ կը փոխարինեմ վատերուն, կա'մ հոն կը թաղուիմ :

Յորդոր, խրատ անօգուտ է՝ չի փորձես : Միւս կողմէ խոհեմութիւնն ու զգուշութիւնը պիտի ունենամ միշտ, ու եթէ վստահ չըլլամ սահմանը յաջող կարենալ անցնելուս, պիտի մնամ Պարսկաստանն ու պիտի սպասեմ յարմար առիթի :

Վա...էն երեք օր առաջ նամակ առի, լաւ են :

Տաքէն ու մինակութենէ սարսափելի կը նեղուիմ : «Զօռ» տուած եմ կարգալու :

Կը ներփակեմ Ձերի'ի անուշիկ լակոնական ոճով ու նախադասութեամբ մէկ երկտողը, որ միեւնոյն ատեն իր բարձր հայրենասիրութիւնը ցոյց կու տայ : Այդ արդէն յուշերդ պիտի թարմացնէ, թէ եւ անսահման վիշտ պատճառելով :

Պետրոս

Հալէպ, 10 Օգոստոս 1931.

Միրելի...

Յուսամ նախորդ երկու նամակներս ալ ստացած կ'ըլլաս : Առաջինի պատասխանին կը սպասեմ արդէն, ու հաւանաբար այս նամակիս առաքումը քանի մը օր յետաձգեմ այդ նկատումով :

Տարակոյս չկայ, որ Վարդանոյշը ո'չ Վահանի, եւ ոչ ալ իմ

վերջին բանտարկութեան մասին որոշ բաներ դրած ըլլայ : Այդ նկատուածով ալ համառօտ պիտի դրեմ այդ մասին :

Վահանի առաջին բանտարկութիւնը պատահեցաւ իր ամուսնութենէն ուղիղ 15 օր յետոյ, ուղղակի Թիֆլիս փոխադրեցին, 1924 թուի Նոյեմբերի մէջ : Այդ օրերուն դեռ այնքան խիստ չէր, անմիջապէս դնացի Թիֆլիզ, ծանօթ կին մը ճարեցի եւ կարգադրեցի որ կանոնաւոր կերպով ճաշ տանէ եւ պարբերաբար ալ դրամ տայ, ու այդ բոլորը իմ անունով կ'ուղարկուէր փոխանակ Վարդանոյշին : Ըսի դեռ խիստ չէր ու բարակը չէինք մտածեր :

Ինը ամիս մնաց Թիֆլիսի Զեկան : Օրին մէկը 1925 Յուլիսի 8-ին ծանօթ կիւնը կը հեռազրէր որ Վահանին կ'աքսորեն քանի մը օրէն՝ տեսութեան երթանք : Նոյն օրը Վարդանոյշին ղրկեցի, յաջորդ առաւօտ ես ալ դնացի :

Հոն թոյլ տուին տեսնուելու Վահանին հետ : Պէտք եղածը պատրաստեցինք, հազուստ, ուտելիք, դրամ եւ քանի մը օր յետոյ ճամբու դրինք : Կայարանին մէջ թոյլ չտուին մօտենալու եւ հեռուէն քանի մը խօսք կրցանք փոխանակել : Շատ անտրամադիր եւ ընկճուած կ'երեւէր, եւ այդ հանգամանքը իմ տրամադրութիւնս աւելի փճացուց :

Յաջորդ օրը իսկ, 1925 Յուլիս 15-ին, վերադարձանք Ալէքս-պօլ եւ նոյն օրը ինձ բանտարկեցին : Երեւան փոխադրելով քանի մը ամիս քննութիւնները քաշքշեցին, թէ մաքսանենդ ապրանք եմ ստացեր, որ վիսաւորն է՝ Դարսի հետ մտացու տաւարի առուտուր ընելու պատրուակի տակ Պօլիս Վ. Քրմոյեանի հետ կապ կը պահեմ եղեր, ու իբր թէ դրամ ստանալով անկէ դաշնակցական նպատակներու կը գործածենք եղեր՝ ահա մեղադրանքնին :

Ի հարկէ ոչ մէկ տուեալ, փաստ չունէին : Մի հատիկ մարդ չկրցան դէմս հանել այդ բանը հաստատելու համար, բայց այդ պատճառ չէր որ չորս տարի բանտարկութեան վճիռ չտային :

Նոյն տարին, խորհրդայնացման Ե.երրորդ տարեդարձի առիթով, մէկ երրորդով, ուրեմն 16 ամիս ներում տուին, որով կը մընար 36 ամիս : Վճիռը տրուելէն յետոյ յաջողեցայ Ալէքս-պօլի բանտը փոխադրուիլ : Չանցած քանի մը ամիս՝ բանտի ամբողջ ներքին գործերու ղեկավարութիւնը ձեռքս առի : Գրադարանը փոշիի տակէն դուրս հանեցի, անգրագէտներու համար դասընթացքներ կազմակերպեցի, իմբազրեցի ամսական պատի թերթ, ստեղծեցի թատերական եւ մարմնամարզական խումբեր : Գիւղատնտեսական ծանօթութիւններու ճիւղ, առողջապահական բաժին, դատաստանական մարմին՝ որը բանտի մէջ կատարուած գողութիւն, ծեծ, հայհոյանք եթէ տեղի ունենար, յանցաւորները կը դատէր : Պատիժներն էին՝ օրինակ՝ անունը սեւ տախտակի վրայ գրել պատի թերթին մէջ, ներկայացումներէ զրկել, մաքրութեան վրայ աշխատցնել : Այլեւ բանտի վարչու-

Թեան վրայ իսկ որոշ հեղինակութիւն ձեռք բերի: Դիմումներով, զանազան միջոցներով յաջողեցայ արհեստանոցներ բանալ, կոչկա- կարանոց, սակերչանոց, խոզանակ շինող: Որով հնարաւոր եղաւ 20- 30ի մօտ բանտարկեալներու արհեստ սովորիլ, որոնց 2 օրը 3 օր կը հաշուուէր: Թէեւ ջնջին, բայց դրամ ալ պիտի տրուէր՝ եթէ օգուտ մնար: Նշանակուեցայ արհեստանոցի վարիչ: Բանտէն դուրս ըլլալով արհեստանոցը, բոլորովին հոն փոխադրուեցայ, հոն կը քնէի զիշերը, որպէսզի զօղութիւն չի պատահի: Հսկողութեան տակ չէի, միայն ի- րաւունք չունէի բացակայելու: Բայց տանը մօտիկ էր եւ յաճախ կա- րող էի երթալ: Ես ալ ժամանակս պարսպ չանցընելու համար կօչկա- կարութիւն կը սովորէի:

Դժբախտաբար երկար չի տեւեց այս, հազիւ երեք ամիս, երկ- րաչարժը բանտը քանդեց եւ բանտարկեալներուն մաս մը Թիֆլիս, մաս մը Երեւան փոխադրեցին: Ես մնացի ամենավերջը, արհեստանո- ցի կարասիներուն հետ փոխադրուեցայ Երեւան: Հոն նորէն ուղեցին արհեստանոցի վարիչ նշանակել՝ մերժեցի, նկատի ունենալով որ կ'օգտագործեն եւ օրերս լրանալուն՝ կարգ մը ներքին կանոններու համաձայն որ բաց պէտք է թողուն, չեն թողնէր: Բայց հետեւեցայ կօչկակարութեան՝ օգնելով միաժամանակ արհեստանոցի նոր վարի- չին՝ որը, կիսադրագէտ կոմունիստ մ'էր:

Նկատի ունենալով բանտի մէջ տարած իմ օգտակար աշխա- տանքը, եւ աշխատած օրերս ալ 2 օրը 3ով հաշուելով 1927 Մայիս 7-ին ազատեցին:

Վահանը ընդամէնը 6-7 ամիս արտորավայրի մէջ մնալով, մեզ ծանօթ մայրիկի՝ Տիկ. Շուչ. Տէր Գրիգորեանի ջանքերով եւ Սահակ Տէր Գարրիկեանի միջնորդութեամբ ազատուեցաւ եկաւ եւ միշտ ա- զատ քովս կու դար կ'երթար:

Վերադառնալով Ալէք-պօլ, Վահանի հետ ծրագրեցինք փոխա- դրուիլ Վրաստան՝ Սօխումի շրջանը եւ օրինակելի գիւղատնտեսական ձեռնարկով մը զբաղուիլ: Յոյս ունէինք Հայաստանէն հեռանալով ու անկիւն մը քաշուելով հանդիստ պիտի թողուն մեզ:

Այդ անցնող տարիներուն մէջ ծախսուածներէն դուրս, դեռ կը մնար 100 Ռուսական Ռսկեդրամ: Ամերիկա, ընկերներէս մէկուն դը- րեցի տոկոսով 500 տօլարի փոխառութիւն, երաշխիք տալով անցեալի ու ներկայի փոխադարձ վստահութիւնը: Սօխում դալու ուրիշ ցանկա- ցող ծանօթներ ալ կային: Եւ անգամ մարդ զնաց՝ հարկ եղած ծանօ- թութիւն եւ ուսումնասիրութիւն տեղւոյն վրայ կատարելու:

Դեռ Ամերիկայէն պատասխան չստացած, 1927 Յունիս 24ի գի- շերը անակնկալ կերպով Վահանին բանտարկեցին, տարին Երեւան, ութ օր յետոյ ալ փոխադրեցին Թիֆլիս: Նորէն ստիպուեցայ Թիֆլիս երթալ, նոյն ծանօթ կնոջ խնդրել որ ճաշ տանի կրկին, որ այնքան պատրաստակամութեամբ ամէն նեղութիւն յանձն կ'առնէր, որուն այնքան երախտապարտ ենք բոլորս:

Ալէքս-պօլ վերադառնալով քաշուած կեանք մը կ'ապրէի եւ կը զգուշանայի: Վահանի բանտարկութենէն յետոյ փոխանակ սենեակը, յաճախ տանիքի ձեղունին տակ կը քնէի գիշերները: Բանտարկութիւնները ստէպ կը կատարուէին, բայց կը խորհէի որ բանտէն նոր ազատած եմ, գուցէ ինձ չմօտենան:

Օգոստոսի 5-ին (1927), դաշնակցական անուան տակ սկսան զանգուածային բանտարկութիւններ, ասոնց թիւը հարիւրներու կը հասնէր, սկսայ աւելի զգուշանալ:

Վարդանոյշը կը պնդէր որ հեռանամ, ես կը յամառէի, պատճառաբանելով որ նոր ազատուած եմ, յետոյ, Վահանը բանտարկուած, իրենց ո՛ւր լքեմ հեռանամ, զգոյշ էի եւ եթէ փոքր կասկածի մը տեղի տային՝ պիտի փախչէի:

Դեռ Վահանը բանտարկուած չէր՝ հետեւեալ ղէպը պատահեցաւ: Օր մը գործով գիւղ գնացեր էի, երկու երիտասարդ տղաներ եկած ինձ հարցուցած էին: Խորհեցայ որ նախկին սկաւտ տղաներէն կ'ըլլան, որոնք լսելով ազատուիլս տեսութեան եկած կ'ըլլան: Երկու օր հազիւ անցած էր, մեր տղաներու խանութը կեցած էի, մէկ ալ Անգրանիկ անունով տղայ մը, որ նախապէս ծանօթ էր ներս եկաւ, ու կամաց մը ըսաւ «Պարոն Պ... (փոխանակ ընկեր ըսելու) քեզ հետ առանձին կ'ուզեմ խօսիլ»: Ըսի կրնաս հոս խօսիլ: Ո՛չ, ըսաւ, «գաղտնիք է ըսելիքս»: Ոչինչ, կը տեսնես որ օտար մարդ չկայ, ի՞նչ գաղտնիք կրնայ ըլլալ: Գիտէի որ կոմերիտական է (կոմսոմոլ), հետը վէճ անգամ ունեցած էի. երբ Ալէքս-պօլ բանտն էի, ինքն ալ հոն կը պաշտօնավարէր:

Մէկ կողմ քաշուեցանք ու սկսաւ. «Մենք գաղտնի հակապօլշեւիկեան կազմակերպութիւն մը ունինք, մօտ 200 անդամներով՝ բոլորն ալ իմ հասակի տղաներ եւ մեծ մասամբ նախկին որբեր: Անցեալ օր ունեցանք գաղտնի ներկայացրական ժողով, հոն միաձայնութեամբ որոշուեցաւ որ քեզի կամ Ձերազին դիմենք մեր ղեկավարութիւնը ստանձնելու եւ ուղղութիւն տալու, քանի որ մենք անփորձ ենք: Յատկապէս քու մասիդ շեշտուեցաւ՝ նկատի ունենալով Ձերազի ջղային ըլլալը: Յետոյ, մեր կազմակերպութիւնը դաշնակցական թեքում պիտի ունենայ, թէեւ մեզի չի յաջողուել ցարդ որեւէ կապ հաստատել դաշնակցականներու հետ»:

Խորհեցայ որ Ձեկայի կողմէ կազմակերպուած խաղ մըն է, ոչ միայն մերժեցի, այլեւ իրեն խորհուրդ տուի որ այդպիսի յիմար ձեռնարկներէ ետ կենան եւ լծուին երկրի շինարարական աշխատանքին: Կառավարութիւնը պաշտպանեցի: Այս տղան կրակ կտրեցաւ, այնպիսի փաստեր կը բերէր որ հերքել չէի կարող, բայց կը շարունակէի ըսել որ այդ բոլորը ժամանակի ընթացքին կ'ուղղուին: Կ'ըսէ. «Ինչո՞ւ անմեղ տեղը Վահանին ու քեզ այնքան չարչարեցին»: Երբ ըսի թիւրիմացութիւն էր, սա աւելի կատղեցաւ, թէ, «դուն իմ վրայ կը

կասկածիս որպէս կոմսոմոլ ու ճիշդը չես ըսէր: Եւ աւելցուց, իմ եւ հարիւրաւոր երիտասարդներուն կոմսոմոլական շարքերը մտնալը ձեւակերպութիւն է, դրութիւննիս փրկելու համար, կարենալ ուսանելու, պաշտօն ճարելու, հալածանքէ զերծ մնալու, եւայլն»: Ըսի ահա վերջին խօսքս՝ իմ գործը չէ այդպիսի բան. ու տղան սպանալիք թափելով որ ապագայ իշխանութիւնը պատասխանատուութեան պիտի կանչէ ինձ ու դեռ ինչե՛ր ըսելով վերջապէս գնաց:

Վահանին լուր դրկեցի որ զգուշանայ: Յաջորդ օրն իսկ անոր գնացեր էին: Զղայնացած, առանց բարեւնին առնելու դուրս ելած էր՝ ու վերադարձած՝ երբ արդէն անոնք գնացած են եղեր:

Յետոյ պարզուեցաւ որ տղան ճշմարիտը կը խօսէր, փախստական ատենս լսեցի որ այդ կազմակերպութեան անդամներէն շատեր բանտարկուած, աքսորուած են:

\*  
\*\*

Այժմ, ընթերցողին ներողամտութիւնը կը խնդրենք այն փորձութեան համար, որուն կ'ենթարկուի սոյն հատորին հրատարակիչը տալով վերելի ճշգրիտ պատմութիւնը գրող անձին արկածալի կեանքին մէկ դրուագը՝ փախուստը:

\*  
\*\*

Քանի մը օրեր էջօն (Նարդուհի Զէննէեան) գնացեր էր Պօլիկոն, Վարդանոյշին քով, որ մինակը շատ չնեղուի:

Տունը մինակս էի: Երեւանէն ընկերներէս մէկը հիւր եկած էր, եւ ամէն երեկոյ ձեղունին տակ քնելու գացած ատենս կ'ըսէի. «Պարզե՛ւ, եթէ դիշերը դան ինձ չի գտնեն, քեզի կը տանին իմ տեղս»:

Եւ իսկապէս, 1927 Օգոստոս 9-ի գիշերը կու գան ինձ բանտարկելու՝ չեն գտներ: Ընկերոջս կը նեղեն, կ'ըսէ չեմ գիտէր ուր գնաց երեկոյին: Կ'ըսեն՝ «Երեկոյեան ժամը 6-ին միասին դուրս ելաք, գնացիք այնինչ քաղցրեղճնի խանութը, հոն պաղպաղակ կերաք, անկէ գնացիք այսինչ տեղը, յետոյ այնինչ խանութէն պտուղ առիք, մութ էր, վերադարձաք տուն, այս բոլորը մեզ յայտնի է»: Ընկերս կ'ըսէ, «ճիշդ է այդ բոլորը, բայց եկանք թէյ խմեցինք, Պ... նորէն դուրս ելաւ, ես պռոկեցայ եւ դուռն ալ բաց թողի որ եթէ զայ զիս շարթնցնէ, եւ ինչպէս ալ դուք եկաք դուռը բաց գտաք»:

Կառք կը նստին, ընկերոջս ալ կ'առնեն կ'երթան Պօլիկոն՝ հոն գտնելու յոյսով: Չեռնունայն կը վերադառնան, ընկերոջմէս ստորադրութիւն կ'առնեն որ առաւօտեան Չեկա ներկայանայ, տունը հսկութեան տակ առնելով կ'երթան:

Առաւօտ է, արեւը ծագեր էր, դեռ բանէ մը լուր չունիմ ու վերը կը քնանամ: Մէկ ալ տան տէրս, Մուկուճ Զանը, զիս կը մշտէ «Պրն».

Պեճո՞ւ, տունը տակն ու վրայ էրին, Պարզեւին տարան, քեզ փնտռեն կը», ըսաւ, անկողինս գրկեց վար նետեց ու փախաւ:

է՛, «պիտմիրլա» ըսի իջայ վար, Հազայ սկառուտական կարճ Հա-  
դուստներս, «քէփս» քաշեցի, թէւս սոթթեցի, 100 ուլբլի դրամ առի,  
էրայ բակի վրայի պատշգամբ: Մուկուճ ջանի մօրը՝ պառաին գրկե-  
ցի, Կիւրբինցիերէն քիչ մը կատակներ, խենդութիւններ ըրի: Պառաւն  
ու տղան լեղաճաք եղած «գօռք» դրեր են որ շուտ Հեռանամ ու մէկ  
կողմէն կու լան « — Քոռանա՛մ, Պեճո՛ւ ջան, քոռանամ, Ս. Աստուա-  
ծածինը քեօմէկ եղնի քեզ» ըսելով:

Յատկեցի տանիքը, իջայ քաղաքի կոյուղին, որ ճիշդ մեր տան  
տակէն կ'անցնի ու այդ շարքին վրայ գտնուած տուներուն արտաք-  
նոցները ճիշդ ատոր վրայ են շինուած: Լայն է, բարձր, կանգնած  
կարելի է քալել մինչեւ քաղաքէն դուրս գալը: Զուրբերու մէջէն չա՛փ  
չա՛փ կը քալեմ ամմա, ես ինձի կ'ըսեմ, Հիմակ վերէն «թէփէլա» տի...  
եւ մինչեւ «թոփուզս» մէկ պիտի իջնայ:

Վերջապէս սպահով, գնացի ծանօթ տուն մը, լուր գրկեցի որ  
Վարդանոյշը գայ: Էջօն եկաւ: Քանի մը յանձնարարութիւններ ըրի,  
էրայ փողոց, գնացի քաղաքին ծայրը ուրիշ աւելի սպահով տեղ: Մէ-  
կուն 40 ոսկի տուած էի, կը բացակայէր: Սպասեցի անոր վերադար-  
ձին: Չեմ գիտեր ո՛ր տեղէն՝ Հինդ փախստական Սասունցիներ, լսե-  
լով որ փախած եմ, լուր գրկած են որ անմիջապէս երթամ իրենց մօտ,  
որ միասին անցնինք Պարսկաստան: Տեսայ գիրենք: Բայց այդ դրամի  
պատճառաւ չկրցայ: Վերջապէս մարդս եկաւ, բայց 20 ոսկի միայն  
կրցի առնել, միւսը խոստացաւ Էջոյին տալ: Դրամը վերածեցի սօ-  
լարի եւ 20 անդլիական փառնտի, մօտ 500 տօլար, եւ կարեցի կօշի-  
կիս տակ, որ եթէ բռնուիմ՝ դրամը չի գրաւեն: Ծրագրած էի լեռնա-  
յին Ղարապաղով, Զանկեղուրով անցնիլ Մեղրի գիւղը, Հոն վստահելի  
ծանօթներ ունէի, անոնց միջոցաւ սահմանը կ'անցնիմ:

Փափստական գնացի Տիլիջան, անկէ՛ Իջեւան, ուր 3-4 տուն  
Զմշկածազցիներ կային, 4-5 օր Հոն մնացի եւ ուրիշ անունով անցա-  
ղիք մը ձեռք ձգեցի: Անցայ Ադստաֆա կայարանը, նստայ երկաթու-  
ղի, գնացի Եւլախ, անկէ՛ օթոմոպիլով Շուշի, ապա Գորիս, Ղափան,  
Մեղրի: Բարեկամներս սիրով ընդունեցին զիս: Անդրանիկի ժամա-  
նակ, զինուոր, այդ գիւղը քանի մը ամիս մնացեր էի: Բացատրեցի որ  
փախստական եմ, խոստացան լաւ ծանօթի մը միջոցաւ «Արագ»ը ան-  
ջընել:

Բարեկամներէս մէկը գրկեցի Ալէք-պօլ, որ թէ՛ պարսկական  
անցաղիքս բերնն, թէ՛ Հագուստ եւ 100 տօլար դրամ: Բայց ըստ մեր  
պայմանին նախապէս Հեռագրեցի Վարդանոյշին՝ բարեկամիս կնոջ  
ստորադրութեամբ: Բարեկամս վերադարձաւ 5-6 օրէն, ուղածներս  
Հետը եւ նոյն գիշերը անոնց յանձնարարած անձին Հետ ճամբու ին-  
կանք դէպի պարսկական սահման: Յորեկը անցուցինք լեռներու մէջ,

Արագէն ոչ այնքան հեռու: Գիշեր մըն ալ այդիներուն մէջ, յաջորդ առաւօտ կանուխ Արագի ափին ենք: Ես բարձրացայ լեռան կէսը եւ հոն նստայ: Մարդը սկսաւ Պարսիկներու հետ խօսիլ, որ երեկոյն տիկերը (լաստ) բերեն զիս անցընելու միւս կողմը: Խօսակցութիւնը բոլորը կը լսէի, գործը յաջող կ'երթար եւ կասկածելու բնաւ առիթ չտուաւ:

Սակայն իրականութեան մէջ այս սրիկան Չեկայի պաշտօնական վազանի լրտեսն է եղեր, եւ առաջուց ամէն բան լուր տուած ու ծրագրած են զիս թակարդը ձգել: Մարդը եկաւ քովս, ուղեց համոզել որ իջնամ Արագի ափը, թա՛նուտներուն մէջ պահուրտիմ, չի համաձայնեցայ, աւելի վեր բարձրանալով լաւ տեղ մը նստայ, ուրիշ կարելի է տեսնել ճանապարհէն անցնող-դարձողը եւ պարսկական մասն ալ՝ բաւական տարածութեամբ տեղ: Արեւը մարը հազիւ մտեր էր, եկաւ, ըսաւ վար իջիր, պատրաստուիր, գուցէ չուտով Պարսիկները դան: Բոլոր օրը արեւուն տակ ծարաւ վառած էի, թէեւ հսկայ Արագը առջեւէս կ'անցնէր: Իջայ ափը. իրերս տեղաւորեցի, չուրջս կը նայէի աւելի յարմար պահուրտելու տեղ մը ընտրելու մտօք, իսկ առաջնորդս թէ «ես դնամ չըջանները հետագօտեմ եւ հսկեմ որ յանկարծ գորք, բան չգայ»: Հազիւ անհետացած էր ժայռերուն ետեւ՝ երբ մացաներու մէջէն 5-10 քայլ հեռաւորութեան վրայ 6-7 ուսս զինուորներով պաշարուած գոտայ զինքս, հրացանները պատրաստ, առջեւս Արագը, ետիս սեպածեւ հսկայ ժայռեր եւ չորս կողմս զինուոր: Փախչիլ անհնարին: Առանց պաղարիւնութիւնս կորսնցնելու, իբր թէ սովորական ճամբորդ եմ ու եկած եմ ջուր խմելու, ապա Ղափանի հանքերը երթալու: Այդպէս ալ պատասխանեցի:

Չեմ գիտեր ինչո՛ւ, միայն զրպաններէս մէկը պատահաբար ձեռք խոթեցին ու անկէ առին 20 տօլար եւ Գրիգոր Շուշանեան անունով անցազիրը, մնացածը երեւի պահեցին պահականոցի պետերուն համար:

Առջեւին ձգած ճամբու ինկանք, 3 հեծեալ եւս աւելցած էին, 200 քայլի վրայ ուրիշ պաշտօնական հեծեալ մարդոց հանդիպեցանք՝ չըջանի Չեկային վարիչը եւ սահմանապահ զօրքերու պետը:

Քովս կար 15 հատ ուսական 5 ուրբիանոց ոսկեղբամ, պէտք էր կերպով մը անյայտացնել, թէ՛ ձեռքերնին չտալու որ ինձ չպիտի վերադարձնէին, եւ թէ կարող էին զիս մեղադրել երկրէն ոսկի դուրս տանելու մէջ՝ որ ծանրակշիռ յանցանք կը նկատուէր: Մարաւս պատրուակեցի, չձգեցին ջուրին մօտենալ, ըսին ճանապարհին աղբիւր կայ, որ Արագի ջուրէն նախընտրելի է: Եկած ատենս առուի հանդիպած էի եւ գիտէի որ նոյն առուէն ալ պիտի անցնինք, մտադրեցի ամէն գնով հոն ջուր խմել ու դրամներս ձգել, ուստի նախապէս զանոնք ափիս մէջ առի ու պառկեցայ ջուր խմելու ու ձգեցի առուն:

Կը մնար պարսկական անցադիրս, որ իմ իսկական անունովս էր: Չեմ գիտեր այն ատեն ի՞նչ խորհելով կ'ուզէի այդ ալ անյայտացնել ու յաջողեցայ ճամբան ձգել, բայց շատ հեռու չլրցի նետել: Կը խորհէի առտուն կանուխ գիւղացիներ կ'անցնին կ'առնեն ու կը կորսուի, բայց յաջորդ օրը զինուորները զայն բերին:

Մինչեւ պահակատուն 3-4 քիլոմետր պիտի քալէինք, քովս մնաց 5 բուրլի սուկդրամ դրպանիս անկիւնը կարուած: Խորհելով որ եթէ դռնեն խիստ պիտի խուզարկեն՝ մնացած 100 տոլարն ալ դուրս հանեն: Մի կերպ յաջողեցայ կարը քակել ու երբ պահակատունէն 50 քայլի վրայ էինք, բթամատիս ղնելով մէկիկ-մէկիկ օդին մէջ թռցուցի: Վրաս խիստ խուզարկեցին, 100 տոլարը չգտան: Կօշիկներս այս այն կողմ դարձուցին բնաւ չկասկածեցան: Արձանագրութիւն կազմեցին եւ այդ գիշեր անուրջներու մէջ անցուցի, առանց գիտնալու թէ քնացած եմ կամ արթուն:

Նման պարագաներու մէջ ռուս զինուորներու վերաբերմունքը շատ քաղաքավար է, ընկեր կամ քաղաքացի կը կոչեն: Լուսացաւ: Հաց՝ թէյ: Կէսօրին՝ իրենց ճաշէն՝ ճաշ:

Երեկոյեան 3 ձիու բեռ հրացան անցուցին, հաւաքուած ինձ առաջնորդ լրտեսի գիւղէն, նոյն սրիկայի մատնութեամբ գիւղացիներէն խլուած: Յերեկը հոն անցընելով, գիշերը ժամը 11-ին 6 զինուորով զիս փոխադրեցին Մեղրի: Բայց մինչեւ հոն քթերնուն բերի, ամէն անգամ պատրուակ մը, քալած ատենս յանկարծ կը նստէի, այդպիսով պարտադրեցի որ հագուստներուս ծրարն ալ իրենք վերցնեն: Մեցրի ենք՝ տարին կեղտոտ թոնրատուն մը ձգեցին, յոգնած՝ առանց շուրջս դիտելու քնացայ: Առաւօտեան տեսայ որ հաւնոցի մը մէջ եմ, պահանջեցի որ մաքուր սենեակ տան, բարձրացուցած սֆանտալիս վրայ Չեկայի վարիչը եկաւ եւ մաքուր սենեակ մը տարաւ, ուր թախտ մըն ալ կար: Եղածը մասնաւոր տուն մ'էր բանտի վերածուած: Բանտարկուած կային չըջանի հայ գիւղացիներէն, որոնցմէ զէնք կը պահանջէին եւ 1-2 մաքսանենդ թուրքեր, բայց այս վերջինները բոլորն ալ զատ տեղ կը պահէին: Ես բոլորովին առանձին էի:

Քննութեան տարին: Բարեկամներուս օժանդակութիւնը ուրացայ: Բայց վերադարձիս, սենեակիս կողքը խորհրդաւոր շշուկներ առի, միջնորմի բարձրութեան վրայ ծակ մը կար բացուած կողքի սենեակը նայող, թախտի օգնութեամբ բարձրացայ եւ գարմանքով տեսայ որ բարեկամս է հոն, կռնակի վրայ պառկած, մահու չափ տխուր: Չայն չէի կրնար հանել, պահակը կար, կերպով մը ուշադրութիւնը դրաւել տուի, մօտեցաւ ծակին, հասկցուցի որ, իր ցոյց տուած օժանդակութիւնը քննութեան ժամանակ ժխտած եմ: Ըսածս՝ անօգուտ է: Քանի որ սրիկան օրը օրին յայտնած է կատարուածը, Ալէքս-պօլ երթալը, եւայլն: Յուսադրեցի իրեն որ բաց կը թողուն, որ Ռուսաստանի 10րդ տարեդարձի առթիւ իրեն կը ներեն որպէս գիւղացի՝ որ ընդամէնը ամիս ու կէս մնացած է այդ օրուան, եւայլն:



Իմ պատճառաւ (թէ եւ իր յիմարութեամբ) բարեկամիս բանտարկութիւնը սարսափելի ազդեց վրաս, մինչ այդ շատ դուարթ էի, բանտարկեալները կը զարմանային: Բարեբախտաբար երկու օր անց անոք ազատեցին երաշխաւորութեամբ: Այժմ փախչելու մասին կը մտածէի: Հարկ եղած ուսումնասիրութիւնները կատարեցի, բացի դուռէն ուրիշ ելք չկար: Դուռ՝ հաստ չղթայով մը, իր շրջանակին վրայ ամրացուած օղակին միացնելով կը կղպէին: Իսկ դրան վրայ ամրացուած չղթային ծայրը դրան ետեւ ծռուած հաստատուած էր: Բաւական մեծ եւ հաստ դամ մը ձեռք ձգեցի ու սկսայ չղթային ծռուած մասին տակը փորել: Դուռը հաստ կաղնի փայտէ էր, հարկ եղաւ 5 օր շատ զոռչ ու տաղտկալի մկան աշխատանք մը կատարել: Շղթային ծռուածքին մի մասը յաջողեցայ կտորել, բայց դեռ 3-4 օրէն մնացեալը հազիւ գլուխ գար: Վեցեր՛որդ օրը կէսօրին խեղճ գիւղացի մը բերին, վախեցած, սմբած: Հրացան կ'ուզէն իրմէն: Կ'ըսէ չունիմ: Քաջալերեցի իրեն, ըսի թէ ունիս ալ, չունիմ ըսէ, ոչինչ չեն կրնար ընել քեզի: Հարցուցի դանակ ունի՞ս, տուր պահեմ, վրաս գտնեն՝ վատ է: Բախտէս խոշորկէկ գմելի մը ունէր, ուրախութեանէս քիչ մնար խենթենայի, ձեռքէն առի, իրեն իմ տեղս պառկեցուցի, ըսի յոգնած կ'ըլլաս՝ քնացիր: Բայց մարդուն աչքերը քուն չէր գար: Պատին դարձնել տուի որ իմ աշխատանքս չնկատէ: Բացի այդ՝ եթէ դրան ետեւը անցնէի, այնքան ալ ինչ ընելս չէր նկատուէր, քանի մը վայրկեանի մէջ ամէն բան պատրաստ էր:

Այժմ մտահոգութիւնս էր որ, եթէ այս գիւղացին շարունակ ինձ մօտ պահեն, գործս կը խանդարուի, սկսայ խորհիլ թէ ի՞նչ ձեւով հեռացնել տամ: Բարեբախտաբար քանի մը ժամ յետոյ եկան տարին ու բաց թողին: Մինչ այդ մարդուն լաւ մը բացատրեցի որ այսինչ ճանապարհի վրայ գտնուած առուին, կամուրջին եզերքը քսակով դրամ ձգած եմ, եթէ կրցար գտնալ հալալ ըլլայ քեզ, պայմանաւ որ դրամին կէսը բարեկամներուս Վաչեան Սմբատին կամ Մատթէոսին տաս: Լսած էի որ շրջանի անտառներուն մէջ փախստականներ կային, մարդս լաւ մը հարցաքննեցի, հաստատեց եւ լրացուցի տեղեկութիւններ տուաւ:

Ա՛խ Վ... ջան, եթէ գիտնաս ձեռնարկովս ի՛նչպէս ոգեւորուած էի, եւ երեւակայութիւնս ի՛նչ սխրագործութիւններ կ'ընէր: Եթէ յաջողէր փախուստս, փախստականներուս գտնալ հեշտ պիտի ըլլար, որոնցմէ մէկը քահանայ էր ըստ լսածիս: Հրացան, փամփուշտ ինչքան ըսես պահուած կայ գիւղացիներու քով ու շատ գիւրբին էր գիտուիլ: Յաջողութեան պարագային մտադիր էի, ոչ միայն ինձ մատնող լըրտեսին սպաննել, այլ իր տունը մոխիրի վերածել: Այդ ինձ հնարաւոր էր, շրջանը ինձ գիտէին որպէս Անդրանիկի գիտուոր, բոլոր անոնց ինքնապաշտպանութեան կռիւներուն մասնակցած էի մեծ անձնութեամբ ու զնահատուած իրրեւ ազգանուէր մարտիկ. տաճկահայ

ըլլալս ալ բաւական էր, այդ շրջանի կառավարական պաշտօնեաներուն սարսափի մէջ պահելու: Եթէ յաջողէի փախչիլ՝ թերեւս վարժուեալս փոխուէր, բայց այդ բոլորէն պէտք էր իմ տեղս ըլլար որեւէ մէկը՝ այս երազներէն հեռու պահելու համար ինքզինքը: Այնպէս լեռնե՛ր, անտառներ կան որ՝ եթէ հազարաւոր զօրք դար ոչինչ չէր կրնար ընել:

Գործը պատրաստ էր, նոյն գիշեր փախչելու փորձ պիտի ընէի: Ինձ հարկաւոր էր 50 սանթիմ երկարութեամբ թել մը, որպէսզի շրջաթափ ծայրին կապէի, փոխանակ մէկէն ձգելու որ դրան զարնուելով ձայն հանէ, եւ զինուորը արթննայ: Վերջապէս պարկի փոքր կտոր մը ձեռքս անցաւ, քանի մը թել հանելով հիւսեցի, այդ ալ եղաւ: Գիշերը լուսնակ է, ժամացոյց ունիմ, ժամը 1-ին լուսինը կ'անհետի, ժամը 2-ին պէտք է դուրս գամ:

Սենեակիս առջեւ նեղ բակ մը կ'երկարի դէպի դուրսի դուռը, բակը փողոցէն կիսապատով մը կը բաժանուի, այնքան բարձր չէ, լաւ ոտտում մը՝ կը բարձրանամ, ինքնավստահ եմ: Բակի լայնքը 2 մետր կայ: Զինուորը ճիշդ դրանս դէմը կիսապատին կը թնամ թախտին վերայ՝ կ'երկնայ հրացանը գրկած: Նախապէս ուսումնասիրեցի որ զինուորներէն ոմանք կը քնանան, բայց ի՞նչ քուն! Բաւական էր ինքզինքս մէկ մը փողոց նետել, զինուորը արթննար ալ բան չէր կարող, ծուռ ու մուռ փողոցներուն ծանօթ էի, կը բարձրանայի գիւղի կըրնակի սարը:

Երեկոյ եղաւ, պառկեցայ: Միտքս հազարումէկ ծրագրերներ կ'որոճար, հագիւլ թէ քնացայ: Ժամը կէս գիշերին ելայ, պատուհանէն տեսայ զինուորը կռնակի վրայ հրացանը գիրկը դեռ կը շարժի: Նորէն տեղս անցայ. 2-ին քառորդ կար ելայ, լամպը գեռ կը վառուի. կամաց մը վար առի, պատուհանէն լոյսը ձգեցի զինուորի դէմքին՝ կը մրափէր: Ծուռ մը պատրաստուեցայ, կօշիկներս՝ ամենաթանկագին իրերս, հանեցի՝ դատիովս մէջքիս կապեցի: Նախապէս չորցուցած հացը գրպաններս լեցուցի. դուլպանե՛րս հազայ միայն՝ որ ոտքիս ձայնը չելլէ, շնչակապ մօտեցայ պատուհանին, ահանջ դրի, ոչ մի ձայն ու շարժում: Մօտեցայ դրան, լամպի լոյսով, չուանը կապեցի դրան շրջաթափն ա՛յն ծայրին, որ ներսէն ծուռած է, ուղղեցի քիչ մը, չուանի ծայրը ձեռքս պահելով շրջան վար կախեցի, սկսայ կամաց-կամաց դուռը բանալ, բայց ծխնիններուն ճրզճի ձայնը ահաւոր էր, դուռը վեր-վար ընէին անօդուտ եղաւ, միզեցի ծխնիններուն վրայ, դուռը գլուխ դուրս հանելու չափ բաց է արդէն, ո՛ր շար բախտ զինուորն սկսաւ շարժիլ. դուռը շուտով գոցեցի, բայց շրջան մնաց կախուած:

Քնաթաթախ զինուորը ձեռքը տարաւ կղպանքին, շօշափեց տեսաւ տեղն է, կախուած շրջան ուշադրութիւնը չզրաւեց, երեք քայլ հեռանալով սկսաւ միզել: Ես ալ այդ առիթէն օգտուելով շուտ մը շրջան կրցածիս չափ իր տեղը գետեղելէ վերջ, անցայ տեղս երկըն-

ցայ՝ իբր թէ քնած եմ : Զինուորը գլուխը պատուհանին դէմ լաւ մը գննեց, տեսաւ չեմ շարժիր, գնաց տեղը նստաւ, բայց էլ չքնացաւ :

Լուսացաւ : Հերթապահը փոխուեցաւ, բայց իրեն փոխարինողին բաներ մը ըսաւ, կողմս նայեցան, խնդացին, կը նշանակէ բան մը նկատած էր, կը սպասէի որ գան դուռը գննեն, ոչ ոք չհետաքրքրուեցաւ, ու օրը այդպէս անցաւ :

Այդ օրուայ պահակը գիշերը շուն մը բերած էր՝ անկարելի էր փորձ կատարել : Յաջորդ օրը, բանտարկեալներու մէջ դրամի գողութեան դէպք մը պատահեցաւ : բաւական մեծ գումարի : Թէեւ իրենց հետ կապ չունէի, բայց մտածեցի կարող են ինձ ալ խուզարկել, խորհելով որ դրամը պատուհանէն իմ խուցը նետած կ'ըլլան : Այդ մտքը, քովիս 100 տոլարէն 50ը սենեակին մէջ պահեցի : Կէսօրին ինձի ճաշ բերին, դուռը բաց-զոց ընող զինուորին ձեռքը մնաց մեր ծանօթ չըդ-թան : Սկսաւ քննութեան : Ես առաջուց խորհած էի ու փորած-տաշած տեղերս սեղցուցած, բնաւ յայտնի չէր որ նոր տաշուած է : Նոր չլթայ բերելու գացին, չգտան եւ այդպէս մնաց : Երեկոյին արտաքնոց տարին զիս (գլուխը եղբրքը կը տանին), վերադարձիս տեսայ որ, բանտարկեալները տարած են իմ սենեակս եւ իմ մահճակալը դրած են անոնց տեղը : Գործը ձախողած էր : 50 տոլարն ալ կորսուած : Երկու օր յետոյ զիս պիտի փոխադրէին Երեւան :

Բարեկամներս երբեմն ճաշ եւ պտուղ կը բերէին, մանր աղ խնդրեցի : Եթէ փոշի աղ ունենայի, մտադիր էի ճանապարհին եթէ յարմարութիւն եղաւ եւ քիչ զինուոր ուղեկցին, յանկարծ աչքերնուն աղ նետել, մէկուն հրացանը խլել ու փախչիլ : Սակայն ձի նստած մինչեւ Օրտուկատ եկանք, անկէ Զուլֆա՝ կառքով, հոն արդէն գնացքը պիտի նստէինք, հետեւաբար ոչ մի առիթ չի ներկայացաւ :

Զուլֆա ինձ խոր վիրապ մը ձգեցին (վառօղի նախկին պահեստ գետնի տակ) : Հակառակեցայ. քիչ մնաց դուռը կոտրէի, տարին փոքրիկ պահեստ մը եւ տեղ տուին այնտեղ, յոյս յայտնելով որ հանգիստ կը մնամ եւ փախելու փորձ չեմ ըներ, գլուշացնելով որ երկու պահակ պիտի կենայ եւ կարող են խփել : Բայց միեւնոյն ատեն խոշոր սայլ մը տակառներ, կոտրած թնդանօթի զանազան մասեր, անիւներ, դուրսի կողմէ դրան առջեւ շարեցին : Խնդալէն մարեր եմ : Մտածեցի ասոնց խաղ մը խաղալ : Շարեցին լմնցան. հազիւ քանի մը քայլ հեռացեր էին՝ դուռը ոյժով ձեծեցի, եկան, ըսի թէյ կ'ուղեմ : Երեւակայէ ասոնց բարկութիւնը, բայց պարտաւոր են տալ, այդ բոլորը քանդեցին, ինձի թէյ բերին ու նորէն շարեցին, ուսերէն «եպութ ֆայմաթ»ով միտսին :

Տարին Երեւան, Չեկան : Հոն տեղ չկար, փոխադրեցին բանտ : Հոն ալ քաղաքական բաժինը լեցուն էր, տեղաւորեցին կանանց բաժինը՝ նոյնպէս լիքը դաշնակցականներով : Օգոստոսի մէջ 700 հողի բանտարկած էին :

Երեք ամիս առաջ բանտէն ազատուած էի, պաշտօնեաները ծա-  
նօթ էին եւ ինձ հետ սիրով, ինչպէս եւ քրէական բաժանմունքի բան-  
տարկեալներէն շատեր: Ալէք-պօլցի վստահելի ծանօթ տղաներ կային  
այդ բաժինը, որոնք դուրս՝ աշխատանքի կ'երթային: Արտաքնոցի  
պատուհանէն յարաբերութեան մտայ հետերնին ու կանոնաւոր կեր-  
պով նամակ կ'ուղարկէի դուրս, ինչպէս քովս մնացած 50 տօլարը՝  
տուի, տարին: Էջօն եկաւ, անկողին բերաւ: Յետոյ ալ, կօշիկներս  
ու աւելորդ հագուստներս ղրկեցի, բոլոր այս բաները յաջող անցան:  
Ընկերներ շատ էին: Տրամադրութիւնս խիստ լաւ էր, հազար ու մէկ  
խաղեր կը խաղայինք պաշտօնեաներու ղլխուն: Կրցանք մեր բաժի-  
նէն քաղաքականի հետ կապ հաստատել: Հացի միջուկը կը ծամէինք՝  
խմոր կ'ըլլար, կը դրէինք ինչ որ հարկաւոր է, կը դնէինք մէջը եւ  
փոքր դնդակի ձեւ տալով կը նետէինք անոնց բակը զբօսանքի ժամե-  
րուն, իսկ անոնք ձեռքի նշաններով կը պատասխանէին: Քանի մը ա-  
միս մնացինք: 1928 Փետրուարին յայտնեցին որ կ'աքորուինք, դը-  
րեցի որ Վարդանոյշը պէտք եղածը բերէ: Նոյն օրը ծանօթ աղջիկներ  
էն մէկը զրկած էր Վարդանոյշը (նշանածս պիտի ըլլար իբր թէ):  
Երկու-երեք օր յետոյ ալ էջօն ուզած բաներս բերաւ: Ըսի, ինչո՞ւ  
Վարդանոյշը ինքը չեկաւ երախային հետ, ըսաւ տկար է ու երախան  
ալ հիւանդ: Էջօյի աչքերը ուռած եւ կարմրած էր, բայց ենթադրեցի  
որ ինձ համար լացեր է դուրսը, քանի որ իմ քով եղած ատեննին չէին  
կրնար լալ՝ կը բարկանայի, ու հազար ու մէկ կատակներ ըրի, ա-  
ռանց դիտնալու որ Վահանը գնդակահարուած է: Իրենք նոր էին լը-  
սեր ու կը պահէին ինչ:

1928 Փետրուար 17-ին մեր խումբը 50 հոգի, փոխադրեցին  
Թիֆլիս: Տարին Մետեխ: Ներս մտայ սկսայ չորս կողմս նայել եւ  
կ'ըսէի, Ձերին ուր որ է հիմա Փիք կը պոռայ: Դուռներու, պատու-  
հաններու ետեւ գլուխներ կը նշմարուէին, բայց Վահանի ձայնը դուրս  
չեկաւ: Խորհեցայ ուրիշ բաժանմունք է կամ Ձեկան է:

Իրերնիս խուզարկեցին, հանեցին երրորդ յարկը: Հոն դտանք,  
Երեւանի բանտէն նախապէս ուղարկուած ծանօթներ, որոնք թէեւ  
դիտէին Վահանը ընկերս է, բայց չէին դիտեր որ մենք մտերիմներ  
էինք, ու յայտնեցին որ Վահանը ամիս մը առաջ դնդակահարած են:  
Ուղղակի շանթահարուեցայ, պոռալ, հայհոյել, լալ, տղաները հա-  
ւաքուեցան, չդիտէին ինչպէս մխիթարել, հանգստացնել:

Առաջի 7-8 ամիսները դարհուրելի օրեր եղան ինձ համար, ու  
հետզհետէ մոռացուեցաւ՝ ինչպէս շատ բան մոռցած ենք: Եթէ նոյն  
բանը պատահի ինձ հետ, ժամանակէ մը ես ալ կը մոռացուիմ սիրե-  
լիս... աշխարհի կարգը այդ է:

Թիֆլիս պահեցին մինչեւ Յունիս 17-ը: Փոխադրեցին Մոս-  
կուա: 2 ամիս յետոյ վճիռ՝ երեք տարով աքոր՝ Սիպիր:

Սիպիրէն վերադարձս զբաժ եմ արդէն Պարսկաստանէն: Կեան-

քիս վերջին տարիները այսպիսով ծանօթ է քեզ ուրեմն, եթէ յանկարծ ես ալ անյայտացայ, այդքանը կը գիտնաս զէթ :

Այս նամակս զեռ չի վերջացուցած ստացայ նամակդ, անոր անձին պատասխանեցի ինչպէս կը գտնես : Քոյրիկիս սիրով ու յարգանքով կը բարեւեմ՝ փոքրիկիդ կը համբուրեմ : Եփրատին բարեւներ, ստացած եմ նամակը, կը պատասխանեմ :

Համբոյրեմքով՝ Պետրոս

Ինչքա՛ն կ'ուզեմ ըլլալ ասոնց հետ ու ասոնց քով : Հիւսիսի անհրապոյր, ցուրտ, եւ սակայն քաղցր՝ հարազատ մտերմիկ ընկերական անուշիկ շրջանակին մէջ : Խորթ է արտասահմանը, նիւթապաշտ, անձնասէր :

Փիք (25 Օգոստոս 1931, Հալէպ)



ԱՔՍՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՍ ԵՆ  
ԳՂՈՒԽՆՈՒՆ ՎՐԱՅ ԿԷՏ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ ՀԱՅԵՐ ԵՆ,  
ԱՔՍՈՐՈՒԱԾ ՈՐՊԷՍ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ :

Հալէպ, 17 Օգոստոս 1931.

Ապահովագրած նամակդ, ներփակ 1000 Փրանքնոց չէքով չընորհակալութեամբ ստացայ : Հարկ կա՞յ ըսել որ աւելորդ տեղը զըրկած ես, քանի որ այժմ պէտք չպիտի ունենամ, եւ եթէ Յովսէփին հետ հաշիւներս կըրցայ կարգադրել նպաստաւոր կերպով, այն ատեն բնաւ պէտք չպիտի ունենամ, ու հարկ պիտի ըլլայ ետ վերադարձնել : Ինչ

որ է առ այժմ պիտի պահեմ: Խօսք մը կայ, կ'ըսեն «աւելորդը աչք չի հանէր», դուցէ անակնկալ կերպով պէտք ունեցայ:

Առաջին անգամը չէ, սիրելիս, որ տեղէ տեղ կը փոխադրուիմ, հետեւաբար բաժանման դառնութիւնը, ու նոր միջավայրին ընտելանալուն զժուարութիւնները նկատի ունիմ: Սակայն ատոր չեմ կրնար վերադրել ներկայ հոգեկան վիճակս, ան շատ աւելի խոր, ու ինձ համար անգամ անբացատրելի պատճառներ ունի: Երկրորդ նամակս ստացած կ'ըլլաս անշուշտ, ուր պատճառներէն մէկն ալ բերած էի, բայց բոլորը այդ չէ, ինձ հարկաւոր է այնպիսի միջավայր ու դորժ, որ իմ խառնուածքս ու հոգիս բաւարարութիւն ստանայ, այլապէս, ո՛չ ժամանակը, եւ ոչ ալ ամենաքաղաքակրթուած հասարակութեան մէջ ապրելուս հանդամանքը պիտի կրնային փոխել իմ հոգեկան վիճակը:

Ըսեմ: Երբ Պարսկաստան եկայ, առաջին ամիսը այնքան լաւ դրացի ինքզինքս, որ կարծես տարբեր մոլորակի մը վրայ կը դըրանուիմ: Բայց որքան ծանօթացայ շրջապատիս, տիրող պայմաններուն, մարդոց բարքերուն, անոնց հասկացողութեան անարդ մամոնայէն զատ ուրիշ ոչ մի սրբութիւն չի ճանչնալուն, համողունցայ որ արտասահման իմ տեղը չէ, Ռուսաստանի ուժիմը որքան ալ դաժան, վայրաք, ոճրադորժ, այնու յամենայնի իմ հոգին հոն աւելի հանդիստ պիտի ըլլայ: Գեռ մէջս նկատուող անսպառ եռանդս սպառելու հնարաւորութիւն պիտի ունենամ: Շարժուն, եռուն, արկածալից, վտանգաւոր կեանքը, պայքարով, յոյսերով՝ քսորական ընկերներու հետ, անոնց քով, տաքուկ, հարազատ, մտերմիկ միջոլորտը այնքան հրապուրիչ է ինձ համար:

Հոս հասարակական կեանք չի կայ, այնպէս ինչպէս ես կ'ըմբռնեմ: Կուսակցական վէճերն ու կրքերը սպասածէս շատ աւելի տըղեղ ու զղուելի դտայ: Արտասահմանի միջոլորտը իմ համոզումով ապականուած է: Այդ միջոլորտին մէջ կարծես շնջել չեմ կարող ու պիտի խեղդուիմ: Գուցէ չափէն աւելի յոռետես դարձած եմ ու կեանքին կը նայիմ ա՛յլ կերպ, ու պօլշեփիկներու թողած ազդեցութիւնը շատ է վրաս: Ես այդ չեմ գիտեր ու չեմ ալ ուզեր հասկնալ:

Ամբողջ հոգիով հակառակ եմ պօլշեփիզմին, — ոչ նպատակին ի հարկէ, — այլ իրենց ճիւղային, իրականացման իրենց բերած բռնի՝ ներոնական միջոցներուն ու մեթոտներուն: Կ'ատեմ մարդկային արիւնով գինովցած այդ հրէշները: Սահմանապահ զօրամասերու կապոյտ՝ Ձէկիստներու կարմիր եզրաւոր գլխարկներուն վերջիչումս իսկ սարսուռով կը համակէ հոգիս:

Բայց նորէն անբացատրելի, աներեւոյթ բան մը գիտ կը քաշէ այդ երկիրը:

Ճակատապիրը, որուն չենք հաւատար շատ անգամ, ու կը դըրենք լոկ վրած ըլլալու համար այդ բառը, — դուցէ անօրինած է որ

ես ալ Վաչէի նման հոն՝ անյայտութեան մէջ թաղուիմ : Եթէ այդպէս է՝ թող կատարուի աստուածներու կամքը, որոշած եմ ու պիտի երթամ :

Բայց կը կրկնեմ, ամէն նախազուշութիւն ձեռք պիտի առնեմ, ու սահմանը յաջող անցնելու մինչեւ շաղահողմեմ ու չի համոզուիմ, անխոհեմութիւն չպիտի ընեմ, ու պիտի մնամ Պարսկաստան :

Ամէն կողմէ ստացած նամակներուս մէջ թախանձանք կայ որ ետ մնամ որոշումէս : Մինչեւ ոուսական սահմանը անցնելու դեռ ժամանակ կայ մտածելու : Հոս կը մնամ մինչեւ Սեպտ. 5-էն 8-ը : Եթէ ուղես այս նամակին պատասխանել, զրկէ օգայիս փոսթով :

Փիթ

Հալէպ, 5-19 Հոկտմ. 1931.

Հակառակ սպասումիս, բացի 1000 Ֆրանք պարունակող (չէք) նամակէդ, ուրիշ լուր չունիմ քեզմէ :

Երեք օր առաջ հայրիկէդ նամակ մը առի, կը դրէ որ «Վ.ի քովէն մարդ եկաւ ու Վ.ին քով ունեցած դրամդ ինձ դրկած է» ու կը սպասէ եղեր իմ խորհուրդին :

Ինչ ըսեմ՝ առանց այն ալ սարսափելի կերպով փճացած արամադրութիւնս կրնաս երեւակայել թէ ինչ աստիճանի հասաւ, ծեծելու, հայհոյելու անզորութենէս ինքզինքս կրծեցի ու կերայ : Կը հասկնա՞ս, իմ, եւ ոչ թէ Վ.ին դրամը, կամ մեր, իմ ու Վ.ին դրամը :

Զպիտի ծանրանամ, քանի որ վստահ եմ, հայրդ դրած է այնպէս առանց որեւէ նկատումի, ան չգիտէր ու չի կարող ըմբռնել մեր փոխադարձ վերաբերումը : Սակայն իրաւունք չունիմ ենթադրելու որ Վ.ն իրեն գրած է, որ այդ դրամը իմն է եւ կ'ուղարկէ ինձ :

Անկախ այդ բոլորէն, գրած եմ վերագործս, այդ մասին քանի մը նամակ ալ փոխանակած, միւս կողմէ հակառակ ինձ խաբելուն՝ ինքը դեռ հաստատուն գործ մը չունի, այս մասին Պօլսէն Բէնիկիւն Վասանը գրած էր :

Այդ յիմարութիւնը իրեն բնաւ պիտի չի ներեմ, գրեցի իրեն զայրոյթս, նաեւ որ իր անունը անզամ այլեւս չպիտի ուղեմ լսել :

Գալով Ցօրդ տալիք խորհուրդիս, հետեւեալն է, որ ան քեզ հետ կարգազրէ այդ խնդիրները :

Յուսամ ստացար զրկած նկարներս, նաեւ Ձերի'ի քանի մը նամակները, պահէ անվթար՝ մի օր ինձ վերագործներու պայմանաւ, եթէ չսատկեցայ :

Օժանդակէ Պէյրութի Հայկ. ձեմարանին կից, Ձերի'ի անունս մարդարանի ձեռնարկին :

Վերջապէս վաղը կը մեկնիմ : Ունեցած հաշիւս կէս առ կէս հազիւ կարգադրուեցաւ, այն ալ մաս մը միայն կ'անխիկ : Մարդկա-

յին այսքան բարոյական անկում, այլասերում, նիւթապաշտութիւն չեմ կարող երեւակայել ես :

Երկտողս Եփրատին փութացուր :

Ի՞նչ դործ ունիս Պարսկաստանի նման մի յետամնաց երկրի մէջ, մինակ ըլլայի՛ր՝ տարբեր հարց : Այս մասին կը գրեմ Պարսկաստանէն :

Կարօտով համբոյրներ :

Թեհրան, 26 Հոկտ. 1931.

Երկու օր է միայն, որ Թեհրան ժամանած եմ : Հակառակ Հալէպէն գրելու՝ որ շուտով պիտի մեկնիմ, սակայն 20 օր ուշացայ : Կրկնեմ որ պատճառը այդ սրիկայի այնքան տմարդի ճգճումները եղաւ, թէ եւ քանի մը օր ընկերոջ մը սպասելու ստիպուեցայ, որ վերջապէս չեկաւ հակառակ նախապէս տրուած գրաւոր հաւաստիքներուն :

Անկարելի եղաւ այդ մարդէն դրամ գանձել, բացի նախապէս քեզի դրած գանձումիս, — 14 սսկի, որուն 4ը գնումներ :

Ի՞նչ ըսեմ, կեանքիս մէջ շատ կեղտոտ մարդոց հանդիպած եմ, որոնք անամօթութեան բոլոր յատկութիւնները ունեցած են, բայց այս բոլորին վերադանցեց :

Հակառակ իմ բոլոր ջանքերուս որ որեւէ թիւրիմացութիւն չպատահի, հաշիւ տեսնելու նոր առաջարկ ընելու քաջութիւնը ունեցայ, դեանէ վետին մտայ, կարծես ես իրեն տալիք ունեցած ըլլայի, այնքան լիրբ գանուեցաւ, — որ թէ եւ անվայել, — բայց ստիպուեցայ սպառնալիք ալ փորձել, որ եթէ կարծ-երկար չփակէ ու կերպով մը կարգադրէ, իրեն շան սատակ կ'ընեմ : Իր ուսմիւլար ու իմ դաշնակցական ըլլալու հանդամանքը գէթ չըլլար, արժէք քիթն ու բերանը իրար խոռնել, սակայն այդ ալ կուսակցական բաներու պիտի վերադրուի : Աստուած հեռու պահէ, — առանց ատոր ալ, — Ռամկավարներու անփակելի բերանը աւելի լայն պիտի բացուէր, լուսանքներու տարափով մը Գաշնակցականներու հասցէին : Այս տեսակէտով, հաւատացի՛ր, կուսակցական որեւէ նեղմտութեամբ չեմ վարուիր, ու նոյնիսկ Հալէպի ընկերներուս բուն քննադատութիւններ ըրի, իրենց նեղ կուսակցականութեան համար, թէ եւ անոնք շատ արդարացի ու փաստացի առարկութիւններ կ'ընէին :

Այդ անպիտանը, դեռ դրամը կանխիկ չտալէն զատ, մուրհակ տալու ալ կը դժուարանար :

Վերադարձիս Թեհրանի հասցէովս դտայ նամակներդ՝ նկարներով : Հետո չպիտի կրնամ վերցնել, ուստի երբ Ռուսաստան հասնիմ՝ նորերը կը գրկես :

Նամակներդ ցաւով կարգացի : Յաւ մը, որ վերաւորանքի զգացումէն առաջ չի դար, այլ այն դիտակցութիւնը, որ իմ բռնած դիր-



քը նկարի մը տպաւորութիւնը թողուցած է քու վրայ: Ինքզինքս պաշտպանելու փորձ չպիտի ընեմ: Միայն կ'ուզէի որ հաւատաս թէ այդպէս չէ:

Եթէ զրկած դրամդ վերադարձնելու խօսքեր ըրած եմ, իմի քննի, կամ զգացումի օտարութիւնէն արդիւնք չէ, այլ այն որ ես իմ առանձին հաշիւները ունիմ: Պէտք չեղած ժամանակ եղած օգնութիւն մը անիմաստ, անօգուտ, կորսուելիք բան մըն է:

Եթէ դու ինքդ կը պնդես թէ միշտ ես կ'ուզեմ ուրիշներուն զոհել, եւ ունեցածս տալ, թէեւ համեստութեան դէմ է, բայց պիտի խոստովանիմ որ այդ դժբախտ մոլութիւնը ունիմ: Ի՞նչքան լաւ պիտի ըլլար եթէ իմ մօտիկներովս սահմանափակուէր: Բայց այդպէս չէ:

Շուրջս ո՞վ կ'ուզէ ըլլայ, արժող կամ չարժող, եթէ կարիքի մէջ է՝ պիտի տամ, կամ եթէ ուզեն՝ վերջին ունեցածս կու տամ, ու ես կը մնամ անվարտի:

Կը հասկնամ ուրեմն որ եթէ ապրելու չափ բան մը կայ քովս, աւելին պէտք չէ, ու զրկողը թող դիտնայ որ զրկելիքը պիտի կորչի, ու օգտուողը չունն ու կատուն պիտի ըլլան մեծ մասամբ՝ ոչ թէ ես:

Քանի բանտարկուած չէի, հոգիս ալ ուզէին, չէի խնայէր, բայց բանտարկուելէս յետոյ, կեանքը շատ բան սորվեցուց ինծի:

Այնպիսի մարդիկ, ջա'նս, որոնք տարիներով օգտուած էին ինձմէ, այժմ ծլկած են:

Դուռս բաց էր, ամէն ծանօթի, հայրենակիցի, բարեկամի առաջ: Բնաւ պիտի չմոռնամ, այնքան մարդ կու դար կ'երթար, օրերով հիւր կ'ըլլար, որ մի օր տանտիրոջս մայրը բարկացաւ ու կռիւ կ'ընէր հետս՝ թէ «տունը խան դարձուցեր ես: Այս ինչքա՞ն մարդ կու դայ կ'երթայ. դեռ մէկը ճամբու հազիւ կը դնես՝ երկաթուղի կը նստի, տեղը 2-3 հոգի կու դայ»: Եւ երեւակայէ որ իմ հիւրերս տանտիրոջ որեւէ կապ չունէին, նեղութիւն չէին տար, բացի բակէն անցնիլ ու սանդուխէն բարձրանալ ու ներս մտնել: Եւ այդ անգամ ձանձրացուցած էր մարդոց, այնքան որ անպակաս էր մարդը:

Բայց՝ բայց, բանտարկութեանս ատեն մէկը չեկաւ, չհարցուց թէ, տօ՛ հէ՛րի՞Ք, ո՞ղջ ես: Չոր խօսք մը ընող չեղաւ: Ակնկալութիւն չունէի իրենցմէ, տասը տղամարդ արժող իր կամքով ու արժանիքներով, Վարդանոյշը կար, թէեւ Վահանը աքսորուած էր:

Վահանի գնդակահարութենէն յետոյ, — Միպիւր եղած ատենս, — Վարդանոյշը կը գրէ՝ «Այն բոլորը որ երէկ, այնքան մօտիկ ցոյց կու տային իրենց, ու ամէն առիթէ կ'օգտուէին մեզմէ, այսօր մէկը ներս չի մտնէր ու հարցնէր թէ ի՞նչ կ'ընեմ, ու ի՞նչպէս եմ, ու ի՞նչպէս ես: Կարծես քովս եկողը ժանտախտէ պիտի բռնուի ու մեռնի: Այժմ մեզմէ ա՛յնպէս կը խրտչին, ինչպէս թուրքը խողի մսէն»:

Ահա այս բոլորէն յետոյ զա՞նց կ'ընեմ կարծես, կամ կը չափաւորե՞մ իշավարի զոհողութիւններ: Այսքան հիասթափութիւններէ յետոյ նոյն միամիտը մնացած եմ:

Վարդոյին դէմ կատուած էի: Իրեն դրած էի վերադարձս, ու պէտք է զխոնար որ անկարելի է որոշումներէս ետ կեցնել զիս: Ան, վերադարձս դրամական նեղ կացութեան, յուսալքումի վերադրած է, ինչպէս դու ալ անշուշտ նոյնը մտածեր ես, ու ատոր համար ալ հայրիկին դրած է որ ինծի հապուստ, կօշիկ, դրամ զրկէ, որ չի յուսալքում: Տօ՛, սաւոր կերած ապո՛ւրը նայիր մէկ մը: Սիպիբի մի յետ ընկած տեղը, չեղած տեղէն անուանի սափրիչ դարձայ, շունէն աւելի մարդ քերթեցի, նագանամ, թումպուլիկ աղջիկներու եւ փափկասուն տիկիններու մազերը կտրեմ ըսելով խափ-խայտառակ ըրի զըլուխին՝ մօտան սա է ըսելով, ու այլպիսով թէ՛ ես ապրեցայ, թէ՛ ընկերներու օղնեցի, քաղաքական աքսորականներուն շատերը ճրի ածիլեցի, եւ սակայն եկած ատենս դարձեալ 5-600 ուրբի զիզած էի, տակաւին իրեն տուփերով իւզ զրկելէ յետոյ:



ՂԱԶԱԽԵՏՅԻ ԸՆԿ. ԱԹԱՊԷԿ ԱԹԱՊԷԿԵԱՆՆԻ ԹԱՂՈՒՄԷՆ ՅԵՏՈՑ  
 ԽԵՂՂՈՒՄԱԾ ՕՊ ԳԵՏԻ ՄԷՋ  
 ՆԿԱՐՈՒՄԱԾ՝ 1930 ՅՈՒԼԻՍ 28 — ՆԱՐԻՄ-ՊԱՐԱԲԵԼ  
 ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԻ՝  
 ՌՈՒՍ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐՈՒ, ԷՍ-ԷՐ ԿՆՈՋ ՄԸ՝ (X)  
 ՎՐԱՑԻ ՄԷՆՇԵՎԻԿՆԵՐՈՒ, ՀՐԵԱՅ ՍԻՈՆԻՍՏՆԵՐՈՒ,  
 ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ Հ. Յ. Դ. 15 ԸՆԿԵՐՆԵՐՈՒ:  
 1.— ՊԵՏՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ

Ուրեմն հիմա՞ է որ պիտի յուսահատիմ, երբ չորս կողմէն ինծի դրամ զրկելու ցաւէն բռնուած մարդիկ կան, Փարիզէն, Յովակիմ, Յակոբ, Թադու, Ֆիլան՝ Ամերիկայէն՝ Շաւօն՝ Հապէշխատանէն, Երուանդը՝ Թալրիզէն, Գարեգինը՝ Պաղտատէն, որոնց զրկածները

եթէ չընդունիմ՝ քէն կ'ընեն, ու դեռ չեմ յիշեր Ձինաստանի, Ճարոնի, Հնդկաստանի, Աւստրալիոյ եւ Հարաւ ու Հիւսիս Ամերիկաներու բոլոր հանրապետութիւններուն «տէլլաք» սափրիչ ընկերներու քաջալերական հեռագիրները, որոնք հազարներով օդնութեան փութալու առաջարկներ կ'ընեն:

Այս առթիւ շատ դրեցի, մանաւանդ խիստ տողեր Վարդանոյշին, բայց ինքն էր տեղի տուողը, քանի որ իմ խառնուածքիս ծանօթ էր, դիտէր որ իմ տուած բոլոր որոշումներս անդառնալի են:

Ինչ կը վերաբերի ապահովութեանս, հարկ եղած նախազուշութիւնները ձեռք պիտի առնեմ: Բայց բնաւ, եւ ոչ մի ատեն չեմ կարող ու չի պիտի կրնամ կեղծել ինքզինքս իրենց համակիր ու կողմնակից ցոյց տալով:

Ճիշդ է որ ընկերային (սոցիալական) համոզումներով արտասահմանի արեւմտահայ դաշնակցականներէն շատ ու շատ աւելի ձախեմ, բայց կամ ու կը մնամ դաշնակցական: Քաջագնունի, Հ. Գնդունի, եւ այլն չեն կարող օրինակ ըլլալ: Անոնցը համոզումնին փոխել չէ, պօլշեւիզմի արդարութեան ու յաղթանակին հաւատալ չէ, պարզ սայթաքում մը, որ այս սպասողական ու տեղատուութեան շրջանին կը պատահի շատ մը հոսանքներու մէջ: Ա՛յլ շարժառիթներ պատճառեղած են Գնդունիին հեռանալուն կամ հեռացուելուն եւ որ ժամանակաւոր բնոյթ ունի:

Շատ մը բաներու մէջ պօլշեւիկներուն հետ համաձայն եմ, կարգ մը օրէնքներ կը դնահատեմ ու կը յարդեմ, բայց բնութեամբ սոցիալիզմ կառուցանելուն մէջ իրենց համակրող մը չեմ: Շարք մը երեւոյթներ արտասահմանի մէջ անհաշտելի են համոզումներուս: Զեւեր, ձեւականութիւններ կան, որ խառնուածքս չի տանիր: Կեանքը այստեղ անհրապոյր ու ձանձրալի թուեցաւ ինձ, ոչինչ զիս իրեն կը կապէ ու կը ողբերէ: Աքսորավայրիս մէջ իսկ շատ աւելի դահ էի, հոգիով հանդիստ: Հոն, հակառակ տիրող ուժիմին, մենք մեր ստեղծած փոքրիկ շրջապատին մէջ, օրերը աւելի ուրախ կը սահէին: Հեռու շուկայիկ հոգեբանութենէ, մանաւանդ նիւթապաշտութենէ, որ արտասահմանը ծայրայեղութեան հասցուցած է: Հեւհեւ մարդիկ Մամոնայի ետեւէն կը վազեն:

Ռուսաստան վերադառնալու ցանկութիւնս համակրութեան ու կողմնակցութեան մի՛ վերադրէր: Իմ արկածախնդրական խառնուածքիս համար հոն թափառելու հնարաւորութիւններ կան: Ընդարձակ երկիր է ու կ'ուզեմ տեսնել, եւ որ գլխաւորն է՝ կարեւորը, կամացկամաց յարմարուիլ ու հաստատուիլ սեփական բանտի մէջ, քան ուրիշի ազատ տանը մէջ:

Կը հասկնամ՝ Գաթան պօլշեւիկեան ուժիմի տակ, բայց եւ Հայաստանի մէջ ապրիլն է ինձ հաճելի: Քան արտասահմանեան ազատ համարուող որեւէ երկիր, որոնք աւելի կամ պակաս մեր երկիրը վաճառքի հանեցին, նենդ ու պոռնիկ դուրս եկան:

Այսուհանդերձ անհաւանական չէ որ յանկարծ նորէն արտասահմանի մէջ երեւամ, եթէ գլուխս չաղեցին :

Շատ անգամ երկար խորհած եմ, որ եթէ հոս դայի, ձեր ներկայութիւնը դուցէ տրամադրութիւնս շտկէր, տխուր մտածումներս ցրուէր, որեւէ գործի կապուէի ու կեանքս տանելի դառնար :

Բայց եթէ հակառակը պատահէր ու մնայի միշտ տխուր, քիթս կախ, խօսքս դառն, այն ատեն ձեր կեանքն ալ պիտի դառնացնէի, ու աւելի քան պիտի ազդուէր տրամադրութիւնս :

Ամէն բան կարգադրելէ յետոյ նորէն պիտի գրեմ . հոս ալ բոլոր ծանօթներս, ընկերներս կ'ուզեն արզելք դնել՝ անօգուտ է : Եթէ անոնցմէ դրամ վերցնեմ՝ ստացական կու տամ, որ քեզմէ զանձեն : Զայն ի հարկին մերոնց յատկացնելու ի խնդիր :

Դեռ ուրիշ խնդիր մըն ալ կայ՝ մօտ 120 տօլարի հաշիւ մը : Գրեցի ժամանակին որ հոս ընկերս՝ Պ. Գույումճեանը, անխուսափելի անգործութեան վրայ էր, իր աշխատած խանութը ծախուեցաւ, ու պահ մը խորհեցաւ զայն վերցնել : Պարտքով մաս մը դրամ գտաւ, սակայն անբաւարար, ուզեցի Թավրիզի Երուանդին առաջարկը ընդունիլ եւ իրմէն ստացած դրամով Տիգրանին օգտակար ըլլալ, ի հարկին ատեն մը միասնաբար աշխատիլ, եթէ հոս մնայի : Այդ 120ն է որ դարձեալ իմ երթալէս շատ վերջը կը վերադարձնես Երուանդին, քանի որ եթէ այժմ տամ կամ դուն զրկես կը վշտանայ :

Տիգրանին վիճակը ինձ շատ կ'ազդէ : Ան շատ ազնիւ գտնուեցաւ ինձ հանդէպ, եկած օրէս չի թողուց որ առանձին ապրիմ՝ որքան ատեն Թեհրան մնամ :

Կարօտով կը համբուրեմ բոլորիդ՝ լաւադոյն օրերու յոյսով :

Պետրոս

Թեհրան, 26 Նոյեմբեր 1931 .

Նամակս ուղարկուցի : Կ'ուզէի ամէն ինչ որոշուէր վերջանար այնպէս գրէի : Տրամադրութիւնս ալ քիչ դեր չխաղաց : Հալէպէն վերադարձէս ի վեր ընկերս՝ Տիգրանը նախ «Կռիփով» յետոյ ալ «տիֆով» հիւանդացաւ : Երկու օր է որ տաղնապը անցած է թէեւ, բայց շատ թուլակազմ ըլլալուն՝ դժուար կը կազդուրուի : Խանութը փակ, ինքը ահագին պարտքի տակ, շատ կը նեղուի, ու ես ալ իրենց հետ կը բաժանեմ այդ բոլորը : Գրած եմ արդէն որ իրենց քով կը մնամ :

Շատ դժբախտ ընտանիք են : Պարսկաստան գալէս ի վեր լաւ օրերնին չտեսայ : Հազիւ տասը օրուայ եկած էի, սպանութեան մը առթիւ, որ դաշնակցականներու ուզեցին վերադրել (պօլշեւիկները սպաննեցին), 13 օրի չափ բանտարկուեցաւ : Յետոյ իր աշխատած խանութը պիտի ծախուէր, որով ժամանակ մըն ալ անգործ մնալու մտա-

հողութեամբ ապրեցաւ: Հազիւ, ծանօթներու, ընկերներու օգնութեամբ խանութը գնեց, այս անգամ ալ հիւանդութիւնը վրայ եկաւ: Առեւտուրի լաւ ժամանակը, ձմեռնային ապրանքներ որ եթէ հիմակ չծախուի պիտի մնան վրան: Գլխաւորը՝ մի հատիկ, 10 տարեկան մանչ մը ունին, յաճախ հիւանդ, ամիսը անգամ մը ուշադնաց կ'ըլլայ, մէկ խօսքով յիմար դրութիւն:

Դուրսն ալ կը համապատասխանէ սրտիս՝ ամպոտ: Բարակ անձրեւ մը, արեւելեան կեղտն ու ցեխը տան մէջ կը փակէ զիս: Գէթ կարդալու բան ըլլայ, այդ ալ կը պակսի շատ անգամ:

Մեկնումս ուշացաւ ու ձմեռուայ այս եղանակին բաւական դժուարացաւ: Միակ առաւելութիւնը այն է, որ ցուրտ եղանակին սահմանապահները տեղ մը կը կծկուին, կը մնան ու հոգեբնին չէ եթէ հարիւր մարդ ալ անցնի սահմանէն: Ապահովութեանս համար ձեռք առած միջոցներն են ուշանալուս պատճառը, մասամբ աքսորական ընկերներու օժանդակութեան կարգաւորումը: Այս առթիւ վստահ եմ որ ոչ ոքի չես արտայայտուիր, որպէս իմ հարազատին անսահման վստահութիւն ունիմ վրադ, ու քենէ չպահելս անպատեհութիւն մը չունի:

Արդէն բաւական յարմար, ուրիշի անունով անձնաթուղթ մը ձեռք բերուած է, եւ ատով կրնամ Ռուսաստանը ծայրէ ի ծայր շրջիլ: Միայն ծանօթ շրջաններ չեմ կրնար երթալ՝ ինչպէս Հայաստան, քանի որ ամէնքը ծանօթ են: Եթէ հնարաւոր եղաւ յոյս ունիմ Թիֆլիզ տեսնուիլ Վ.ին հետ: Իրեն գրելու ատենդ իմ մասին ոչ մէկ խօսք: Նայած յարմարութեան թերեւս ծպտուած Ալէք-պօլ երթալ ու վերադառնալ փորձել:

Ընկեր մը ինձ պիտի ընկերակցի մինչեւ սահմանադուրիս: Կարողադ երբեք կարեւոր գործ մը կայ, եթէ գլուխ հանեցի եւ վերադարձս անհրաժեշտ ըլլայ, Ապրիլին Մայիսին հոս պիտի ըլլամ նորէն, այլապէս Ռուսիոյ մէջ շրջան մը կը հաստատուիմ, սպասելով լաւագոյն առիթի մը Ձերի'ի հաշիւը մաքրելու:

Եթէ ծուղակը ինկայ եւ հարկ եղաւ «տեքլարացի» տալու, կամաւոր կամ ստիպումի տակ, պիտի տամ, իրականին մէջ մնալով ինչ որ եմ: Շփոթութեան չմատնուիս ու չանիծես զիս որ Ձերի'ի դահիճներուն հետ դաշնակցեցայ ի վերջոյ: Իմ մեկնելուս եւ յարակից հարցերու շուրջ հոս միայն մէկ հոգի գիտէ՝ պատասխանատու ընկերներէս մէկը: Հետս մինչեւ սահման ընկերացողը եւ անխուսափելիորէն Տիգրանի ընտանիքը:

Անցեալ օր Ս. Վ.ի նամակին միջոցաւ երկտողով մը յայտնեցի, որ այստեղ Ե.ի'ն ստացայ 50 տօլար, հոս կը վճարես Վ.ին:

Գրած եմ արդէն առաւել դրամ վերցնելու նպատակը: Մեկնելուս օրը միայն 100 տօլար կ'ունենամ: Քու դրկած հազար Փրանքէն գատ, Յովսէփի կոչուած սրիկայէն միայն 14 Օսմ. Ոսկի կրցայ փրցը-

ՂԱԶԱՆԵՑԻ ԸՆԿ. ԱԹԱՊԵԿ ԱԹԱՊԵԿԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ՝  
 ԽԵՂԳՈՒԱԾ ՕՊ ԳԵՏԻ ՄԷՋ 28 ՅՈՒԼԻՍ 1930ԻՆ.  
 ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅ, ՎՐԱՅԻ, ՌՈՒՍ, ՀՐԵԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՔՍՈՐԵԱԼՆԵՐՈՒ:



- |                                  |                                 |
|----------------------------------|---------------------------------|
| 1.- Պետրոս Մարգարանեան (Փիթ):    | 8.- Խաչատուր Խաչատրեան — Սի-    |
| 2.- Արմենակ Մարուքեան (Բօրի Ար-  | 9.- Լեւոն Մանուչեան — Բաբառե-   |
| մենակ) Երեւանցի:                 | ցի:                             |
| 3.- Մխիթար Յովսէփեան — Լեւոնա-   | 10.- Բիւզանդ Թաշեան — Երեւանցի: |
| յիւն-Հայաստան — Սիւնիֆ:          | 11.- Մաշտո Քոչարեան — Բաշ Գառ-  |
| 4.- Եփրեմ Եփրեմեան — Էյմիածնեցի: | նեցի:                           |
| 5.- Արմենակ Քոչարեան — Բաշ Գառ-  | 12.- Արէն Քոչարեան — Բաշ Գառնե- |
| նեցի:                            | ցի:                             |
| 6.- Հուսի Խաչատրեան — Բաշ Գառ-   | 13.- Ռուբէն Քոչարեան — Բաշ Գառ- |
| նեցի:                            | նեցի:                           |
| 7.- Սիսակ Մովսէսեան — Բաշ Գառնե- | 14.- Գառնիկ Բարսեան — Բաշ Գառ-  |
| ցի:                              | նեցի:                           |
|                                  | 15.- Պարոյր Ղարիպեան — Իգդիրցի: |

*Նել: 16 ոսկի ծանօթէ մը փոխ առի, 25 ոսկիի մուրհակ մը ձգեցի եղ-  
 բորս քով, որ Յովսէփէն մնացեալը զանձեղէն յետոյ վճարումները ը-  
 նէ: Հալէպէն մեկնած օրս շուրջ 35 ոսկի ունէի, 10-ի չափ ճամբան  
 ծախսեցի: 50 տօլար անձեռնմղելի պահելով մնացեալը ծախսեցի՝ նե-  
 ղը չեմ ապրած:*

Այս մանրամասնութիւնները կու տամ , որ անգամ մըն ալ վըստահացնեմ քեզ որ դըրամ եթէ չեմ ուզած , պարզապէս կարիք ունեցած չեմ , ու ինքս ալ եթէ ոչ լաւ , գէթ համեմատած ուրիշ փախստականներու շատ ու շատ լաւ եմ ապրած , ու անոնց պէս ո՛չ հասարակական , եւ ոչ ալ կուսակցական նպաստին կարիք ունեցած եմ , մերժելով ամէն տեսակ նման առաջարկ , անգամ ես ինքս օգնելով կարիքաւոր փախստական ընկերներու :

Գոհ ես՝ չէ՞ , այս բացատրութիւններէս , ու այլեւս զիս չպիտի մեղադրես ու վերադրումներ ընես :

Անցեալ անգամ ալ մոռցայ անդրադառնալու քու այն նամակիդ , որով կ'առաջարկէիր դուք Պարսկաստան գաք , եթէ ես ուզեմ հոս հաստատուիլ : Կը թելադրէիր որ վերադարձիս հետաքրքրուիմ մասնագիտութեանդ վերաբերեալ ճիւղերով ու գրեմ : Ձեմ գիտեր կ'արժէ՞ գրադիլ այդ հարցով : Հոն մասնագէտներ կան , որոնք երբեմն շատ լաւ կը վարձատրուին , 50 տօլարէն մինչեւ 150 , կամ 200 ամիսը , կեանքը սուղ չէ , մանաւանդ Թեհրանէն դուրս : Բայց կ'արժէ՞ Փրանսայի պէս տեղը թողուլ եւ գալ Պարսկաստան ապրիլ : Հոս հետաքրքրուելով շատ բան դուրս չի գար , շատ անգամ կ'ըսեն որ կարիք ունինք , եթէ գայ այսքան կը վճարենք , բայց մասնագէտը գալէն յետոյ , կը պատահի որ ձգձգեն գործ տալ կամ խոստացածնուն կէսը կը վճարեն : Գալու պարագային պայմանագրութիւն կնքելու է , ետ վերադարձի ծախքերը վճարելու ստիպողականութիւնը չեղտուած : Օտար մեծ պետութեանց հպատակ մը դիւրաւ կրնայ նման պայման մը յարգել տալ :

Այլապէս , յաջողութեան պարագային՝ եթէ օրինակ 300 թուման ամսականով գործ մը ճարուի , 100 թումանով 4-5 անձէ բազկացած ընտանիք մը շատ լաւ կրնայ ապրիլ եւ մնացեալը ինայել :

Եթէ այդպիսի բան մը պատահի , Ռուսաստանի վրայով թրանզիտի վիզա կ'առնես , Հայաստանով կ'անցնիս , հաւանաբար 2-3 օր թոյլ տան որ մնաս , ի հարկէ նախապէս իրաւունք առնելով , այլապէս Չեկայի համը կը տեսնես :

Այս բոլորը անշուշտ խօսք է : Նախ ես ոչ մի տեղ հաստատուող չեմ , ու հաւանական է միշտ ալ թափառական կեանք անցընեմ : Դուն ալ Փրանսայի պէս տեղը չես թողուր ու վար քոսոտ Պարսկաստան , ինչքան ալ լաւ վարձատրուիս : Թէեւ շատեր , անգամ Եւրոպացիք , այսպիսի տեղեր կ'ընտրեն դրամ չահելու համար :

Եփրատին գրածս հաճէ յանձնել : Դեռ երթալու օրս անորոշ է , բայց չի ուշանար կարծեմ : Ս . Վ . ին երբ հանդիպիս սահմանափակէ ընդհանուր խօսակցութեան՝ երբ խօսքը իմ մասիս դառնայ :

Պետրոս

Դեկտ. 17 Թուակիրդ ժամանակին ստացած եմ : Անշուշտ պիտի զարմանաս, որ դեռ հոս եմ :

Երկու ամիսէն աւելի է, որ այսօր ու վաղուան մեկնումի յոյսով ջղային լարուած դրութիւն մը կ'ապրիմ : Քանի մը օրուայ կարգադրուելիք գործ մը, այսքան ժամանակ տեւեց, ու այդ աւելի քան կը վրդովեցնէ զիս :

Վերջապէս ութ օրէ ի վեր պատրաստ է ամէն ինչ ու վաղը իսկ պիտի մեկնիմ : Օթոմոպիլի տոմսակ անգամ առած եմ, բայց գիշերուընէ ի վեր ձիւնը կը տեղայ : Ճանապարհները պիտի փակուի, ու 3 օրուայ ճամբան 8 օրէն եթէ կտրեմ լաւ է : Շատ ու շատ ուշացայ եւ բաւական նեղութիւններու պիտի ենթարկուիմ, ինչպէս կ'երեւի : Հոս որ գրեթէ ձիւն չի բռնէր բնաւ, այնքա՛ն ձիւն եկաւ, լեռները սարսափելի ըլլալու է : Ուշանալուս եւ կրելիք նեղութիւններուս ու զրկանքներուս առթիւ եթէ վերադարձայ լաւ կոթակաւ մը գրելու եմ մեր աղաներուն, որու առթիւ չափէն դուրս ջղայնացած եմ :

Ինձ անհասկնալի եղաւ թէ՛ Վ. Ս. անտեղի հարցումներով ի՞նչ ըսել ուզած է : Այդպիսով մեկնումիս նպատակը քենէ քօղարկե՞լ ուղած է, թէ՛ իրապէս կասկածի տակ կը դնէ աքսորուած ու բանտարկուած ընկերներուս հանդէպ ունեցած նուիրուածութիւնս : Թէեւ այս առթիւ պիտի գրեմ իրեն, բայց ընկերներէն մէկը (Իշխանեանը) ըսաւ որ, իմ փոխարէն ինք արդէն կ'օթական մը գրած է, իսկ ես պիտի վերապահեմ վերադարձիս :

Խորհելով որ, ես մեկնած կ'ըլլամ, Վ. ն ինձ չէ գրած թէեւ, բայց Ե. ի՛ն գրած է քենէ յիսուն տօլար ստանալը :

Ներփակ թերթ մը թուղթ, գուցէ պէտք զգացուի անոր : Բացատրութիւնները միւս թուղթին վրայ գրուած են, այդ ծաւալով թուղթ գործածէ երբ ինծի գրելու ըլլաս :

Մէկ էջի վրայ գրած նամակներու կարգալը քիչ մը ճիգ կը պահանջէ : Քու նամակիդ մէջ ներփակ, ու քեզի անծանօթ անձի մը գրուածը յանձնէ Վր. ին : Ի հարկին օգնէ իրեն՝ եթէ ինքը չի կարենայ մէջէն ելլել :

Այսպէս, անգին ճանիկս, չեմ գիտեր կը վիճակուի՞ օր մը ողջագործուելու : Բայց եթէ ինձ ալ Ձերի՛ի բախտը վիճակուի, գիտցիր որ վերջին պահուն շատ մը սիրելիներուս հետ ձեր անուններն ալ չրթներուս պիտի ըլլայ, ու թոյլ կողմս չպիտի տեսնեն իմ դահիճները՝ բնաւ, բացի անսահման արհամարհանքէս : Միակ կտակներս որ կ'ուզեմ թողուլ, հայրենիքի ու անոր ազատութեան համար հնարաւոր աշխատանք ընել : Այնքան ատեն որ մենք անկախ չենք, անտեղի գոհերը անպակաս պիտի ըլլան :

Վ. ն անգին աղջիկ է, ինչքան ալ ջղայնանամ իրեն հանդէպ, հոգուս պէս կը սիրեմ :



Եթէ անվերադարձ դացի, իմ բոլոր թղթերս ու նկարներս ընկերոջս Տ. Գուլումճեանի քով թողուցի, պատուիրելով որ քեզի ղրկէ :

Պատահի որ առանց մերոնց տեսնելու անհետ կորայ, մի օր անոնց երբ պատահիս, իմ կարօտով ալ համբուրէ զիրենք, ամէնքին, բոլորին ալ :

Եղէք վրէժինդիր այն բոլորին, որոնք մեր ազատութեան ու անկախութեան թշնամի եղած են ու կը մնան :

Անձնապէս շատ ինքնավստահ կը մեկնիմ :

Փիթ

Մէշէտ, 10 Մարտ 1932.

Կը տեսնես, որ դեռ Պարսկաստան եմ :

Թեհրանէն Յունուար 18-ին ճանապարհուեցի, եւ 17 օր, սար ու ձոր թափառելէ յետոյ, Փետրուար 4-ին վերադարձայ Մէշէտ, ուր կը մնամ մինչեւ այսօր :

Սաստիկ ձիւնի հետեւանքով անհնար եղաւ անցնիլ, ճանապարհը փակուած էր, ու երթեւեկութիւնը բացարձակապէս դադրած :

Երէկ լուր առի որ արդէն ձիւնը հալիլ սկսած է լեռները եւ հրնարաւոր է անցնիլ : Ուրեմն երկու օրէն կը մեկնիմ :

Եթէ չի գրեցի, պատճառք այն է որ հասցէ չունէի քովս, այսինքն բացը, իսկ այնպէս միտքս պահած չէի :

Այսօր մտածեցի, գրեմ ուղարկեմ մեր Տիգրանին Թեհրան, անոր քով հասցէդ թողուցած եմ, անկէց քեզ կը հասցէադրեն :

Առողջ եմ, լաւ, անվհատ, բայց դժգոհ գործին այսպիսի հանդամանք առնելուն, այսինքն ուշանալուս :

Ճիշդ է որ բաւական նեղութիւններու ենթարկուեցայ ճամբան, բայց այդ տրամադրութեանս վրայ բնաւ ազդած չէ, ու կ'երթամ լաւատես ու լաւադոյն յոյսերով, որ մի օր կը ողջադուրուինք : Երանի այդ պատահէր մեր ազատ ու անկախ հայրենիքին մէջ :

Գրէ թաղուիկին եւ ապահովցուր որ առողջ եմ :

13 Մարտ 1932.

Քիչ յետոյ կը մեկնիմ : Կարօտով կը համբուրեմ բոլորդ. յատկապէս Շուլիկիս :

Պաչիկներով՝ Փիթ

27 Մարտ 1932.

Երկար ժամանակ եղաւ դրած չեմ : (1) Առանձին պատճառ չեմ

---

(1) Այս նամակը գրուած է Խորհրդային Միութիւն անցնելէ յետոյ, ստորագրած է իր եղբոր անունը գործածելով, ջանացած է գրել արեւելահայերէն եւ ըստ կարելոյն նոր ուղղագրութեամբ :

Սահմանը անցած ըլլալու լուր մը :

դտնում, միայն անհողութեան յեմ վերադրում :

Պէտք է ասել լծուած մեր խորհրդային երկրի սոցիալիստական վերաշինութեան գործում, շատ անգամ յենքան ապաղած յեմ լինում վոր ժամանակ չեմ դտնում :

Յերեվակայում ես, եթէ ասեմ վոր յերկար ժամանակ է քրոջս Վարդոյին յել չեմ գրել : Աշխատում եմ արձակուրդ վերցնել եւ նըրանց կողմը դնալ, չեմ իմանում այդ ինձ կը յաջողուի<sup>6</sup> : Բայց նրան գրելու եմ, վոր եթէ ինձ արձակուրդ չտան՝ հաջողացնի եւ երախային վերցնի ինքը գայ :

Յես այժմ երկար չեմ կարողանում գրել : Ինչպէս ասի գործերը ինձ շատ են ապաղեցնում : Արդէն դարնան ցանքսի եռուզէոր սկըսուել է, եւ Սորհրդային Միութիւնը հսկայական քայլերով վերաշինուում : Քիչ կենսամթերքների պակաս զգացուում է թէեւ, բայց բանուորները եւ ծառայողներս կոռպերատիւ հիմնարկներից ըստ համենայնի ստանում ենք ինչ անհրաժեշտ է եւ եօլա դնում լաւ կերպով :

Մայրիկս արդէն շատ է ծերացել, եւ տնային գործերում չի կարողանում օգնել կնոջս : Սպասուհի էլ չունենք եւ դրա համար Աստղիկն էլ չի կարողանում գրել ձեզ, եւ խնդրում է ներողամիտ լինել :

Երախաներս լաւ յեն եւ լաւ էլ սովորում են : Այս տարի Լուսիկս փոխում է Յրդ բաժանմունք, իսկ Լիզան երկրորդ, Լեւոնիկս զնում է մանկապարտէզ եւ լաւ ոտանաւորներ սովորում :

Բոլորս բարեւում ենք, իսկ երախաներս համբուրում են ձեզ, յատկապէս Շուշիկիդ, Մարգարիտ Տեօտեային ջերմապէս բարեւում ենք :

Մեր մասին գրեն Ամերիկա Թագուհուն : Առ այժմ ես ծուլանում եմ գրել :

Համբուրում ենք բոլորիդ  
Քոյ Արքաիւմ

Կ. Պօլիս, 25 Նոյեմբեր 1919.

Հեռաւոր եւ ազնիւ ընկեր

Պ. Աբրահամ Մարդպանեան,

Ձեր 5 Նոյեմբեր թուակիրը այսօր ստացայ, եւ կարգալէ անմիջապէս յետոյ, յանձնարարեալ կերպով զրկեցի Թիֆլիս՝ Պետրոսին : Պետրոսէն միշտ նամակ կը ստանամ : Ողջ առողջ է : Երեւանի, Ալէքսանդրապօլի եւ Թիֆլիսի միջեւ կ'երթեւեկէ առեւտրական գործերով :

Ձեր պաշտելի մայրիկին մահուան առթիւ կրնամ միայն այն ըսել ինչ որ գրեցի Պետրոսիս, այսինքն թէ պէտք չէ չափէն աւելի ազդուիլ, քանի որ մենք շատոնց եփած ենք տանջանքի եւ ցաւի մէջ,

սրտերնիս «նասրը» կապած, քարացած է, եւ չենք ազդուիր սուգէ : Մեր մխիթարութիւնը, մանաւանդ իմ ու «Փիթ»ին մեծագոյն մխիթարութիւնը այն է որ մենք երկուքս, կողք կողքի կեցած, անյազ կերպով լուծած ենք հազարաւոր հայ հայրիկներու եւ մայրիկներու վրէժը, եւ այդ պիտի ըլլայ Փիթին հետ անցուցած անմոռանալի օրերնուս գերագոյն գոհունակութեան օրերը :

Պետրոսին հետ, ամէն արկածի, կռիւի, ճամբորդութեան միջոցին, քով քովի եղած ենք, ոչ միայն մարմնով, այլ եւ սրտով ու գաղափարով : Այս վերջին երկու տարուան փոթորկալից կեանքին գրուագիները մանաւանդ, առասպելի կարգ անցած են :

Պետրոսը, ընկեր ըսուած բանին կատարելութիւնն է : Սովորական կեանքի մէջ աշխատող է, քարպիկ, հնարագէտ, իսկ կռիւի ատեն արագ, յանդուգն, գուարթ ու պաղարիւն :

Ձեր նամակը ստանայ թէ չէ, վստահ եմ որ պիտի պատրաստուի մեկնիլ եւ այդ կողմերը գալ իր քոյրերը փնտռելու : Իրեն գրած նամակիս մէջ յայտնած եմ իրեն թէ՛ եթէ գիւրութիւն գտնեմ, (անգլիական բանակին մէջ լինելով, չեմ կրնար ուզած ատենս ձեզ) իրեն պիտի ընկերանամ, մանաւանդ որ շատոնց այդ կողմերը գալու մտադիր եմ, վերջնական բնակութիւնս Խարբերդ հաստատել որոշած ըլլալով : Պայմանները հիմա նպաստաւոր են այդպիսի ճամբորդութեան մը համար, քանի որ ապահովութիւնը վերջապէս եկած տիրած է :

Բնականաբար, եթէ ճամբորդութիւնը իրապէս գործադրենք, քեզ ալ կը տեսնենք, որպէսզի մեր հետապնդումներուն համար հարկ եղած մանրամասնութիւնները քաղենք :

Պետրոսը հարկաւ պիտի գրէ ձեզ, եւ տեղեկութիւններ տայ ձեր բարեկամներուն մասին : Ձերոնց հետ ես ալ չափազանց մտերիմ եմ, թէեւ ձեզ հետ ունեցած ազդականական ինչ կապեր ունենալին չեմ գիտեր : Այդպէս ազդականական անուններու խելքս շատ չի հասնիր շիտակը : Առ այժմ թուեմ սա մի քանի անունները :

Վարդանոյշ Չէննէեան, որուն ամուսինը Պօղոս, կոտորածին անյայտացած է : Ինքը հիմա Ալէքսանդրապօլ է, որբանոցի կառավարչուհի, եւ շատ լաւ է : Միշտ նամակ կը գրէ ինձ ու իր եղբօրը, որ Պօլիս է, դպրոց կ'երթայ, միշտ իմ հետ է, եւ քիչ առաջ նամակներդ կարդաց :

Վարդանոյշին հայրն ու մայրը եւ միւս եղբայրը ողջ-առողջ են, Տերսիմ, Տիպպ Աղային մօտ : Անոնք ալ նամակ կը գրեն : Պօլիս են Վարդանոյշին հօրեղբայրը, մեծ մայրը, Ղուկաս Անդրէասեանը եւ փոքր զաւակը Պետրոսիկը, 14 տարեկան, նաեւ ուրիշ շատ բարեկամներ, զորս ես ինքս չեմ ճանչնար :

Թիֆլիս են ծերունի Նարդուհի Չէննէեանը (հարսուհին), նաեւ Թադուհի Չէննէեանը : Քեռիին Մարթայ Գարբիէլեան (որուն զաւա-

կը Գաբրիէլը Երզնկայի մէջ մեռաւ, ազատուելէն վերջ), աղջիկը Սրբուհին եւ Նարդուհի Գաբրիէլեան անոնց ընտանիքէն :

Թիֆլիս են նաեւ Վահան Յովնանեանը եւ կինը Երանուհի :

Պաթումի կողմերը կը գտնուին Հազարցի Ալթուն Անդրէասեանը, աղջիկները Ազապի եւ Հրանոյշ, հարսը Թագուհի Աճէմեան, եւսայլն, եւսայլն :

Դեռ շատ-շատեր կը ճանչնամ, բայց դժուար է յիշել, մանաւանդ որ ձեր տեղացի չըլինելով պէտք եղած դիւղացիական եւ ազգականական բացատրութիւններ չեմ կարող տալ : Հարկաւ Փիթը կը դրէ պէտք եղածը :

Սարգիս Բարունակեանը (Հազարցի) սպանուեցաւ Երզնկայի նահանջին ժամանակ :

Պրուսայի որբանոցին մէջ կը գտնուի Սիսնացի Վարդուհի Մարգարեանեան անուն որբուհին, 13 տարեկան, Փիթին լուր տուի, եւ իմացայ իրմէն թէ ձեզի ազգական է :

Ուրիշ Սիսնացի միւս կողմը չէ անցած :

Փիթը Պօլիսի գաղթական Չմշկածագիներու ցանկը ուզած է, որ ապսպրեցի Ղազարոսին : Լաւ կը լինէր եթէ դուք ալ Հալէպ եղողներուն ամբողջական ցուցակը զրկէք : Այս ցուցակները Կովկաս եղող երկրացիներուն համար թանկագին են ծայր աստիճան :

Այսօր այսչափով կը բաւականանամ : Թերեւս 1<sup>1</sup>/<sub>2</sub>-2 ամիս չանցած ձեր եղբայրը ձեզ մօտ կը տեսնաք : Ես բնաւ չպիտի զարմանամ որ Վարդանոյշն ալ գայ, իր խիզախ նկարագիրը ամէնուս յայտնի է, եւ հաւանաբար Պօլիսն ալ տեսնալէ վերջ մեզ հետ կ'անցնի երկիր, իր ծնողաց մօտ :

Ձեր նամակները պակաս մի' ընէք :

Ազգային եւ անհատական երջանկութիւն մաղթելով :

Մնամ Ձերդ՝ վստահ Ձերաց

Կ. Պօլիս, 15 Ապրիլ 1919.

Ազնիւ եղբայրս Աբրահամ,

Թէ' ձեր կողմէն, եւ թէ դէպի ձեզ եկող նամակները կը ստանամ ու կը զրկեմ : Եւ այսօր իսկ ստացայ Հալէպէն երկու նամակ, որոնք առաջին առիթով պիտի երթան Հայաստան :

Ուրախ եմ որ Պօլիս գալ որոշած էք վերջապէս, եւ թերեւս մինչեւ օրս մեկնած կ'ըլլաք : Ուրախ եմ, որովհետեւ ձեր շրջանը անապահով է, եւ այս քանի մը օրս մտահոգիչ գոյժեր հասան մեզ : Ուրախ եմ, որովհետեւ ձեր Պօլիս գալը առաջին հանգրուանը պիտի ըլլայ դէպի ցանկալի ներգաղթը : Ուրախ եմ մանաւանդ որ ձեր գալուստը պիտի քաջալերէ Պետրոսին ու այնտեղ մնացողներուն գալ հաւաքուիլ այստեղ, որովհետեւ այնտեղ ալ ապրուստը այնքան դժացող-

ցիւ չէ : Արդէն Քեռկին Մարթան , Նարդուհին եւ Սրբուհին անցեալ օր  
եկան : Նարդուհին պատահած դժբախտութիւնը հարկաւ լսեցիք :  
Այդ Մշեցիին ալ հետերնին բերած են : Տղէտ ու անկիրթ մէկն է , եւ նա-  
հապետական ու զարգացած գերդաստանի մը մէջ իր մտնելը շատ  
տգեղ երեւոյթ եղաւ : Դեռ այդ միջադէպին դաղտնիքը լուծուած չէ :  
Մինչեւ իսկ ես դեռ չեմ գացած Քեռկինը եւ քոյրիկներս տեսնելու ,  
որովհետեւ նորեկին հանդէպ ինչ դիրք բռնելս տակաւին չեմ որոշած :

Մէկ խօսքով , այս մի քանի շաբթուան մէջ լաւ կ'ըլլայ եթէ ա-  
մէնքը վերէն ու վարէն գաք հաւաքուիք այստեղ : Միութիւնը ոյժ է :  
Պիտի գրեմ վարդանոյշին եւ Թադուհին , որ հարսուհին առնեն ու  
դան : Կը յուսամ թէ Մայիսի վերջերը կը մեկնին , երբ Թադուհին իր  
դասընթացքը աւարտէ : Այստեղի դժուարութիւնը բնակութեան հար-  
ցըն է , բայց մի կերպ այդ ալ կը լուծենք : Ես ու Ղազարոսը այդ ուղ-  
ղութեամբ ոչ մի ջանք չենք խնայեր :

Ինչպէս կը գուշակես , ես ու Պետրոս եղբայրդ , իրարու հետ  
այնքան կապուած ենք , միատեղ անցուցած մեր անպատմելի օրերուն  
ու արկածներուն բերմունքով , որ եթէ որեւէ առիթով ես ստիպուիմ  
երկիր երթալ , անպատճառ ան ալ պիտի հետեւի ինծի , եւ փոխադար-  
ձարար : Գալը լաւ կ'ըլլայ , որպէսզի քոյրիկներուն քով մարդ մնայ՝  
երբ որ մենք երթանք :

Ահա Հայաստան , կռիւ կը մղէ Ատրպէյճանի դէմ , ես անմի-  
թար եմ այդ կռիւներուն չի մասնակցելուս , բայց այստեղ կը մնամ ,  
մասամբ Ղազարոսին համար , մասամբ ալ ձերիններուն դալուստին  
աջակցելու համար : Իսկ անգամ մը որ ամէնքդ իրարու քով գաք , ես  
բաղդատաբար աւելի ազատ պիտի ըլլամ Փիթին հետ : Փիթը՝ Պետ-  
րոսն է :

Կը ներէք որ անինամ գրեցի : Կը յուսամ որ վերջին գրաւոր  
հաղորդակցութիւնը ըլլայ քեզ հետ , եւ շուտով ողջագուրուինք այս-  
տեղ :

Մնամ սիրով՝ Եղբորդ Եղբայրը  
Վահան Զեքազ

Կ. Պոլիս , 15 Հոկտ. 1919 .

**Զմշկածաղի Հայրենակցական Միութեան**

**Պարոններ ,**

Զմշկածաղի Սիննա գիւղացի Պետրոս Մարգարանեան գինուո-  
րութեան մտերիմ ընկերս եղած է :

Քանի անգամ ձեզի նամակ գրած է՝ իր պարագաներէն լուր  
ստանալու համար : Այս անգամ ալ ես կը գրեմ իր կողմէն : Լաւ կ'ըլ-  
լայ եթէ պատասխանը իմ հասցէով ուղարկուի , կամ ձեր , կամ իր

պարագաներուն կողմէ: Ես Պետրոսին հետ մշտական թղթակցութեան մէջ եմ:

Պետրոսը կը փնտոէ իր եղբայրը՝ Աբրահամը,  
իր քոյրերը՝ Պահար եւ Նոյեմզար,  
իր մայրը՝ Գոհար:

Պետրոսը այժմ Թիֆլիզ է, եւ կ'ապրի վերապրող ազգականներու մօտ:

Անհամբեր սպասելով մնամ Ձերդ  
Հասցէ՝ . . .

Վահան Գ. Չերպ

Կ. Պոլիս, 22 Մարտ 1920.

Սիրելի եղբայրս Աբրահամ,

Ներփակ կը զրկեմ ինչ որ այսօր ստացայ Պետրոսէն: Կը զրէ թէ ամէնքն ալ լաւ են, որքան որ կարելի է լաւ ըլլալ ներկայ պարագաներու մէջ: Վահանէն (1) ալ նամակ ունիմ, Վարդանոյշ քոյրիկէս ալ, որ հիւանդացիներ էր վերջերս, բայց առողջացած է այժմ:

Վահանը ինձ կը զրէ թէ Վարդանոյշին հետ խորհրդակցած է, որպէսզի Պետրոսին ցոյց չը տան, դէթ առ այժմ, ձեր այն նամակը, ուր կը զրէք իր քրոջ առեւանդումին եւ մայրիկին սարսափելի ճրջնաժամին մասին:

Ես ալ համաձայն եմ այս մասին: Դուք հիմա այնքան լաւ չէք գլտեր ձեր եղբոր ներկայ խառնուածքը ու հոգեկան դրութիւնը:

Պարագաները զինքը ըրած են կրքոտ, ջղայնոտ եւ յուսահատ: Եւ եթէ իր այս տրամադրութիւնը աւելի լարուի, կրնայ վնասել թէ՛ իր զործերուն, եւ թէ՛ իր անձին: Ես յոյս ունիմ որ քիչ ատենէն իր մօտ կ'ըլլամ նորէն, եւ անարժանաբար կը հսկեմ իր քայլերուն ու տրամադրութեանց վրայ:

Կը յուսամ թէ լաւ էք ամէնքդ ալ, եւ կը պատրաստուիք յարմար ըրպէին երկիր դառնալու:

Ձերդ սրտակից՝ Վահան

---

(1) Վահան Յովնանեան (Գեղեկիւն): Վարդանոյշի մօր գարմիկներէն, Երեցագարակ գիւղին ուսուցիչը՝ Զմշկածագ:

# ՊԵՏՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ

Եկուոր՝ կեանքի արկածները — (Հայր. Ամս.) :

«1933 Յունիս 4-5 սկսուեցին մեր քննութիւնները Տաշքէնտի Չեկալի բանտում :

Առաջին հերթին կանչեցին «Քոթոթ»ին եւ Ս.ին : Երկուսն էլ շուտ վերադարձան :

— Ո՞վ է Պետրոս Մարգպանեանը, ասաց ինձ «Քոթոթ»ը : Իբր թէ ես այդ Պետրոսի միջոցով կապ եմ հաստատեր արտասահմանի հետ, իբր թէ ինքն էլ Պարսկաստանից նոր է եկել եւ կապ ունի ինչ որ Եղիշէ Իշխանեանի հետ :

— Տեղեակ չեմ, ասացի «Քոթոթ»ին :

— Այդ նոյն հարցումները ինձ տուին, վրայ բերեց Ս. Ն. :

— Զրպարտութիւններ են, ուշադրութիւն պէտք է դարձնէք, ասացի :

Հարցաքննութեան օրը կը հասնի «Եկուոր»ին, հարցաքննողը կը կոչուի մի ինչ որ Գղիկեան (Գղիկով կը կոչէր ինքն իրեն) :

Տեսնելով լուութիւնս շարունակեց :

« Բանտարկեալ «Ե», դուք լաւ գիտէք, որ մեզ ամէն ինչ յայտնի է, ձեր կապը արտասահմանի հետ, Պետրոս Մարգպանեանի գալուստը արտասահմանից, ձեր հասցէով նրա ուղարկած հեռագիրը, նամակները, եւ այլն : Այդպէս չէ՞ :

— Դուք համոզուա՞ծ էք ձեր ունեցած տեղեկութիւնների մէջ :

— Այո՛ :

— Որ այդպէս է, կը մնայ երկու խնդիր : Դուք որպէս քննիչ տուէք վճիռը, իսկ ես որպէս քաղաքական յանցաւոր, տանիմ պատիժս :

— Պաշտօնական արձանագրութեան համար, պէտք է որ դուք հաստատէք մեր ունեցած տեղեկութիւնները :

— Զեր ունեցած տեղեկութիւններից եւ ոչ մէկը ճիշդ է, հետեւաբար, ես հաստատել չեմ կարող :

— Դուք անշուշտ կը ճանաչէք Արշակ Ամիլեանի ձեռագիրը :

— Եթէ այդ անձը չեմ ճանաչում, ի՞նչպէս կրնամ նրա ձեռագիրը ճանաչել :

— Դուք Արշակ Ամիլեանին չէ՞ք ճանաչում :

— Ո՛չ :

— Ահաւասիկ ձեռագիրը, որ ասում է թէ ճանաչում է ձեզ, թէ ձեր հետ միասին հանդիպած է Պետրոս Մարգպանեանին :

— Այդ բոլորը զրպարտութիւն է :

# ԱՔՍՈՐԱԿԱՆ ԵՒ ՓԱՒՈՒՍՏԻ ԸՆԿԵՐՈՋ ՄԸ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Աքսորէն փախուստը նկարագրող նամակին մէջ, Փիթ կը գրէ թէ ի՞նչպէս ընկեր մը փոխարինած է՝ իրեն ծանօթ որք մը, որ ոչ միայն շրջապատին նկատմամբ աւելի գիտակից դտնուած է, այլ իբրեւ ընկեր զգաստ եւ լուրջ:

Այդ ընկերը, Արէն Գոչարեանն է, ծնած Գառնի՝ 1906-ին: Տարիներ վերջ, Արէն, զրի առնել տուած է բանտի եւ աքսորի իր յուշերը, ուր հասկնալի է որ մեծ տեղ գրաւած է իր անվեհեր ընկերը՝ Պետրոս (Փիթ) Մարգարեանն:

Անոր «Թուուցիկ Յուշեր»էն (ինչպէս ինքը որակած է), գիւղական հնամենի տոհմի զաւակ Արէնի ընդվզումը կարելի է համառօտել հետեւեալ կերպով:

Ան եւ իր նմանները, ինչպէս Փիթ, բուռ մը ժողովուրդի զաւակներուն գլխուն թափուող բռնութիւններու, տանջանքներու, զըրկանքներու եւ ոճիրներու դէմ սպեղանի հանդիսացող Ռուս Յեղափոխութեան յեղաշրջումէն յուսախաբ են, հետեւաբար դժգոհ, քանզի նշաւակ նոյն խարդաւանաճիւղներուն ու իրենց կարգին՝ զոհեր:

Ապացոյց՝ Փետրուար 18-ի ողբերգութիւնը եւ անոր իբր հետեւանք կամ ոչ, շարունակական մաքրագործումներ, ներման զրաւոր՝ ուստի հանդիսաւոր խոստումներէն յետոյ:

\*\*

Ահա Արէնի վկայութիւնը:

Ու մի սոսկումի օր նորանոր հալածանքներից յետոյ Երեւանի Չեկան սկսում է մաքրագործումներ կատարել:

Ահռելի լուրը սրնթաց անցնում է սահմանից-սահման: 1924:

Հրաւեր երիտասարդութեան՝ «գործկում»ին ներկայանալու: Ամբողջ օրը ոտքի, սոված, վախի եւ սարսափի տակ, դառն ու խելառ մտքերու մէջ ու ապա բանտ ու ախար՝ դէպի անյայտութիւն:

1926 թուին, պայմանական երեք տարին չվերջացած՝ վերադարձի հրաման՝ Երեւանի Չեկա, կրկին բանտ, ճրգ կամերի մէջ, ներքնայարկ, ուր եօթը ընկերներու մէջ է նաեւ Փիթ:

Ի վերջոյ, աքսորի նոր դատապարտութիւն, 84 հոդիով դէպի Սիպիր, անցնելով Թիֆլիսի ահազու Մետեխի բանտէն: 18 Հոկտ. 1927:

Իւրաքանչիւր կայանի մէջ նոր հարցաքննութիւններ, տանջանք, սպառնալիք, աքսորի սարսափ, ստորագրութիւններ (տեկլարացիա), նաեւ գնդակահարութիւններ:



Աբսորավայր կը նշանակեն Նարիմի երկիրը՝ Պարսելի նաւահանգիստը: Հոն ազատ աբսորականի ընակավայր կ'ընտրենք Նովոսելցնայա գիւղը, ինը բախտակիցներ ենք, որոնցմէ է Պետրոս Մարգպանեան:

Խարբերդ նահանգի, Չմչկաժագ գաւառի, Սիւնա գիւղը ծնած այս տղան, Ա. Ընդհ. Պատերազմին Ամերիկայէն կամաւոր եկած էր կովկաս ու այլեւս չէր ուզած լքել հայրենի երկիրը:

Պետրոսը, 1926 թուին թէ՞ 27-ին փախչում է Լենինականից եւ ապաստանում Մեղրի, սահմանային դաւառական քաղաքում, ուր ծպտուած գրադուած է վարսավիրութեամբ, ընկում է մի գիւղացի թուրք ընտանիքում, որմէ խնդրում է յետոյ իրեն անցկացնել Արաքսից դէպի Պարսկական սահմանը:

Գիւղացիներից մի հոգի ծանօթ լինելով ճամբաներին՝ խօսք է տալիս 100 րուպլու կաշառքով նրան Արաքսը անցկացնել, բայց հասնելով սահմանը, դաւաճանօրէն, Պետրոսը յանձնում է Արաքսի ափում եղող սահմանապահ ռուս պահակներին, իսկ նրանք էլ, որպէս փախտականի, նորից Պետրոսին յանձնում են Երեւանի Չեկային, որը 84 ա'յլ աբսորականների հետ ուղարկում է Թիֆլիս, եւ Չեկ-Չեկան, որի նախագահը այն ժամանակ հայատեաց սրիկայ Բերիան էր:

Սա կանչում է տղաներին, քննութիւնները տեսում են վեց ամիս, բոլորի հետ Պետրոսն էլ նստում է Մետեխի բանտը եւ սպասում դատավճռին:

Բանտարկեալներու անցուղարձի իրազեկ լինելու աշխատանքը յանձնուած էր Մարդոյեանին, եւ Պետրոսը բոլոր ընկերներին այդտեղ զգուշացնում էր, որ ոչ ոք հաւատք չընծայի այդ Մարդոյեանին, մինչդեռ ինքը դիտմամբ եւ վարպետօրէն դրա հետ ընկերակցում, ամէն ինչ իմանալու համար, ընկերներին իրազեկ պահելու յաճախ, իրենց սպասուած վճիռների մասին:

Այդպէս, Թիֆլիսում 6 ամիս, Մոսկուայում նոյնչափ ատեն պահուելուց յետոյ, Բուտիրսկի բանտում տղաները հացադուլ անելով, պահանջում են ազգով հայ՝ Քաթանեանին, որ Չեկայի Հայաստանի Էնկւէդայի (N K V D) կողմից քաղաքական ներկայացուցիչ էր Մոսկուայում:

Այնպէս որ, մինչեւ Նարիմի երկիրը անցնելը, Մարդոյեանը, ոչինչ չի կարողանում կորզել տղաների գաղտնիքներից:

1931 թուին, ինձնից եւ Պետրոս Մարգպանեանից պահանջում են ներկայանալ Տոմսկ քաղաքի Չեկան, որտեղ մեզ առաջարկում են «Միմուս 6»:

Հրճուում ենք, կենդանութեան արչալոյսը շողում է մեր տամուկ աչքերի մէջ, չնայած արդէն հաշտուել էինք տաժանակրի դառն ապրուստին:

Ընտրում ենք Թուրքեստանի Աշխապատ քաղաքը՝ անցնելով Դաշկենտեմ:

Աշխապատ չի հասած որոշում ենք փախչել դէպի պարսկական սահմանազուխ: Արթիկ Իջեւանէն յետոյ պահակների նինջից օգտուելով գնացքից վար ենք նետում՝ աւազների վրայ: Լուսադէմին հասնում ենք սահմանի Մահմուդապատ քաղաքը: Փախստականի տարազով ճաշարանում նստած ժամանակ ենթարկում ենք ոստիկանների հարցաքննութեանց, եւ չկարողանալով վայելել Զօհրաբի անուն մի հայ բամպակամշակ անձի երաշխաւորութիւնը՝ մեզ առաջնորդում են բանտ եւ 16 օր պահելուց եւ հարցաքննելուց յետոյ, ըստ Մէշէտի ոստիկանական կարգադրութեան, որոշում են մեզ յանձնել Արթիկի ուս սահմանապահներին:

Մեր աղաքանքները, դրամական խոստումները, միջազգային օրէնքի համաձայն Ռուսերուն չյանձնելու մեր բողոքները, ոչինչ արդիւնք չեն տալիս, պէտք է փախչելու մասին մտածել:

Պետրոս տարակարծիք է, ես պնդում եմ եւ համոզում նրան ստելով որ միեւնոյնն է, եթէ անգամ չգնդակահարեն, Ռուսները այլեւս մեզ բնաւ ազատ չեն թողնի:

Մութը նպաստաւոր հանգամանք է, անցնում ենք նեղ կիրճի մօտով, պէտք է կորովի լինել... առաջնորդող երկու ժանտարմներին յաջողում եմ ձիուց տապալել, մինչեւ նրանց սթափուելը մենք փախչում ենք տարբեր ճամբաներով:

Գիշերային սարսափի, քաղցի, կասկածի մտորումների ենթակայ՝ քար ու ժայռ, շուր եւ ցերս կոխոտելով, հազիւ սահմանէն քանի մը քիլոմետր անցած, լուսադէմին փնտռում ենք իրար, մէկս ձորում, միւսը հողաբլուրներում, շւայնելով ու գաղանի կանչերով:

Գտնում ենք իրար, սրտապնդւում ու այսպէս դեռ 10 օր շարունակ պայքարելով, այս անգամ քաղցի, ծարաւի, բնութեան ժայռ ու ձորերի հետ՝ հասնում ենք մի դիւղ, սակայն մեզ հիւրընկալող գիւղացին մեզ խաբում է եւ յանձնում Ղոչանի պահակներին:

Հարցաքննութիւն, հեռագրական կապ այդ շրջանների կեդրոն Մէշէտի հետ, ուրիշ հրահանգ մեզ կրկին յանձնելու ուս սահմանապահներին:

Մեր պոռում-գոչումների եւ քաղաքական յանցաւոր ճանչցնել տալու բողոքներուն վրայ մի քիչ մեղմանալով, ոստիկանապետը՝ որ թափրիզեցի էր, առաջարկում է մեզ՝ «լրտես»ներիս համար, երաշխաւորելու դիմում կատարել թափրիզ Ն. Մելիք-Թաւազեան առաջնորդի մօտ:

Արքեպիսկոպոսին համար պարզ էր որ մենք լրտեսներ չէինք, ան մեզ ներկայացուցած է որպէս իր հարազատներին, Ռէզա Եաի Փաիլեիի միջոցով մեր ազատութիւնը եւ հետապնդումներէ ազատ կացուցանելը ապահոված: Ուստի Ղոչանում 25 օր մնալուց յետոյ, թագաւորի կարգադրութեամբ ճանապարհուեցինք թափրիզ:

\*  
\*\*

Պետրոս Մարգարանեանը, որ տարիներէ տառապանքի կնիքն էր կրում ճակատին, եւ ազատագրուած, լոյս եւ պայծառ Իրանի երկինքը թողնելով, իր ճակատագրի՞, թէ՞ արդեօք իր խելքի կրկին զոհն է դառնում: Նա երկար չի մնում Թավրիզում, իր արկածախնդիր ողին կրկին քշում է բանտերը...: Թավրիզում գերծ լինելով հետապնդումներից, ազատ շունչ քաշելով մի առ ժամանակ, նա հիմնաւորապէս հանգստութիւն չունէր: Որոշում է անցնիլ կրկին Սիպիր, Ուֆա քաղաքը, որտեղ դեռ աքսորումն էին թողել իրեն ընկեր Պետրոս Տէր Պօղոսեանին, Զաւալ Փաշայի սեպեկիչին, եւ Ստեփան Ծաղիկեանին, մտածելով որ նոյն իրենց ազատած ճամբով կ'ազատի նաեւ ընկերներին: Գժբախտաբար նրանք Ուֆա չեն լինում: Ընկերներ յայտնում են որ նրանք փախչել են Խարկով: Եւ Մարգարանեանը շնորհիւ իր սլարսկական անցադրի, կարողանում է մինչեւ Խարկով ապահով հասնիլ:

Բայց Խարկովում բռնում է, երբ հետաքրքրում է այդ երկու ընկերներին զտնելու համար: Արդարեւ այդտեղ ծանօթանում է մի տաճկահայ անձի, ու ճաշարանի մը մէջ անվերապահօրէն յայտնում իր ինքնութիւնը նրան: Սա յանձնարարում է ճաշարանում ըստպատել, մինչեւ որ ինքը նրան ապահովութեան համար կարգադրութիւններ անի: Ու մինչդեռ Փիթը միամտաբար նրան է սպասում, Չեկայի այդ լրտեսը յայտնում է իր մարդկանցով ու նրան ձերբակալում:

Չեկան գինքը մեղադրում է նախ Սիպիրից փախստականի հանգամանքով, երկրորդ՝ սլարսկական «լրտես» կոչելով նրան, եւ երրորդ՝ որպէս փախստական Տէր Պօղոսեանի եւ Ծաղիկեանի ընկեր:

Հարցապնդումներից յետոյ այլեւս ներման ոչ մի չող չժպտաց Պետրոս Մարգարանեանի համար, նրան Խարկովից յանձնում են Երեւանի Չեկային, ուր գնդակահարում է 1932 թուին:

## ԵՂԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԸ ԴՐՈՒԱԳՆԵՐԸ

**1912**

Օսմանեան Սահմանադրութեան մեղրալոյսի շքրձանը վերջ գտած էր աւելի քան դառն յուսախաբութիւններով:

Ատանայի Հայոց զանդուածային ջարդերէն յետոյ՝ 1909 Ապրիլին, կը մերժուէին կայսրութիւնը բաղկացնող ազգերու եւ ցեղերու եղբայրացումի զեղումները, անձի եւ ինչքի ապահովութեան վերաբերեալ բարենորոգումներուն գալով՝ ոչ մէկ յայտարար երեւոյթ:

Հայաշատ գաւառներուն մէջ, փոփոխութիւնը այն էր, որ Գիւրտերու կողմէ, իշխանութիւններու ներողամիտ աչքին տակ, հայ դիւրերու վրայ կատարուող պարբերական կողոպուտները օրեր տեւող

զանգուածային բնոյթ չունէին, այլ մասնակի գողութիւններ եւ իրենց արօտավայրերէն ընտանի կենդանիներու յափշտակութիւններ:

Հպատակ ժողովուրդներու հետ հասկացողութեան դալու, բանակցելու ասանդական միջոցէն շեղում տեղի ունեցած էր ուրեմն՝ որ էր ջարդը:

Այդ էր քուէարկութեան կերպը՝ դեկավարութեան ցոյց տալու համար ժողովրդական կամքը, որ ամէն քուէարկութեան պէս յատուկ պատրաստութիւններ ունէր:

Ուրեմն «հասկացողին շատ բարեւ»:

Նշմարելի փոփոխութիւն կար կրթական դեռնի վրայ: Մամուլի ազատութիւն՝ այն իմաստով որ գաւառներու մէջ մայրաքաղաքէն հայ օրաթերթեր կը ստացուէին, թղթատարութիւնը բարելաւուած՝ խոշոր քաղաքներու եւ գիւղաքաղաքներու միջեւ՝ պետական ցրուիչներով: Թէեւ գիւղաքաղաքներէն այլուր կը կատարուէին անհատական միջոցներով, ուստի անկանոն եւ թերի:

Այսպէս՝ դպրոցական մարզին մէջ զգալի վերելք մը տեղի կ'ունենար, մասնաւորաբար գաւառի Հայոց կողմէ, տուններու եւ հաւաքոյթներու մէջ խօսքի, երգի ազատ ելոյթներ տեղի կ'ունենային: Համիրտեան շրջանի ըմբոստութիւններուն առթիւ յօրինուած մարտաշունչ երգեր, նոյնիսկ ազգային դիմադրականութեան նուիրուած թատերգութիւններ կը տրուէին, տրամադրելի միակ բեմերէն՝ եկեղեցիներու Ս. սեղաններէն՝ Մեծ-Պահճի օրերուն մասնա-յատուկ սեւ վարագոյրներուն առաջ:

Երկրին մէջ եւ դուրսի աշխարհին հետ հաղորդակցութիւնները բոլորովին ազատ էին, որուն բացասական կողմը եղաւ մանաւանդ Հայոց համար աղիտաբեր՝ զանգուածային պանդխտութիւնը, իբրեւ հետեւանք դարերու բռնազրաւումներով ժողովրդական աղքատացումի առաջնորդող պետական քաղաքականութեան:

Այժմ, իբրեւ օսմանեան քաղաքացի, Հայուն տրուած շօշափելի «իրաւունք»ը կը կայանար վճարել յաւելեալ տուրք մը՝ արեան տուրքը յանուն «նոր հայրենիքի» պաշտպանութեան, երեք երկար տարիներով զինուորական պարտադիր ծառայութիւն: Տնտեսական ահաւոր չարիք մը, իր օրական ապրուստը հազիւ հանելու կարող զինուորացուներու ընտանիքներուն համար՝ մեծամասնութեամբ թըշուառ գիւղացիներ, իսկ իրեն զինուորին համար մարդկայնօրէն անտանելի, պժգալի, պայմաններու բերմամբ անհանդուրժելի:

Թրքական բանակին պարզ զինուորը գրաստ մըն է, չունէն ակելի յարգ չունի, հրամանատարութեան բոլոր քմահաճոյքներուն ենթակայ կենդանի մը, կը ծառայէ իբրեւ ամէն ինչ, ծառայ, աղախին, «կին»: Առաջին զինուորագրուողներէն լսուած պատմութիւնները սահմուկեցուցիչ էին բնականաբար, հայ սրբակենցաղ միջավայրին համար, նոյնիսկ խաղաղութեան օրերուն մէջէն ողջ-առողջ վերադառնալու պարագային:

Ահա, բազմերրորդ պատճառ մը եւս Պետրոս Մարգարանեանի եւ իրեններուն համար, որպէսզի «գլուխը չկապուած» ան պարտաւորութիւն լքել ծննդավայր եւ ընտանիք, լալով ու պարտքով ինքզինքը նետէ հեռաւոր Հիւսիսային Ամերիկա:

«Մայր եղիր՝ դիմացիր»: Ի՞նչ փոյթ:

Ասոնք մեր նորեկուկ, իրենց ազգը չճանչցող «հայ» պատմաբանի ականջներուն «վրզ» կու տան կ'անցնին:

Անգրագէտ երկիրներու մէջ, պատմական փաստը, «տօքուման» կոչուող՝ ժողովուրդն է:

**1915**

Պանդուխտ է Պետրոս: Նոր յոյզեր ապրած, հին ու նոր յոյսեր միշտ իր շալակին ճնշող, կ'ապրի օտար աշխարհ՝ հեռաւոր, ուր զինքը «փիթ» մկրտած են: Իր մինակութեան պահերուն մէջ միշտ հոն է, ծննդավայրը, տակաւին քաղցր են այդ ապրումները, ինք կը խնամէ զանոնք, կը զարդարէ:

Այդ օրերն ալ «չատ տեսնուեցան» մեր պանդուխտներուն համար:

Անոնց երազները ամպոտեցան հետզհետէ՝ մտնելու համար սեւ խաւարին դիրկը: Իր «երկիրը» հուրի-սուրի մէջ, հոգին տիւ եւ գիշեր խոտվքին ծոցը, միտքը յանգեր է անպատում արհաւիրքի մը իրականութեան, որուն մէջ թաւալեր է իր ազգը համայն, յաւէտ բաժանում հարազատներէն, սիրելիներէն: Դարերու կնիք կըրող ուսուցումով, փորձառութեամբ կը տեսնէ կատարուած ոճիրը: Բնագրը չի խաբեր զինքը:

Իր անհանգիստ հոգին առաջնորդեր է զինքը ոճրագործը պատժելու սրբազան առաքելութեան: Հոն, մայր հողի վրայ ամէն քայլափոխին ճշմարտութիւնը կ'ազաղակէ, որ ան իրօք այլեւս զուրկ է տունէ-տեղէ, ծնողքէ: Կը թռչտի խելահար անոնց ցիր ու ցան յօշոտուած դիակները կըրող սուրբ հողերուն վրայ՝ սիրելիներու արկնուովը ներկուած:

Նոր կեանք մը կը վերածնի իր մէջ, երբ անգամ մը մայր հողին վրայ է, այն պահէն երբ կամաւորի անպաճոյճ սարքաւորումին մէջ զիրկն ունի վրիժառու չար գործիք մը՝ այն մօսիւնը, զոր հայ Ֆէտայիին սրտագին ու անբաժան ընկերն ըլլալը գիտէր մանկութենէն, այն օրերէն երբ ինքն ալ լիաթոք երգեր էր, արցունքոտ աչքերով, «Մեր Հայրենիքը» «թշուառ», «անտէր», որ այժմ իրաւամբ փոռած էր իր աչքերուն տակ, եւ ուր եկեր էր իբր պաշտպան որդի, զայն ամոքելու, հոգալու, անոր տէրն ըլլալու վառ հաւատքով:

Հինաւուրց ժառանգ, պապենական հողերու վրայ է, հալածելու իր ազգին յաւիտենական ոսոխը, որուն վրայ ամէն հանգրուանի կը չափէ մեծութիւնը ակերներուն, փլատակներուն տակ իր անմեղ ցեղին տարաբախտ անդամներուն բզքտուած մարմինները կը համրէ

ու փոխ-վրէժի դիտաւորութիւններով ինքզինքը մխիթարել կը փորձէ, երբ կը դիտէ Հայոց գետերը բոսոր գոյն ունին, երբ կը հանդիպի վերապրողներուն՝ անոնց աչքերէն ծով արցունք:

Մեծ է արդարեւ պատուհասը՝ ցաւը խոր:

Անոնց համազօր կը զգայ իր մէջ նոր հաւատք մը, դէպի նոր՝ ոսկեղօծ ապագայ:

Հայաստան մը՝ միացեալ, ազատ, անկախ:

Իրօք, արշալոյսը կը բացուի պահ մը, անակնկալ վայրիվերումներ, կը մարմրի, կ'անհետի:

**1916**

Թշնամիի ընդժողովեաներ վխտացող ովկիանոսէն եւ բեւեռամերձ ջրերէն դէպի հայրենիք իրենց կատարած ճամբորդութեան խոհերուն մէջ, Պետրոս եւ իր կամաւոր ընկերակիցները բնաւ չէին կրնար համոզուիլ արեւմտահայութեան հասցուած արհաւիրքին եւ անոր կրած աւերածութեան մեծութեանը: Իրենց վրէժխնդրական զգացումին քովընտի ունէին թաքուն յոյսեր, ազգային վերածնունդին կապուած ծրագիրներ: Իրենք անոր ազատութեան, անկախութեան բանակի կորիզն ըլլալու երազը կը փայփայէին:

Այդ հաւատքով առյցուն, եկեր ու յախուռն կերպով նետուեր են թշնամին հալածելու, պատմական հայ հողերէն քշելու իրենց կոչումին: Զիրենք հիւրընկալող բանակին յառաջապահներ՝ ազատագրեր են արեւմտահայ գաւառներուն մեծագոյն մասն ու անոր կարեւոր կեդրոնները՝ թէեւ աւեր, ամայի, երբ շատ չանցած վերջ կը դրուէր իրենց այդ սրբազան առաքելութեան ու 1916-ի գարնան արեւը կը խաւարէր Հայոց երկնակամարին վրայ:

Ապրող ազգերու պատմութեան եւ Հայոց միջեւ սեւ վարագոյր մը կ'իջնէր՝ մեզ նետելով անոր ետին:

Հինաւուրց անէ՞ծք մըն էր որ կը շղթայէր Հայուն տենչերը, որ ցարդ երբեք չէր կրցած խորտակել անոր ապրելու, վերածնելու եւ տեւելու կամքը: Անոր պատմութիւնը իրաւի յաճախ իր վերջին էջը գրած ըլլալու պարագաներ ցոյց կու տար:

Հայ կամաւորը կը հրաւիրուէր զինաթափութեան իր դաշնակիցին կողմէ, կը սրբապղծուէր անոր զոհերուն յիշատակը եւ սակայն այդ մռայլ, անորակելի վիճակին մատնուած, ան կը մերժէր իր ինքնութենէն հրաժարիլ, չէր հանդուրժեր որ իր շարքերը լուծուելէ յետոյ ձուլուին սեւէ կաղապարի մէջ, սեւէ ազգութեան կամ համայնքի մէջ:

Ուրկէ՞ ստացեր էր այդ զօրութիւնը, ի՞նչ կրնար ակնկալել այդ պահուն իր վաղուան վերաբերմամբ, երբ արդէն իսկ բուռ մը ազգը վերածուած էր իր տասներորդին, այն ալ թափառաշրջիկ, ա-

մէն ծագերէ օգնութիւնն հայցելու օրին ինկած, օտարութեան տանող ճանապարհներու վրայ:

Հայ կամաւորը կը պայքարի նոր ճակատի վրայ՝ վերապրողներուն հետ:

1917

Բոլոր ազգերու պատմութեան, համայն մարդկութեան համար ցնցող եւ մեծ թուական մը:

Հայ բանաստեղծը զայն ճշգրտօրէն կը բնորոշէր իբրեւ դարասկիզբ մը, երբ զիրենք կառավարողներուն հետ մրցակցութեան ելան «խելագարուած ամբոխները»: Առաջին տիեզերական պատերազմի չորրորդ տարուան սկիզբը, աշխարհի նորագոյն եւ մեծածաւալ կայսրութեան ինքնակալը իր դահին հետ կը թաւալէր ռուս ժողովուրդի յարուցած փոթորիկէն, որ հետզհետէ պիտի սաստկանար դասակարգային հաշուեյարդարի անպատում հետեւանքներով, միջազգային ծաւալով:

Փոթորիկը, ծանօթ Ռուսական «Փետրուարեան» եւ «Հոկտեմբերեան» յեղաշրջումներով, կ'անցնէր մանաւանդ հայ ժողովուրդը պատմութեան վիճին մէջ անհետացնող, անոր վրայ նոր դիզուող փոշեկոյտին վրայէն:

Պիտի ցրուէ՞ր զայն, պիտի թեթեւցնէ՞ր անոր չարաբաստիկ ճնշումը, ազգի մը վրայէն, որ միշտ պատրաստ յարութեան, կը խայտար յոյսերու բովին մէջ, ցոյցերու եւ այլեւայլ դոռում-դոշումներու ականջալուր:

Տակաւին իբր ազգ ապրելու պատեհութի՞ւն մը: Իրօք, դառն պայմաններու տակ, Հայը ինքզինքը դէմ-յանդիման կը դտնէր ինքնորոշման, իր սեփական հողերուն մէջ, որ կը պարպուէր յաղթական Ռուսէն՝ թշնամին վռնտած:

Ո՞վ ազատութիւն հոգեպարար:

Այս էր արձագանգը այդ հեռուոր ցնցումներէն եկող: Եւ ինչո՞ւ այդ ազատութիւնը, ամէն անհատի համար, ապրելու իրաւունք չնորհող ամէն համայնքի, պիտի չփշրէ նաեւ կապանքները բոլոր լարերուն, կղզանքները բոլոր դռներուն, որոնց ետին կը նետուէր, իբր դոյութիւն՝ մահուան դատապարտուած մեր ազգը:

Հայ կամաւորը, հազիւ տարի մը առաջ, իր բախտին նետուած, հողի եւ հպարտութիւն կը կրճէր, օրեր կ'անցընէր անձկալի՝ դարբերու չափ երկարատեւ, անոնց պարունակութեամբ՝ քաղցր ու լեղի խոհերով կ'ապրէր:

Ի սկզբան մատի վրայ համրուող հազարներ էր անոնց թիւը: Այժմ զոհուած, քիչցած ու ցրուած: Վերադարձողներ կային արդէն նետուած՝ իրենց պանդխտութեան հին վայրերը՝ մինչեւ ամերիկաները: Ինքզինքնին նետած էին ոմանք՝ դաղթականութեան՝ վերապրողներու՝ ծոցը: Հողեկան կապեր հաստատեր, ընտանիք կազմեր

էին ուրիշներ: Պակաս չէր թիւը խմբակներով թափառողներուն, անոնք, զոհերը անարգ խարէութեան մը, անկարող էին զսպել իրենց զգացումները, դժգոհներ ու ըմբոստներ՝ կրկին սին խոստումներու ունկնդիր, ազգին եւ իրենց մեծերուն շուրջը բոլորուողներ:

Պետրոս Մարգարանեան, կենսուրախ բնաւորութեամբ, լաւատես, տխուր մտածումներու վրայ երկար յամեցողներէն չէր: Իր նմաններուն ծառայելու մէջ պատրաստակամ, ուսն բանակին մաս կազմելը նոյնպէս մերժած ու ինկած էր իր ծննդավայրէն եկող, Եփրատն ի վեր, ճամբաներուն վրայ: Հոն գտած էր հարազատներ, մերձաւոր, հեռաւոր, ու գլխիկոր նետուած անոնց պաշտպանութեան, օգնութեան, առանց ընկրկելու պատերազմական շրջաններու մէջ հանդիպելիք վտանգներուն առջեւ: Ինչ որ սեփական է իրեն՝ կեանքն էր: Ինչ որ պիտի հայթայթէր, ինչք, դրամ՝ կը պատկանէր իրեննեւուն, շուրջը դարձողներուն, քիչ մը բոլոր կարօտեալներուն:

Ինչէ՞ր պիտի բերէր ոռոսական այդ յեղափոխութիւնը: Պետրոսին համար անմիջականը իր աչքերուն պարզուող, անտուն, անտէր, նպաստընկալ բազմութիւններուն մօտաւոր օրերու հարցն էր:

Հայ յեղափոխական կազմակերպութեան մը զինուորեայը՝ դաշնակցական, ինքը եկող յեղափոխութենէն վախցող մը չէր, անկէ բարիք ակնկալողներէն էր բնականօրէն: Իր խելքը կը հասնէր ներկայի կարիքներուն, որուն նուիրեալն էր, եւ ոչ թէ ապագան գուշակելու:

Ու կը մնար գրաւեալ շրջանին մէջ՝ Կարինը իբրեւ կեդրոն:

Կամաւորական գունդերուն լուծարքը տեղի կ'ունենար անդրըկովկասեան փոխարքայանիստ ղեղակերտ Թիֆլիզ քաղաքը, գրեթէ զուտ հայկական թաղի մը կեդրոնը՝ հսկայ շէնքի մը՝ Հայկական Շտապի յարկերուն մէջ, ուր կատարուած էին անոնց արձանագրութիւնները, եւ ուր «պահ գրուած» էին իւրաքանչիւր կամաւորի՝ անշուշտ չնչին թիւով, սակայն թանգարժող անձնական գոյքերը: Անոնցմէ մեծամասնութեան համար այս վերադարձը, ազգային պարտականութիւն մը կատարելը ողջ-առողջ, ունէր ձանձրոյթ եւ տըխրութիւն փարատելու մխիթարական կողմ մը՝ մեծ եւ շքեղ քաղաք, ազգային միջնոլորտ, թէեւ բնակչութիւնը հայ՝ վրացախօս կամ ոռոսախօս: Եւ սակայն արեւերահայոց մտաւորական կեդրոնը իր դպրոցներով, հրատարակութիւններով, օրաթերթերով ու թատրոնով օժտուած:

Այս լուծարքէն յետոյ ազգային մարմիններու մտահոգութիւնը նոյնպէս վերստին Թիֆլիզի մէջ կը փոխադրուէր, ռազմաճակատի դորձողութիւններէն հետու կը պահուէին մեր ազգային մարմինները, բացի հոն տակաւին հրատապ խնամատարական գործունէութենէն:

Ռուս յեղափոխութեան կարգախօսութեան մաս կը կազմէր «ապակեդրոնացում»ը, որ կը պատշաճէր նախկին փոխարքայութեան ծայրագաւառներուն:



Փետրուարեան յեղաշրջումէն սկսեալ եռուզեռ կար Անդրկովկասի երեք ազգերու ծոցին մէջ, Առժամեայ Կառավարութիւնը լայն մասնակցութեան կը հրաւիրէր զիրենք նոր պետութեան գործերուն, որոնք ի յայտ կու գային իրենց ազգ. խորհուրդներով եւ առանձնա-յատուկ կուսակցութիւններու միջոցաւ :

Կամաւոր եւ դադթական, ոչ քաղաքացի, նոր փոթորիկին մէջ, անյայտ ապագայով, հանդիսատեսներ էին, յարաբերաբար ազատ, չըջագայելու, իրենց հոգերով գրադելու՝ օրուան լուրերէն տարուբեր :

Յեղափոխութեան երեւումով, կամաւորին զայրոյթը տապա-լուած Յարի որոշումներուն դէմ կը շիջէր, կը շրջուէր լաւատեսու-թեան, անոնց սիրտն ու միտքը կրկին կը փնտռէր իր խմբապետ-հրա-մանատարները, որոնցմէ առաջինին՝ ազգ. հերոս Անդրանիկին կ'եր-թար, իբրեւ նոր առաջնորդ, արեւմտահայութեան շահերուն պաշտ-պանութիւնը :

Անդրանիկ, կը դառնար պարագլուխը նորակազմ «Արեւմտա-հայոց Ապահովութեան Խորհուրդին», որուն գլխաւոր առաքելու-թիւնը պիտի կայանար, արեւմտահայ գրաւուած հողամասերուն պաշտպանութիւնը :

Արդարեւ Ռուս ժամանակաւոր Կառավարութիւնը կը հրաւի-րէր իր քաղաքացիները Սահմանադիր ժողովին ներկայացուցիչներ ընտրել, իսկ արեւմտահայը իբրեւ զանգուած կը մնար իր բախտին ձգուած :

Մինչեւ տարուան կէսը նախկին կայսրութեան համայնքները կ'ապրին յեղափոխութեան մեղրալոյսի օրերը, ընտրութիւնները վեր-ջացած էին : Յոյս ու մտածում կը սաւառնէր դէպի մայրաքաղաք, որ կ'ապրէր նոր երկունքի օրեր :

Պետրոս միշտ Կարին է, հոն պիտի հասնէին «հոկտեմբերեան ծնունդի» աւետիսները, ու այս նոր փոթորիկին արձագանդները հիմ-նովին կը ցնցէին Հայն ու իր մօտաւոր ապագան :

«Դէպի տուն» կարգախօսին անհամբեր սպասող ռուս զինուոր-ըր դունդ առ դունդ կը փութար ծննդալայր, դետին կը թափէր իր յաղթութեան պտուղը, ռազմաճակատը կը լքէր, կը թողուր անոր, որ պիտի ուզէր եւ կարենար զայն յափշտակել, հարուստ էր աւարը, հայ ցիր ու ցան մնացորդացին յանպատրաստից կը պարտադրէր ճա-կատիլ իր դարաւոր ոսոխին :

«Փիթ» կը նետուի հոն, տատամսիլ ներելի չէ իրեն, Կարնոյ մէջ դռնուող նախկին մէկ քանի զինակիրներու հետ մաս կը կազմէ ճակատին ամենէն պարագ ձգուած մարզը պաշտպանելու զրկուած ցանցառ դունդին, Քղի, Ճապաղջուր դիծը, «Թէքէ Տէրէսի», «Պին-կեօլ-Բիւրակնեան լեռներու լանջերուն վրայ : Միւս վայրերն են Վան՝ առանձնացած, Պիթլիս՝ իր բնիկներուն ոյժերուն կռթնած, Երզնկա-Բարերը՝ դադթականական խաժամութիւն, Մուրատի, Սեպուհի փոր-ճառու հայդուկներուն առաջնորդութեամբ :

Անդրանիկ Թեֆլիզէ : Ուր տարուան նոր լուրերուն բնազդաբար արձագանդ կու տար՝ մեր ժողովուրդի գոյութեան սպառնալիքները մատնանշելով, նախ իր համախոհներու եւ մտերիմներու շրջանակին մէջ, ու ապա «Հայաստան» օրաթերթով :

Իր յանկերդն է՝ «Պէտք է գալիք հաշտութեան ժողովին ներկայանաք, մեր հայրենեաց հողերէն գոնէ բուռ մը հող մեր ձեռքին մէջ» : Ուստի իրեն համար, ազգին համար մահու-կենաց խնդիր էր Կարնոյ պաշտպանութիւնը, նոյնիսկ ի դին հայ արեան վերջին կաթիլին : Կարին՝ մարտկոցը հայ կամքին ու կեանքին, պատնէշը՝ Պիթլիս եւ Վան գաւառներուն :

«Այլպէս ոչինչ կրնանք ակնկալել գալիք հաշտեյարդարը տնօրինողներէն», կ'ըսէր ու կը կրկնէր ազգ. հերոսը, «Մեր գաշտակիցն ու մեր հաւատարիմ բարեկամները՝ Կարնոյ բերդերն են» :

1917-ին ոռու բանակը ամբողջութեամբ կը պարպէր դրաւուած հողամասերը, կայսրութեան դռները բաց կը ձգէր ամէն հովերուն :

Ահագանդը կը հնչէր Հայուն ներկայի գոյութեան, վաղուան յոյսերուն :

Պետրոս Մարգարանեան, ոգին իր փոքրիկ դունդին, անվախ, անխոնջ, նուիրեալ մը հայրենիքին, իր ամէն մէկ ընկերոջ ցաւերուն եւ կանչերուն : Ան իր գինակիցներուն կուռքն էր իբր ընկեր, բախտարեւր ոգին :

Ռուս-թրքական ճակատին վրայ տարի մը առաջ կնքուած դինազդարը ի զօրու կը մնար ամբողջ տարին : Ռուս բանակի հրամանատարութիւնը նոր հողեր ունէր, մանաւանդ անձնական, թշնամին ուժասպառ, ճակատի վիճակը կը մնար կայուն՝ երբ հոկտեմբերեան ելոյթը կու գար պղտորել դրաւեալ շրջաններուն խաղաղած կեանքը :

Հայոց զօրակոչը արձագանդ չէր գտներ : Անդրանիկի բանակին կազմութիւնը կ'ուշանար :

**1918**

Երազ եւ իրականութիւն գիրկընդխառն :

Ի՞նչ անուն տալ՝ ի՞նչ ամականով կամ գոյականով մկրտել այս տարին, որ ահագանդի մէջ ծնաւ : Որ կը բերէր յաւելեալ աւեր, հուր ու սուգ հայ ժողովուրդին եւ... եւ անակնկալ :

Մեր պատմութեան մէջ, հազուադէպ եւ անդատանլի պատեհութեան թուակա՞ն : Ճակատադրակա՞ն՝ ամենալայն ըմբռնումներով : Համազգային դասալքութեան օրե՞ր՝ որքան ալ բազմաթիւ ըլլան չքմեղացուցիչ պատճառներն անոր :

Մայիս 28 : Եռագոյն դրօշ : Հայաստանն ազատ պետութիւն :

Տարին կը սկսի ալլապէս ալ ձիւնի-բուքի մէջ : Ճակատի ծայրերէն ետ կ'ընկրկին գաղթականն ու իր անվարժ ոյժերը՝ դէպի Կարին :

Թշնամին, սիրտ առած ոռու գինուորի անխորհուրդ քայլէն,

վերանորոգուած ոյժերով, նախ իր կողմէ դրդուած հրոսակային ձեռնարկներով, խախտեր է զինադադարը :

Ճակատի օտարազգի հրամանատարութիւնը, առանց զինուորի եւ ազդեցութեան, ինքզինքը օրինաւոր տէրը կը համարէ գրաւեալ շրջաններուն ու կը ցանէ արգելք ու դաւ :

Բուն տէրը, Հայը անդեկ, անճարակ, դոյութեան բնազդը կուրցած՝ ենթակայ է եւ խաղալիք դէպքերուն, խուճապային վիճակի մատնուած :

Անդրկովկասեան ժամանակաւոր իշխանութիւնը, կամօքը վերացի եւ թաթար հոսանքներուն, դուրսէն թելադրուած, ինքզինք անջատուած կը հռչակէ Ռուս Պետութենէն, անոր բաղկացուցիչ մասերը նեղմիտ եւ սխալ հաշիւներով տարուած շուտով ցոյց կու տան որ արժանի չեն իբրեւ ազատ ժողովուրդ ապրելու, ինչ փոյթ թէ 1918 Մայիսի վերջերը իրար ետեւէ, երեք անկախ պետութեան ծնունդ կու տան :

Դարերու ընթացքին Հայոց զինեալ օժանդակութեամբ մինչեւ 1904 դար հասած Վրաց Պետութեան ժառանգորդները կուրօրէն կը հետեւին քինախնդիր հաշիւներու Հայոց նկատմամբ, որ նոյնպէս դերուած, Վրաց հողերուն մէջ տնտեսական առաւել դիրք շահած է : Նոյնպէս դերուած, Թաթարը իր հայ դրացիին մահը կը ցանկայ, զայն կը հարուածէ, կռնակէն, աջէն ու ձախէն, Հայու դիակներով կը լեցնէ հորերը, իր ազդեցութեան շրջանակին մէջ մահուամբ պատժելով ոեւէ Հայու երթեւեկ :

Ոճրածին միտք, սխալ հաշիւ, ազատ մարդ կոչուելու անարժաններ :

Տաղնապ է ընդհանուր ճակատին վրայ՝ ձիւն-ձմեռ :

Անդրամիկ, առանց զինուորի, Կարին կը հասնի ընկրկող ոյժերն ու ստած անդամներով ժողովուրդն ընդունելու : Ի զուր կը ձգտի համախմբել հայ կոչուող զինուորը, բոլորովին խլացած ազգին ճիչերուն դէմ :

Փլուզում է եւ անոր ծայրը Մայիս 28՝ 1918 :

Անդրանիկի համար անընդունելի զինադադար մը :

Պատերազմը կը շարունակուի :

Այդ է նաեւ տեսակէտը Պետրոս Մարգարանեաններուն :

**1919**

Կը յաղթեն ա՛յն ժողովուրդները, որոնք տեսակէտ ունին, ու անոր յաղթանակին կառչած կը մնան յամառօրէն :

Հայը չունէր նման դիրքաւորում եւ Մայիս 28եան Հայաստանը իր դաշնակիցներուն մեծ յաղթանակէն յետոյ կը տուալտէր անհամար դժուարութիւններու մէջ :

Երկիրը կիսովին պարպուած էր դէպի Հիւս. Կովկաս : Անվե-

րադարձ հոսանք մը, ու մնացորդացը մատնուած էր սովի եւ կարօտեալ:

Անդրանիկ, դաշնակիցներու յաղթանակէն յետոյ կը ցրուէր իր առանձին հարուածող գորաւաւը, նոր հանրապետութեան նուէր բերելով աշօրուան Հայաստանին կէսը, անոր լեռնային արեւելեան գաւառները:

Իր անխոնջ զինուորը՝ Պետրոս, վերածնունդ հայրենիքին քաղաքացի, կը վերադառնայ իր նուիրումին, միշտ նոյն հաւատքով:

Հայաստան շէնքին հիմերը ո՛չ խոր են, ու բնաւ որոշ:

Անոր վերապահուած է մաս կազմել թումբի մը, երկու աշխարհակալութիւններու միջեւ:

Կովկասեան ժողովուրդները կրնային այդ թումբը կազմել:

Շատ հաւանաբար, եթէ Թաթարը անխնայ չքայքայէր Մայիս 28եան անկախութիւնը, Թուրքը չհրաւիրէր Կովկաս:

1919 տարին Թաթարը անխնայ քայքայեց իր դրացիին տունը՝ զէնքը ձեռքին Հայոց երկիրը վերածեց դժոխքի: Հայաստանի երկու մեծ ոստաններէն հազիւ քանի մը վերստ անդին ըմբոստ թաթար դիւղեր կը քանդէին Հայոց վերածնունդի հիմերը, մեր «կարծեցեալ դաշնակիցներուն» աչքերուն առաջ:

Ազգային վերածնունդ մը կարելի՞ էր սակայն:

Շատ հաւանաբար: Եթէ Անդրանիկի (ազգ. հերոս) տեսակէտն ու ծրագիրը համազգային հաւանութեան արժանանար ու ըստ այնմ հետապնդուէր միահամուռ ճիգով, ինչ որ դժբախտաբար չիրականացաւ:

Ռուսաստանէն բաժանումը տանջանքի համազօր դադափար մըն էր արեւելահայութեան խոշոր մասին համար:

Հայաստան գաղափարը (իւր որեւէ ձեւին մէջ) երազն էր միմիայն արեւմտահայութեան՝ արմատախիլ հայ երիտասարդներու:

Մինչ ահազանդը չէր դադրեր հնչելէ, անդադար, ամէնուրեք, համայն Հայոց գլխուն վերեւ:

Եւ ազգային զօրակոչը կը մնար անարձագանգ, տակաւին աններելի դասալքութիւններ՝ գոյացող ցանցառ ոյժերու մէջ, վարկաբեկիչ երեւոյթներով:

Ղեկավար տարրը ազգին, կ'ապրէր հայրենիքէն՝ մայր հողերէն դուրս, ուր հո՞ծ հայ զանգուածներ քաղքենի եւ այլազան օտար միջավայրի մէջ զրեթէ այլասերած, անտարբեր էին, անհող, վտանգէն յարաբերաբար հեռու:

Հայրենի բնակչութիւնը եւ իր դիւղերը՝ հայ, թաթար, իրար մէջ ցանցնուած, Հայուն հանդէպ թշնամական՝ ուստի այլապէս անապահով:

1917-ի կէսերուն որոշուած, ճակատի օգնութեան զրկուելիք բանակի մը կազմութիւնը՝ Անդրանիկի գլխաւորութեամբ դոյզն կեր-

պարանք մ'իսկ չէր ստանար: Այդ բանակին կոչուած էին մաս կադմելու ամէն ոք, մասնաւորապէս կովկաս ապաստանած արեւմտահայերը: Նախկին կամաւորները, որոնք դեռ ճակատէն հեռու կը մնային, ոռս բանակին գերի ինկած թուրք բանակին հայ միւսուորները՝ յատկապէս ազատ արձակուած յեղափոխական առժամեայ կառավարութեան կողմէ՝ զինուոր եւ սպայ: Ուստի երկու բանակներէն՝ ոռս եւ թուրք, առնուած փորձ հրամանատարներով:

Պետրոս Մարզպանեան եւ իր սրտակից, զինակից ընկերները գիշերը ցերեկին խառնած, կը հետազօտեն իրենց յանձնուած գիծը, բոունցքի հարուածներ կու տան աջ-ձախ, կը հետապնդեն անվերջ ու կը ցրուեն թշնամի գօրք եւ հրոսակներ, միշտ կը յուսան յաղթել:

**1920**

Հայաստան տուն մըն է փոքրիկ, տակաւին առանց պատուհանի:

Ներսը կը ճգնին ու կը հեծեն: Դուրսը՝ ազգային հեռաստաններու մէջ աղմկալի երազներ: Մովերէ ծով Հայաստան, միաժամանակ անփառունակ փախուստ՝ կեդրոնախոյս: Ոչ մէկ շինարար, լուրջ, խելքի մօտ ծրագիր: Ազգահաւաքի ոչ մէկ փորձ: Արարատեան թէ Կիլիկեան: Հնարաւոր է կամ ոչ:

Տարի մը անցած է տարուած յաղթանակին վրայէն: Հաշուեյարդարը կը տնտնայ, կը քաջջուրի, վերիվայր կը շրջի համաժողովներու ծալքերուն մէջ: Ռուս Երկրորդ յեղափոխութիւնը կծիկի պէս ամփոփուելէ յետոյ կը քակուի ու կը տարածուի:

Հայոց տարին պիտի անցնի օրօրներ լսելով: Մեր ճակատագրին պատասխանատուները արդէն որոշած են իրենց ուղին, երկուստեք շահերու գուզադիպութիւն մը կը տեսնեն թուրք հզօր պետութեան մը վերականգնումով, մրցակցութեան մէջ են երկու կողմերը՝ առաւելագոյն օգնութիւնը ընծայելու այդ անարգ դործին, ոչ մէկ հատուցում անիրաւէն անիրաւեալ, կը պարպուին դրաւուած վայրերը, կը թողուին զինամթերք, կը բացուին վարկեր՝ թուղթ եւ հընչուն, քաջալերանք երկու կողմերէն ժամանակաւոր ապահովութեան դօտի ծառայելու կոչուած թուրք պետութեան, այդ խաղերուն մաս կը կազմեն Սեւա դիւղաքաղաքի մը անունը կրող դաշնադրին համար կատարուելիք շաղակրատութիւնները:

Ներսը՝ Հայոց տան մէջ մեծ գործեր, «պետական հարուած» խեղճ ուղեղներու կողմէ «խեղճ պետութեան մը դէմ»:

Նոր թալանի կոչ մը: Թուրքը կ'աճապարէ օգտուիլ, բզբտել «խաղալիք» դաշնագիրը:

Հանրապետութիւնը կը դիմադրէ ծունկերուն վրայ, կը յանձնուի, ու կը յանձնէ կազմ ու պատրաստ սպասողներուն՝ փրկարարութեան թեկնածուներուն ձեռքը՝ իր վերջին մնացորդացը:

Պարտուածներուն մէջն է Պետրոս Մարզպանեան, ամէն մար-

տնչումներուն ներկայ, իր համեստ բաժինէն աւելին կատարած հայորդու մը անդորր սրտովը, այն միշտ լաւատես համոզումովը որ այլեւս, եկողները սեւէ դրդապատճառ չունին նոր փորձութիւններ հասցնելու իրենց տարաբարդ ազգակիցներուն:

Փիթ, ուստի, յետագայ մօտաւոր դէպքերը մասնանշելու եւ անոնց անհեթեթութիւնը բնորոշելու համար ըսած էր. «Մենք յանձնուեցանք սուրբ պայքարի մը վախճանին, յանձնուեցանք պատուով, թէեւ ուժասպառ էինք, թրջած հաւերու պէս»:

**1921**

Ամեհի փոթորիկով արդէն մռայլած, Հայոց երկնակամարէն շառաչող տեղատարափին մէջ փոքր դադար մը: Կապոյտ երկնքի շերտ մը, քանի մը շողեր, հաւաստիք կեանքի եւ երջանկութեան, այդ եղաւ տեւողութիւնը մեր անկախութեան:

Նոյնիսկ ոչ անկախ, պարզապէս ինքնազուլիս՝ պահ մը, համատարր, սեղմ, ամփոփ, իր կարճատեւ ազատութեան օրերը ողբից էին, եւ ի՞նչ փոյթ վճարուած դինը: Միայն, տեւէր:

Փոքրիկ հողամասը Հայն ամփոփող, հասած էր թշուառութեան վերին ծայրը: Հողային արդիւնաբերութիւնը դադարած էր ներքին հակամարտութիւններու բերմամբ՝ թշնամական եւ անապահով: Ճարտարարուեստ հազիւ դոյութիւն ունէր Ռուս Կայսրութեան այդ ծայրագոտին մէջ, ոչ մէկ քաջալերանք եղած էր առ այդ, քաղաքական հաշիւներ չէին պակսեր:

Վերելքի այդ բացառիկ առիթով իսկ, տիրող պայմաններուն մէջ, անկարելի բաղձանք մըն էր յաղթահարուած տեսնել անձնատիրութիւնները, երբ ազգային դաստիարակութիւնը երկար դարերու ընթացքին եղած էր բացակայ:

Անկախութիւնը կը տուայտէր անկարգութիւններու մէջ: Յափշտակութիւններ անհատներու, անպատիժ մնացող զինեալ խմբակցութիւններու կողմէ: Ձեռք անցած հայրենիքին պաշտպանութեան, նոյնիսկ դոյութեան պայքարի մէջ ե՛ւ հասկնալի, ե՛ւ աններելի պարտադանցութիւններ:

Բարոյական այդ անկեալ օրերուն սակայն, ազդին մէջ կային ընտրեալներ, որոնք յուսացին, պայքարեցան եւ ինչպէս:

Ուստի նոյնպէս զինաթափ, քիթը կախ, մեր երիտասարդը՝ Փիթ, իր սեփական հայրենիքին մէջ պարտեալ մը, տարագիր մը, 1920 Նոյեմբեր 29-էն սկսեալ ինքնանուէր ուղիի մը փնտռուքին է նետուեր:

Ոչ մէկ տատանում, կը նետուի նոր դրոհի մը, զինուորի մը փութկոտութեամբ: Մութ ու պղտոր հաշիւներ չունի: Կուսակցական նեղմտութի՞ւն՝ բնաւ չէ ունեցած:

Առողջ, կորովի, աչքը օտար ճամբաներու վրայ չէ, միայն թէ

արմատախիլ վիճակը վերջ մը գտնէ : Իրա՛ւ, ուրիշ բանի սիրտ չունի :

Եւ սակայն «ըմբոստներու շարքին մէջ կը գտնէ ինքզինքը, «Թրջած հաւերը՝ իր որակումով, գլուխ կը ցցեն», հոն կը տեսնէ իր տեղն ու կը զգայ իր ինքնութիւնը, իր մարդու կոչումն ու Հայ ըլլալը : Այնքա՛ն անհասկնալի, ալլանդակ, վրէժինիր ու դազանաբարոյ պայմաններու մէջ կը կատարուի «վարչական փոխանցումը», իբր թէ «մէկ Հայէն միւսը» :

Ըմբոստութիւն մը՝ յանկարծակի, անպատրաստի, առանց դեկավարի եւ քաղաքական հեռանկարի : «Դանակը ոսկորին հասած» պոռթկում մը ժողովրդական, ինչպէս կ'արտացոլայ օրը օրին գըրուած նկարադրութեան մէջ : Հայոց Փետրուարեան ապստամբութիւնն է՝ 1921 թուի :

Անկախութեան կորուստի բաժակը, զոր հարկ էր ըմպել մինչեւ մրուր :

## ԽԱՒԱՐԱՊԱՏ ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ՄԸ ՄԵՋԵՆ

Ուրեմն թշուառութիւնն ալ իր «պերճանքներն» ունի, եւ հայ ժողովուրդը կը տենչար անոնցմէ ըմբռնեն :

«Ազատարար Բանակը», «Նոր Այգ»ի յեղափոխութեան մարտիկները իրենց կոչումը, իրենց զրոհին իրաւունքը արդարացնելու համազօր դործեր ունէին ցուցադրելու, այն ալ ինկած կայսրութեան տնտեսապէս ամենէն անտեսուած փոքրիկ եւ ազքատ հողակոյտի մը բնակչութեան հանդէպ, ուր ո՛չ կալուածատէրեր կային, ո՛չ ճարտարարուեստ եւ «կապիտալ»ի ներկայացուցիչներ, երբ ոչ իսկ բարեկեցիկ տարր մնացեր էր հոն՝ եթէ կային, այն է յետին աստիճանի թշուառացած հինաւուրց ազատութեան կարօտ ժողովուրդի մը մընացորդացին հանդէպ :

Եւ որը, տակաւին կորով ունէր ըմբոստանալու՝ այդ աւելորդ պերճանքին դիմելու :

Արդարեւ, ամէն կողմէ քաջալերուած ժառանգական թշնամիէն պարտուած, Հայաստան ծունկի էր «իր ազատարարներուն» առջեւ, վաղանցուկ օրեր միայն ապրած հանրապետութեան ղեկավարութիւնը ամբողջապէս ձեռնթափ, անոնք իրապէս «այլեւս անելիք չունէին» :

Եթէ ճշտարիտ է որ, այդ մօտաւոր երէկին մէջ Անդրկովկասեան Միացեալ Հանրապետութիւններէն պատուար մը կազմակերպել փորձած է անդլիական միտքը, ան շուտով անդրադարձած է նման ձեռնարկի մը անյաջողութեան ու անյապազ թրքական ոյժերը վերականգնելուն լծուած :

Միջազգային քաղաքական խաղին մէջ մրցակցութեան զլխաւոր նպատակակէտը եղած է միեւնոյնը : Թուրք պետութեան ուժեղացու-

մը՝ զայն դործածելու համար իբրեւ ժամանակաւոր թումբ կամ պատուար: Ռուսը՝ Արեւմուտքին դէմ, Արեւմուտքը՝ Ռուսին:

«Օգնէ ինքզինքիդ, որ Աստուած ալ օգնէ քեզի»: Կովկասեան ժողովուրդները այս պատգամը անգիտացան, ու այսպէս Հայաստան եւս դուրս նետուեցաւ միջազգային որոգայթներու մէջ ազգակ մը ըլլալու որեւէ հանգամանքէ, երբ անոր ճակատագիրը կը յանձնուի Խորհրդային Միութեան անունով ներկայացող հայանուն «յեղափոխականներու»՝ 1920 Նոյեմբեր 29-ին:

Ընդունինք ուրեմն Նոյեմբեր 30-ը նոր դարազուլուի սկիզբ:

Այդ առաւօտուն Հայաստանի ժողովուրդը խաղաղութիւն կը հայցէ: Իր ծանր վէրքերը սպիացնելու միջոցներու փնտռուածքն ունի իբրեւ գլխաւոր հոգ եւ ապրիլ, ապրիլ: Ի՞նչ կը ցցուի իր դէմ: Ճընշում, հաւատաքննութիւն, այլազան կամայականութիւններ, ձերբակալութիւններ անհատներու, բանտ, հաւաքական աքսոր սպայութեան:

Իրենց ո՞ր յանցանքին իբր պատիժ: Յանուն ի՞նչ դադափարի:

Ինչպէ՞ս ինքզինք մխիթարել, համակերպիլ: Անսպասելին տեղի կ'ունենայ Հայու անունով, Հայու ձեռքով, ո՛չ Անգլիացո՛ւ, Ռուսի՛, Թուրքի՛:

Մի՞թէ այդքան կոյր եւ հայանուն վարիչները, սրտով, մտքով, հոգիով: Որքա՞ն անոնք պէտք է այլասերած ըլլան իրենց ժողովուրդը չճանչնալու աստիճան, անոր ցաւերուն, կարելիութիւններուն ու անմիջական կարիքներուն հանդէպ անհաղորդ:

Օտար դադափարակիցներու եւ հրահանգներու գրաւական տալու պահանջի առջեւ՝ նկարագրի ի՞նչ այլաների կեցուածք:

Կարելի՞ է վարչակարգի մը սկզբնաւորութեան այդքա՞ն անտեղի վրէժխնդրութիւն ցոյց տալ, գերին ըլլալ արտաքին ցուցմունքներու, տապալուելի ու տառապիլ կասկածամտութեամբ մը հիւանդագին, իրենց տէրերը դայթակղեցնելու աստիճան բարբարոս վերաբերմունք ունենալ:

Արդարեւ երկար է Փետրուարեան ըմբոստութեան տուն տուող ամբաստանադիրը:

Պետրոս Մարգպանեան, Հայրենիք ոտք կոխած օրէն, յարմարող եղած է տխուր եւ երջանիկ անակնկալներու, ջարդի եւ թափառաչըջիկներու, Հայաստանի անկախութեան: Այժմ պարտուեալներէն է ու իբր քաղաքացի ապաւիններ է յաղթողներու «ասպետական ուղիին»:

Առողջ երիտասարդ, ուշիմ, ճարպիկ, անձնական հրապոյրով օժտուած, Հայրենասիրութեամբ հարուստ, յեղափոխական դադափարաբանութեանց ի բնէ համակիր, կրկին համակն ուրիւրում է վերելքի նոր ուղիով ընթանալու կարգախօսին:

Եւ սակայն, աւա՞ղ, դառն է փոխանցումի տօնակատարութեան բաժակը, ինչպէս համայն ժողովուրդին, Պետրոսին համար եւս:



Ան ալ ուրեմն, մասնակից է 1921 թուի Փետրուարեան ելոյթին, կրկին պարտուած է ու վտարանդի :

Վերադարձեր է կրկին հայրենիք, այդ ըմբոստութեան մէջ անձնական շահ, միտում չէ ունեցեր, ո՛չ քաղաքական դիրքաւորում, ո՛չ ալ ռիսակալ մտայնութիւն, Հայաստան «խորհրդային» է, բայց իրն է միշտ ու պարտաւոր կը զգայ ինքզինքը՝ զայն վերաչինելու :

Նոր վարչակարգին, նոր վարիչներուն ձեռքը ինկած հարուստ ժառանգ մը չէ այդ ատեն մեր որբերու աշխարհը, ան կարօտ է արտաքին օժանդակութեան, մանաւանդ ներքին կարգապահ եւ զոհարերող ոգիի, ինչ որ շատ խնդրել է տառապած եւ դարբերու թերահաւատութեան մէջ կորդացած համայնքէն :

Արդ, ըմբոստներու վերադարձը երաշխաւորուած է ընդհանուր ներումի հանդիսաւոր հրամանագրով՝ Յեղափոխական Ռուսաստանի «գերագոյն սովիէթ»ի հրովարտակով : Դատապարտուած են վարչական փոփոխութեան առիթով կատարուած անսովոր, ապօրէն ծայրայեղութիւնները, տիրահազակ դերակատարներ վտարուած, մեկուսացուած : Կրկնակի հաւաստիքներ ուրեմն վերադարձողները հրապուրող, որոնք այլեւս ազգային սեփական անկախութեան կորուստին պիտի համակերպին : Զախողած են՝ իրենց ոյժերէն վեր կռիւններու մէջ մտած, տրուած խոստումներու դրժումին, ներքին եւ արտաքին դաւադրութիւններու զոհեր են, որ փոքրացած իրենց հայրենիքի նոք սահմաններու ապահովութիւնը օտարին փոխանցեր են, Սովիէթ ժողովուրդներու միութեան մէջ փնտոեր են իրենց ժողովուրդին գոյութեան միջոցը եւ անոր ապագան :

Վերադարձեր են, ու արդէն յուսախար են՝ անհատական եւ աշխատանքի ապահովութեան իրենց ակնկալութիւններուն մէջ :

Կասկածամտութիւնը վերստին կը կրծէ նոր վարիչներու հոգին : Քօղարկուած հալածանքը չ'ուշանար գլուխ ցցելէ : Որո՞նց նրկատմամբ : Երբ Հայաստանը բնակուած էր ջարդերէ վերապրող ժողովրդական խմբակցութիւններէ, աւաններու մէջ օր աւուր ապրող արհեստաւորներէ եւ գիւղացիներէ :

Այո՛, մեր այդ դժբախտ երկրին վարիչները խորթ են իրենց ժողովուրդին, չեն ճանչնար զայն, անտեղեակ են անոր վշտին ու տենչին, անոր հետ մտքի եւ հոգիի կապեր չունին, իրենց յեղափոխականի կոչումին անարժան են, հլու եւ կոյր հետեւողներ են սարսափազդու վարչակարգի մը տիրակալներու ցուցմունքներուն, իրենց հոգիները ծախած մարդիկ :

Կամաւ թէ պատահամբ, իրենց յանձնուած է ազնիւ, պատուաբեր առաքելութիւն մը, որուն ընդառաջեր են անձնական հաշիւով կամ անգիտակից, որ է վերանորոգել ազգը, զայն ամփոփել՝ խնամել, վերաչինել քարուքանդ հայրենիքը ոչ թէ գեղակերտ շէնքերով միայն, որոնք երկրաշարժէն մէկ վայրկեանէն կրնան փչրուիլ, այլ նոր կարգերուն պատիւ բերող ոգի ստեղծել, ու առ այդ բաւ է յենուիլ հայ

գիւղացու բնածին առաքինութիւններուն՝ հաւասարութեան եւ եղբայրութեան, փոխադարձ վստահութեան մթնոլորտ ստեղծելու փրկատուքին նուիրուիլ եւ ոչ թէ երեւակայական դաւադիրներ գիմակագերծ ընելու անգոյ գործերուն :

Հայաստան գերծ է արտաքին վտանգէ, միշտ ժամանակաւոր, ինչպէս է պարագան աշխարհի բոլոր երկիրներուն համար, մանաւանդ սեփական ոյժէ գուրկ :

Ներսը կամայականութիւնները կը շարունակուին, գիշերային ձերբակալութիւններ՝ մերթ ընդ մերթ խմբական :

Դուրսի աշխարհին հետ «սիրաբանութիւնները» տակաւին կ'ընթանան միմիայն «Ամերիկեան Միջին Արեւելքի Նպաստամատոյց» կազմակերպութեան հետ, որուն «թոյլատրուած» է հոգածութիւնը մասնաւորապէս Լեհինական (Ալէքսանդրապոլ) քաղաքաշրջանի հազարաւոր որբութեան :

Արեւմտահայութեան պատուհասէ գերծ տարբերուն կողմէ իրերօզնութեան աղբիւրները ցամքած, վրայ հասած է երկրորդ պատուհաս մը, զանգուածային նոր եւ անվերադարձ զաղթ մը, այժմ ծանօթ Սփիւռք անունով :

Սեւոի Դաշնագրի բեկանումէն առաջ Կիլիկիոյ հայութեան պաշտպանութեան ծրագրով հոն փութացող ազգ. հերոսին առջեւ փակուած է անոր մուտքը մեր «Դաշնակիցներուն» կողմէ : Անդրանիկ, իր բուն գործը «կիսաւարտ» թողած, այդ անսպասելի անելին առջեւ, կ'որոշէ իր հեղինակութիւնն ու վարկը ի սպաս զնել հայրենիքի ժողովուրդին գլխաւորաբար հագուստեղէն մատակարարելու գործին, որուն պատասխանատու վարիչն է «Հայկ. Առանձին Հարուածող Զօրամասի» քարտուղար Եղիշէ Քաջունի, գործակցութեամբ հայաստանարնակ իր երբեմնի զինակից, Անդրանիկի նախկին կամաւորներէն՝ Պետրոս Մարգարանեանի :

Այս տողերուն մէջ զրուած խիստ ամբաստանագրին հեղինակը երբեք չ'ուրանար նոյն օրերուն դժուարութիւնները՝ նիւթական, բարոյական : Բայց նաեւ ներելի չէ միայն չքմեղացուցիչ պարագաներու կառչիլ եւ չչեչտել մեր պատասխանատուներուն բաժինը՝ օրուան անհրաժեշտութեան համապատասխան ոգի եւ անմիջականը հետապնդելու մէջ իրենց թերացումը :

Այդ օրերուն, աւելորդ եւ հասարակ տեղիք է ըսել, որ Հայաստանի մէջ այլեւս ոչինչ կար քանդելիք, այլ միայն ու միայն կերտելիք՝ դուռ ու դպրոց, տուն, աւան, քաղաք, ջրանցք, մանաւանդ, նամանաւանդ՝ ոգի :

Եւ սակայն, անոնք դտան քանդելիք բան մը՝ «խիստ անմիջական, կարեւոր անելիք» մը :

Քանդել «հինէն» մնացած, ազգային միութեան շէնքէն, կրօնքը՝ որ ըսենք իրենց հիմնական ծրագիրն էր, ապա նաեւ խառնակել լեզուն՝ որ ազգ մը բնորոշող մեծագոյն վկայութիւնն է, ապացոյցն

է անոր էութեան, յաւիտենական շաղկապը չորս ծաղերուն մատնուած անոր խլեակներուն:

Ահաւոր նենգութիւն մը, ազգային յաւելեալ աղէտ՝ ազգայինի ձեռքով:

Հին դարերու մէջ, կառավարողները, ժողովրդական դժգոհութիւնները մարմրելու համար «հաց ու կրկէս» կը հրամցնէին, եւ որովհետեւ չկան «Շիրակի ամբարները», եւ հայ աշխատաւորը «խաղի սիրտ չունի», կը մնայ լեզուն խառնակել: Ազգին երկու հատուածներուն մէջ գոյութիւն ունեցող մէկ քանի զարտուղութիւններուն կըրցել գրելու այլանդակութիւններ, զորս «ամենայն Հայոց կառավարութիւն չենք» յայտարարողներու կողմէ կատարեալ շոշորթութիւն մըն է:

Այսպէս, խաւարապատ տասնամեակին մէջ, կեանքը մայր հողին վրայ համակերպութիւններու շարան մըն է: Արգելափակման պայմաններու մէջ օրը օրին ապրումներ, ուստի առանց դոյզն խանդավառութեան ու հաւատքի, զրկանքի եւ այլազան թերիներով մթնոլորտի մը մէջ:

Սփիւռքը, ուղեկորոյս, կղզիացած մայր երկրէն հեռու, իր անդամները եւ կազմակերպութիւնները, միջավայրով ու քաղաքական տեսութիւններով իրարմէ տարբեր պայմաններու մէջ ապրելու դատապարտուած, կը խարխափին տարտարոսի արահետներուն մէջ՝ իրարու հակառակորդ հատուածներու բաժնուած:

Խորհրդային Հայաստանի դաղջ կողմնակիցներուն եւ կորսուած վարդազոյն պատեհութեան վերադարձի ջատագովներուն միջեւ տակաւին անհրաժեշտ էր ստեղծել ներքին վէճ մը եւս, որպէսզի խրամատը լայննայ ու ցածնայ, մինչ իրենց կը սպառնան ուժացում եւ ձուլում:

**1930** Այդ խաւար տասնամեակի ընթացքին Պետրոս Մարգարանեանի համակերպելու յամառութիւնը սնուցանող աղբիւրներ կային այնքան ատեն երբ, յարաբերաբար «ոտքի» կամ «նստած» (օրուան բանտի հոմանիչ) իրեն վիճակուած ապրելակերպը տեղի կ'ունենար մայր հողերուն վրայ:

Իր նամակները կը նկարագրեն թէ ի՞նչպէս ան ի վերջոյ ինքզինքը գտած է հանրածանօթ աքսորաւայրի անծայրածիր եւ մարդակուլ տարածութիւններուն մէջ, եւ յանգած անկէ խոյս տալու որոշումին:

Անյաջող փորձերէ եւ արկածներէ ճողոպրելով, Պետրոս ուրեմն հասեր է կրկին՝ օտարութեան դռները, իր կեանքին մնացեալ կէսը ապրելու համար տակաւին ունի օրեր ու տարիներ, ընդունակ է, նաեւ ազատ:

Փիթ մը սակայն «ազատ» չէ:

Իր «գլուխը բարձին դնելու» երկիր մը պարտի ընտրել, բայց նախքան այդ պէտք է թառամեցնէ իր անցուցած օրերէն անջնջելի եւ հզօր հետքեր ձգած յիշատակները, պէտք է թօթափէ զինքը կապկըպող ա՛յլ շղթաներ, ու ապա ինքզինքը ամփոփէ, միայն ու միայն իր անձին մէջ :

Այդ ամուր կապանքները փշրելու զօրութիւն կայ իր մէջը, որուն ծնուցիչն է այն արհամարհանքը, զոր ունի անցած օրերու տառապանքներուն հանդէպ, անոնց բերելիք նոր վախերուն մանաւանդ :

Կ'ուզէ ապրիլ, եւ սակայն կայ հանգոյց մը՝ վերջինը, որ ո՛չ կը քակուի, ո՛չ կը փշրուի :

Երգուեալ մըն է հանդիսաւոր խոստումներու՝ անոնց զերին : Պարտի փութալ եւ յարգել զանոնք՝ ազատագրել սեւ օրերու բախտակից ընկերներ :

Փիթի յորդացող զգացումները կ'ընդգրկեն ոչ թէ մէկ՝ բազմաթիւ աքսորականներ : Անմեղ մարդիկ ամէն ազգէ, հարազատներ ալ անշուշտ՝ կուսակցական ընկերներ, կամաւորական օրերու զինակիցներ : Բոլորն ալ անտեղեակ իրենց մեղքերուն, դատապարտութեան անունը թուանշան մըն է պատժական «յառաջդիմական» օրէնքի տետրէն փրցուած՝ կամայականօրէն փակցուած :

Անհրաժեշտ է սեղմ շրջանակի մէջ փորձառու եւ մտերիմներու խորհուրդներուն դիմել ճշդումներ կատարելու եւ մանրակրկիտ ծրագիր պատրաստել : Ասոնք ցրուած են «Սորհրդային Միութեան» ընդարձակածաւալ հողամասերուն վրայ, իրենց սահմանուած քաղաքներուն մէջ ապրելու դատապարտուած գաղափարակիրներ ունի, վստահելի, անձնագոհ, «չըջանային աքսորեալներ», ուստի լրտեսական սեւ հողիներու ցանցերուն մէջ :

Ինչպէ՞ս պիտի յաջողի անոնց հետ յարաբերիլ, առանց անոնց վնասելու, պատռել-փշրել աներեւոյթ որողայթներ :

Իր փոյթը չէ անձնական վտանգը : Հոն սառնամանիքներու մէջ, օրհասներ ապրող իր վերադարձին յուսացողներ կան :

Պետրոս կը վերադառնայ : Իր մէջ կ'ապրի հինաւուրց Հայը, համեստ ու պարկեշտ շինականներու զաւակը, տրուած խոստումը յարգող, ուրիշ ոչ մէկ քովընտի հաշիւ՝ մանաւանդ քաղաքական :

Ափսո՛ս, պահն ու ժամանակները այսքան անձնագոհ եւ միամիտ ծրագիրներու հաւատք ընծայողներ չունին այլեւս :

«Պետրոս Մարգարանեան յիմարացեր է, կատարեալ խենթ մը, որ ինքզինքը կը նետէ արջու թաթերուն մէջ՝ էջ-նահատակ դառնալու արարք մը» :

Այսպէս մտածողները դարերէ ի վեր կը սպասեն որ օտարը՝ Հիւսիսէն կամ Արեւմուտքէն «Հայաստան մը բերէ իրենց ոսկեզօծ պնակի մէջ» ու կը դոհանան ի հարկին տօնելով յիշատակը քարտէսի մը՝ գծուած բարեխնամ ձեռքէ մը :

Պետրոս Մարգարանեան (Փիթ), կը ձերբակալուի Հայաստանէն հեռու Խարկովի շրջանին մէջ:

Անոր կեանքին թեւը սակայն պիտի կտրուի Հայոց մայր քաղաքին մէջ, «իր զաւակներուն համար վերածնունդ հայրենիքին ծոցին մէջ», «Խւրախիներու մեղսակցութեամբ» կ'ունենայ վաղահաս վախճան:

Դարուոր թշնամիին կողմէ իր աւերուած ծննդավայրէն, կոտորուած, գերուած, անէացած ընտանիքին վերջին շառաւիղն է, որ կ'իյնայ հոն անարդ կերպով, ուր շտապած էր ի խնդիր անոր եւ Հայուն ազատագրութեան:

Ի զուր է, «մարդասէր եւ յառաջդիմասէր» օրէնսդրութեան անունով հպարտացողներու «արխիւներուն», հնոթներուն մէջ փրձատեղ արձագանդը դատական արձանագրութիւններու, ամբաստանագրի: Կամայականութեանց այդ օճախին մէջ կայծեր գտնելու աւելորդ ժամավաճառութիւն:

Եւ սակայն դարձեալ փա՛ռք քեզ, ով բազմաշարժար եւ ազատութեան լոյսին յաւէտ տուայտող հայրենիք:

Փա՛ռք քեզ համար տոչորուող ու նուիրեալ հայորդիներու: Անոնց ոգին թող անվերջ թեւածէ քու լեռներու վրայ, հնամենի աւերակներուդ ալ մէջ:

Փա՛ռք անցեալդ լուսաւորող նահատակներուդ: Անոնց կանթեղները կը բոցավառուին, հեղեղի պէս յորդ արեան ու քրտինքի լուծոյթով:

Աչքի լոյսերու համադր, մաշուող կեանքերու գին արժող այդ լոյսին տակ, ինչե՛ր տեղի չունեցան մեր մասնատուած հայրենիքին մէջ, ինչե՛ր կատարուեցան հոն, իբրեւ վերածնունդի հաւաստիք, որ Պետրոսներու անձնազոհութիւնը, անոնց թափած արիւնն ու ջանքերը արժէքաւորուած սեպուին, որ անոնց թափառական ոգիներուն խոփքը ամօքեն, որ ըստ մեր աւանդական բարեմաղթութեան անոնց ցիրուցան ոսկորները իրենց հանգիստը գտնեն:

Այդ հայրենիքը, իր նոր անուանակոչութեամբ կիսովի օտարոտի՝ մերն է սակայն:

Իր վարչաձեւին յեղափոխական ծագումը հրապուրիչ է Հայ ժողովուրդի խոնարհ եւ մարդասէր զաւակներուն համար, ան միշտ սրբազան է մանաւանդ անո՛նց համար, որոնք երէկի ցաւատանջ եւ մռայլ իրականութեան դէմ ըմբոստացան, որոնք աշխարհի հեռուոր ծագերէն փութացին, վաղեցին իրենց ամենավերջնական տուրքը վճարելու վասն անոր յարութեան:

Այդ նոր հայրենիքը, սովետական, անպատում տառապանքներէ յետոյ, խոստմնալից կարգախօսներու մէջէն ծնած՝ կրցա՞ւ դառնալ ցարդ՝ կէս դարէ աւելի տարիներէ վերջ՝ Ամեմայն Հայոց Հայրենիքը:

Կեանքի աղբիւրը ապրողներուն՝ յուշակերտը իրեն համար զոհարեռուած զաւակներուն, խոնարհ եւ կարիճ Պետրոսներուն:

# ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՆՎԻՃԵԼԻ Վ ԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

... Եւ վերջապէս, որպէս Հայ, դուք վիրաւորել էք իմ ժողովուրդը, որը ցեղասպանութեան ահաւոր սարսափներից յետոյ, անտանելի բեռ եւ սրկանքներ կրեց անձամբ Ստալինից:

Բաց նամակ Ստալինապաշտ Մարիէտոյա Շահինեանին՝  
Կոմունիստ Սերօ Խանգատեանի կողմէ,  
գրուած Յունուար 1982-ին:

Արդարեւ:

*Ո՛ր վ կրնայ բացարձակ համոզումը չունենալ, որ դա-  
րերէ ի վեր յայտնուած գաղափարախօսութիւնները՝ իրենց  
հեղինակներուն կողմէ առաջադրուած, զիրենք չըջապա-  
տող ժողովուրդին բարիքը նկատի չունին:*

*Ո՛ր վ կը համարձակի նոր վարչակարգի մը ծրագիրը  
մէջտեղ նետել, նոր ուղի, նոր միջոցներ մատնանշել, ա-  
ռանց պատգամելու անկէ բղխելիք առաւել ազատութիւնը,  
բարօրութիւնն ու երջանկութիւնը ի շահ ընկերութեան:*

*Ո՞րն է խոցելի կողմը՝ գաղափա՞րը, թէ՛ զայն ի գործ  
դնողը:*

## ԱՆԿԱՇԿԱՆԴԻ ԽՈՂՆԵՐ

Պետրոս Մարգարանեան, ինչպէս իր համախոհները, զինակից եւ բախտակից անյայտ մարտիկները, մեզի բերին պատգամ մը՝ դարերէն շարունակ արձագանգող, զոր իրենց յաջորդները պարտաւոր են փոխանցել սերունդներուն՝ իբրեւ սրբազան կտակ մը :

Եթէ պիտի շարունակենք մեր գլուխները խոնարհել բռնութիւններու եւ ալլազան ստորնացումներու առջեւ՝ այն ատեն պիտի դասուինք ա՛յն ազգերու շարքին, որոնք ալլեւս ապրելու իրաւունք չունին :

Սոյն համեստ հատորը, Հայուն եւ Հայաստանին ազատագրութեան խոնարհ եւ անձնագոհ ասպետի մը յետ մահու ձօնն է, մասնաւորապէս սահմանուած բոլո՛ր անոնց, որոնք կամովին, ազգային արժանապատուութեան նախանձախնդրութիւնը պիտի ունենան իբրեւ իրենց առաջնորդող ոգի, անոր երազին իրականացումը պիտի հետապնդեն իբրեւ իտէալ, որոնք երբ անցնին հոն տանող տաժանքներով լի փորձութիւններուն ընդմէջէն, երբ նմանօրինակ ցաւատանջ ապրումներու մատնուին, սպեղանի մը դտնեն հոն, իրենց կրած ու կրելիք խոշտանգումներուն, մանաւանդ իրենց հոգեկան տառապանքներն իմաստաւորելու երբ ենթարկուին, դտնեն տիպար Հայու մը կողմէ զիրենք մխիթարող՝ հովանաւոր ոգի :

Ու ըստ այնմ հատորը կազմողին մտահոգութիւններէն բոլորովին դուրս կը մնայ անոր դտնելիք ընդունելութեան հարցը, թեր կամ դէմ, Սփիւռքի հայութեան մէջ կամ այլուր :

Ոեւէ պահու սոյն հրատարակութիւնը արդարացնող տուեալներ կան :

Հայրենիքը պէտք պիտի ունենայ իր զաւակներու զոհաբերութեան, եւ անոնցմէ միուն արկածալի կեանքին զրուագներուն ծանօթութիւնը անհրաժեշտ է գալիք սերունդներուն ներկայացնել :

Այժմու հայրենիքը՝ Խորհրդային Հայաստան, որուն վարչաձեւը, գաղափարական գեանի վրայ, Հայոց սրտերէն շատ հեռու չի ճախրեր, իբրեւ ժողովրդավարութեան ջերմ կողմնակից եւ ազատատենչ ժողովուրդ՝ արդարութիւն եւ հաւասարութիւն սիրող, տասնամեակներու ընթացքին չէ արդարացուցած ամենայն Հայոց հայրենիքը դառնալու ակնկալութիւնները :

Քաղաքական կաշկանդող պայմաններու մէջ ապրողները, դէպի լաւը ձգտելու քննադատ ոգի չունեցողները կամ զգուշացողները, ինքնիշխան ազգ մը դառնալու հանդէպ թերահաւատները՝ որեւէ ժամանակ պիտի չկրնան կարգալ նման հատորներ :

Պետրոսի նամակներուն մէջ ազգայնամոլ ոգի մը չէ որ կը ցուլայ : Իրաւ է, կա՛յ ազգին հանդէպ հաւատք, իսկ համայն մարդկութեան նկատմամբ յարգանք եւ դժասիրական վերաբերմունք :

Կէս դար առաջ, դեհենէն խոյս տալէ անմիջապէս յետոյ, տարբեր միջավայրերու մէջ տիրող ապականութեանց բովին մէջէն զբրուած տողերը կը մնան այժմէական: Աւա՛ղ, թերեւս ընդմիջտ հանգամանքով:

Ոչ մէկ մասնաւոր նկատումի, չափուած-ձեւուած հաշիւի բերմամբ չէ որ հանրութեան չեն բերուած ցարդ: Այլ այն դիտաւորութեամբ կամ յոյսով, որ ժամանակը սպասուած բարիքը բերած կ'ըլլայ հայ ժողովուրդի իղձերուն ու այդպիսով ամենէն անսիրտ, այլասերած, ուժացած, չահամոլն անգամ, անոնց գրուած վայրկեանի կապանքներէն զերծ պայմաններու մէջ կարգայ, քննէ եւ դատէ զանոնք, թէ եւ, ուշացումին հետեւանքով հագիւ թէ բաւականաչափ հայերէն կարգացողներ մնացած ըլլան:

Տխուր է հաստատել, որ կէս դար յետոյ Պետրոսի ողջակիզումէն, նոր դարերու ամենայնաշաղէմ վարդապետութեան դիրկը նետուած մեր հայրենիքն ու իր գաւակները անգամ մըն ալ դէմ-յանդիման գտնուին հին եւ յուսահատ կարգախօսի մը:

Հոն արդարեւ կան նուիրումի փարած ազնիւ հոգիներ, անոնց կողքին անտարբերութեան, համակերպութեան ուսին թառած բազմութիւն մը, ուրիշներ փախուստի ճամբաներու փնտոտուքէն տարուբեր:

Այս է պատկերը հայրենիքին՝ մեր մայր օճախին մէջ: Անկէ դո՞ւրս՝ ոչինչ:

Դուրսը կամ այլուր, նոյն կէս դարու տեւողութեան, հեռատաններու մէջ ուժացումի հսկայական աւերներ: Երբեմնի վերադարձի յոյսերով խանդավառ, «դուրսը» տուն-տեղ ըլլալու աչք չունեցող՝ մէկ ոտքի վրայ ապրողները, իրենց բնական երկիրներուն մէջ «ամբողջական քաղաքացի» կը խաղան մէկզմէկ շնորհաւորելով, հրպարտ իրենց նոր հայրենիքով, անոր դրօշակն ու դովքը կը հիւսնեն ցեղակիցներու մօտ՝ տարբեր երկրի քաղաքացի՝ անսովոր կիրքով եւ փոխադարձօրէն: Որով եթէ քաղաքական ըմբռնումով, հայ հայրենիքին վերաբերեալ, իւրաքանչիւր համայնքի ծոցին մէջ թեր ու դէմ ըլլալու մոլուցքը մեղմացած է, առաւել չափերով տեղ գտած է անտարբերութիւնը ազգային հարցերու վրայօք:

Ի հարկէ կարելի է յիշատակել, չանգիտանալ տարագիր գանգուածներու ծոցէն մէկ քանի տարիէ ի վեր փրթած ճիչերը, երբեմնի յայտնի կարգախօսներու հոլովումով, նոյնիսկ արտակարգ ցուցամոլութեամբ ու քարոզչութեամբ: Ասոնք իցի՛ւ թէ յուսահատ, մահամերձի կայծկլտուքները չըլլան օտար հոգերու վրայ ծնած ու ծլած մերայիններուն, խառն ու օտարածին թոռնիկներուն, որոնք իրաւ է անկեղծ պոռթկումով ինքզինքնին ժառանգորդ ու շարունակող կը հուշակեն այս գրքի հերոսին պատգամին, ու առայժմ, արտաքին գործունէութեամբ նոյնիսկ բուռն կերպեր ընդգրկած՝ թէ եւ հաւատացած



ենք որ խորքին մէջ իրենք ալ նոյնքան մարդկայնական են՝ զգացումներով ու գաղափարապաշտ :

Եւ ինչքա՞ն թանկագին վկայութիւն մըն է այս պարագան, մատնանշելու համար որ անտեղի են, զզուելի եւ անարժէք, ազգով ալլասերած, հողեկան դոյզն մեծութենէ, զգայնութենէ զուրկ, նախնեաց տքնաջանութեամբ, տոկունութեամբ, հաւատարմութեամբ ծըլած, յղկուած ու պահպանուած մեր մշակոյթին ու ա՛յլ ստեղծազոր-ծութիւնները փոխանցելու մէջ դասալիքներուն զատաստանը մեր անցած եւ գալիք հերոսներու գործերուն մասին, անոնց կամովին ընտրած վախճանին վրայ նետուած որակումները :

Այս եւ նման գրքերու հրատարակութիւնը ուրեմն անհր՞մն է : Ունայնութի՞ւն է :

Ապա ի՞նչպէս պիտի որակենք ահաւոր գումարներով կառուցուած գերեզմանաքարերը ի սփիւռս աշխարհի :

Ուստի, ազգային ուժացումին մահաբեր խորշակը, խթան մը թող սեպուի այս հատորի հրատարակութեան, մանաւանդ երբ կազմողն ու հրատարակողը կը հաւատան մայր հայրենիքի հայրութեան տեւականութեան :

Այդ հաւատքին ընծայ մըն է այս յիշատակարանը, քանի որ անոր հերոսին կեանքը բովանդակ նուիրում մը եղած է իր ազգակիցներուն ազատ եւ երջանիկ կենցաղին ի խնդիր, սեփական հայրենիքի երկնակամարին տակ :

Ներկայ պայմաններուն տակ ան պիտի չկարգացուի այդ նոյն փոքրիկ հայրենիքին մէջ, «որ ազատ է, անկախ, յառաջդիմական», հոն ապրողներէն այժմու, շատերը իրաւ է անձամբ մեծ նորութիւն պիտի չգտնեն թերեւս, բայց անոնցմէ վերջ կեղոյները երբ ալ լինի պէտք է տեղեակ ըլլան իրենց նախորդներուն մասին, անոնց պայքարներուն, զոհաբերութեանց, զիտնան թէ ինչե՞ր կ'ակնկալէին այդ խոնարհ մարդիկը մեր ազատագրումէն, երբ իրենց մաքառումներէն յետոյ անկարելիին յանգած, այդ հայրենիքին վերջին կտորին ձակատագիրը յանձնեցին օրուան յառաջագէմ յեղափոխականներուն :

Դա՞նն պահեր : Զի ահա ի՞նչ պարագաներու բերմամբ :

Դարերու թմրութենէն, համակերպելու հողբանութենէն հազիւ ձերբազատուած, անթխտելի վերելքի մը սկիզբին, ազատ մարդ եւ ազգ կոչուելու նախօրեակին, բուռ մը քաջերու թափած արեան պտուղը չճաշակած :

Դժբախտ սերունդ, կրկին յուսախար, պահ մը կրկին ըմբոստ, վերստին ընկճուած, անգամ մըն ալ անձնատուր : Ամէն չիւղի ապաւէն :

Որ Հայը ապրի, տոկայ, տեւէ :

Դառն խորհրդածութիւններ, խիստ զատումներ, որոնք ամենասեղմ չափերով ուղիղ կը համեմատին ակնկալուած բարիքներէն

Հիասթափ եւ այլապէս խաբուած ըլլալու զգացումին: Զանոնք գրողը, հայ շինականի մը զաւակ՝ բաժնած է նոյն տենչերը, ապրած նոյն երազներով, անոնց հոգիներուն պէս անբիծ բարութեան ժառանգ մը կրող մարդոց հանդէպ, կը բաժնէ մեր օրերու մեծ յեղափոխութեան համամարդկային իտէալը՝ ճնշուածներու ազատագրում, ազգերու ազատ դոյալցուծիւն, հաւասարապէս երջանիկ կեանքի իրաւունք:

Խորհրդածութիւններ՝ միշտ երազային, տեսնուած, ապրուած պատկերը մեր օրերուն, խիստ դատումներ՝ ոչ թէ զաղափարներու, անոնց գործադրութեան զարտուղի կերպերուն, չար գործերուն, այլ որոնց նկատմամբ ընկերային խաւերուն մէջ դաստիարակութեան թերին չի կրնար չբմեղանք ծառայել:

Հայոց պատմութեան մէջ գեղեցիկ էջ մը կը բացուէր՝ աննախընթաց պարագայ մը: Նոր վարչակարգին իրօք փառապսակը կոչուելու ձեռնարկ մը, ազգային հոգեպարար նոր երեւոյթ մը տեղի ունեցաւ՝ ներգաղթի փորձը:

Ու այդ Բ. աշխարհամարտը՝ հազիւ աւարտած օրերուն մէջ, դոր իրենք կ'անուանեն «Հայրենական Պատերազմ»: Անուն մը, որ կ'արդարանայ ամէն կերպով, Սովետ Միութեան ժողովուրդներու կրած անչափելի պատուհասներուն, զրկանքներուն ու մարդկային տառապանքներուն ու կորուստին ի տես:

Մանաւանդ երբ մինչ այդ ազէտը, այդ հայրենիքին բոլոր խաւերը, անխտիր ապրած էին ստրկացնող, հոգի եւ մարմին տանջող, անխմանալի պայմաններու մէջ, որոնց իբր չբմեղանք ցոյց կը տւորուի նման ընկերային յեղաշրջումի մը անխուսափելի արդիւնքը, ու հեռուն՝ անոր բովէն դուրս մնացողներու կողմէ, հասկնալի կամ արդարանալի:

Այդ ժողովուրդներու շարքին նաեւ հայ մարդը, շատ քիչ բացառութեամբ, ապրելու համար ստիպուեցաւ ծախել իր հոգին:

Մարդիկ ուրացան իրենց հարազատները, եթէ գայն դահիճի քմահաճոյքին չմատնեցին անձամբ, ստիպուեցան անոնց վերադրուած շինծու ամբաստանութիւններուն արձագանգ տալ:

Որ անձամբ կարենան հոգալ ու ապրեցնել իրենց զաւակները, մայրեր «նուիրեցին» անոնց հայրերը դահիճին, անոնց կորուստին «համամիտ» գտնուեցան, ինչպէս բազում կանայք իրենց ամուսիններուն հանդէպ՝ «սրտերնուն քար դրած», որպէսզի ապրին:

Փրանսական յեղափոխութեան գործօն անդամ՝ Սիէյէսին, հարցուցեր են.

«Սարսափ»ի (տէնօր) օրերուն ի՞նչ ըրիք»:

«Ապրեցայ» կը պատասխանէ: Բայց չ'ըսեր թէ ի՞նչպէս, ի՞նչ կերպով:

Ստալինեան «սարսափ»ը ապրողներուն մեծամասնութիւնը

Ս. Սինոտն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ որուն բարոյական ազդեցութիւնը, վարկը, տակաւին մեծ պէտք էր ըլլար: Արդարեւ, կաթողիկոսարանը մի՞թէ հնութիւն մըն է, աւերակոյտ մը արտաքուստ կանգուն, որուն այցելութիւնը նոյնպէս ժամանակացոյցի անցած է արտասահմանեան առանձնաշնորհեալներու կողմէ կատարուելիք վայրերու ցանկին վրայ, երբ ղեկավար կուսակցութեան պետին գլխաւորութեան կը մնայ օտար հաստատութիւն մը, երբեմնի փոխարքայութեանց անմերձենալի պալատին պատերուն պէս:

Հոգեկան հաղորդակցութեան մեծ թերի մըն է, զոր «յեզափոխական» ղեկավարներ, ժողովրդական երջանկութեան նուիրեալներ զանց առած են: Կարեւորագոյն ազդակը, փոքրաթիւ ժողովուրդի մը պետերուն գալով: Փոքր թիւ եւ համախումբ ժողովուրդները կ'ապրին ապակիիէ պատերու ետեւ, անոնց ղեկավարներուն դերը շատ աւելի փափուկ է, անոնք պարտաւոր են ըլլալ օրինակելի իրենց վարքով եւ արժանաւորութեամբ:

Աւա՛ղ, բոլորովին բացասական պայմաններ գոյութիւն ունէին մանաւանդ այն օրերուն, երբ ներգաղթողները երգելով, պարելով, յոյսերով ու բեռներով հայրենի աշխարհ մտան:

Անոնց բացարձակ մեծամասնութիւնը իրենց առաջին հանգիստումի առեն հոգեկան ցնցում ունեցան, ահաբեկեցան, ինկան միութարութեան կարօտ:

Փնտռեցին սզի, չգտան: Նոր կենցաղէն երազախար արթնցան:

Միթէ՞ դժգոհութիւնները անհիմն էին:

Փտածութիւններ գտան տիրող դադափարաբանութեան կիրարկումին մէջ: Ժողովրդական խաւերուն մէջ հաւատքի պակաս տեսան: Կոչումի խախտում ամէնուրեք, անպատասխանատուութեան ցայտուն դէպքեր ու հետքեր:

Ինչո՞ւ այս բոլոր մեղանշումները: Որո՞ւ վզին փաթթել մեղքը: Խարուէ՞ր էին:

Եթէ մարդս ընկերային արարած մըն է, կրնա՞յ տեւականօրէն մեկուսի ապրիլ, հեռու պահել իրմէ մտերիմ ընկեր, սրտբաց բարեկամ, առօրեայ զրացնութիւն: Կրնա՞յ մանաւանդ սեփական ընտանիքի անդամներուն հանդէպ վերապահ մնալ:

Ներգաղթողները կը հաւատային որ այդ դասակարգէն լաւագոյնները պիտի ունենան իրենց սրտակից, աւելի հարազատները, ու այդ հաւատքովն առլցուն, օրեր, տարիներ, փաստեր բերած համոզեր էին իւրայինները ու քաշեր տարեր էին իրենց հետ: Գացեր էին թերեւս աւելի դիւրին ապրուստ ձարելու դիտաւորութեամբ, ինչ որ անմեղ բաղձանք մըն է, ու միանգամայն սնուցանելու նաեւ իրենց հոգիները:

Հայաստան վիպային աշխարհ մը եղած է մինչ այդ ներգաղ-

թողին համար, անոր կեանքին, սովորութիւններուն, ապրելակերպի միջոցներուն եւ աշխատանքի վերաբերեալ, հարցումներ ունի տալիք, ստացած պատասխանները խուսափողական են, անբաւարար, հեզնող ոգիով, ճնշող :

Ամէն ներգաղթող ճարպիկ չէ եւ պիտի չփափաքի ցոյց տրուած միջոցներուն դիմել ապրելու համար : Շուտով իրեններուն աչքէն կ'իյնայ իբրեւ առաջնորդող, ձախլիկ, անճարակ : Օրէ օր դառնութիւններ, որոնք կը կուտակուին, ծնունդ կու տան նախանձի : Կը դառնայ դժգոհ :

Ի՞նչպէս կարելի է ապրիլ միջավայրի մը մէջ, ուր կ'իշխէ կասկածամտութիւնը, ապօրինի միջոցներով բաւարարուելու եւ հարստանալու դրութիւն մը : Իր դառնութեան բուն աղբիւրը անհաւասարութիւնն է՝ քան զրկանքը :

Յարմարի՞լ : Ըմբոստանա՞լ : Խո՞յս տալ երկրէն : Հոգի կրծող հարցեր :

Վերելի մատնանշումները չարամիտ ոգիի մը պէտք չէ վերադրել, զրոյին միտք բանին, թելադրանքն է՝ զանոնք կարգալ ուշիուշով, դարման փնտռել :

Կատարուած առաջին ներգաղթի անանկութեան ապացոյցները բաղմաթիւ են : Հետեւանքներուն ամենէն աղիտաբերը կը կայանայ Սփիւռքի մէջ այլասերումը արագացնելը չքմեղացնող մտայնութիւնը :

Անոր ձախողութիւնը այլապէս աւելի խիստ դատապարտողներու ծաւալուն շրջանակ մը ստեղծուած է : Եղած են հայրենադաւուրութեան համազօր հրապարակային յայտարարութիւններ, ամէն Հայու երեսին ամօթ չարտող :

Այն՝ «որ եթէ մեր հողերը, տրուին, դացող չկայ» :

Եւ «Հայեր» են ատոնք : Մեծ, աշխարհահռչակ, համբաւի տէր :

Պետրոս Մարգարանեաններու յիշատակին նուիրուած մատեան մը անոնց համար չէ գրուած, ոչ ալ իրենց «հողիները ծախած» մարդասպաններուն, «Պիղատոսներուն» :

Ան ո՛չ մէկ ոճիր գործած էր : Ապրիլ կ'ուզէր : Մեռցուցին : Եզակի պարագայ մը չէ :

Այստեղ կատարուած մեղադրանքները հիմնաւոր են .

— Անտեղի, անարգար, բիրտ միջոցներու գործադրութիւն : Դաւ՝ վսեմ գաղափարաբանութեան դէմ :

— Քանցի անժամանակ, իրաւասութենէ բոլորովին վեր, հայ՝ արդէն երկճիւղ լեզուի ուղղադրական այլանդակութիւն, յանցանք՝ աշխարհացրիւ հայ ժողովուրդի ամբողջականութեան փլուզումը փութացնող :

— Ներգաղթի ազգաչէն ձեռնարկին անփառունակ վերջաւորութիւն՝ ուստի խախտում հայրենիքի վերածնունդի հաւատքին :

Քանզի, երբեւիցէ, իրբեւ անմեղ զոհերու հատուցման դին, բաւարար չեն եւ վաղանցուկ հայրենիքին մէջ կատարուած շինարարութիւնները :

Նման կառոյցներու աւերակները բազմաթիւ են մեր երկրին մէջ :

## ՍՓԻՒՌԸ ԿԸ ՍՊԱՍԷ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆՈՒԷՐԻՆ (\*)

Երկար տարիներ Հայրենիք եւ Սփիւռք ապրեցան մէկը միւսէն բոլորովին անջատ, ծանրաբեռնուած միմիայն իրենց հոգերով :

Հայութեան երկու հատուածներն ալ պարտաւորուեցան ընդունիլ տարբեր իրաւակարգեր եւ ընտելանալ նոր պայմաններու :

Երկուքն ալ Ա. Ընդհ. Պատերազմէն դուրս ինկան բոլորովին հիւժած, տնտեսութիւննին հիմնովին քայքայուած, տեղւոյն վրայ իսկ տեղահան :

Երկու կողմերն ալ իրենց քաղաքական երազներէն մերկացած, Հայաստանի Հանրապետութեան եւ Կիլիկիան յոյսերէն մահացած :

Կար ու անխախտ կը մնար հայ ժողովուրդի առասպելական յամառութիւնը, իբր Ազգ, իր մշակոյթով, իր ինքնայատուկ առաքինութիւններով ապրելու արժանի ըլլալուն արդար հաւատքը :

\*

\*\*

Երկուքն ալ կ'ապրին այսօր, ու ամբողջութեամբ արդարացուցած են իրենց յամառ կամքն ու ջանքերը :

Երկու կողմերն ալ ինքնաբաւ են : Մին ապաւինած ընկերվարական միութիւններուն տնտեսական ոյժին, միւսը ալլազան տնտեսութեանց ուղիներուն մէջ ընկղմած :

Երկու կողմերն ալ հաւասարապէս կառչած կը մնան հինաւուրց հայրենիքի մը վերելքի հաւատքին, անոր աւերակներուն : Կը սիրեն իրենց ազգը ու անկասկած կը ձգտին, վերանորոգելով իրենց ոյժերը, դարմանել հաւաքականութեան կորուստը :

Երկու կողմերն ալ իրենց ժառանգութեան հաւատարիմ, պատրաստ են, անձնական բարեկեցութեան աշխատանքին վրայ բարդել հաւաքական դործին նուիրումը :

Սակայն այստեղ կը վերջանայ ամէն բաղդատութիւն, ամէն համեմատութիւն, ու կարեկիութիւններու հաւասարութիւնը կը խախտի, ապագային տանող ուղիները կը շեղին :

---

(\*) Աւա՛ղ եւ ի գո՛ւր : Սոյն գրութիւնը տպուած է 1973 թուի վերջաւորութեան Փարիզի «Յառաջ» եւ Պոստոնի «Պայքար» օրաթերթերուն մէջ :

\*\*

Մէկ կողմը համախումբ զանգուած մը, դարաւոր հայրենիքի մը մէջ, շրջապատուած բնութեան եւ ձեռակերտ կենդանի մասունքներով, կամովին, հոգ չէ թէ մաս մըն ալ պարտադրաբար կարգապահ ժողովուրդ մը, ունի պատասխանատու ու ձեռնհաս մարմիններ, պետութեան տէր ու տիրական՝ պատմութեան առջեւ հաշիւ տալու կոչուած կուսակցութիւն մը, այն ալ մէկ մասնիկը երկրագունտիս էն հզօր խմբակցութեան մը :

Միւս կողմը, պարբերաբար իրար յաջորդող, զերար փոխարինող բարի կամեցողութիւններու շարան մը հետզհետէ նօսբանալու վրայ, շարք մը կազմակերպութիւններ՝ բոլորն ալ անզօր, կայ, ամէն տեսակ հրապոյր այլասերում սրնդող, սեփական հանրային կարծիքէ զուրկ ցիրուցան կոյտեր : Բարեկեցիկ դարձած, հետեւաբար իրերօգնութեան շրջանը բոլորած, ազգին հետ կապուած մագէ թելերով, որոնք կը կոչուին կնունք, հարսանիք, թաղում եւ հոգեհանգիստ, պտոյտ եւ այցելութիւններ :

Ահա այս կողմն է որ պէտք ունի նուէրի մը, խոշոր, շատ մեծ նուէրի մը :

Հասարակաց լեզուն հետզհետէ կորսնցնելու վրայ, մեծ մասամբ արդէն դադրած իրար հասկնալէ, սակայն դեռ չէ մոռցած հատուցումներ սպասելէ, ոմանք միամտաբար միջազգային արդարութենէն եւ դեռ ուրիշներ մերայնոց կողմէ :

Ահա երկու ինքնատիպ մուրացկանութիւն :

Սակայն մեր ժողովուրդը, աշխատասէր, բարի, ամօթխած, իր սեփական ապրուստին համար, ամենազաժան պայմաններու մէջ, ամենաքիչ տոկոսով մը միայն այդ մակդիրին կրնայ արժանացած ըլլալ, այն ալ ժամանակաւորապէս :

Ճիշդ է որ, մեր նախորդ սերունդները, ու տակաւին մերինը կառչած կը մնան քաղաքական մուրացկանութեան պողոտաներուն :

Ու ճիշդ ատոր համար է որ այդ սերունդէն մէկը, կը համարձակի իր ձեռքը բանալ Մեր Հայրենիքին առաջ, անկէ ակնկալելով մեծագոյն նուէրը, որ դայ արդելիչ պատուար մը դառնալու անոր դէմ, որպէսզի հեռու մնանք քաղաքական մուրացկանութենէն եւս :

Հայ Ոգին անեղծ պահելու, Հայ Սփիւռքին ինքնուրոյն եւ տեւական կերպով ապրելուն սատարող նուէր մըն է որ կը սպասուի մեր ազգակիցներէն :

Հայ հոգին ջինջ, հզօր եւ միասնական պահող նուէրն է ան :

Այդ ոգիով սնանիլ կը նշանակէ տոկալ այլասերման, բազմանալ, բուն տէրը դառնալ սեփական դատին, հեռու մնալ, կամ նուազ աղերսարկու դառնալ օտարին, ապաւինելով միմիայն մեր ճշմարիտ բարեկամներուն :

Ի՞նչ վարդազոյն երազ :

\*

\*\*

Նման լաւատեսութեան կամ ցնորքի նկատմամբ սակայն, միայն մենք չենք որ արժանի ենք մեղադրանքի :

Այժմ, Հայրենիքի իշխանութիւնը, բազմաթիւ անձնակազմով, Սփիւռքի հայութեան հետ Կապի յատուկ վարչութիւն մը ստեղծելով, ցոյց կու տայ որ այլեւս անտարբեր չէ անոր ճակատագրին, որ ներգաղթի յոյսերով եւ դործերով կու գայ ապացոյց տալու որ ան կողմնակից է, որպէսզի այդ հայութիւնը տոկայ օտարացման, ու գիտնայ համբերել, սպասել պատեհ առիթին, մինչեւ Հայրենիքը իր ծոցին մէջ ընդունի :

Արդ, այդ միեւնոյն եւ միակ նպատակին համար է որ Սփիւռքը պէտք ունի օգնութեան, ոեւէ պաշտօնական անձնաւորութիւններու պատգամներէն ու ա՛յլ կոնդակներէն աւելի հզօր ազդակի մը, իսկ ու իսկ թանկագին նուէրի մը :

Հայ ժողովուրդի ոգին ու մարմինը պահող ու պահպանող լեզուի միասնականութեան :

Ահա՛ սպասուած նուէրը :

\*

\*\*

Մէկ կողմէ՝ յամառ բայց արդարացի հետապնդում :

Միւս կողմէն՝ նոյնքան յամառ ու անարդարանալի ուշացում :

Մէկ կողմը անզօր կը տառապի ուրիշ լուծում չգտնելուն :

Միւս կողմը նկատի ունի ինքնասիրութեան վիրաւորանք մը միայն :

Դառն ճակատագիր պիտի ըսէի, եթէ այս մէկը մեր ձեռակերտը չըլլար, եւ որքա՛ն ի գուր :

Այնքան հեշտ է սրբել զայն : Ի՞նչ նուաստացուցիչ պարագայ մը պիտի համարուի, կամ հեղինակութեան անկումի ի՞նչ դոյզն նըշան մը, յառաջդիմասէր եւ ժողովրդանուէր իշխանութեան մը համար ընդառաջել համայն Սփիւռքի այս ամենակենսական բաղձանքին :

Արդարեւ, այսօրուան մեր վարիչները անպայման կ'ուսուծնասիրեն իրենց վարդապետութեան հիմնական կէտերը, անոնց յայտնի ըլլալու է թէ ինչպիսի՛ անձնուիրութեամբ, խոշոր դժուարութիւններ դիմակալելով, գեղեցիկ հեռանկարներու ի տես, բազմահազար իտէպլիտաներ զոհուեցան անոր յաջողութեան համար :

Այդ օրերուն մեր ականջին այնքան քաղցր էր ու վարժ, որ յեղափոխութեան գլխաւոր նպատակներէն կամ հեռանկարներէն մին էր, քաղաքականութիւնն ու ժողովրդավար դործերը ցոյց տալ թափանցիկ պատուարներու մէջէն, դուրսէն հապճեպով՝ իսկ անցորդին համար անմիջապէս հասկնալի եւ վճիտ : Իրենց դաւանանքին մաս կը կազմէր ո՛չ միայն մերժել ոեւէ անսխալականութիւն եւ դործելու

մէջ դռողութիւն , այլ պատահաբար ու զէպքերու բերմամբ պատ-  
րաստուած սխալներու շուտափոյթ ուղղում :

Այդպէս է որ դուրս թափուեցան ժողովուրդներէն գաղտնի ,  
զանոնք շահագործելու , շղթայելու հանգամանք ունեցող բոլոր գաղտ-  
նի դաշնագրերը ու դարձան ժողովուրդին սեփականութիւնը :

Այդ իրողութեան ապաւինած , վստահութեամբ կը սպասենք  
որ Խ . Հայաստանի այսօրուան վարիչները , իրենց առաջին օրերու  
համայնավար ընկերներուն աճապարանքի եւ միամտութեան սխալ-  
ները ուղղեն , ու այդ ի յարգանս անոնց յիշատակին :

Այդ օրերու ոգին այնքա՛ն ծանօթ է մեզի , որ նման խօսքեր  
ո՛չ չողոքորթութիւն են , եւ ոչ ալ խնդրանքի մը յաջողութեան ի նը-  
պաստ շոյանք : Մեր կողմէ յարգանքի պակաս մը պիտի ըլլար նման  
մերձեցում :

Ժողովուրդի բարեկեցութեան , ազատութեան , խաղաղութեան  
եւ երջանկութեան ի խնդիր իրենց արդար ցատումին մէջ , քանի որ  
այդ բոլորը ստանալու համար միակ կերպը յեղափոխութիւնն էր ,  
անոնք , այդ սկիզբի դաղափարապաշտները , տակաւին չքմեղացուցիչ  
պարագաներ կրնան ոգեկոչել , երբ վարչութիւններ , ատելի , բռնա-  
կալ , ոչնչացնելը չիթեցին ազգութիւնները տապալելուն հետ :

Տակաւին անոնց համար կարելի է մեղմացուցիչ գտնել իրենց  
անմիջական իրաւասութիւններէն դուրս քայլեր առնել , տեսակ մը  
անմեղութիւն սեպել ժողովուրդին երջանկութեան արգելիչ պարա-  
զան անցեալին հետ շարունակուող կապին մէջ տեսնել :

Սակայն այսօր , Խ . Հայաստանի վարիչները տէրը չեն , այլ  
կերտողը հայ ժողովուրդին եւ անոր Հայրենիքին ապագային , անոնք  
պատմութեան աթոռին վրայ իրենց գործերուն հաշիւներն ունին տա-  
լիք , ինչպէս երբեմն իրենք եղան պահանջատէր :

Մենք հաւաստի ենք , որ արտասահմանի հետ կապի յատուկ  
մարմին ստեղծող Հայոց Խորհրդային Իշխանութիւնը , միմիայն իր  
անդամներուն համար արձակուրդի վայրեր չէ որ կը փնտռէ , ոչ ալ  
հռետորներուն եւ արուեստագէտներուն համար ծափահարութեան  
բեմեր :

Ներգաղթի իրականութիւնը ինչքան ալ սահմանափակ ըլլայ  
ան , նշան է անկեղծութեան :

Անոնք անշուշտ գիտեն նաեւ թէ ինչքա՛ն հզօր ազդակ է լեզուն ,  
մարդերն ու ազգերը իրարու կապող , իրարմէ հեռացնող :

Նոյնիսկ ընկերվարական կարգերու տակ , այսօր վառ են դեռ  
զանազան պետութիւններու տակ երկար տարիներ ապրող Սլաւ ժո-  
ղովուրդներուն իրարու հետ մղած ազդեցութեան պայքարը : Երբեմ-  
նի այդ նոյն , գիրար հասկցող ժողովուրդներուն մասնիկները տարբեր  
մշակոյթի բերմամբ , հետզհետէ նոր լեզուներու յառաջ գալուն պատ-  
ճառաւ , դարձած են կարծես նաեւ տարբեր ազգեր , անպայման տար-



բեր ցեղեր, մօտաւոր անցեալին մէջ փոխադարձ թշնամական վերաբերմունքով լեցուած :

Մենք ալ մասամբ բռնած էինք նոյն ճամբան : Մուշը, Ակնը, Զէյթունն ու Սասունը, Պոլիսն ու Հաւլապարը, ո՞րն ըսենք, զիրար չէին հասկնար, սակայն մեր լեզուն կը պահէր ուղղագրական հզօր կապ մը, անցեալն ալ մէջը, մեր ներկայի երկու գլխաւոր հատուածները իրարու զօրոզ :

Երեմիական ողբ մը չէ, ուրեմն, մեր կատարածը, զի մեր աչքերուն առջեւ այդ կապը կը մնայ խզուած :

Սերունդները սովոր են, հեռուէ հեռու, անցեալին մէջ կատարուած սխալները միայն ցուցադրել, ու անոնց պատասխանատուները թուել ու դատել :

Մեր սերունդը սկսաւ, իր աչքերը բացաւ, դատապարտելով բոլոր Վասակները, Մերուժաններն ու Վեստ-Սարգիսները : Ինչքան օգտաւէտ ազգին համար, որքան պարկեշտութեան ապացոյց պիտի ըլլար մեզի համար, եթէ անդրադառնանք մե'ր իսկ սխալներուն, այո՛, նամանաւանդ երբ սխալն ակներեւ է, աչք ծակող, զայն դարմանելու քաջութիւնը ցոյց տայինք :

Արդ, այդ սխալին ճանաչումը այնքան ցցուն է, որ այսօր մեր Հայրենիքի տպարանները, անշուշտ իշխանութեան գիտակցութեամբը, սկսած են տպագրել ու ա՛լ աւելին կատարելու այդ ուղղութեամբ, դասական կոչուած ուղղագրութեամբ գրքեր նոյնիսկ ճրիօրէն հայթայթել Սփիւռքին, օգնելու համար, օտարութեան մէջ կորսուող սերունդներուն հայ լեզուի ուսուցման, ու հետեւաբար անոր բովանդակ մշակոյթի ծանուցումին ու տարածման :

Այս խիստ դժուր նախաձեռնութեան համընթաց, զայն ամբողջովին լրացնելու համար, շատ մե՞ծ գոհողութիւն է խնդրել որ այդ նուէրը ըլլայ ամբողջական, բովանդակ հայ ժողովուրդին մատչելի դարձնելու համար Հայոց գրաւոր վաստակը, ո՛ւր որ ալ կատարուի :

Վերջապէս այդ ժողովուրդի զանգուածէն, որքան ալ զարգացած ըլլայ ան, ու գրաճանաչ, պէտք չէ աւելորդ ճիգ պահանջել, աւելորդ բեռ նետել անոր ուսերուն :

Երբ արմատական, գեղեցիկ ձեռնարկ մը կայ կատարելիք, նոյնիսկ յետո կոչումի դիմակին տակ, յառաջդիմական ժողովրդանուէր իշխանութիւն մը պէտք չէ որդեգրէ հասարակ քաղքենի մը տայնութիւն : Անժամանակ, ժողովուրդի մը միութիւնը քայքայող որոշում մը ետ առնելու մէջ պէտք չէ վարանի, այդ է, որ մեծ յաղափոխութեան մը առաջին գոհերը պիտի չուզէին արդարացնել, նրման վարանում մը :

Հայոց բարդ, դժուարին կեանքին մէջ որպէսզի պայքարը յաղթականօրէն տարուի, սպասենք ու մաղթենք որ լեզուի խառնակու-

թիւնները դադրին, թերեւս այդ բարի օրինակը փոխանցիկ ըլլայ եւ կը դադրին ուրիշ յիմարութիւններ եւս :

\*\*

Միտք, բանականութիւն եւ սիրտ մեզ կը հրաւիրեն արտասովոր եւ հիանալի պատկերի մը վրայ, որ կը ցուցադրէ Սփիւռքի հայութիւնը :

Այդ Սփիւռքը կը նմանի հեռաստաններու մէջ տեղ-տեղ զետեղուած փեթակներու : Փեթակներ, որոնց բնակչութիւնը անօրեայէն բացի, տենդագին, կրքով, հայ մշակոյթին մեղրերը կը հաւաքէ, իր ձմեռուան, այն է կորուստի դժուար օրերուն մէջ տոկալու, հայ մնալու իբր սնունդ :

Արդարեւ ու արդարօրէն յուզիչ տեսարան մըն է որ կը պարզեն անոնք :

Իրենց յարուցած ժխորին մէջէն, նուիրումի մղող մարդկային թերութիւններու բովէն, հաւատքի, պաշտամունքի կարծես նոր գիւտ մը կատարած ըլլան, Սփիւռքի այդ կորուսեալ համարուածները՝ հայ մշակոյթին արժէք մը ըլլալը :

Հայ մնալը իրենց համար կիրք մըն է, որուն համար պատրաստ են ժամանակի կորուստի, նիւթական զոհողութեան :

Ի՞նչն է այդ արտակարգ ոգեւորութեան աղբիւրը :

Անպայման Հայրենիքի իրականութիւնը :

Պիտի տեւէ՞ այս շարժումն ու ոգին :

Եթէ Հայրենիքը փափաքի, ուզէ :

\*\*

Սորանանք մեր այս տեսութիւններուն մէջ :

Առնենք ամենափոքր թիւով համախումբ Հայեր, անոնք ունին իրենց բազմաթիւ միութիւնները, կը կատարեն հաւաքոյթներ, յիշատակի եւ ա՛յլ առիթներու բերմամբ հանդէսներ կը սարքեն :

Բոլոր հո՞՞մ դադութիւններուն մէջ կան տպարաններ, օրաթերթեր, քաղաքական ամէն հոսանքի կազմակերպութիւններ, եկեղեցի, երկտասարդական միութիւններ, ուսանողաց եւ ա՛յլ իրերօգնութեան յատուկ ընկերակցութիւններ :

Դպրոցական ցանցը այնքան խիտ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ սկսած է տարածուիլ, շաբաթական մանուկներու յատուկ հայերէնի դասընթացներուն հետզհետէ պիտի յաջորդեն մնայուն դպրոցներ, այդ շարժումը սկսած է, եկեղեցիներու շինութիւնները մասամբ աւարտած, անոնց պիտի յաջորդեն դպրոցաշինութիւնները :

Մենք զեռ չիչեցինք երկու գլխաւոր կազմակերպութիւններ իրենց ծաւալուն ձեռնարկներով եւ գործունէութեամբ :

Ասոնք են Միսիթարեանները՝ իրենց դպրոցներով, մտաւոր

արտադրութեամբ եւ տպարաններով, Բարեգործականը՝ նոյնքան զովեստի արժանի եւ ազգանուէր :

Ի տես այս շարժումին, առանց չափազանցելու այս տարերային խլրտումները, ամէն յոյս կայ, վասնզի Հայրեմիքը կայ, որ մեր օրերու Սփիւռքը իր նախորդներուն ճակատագիրը պիտի չունենայ, որովհետեւ, այո՛, այս անգամ Հայրեմիքը կայ :

Ի սէր իրենց այն մարդարէին, զոր կը նախընտրեն, մեր ակնարկած Հայրենիքը այն չէ որ փառաւոր շէնքեր, պողոտաներ, արձաններ կը կառուցանէ, այդ արդիական ամէն յարմարութիւններ ունեցող բնակարաններէն նոյնպէս կան Սփիւռքի Հայերուն սեփականութիւն, անոնք դեռ կրնան իրենց գաւակներուն հարսանիքին օրը, յետ միջօրէի մը թղթադրամներ վառել, ու հետեւեալ առաւօտեան չմոռնալ իրենց ազգային սնանկութիւնը :

Իրենց կը պակսի էականք, որ միմիայն կայ Հայրենիքի անչուք գիւղերուն ու խրճիթներուն մէջ :

Ոգին : Այն է՝ լեզուն ու գիրը :

Լեզուն, գիրը, կեդրոնաձիգ ոգին :

Գիրը որ կախում ունի Ո՛. Հայաստանի վարիչներու կամքէն :

Լեզուն՝ երկու հատուածներու ողջմտութենէն :

Պէտք է անյապաղ վերադառնալ դասական ուղղագրութեան :

Սփիւռքին ծանօթ, ամենայուսահատ ու վատթար օրերուն մէջ Հայ պատանեկութեան ու երիտասարդութեան կորովը հրահրող, անոր շարժումներուն մօտէն հետեւող, ու այդ առթիւ ժողովրդական բոլոր խաւերուն մօտիկ, անոնց ապրումներուն, ցաւերուն, երազներուն եւ փափաքներուն տեղեակ մէկու մը կոչն է այս :

Ուրի՛շ վկայականներ ալ պէտք է ցոյց տալ :

\*  
\*\*

Որ սիրտը կտոր-կտոր չըլլար, երբ, գաւառական հոծ դաղութի մը մէջ արեւ տեսած տղաք, փողոցին մէջ, ճամբաներու վրայ, դպրոցներու մէջ մէկգմէկու մօտէն ծանօթ, իրենց ծնողաց ու անոնց ազգութեան ու լեզուին մասին զիրար հարցուփորձած տղաք, չգըտնեն իրենց սրտնեղութիւն պատճառող հարցերուն պատասխանը, իրենք-գիրենք նկատեն իբր թէ անարժան ծնողքի մը եւ ազգութեան մը գաւակները, որոնց անցեալը անոնց համար անյայտ է, իսկ ապագան նոյնպէս ոչնչութիւն մը :

● Մենք կ'ուզենք գիտնալ թէ ո՞վ է Հայը, ո՞ւր է անոր Հայրենիքը : Ինչո՞ւ են մեր ծնողքը օտար երկրի մը մէջ լեզուին անգիտակ, պարտաւորուած ամենաստոր գործերն ընդունելու :

● Մենք չենք հաւատար իրենց պատմութիւններուն, թէ հայ ազգը երբեմն մեծ եղած է, պատմութիւն ունեցած, բոլոր մարդերուն մէջ արժանաւոր դէմքեր տուած, խմաստասէրներ, գիտուններ, զրազէտներ, բանաստեղծներ, գիտութեամբ զարգացողներ, քաղաքագէտներ, ճարտարարուեստի մէջ շքանորհրդէր ցոյց տուողներ :

● Մենք ճիշդ է, կ'ամչնանք մեր ծնողներէն, փոքրցիկն մէջ երբ անոնք մայրի մը վրայ են, մենք դիմացի մայրիէն կը քալենք, հանրակառքին մէջ երբ անոնք առջեւ են, մենք ետեւի կողմն ենք :

● Մենք զիտենք որ անոնք կը տառապին մեր այս ընթացքին պատճառաւ, սակայն մենք ալ նոյնքան եւ աւելի :

● Բոլոր մեզի տրուած քարոզները անոնց արժանիքը տեսնելու, անգոր են, ըսէ՛ք ինչի՛ մէջ կը կայանայ իրենց շքանորհրդէր :

Մէ՛կ պատասխան կայ տալիք :

Անոնց զերպոյն՝ ձեր կողմէ անտեսանելի առաքինութիւնը հոն է որ, ամենածանր գոհողութիւններու դնով անոնք ձեզի հնարաւորութիւններ ընձեռած են այդ խորհրդածութիւններն ընելու : Ձեզ կերակրած են իրենցմէ զրկելով, ձեզ հազուեցուցած են այնքան լաւ՝ որ իրենց ներկայութենէն կը փախչիք, ձեր առջեւ բաց պահած են ուսման դռները :

Հակազդեցութիւնը՝ քմծիծաղ : Ոմանք զպացուած ըլլալ ցոյց կու տային, շատեր լուռութեամբ համակարծիք, կային թերահաւատներ :

\*  
\*\*

Այս բոլորը հեքեաթի մը մասնիկներ չեն : Մինչեւ որ . . . :

Մինչեւ որ, բացուեցան Հայրենիքի դռները, մինչեւ որ անոնք լսեցին ու կարգացին օտար բերաններով ու զրիչներով ալ, հայ երաժիշտներու, գիտուններու, գորականներու, արուեստագէտներու, ճարտարագէտներու անունները :

Իրաւ է այդ դասակարգի անձնաւորութիւններ այսօր կը վըրտան Սփիւռքի մէկ ծայրէն միւսը, բայց անոնք որ Հայրենիքին են՝ ունին ուրի՛շ փայլ, տեսակ մը կնիքն ունին յաւիտեանականութեան :

Առանց Հայրենիքի իրականութեան, այդ տղաքը դա՛րձեալ դժբախտ պիտի մնային :

Տեսելու, տուելու ճիշդն մէջ մեծ է Հայրենիքի դերը, բացարձակապէս միակ ազգակը :

Անցեալի բոլոր անհետացող զաղութիւններուն փաստը կու գայ ապացուցանել այս ճշմարտութիւնը :

Վերջին պատերազմի դժուարին պայքարը դեռ չէր իսկ վերջացած, երբ արիւնաբամ Հայրենիքի կռուներէնքը վերակենդանացուցին դադուութիւնը, ամէն ձեւի տակ, անձով, գրով ու տաղերով, անթելով, երկրէն դուրս ճառագայթելով:

Հայրենիքը պիտի շարունակէ հմայել, դգուել դադթականի հոգին, բայց լեզուն է որ զանոնք իրեն, իրեն պիտի կապէ:

Անհրաժեշտ է որ գրելու մեր Բաբելոնը վերջ դնուի:

Լեզուները միշտ ալ փոփոխակիներ ունեցեր են եւ պիտի ունենան:

Բայց գի'րը: Գիրը Բաբելոն չի հանդուրժեր:

Բոլոր վարչակարգերը, մանաւանդ յեղափոխութեամբ մուտք գործած, անխուսափելիօրէն սխալ քայլեր կ'առնեն, այդ կը պատահի նաեւ իշխանութեանց համեմատաբար խաղաղ օրերուն մէջ ալ: Էականը հոն է, որ անոնք անդրադառնան ու դարմանեն այդ սխալները:

Խ. Հայաստանի վարչաձեւին սկզբնական երկու սխալներէն մէկը միայն կարելի է իրենց ոյժերէն, կամքէն վեր նկատել: Այն է կոտորակուած Հայաստանի մը սահմաններով դոհանալը: Գէթ կովկասեան Հայաստանի 1914-ի սահմաններուն տէր կանդնիլ չկարենալու մէջ ցոյց տուած կանխամտածումները: Այդ սխալը անոնք այժմ կը դարմանեն՝ եղածը բարձրացնելով լաւագոյնին, ներդադրով, ԸՄՓԻԼՈՔԻ նկատմամբ իրենց ցոյց տուած, ուշացած բայց ջերմ թափով ուշադրութեան:

Երկրորդ մեծ սխալը, որ շատ դիւրութեամբ կրնային չլործել, տարազնուած ազգի մը լեզուին ուղղադրութեան անխորհուրդ փոփոխութիւնն էր:

Այդ սխալը, եթէ ուզեն, կը դարմանուի մէկ օրէն միւսը:

Բաւ է որ յառաջդիմական վարդապետութեան մը կողմնակիցները մէկզի նետեն ինքնասիրութեան վիրաւորանքի երբեմնի քաղքենիական հոգեբանութիւնը:

Հայ ժողովուրդը միահամուռ պիտի ծափահարէ զիրենք:

\*\*\*

Բախտաւոր են ա'յն վարչակարգերը, որոնք իրենց ծոցին մէջ ունին պատմութեան ապագայ վճիռներուն ամէն ատեն ներկայութիւնը յիշեցնողներ:

Մեր յաւակնութիւնը ատկէ աւելի փոքր է:

Բաղձանք մը՝ Մեծ:

Որպէսզի հայ գիրը ապրի, մի եւ անքակտելի:

Եւ ապրի վերածնուող Հայրենիքը:

Պետրոս Մարգարանեանի նամակներուն բնագրին հաւատարիմ մնալու համար՝ ուղղագրական եւ քերականական սխալները պահած ենք անփոփոխ, բայց նշած ենք արամեանով :

## ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՑԱՆԿ

	<u>Էջ</u>
Վահան Թոթովենց .....	3
Անդրանիկ .....	11
Զօրավար Անդրանիկ .....	36
Զօրավար Անդրանիկ Մարտչլի մէջ 1921-ին .....	74
Կամաւորներու խումբ մը՝ Անդրանիկի հետ .....	75
Վահան Զերազ .....	117
Խմբակար Անգլիոյ ձորն Ե. թագաւորին կողմէ կատարուած աստիճանատուչութեան կամ պարգեւատրման պահուն .....	154
Կամաւորներ Երեւանի մէջ .....	194
Կամաւորներու խումբ մը, 1916, Երեւան .....	201
Վիգ, Փիթ, Էջօ .....	228
Նկարուած 1930 Մարտ 15-ին Սիպիրի տեղական տարագով .....	237
Վահան Զերազ կամաւորի հագուստով, Երեւան, 1915 .....	252
Ա. Բարսեղյան ընկերներու եւ .....	265
Ղազարխեցի Ընկ. Ա. Բապէկ Ա. Բապէկեանի թաղումէն յետոյ, խեղդուած Օպ Գետի մէջ .....	270
Ղազարխեցի Ընկ. Ա. Բապէկ Ա. Բապէկեանի թաղումը՝ խեղդուած Օպ Գետի մէջ 28 Յուլիս 1930-ին .....	274

## ՔԱՐՏԷՍՆԵՐՈՒ ՑԱՆԿ

Հայկական Բարձրաւանդակ .....	40-41
[Արդի Հայաստան] .....	118
Կովկաս եւ Հայաստան .....	160
[Զմշկածագ, Սիսնա] .....	208

## ՆԻԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ

	Էջ
ԱՆԴՐԱՆԻԿ .....	1
Ինֆնարդարացումի խօսքեր .....	5
Անդրանիկը Քաջ՝ իր ընկերներով .....	12
Աւաղանֆ եւ Անդրանիկի կուրծֆին վրայ .....	17
Անդրանիկի չարչարանք .....	22
Անդրանիկի դափնեպսակը .....	28
Քաջանդրանիկ եւ իր «Մերժուած Սան»ը .....	37
Կարնոյ «Անկախութեան» մասին .....	55
Զօրավար Անդրանիկ իբրեւ ներշնչման աղբիւր .....	70
Անդրանիկի մը ծնունդ տուող պարագաները .....	76
Սնդրանիկ՝ երբ կը կռուի .....	79
Անդրանիկ՝ մարդը, նկարագիրը .....	95
Անդրանիկի քաղաքական ըմբռնումը եւ ուղին .....	105
BLACKWOOD'S MAGAZINE .....	119
Անդրանիկ .....	119
Liaison .....	155
Անդրանիկի՝ «Շրջադարձութիւնը» .....	159
Անդրանիկ եւ տօնավաճառի մեր յեղափոխականները .....	170
«Ա՛յ տղա, սփիչֆա չ՛սան՞ս» .....	174
ՊԵՏՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ (ՓԻԹ) .....	193
Ինչո՞ւ այս հատորը .....	195
Ո՞վ է Պետրոս Մարգպանեան (Փիթ) .....	196
Պետրոսի ծննդավայր՝ Սիւնա Գիւղի բռնի աֆտորը եւ ջարդը ..	209
Սրտերու տիպար միութիւն մը .....	211
Թէ ի՞նչպէս «վոնտեցիմֆ» Պօլշեւիկները .....	219
ՊԵՏՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ .....	283
Աֆտրական եւ փախուստի ընկերոջ մը վկայութիւնը .....	284
Եղբրական կեանքի մը դրուագները .....	287
Խաւարապատ տասնամեակի մը մէջէն .....	299
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՆՎԻՃԵԼԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ .....	306
Անկաշկանդ խոհեր .....	307
Սփիւռքը կը սպասէ Հայրենիքի նուէրին .....	315
Պատկերներու ցանկ .....	325
Քարտէսներու ցանկ .....	325
Նիւթերու ցանկ .....	326



Գրաշարութեան ձեռնարկուած

7 Ապրիլ 1982-ին

Տպագրութիւնը աւարտած՝

15 Յունիս 1982-ին

Կ. ՏՕՆԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԳԻՒՔ

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

Տպարանային բաժնի

Հայտէլպերկ 54×72 մամուլի վրայ

500 տպաքանակով – 20.5 պրակ

Գիմել հեղինակ – հրատարակիչին՝

VAZKEN ANDREASSIAN

7, Rue des Sables

78220 Viroflay

---

F R A N C E

Tél.: 024-48-41